ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱ
ԱՐԵՎԵԼԱԳԻՏՈՒԹՅԱՆ ՍԵԿՏՈՐ

# ԹՈՒՐՔԱԿԱՆ ԱՂԲՅՈՒՐՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆԻ, ՀԱՅԵՐԻ ԵՎ ԱՆԴՐԿՈՎԿԱՍԻ ՄՅՈՒՍ ԺՈՂՈՎՈՒՐԴՆԵՐԻ ՄԱՍԻՆ

ԹԱՐԳՄԱՆՈՒԹՅՈՒՆ ԹՈՒՐՔԱԿԱՆ ԲՆԱԳՐԵՐԻՑ,
ՆԵՐԱԾԱԿԱՆ ԱԿՆԱՐԿՆԵՐՈՎ, ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐՈՎ
ԵՎ ՀԱՎԵԼՎԱԾՈՎ

## ՀԱՏՈՐ Բ

Կազմեց
Ա. Խ. ՍԱՖՐԱՍՏՅԱՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ՍՍՌ ԳԻՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ ՀՐԱՏԱՐԱԿՉՈՒԹՅՈՒՆ
ԵՐԵՎԱՆ 1964

АКАДЕМИЯ НАУК АРМЯНСКОЙ ССР
СЕКТОР ВОСТОКОВЕДЕНИЯ

# ТУРЕЦКИЕ ИСТОЧНИКИ ОБ АРМЕНИИ, АРМЯНАХ И ДРУГИХ НАРОДАХ ЗАКАВКАЗЬЯ

ИЗВЛЕЧЕНИЯ ИЗ ТУРЕЦКИХ ОРИГИНАЛЬНЫХ ТЕКСТОВ В ПЕРЕВОДЕ НА АРМЯНСКИЙ ЯЗЫК С ВВОДНЫМИ ОЧЕРКАМИ, КОММЕНТАРИЯМИ И ПРИЛОЖЕНИЕМ

## ТОМ II

Составил
А. Х. САФРАСТЯН

ИЗДАТЕЛЬСТВО АКАДЕМИИ НАУК АРМЯНСКОЙ ССР
ЕРЕВАН 1964

# ԵՐԿՈՒ ԽՈՍՔ

*«Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին» աշխատության երկրորդ հատորը կազմված է XVI—XVIII դարերի թուրք պատմագիր-տարեգիրների և այլ հեղինակների երկերից, որոնք կարևոր տեղ են գրավում թուրքական պատմագրության մեջ։ Այդ հեղինակները, իրենց երկերում տալով այդ դարերի Թուրքիայի ներքին և արտաքին դրության պատկերը, միաժամանակ որոշակի հետաքրքրություն ներկայացնող բազմաթիվ տեղեկություններ են հաղորդում հայ և հարևան ժողովուրդների պատմության, պատմական աշխարհագրության և սոցիալ-քաղաքական կյանքի մասին։*

*Ներկա հատորում առանձին գլուխներով ներկայացված են հետևյալ թուրք պատմագիրներն ու հեղինակները.*

*1.* Քյարիբ Չելեբի *(Հաջի Խալիֆա), Օսմանյան պետության XVII դարի ականավոր պատմագիր-աշխարհագրագետ։ Նյութերը քաղված են նրա* «Ջիհան Նյումա» *խորագիրը կրող աշխարհագրությունից և* «Ֆեզլեքե» *անունով հայտնի երկհատոր պատմությունից։*

*2.* Սելանիկի Մուստաֆա*—XVII դարի թուրք պատմագիր։*

*3.* Սոլաք Զադե*—XVII դարի թուրք պատմագիր։*

*4.* Շանի Զադե*—XVIII դարի արքունական տարեգիր-պատմագիր։*

*5.* Մյունեջջիմ Բաշի*—թուրքերեն լեզվով առաջին ընդհանուր պատմության հեղինակը, որից թարգմանված է հայ ժողովրդի համառոտ պատմությունը։*

*6.* Ֆերիդուն Բեյ*—XVI դարի թուրքական պետական բարձրաստիճան պաշտոնյա, որը իր «Սուլթանների գրություններ» անունով հայտնի պետական պաշտոնական փաստաթղթերի ժողովածուի մեջ հավաքել է Օսմանյան կայսրության սկզբից մինչև XVI դարի վերջն ընկած ժամանակաշրջանի սուլթանական բազմաթիվ ֆերմաններ և գրություններ։*

7. Կոչի Բեյ — թուրք պետական գործիչ և քննադատ, որը XVII դարի 30-ական թվականներին սուլթաններին ներկայացրել է երկու զեկուցագիր (Ռիսալե), Օսմանյան կայսրության ներքին դրության մասին։

Վերոհիշյալ բոլոր հեղինակների մասին տրված են համառոտ կենսագրական տեղեկություններ, ինչպես նաև անհրաժեշտ լուսաբանություններ նրանց երկերի մասին։

Գրքում որպես հավելված զետեղված են.

1. Ֆերիդուն Բեյի «Սուլթանների գրությունները»-ից մի քանի փաստաթղթերի թարգմանությունը, որոնք որոշ լույս են սփռում Օսմանյան պետության միջնադարի պետական, վարչական և տընտեսական կյանքի բնորոշ կողմերի վրա։

2. Տարեգիր Շանի Զադեից XVI—XVII դարերի Թուրքիայի ֆինանսական, կուլտուր-կենցաղային (հագուստ, բնակարան և այլն), ինչպես նաև ազգային խտրականության վերաբերյալ պաշտոնական փաստաթղթեր։

3. Մի քանի փադիշահական գրությունների (ֆերման, ուղերձ և այլն) թուրքերեն տեքստերը։

Այս հատորում ծանոթագրությունները տրված են ավելի ընդարձակ, անհրաժեշտության դեպքում՝ պատմական ակնարկի ձևով։ Ծանոթագրությունները լուսաբանում են միջնադարյան Թուրքիայի պատմագիր-տարեգիրների և մյուս հեղինակների երկերում արծարծված բազմաթիվ հարցերը և հնարավորություն են տալիս ավելի լայն և բազմակողմանի պատկերացում կազմելու միջնադարյան Թուրքիայի մասին։

Թարգմանված բոլոր նյութերի տարեթվերը տրված են հիջրեթի թվականով, ինչպես տալիս են թուրք հեղինակները, այդ թվականների կողքին փակագծում տրված են նաև համապատասխան եվրոպական թվականները*։

* Տե՛ս նաև սույն աշխատության Ա հատորում «Հիջրեթի թվականները եվրոպականի վերածելու աղյուսակը», էջ 339—348։

# ՔՅԱԹԻԲ ՉԵԼԵԲԻ, ՀԱՋԻ ԽԱԼԻՖԱ

## ԷԼՀԱՋ ՄՈՒՍՏԱՖԱ ԲԻՆ-ԱԲԴՈՒԼԼԱՀ

Քյաթիբ Չելեբին ծնվել է Ստամբուլում, հիջրեթի մոտավորապես 1017 (1609) թվականին* Աբդուլլահ անունով սիփահու ընտանիքում։ Նրա իսկական անունն է Մուստաֆա բին-Աբդուլլահ, բայց ընդհանրապես հայտնի է Քյաթիբ Չելեբի և Հաջի Խալիֆա** անուններով, որոնք կապված են նրա ծառայությունների և վարած պաշտոնների հետ։

Նախնական կրթությունն ստանալուց հետո Քյաթիբ Չելեբին ծառայության է մտնում Անատոլիայի զինվորական ստորաբաժանումում՝ գրասենյակային հաշվապահի համեստ պաշտոնով։ Իր ծառայության ընթացքում նա մասնակցել է Բաղդադի պաշարմանը՝ 1035 (1625) թվականին, Էրզրումի պաշարմանը՝ 1036 (1626) թվականին. ենիչերիների կովին՝ Աբազա փաշայի դեմ և մի շարք այլ կռիվների։ Մի քանի տարի հետո Քյաթիբ Չելեբին վերադառնում է Ստամբուլ, վարում է գրասենյակային քարտուղարի պաշտոն և միաժամանակ շարունակում է իր կրթությունը այդ ժամանակի հայտնի գիտնական Շեյխ Կադը Զադեի մոտ, որը նրա մեջ մեծ հետաքրքրություն է արթնացնում դեպի գիտությունը։

Թուրք-իրանական պատերազմի տարիներին, Քյաթիբ Չելեբին, ընդհատելով իր ուսումը, օսմանյան բանակի հետ մեկնում է Համադան և Բաղդադ։ Վերադարձից հետո շարունակում է ուսումնասիրել կրոնական-իրավական գիտությունը։ 1043 (1633) թվականին բանակի հետ գնում է Սիրիա և մասնակցում Թուրք-իրանական պատերազմին, որը ղեկավարում էր Սուլթան Մուրադ IV։ Այդ ժամանակ Քյաթիբ Չելեբին ուխտի է մեկնում իսլամական սրբազան Հաջջ ուխտատեղին[1] և ստանում է Հաջի տիտղոսը։ 1044 (1634) թվականին նա մասնակցում է Երևանի պաշարմանը։

Սովետական արևելագետ ակադեմիկոս Ի. Յու. Կրաչկովսկին նշում է, որ Հալեպի՝ իսլամական կուլտուրայի այդ կենտրոնի ազդեցության տակ Քյաթիբ Չելեբին ավելի մեծ հետաքրքրություն է ցուցաբերում դեպի գիտությունը***։

Արդարև, Քյաթիբ Չելեբին թողնելով իր ծառայությունը, վերադառնում է Ստամբուլ և մեծ եռանդով ու հետաքրքրությամբ նվիրվում գիտությանը։ Ուսումնասիրում է տրամաբանություն և քերականություն, մաթեմատիկա, աստղագիտու-

---

* Մի քանի աղբյուրներում ցույց են տրվում տարբեր թվականներ։

** Եվրոպական աղբյուրներում Հաջի Խալիֆան վերածվել է Հաջի Կալֆայի։

*** **И. Ю. Крачковский,** Избранные сочинения, т. IV, М.-Л. 1957, гл. XXI. Турецкая географическая литература XV—XIX вв.

թյուն և բժշկություն։ Քյաթիր Չելեբին իբրև բազմակողմանի գիտելիքների տեր անձնավորություն, գրավում է ժամանակակիցների ուշադրությունը։ Նրա անձնական բարեկամներից մեկը՝ օսմանյան բանակի պետ Մուհամմեդ փաշան, նրան նշանակում է բանակի ֆինանսական գրասենյակի երկրորդ խալիֆա*։

Քյաթիր Չելեբին ֆինանսական հարցերում ևս հեղինակավոր անձնավորություն էր։ 1063 (1652) թվականին Թուրքիայի ֆինանսական գործերը բարելավելու նպատակով Սուլթան Մուհամմեդ I-ի նշանակած հատուկ հանձնաժողովի աշխատանքներին մասնակցում է նաև Քյաթիր Չելեբին։ Այդ կապակցությամբ, Չելեբին մի քանի տարի հետո, ֆինանսական հարցերի մասին ներկայացնում է հատուկ զեկուցագիր, որը հետագայում, 1867 թվականին, հրատարակվում է Ստամբուլում, թուրք գրող Ահմեդ Վեֆիքի կողմից**։

Քյաթիր Չելեբին չորս տարի շարունակ զբաղվել է դասախոսական աշխատանքով։ Նա մահացել է 1067 (1656) թվականին, մոտ 50 տարեկան հասակում։ Կա ավանդություն նրա հանկարծամահ լինելու մասին։ Ակադեմիկոս Ի. Յու Կրաչկովսկին նշում է. «Բաբինգերը լրիվ իրավունք ունի Հաջի Խալիֆային (Քյաթիր Չելեբիին) անվանելու օսմանների մեծագույն պոլիհիստորը[2], որովհետև նրա գիտելիքները տարածվում էին մտքի բոլոր բնագավառների վրա»***։

Քյաթիր Չելեբիի գիտական աշխատությունների ուսումնասիրությամբ զբաղվել են եվրոպական և սովետական բազմաթիվ արևելագետներ՝ Վ. Բարթոլդը, Ի. Կրաչկովսկին, Համմերը, Թեշները, Մորդթմանը, Բաբինգերը և այլն[3]։

Քյաթիր Չելեբիի կարևոր աշխատություններն են.

1. «Թավկիմ-ուր-բեվարիխ» («Պատմությունների տարեցույց») ինքնուրույն արժեքավոր աշխատություն է։ Համմերը Քյաթիր Չելեբիի այս աշխատության մասին գրել է. «Եթե Քյաթիր Չելեբիի այս աշխատությունը գոյություն չունենար, Օսմանյան պատմությունը գրելու նախաձեռնությունը շատ դեպքերում խավարի մեջ պիտի մնար»։

2. «Ֆեզլեքե»— Օսմանյան պետության XVII դարի պատմությունը երկու հատորով։

3. «Քեշֆ-ուլ-զյունուն» («Կարծիքների հայտնություն»). Քյաթիր Չելեբին այս աշխատությունը գրել է 30 տարում։ Սա մի բիբլիոգրաֆիական երկասիրություն է, որը ամփոփ տեղեկություններ է պարունակում գիտության մոտ 300 ճյուղերի մասին։ Աշխատությունը գրված է արաբերեն։

Համմերը հիմնվելով այս աշխատության վրա գրել է «Արևելքի գիտությունների հանրագիտական տեսություն» վերնագրով մի աշխատություն։

«Միզան-ուլ-հակկ» («Իրավունքի չափը») և «Դյուսթուր-ուլ-ամել», («Գործողության ուղեցույց») աշխատությունների մեջ Քյաթիր Չելեբին ուսումնասիրում է իր ժամանակի հասարակական երևույթները և պայքարում հետամնացության ու կրոնական ֆանատիզմի դեմ։

5. «Ջիհան Նյումա» («Աշխարհի հայելի»)։

6. «Թուխֆաթ-ալ-կիբար ֆի էսֆար-ալ-բեհար» («Նվեր ծովային արշավանքների մեծերին»)։

Այս վերջին աշխատության մեջ Քյաթիր Չելեբին պատմում է օսմանցիների

---

* Այդ պաշտոնի կապակցությամբ ստացել է Հաջի Խալիֆա անունը։

** И. Ю. Крачковский, Избранные сочинения, т. IV, М.-Л., 1957, гл. XXI. Турецкая географическая литература XV—XIX вв. стр. 603.

*** Նույն տեղը։

ծովային նավատորմի, նրա արշավների ու հաղթությունների, Օսմանյան կայսրության ափերը ողողող ջրերում տեղի ունեցած դեպքերի, ծովային կռիվներում հերոսներ խայրեդդին Բարբարոսի, Փերի Ռեիսի, Սիդի Ալի Չելեբիի և այլոց մասին։ Աշխատությունն ունի առավելապես պատմական և աշխարհագրական բնույթ։ Այս աշխատությունը արագ ժողովրդականություն է շահել թե՛ Ստամբուլում և թե՛ Եվրոպայում։ 1141 (1728) թվականին գիրքը քարտեզներով և պատկերազարդ տպագրվում է Իբրահիմ Մյութեֆերիկայի տպարանում։

Ըստ ժամանակակից թուրք պատմաբան Ի. Հ. Դանիշմենդի, Քյաթիբ Չելեբին «թուրքական գիտության առաջ բաց է արել արևմտյան կուլտուրայի դուռը... Այս մեծ մարդը արևմտյան կուլտուրայից իր ստացածից շատ ավելին է վերադարձրել»*։

Թուրք պատմաբանները նշում են, որ Քյաթիբ Չելեբին կարևոր դեր է կատարել Արևմուտքի գիտությունները Արևելք փոխադրելու գործում։ Սակայն, չնայած այդ մեծ ծառայությանը, Քյաթիբ Չելեբին իր «հասարակ ծագման» պատճառով չի արժանացել բարձր աստիճանների ու կոչումների, կյանքի մեծ մասը զբաղվել է ինքնուրույն գրական-գիտական աշխատանքով, որը շարունակել է մինչև իր վաղաժամ մահը։

Սովետական թրքագետ Ա. Տվերիտինովան նշում է. «Քյաթիբ-Չելեբին իր ժամանակի համար վերին աստիճանի բարձր և համապարփակ կրթության տեր մի անձնավորություն էր։ Նրա թողած աշխատությունները՝ պատմություն, աշխարհագրություն, տիեզերագիտություն, աստվածաբանություն, բիբլիոգրաֆիա և այլն, մեծ նշանակություն ունեն թե՛ Օսմանյան պետության պատմությունը և թե՛ XVII դարի Թուրքիայի գիտական մտքի զարգացումը ուսումնասիրելու համար»**։

Քյաթիբ Չելեբիի աշխատությունները թեև ուշ, բայց տպագրվել են։ Նրա «Քեշֆ-ուլ զյունունը» տպագրվել է Եգիպտոսում, 1833 թվականին թարգմանվել է լատիներեն և ծանոթագրություններով, վեց հատորով, տպագրվել է Լայպցիգում։

## ՔՅԱԹԻԲ ՉԵԼԵԲԻ — «ՋԻՀԱՆ ՆՅՈՒՄԱ»

«Ջիհան նյումա»-ն XVII դարում թուրքերեն լեզվով գրված առաջին աշխարհագրական գիրքն է։

«Ջիհան նյումա» գրքի առաջաբանում Չելեբին, նշելով աշխարհագրական գիտության բացառիկ կարևորությունը, ցույց է տալիս դրա անտեսումը իսլամական երկրներում և ավելացնում է. «Լատիներեն լեզվով գրված աշխարհագրություններից թարգմանեցի վերջին համառոտ ատլասը և նրան ավելացնելով իսլամական գրքերից իմ քաղած նյութերը, կազմեցի սույն գիրքը... Բոլոր նյութերը բաժանել եմ երկու մասի... սակայն բուն նյութին անցնելուց առաջ մի առաջաբան կազմեցի և գիրքն անվանեցի «Ջիհան նյումա»։

1058 (1648) թվականին սուլթան Մուհամմեդ IV իշխանության օրոք, Չելեբին իր գիրքը ներկայացրել է «Խազինեի Ամիրևին» (Արքունական գանձարան)։

«Ջիհան նյումա»-ն տպագրվել է հեղինակի մահից մոտ 80 տարի հետո, 1145

* Ismail Hami Danlsmend, Izahli Osmanli Tarihi Kronolojisi, Istanbul, 1950, III c. s. 423.

** **А. Тверитинова,** Восстание Кара Языджи-Дели Хасана в Турции, М., 1945.

(1732) թվականին Ստամբուլում, թուրքական առաջին տպարանի հիմնադիր Իբրահիմ Մյութեֆերիկայի[1] նախաձեռնությամբ։

Քյաթիբ Չելեբին, ինչպես պարզվում է գրքի առաջաբանից և հրատարակչի ծանոթագրություններից, չի կարողացել իր աշխատությունն ավարտել նախատեսված ժամկետում։ Հրատարակիչը, չկարողանալով գտնել «Ջիհան նյումա»-ի բնագիրը, ստիպված է եղել օգտվել «Ջիհան նյումա»-ի արտագրված օրինակներից, որոնց մեջ եղած բազմաթիվ սխալներն ու պակասությունները ուղղել և լրացրել է նկատի ունենալով նաև աշխարհագրության բնագավառում եղած նոր հայտնագործություններն ու գրքերը։

«Ջիհան նյումա»-ի վերջում հրատարակիչը տվել է հետևյալ ծանոթությունը, «Բարձրյալն Աստծո ողորմությամբ սույն գիրքը ավարտեցինք։ Ինչպես ծրագրել և խոստացել էինք գրքի սկզբում, նկարագրեցինք Ասիայի աշխարհամասի երկրների և իշխանությունների վիճակը...։ Երբ փադիշահական բարձր շնորհներն ու բարձրագույն հրամանը շնորհվի սույն գրքին, իբրև երկրորդ հատոր հրատարակելու ենք մանրամասնորեն Ստամբուլի, Արևմտյան երկրների, այսինքն՝ երեք աշխարհամասերի՝ Եվրոպայի, Աֆրիկայի և Ամերիկայի ազգաբնակչության և իշխանությունների վիճակը, որով տված կլինենք երկրի բոլոր մասերի լրիվ պատկերը»։

Ըստ երևույթին այս ծրագիրը չի իրագործվել։

Մի քանի խոսք «Ջիհան նյումա»-ի բովանդակության մասին։ «Ջիհան նյուման» յուրատեսակ աշխարհագրություն է։ Գրքի մոտ 700 էջից 150 էջը հատկացված է աշխարհագրության ընդհանուր հարցերի լուսաբանմանը։ Հեղինակը նշում է, որ իբրև աղբյուր ձեռքի տակ է ունեցել իսլամական, ինչպես նաև լատիներեն ու եվրոպական լեզուներով գրված մի քանի աշխարհագրական գրքեր, ատլասներ (Օր. «Մինորը» և այլն)։ Խոսում է աշխարհագրության բովանդակության և կարևորության, երկրի գնդաձևության վերաբերյալ այդ ժամանակ գոյություն ունեցած տեսակետների մասին, նշելով, որ **«Երկրի գնդաձևությունը չի ճակասում շարիաթին»** (ընդգծումը մերն է—Ա. Ս.)։

Անցնելով ֆիզիկական աշխարհագրության հարցերին, նա խոսում է երկրի շարժումների, աստիճանացանցի, բևեռների, մասշտաբի, ծովի և ցամաքի բաժանման, օվկիանոսների, ծովերի և նեղուցների, գետերի ու լճերի մասին։ Հիշում է Կոլումբոսի և Մագելլանի ճանապարհորդությունները, անդրադառնում է Հյուսիսային և Հարավային բևեռային կղզիներին։

Գրքի երկրորդ գլխում խոսում է երկրի ազգաբնակչության մասին՝ ըստ կրոնների։

Հետաքրքիր և տեղին է Քյաթիբ Չելեբիի հետևյալ դիտողությունը. «Ատլասում և աշխարհագրական մյուս գրքերում, հեղինակները ընդհանրապես եվրոպացիներ լինելով, իրենց ուսումնասիրությունները սկսել են Եվրոպայից, որը նկարագրել են ամենայն մանրամասնությամբ, իսկ Ասիայի և Աֆրիկայի մասին խոսում են համառոտակի, և այն էլ իրենց գրքերի վերջում... Ամերիկայի մասին խոսում են մի քանի էջում... Այս գրքում մենք այլ ուղղության հետևեցինք։ Սկսելով Արևելյան Ասիայից, անցանք Աֆրիկային, Եվրոպային և Ամերիկային... Ասիական երկրների մասին շատ նյութեր հավաքեցինք Արևելյան գրքերից»։

Քյաթիբ Չելեբիի «Աշխարհագրության» բովանդակության մասին գաղափար տալու համար հիշենք թեկուզ Ճապոնական կղզիների աշխարհագրության ծրագիրը։ Քյաթիբ Չելեբին տալիս է Ճապոնական կղզիների ֆիզիկական աշխարհագրությունը, սահմանները, քաղաքները, այնտեղ տիրող քաղաքական կարգը, գի-

տության և կրթության վիճակը, ժողովրդի սովորությունները և ճապոնական կղզիների հայտնագործման պատմությունը։

Ճապոնական կղզիներից հետո Չելեբին նկարագրում է Ինդոնեզիական կղզիները, Չինաստանը, Հնդկաստանը, Ֆարսի երկրները, Իրաքի Աջեմը, Անդրգետյան երկրները, Թուրքեստանը, Հարավ Արևելյան Եվրոպան, Ադրբեջանը, Արրանը, Մուղանը, Շիրվանը, Երևանի երկիրը, Աղրի լեռը, Գենջեն, Նախիջևանը, Թիֆլիսը, Դերբենդը, Կուր գետը։ Այնուհետև անցնում է սևծովյան երկրներին։ Նկարագրում է Վրաստանը, Կարսը, Կաղզվանը, Ուչ Քիլիսեն, Ախալցխայի էյալեթը, Հայաստանը (Արմենիա), Վանի էյալեթը, Սիփան լեռը, Բիթլիսը, Մուշը, քրդական աշիրեթները, Երզնկան, Տրապիզոնի էյալեթը, հետո անցնում է Քուրդիստանին և Միջագետքին։

Ակադեմիկոս Ի. Յու. Կրաչկովսկին չի ընդունում մի քանի թրքագետների այն կարծիքը, որ իբր Քյաթիբ Չելեբին «Ջիհան նյումանը» նախապես գրել է արաբերեն լեզվով, որը հետագայում թարգմանվել է թուրքերենի։

«Ջիհան նյումա»-ի առաջին խմբագրությունը, ինչպես նշում է ինքը՝ հեղինակը, մնացել է անավարտ։ 1064 թվականին նա իր համար գտել է շատ արժանավոր մի աշխատակից, մահմեդականություն ընդունած ֆրանսիացի մենակյաց Մուհամմեդ էֆենդի Իխլասին, որի օժանդակությամբ Քյաթիբ Չելեբին արևմտյան հեղինակների աշխատություններից կազմել է մի քանի քարտեզ։ Այդ քարտեզները օգտագործվել են «Ջիհան նյումա»-ի երկրորդ խմբագրության մեջ։ Իխլասիի օժանդակությամբ թարգմանել է նաև Մերկատորի հայտնի «Atlas Minor»-ը։ Ատլասի թարգմանությունը չվերջացրած, Քյաթիբ Չելեբին սկսում է խմբագրել «Ջիհան նյումա»-ի 2-րդ մասը։ Սակայն պարզվում է, որ Ատլասի խմբագրության աշխատանքը մնացել է անկատար։ Հետագայում այդ աշխատանքը շարունակել է Աբու Բեքիր Բին-Բախրամը։

Կրաչկովսկու և վերոհիշյալ մյուս թրքագետների կարծիքով, երկրորդ խմբագրության ժամանակ «Ջիհան նյումա»-ի մեջ ընդգրկվել են արևմտյան աշխարհագրական գրականության նյութերը։ Այդ բանը պարզ կերպով երևում է նրանից, որ երկրորդ խմբագրության մեջ չեն պահպանված արաբական աշխարհագրության տրադիցիոն հիմունքները՝ Պտղոմեոսի 7 կլիմաները և Աբուլ Ֆեդայի 28 սովորութային կլիմաները: Նոր խմբագրության մեջ հիմք է ընդունվել երկրի բաժանումը ըստ աշխարհամասերի, հաշվի են առնվել աշխարհամասերի քաղաքական միավորումները (օրինակ, Թուրքիայում՝ էյալեթները և լիվաները)։

«Հաջի Խալիֆան (Քյաթիբ Չելեբին), ինչպես իր մյուս աշխատություններում, «Ջիհան նյումա»-ում նույնպես չի ձգտում աստղագիտական կամ մաթեմատիկական բնույթի սեփական որևէ հայտնություն անելու։ Արաբական և թուրքական աշխարհագրական գրականության համար նրա նշանակությունն այն է, որ նա Արևելյան հին աղբյուրների հետ միասին, առաջին անգամ օգտագործել է նաև եվրոպական գիտության հետևությունները, ըստ որում, ոչ թե պատահական կերպով, այլ սիստեմատիկաբար և, պետք է ավելացնել, բավականին հաջող ընտրությամբ»*։

«Ջիհան նյումա»-ն թե՛ Թուրքիայում և թե՛ Եվրոպայում մեծ հետաքրքրության առարկա է եղել իբրև յուրահատուկ աշխատություն։ Նրա քարտեզները արժանացել են հատուկ ուշադրության։

«Ջիհան նյումա»-ում Հայաստանի և Անդրկովկասի մասին տրված աշխար-

---

* И. Ю. Крачковский, նշվ. աշխ., էջ 617։

*հագրական տեղեկությունները, իբրև պատմական աշխարհագրական նյութեր, անտարակույս, կարևոր են և արժեքավոր։ Այդ նյութերը որոշ չափով պատկերացում են տալիս նաև հայ և հարևան ժողովուրդների XVII դարի սոցիալ-տնտեսական վիճակի մասին։*

*Սույն գրքում Քյաթիբ Չելեբիից քաղել և թարգմանել ենք բոլոր այն նյութերն ու տեղեկությունները, որոնք վերաբերում են Հայաստանին, հայերին և Անդրկովկասի մյուս ժողովուրդներին**։*

*Ինչպես վերևում նշվեց, Քյաթիբ Չելեբին իր ուսումնասիրությունը տալիս է որոշ ծրագրով. հեղինակի նյութերը թարգմանելիս նպատակահարմար համարեցինք պահպանել այդ ծրագիրը և թարգմանված նյութերը դասավորել հետևյալ կերպ.*

1. *Արրանի (Առան), Մուղանի և Շիրվանի երկրները*
2. *Վրաստանի երկիրը*
3. *Կարսի էյալեթը*
4. *Արմենիայի երկիրը (Հայաստան)*
   - *ա) Վանի էյալեթը*
   - *բ) Հեքարին*
   - *գ) Էրզրումի էյալեթը*
5. *Տրապիզոնի էյալեթը*
6. *Դիարբեքիրի էյալեթը*
7. *Մարաշի և Ադանայի էյալեթները*
8. *Սվազի էյալեթը*

*Այս բաժանումով տրված են Արևմտյան Հայաստանի, մասամբ նաև Արևելյան Հայաստանի և այլ հայաբնակ շրջանների աշխարհագրական բաժանումները***։*

*Քյաթիբ Չելեբիի աշխարհագրությունը, կարծում ենք, ավելի հետաքրքիր և արժեքավոր է դառնում այն պատճառով, որ նրանում աշխարհագրական նյութերի հետ տրվում են նաև պատմական որոշ տեղեկություններ և դեպքեր։ Այս տեսակետից Քյաթիբ Չելեբիի «Ջիհան նյումա»-ն որոշ նմանություններ ունի XVII դարի հայտնի թուրք ճանապարհորդ Էվլիյա Չելեբիի «Ուղեգրության»[2] հետ։ Երկու հեղինակները կարծես լրացնում են միմյանց։ Էվլիյա Չելեբին և Քյաթիբ Չելեբին թեև ժամանակակիցներ են, բայց նրանց աշխատությունները, հավանաբար, իրար հայտնի չեն եղել։ Քյաթիբ Չելեբին իր «Ջիհան նյումա»-ն գրել է մի տասնամյակով առաջ։ «Էվլիյա Չելեբիի ուղեգրության»**** *մեջ հեղինակը ոչինչ չի ասում Քյաթիբ Չելեբիի և նրա աշխատությունների մասին։*

---

* *Հասկանալի է, որ Քյաթիբ Չելեբին իր «Աշխարհագրության» համար նյութերը քաղելով գլխավորապես իսլամական աղբյուրներից, չէր կարող տալ իր ուսումնասիրված երկրների, այդ թվում նաև Հայաստանի, աշխարհագրական լրիվ պատկերը, մանավանդ, եթե նկատի ունենանք նրա խիստ ընդարձակ պլանը։*

** *Քյաթիբ Չելեբիի «Ջիհան նյումա»-ն հայերենի է թարգմանվել նույն դարում, բայց դժբախտաբար մինչև օրս այն չի տպագրվել։ Թարգմանությունը կատարել է Երեմիա Չելեբի Քյոմուրճյանը։*

*** *«Էվլիյա Չելեբիի ուղեգրության» տասը հատորներից քաղել, թարգմանել և կազմել ենք առանձին գիրք «XVII դարի թուրք ուղեգիր Էվլիյա Չելեբին Հայաստանի, հայերի և Անդրկովկասյան մյուս ժողովուրդների մասին», որը պատրաստ է տպագրության։*

## ԱՐԱՆԻ, ՄՈՒԿԱՆԻ (ՄՈՒՂԱՆ) ԵՎ ՇԻՐՎԱՆԻ ԵՐԿՐՆԵՐԸ

(Գլուխ 39)

*39-րդ գլուխը Ադրբեջանին հարևան հյուսիսային երկրներին է վերաբերում։ Սահմաններն են, արևելքում՝ Ադրբեջանը, Գիլանը և Դիլեմը, հարավում՝ ներկայումս Վան կոչվող Հայաստանը և Քուրդիստանը, արևմուտքում՝ էրզրումի էյալեթը և Վրաստանի լեռները, հյուսիսում՝ Խազերի ծովը, որը Շիրվանի ծովն է, Դաղստանի վիլայեթը։ Վերոհիշյալ սահմանները ընդգրկում են այդ երեք երկրները, որոնք իրար հետ կապված լինելով, տվել ենք միևնույն գլխում։ Այդ երկրներն են՝ Ռեվան կոչված Արանը, Մուղանը և Շիրվանը (Արանի «ր» տառը թեշդիդով[3])։ Տարեցույցում ասված է Յաֆեթի որդի Արրան, որի մասին պատմում է Թեոհվեն[4]. էհսեն-Իլթիկասիում «էլիֆ-լամ» տառերով՝ էլրան (էլզան) է գրված*։ Մյուջերրեբը ցույց է տալիս, որ Ռեվան է գործածվել։ Իրականում սա վիլայեթի անունն էր, որի մայրաքաղաքն էր Գենջեն։ Համդուլլահը[5] ասում է, թե հետագայում այդ անունով կոչվեց Ռեվանի (Երևանի) հայտնի բերդը։*

*Արանը Արաս (Արաքս) և Կուր գետերի միջև գտնվող վիլայեթի անունն է։ Հիշենք այդ վիլայեթի քաղաքները. Երևանը (Ռեվան) երկարության 87 աստիճանի և լայնության 39 աստիճանի միջև ընկած Չուկուր-Սաադ անունը կրող երկրի կենտրոնական քաղաքն է։ Պարսպի կողքի Զանգի գետը հոսում է արևմուտքից։ Զանգիին գետահայաց հարթավայրի հողաշեն բերդն ունի երկու դուռ՝ հարավային և հյուսիսային։ Հարավային դուռը կոչվում է Դերվազեի Թաբրիզ, իսկ հյուսիսայինը՝ Ղաբր-Շիրվան։ Շրջակայքում կան հացահատիկի դաշտեր, պտղատու այգիներ և պարտեզներ։ Հացահատիկի և մրգեղենի վայր է։ Հիշյալ բերդի մեջ կա շուկա, մի ջամի և գետահայաց մի պալատ։*

*Անցյալում, 991 (1583) թվականին Ֆերհատ փաշան [այս բերդը] գրավելով, այնտեղ կարգել էր զինվորներ։ 1014 (1605) թվականին Շահ Աբբասը, 7 ամիս [բերդը] պաշարելով, գրավեց այն։ Տասը տարի հետո Մուհամմեդ փաշան բերդը պաշարեց, սակայն չկարողացավ գրավել։ 1045 (1635) թվականին Սուլթան Մուրադ խանը 7 օրում գրավեց այն։ Երբ [սուլթանը] վերադարձավ, Շահ*

---

* *Բնագրում տպագրական սխալով էլզան է գրված։*

*Սեֆին [բերդը] նորից ետ գրավեց։ Ներկայումս կարմրագլուխների (կըզըլբաշի)[6] ձեռքում բերքառատ մի վիլայեթ է։ Էրդի (Աղրի) լեռը՝ Երևանից հարավ-արևմուտք, մեկ մերհելե հեռավորության վրա, հսկա մի լեռ է և երևում է մի քանի մերհելե հեռավորությունից։ Կեսից վեր մշտապես ձյունով ծածկված այդ կլորաձև լեռը ունի մի քանի մենզիլ շրջապատ։ Նրանից դեպի արևելք և հյուսիս գտնվող Արաս գետը հոսում է դեպի արևելք և հյուսիս։ Ալաշկերտի դաշտը ընկած է գետի և լեռան միջև։ Մեկ կողմում էլ Չալդրանի դաշտն է. այդ պատճառով էլ [լեռան] հյուսիսային կողմը Չըլդըրի էյալեթ է կոչվում։*

**Գենջեն**՝ *Երևանից չորս մերհելե դեպի արևելք ընկած հարթավայրում մի քաղաք է այգիներով և պարտեզներով։ Ունի շատ առատ թուզ և պտուղներ։ Քաղաքը կառուցել է Ռումի Իսքենդերը, իսկ Կուբադ Բին-Ֆիրուզը այն նորոգել է։ Անցյալում եղել է շատ մեծ և բարեշեն քաղաք։ Դեռևս կան մեծ շենքերի մնացորդներ։ Շատ ընտիր են նուռը, խաղողը և կաղինը։ Ջուրը Բերբեր անունով հայտնի մի գետից է։* **Բերդան** *Գենջեից երկու մերհելե հյուսիս-արևմուտք ընկած իսլամական քաղաք է, որը կառուցվել է հիջրեթի 39 թվականին։ Բարձրադիր մի վայրում ունի Թերք անունով մի յայլա, որը շատ լավ, հաճելի և ջրառատ վայր է։ Ամառվա օրերին այնտեղ են քոչում։ Կուր գետը թափվող երկու գետակները շրջապատում են այս վայրը։ Այս մասին հիշում է Իբնի Սայիդը[7]։ Ոմանք ասում են, որ նշանավոր «հազվագյուտ ջուրը» սա է, բայց դա ճիշտ չէ։ Բերդայի շրջակայքում կան շատ գեղեցիկ և հարուստ կաղնու ծառեր, որոնց տված կաղինները ավելի լավ են, քան Սամարղանդի կաղինները։ Այստեղ կա նաև շատ լավ շագանակ և մի տեսակ թուզ, որ երբեք չի հանդիպել այլ վայրերում։ Շատ առատ է մետաքսի բերքը, որովհետև թթենիները շատ են։ Մետաքսը ուղարկվում է շրջակա վայրերը։ Ջորիները այլ երկրների ջորիներից գերազանց են և հարդի։ Այս քաղաքից է նաև ճշմարիտ հավատացյալներից էբու Սայիդ Բերդայինը։*

**Նախիջևան** *(արաբական ձևով՝ Նակշի Ջիհան, կոչվում է նաև Նակչևան), երկարության 88 աստիճանի, լայնության 38,5 աստիճանի վրա գտնվող քաղաք է։ Շենքերի մեծ մասը կառուցված են կղմինդրից։ Մշակվող կուլտուրաներն են՝ հացահատիկը, բամբակը, խաղողը և այլ պտուղներ։ Ժողովուրդը սպիտակամորթ է և, Համդուլլահի վկայությամբ, էլիջեկի բերդը, Կաբանի անցքը և այլն ենթակա են քաղաքին։ Դիվանային իրավունքը[8] 115 հազար դինար է և, բացի այդ, մեկ թյումեն է։*

**Բիլկանը** անցյալում՝ Կուբադի կողմից կառուցված հնագույն քաղաք էր։ Ներկայումս նման է գյուղի. շենքերը կղմինդրից են։ Եղանակը տաք է։ Ցանում են հացահատիկ, բրինձ և բամբակ։ Էմին-Ահմեդը[9] ասում է, որ այստեղից մինչև Վերսանը վեց փարսախ է. ունեցել է խիստ ամրակուռ բերդ։ Հելաքու խանը գրավելով բերդը, ժողովրդին կոտորել է և բերդն էլ ավերել։ Իլխանի զինվորները մի ժամանակ պաշարել են, սակայն չեն կարողացել գրավել այն, որովհետև մենջենիքով[10] գնդակոծելու համար քարեր չկային։ Հոջա Նասիր Թուսիի[11] ցուցումով փայտից թնդանոթներ շինեցին, կապարով լցրին, քարի փոխարեն մենջենիքով արձակեցին և, այդ կերպով գրավելով քաղաքը, հաղթանակի հասան։ Հետո, էմիր Թիմուրը, Ռումի երկրից վերադառնալով, ցանկացավ վերաշինել այդ բերդը։ Այս գործին ձեռնամուխ եղավ Միրզա Շահռուխը։ Այստեղ աշխատեցին բերել Բելասի գետը, և չնայած առաջացան որոշ դժվարություններ, այնուամենայնիվ, հաջողության հասան։ Գետն այժմ հոսում է։

**Մուղանը**, որը հայտնի է նաև Մուկան անունով, ընդգրկում է Ղարաբաղի երկիրը։ Տարեցույցում Մուկան-Բին Յաֆեթ անունը կրող վիլայեթի անունն է՝ Շիրվանի ծովի հարավային եզերքում. շրջապատված է Արմենով (Արմենիա), Շիրվանով, Ադրբեջանով և Խազերի ծովով։ Աթաբեկանի ժամանակ երեք հարյուր թումանից ավելի եկամուտ էր տալիս, հետո իջավ երեսուն թումանի և երեք դինարի։ Ջորի եզերքի քարից մինչև Արաս գետի ափն ընկած տարածության վրա, մինչև աչքով տեսանելի Սիլան լեռը, խոտը թունավոր է և կենդանիների համար մահացու, մասնավորապես գարնանը, երբ սոված կենդանիները ուտում են այդ խոտը։ Սակայն Սիլան լեռան որոշ վայրերում այդպիսի վտանգ չկա, ինչպես այդ մասին գրում էր Համդուլլահը։ Որոշ գիտակների գրածի համաձայն, Շամախի, Նեվշեհիրի, Մահմուդաբադի միջև մեկական մերհելե է։ **Նեվշեհիրը** նույնպես մի գյուղաքաղաք է, որի միջով հոսում է խալ ջուրը (գետը)։ **Բագրվանը** անցյալում Մուղանի քաղաքներից է եղել, ներկայումս գյուղ է։ Եղանակը տաք է, ջուրը սկիզբ է առնում նրան սահմանակից լեռներից։ Բերքը միայն հացահատիկն է։ **Բերզենդը** միջին մեծության մի գյուղաքաղաք է եղել։ Եղանակը այստեղ տաք է։ Ունի ջրառատ աղբյուրներ։ Հողը բարեբեր է և բերքառատ... **Մահմուդաբադը** մի գյուղաքաղաք է Ղարաբաղի գավառի Քավբարի դաշտում։ Կոչվում է նաև Շել։ Կուր

և խալ գետերի ծովը թափվելու վայրում գոյացած ծոցում և ծովեզերքում առատ ձուկ են որսում...։

Ղարաբաղը Մուղանի գավառներից է՝ Շիրվանի արևելքում. բաղկացած է մի քանի գյուղաքաղաքներից և շրջաններից։ Դրանցից են Բեթլանը և Վալկասիյենը։ Հեմշեհրեն, որը գտնվում է ծովեզերքից երկու փարսախ հեռավորության վրա, անցյալում քաղաք է եղել...։

Համդուլլահի վկայությամբ, Կուր գետի եզերքից մինչև Բաբ-էլ-էբվաբը[12], այսինքն՝ մինչև Դեմիր Կափուի դերբենդը, մի վիլայեթի անունն է... Հին ժամանակներում Շիրվանը քաղաքի անունն էր։ Ներկայումս մի քանի քաղաքներ ունեցող վիլայեթի անունն է։ Այդ քաղաքներից են Բաքուն, Շամախին, Էրսը, Բաբ-էլ-էբվաբը և այլն։

Շիրվանի մայրաքաղաքն է Շամախին, որը գտնվում է ծովից մեկ օրագնաց դեպի արևմուտք։ Այս քաղաքը եղել է շատ բարեշեն, այնպես որ տարեկան վաճառելիս է եղել 20 հազար բեռ մետաքս...։ (էջ 389—394)

Թիֆլիսը երկարության 83 աստիճանի, լայնության 43 աստիճանի վրա բերդաքաղաք է, գտնվում է Գյուրջիստանի լեռների արևելքում, Կուր գետի վրա։ Քաղաքի մի կողմը լեռ է, իսկ մյուս կողմը՝ գետ։ Հացահատիկը առատ է, սակայն պտուղները քիչ են։ Այս քաղաքն ունի երկու բերդ և երեք դուռ, որոնք գտնվում են իրար դեմ։ Կուր գետը հոսում է քաղաքի մեջտեղից։ Թիֆլիսը սեղմված է պարիսպների երկու հսկա սեպաձև ժայռերի միջև՝ երկար ու նեղ տարածությամբ։ Գետի հունը մոտավորապես 10 արշին է։ Հին գրքերում այս քաղաքի մասին նշված է իբրև Վրաստանի գյուղաքաղաք (կասաբա)։ Հնում, մուսուլմանների կողմից որոշ ժամանակ գրավված լինելուց հետո, վրացիները այն ետ են գրավել, սակայն հետագայում նորից է նվաճվել։ Ներկայումս ենթակա է Շիրվանին։ Այս քաղաքից դուրս, դեպի արևելք, կան բազմաթիվ տաք աղբյուրներ (իլիջաներ), որոնք շատ հաճելի և չափավոր ջերմաստիճան ունեցող հոսող ջրեր են։ Սրանց մի քանիսի ակունքների վրա քարուկիրով կառուցված են փոքրիկ կամարակապ լողարաններ։ Դրանք հին շինություններ են։ Ջրերից ծծմբի հոտ չի զգացվում և լոգանքը շատ օգտակար է։ Էմին Ահմեդը «Բնության հրաշալիքներ»-ում պատմում է, որ եթե այդ աղբյուրներից որևէ մեկի մեջ 10 հատ ձու դնենք, իննը հատը կեփվի և մեկը կկորչի։

(էջ 394)

**Բաբ էլ-էբվաբը** *(Բաբ էլ-Հադիդ[13] էլ է կոչվում)* **Դեմիր Կափու և Դերբենդ** *կոչված բերդն է, որ գտնվում է երկարության 81,5 աստիճանի և լայնության 42,5 աստիճանի վրա, Խազերի ծովի արևմըտյան կողմում։ Ալբրեզ (Էլբրուս) կոչված Վրաստանի լեռների և ծովի միջև ճանապարհը փակելու նպատակով կառուցված է ամրակուռ մի բերդ, որը հայտնի նավահանգիստ է։ Դերբենդը Խազերի ծովի, Սերիրի և Գերգունի, Թերբիստանի, Կերչի ու Կըյթաքի նավահանգիստն է։ Ծովեզերքն ընդհանրապես ավերված է և Դերբենդը մի գյուղաքաղաքի տեսք է ստացել։ Վերոհիշյալ վայրերը վուշի (քաթան) բեզը և քրքումը (զաֆրան) այստեղից են ստանում։ Ծովեզերքում տարածված են քրքումի դաշտերը։ Հիշյալ բերդը գտնվում է Կուր գետը ծովը թափվելու վայրից 21 փարսախ դեպի հյուսիս։ Արևելքում ծովն է, իսկ արևմուտքում՝ հսկա լեռներ են, որոնց միջև ընկած է 2—3 մղոն տարածություն գրավող հարթ դաշտ։ Հյուսիսում ապրող խազերը և թերեք ցեղերը, անցնելով այդ տեղից, կողոպտում էին դեպի հարավ ընկած Շիրվանի, Ադրբեջանի և Արանի երկրները։ Այդ պատճառով էլ Փարսի մելիքները դրանց հետ մշտապես կռվի և պատերազմի մեջ էին։ Այդ դրությունը շարունակվեց մինչև Նեվշիրվանի ժամանակաշրջանը։ Նեվշիրվանը[14] հիշյալ վայրերում կառուցեց պարիսպներ, այդ ցեղերի հետ հաշտություն կնքեց և ծովի եզերքից մինչև վերևի լեռները պարիսպներ շինեց, որոնք, յուրաքանչյուր երեք մղոնի վրա, ունեին երկաթյա դուռ։ Այդ պարիսպների մեջ պահապաններ բնակեցրեց և այդպիսով այդ ցեղերի ճանապարհը փակեց։ Ոմանք ասում են, թե այդ պարիսպը առաջին անգամ կառուցել է Իսֆենդյարը, որից հետո Նեվշիրվանը նորոգել է տվել… Այս պարսպի երկարությունը 10500 արշին է, իսկ լայնությունը՝ 550 արշին։ Ունի 70 աշտարակ։ Բարձրությունը հասնում է Կոստանդինեի պարսպի ցամաքի կողմի բարձրությանը։ Պատերը ներսի կողմից և դրսից ամբողջապես կառուցված են տաշած քարերից։ Պատերի մեջ կան քարեր, որոնք ունեն չորսական արշին երկարություն և լայնություն։ Արևելքում ծովն է, հարավում՝ ընդարձակ դաշտը, արևմուտքում՝ վերոհիշյալ [Էլբրուս] լեռներն են, որոնց վրա բուսնում են բազմատեսակ ծաղիկներ։*

*(էջ 394—395)*

**Էրսռ** *(Արս, Արեշ), Շամախիից երեք օրագնաց դեպի հյուսիս-արևմուտք, գետեզերքին, Նեվշիրվանի կառուցած մի գյուղաքաղաք է։ Եղանակն այստեղ շատ տաք է։ Շինությունները սակավ են։ Շիրվանի մելիքների բնակավայրերը հանդիսացող* **Գյուլիստան**



2 1676

բերդը այս նահիյեում սեպաձև, բարձր և ամրակուռ մի բերդ է։ Կըզըլ Աղաչը, Կուր գետը ծովը թափվելու տեղից մեկ օրագնաց դեպի արևելք, ծովեզրյա մի քաղաք է։ Նեվշեհիրը գյուղաքաղաք է Կուր գետի եզերքին՝ Շամախիից մեկ օրագնաց դեպի հարավ։ Լենքերանը (Լենքորանը) մի գյուղաքաղաք է՝ Կըզըլ Աղաչից երկու օրագնաց դեպի արևելք, ծովեզերքում, Էրդեֆիլի կողմից հոսող Բեբարզու անունով գետակի ծովը թափվելու վայրում։

Բաքուն, որ երկարության 84,5 աստիճանի և լայնության 40,5 աստիճանի վրա է, Դերբենդի մոտ, Շամախիից հյուսիս-արևելք, ծովեզերքին, Շիրվանի նշանավոր քաղաքներից է։ Եղանակն այստեղ տաք է։ Շրջակայքը, մինչև 10 փարսախ տարածությամբ լինելով քարքարոտ վայր, բուսականությունից բոլորովին զուրկ է։ Սակայն, եթե 10 մատնաչափ խորությամբ փորվի, հողը երևան կգա։ Այդ քարերի մի մասը վառում են փայտի փոխարեն։ Այս քաղաքի նահիյեի հարակից մասերից մեկն է Ամեյյանը, որտեղ մոտ 500 հորեր կան, որոնցից սպիտակ և սև նավթի յուղ է ստացվում։ Այս կողմերում, եթե հողը մի քիչ փորվի և այդ փոսի մեջ դրվի կաթսա ու պուտուկ (չեոմլեք), երկրի ներսի տաքությունից կարելի է կերակուր եփել։ Նիյազ-Աբադը ծովեզրյա գյուղաքաղաք է Ռաքվի և Դեմիր-Կափուի միջև։

(էջ 395—396)

ԳԵՏԵՐԸ. այս երկրի ամենամեծ երկու գետերից մեկը Կուր գետն է, որը սկիզբ առնելով Կալիգանի լեռներից, արևմուտքից հոսում է դեպի արևելք, անցնում է Լոռիի և Ախսկայի (Ախալցխա) հարավից։ Մի քանի իրազեկների ասելով, Կուր գետի ակունքը շատ մոտ է Քեոլե բերդի և Կարսի միջև գտնվող լեռներին։ Քարից մի եզան պատկեր են սարքել և նույնությամբ դրել հիշյալ ակունքի վրա։ Այդ պատկերի բերնից և քթից ջուրը խշշալով, մեծ ուժգնությամբ հոսում է Քեոլեի դաշտը և Քեոլեի մոտ անցնում համանուն նեղուցից (կիրճ)։ Եթե չլիներ այդ նեղուցը, լեռներով շրջապատված այդ դաշտը կվերածվեր լճի, կգոյանային ճահիճներ։ Հին ժամանակներում այդ նպատակով անցքեր են փորել և ապահովել ջրի ճանապարհը այդ քարերի միջով։ Հիշյալ գետը անցնելով քարի մեջ փորված անցքից և ապա՝ Կարա-Արգահանի բերդի տակից, հոսում է Էրջուգե և Խերթվիս բերդերի առջևից։ Այդ վայրում նրան է միանում Ախալքալաքի գետակը, որը Խերթվիսի միացման անկյան մոտից, հետո էլ Ազղուրի և Հաջրեքի բերդերի առջևից անցնելով, Բիքլիքի մարգագետնի մոտ իր մեջ է ընդունում Ախասխայի գետակը։ Ազղուրի բերդի առջևից և ապա լեռնանցքից անցնելուց

*հետո, ստանում է ծովի ձև և Թիֆլիսում հոսում է երկու հսկա բնական ժայռերի միջով, որոնց արանքը խիստ նեղ է։ Այնուհետև Կուր գետին է խառնվում Ջեքեմի լեռների Կանըք (Իորա) գետակը և, թեքվելով դեպի հարավ-արևելք, կազմում է սահման Շիրվանի և Ադրբեջանի միջև։ Համդուլլահի վկայությամբ, գետը Արանում բաժանվում է երկու ճյուղի, փոքրը թափվում է Շեմքունի լիճը, իսկ մեծը՝ Յուրթ Բազարի մոտ Արաս գետին միանալով, թափվում է Շիրվանի ծովը։ Այս գետի երկարությունը մոտավորապես երկու հարյուր փարսախ է։ Վերոհիշյալ Յուրթ Բազարը գտնվում է Շամախիից տաս փարսախ դեպի արևելք, նման է գյուղաքաղաքի, կոչվում է նաև Ջևադ։ Սակայն որոշ իրազեկների բացատրության համաձայն Կուր գետը ունի երեք ճյուղ, որոնք ծով են թափվում առանձին-առանձին։*

*(էջ 396—397)։*

Արասը *(Արաքս) մեծ գետ է։ Սկիզբ առնելով Բինգյոլի յայլայից, անցնում է Փասենի սահմանից և հոսում Չոբանի կամրջի տակով։ Հյուսիսում գտնվող Գեոգչա [Սևան] ծովից (լիճ) սկիզբ առնող Զանգի գետը, անցնելով Երևանից, միանում է Արաս գետին։ Հիշյալ բերդերի մոտ դարձյալ Արասին են միանում Կաբասուն և Զուկուր-Սաադից՝ Արփաչայը։ Բոլոր այս գետերը Արդի (Աղրի) լեռան ստորոտից հոսում են դեպի արևելք՝ Ալաշկերտից դեպի Նախիջևան և Ջուլֆա։ Կարչա Դաղի և Կահկահա բերդի մոտ Կենչեի և Կեֆանի գետակները խառնվում են Արասին և անցնում կամրջի տակով։ Մահմուդ-Աբադից Կուր գետի մի մասն էլ է միանում սրան և, անցնելով Ջեվադի կամրջի տակով, Արաս գետը Արս-Բաղ վայրում (որտեղ անցնում է բարձրադիր մի մեծ ճանապարհ) միանում է Կուր գետին և ծովի վերածվելով, Քեշթասեֆիի սահմանում թափվում է Խազերի ծովը։ Այս գետը շատ օգտակար է ոռոգման համար։ Երկարությունը մոտավորապես 150 փարսախ է... Երևանի արշավանքի ժամանակ, Թավրիզ գնալիս, Սուլթան Մուրադ խանը իր բանակով անցավ այս գետը։ Վարարած գետը քշեց տարավ երիտասարդ սոլաքներից[15] մեկին։ Բախտավոր փադիշահը ինքը սոլաքի ձեռքից բռնելով, նրան ազատեց[16] խեղդվելուց։ Այս գետը նշանավոր է պատմության մեջ։ Գտնվում է Արմենիա երկրի արևելյան սահմանում...*

*(էջ 397)*

Սամուր գետը *սկիզբ է առնում Վրաստանի լեռներից, ապա իր մեջ ընդունելով Դաղստանի գետերը և անցնելով Դեմիր Կա-*

փուից և Նիյազ-Աբադ գավառից, թափվում է Խազերի ծովը։ Արագահոս է և դժվարանցանելի։ Գետի հունը իր մեջ պարունակում է օճառի նման հողոտ և նետաձև քարեր։

Կոյսու գետը սկիզբ առնելով Կափուից չորս օրագնաց դեպի հյուսիս արևելք՝ Շամխալի լեռներից, թափվում է Խազերի ծովը։ Այս գետն էլ դժվարանցանելի է և արագահոս, սակայն մի քանի տեղերից կարելի է անցնել։ Սուլակ գետը սկիզբ է առնում Դաղստանի արևմուտքից և թափվում է Խազերի ծովը...

(էջ 397—398)

ԼԵՌՆԵՐԸ. այս երկրի լեռներից նշանավորը Ալբրեզ (էլբրուս) լեռն է, որը գտնվում է Դեմիր Կափուի արևմուտքում։ Սրան միանում են բազմաթիվ լեռներ, որոնք ձգվում են Քուրդիստանից դեպի Հիջազ։ Ասում են երկարությունը հազար փարսախից ավելի է։ Այս պատճառով մի քանի դատարկախոսներ այդ լեռը համարում են Կաֆ լեռը[17]։ Հիշյալ լեռան արևմտյան մասը միացած է Վրաստանին։ Այդ լեռները կոչվում են Ալգեզի (Ալագազ)։ Էրզրումն անցնելուց հետո՝ Կալիկար, իսկ Անթաքիա և Մասիսեին հասնելիս՝ Լեքամի լեռները, որոնք բաժանում են Շամի և Ռումի սահմանները։ Հումսի և Դամասկոսի մոտ այդ լեռները կոչվում են Ջեբել Լիբան։ Մեքքեի և Մեդինեի միջև՝ Ջեբել Արջ են կոչվում։ (Այս լեռների մասին իրենց տեղերում խոսված է)։

Ալբրեզի (էլբրուս) լեռան արևելյան մասը, Արանին և Ադրբեջանին միացած մասերը, կոչվում են Կըյթարի լեռներ, իսկ Գիլանի սահմանի մոտ սրանք կոչվում են Դիլեմի լեռներ և երկիրն էլ Թեբսիստան։ Իրաքի սահմանին հասնելիս Ռեքուտե և Թերֆեք են կոչվում։ Այս լեռներում ապրում են բազմաթիվ ժողովուրդներ, որոնցից հիշենք հիշյալ լեռան հյուսիսում բնակվող Կըյթաք անունով ժողովուրդը։ Հարավային մասը, կարծես պատի նման, սղոցով է կտրված։ Այս լեռան լայնությունը մոտ տաս օրագնաց է։ Ոմանք ասում են, թե այն կողմում, Դեմիր Կափուից բացի ուրիշ ճանապարհ (անցք) չկա, սակայն վերջերս հիշյալ լեռներում ցույց են տալիս մոտ 10 ճանապարհ, որոնք մեծ մասամբ գտնվում են լեռան կենտրոնական մասում։ Այդտեղ ժամանակին Բաբի էլլան անունով ամրակուռ մի բերդ է կառուցվել։ Շիրվանի, Դերբենդի և այլ բնակիչներ այդ լեռները կոչում են Դեմիր Կափուի լեռներ։ Շիրվանի ծովը, որը օրացույցում նշված է որպես Խազերի ծով, իսկ ատլասում՝ Մարեղասպիում, համառոտակի կերպով հիշվում է գրքի սկզբում։

Վերոհիշյալ Խազերի (Կասպից) ծովը արևելքից դեպի արևմուտք երկարած* մի մեծ լիճ է, որ ոչ մի ծովի հետ կապ չունի։ Մեծությամբ Սև ծովի չափ է։ Արևմտյան սահմանը, ըստ ատլասի, երկարության 85 աստիճանի, արևելյան սահմանը՝ լայնության 105 աստիճանի, հարավային սահմանը՝ երկարության 42,5 աստիճանի, հյուսիսային սահմանը լայնության 47,5 աստիճանի վրա է գտնըվում. ամբողջ երկարությամբ 20 աստիճան է, և լայնությամբ մոտ 5 աստիճան։ Ամեն կողմից այս ծովն են թափվում մեծ գետեր և քայքայում են նրան։ Այս պատճառով դիտողներն ասում են, որ Կասպից ծովը երկրի խորքում կապված է Սև ծովի հետ և հոսում է դեպի Սև ծովը։ Մինչև անգամ պատմում են, որ մի մուրացիկի փայտյա տաշտը ընկել է Խազերի ծովը և դուրս է եկել Սև ծովում։ Նման անհիմն վկայությամբ փորձում են ապացուցել այդ սխալ միտքը, սակայն իզուր։ Ծանոթանալով բնական գիտության հիմունքներին, տգիտության արդյունք հանդիսացող նման անհեթեթությունները հերքելու կարիքը վերանում է։ Հիշյալ ծովի արևմըտյան եզերքին, Դեմիր Կափուից մինչև Շիրվանի երկիրը, Նիյազ Աբադը և Բաքվի բերդն է։ Մուղանի երկրից հարավ՝ Ղարաբաղի սահմանում, Կուր և Արասի գետաբերաններում գտնվում է Բենդեր Մահին։ Դեպի Արևելք ընկած են. Գիլանի երկրից՝ Փումեն, Մասուլեն, Շեհրի Դեջթը, Լենքերանն և Ռուդսերնը, ինչպես նաև՝ Թիբիստանի երկրից՝ Ռիսթեմդարը, Ամելի Կադեմը, Մազանդարանը, Թահան և Սերմիտանքեն։ Հյուսիսային եզերքը անապատային է։ Այնտեղ են գտնվում Կըյըքի կոչված Սև լեռները, որտեղ ապրում է Խազերի ժողովուրդը։ Այս ծովը մակընթացություն և տեղատվություն չունի, ջուրը թանձր է և պղտոր։ Կալզեմի և Օման ծովերի նման վճիտ չէ։ Հատակում սպիտակ քարեր չեն երևում։ Չկան մարգարտի և մարջանի նման թանկագին քարեր։ Սակայն այս ծովում շատ կան ծովային կենդանիներ, խոշոր ձկներ և այլ տարօրինակ գազաններ։ Ծովում կան 6—7 փոքր կղզիներ, որոնց մեծ մասում ստացվում է սև և սպիտակ նավթ։ Կղզիներից բնակելի է միայն մեկը։ Մնացածներից մեկը նման է կլորաձև լեռան, որտեղից ջրերը դեպի ծովն են հոսում։ Մեկը անտառապատ է և խոտով հարուստ, սակայն օձերի շատության պատճառով դարձել է անբնակ։ Սև լեռ կոչված կղզին ամենից մեծն է։ Հարուստ է հոսող ջրերով և ճահիճներով, սակայն դարձյալ ավերակ է։ Ծովի

* Կասպից ծովը ձգվում է հյուսիսից հարավ և ոչ թե արևելքից արևմուտք։

*արևմտյան եզերքի մոտ կա խոտով և ջրով ծածկված մի կղզի, որի վրա ապրում են մի քանի տեսակ կենդանիներ...։*

*(էջ 396—399)*

*Հաջորդ էջերում Քյաթիբ Չելեբին մանրամասնորեն խոսում է Շիրվանի մելիքների, սուլթանների, չերքեզների, աբազաների վիլայեթի և այլնի մասին։*

*(էջ 400—406)*

## ՎՐԱՍՏԱՆԻ ԵՐԿԻՐԸ, ՍԱՀՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՄԱՍԵՐԸ, ՑԵՂԵՐԸ, ՔԱՂԱՔՆԵՐԸ ԵՎ ԳՅՈՒՂԵՐԸ

*Վրաստանը Շիրվանի և Սև ծովի միջև, մոտ քսան օրագնաց (մերհելե) տարածության վրա, լեռների մեջ ընկած մի վիլայեթ է։ Սահմաններն են. արևելքում՝ Դեմիր Կափուն և Շիրվանը, հարավում՝ Չըլդըրի, Կարսի և Էրզրումի վիլայեթները, արևմուտքում՝ Սև ծովը, հյուսիսում՝ Աբազայի և Դաղստանի վիլայեթները։ Հիշյալ վիլայեթը (երկիրը) բաժանում է մի քանի երկրամասերի, որոնցից յուրաքանչյուրն ունի իր իշխողը։ Ժողովուրդն ամբողջությամբ վրացիներ են, կրոնով քրիստոնյա։ Սրանց հողերը կցվել և խառնըվել են իսլամական քաղաքներին։ Կան տարբեր դասեր, որոնք Ջենջավաթ են կոչվում։ Այսպես, Աչըք Բաշ, Դադիանի, Մենգրել և այլ ցեղերը, ամենքն էլ վրացի են համարվում։ Ունեն իրենց առանձին երկրները և իշխանները։ Մենգրելները ապրում են Սև ծովի եզերքին։ Սակայն իսկական վրացիներ են համարվում Աչըք Բաշ և Դադիանի ցեղերը։*

Չեքեմը *(Ջեյեմը) Թիֆլիսի ուղղությամբ մի երկիր է։ Անցյալում այս երկրին իշխում էր Թահմուրասը։ Ներկայումս իշխում է Ռուստեմը, որը Վրաստանի խաների մեծն է։ Աչըք Բաշը մի երկիր է միջին մասում, որի շրջակայքում են գտնվում Ջեքեմը, Դեմիր Կափուն, Դաղստանը և Դադիանը։ Դադիանը Սև ծովի եզերքին, Աբազային սահմանակից մի երկիր է, որի իշխողները մշտապես պատերազմի մեջ են Աբազայի հետ։ Այս երկիրը մի կողմից հասնում է մինչև Ֆաշ գետը (Ռիոն)։ Մենգրելը Սև ծովի եզերքում, Ֆաշ գետը ծովը թափվելու վայրում մի նահիյե է (գավառակ)։ Սրա սահմանը հասնում է Քունիային։*

*Վերոհիշյալ վիլայեթներում կան մի շարք բերդեր և երկրներ, որոնք թեև գիտական գրքերում չեն հիշվում, սակայն պատմության մեջ համառոտ հիշատակություն կա հետևյալ դեպքերի մասին։ Սուլթան Սուլեյման խանը 955 (1586) թվականին Իլկազ Միրզայի դեմ արևելյան արշավանքի դուրս գալով, Վեզիր Ահմեդ փաշային ուղարկեց Վրաստան, որը իսլամական բանակով գրավեց հետևյալ բերդերը.* Բերաքան, *բարձր և երկարաձիգ պարիսպներով մի բերդ, որի տերը մեծաքանակ զինվորներով կռվի դուրս եկավ, բայց պարտվեց։* Քուրմեքը՝ *ամրակուռ մի պարիսպ,* Փենաքը՝ *ամրակուռ մի բերդ, վրացիների ուխտատեղին։ Գրավվեցին նաև* Բերնաքը, Սեմաղարը *և* Ախան *բերդերը։ Ապա* Նեչաքը *և* Էմրախորը, *որոնք Թորթումին մոտիկ բերդեր են։* Թորքումը *փոքրիկ բերդ է՝ Էրզրու-*

մից չորս օրագնաց հեռավորության վրա, որ գրավվեց հիշյալ տարվա շաբան ամսին։ Գրավվեց նաև Ակչա Կալան՝ այդ շրջանի ամրակուռ բերդերից մեկը, որը կառուցված է ամուր ժայռի վրա և համարվում է Վրաստանի բանալին։ Էշքսաղ, Քամխիս, Ներքեր և Աներեր սեպաձև բերդերի տերերը անձնատուր եղան։ Նվաճվեցին նաև այդ ժամանակվա Վրաստանի մեծ բերդերից Փերփերքը և Իվանեդերեսին: Վերջինս Վրաստանի բարեշեն վիլայեթներից է։ Թորթումի, Քամխիսի և Բենդենի համար նշանակվեցին սանջակի բեյեր։ Մեծ դժվարությամբ գրավվեց Նուլահ սեպաձև բերդը։

Ռիասբեն գտնվում է Ալբրեզի (Էլբրուս) խիստ ամայի մի մասում և ունի դժվարանցանելի ճանապարհներ։ Կրեմ Ջեմսը նահիյե է, որն ունի մի քանի բերդ։ Սրա ճանապարհները ծայր աստիճան դժվարանցանելի են թե՛ հեծյալների և թե՛ հետիոտների համար։ Շատ տեղերում անհրաժեշտ է լինում գնալ սողալով և խարխափելով։

Նաքու, Միքայի և Դիրեքլու բերդերի գրավումից հետո պարիսպները հողին հավասարեցվեցին։ Գրավվեց նաև Էշքուչեն բերդը, որի բնակիչները քաֆիրներ էին։ Հետո գրավվեց և հողին հավասարեցվեց նաև Ներքես բերդը։ Սրա բնակչությունը ապաստանեց բարձր լեռների կատարների վրա եղած քարայրներում և ծերպերում։ Նրանք այդ քարայրները վերածեցին պարսպի։ Օսմանցիները խրամատներում կռվելով, քարայրներում գտնվողներին հաղթեցին և գրավեցին բոլոր բերդերը։

Գորելի (Գուրիա) երկիրը գտնվում է Վրաստանի հյուսիսարևմտյան մասում և ունի իր առանձին իշխողը։ 997 (1588) թվականին Ղազի Կիրայ խանը այս երկրում նվաճել և թալանել է հետևյալ բերդերը. Բերասլո, Վինդասե, Քերամնե (վերջինս Քունիայի պարիսպն է)։ Բուրսելե բերդը (որը մի վոյեվոդություն է), Քենար Բիհը՝ մի իշխանություն. Էլվարդարի բերդը, որ Գորելի սեփականությունն է։ Սրանցից բացի, թալանված են հետևյալ քաղաքները . Փելաչե, Քոփսար, Բիքսոլա, Նուխելֆեք, Սենիառբլո, Ջեմեքյուր, Կոնստանտին, Բերասլո, Նազալի, Քուփին, Յանբուլ, Շանբար, Կուշքերման, Էզբարաշ, Շելուզ, Նիզեյաշլու, Քեռամնեօ, Հոժոթսա, Մենաղին, Դելաչեթիրչէ, Բուլասկիրո, Ջոզբոսուր, Շիրավկե, Հորավետեք, Սանթավ, Ջենկուկամթեսա, Էսկելե, Թերենփուլ, Կալնուսքե, Քոլենսե, Բուդիվրավեղ, Բազլավդեսե, Սենաթին, Հալըչ, Թուրշին, Ռահանին, Բերղեն, Կամենքե, Ջելուչո, Ջելուսքե,

---

* Հավանաբար գյուղեր են։

*Քելինան, Բուրսելե, Բավարավ, Շահուրդե, Լոկաթին, որոնց ներկայիս վիճակը մեզ անհայտ է մնում։*

**Էլգեզի** *լեռները գտնվում են Սև ծովի արևելքում և Էլրբեզ լեռան արևմուտքում։ Էլգեզի լեռնաշղթան կոչվում է նաև Գյուրջիստանի լեռներ։ Ասում են, որ այնտեղ ապրում են բազմաթիվ ցեղեր, որոնք խոսում են յոթանասուներկու լեզուներով։ Այս լեռները միանում են Էրզրումի լեռներին։*

*Վրաստանի մասին սրանից ավելի խոսելու հնարավորություն չունեցանք։*

**Լրացում.** *այստեղ ավելացվել են աշխարհագրության թարգմանիչ Էբուբեքիր բին Բեհրամ էլ-Դեմեշկիի*[18] *մի քանի խոսքերը։*

*(էջ 406—407)*

## ԿԱՐՍԻ ԷՅԱԼԵԹԻ ՄԱՍԻՆ

Այս էյալեթի սահմաններն են. արևելքից և հարավից՝ Երևանն ու Չըլդըրը, հյուսիսից՝ Ախալցխան, արևմուտքից՝ էրզրումը։

էյալեթն ունի վեց սանջակ. Կարսը, որ իշխանության կենտրոնն է, Փոքր Արդահանը, Խոջեվանը, Զարուշադը և Քեչվան, որը սահմանակից է Կաղզմանին։ Իսլամների կողմից էյալեթը նվաճվելուց հետո, վրացիները այն նորից ետ են վերցրել։ Հետագայում Թիմուրը ավերել է վիլայեթի ամենաամրակուռ՝ Կարսի բերդը։ Սակայն, ավելի ուշ Ալ-օսմանը[19] այս կողմերը գրավելուց հետո, 988 (1580) թվականին վեզիր Կարա Մուստաֆա փաշան վերանորոգել է Կարսի բերդը՝ կառուցելով նրա պարիսպները, մզկիթը և բաղնիքը։ Այս բերդում կան բազմաթիվ հին մզկիթների և գերեզմանների մնացորդներ, որոնցից է նաև Շեյխ Նբու էլ-Հասան էլխականի գերեզմանը։ Մի ժամանակ Թիմուրլենկը պաշարել է [բերդը], սակայն չի կարողացել գրավել։ Բերդն այդ ժամանակ գտնվում էր Ֆիրուզ Ջենջեթ անունով մի անձնավորության ձեռքին։ Ի վերջո Թիմուրը «ամանով» գրավել է այն և ավերել։ Ներկայումս ունի հատուկ կուլեր (զինվորներ)։ Բերդը գտնվում է երկու լեռան միջև, նրա մոտովն է անցնում Արաս գետը։

Արդահանը գտնվում է էրզրումի հյուսիս-արևելքում։ էրզրումի և Արդահանի միջև ընկած տարածությունը հինգ օրագնաց է։ Ունի փոքր պարիսպ և բերդ։ Շրջակայքում կան անտառներ։

Կաղզմանը գտնվում է Կարսի և Բասենի միջև, մի լեռան ստորոտում, որի դիմացը նույնպես կա մի լեռ։ Այդ երկու լեռների միջև է գտնվում Կաղզմանի լեռնանցքը (դերբենդը)։ Արաս գետն անցնում է այդ երկու լեռների միջով և Կաղզմանի մոտով։ Կաղզմանի արևմուտքում Արաս գետի վրա կառուցված է Չոբանի կամուրջը։ Կաղզմանի մոտ Ուչ Քիլիսե (էջմիածին) անունով տեղում կա հայկական հայտնի մի եկեղեցի [վանք]։ Այս եկեղեցում կան շատ քահանաներ։ Սրանք ամեն տարի գարնանը հավաքում են բազմատեսակ ծաղիկներ, լցնում մի մեծ կաթսայի մեջ և վրան ջուր ածելուց հետո, մի քանի գործերով ծածկում են բերանը։ Քառասուն օր այդ ծաղիկների վրա կարդում են հայտնի աղոթքներ։ Այդ քառասուն օրվա ընթացքում եկեղեցու տաքությունից այդ ջուրը եռում է և ստացվում է նեբիզի[20] նման մի հյութ, որի զտելուց հետո, ստացված ծաղկաջուրը վաճառում են մսխալը մեկ ոսկով։ Այդ ջուրը քսում են իրենց մեռյալների երեսին, աչքերին, բերնին և քթին։ Նրանք հավատում են, թե երկնքից հրեշտակներն են եկել և եռաց-

րել այդ ջուրը։ Այդպիսի ջուր պատրաստվում է նաև Ախթամարի եկեղեցում*. այս երկու տեղից բացի ուրիշ ոչ մի տեղում չի պատրաստվում։ Այդ շրջանների մարդիկ բաժանվում են երկու խմբի. մի մասը պատկանում է Ախթամարին, մյուսը՝ հիշյալ Ուչ Քիլիսեին։

Այս վայրի գլխավոր լեռը կոչվում է Սողանլուի յայլա: Հարավ-արևելքում Աղրի [Արարատ] լեռն է, որի ստորոտում կան ընդարձակ անտառներ։ Այս լեռը այն աստիճան բարձր է, որ ոչ ոք չի կարող բարձրանալ նրա գագաթը, ամպերից էլ բարձր է։ Կարսից դեպի Երևան տանող լեռնանցքներն են՝ Կարախան գյուղի ճանապարհին, Շեհների անցքը [կիրճ], Շորակյալի դիմացի Կալայի անցքը, Քերեքմեզի անցքը, Աղղի Աչըքի անցքը, Կաքլուի անցքը և Կարաբաղից՝ Բեքրենի անցքը...

(էջ 407—408)

Ախալցխան (Ախասխա, այլ կերպ՝ Ախսկա) Վրաստանի մի մասն է. առաջներում մտնում էր Չըլդըրի էյալեթի մեջ, բայց երբ պատերազմների ընթացքում Չըլդըրը ավերվեց, Ախալցխան վերածվեց անկախ էյալեթի։ Սահմաններն են. արևելքից՝ Կարսը, հարավից՝ Չըլդըրը, արևմուտքից՝ Վրաստանի լեռները, հյուսիսից՝ Թիֆլիսը։ Սանջակներն են՝ Աջարա, Արտանուշ, Արդահանի Բյուզուրք [մեծ], Արդահանի Քյուչուք [փոքր], Սոքե (Օլթիին ենթակա), Փերթեքրեք (օջաքլըք է)[21], Փենեք, Փոսխով, Թավեսքեր, Չըլդըր, Հաջրեք, Խերթվիս, Շուշատ (օջաքլըք է), Մախջիլ, Նըսֆի-Լեվանե (օջաքլըք է), Մամրվան, Ախալքալաք, Թրիալեթ: Այս էյալեթը 656 կըլըջ է[22], ունի 97 զեամեթ, թեզքերեով և առանց թեզքերեի 559 թիմար[23], Ջեբելուների[24] հետ միասին տալիս է 1700 զինվոր։

Ախալցխայի նկարագրությունը. Ախալցխան վիլայեթի կենտրոնն է։ Այս վիլայեթը եղել է վրացական ցեղերի տիրակալներից Ղազեի որդի Մենուչեհրի և ժառանգական պատրիարքի մայրաքաղաքը։ 988 (1580) թվականին վեզիր Մուստաֆա փաշան, այն ժամանակ, երբ սուլթան Մուրադ խանը նրան հանձնարարել էր գրավել Շիրվանը, իբրև օջաքլըք, ժառանգական կարգով ստացավ այս վիլայեթը, որտեղ մի քանիականավոր մարդիկ արդեն ընդունել էին իսլամությունը։ Հետո այս վիլայեթը գրավեցին Կըզըլբաշները (իրանցիները)։ 1045 (1635) թվականին Սուլթան Մուրադ խանը վեզիր Քենան փաշային որոշ քանակությամբ զինվոր տալով, ուղարկեց այս կողմերը։ 23 օրվա պաշարումից հետո բերդը խաղա-

* Հեղինակը էջմիածինն ու Ախթամարը անվանում է եկեղեցի (քիլիսե)։ Պետք է հասկանալ վանք։

ղությամբ հանձնվեց։ Այդ շրջանում նվաճված վեց բերդերն էլ օջաքլըքի կարգով հանձնվեցին Սեֆեր փաշային։ Ներկայումս դրանք գտնվում են այդ գերդաստանի տիրապետության տակ։ Կառուցվել են բազմաթիվ ջամիներ, բաղնիքներ, մեդրեսեներ և խաներ։ Այդ վայրերում կան մի շարք հին գերեզմաններ, որոնց մասին վիլայեթի ժողովուրդը ասում է, որ դրանք հին մուսուլմանական գերեզմաններ են։

Ախալքալաքը վրացերեն անունն է, որ նշանակում է Սպիտակ բերդ[25], գտնվում է Էրզրումի հյուսիս-արևելքում, Գորիի հարավ-արևմուտքում։ Գորիի ու Ախալքալաքի միջև եղած տարածությունը հինգ օրագնաց է։ Ախալքալաքը երկու ձորերի մեջտեղում գտնվող բլուրի վրա հսկա մի բերդ է։ Այդ ձորերից մեկում բարակ ջուր է հոսում։ Առաջներում վիլայեթի կենտրոն է եղել, սակայն սահմանի վրա գտնվելու պատճառով ավերվել է։ Եղանակը խիստ է։ Ցանում են հացահատիկ և աճեցնում պտուղներ։

Արտանուջը [Արտանուշ] կառուցված է մի քանի մինարեի բարձրություն ունեցող ժայռոտ, բարձր լեռան քարերի մեջ։ Այստեղ գնալու համար կա միայն մի ճանապարհ։ Բեռնված անասունը կարող է բարձրանալ այդ ճանապարհի միայն կեսը, իսկ հետիոտն մարդը բարձրանում է մեծ դժվարությամբ։

Երկու լեռների միջև կա ընդարձակ ձոր, որի մեկ կողմում գտնվում է ցածրադիր բերդը։ Լեռան կողմի պատի [պարսպի] մեջ կա մի բնական սահրինջ (ջրամբար), իսկ բերդի կենտրոնում փորված է մի մեծ ջրամբար։ Գյուղաքաղաքի բնակիչների թաղերը և շուկան կառուցված են լեռան փեշերի վրա։

**Ծանոթություն.** Քյաթիբ Չելեբին ծանոթության ձևով ասում է. «Սրանից հետո անցնելու ենք Եվրոպայի և Աֆրիկայի ցամաքամասերի արևմտյան կողմում գտնվող Օսմանյան կայսրության սահմանների նկարագրությանը, իսկ մյուս մասերը նկարագրելու ենք մի քանի այլ գլուխներում... Այդ էյալեթներն են՝ Վանը, Ջըլդըրը, Էրզրումը, Դիարբեքիրը, Հալեպը, Շամը, Բաղդադը, Բասրան, Շեհրի-Զորը, Ռական, Մարաշը, Սվաղը, Անատոլիան, Տրապիզոնը և Կարսը»։

(էջ 408—409 և 410)

## ԱՐՄԵՆԻԱՅԻ ԵՐԿՐԻ ՄԱՍԻՆ

*Քառասունմեկերորդ գլխում խոսելու ենք Արմենիայի մասին։*

**Սահմանները.** *այս երկրի սահմանների մասին կան տարբեր տեղեկություններ. Տարեցույցում ասված է, որ Ադրբեջանը, Արանը և Արմենիան սահմանակից երեք մեծ երկրներ են։ Նրանց սահմանազատումն ու առանձին նկարագրությունը դժվար լինելու պատճառով գիտնականները երեք երկրները նկարագրում են միատեղ։*

*Վայրերի մեկնաբանող Շերնեշինը*[26] *ասում է, որ Արմենիան բաժանվում է երեք մասի. առաջինն են Դեբիլը, Կալիկլան և Շեմխսադը, երկրորդը՝ Բերդան և Բիլկան, երրորդը՝ Նախիջևանը։*

*Համդուլլահը ասում է. Արմենի [Արմենիա] վիլայեթը բաղկացած է երկու մասից՝* **Փոքր** *և* **Մեծ**: **Փոքր Արմենիան** *Իրանի մեջ չի մտնում։ Նրա արևելքում է գտնվում* **Մեծ Արմենիան**, *հյուսիսում՝ Ռումը, հարավում՝ Շամը, արևմուտքում՝ Ռումի ծովը։ Նրա (Փոքր Արմենիայի) մեծ քաղաքներից են՝ Սիսը, Թարսուսը և Կիբրոսը։*

**Մեծ Արմենիան** *Իրանի սահմանների մեջ է մտնում և հայտնի է Թուման Ախլաթ անունով։* **Սահմաններն** *են՝ Փոքր Արմենիան, Ռումը, Դիարբեքիրը, Քուրդիստանը, Ադրբեջանը և Արանը։ Երկարությունը Էրզեն էլ-Ռումից հասնում է մինչև Սալմաս, իսկ լայնությունը՝ Արանից մինչև Ախլաթի վիլայեթի վերջավորությունը։ Մայրաքաղաքը Ախլաթն է։ Դիվանային իրավունքը անցյալ ժամանակներում մոտ երկու հարյուր թուման էր, հետո իջավ մինչև 39 թումանի։ Նվաստիս կարծիքով, ներկայումս* **Մեծ Արմենիան** *բաղկացած է Վանի և Էրզրումի վիլայեթներից, իսկ Փոքր Արմենիան՝ Ադանայի և Մարաշի էյալեթներից։ Մի քանի պատմագիրներ գրում են, որ անցյալում Արմենիայի մայրաքաղաքը Ախլաթն է եղել։ Պետությունը կործանվելով, ժողովուրդը դարձել է ռայա և ցրվել Թարսուսի և Մասիսեի*[27] *շրջաններում։ Ներկայումս երկրի մայրաքաղաքը Սիսն է։ Սրանց նախահայրերը պատկանել են Արմեն-բին-Լիտի-բին Յունանին*. նրանցից են նաև Էնջար, կերչ, Սեբասեթե, Սադրիե և Սեբատ ցեղերը։ Հետագայում բոլորը քրիստոնյա են դարձել։ Ներկայումս այդ ժողովրդի մնացորդները քրիստոնյաներ են և հարկատու*[28]*։ Թակվիմ-ալ-Բուլդանում*[29] *որպես Արմենիայի քաղաքներ են հիշատակված Էլբիստանը, Ադանան, Ար-*

ճեշը, Ադերբեյջանը [Ադրբեջան], Բիթլիսը, Բարդան, Բիլեկանը, Թիֆլիսը, Ախլաթը, Դեբիլը, Դվինը, Սուլթանիյեն, Սիսը, Թարսուսը, Մալաթիան, Վանը, Ոստանը, Մուշը, Էրզեն էլ-Ռումը (Էրզրում) և Մալազկերտը։ Վերոհիշյալ քաղաքները այդ վիլայեթի սահմաններում ցրված լինելու պատճառով մենք այստեղ բավականանում ենք հիշատակելով Արմենիայից Վանի էյալեթը։ Առանձին գլուխներով հիշատակելու ենք Փոքր Արմենիայի մեջ մտնող Մարաշը և Մեծ Արմենիայի մեջ մտնող Էրզրումը և Կարսը։

(էջ 410—411)

## ՎԱՆԻ ԷՅԱԼԵԹԸ

Օսմանյան երկրին սահմանակից երկիր է։ Սահմաններն են. արևելքից՝ Ադրբեջան կոչված Թավրիզի երկիրը, հարավից՝ Քուրդիստանն ու Սուլթանիեի նահիյեն, հյուսիսից՝ Չըլդըրի և Կարսի էյալեթները, արևմուտքից՝ Դիարբեքիրի էյալեթը։ Ունի 13 սանջակ և մեկ հյուքումեթ[30], որի տիրակալը իշխում է ժառանգական կարգով։ Սանջակներն են. 1. Վանը՝ փաշայի սանջակը, որը իշխանության կենտրոնն է, 2. Ադիլջեվազը, 3. Արճեշը, 4. Մուշը, 5. Բերկիրին, 6. Կարկարը, 7. Քեսանին, 8. Իսբայիրդը [Սպարկերտ], 9. Աղաքիսը, 10. Էքրատի-բին-Կոթուրը, 11. Բայազիտի բերդը, 12. Բերդան, 13. Օվաջիկը։ Սա համապատասխանում է Այնի-Ալի-էֆենդիի[31] գրանցումին։ Սակայն Կոջա-Նիշանջին[32] «Թաբակաթ»-ում հետևյալ կերպ է հաշվում Վանի սանջակները. Ոստան, Խիզան, Հեքարի, Մոկս, Սիրվի, Էլկակ, Սալմաս, Դենբըլի, Էսթան։ Այս հարցում ժամանակի ընթացքում տեղի են ունեցել փոփոխություններ, որի հետևանքով հակասություն է նկատվում։ Տարակույս չկա, որ երկրների բաժանումը պետք է փոփոխվեր, քանի որ այդ չէր սահմանվում ամեն տարի։ Այդպես է նաև էյալեթների, սանջակների և երկրների սահմանների բաժանումը։ Այս կապակցությամբ ստուգման խստապահանջություն չպետք է ցուցաբերվի։ Հետևաբար մենք այստեղ կխոսենք գիտական գրքերում հիշվող քաղաքների մասին և հնարավորին չափ կբացատրենք վերոհիշյալ էյալեթի սանջակների վիճակը։

Վանը երկարության 83,5 աստիճանի և լայնության 37 աստիճանի վրա հարթ դաշտավայրում, Արճեշի ծովի արևելյան կողմում ընկած նշանավոր քաղաք և ամրակուռ բերդ է։ 940 (1533)

թվականին սուլթան Սուլեյման խանը դուրս գալով Իրաքի արշավանքին, Հալեպում եղած ժամանակ, այս կողմերը եկավ մեծ վեզիր Իբրահիմ փաշան։ Աջեմի կողմից գրավված այս քաղաքի բնակիչները հպատակություն ցույց տվին և հանձնվեցին։ Գրավելով Վանը, սուլթան Սուլեյմանը նորոգել տվեց բերդը և այն վերածեց առանձին էյալեթի։ Հիշյալ քաղաքն ունի ներքին և արտաքին պարիսպներ։ Ներքին պարիսպը՝ քաղաքի արևմտյան կողմում, բարձր և կտրված ժայռի վրա է, որի մեկ կողմը քաղաքի վարոշն է, մյուս կողմը, պարսպից դուրս՝ արմակուռ բերդը։ Արևելյան կողմը, որտեղ քաղաքն է, կա պարսպի նման կտրված ժայռ։ Արտաքին կողմը դեպի դաշտ իջնող մի բլուր է, որի վրա առանձին տեղերում, կառուցվել են երկու հարկանի ամուր աշտարակներ և պատնեշներ։ Պարսպից դուրս, հարթ տեղում, ըստ սովորության, ժայռերը փորելով, երեք դռներ են շինել. արևելքում՝ Թավրիզի դուռը, հարավում՝ Իսքելեյի դուռը, իսկ հարավ-արևելքում այգիներ և պարտեզներ են։ Քաղաքը և պարիսպները գտնվում են լճից բավական հյուսիս։ Սակայն պարսպից դեպի լիճը ճանապարհ կա։ Պաշարման ժամանակ կարող են նավեր երթևեկել։ Բոլոր թաղերը և շինությունները, բեյլերբեյիի պալատը, շուկան և չարշիները, բաղնիքները և ջամիները գտնվում են պարսպից ներս։

Խոսրով փաշան այս քաղաքում կառուցել է մի գեղեցիկ ջամի, մեդրեսե և թյուրբէ[33], որը էվկաֆի է վերածվել։ Այս վերջինի շինարարությունն ավարտվեց 975 (1567) թվականի ռեջեբ ամսին և տեղում նամազ կատարվեց։ 958 (1551) թվականին Ռուստեմ փաշան այնտեղ մի բաղնիք էլ էր շինել։ Ներքին պարիսպներում կարգված բերդակալների և հերթապահ ենիչերիների թիվը հասնում է 1500 մարդու։ Կուլի աղաները և բեյլերբեյիի ծառայողները ապրում են պարսպից դուրս։ Նավահանգստում Արճեշից, Ախլաթից և Ադիլջևազից նավեր են գալիս-գնում։ Շրջակայքի լեռները գտնվում են քաղաքից կես փարսախ հեռավորության վրա։

Թիմուր Գերգանը, գրավելով Վանի բերդը, իր մեծ էմիրներից մեկին պատվիրել էր բերդը քանդել։ Զանազան միջոցներ և ամեն տեսակ ջանքեր գործ դնելուց հետո, հնարավոր չեղավ բերդը լիովին ավերել։ Այդ լեռնանման բերդի քարաշեն հիմքերը քանդելու հնարավորություն չունենալով, բավականացան հետագայում շինված մի քանի աշտարակներն ու պատնեշները քանդելով։ Սակայն բերդի այս ավերումները ազդեցություն չունեցան նրա ամրության վրա։ Դրանից կարելի է պատկերացնել, թե ինչ աստիճանի ամրակուռ էին Վանի բերդը և նրա պարիսպները։

Բարկիրին [Բերկրի] փոքր քաղաք և սանջակ է. գտնվում է Վանի հյուսիսում, Արճիշից դեպի արևելք։ Տարածությունն է 5 փարսախ։ Բերդը ավերակ է, որը նորոգել է Սուլթան Սուլեյման խանը։ Բերկրիի և Արճեշի միջև է գտնվում Հեյդեր-Բաղի անունով մի գյուղ։

Արճիշը [Արճեշ] Վանից երկու օրագնաց դեպի հյուսիս-արևմուտք, լճից դեպի հյուսիս ընկած մի գյուղաքաղաք է, բերդ և սանջակ։ Գտնվում է հարթավայրում, շրջապատված է այգիներով։ Համդուլլահը ասում է, թե սրա պարիսպները կառուցել է Խոջա Թաջեդդին Ալիշահի վեզիրը։ Ստանում է հացահատիկի և բամբակի բերք։ Դիվանային իրավունքը 74 հազար դինար է (՚). Ունի ամուր բերդ և պարիսպ։ Արճեշի (Վանա) ծովը արևմուտքից դեպի արևելք, քիչ դեպի հարավակողմը թեքված երկարավուն մի լիճ է։ Շատ տեղերից կարելի է տեսնել դիմացի կողմը։ Շրջապատի տարածությունը 60 փարսախ է։ Ջուրը բավականին լեղի է և աղի։ Տարեկան մի անգամ թարեհի (տառեխ) անունով մի տեսակ շատ սննդարար ձուկ է երևում, որ տանում են շրջակայքի բնակիչները։ Վանը (քաղաքը) այս լճի արևելյան ափին է։ Լճի հյուսիսային ափերից անցնելով, հասնում են Բենդի Մահի [դետը], Արճեշ, իսկ հետո՝ Ադիլջեվազ և Ախլաթ։

Ախթամարը փոքր կղզի և բերդ է վերոհիշյալ լճի հարավային ափին։ Ոստանից հեռու է մեկ նետաչափ, իսկ Վանից՝ 3—4 ժամ։ Արճեշի մոտ, Դիադին կոչված վայրում, կա տաք ջուր (իլիջա), որ կարող է մի ջրաղաց դարձնել։ Այդ աղբյուրի ջուրը դուրս է բխում շատրվանի նման։ Կա մեկ ուրիշ տաք ջուր ևս, որը կաթսայի նման եռում է։

Ադիլջեվազը [Արծկե] գտնվում է լճի եզերքին, Արճեշից երկու օրագնաց դեպի արևմուտք։ Լճի ջուրը բարձրանալու հետևանքով Ադիլջեվազի մի քանի աշտարակներ ծածկվել են ջրով։ Գյուղաքաղաքը կառուցվել է ծովահայաց բարձր մի տեղում և ամբողջովին առնված է պարսպի մեջ։ Լիճը ընկած է բերդի հարավային կողմում։

Ախլաթը Ադիլջեվազից մեկ օրագնաց դեպի արևմուտք, հարթավայրի վրա այգիներով, պարտեզներով և մրգերով շատ հարուստ գյուղաքաղաք է։ Ունի մեղմ կլիմա։ Բլրի վրա կա մի բերդ։ Միրշերեֆը ասում է, թե Ախլաթը կառուցվել է հին ժամանակներում և որոշ շրջանում եղել է Արմեն փադիշահների մայրաքաղաքը։ Այսպես, Անուշիրվանի ժամանակ Ամիջա Մասիբը այդտեղ նստած իշխում էր իր էյալեթի վրա։ Օդը շատ հիանալի է

*այգեշատ վայր է, հայտնի է իր մրգերով, մասնավորապես ծիրանով և խնձորով, որոնց մեկ հատը կշռում է հարյուր գիրհեմ։ Ախլաթի խնձորը հայտնի է նաև Ադրբեջանում։ Անցյալում, խառնակությունների ժամանակ, հիշյալ քաղաքը գրավել և ավերել են սելջուկները, այնուհետև, 626 (1228) թվականին սուլթան Ջելալեդդին Խորեզմշահը, իսկ ավելի ուշ՝ մոնղոլական բանակները։ 644 (1246) թվականին ուժեղ երկրաշարժից այս քաղաքի շատ շենքեր քանդվեցին։ 955 (1549) թվականին Շահ Թահմասբը գրավելով բերդը, հողին հավասարեցրեց։*

*Սուլթան Սուլեյման խանը, այս հնագույն քաղաքը մեկ կողմ թողնելով, լճի ափին կառուցեց մի պարիսպ, սակայն հին պարիսպը ավերվելուց հետո, նորը հնի չափ բարեշեն վիճակ չունեցավ։ Քաղաքի մոտից ջրերը հոսելով թափվում են լիճը, որը գտնվում է գյուղաքաղաքից քիչ հեռու։ Անցյալում, մի շարք հայտնի բարեպաշտ գիտնականներ ծնվել և ապրել են այս քաղաքում։*

Սիփան լեռը *Ախլաթի հարավում հսկա մի լեռ է։ Իր շրջապատում և ստորոտներում ունի շատ բնակիչներ։ Գագաթը մշտապես ծածկված է ձյունով և երևում է 30 փարսախ հեռավորությունից։ Շրջապատը 50 փարսախ է։ Ունի խոտաշատ ընդարձակ մարգագետիններ։ Գտնվում է Ախլաթից մեկ օրագնաց դեպի արևմուտք։ Այստեղ վերջանում է Վանի լիճը։*

Բիդլիսը *[Բիթլիս] գտնվում է Դազվանից մեկ օրագնաց արևմուտք, մի ձորի մեջ, երկարության 81,5 աստիճանի, լայնության 37,5 աստիճանի վրա. ամրակուռ բերդ է և գյուղաքաղաք։ Ձորից մի գետ է հոսում։ Շինությունները և թաղերը գտնվում են այդ գետի երկու կողմերում։ Կենտրոնից կարելի է անցնել կամրջով, մուտքն ու ելքը նեղ և դժվարանցանելի են։ Տները շրջապատված են պարիսպով։ Միր Շերեֆ խան Բիդլիսին[34] իր «Պատմության» մեջ, մանրամասն խոսելով Բիթլիսի մասին, ասում է. «Մեր քաղաքը Իսքենդերի գործն է և անվանված է նրա ղուլամներից (ծառա) մեկի անունով։ Իրաքից և Բաբելոնից Ռումի երկիրը գնալիս [Իսքենդերը] ստուգում էր իր հանդիպած վայրերի ջուրն ու օդը և Տիգրիս գետի մեջ թափվող ջրերի թեթևությունը։ Գալով Բիթլիսի ջրի (գետի) թափվելու վայրը, այդ գետի ջուրը շատ ընտիր ու օգտավետ գտավ և ջրի եզերքով գնալով եկավ այն տեղը, ուր Քեսուրի ջուրը և Ռաբաթի ջուրը իրար են խառնվում։ Երկուսն էլ ըստուգեցին և Քեսուրի ջուրը ավելի ընտիր գտան։ Գալով Քեսուրի ջրի ակունքի մոտ, Իսքենդերը մի քանի օր կանգ առավ այդ հիանալի վայրում։ Ներկայումս այդ վայրը «Իսքենդերի վրանատեղ» է*

կոչվում։ Հետո Իսքենդերը հրամայեց. «Այդ բանուկ վայրում այնպիսի մի քաղաք և ամուր բերդ պետք է կառուցել, որ ինձ նման մի փադիշահն անգամ գրավելու անկարող լինի»։ Այս հրամանի վրա Բիդլիս անունով ղուլամը, հիշյալ աղբյուրի մոտ երկու փարսախ տարածության վրա Քեսուր գետի և Ռաբաթի միջև ամրակուռ մի պարիսպ կառուցեց, որը մինչև այսօր էլ ամրակուռ մի բերդ է այդ բանուկ անցքում։ Բիթլիսի բերդը կառուցվել է եռանկյան ձևով։ Բերդը զերծ չի եղել մշտական խռովություններից և նեղություններից[35]։

Այնուհետև հեղինակը հիշում է մի շարք նման առասպելական դեպքեր։

Բիթլիսի օդն ու ջուրը իսկապես շատ հիանալի են, թեև ձմեռը ընդհանրապես շատ խիստ է լինում, սակայն բնակիչներին նեղություն չի պատճառում։ Յայլայի պտուղներից ընտիր են տանձն ու խնձորը. խաղողը շրջակայքից է ստացվում։ Բնակիչները ամռանը քոչում են այգիները և ամբողջ վեց ամիս ապրում շրջակայքի դաշտերում և կանաչապատ վայրերում, իսկ աշնանը վերադառնում տները։ Այս քաղաքը հին ժամանակներից ի վեր, ճանապարհների պահպանության սովորական (սովորութային) հարկերից[36] ազատված է եղել։ Իսլամական իշխողները այս քաղաքում կառուցել են բազմաթիվ բարեգործական հիմնարկներ։ Դրանցից են քաղաքի կենտրոնում, տաշված քարերից կառուցված 21-աչքանի կամուրջը, որի երկու կողմից ժողովուրդը անց ու դարձ է անում, չորս մեծ ջամիները, որոնցից ամեն մեկը կառուցվել է նախորդ սուլթաններից մեկի կողմից և ունեն քուֆի[37] տառերով գրություններ։ Այդ չորս մեծ ջամիներից մեկը կոչվում է հնագույն ջամի, իսկ մեկն էլ նախապես հայկական եկեղեցի է եղել, որը քաղաքի գրավումից հետո վերածվել է ջամիի և հայտնի է Կըզըլ Մեսջիտ անունով։ Մեկն էլ՝ Գյոք Մեյդան կոչված վայրում, էմիր Շեմսեդդինի ջամին է, որի մոտ կա մի մենաստան։ Չորրորդը, պատմագիր Միր Շերեֆի պապի՝ Շերեֆ խանի ջամին է, որին կից կառուցվել են մեդրեսե և մենաստան...

...Վերոհիշյալ Բիթլիս քաղաքը մի դերբենդ է Ադրբեջանի, Դիարբեքիրի, Ռեբիայի և Արմենի (Արմենիա) միջև։ Թուրքիստանից, Իրանից, Խորասանից դեպի Շամ և Հիջազ գնացողները անպայման պետք է անցնեին նրա ժայռի տակով, որովհետև այլ ճանապարհ չկար։ Այդ քարի կիրճը գտնվում է Բիթլիսից մեկ փարսախ հարավ։ Անցյալում ճանապարհը անցնում էր նրա մի կողմով։ Ժամանակի ընթացքում, գետի վարարման պատճառով, ճա-

նապարհը փակվեց։ Այդ դարի խաթունններից [տիկին] մի բարեգործ անձ, այս ժայռը ծածկել տալով, ճանապարհը նորից բացեց, իսկ Բիթլիսում կառուցել տվեց մի մզկիթ և քաղաքի կենտրոնում՝ մի մեծ կամուրջ։ Ներկայումս հայտնի է «Փել խաթուն» և «Մեսջիդի խաթուն» անուններով։ Քաղաքի բնակիչների մեծ մասը հայ զիմմիներ են։ Մուսուլմանները պատկանում են Շաֆիի դավանանքին, իսկ մի փոքր մասն էլ՝ Հանիֆիի դավանանքին։ Մեծամասնությունը քաջարի, առատաձեռն, հյուրասեր մարդիկ են...

Այնուհետև հեղինակը հիշում է մի շարք իսլամ կրոնագետների, շեյխերի, գրագետների, բարեպաշտների։ Դրանցից է նաև սուլթան Սելիմ խանի Նեդիմը Մեվլանա Հեքիմ Իդրիսին, որը սուլթան Բայազիտ խանի հրամանով գրել է Ալ-Օսմանի պատմությունը՝ «Հեշթ-Բիհիշթը»՝, պարսկերեն լեզվով։

Բիթլիսի շրջակայքի գյուղաքաղաքները և նահիյեներն են. Ռաո-վա, որ գտնվում է Դատվան գյուղի և Բիթլիսի միջև և ընկած է Բիթլիսից կես օրագնաց դեպի արևելք։ Խուսրև փաշան այստեղ երկու քարվանսարա, մեկ մինաստան, մեկ բաղնիք, տասը խանութ, մեկ մզկիթ կառուցեց, մոտավորապես 12 հազար արշին հեռավորությունից ջուր բերել տվեց և մոտ 30 տուն ռայաներ բերել տալով, այնտեղ բնակեցրեց։ Եկող-գնացողներին ուտելիք տվող այս շինությունը այժմ էլ իր իսկական տեղում է գտնվում։

Անցյալում Բիթլիսը և Դատվանը ունեին բազմաթիվ քարվանսարաներ, որոնք ավերված լինելով, ձմռան սաստիկ ցրտերի ժամանակ, անցորդներն ամեն վայրկյան գտնվում էին մահվան սպառնալիքի տակ։ Սուլթանները և իշխողները բազմիցս ցանկություն են ունեցել նորոգելու այդ վայրը, նույնիսկ մի քանիսը ձեռնարկել էին շինարարության, սակայն արգելքների հանդիպելով, գործը գլուխ չեն բերել։ 980 (1572) թվականին ավարտվեց այս բարեգործական շինությունը և անցորդները հանգստանալու հնարավորություն ունեցան։

(էջ 414—416)

Մուշը, ըստ տարեցույցի, մի լեռան ստորոտում, հարթավայրում, դաշտի եզրին ընկած փոքր քաղաք է։ Դաշտը, որ հայտնի է Մուշի դաշտ անունով, խիստ ընդարձակ է, ունի երկու օրագնաց տարածություն։ Միր Շերեֆը ասում է. Մուշը նահիյեի քաղաքն է և կառուցվել է հին ժամանակներում։ Ներկայումս երևում են նրա ավերված պարիսպների և շենքերի մնացորդները։ Ջեդեմ Շերեֆ խանի ժամանակ՝ քաղաքից մեկ փարսախ դեպի հարավ, մի լեռան գագաթին պարիսպ է կառուցվել։ Հետո սուլթան Սուլեյման

խանր բարեգործական շինության վերածեց հին բերդի կեսը, որը գտնվում է քաղաքի արևմտյան կողմում կտրված մի բլրի վրա։ Ներկայումս մոտ 50 հոգի պաշտպանում են այս շինությունը։ Հայերի տերմինով, անջրդի տեղերը կոչվում են «մուշ»։ Այդ վիլայեթում քիչ կան պտղատու ծառեր, սակայն լեռնային մասերում և քաղաքում երևում են այգիներ։ Հացը առատ է։ Ռայաները ունեն շատ անասուններ, մասնավորապես շատ ոչխարներ ու գոմեշներ, որովհետև կերի արոտավայրերը ընդարձակ են։ Վերոհիշյալ դաշտի երկարությունն է մոտավորապես ութ փարսախ և լայնությունը՝ երեք փարսախ։ Ունի շատ ուղիղ և հարթ մակերես, շրջապատված է անտառապատ լեռներով և ձյունածածկ յայլաներով։ Աննման ջրերը հոսում են ամեն կողմից։ Եփրատ գետը, այս դաշտի հյուսիսային կողմից անցնելով, կտրում է դաշտի մեկ երրորդը և հոսում դեպի հարավ։ Կարա Սուն, գալով արևելյան կողմից, կենտրոնական մասից անցնում և թափվում է Եփրատ գետը։ Աշնանը այս լեռներում որսում են աննման բաղեներ։ Այդ դաշտում որսում են նաև բազմատեսակ թռչուններ և ձկներ։ Գյուղերում ամենուրեք ապրում են հայեր։ Դիվանային իրավունքը, ըստ Համդուլլահի վկայության, անցյալում, Ջինգիզյան սուլթանների ժամանակ, 69 հազար դինար էր։ Օսմանյան սուլթանների դարում, ըստ Արքայական դավթարի[39], հինգ հազար դինար է, չորս հազար մարդ էլ գրանցված է որպես զիմմի[40]։

Խնուսը Բիթլիսի նահիյեներից մեկն է, որը, ըստ Միր Շերիֆի վկայության, ենթարկվում է Բիթլիսին, սակայն կան տեղացիներ, որոնք համարվում են Էրզրումի լիվայից։ Խնուսը ունի ընդարձակ յայլաներ, դրանցից մեկը նշանավոր Բինգյոլի յայլան է։ Հայտնի են նաև Սուշեհրի և Ջերլի Շերեֆեդդին յայլաները։ Միր Շերեֆի նախնիները, պապերը և քրդական ցեղերը այդտեղ են հանգստանում։ Առատ են Խնուսի բերքերն ու պտուղները։ Այստեղից հոսում է երկու գետ, որոնցից մեկը տալիս է սպիտակ աղ, իսկ մյուսը՝ կարմիր աղ։ Դրանցից տարեկան չորս հազարական ալթունի եկամուտ է ստացվում։ Խնուսի դիվանային իրավունքը Մուշի չափ է։ Ռայաների թվում հայերը քիչ են և տալիս են մոտ 400 հեծյալ զինվոր։ Այս նահիյեում քամու նման արագավազ ձիեր կան։ Հացահատիկից բացի այլ բերքեր չունի։ Այստեղի արտառոց երևույթներից մեկը Բուլանըք (պղտոր) լիճն է, որի մակերեսը, ենթադրում են, որ մի փարսախ է։ Այս ջուրը պղտոր ու կարմրավուն է և երբեք չի զտվում։ Կա նաև Նազեք անունով մի լիճ, որը գտնըվում է Ախլաթի և Բուլանըք լճի միջև։ Սրա ջուրը վերին աստիճա-

նի զուլալ է և քաղցրահամ։ Ձմռանը խիստ սառչում է և վրայից քարավաններ են անցնում։ Երբ մոտենում է ձնհալը, նրա սառույցը այնպես է պայթում, որ ձայնը լսվում է երեք փարսախ հեռավորությունից։ Հալչելուց հետո լճում անթիվ ձկներ են երևում, որոնք գնում են դեպի շրջակայքի փոքրիկ գետերը։ Խնուսի և Ախլաթի բնակիչները առատությամբ որսում են այդ ձկները։ Մեկ մարդը օրական որսում է գրեթե երեք բեռ։ Էմիրները հաճախ ցանկացել են այդ լիճը մակթուի[41] կարգով տալ, որովհետև նրանք ենթադրում էին ստանալ մեծ եկամուտ, սակայն պատահաբար, այդ տարիներին ձուկ չի երևացել։

**Նեմրութի լեռը** Բիթլիսի հյուսիսում հսկա մի լեռ է։ Ասում են, որ Նեմրութը այստեղ յայլա է բարձրացել և այնտեղ բազմաթիվ բերդեր ու բարձր շենքեր կառուցել։ Սակայն զայրույթի արժանանալով, այդ շենքերը անցել են գետնի տակ, և այդտեղից ջուր է դուրս բխել։ Ներկայումս, երկու հազար արշին բարձրության վրա գտնվող այդ լեռան գագաթի վրա կա մի փոքր լիճ, որի երեք փարսախ շրջապատում կան սեպաձև ժայռեր։ Այս ժայռերի մեջ կա միայն երեք ճանապարհ. մեկը հետիոտների ճանապարհ է, իսկ մյուս երկուսը՝ ձիավորների։ Հիշյալ լճի եզերքին կան վճիտ ջրերով աղբյուրներ, իսկ շրջակայքի քարերը կարծես տաշված լինեն։ Հյուսիսային կողմի լեռը աստիճանաբար ցածրանում է, և այդտեղից երկաթի թիրտի նման մի զանգված է հոսում դեպի ներքև։ Այս լեռր մոտ 600 արշին երկարություն և 50 արշին բարձրություն ունեցող բարձր բլուր է։ Հիշյալ վայրում կան ծծմբի հանքեր, որոնք պատճառ են հանդիսանում նման նյութերի դուրս գալուն։ Այս մասին գրված և ապացուցված է բնական գիտությունների գրքերում։

**Կորուր** գտնվում է Երևանից երկու օրագնաց դեպի արևելք և համարվում է նահիյե և լիվա։ Հովտում ունի մի փոքրիկ բերդ, որտեղ սուլթան Մուրադ խանը՝ Երևանից վերադառնալիս, հանդիպել է մի քանի «կարմրագլուխների» (կըզըլբաշ)։ Նրանց հեռացրել է բերդից, բայց գրավելու ցանկություն չի ունեցել։ Հետագայում, հաշտության ժամանակ, հիշյալ պարիսպները քանդել է տվել և՝ վայրը սահմանամերձ լինելու պատճառով, անբնակ դարձրել։ Ներկայումս այդ բերդը պատկանում է Թավրիզի էյալեթին և նորից վերանորոգվել է։

**Բայազիտի բերդը** Կոթուրի հյուսիսում մի բերդ է և լիվա։ Գտնվելով սահմանամերձ գոտում, բերդը ենթարկվել է մշտական հարձակումների։

Չալդրանի դաշտը[42] երկար, ընդարձակ մի դաշտ է։ Երկու մեծ և հռչակավոր փադիշահներ, մեկը օսմանյան սուլթան Սելիմը և մյուսը Սաֆեվի Շահ Իսմայիլը, որոնք երկուսն էլ ռազմագետ և բախտավոր փադիշահներ էին, բախվել են այս դաշտում։ Վերոհիշյալ սուլթան Սելիմը փառավոր հաղթանակ տարավ Շահ Իսմայիլի դեմ։ Շահ Իսմայիլը պարտություն կրելով փախավ և նրա աստղը խավարեց։ Սա մեծ և նշանավոր դեպք է։

Ոստանը, ինչպես նշվում է տարեցույցում, Վանից մոտ մեկ օրագնաց դեպի հարավ-արևելք, ծովեզերքին, հարթավայրի վրա ընկած մի քաղաք է։ Սահմանը հասնում է մինչև Վան, որից այն կողմը Քուրդիստանի լեռներն են։ Հիշյալ քաղաքը ներկայումս մի գյուղ է։ Կարճկանը Բիթլիսի նահիյեներից մեկն է, որը մի ժամանակ առանձին նահիյե է եղել։

Էրմուքը մի բերդ է Ախլաթի ծովի ափին, վերին աստիճանի սեպաձև մի տեղանքում։ Դիվանային իրավունքը 13 հազար դինար է։ Թերքերը փոքր քաղաք է, թեև անցյալում եղել է մեծ քաղաք։ Շինված է բլրի վրա։ Քաղաքի մոտից անցնում է բարձր լեռից հոսող մի մեծ գետ։ Հարուստ է այգիներով և բանջարանոցներով։ Քաղաքի մի կողմում կա մի ամուր բերդ։ Դիվանային իրավունքը 25 դինար է։

Միմանը գյուղաքաղաք է։ Ունի շատ այգիներ և պտուղներ։ Դիվանային իրավունքը 12 հազար է։ Խրադինը փոքր քաղաք է։ Նախապես եղել է մեծ և բարեշեն։ Դիվանային իրավունքը 5300 դինար է։ Սելիմը գյուղաքաղաք է։ Դիվանային իրավունքը 7000 դինար է։ Այինը միջակ քաղաք է։ Դիվանային իրավունքը 4300 դինար է։ Էյնեքանը մի նահիյե է Մուշի մարզում։ Երբեմն Խնուսին էր միանում, երբեմն էլ առանձին նահիյե կազմում։ Դեբիլը տարեցույցում նշվում է իբրև Արմենիայի նշանավոր և բարեշեն քաղաք և հին մայրաքաղաք։ Էրդեբիլից ավելի հին և ընդարձակ պարիսպ ուներ, որը հետագայում ավերվեց։ Այստեղ բազմամարդ է Թերսա ցեղը։ Եկեղեցին և մզկիթը կառուցվել են իրար մոտ։ Ժողովուրդը գործում է աննման կարպետներ։ Այստեղ շատ ընտիր է կարմիր ներկը։

Սեքման Աբաղը Խոյի մոտ մի նահիյե է, որտեղ ապրում է Դենբելի աշիրեթը։ Շերեֆ խանը ասում է, որ Դենբելի աշիրեթը Շամի էմիրներից՝ Իսա անունով, մի անձի հետ է կապված։ Այս աշիրեթը անցյալում Շամի երկրից եկել և Իրանի տիրակալների մոտ ծառայության է մտել։ Այդ ժամանակ էլ, օջաքլըքի կարգով, նրան են հանձնել Խոյի մարզի Սեքման Աբադը։ Դրանից հետո,

այդ վայրում հետզհետե աշիրեթներ և ցեղեր հավաքվելով, բազմացան և Դենբելի աշիրեթը նշանավոր դարձավ։ Անցյալում այս աշիրեթը եզիդիներից էր բաղկացած։ Ավելի ուշ, աշիրեթների որոշ էմիրներ և ազնվականներ ընդունեցին սյուննի դավանանքը, անհավատությունից ու ապօրինությունից[43] հրաժարվեցին, ժողովրդի մեծամասնությունը ընտրեց ուղիղ փրկության ճանապարհը, սակայն մի մասը այդ մոլորության մեջ էլ մնաց։ Ըստ ավանդության, Դենբելի աշիրեթը Յահյա աշիրեթի մի մասն է եղել և բնակություն է հաստատել Սեքման Աբագում։ Քուրդիստանի աշիրեթների և ցեղերի մեջ այս աշիրեթը կոչվում է Դենբել քահյայի աշիրեթ, իսկ էմիրները կոչվում են Իսաբեյլու։ Սրանց բեյերից ոմանք իշխել են բուն Խոյում։ Կոթուրի հովիտը, Էբկան և Օվաջըքլի նահիյեն, որը Նախիջևանի մարզումն է, ենթարկվել են նրանց տիրապետությանը։ Ոմանք էլ տիրացել են Էբկայի կեսին, Սուլեյման Սարայի նահիյեին, Նախիջևանի մարզից՝ Էլաքիսի ձորին և Շաթուրին։ Դեռևս օսմանյան զինվորների ներխուժումից առաջ այդ կողմերը ավերվել են և գրավվել շահերի կողմից։ Երբեմն էլ օսմանցիները, ըստ հին սովորության, սրանց են տվել Էբկայի երկիրը, Զալդրանը, Սուլեյման Սարայը և Սեքման Աբադը։ Ի վերջո, օսմանցիները Զալդրանի նահիյեն սանջակի վերածեցին։ Շերեֆ խանի «Պատմություն»-ից պարզվում է, որ այս Դենբելի աշիրեթը դաշտաբնակ է եղել։ Երբ 1045 (1635) թվականին, ռեբիել-էվվել ամսին, օսմանյան սուլթան Մուրադ խանը, գրավելով Երևանը, ուղղվել է դեպի Թավրիզ և իջևանել Արաս գետի ափին, Դենբելի աշիրեթից 500 տուն, Շարուրի նահիյեի բնակիչներից մոտ 300 տուն և Փեսիանի հասարակությունից որոշ քանակությամբ տներ [սուլթանից] յուրթ էին խնդրել։ Այս պատճառով Դենբելի [աշիրեթը] տեղափոխվեց Երզնկայի սանջակը, Շարուրի ռայաները՝ Թերջանի կազան, իսկ Փեսյանը՝ Բասեն։ Հրաման տրվեց նաև այդ աշիրեթներին տեղավորել և վերաբնակեցնել ավերակ վայրերում և անբնակ գյուղերում։ Մուլքեր ոմեցողներին տրվեցին սանջակ և էմիրություն, իսկ աշիրեթի երևելիներին՝ առանձին թիմարներ և զեամեթներ։

Խոշաբը Քուրդիստանի բեյերին պատկանող Մահմուդիների «օջաքլըքն» ու նրանց «հյուքյումեթի» կենտրոնն է... Նեզհեն ասում է, որ Խոշաբը նահիյե է և նրա դիվանային իրավունքը հազար դինար է...

Այս բերդի գյուղաքաղաքն ու լիվան գտնվում են երկու լեռների միջև։ Այդ լեռներից սկիզբ են առնում երկու գետեր, որոնք Խո-

*շաբի մոտ միանալով, հոսում են դեպի հյուսիս-արևմուտք, որտեղից էլ անցնելով դեպի հյուսիս՝ քարե կամրջի տակով, Ախթամարից մի քիչ դեպի արևելք, թափվում են Վանի լիճը...*

Հեքյարի *«հյուքյումեթը» գտնվում է Ամադիյեի հյուքյումեթի արևելքում՝ Վանի էյալեթում, Ոստանի նահիյեից հյուսիս-արևմուտք։ Շրջապատված է Բիթլիսի հյուքյումեթով և Դիարբեքիրի էյալեթից՝ Քուրդիստանի մի քանի սանջակներով, իսկ հարավից Շեհրի-Զոր էյալեթով և Մեհրանի հյուքյումեթով։ Այս հյուքյումեթին են պատկանում մի շարք բերդեր և նահիյեներ։ Արևելյան սահմանը Կըզըլբաշի (Իրանի) սահմանը լինելով, ընդհանրապես ամայի, անբնակ վայրեր են։ Վանի էյալեթին հպատակ այս հյուքյումեթը պատկանում է քուրդերի հեքյարի ցեղի վիլայեթին։ Անցյալում այս հյուքյումեթի էմիրներն ու իշխողները և հեքյարի ցեղը տիրություն են արել Վանի և Ոստանի վրա։ Հետո սաֆևի և օսմանյան տիրակալները Վանը վերածեցին էյալեթի (քրդական հյուքյումեթի) և իրենց վիլայեթից որոշ մասեր տվին նրան։ Ներկայումս Հեքյարիի էմիրների կառավարական կենտրոնը՝* Ջուլամերկը, *իրենից ներկայացնում է մի բերդ և գյուղաքաղաք՝ Ոստանի հարավ-արևմուտքում։*

Շակակը *[Շատախ] Ջուլամերկի բերդի հյուսիսում, լեռան վրա ընկած մի նահիյե է։ Այդ սարից բխում է մի գետակ, որը թափվում է Վանի լիճը։ Շատախը գտնվում է Մոկսի և Ջուլամերկի միջև, սակայն ավելի մոտ է Ջուլամերկին։ Ջերիլ բերդը գտնվում է Ջուլամերկից արևմուտք, լեռան ստորոտում։ Նրա հյուսիսում Շիրվիի բերդն է։* Բի-Սուրուն[44] *բերդը գտնվում է նույնպես լեռան վրա, Ամադիեի և Ջերիլի միջև... Ջելի բերդին են պատկանում մի քանի բերդեր ու նահիյեներ...* Դեզիի *բերդը նույնպես Հեքյարիին ենթակա բերդերից է...* Բայան բերդը *Քուրդիստանի ամրակուռ բերդերից է։ Քիսանի լիվան բերդ է և գյուղաքաղաք։* Մոկսը *լեռների արևմուտքում, հարթավայրում ընկած մեծ բերդաքաղաք է։* Խիզանը *ընկնում է սրանից մի քիչ հյուսիս-արևմուտք։ Մոկսի առջևից մի գետ է հոսում, որը Խիզանի հողից անցնելուց հետո, թափվում է Դիլեքլու ժայռից ներքև և միանում Բիթլիսի գետին...* Կարկառի *բերդն ու նահիյեն նախապես ենթակա էին Մոկսին, հետո դարձել է անկախ նահիյե։*

*(էջ 416—421)*

Ծանոթություն ՈՐԱՏԱՐԱԿՉԻ. *Հեղինակի ձեռագիր օրինակում Արևելքի երկրների նկարագրությունը ընդհատվում է Վանի էյալեթով։*

*Հրատարակչի կարծիքով, Քյաթիբ Չելեբին Մեծ Հայաստանի կազմի*

մեջ մտնող էրզրումի և Կարսի էյալեթներն առանձին գլուխներով պետք է նկարագրած լիներ, քանի որ այդ մասին հիշատակել է գրքի սկզբում։ Հրատարակիչը ասում է, որ այդ նյութերը կամ կորել են և կամ հեղինակի այդ նպատակը նրա վաղահաս մահվան պատճառով չի իրագործվել։

Այդ պակասը և Ասիայի մնացած երկրների նկարագրությունը լրացվել է հրատարակչի կողմից։ Այդ էյալեթների և երկրների նկարագրության համար հեղինակը օգտվել է նաև հայտնի մեծ աշխարհագրության թարգմանիչ էրուբեքիր բին-Բահրամ էլդեմեշկիից (էջ 422)։

## ԷՐԶՐՈՒՄԻ ԷՅԱԼԵԹԸ

Այս էյալեթը Ռումի[45] արևելյան կողմում, Արմենիայի մի մասն է համարվում։ Սահմաններն են. արևելքում՝ Երևանի, Կարսի վիլայեթները, հյուսիսում՝ Տրապիզոնի վիլայեթը, հարավում՝ Դիարբեքիրը և Վանը։ էյալեթն ունի 11 սանջակ. էրզրում (փաշայի սանջակն է), Իսփիր, Բասեն, Թորթում, Խնուս, Կարահիսարի Շարքի, Կըզուջան, Մամրվան, Քըղի, Մեջենկերտ, Նեքսա, Ալաշկերտ և Բայազիտ։ էլայեթում կա 15 բերդ, թեզքերեով և առանց թեզքերեի 5150 թիմար։ Ջեբելուներով միասին ունի 7800 զինվոր։ Այս էյալեթում Մեջենկերտից, Իսփիրից, Ալաշկերտից և Բայազիտից բացի, կան «Նեոբեթլու թիմար»[46] կոչված թիմարներ, որոնք հավաքական կարգով 3—4 մարդու են պատկանում, և հերթականությամբ գնում են պատերազմի։ Մյուս վիլայեթներում նման թիմարներ չկան։ էրզրումը էյալեթի մայրաքաղաքն է և 500 ակչեով մեվլեվիություն[47] է։ էրզրումի լիվայի կազաներն են. էրզինջանը (Երզնկա), Բայբուրդը, Վերին Թերջանը, Ստորին Թերջանը, Թորթումը, Դեվերլերը (այլ կերպ՝ Գյումշխանե), Թորուլը, Կուրաշայը, Կըզուչանը, Կոզայը, Գերջանիսը, Քելքեթը, Քեմախը, Քեվանսը, Մերդջանը, Յաղմուր-Դերեսին։

էրզրումի բնութագիրը։ Այս պարսպապատ քաղաքն ունի հին և նոր թաղամասեր, որտեղ կան ջամի, բաղնիքներ, շուկաներ և բեզիստան[48]։ Ունի մեծ ցանքատարածություններ, սակայն ծառեր և պտուղներ չկան։ Շինարարական փայտը բերում են երկու օրվա ճանապարհ կտրելով։ Ընդհանրապես աթար են վառում։ Հոսող աղբյուրներից նշանավոր է «Դրախտի աղբյուրը» (Ջեննեթ փինարի)։

Թավրիզի դռան մեջ կա մի հայտնի եկեղեցի, որի գմբեթը 50 արշին բարձրություն ունի։ Այս գմբեթի մի քանի կամարները, աշխարհի պարծանք վեհափառ Մարգարեի ծննդյան տարիներին քանդվել են և այլևս անհնարին է եղել վերականգնել դրանք։ Այս

եկեղեցու դիմաց, մուսուլմանները մի մզկիթ են կառուցել և անվանել են «Քյաբեի օրինակը», որը իր կառուցվածքով ունի Քյաբեի[49] ձև։ Քաղաքն ունի երեք դուռ. Թավրիզի դուռը հյուսիսային կողմում է։ Այս դռնից դուրս կա մի ջուր, որը թափվում է «Շամխանեի զենե» անունով քարե տաշտերի մեջ։ Մյուսը կոչվում է Վրացական դուռ (Գյուրջի կափուսու,), երրորդը՝ Սրզնկայի դուռ (Էրզնջան կափուսու)։ Կա մի զբոսավայր՝ հոսող աննման ջրերով, ուր փռում են Թավրիզի դռնից։ Այստեղ է նաև Շեյխ Աբդուլրահմանի ուխտատեղին։ Էրզենի մոտիկ վայրում կա ածդահայի տպավորություն թողնող մի տեսարան։ Այս լեռան վրա գտնվող ժայռերը հեռվից նայողին թվում են իսկական ածդահաներ։ Ժայռերի այս շարանը կոչվում է «Կալիկայի սաստ»[50]։ Ռումի էմիրներից մի քանիսը բաժանվել և կազմել են առանձին իշխանություններ, որոնցից մեկը տիրում էր Արմենիային։ Իշխանի մահից հետո, նրա Կալի անունով կինը կառուցել է տալիս Կալիի քաղաքը։ Այս կինը իր պատկերը նկարել է տվել մի դռան վրա։

Մեծ թվով աչեմ վաճառականներ են գալիս այս քաղաքը, որոնցից տեղական իշխանությունները առնում են մաքս և շատ ապրանքներ։ Այս քաղաքում է գտնվում Էբու Իսհակի գերեզմանը, որը դարձել է ուխտատեղի։ Կան թվով մոտ հարյուր նահիյեներ, որոնցից են՝ Խնուսը, Իսփիրը, Մերսը, Կուլին, Բողազը, Սուշեհրը, Թերջանը, Քելքիդր և այլն։ Մյուշբեմելը Սվազից երեք օրագնաց հեռու մի կազա և մի փոքր գյուղաքաղաք է։ Ունի ջամի և բաղնիք։ Հարթ դաշտում շինությունները մեծ մասամբ փայտաշեն են։ Գյուղաքաղաքի մոտ է գտնվում Չեմեն-Իադի կոչված յայլան, ուր բարձրանում են թուրքմեն ցեղերը։ Այս յայլաներից դեպի հարթությունները են հոսում մի շարք աղբյուրներ։ Լեռները բնակեցված են։

Քեմախը—Եփրատ գետի վրա բարեշեն գյուղաքաղաք է, ունի բերդ։ Քեմախի ու Երզնկայի հեռավորությունը մեկ օրագնաց է։ 798 (1395—1396) թվականին Յըլդըրըմ Բայազիտի էմիրներից Թեմուր Թաշ փաշան գրավել է այս բերդը։ Ծնճղուկները ոչնչացնում են քաղաքի բնակիչների հացահատիկների կարևոր մասը... Նշանավոր է այս գյուղաքաղաքի պանիրը։ Նահիյեներն են՝ Կուրուչայ, Վատի Ռանեք, Օրլը։ Այս կաղայի մոտակայքում կան արծաթի հանքեր, որի հետևանքով էլ նահիյեն կոչվում է նաև Գյումուշ-խանե։ Սերկայումս, հանքավայրի մոտ, մեծ և բարեշեն մի գյուղա-

քաղաք է կառուցվել։ Մինչև այնտեղ 1—2 ժամվա ճանապարհ է։ Այս հանքերի կառավարման գործի համար նշանակված է հատուկ էմին։ Բնակիչները խոսում են հունարեն։ Հանքում արտադրվում է արծաթ, պղինձ, ոսկի։ Մուկաթաա է[51]։ Ունի մի փոքրիկ գետ, որը գալիս է Քեվանիսից։ Նահիյեն կառավարում է սուբաշին[52], որը նշանակվում է էրզրումի փաշայի կողմից։

**Թերջանը** (այլ կերպ՝ Դերջան) միջին մեծության քաղաք է. գտնվում է Երզնկայից և էրզրումից 40 փարսախ հեռավորության վրա։ Այստեղ կան շատ արոտավայրեր։ Մի քանի անգամ երկրաշարժեր են տեղի ունեցել և շենքերի մեծ մասը քանդվել է։ Սելջուկյան սուլթան Ալաեդդին Քեյկուբադը նորոգել է այս քաղաքի պարիսպը։ Ունի լավ կլիմա։ Եփրատ գետը հոսում է քաղաքի դըրսի կողմից։ Շատ հարուստ է հացահատիկով, բամբակով, խաղողով և պտուղներով։

**Կոլուբը** մի մեծ գյուղ է սահմանամերձ հովտում, Բայբուրդից մեկ օրագնաց դեպի հարավ...

**Բայբուրդը** գտնվում է էրզրումի հյուսիս-արևմուտքում և Տրապիզոնի հարավ-արևելքում։ Բայբուրդից դեպի էրզրում երկու օրագնաց ճանապարհ է։ Բայբուրդի և Տրապիզոնի միջև գտնվող դաշտի տարածությունը երեք օրագնաց է։ Ունի ջամի, որտեղ կատարվում է ուրբաթ օրվա աղոթքը[53]։ Մի կողմի ժայռի վրա կա բերդ։ Եղանակն այստեղ խիստ է։ Չափազանց առատ են ցանքերը և հացահատիկը։ Այս քաղաքի կենտրոնից են անցնում Ջույի Ռուհ և Չորաք գետերը։ Բերդի արևելյան կողմում, բերդի տակից հոսում է մի մեծ գետ։ Երկու օրվա տարածության վրա կա մի մեծ լեռ։ Վերոհիշյալ գետի միջոցով է փոխադրվում լեռան վրա կտրված փայտը։ Երբ փայտը քաղաք է հասնում, ամեն մարդ, ըստ իր նշանի, վերցնում է իր փայտը։ Այդ գետը հոսում է դեպի Տրապիզոն։ Այս նահիյեն էրզրումի փաշայի խասն է։

**Թեքմանը** էրզրումից ոչ հեռու՝ հյուսիս-արևելքում, երկու լեռների միջև ընկած մի բերդ է և գյուղաքաղաք։ Ունի նաև մի քանի լիճ։ Արոտավայրերի օգտագործման իրավունքը ստանում է Բինգյոլի յայլայում ապրող ժողովրդից։ Ձմեռն այստեղ երկարատև է և հաճախ է պատահում, որ ձյունը իջնում է հասունացած ցանքսերի վրա և վնասում նրանց։ **Քեվանիսի** բերդը Մուրադ խանի օջախն է։ էրզրումի փաշայի կողմից այստեղ նստում է սուբաշի։ Բերդի մոտից անցնում է մի փոքր գետ։ Նահիյեն լեռնոտ է և անտառապատ։

**Կարահիսարի Շարքի** լիվայի կազաները հետևյալներն են.

էրուելխայր, էզոքյոյ, Օզկրը, էսքֆեր, Ակշար Օվասը, Ակքյոյ, Ուլուբեկ, Իփոքրի, Բազարսույու, Սուշեհիր, Բեհրամշահ, Բոլման, Բիրամլու (այլ անունով՝ էրտեր), Չեմաս, Հիսմանե, Չեղաբե, Սիսորթա, Շաբխանե, Շիրան, Կըրիք, Կոյունլուհիսար, Միլաշ, Յակոբ Բեյի դերբենդը (այլ անունով՝ Փենչշենբե)։

Կարահիսարի Շարքիի բնութագիրը: Գյուղաքաղաք է Էրզրումի և Թոկատի միջև։ Ունի բերդ։ Կոչվում է նաև Կարահիսարի Շաբին։ Կոյունլու Հիսարը Թոկատի արևելքում է, Սվազից Էրզրում տանող ճանապարհի վրա։ Այստեղ կա զինվորական երկու կոնաք։ Գեղեցիկ դաշտեր կան սրա և Սվազի միջև։ Նիկսարը գտնվում է հյուսիս-արևելքում։ Մի բլրի վրա ունի հողաշեն մի փոքր բերդ, որտեղ կարելի է գնալ միայն մի նեղ ճանապարհով։ Հիշյալ բլրի ներքևում կա հետիոտնի ճանապարհ։ Շաբխանեում գոյություն ունի պաղլեղի (շաբ) հանք, որը մի մուկաթաա է։ Կարահիսարի Շարքիի պահապանները իրենց ռոճիկը (ուլուֆե) ստանում են այս մուկաթաաից·

Բասենի լիվան ընդարձակ դաշտավայր է, որտեղ մի փոքրիկ պարիսպ կա։ Հասան Կալայի բերդը գտնվում է Էրզրումից դեպի արևելք, կես օրագնաց հեռավորության վրա։ Ունի ջամի և շուկաներ։ Այս բերդին են պատկանում Կասնի, Քունի, Իյնեք, Չեզքերք նահիյեները։ Բասենը բաղկացած է երկու բերդից։ Դրանցից մեկը կոչվում է Վերին Բասեն, որը Հասան Կալայի սահմանից հասնում է մինչև Չոբանի կամուրջը, իսկ մյուս կողմը Մեջենկիրտի [Մժրնկերտ] բերդն է, որը կոչվում է Ստորին Բասեն։ Բասենի և Կաղզմանի միջև գտնվում է Քուս լեռը, որը ձգվում է արևելքից դեպի արևմուտք։ Սրա հարավ-արևմուտքում Կրզըլջա լեռն է։ Սրանց միջև կա ընդարձակ մի դաշտ, իսկ մյուս կողմում գտնվում է Ակ-Դաղը․ որի մի կողմից հոսում է Արաս գետը։ Բասենի դաշտում, մեծ լճի յայլայից հոսում է մի գետ և խառնվում Արաս գետին։ Հասան Կալայի հարավում գտնվում է Ալա-Դաղը, որից սկիզբ է առնում Մուրադ գետը։

Մեջենկերտը, որը կոչվում է նաև Ստորին Բասեն, ունի ամրակուռ բերդ, բաղկացած է երեք նահիյեներից՝ Խորասան, Ջևվի և Սեղան։ Այս բերդը Արաս գետի եզերքին է։ Իսպիրը լիվա է։ Իսպիր քաղաքը գտնվում է բավականին հարթ հովտում, Էրզրումից երկու օրագնաց հյուսիս-արևելք։ Շրջակայքում կան բարձր լեռներ, որոնց վրա էլ գտնվում են բերդն ու քաղաքը։ Չորից հոսող գետի երկու ափերին կան այգիներ և պարտեզներ։ Այդ գետը սկիզբ է առնում Բայբուրդից և թափվում է Սև ծովը։ Իսպիրը հայտնի է

իր պտուղներով։ Սև ծովին հարած վայրերում ապրում են քաֆիր հույները, որոնք պետությանը տալիս են տարեկան վեց հարյուր կանթար[54] մեղրամոմ։ Այդ վայրերը անտառային են և ծաղկազարդ, լի վայրի մեղուներով։ Իսպիրի շրջանում սերով (կայմաք) և մեղրով փաստրմա են պատրաստում. փոքրիկ տակառներում դասավորում են մեկ խավ մեղր և մեկ խավ սեր և պահում են մինչև ձմեռ։ Մեղրը պահում է սերին և սերը չի փչանում։ Այսպիսով ստացվում է մեղրով խառնված համեղ չոր սեր։ Այս նահիյեում որսում են աննման շահեն թռչուններ։

Խնուսի լիվան գտնվում է Էրզրումից հյուսիս-արևելք, երեք օրագնաց հեռավորության վրա։ Ունի մի քանի նահիյեներ՝ Բազա, Բուլանե, Խենդերես, որոնք գտնվում են Բինգյոլի փեշերին։

Խնուսի բնութագիրը։ Այս բերդը կազմված է բնական մեծ ժայռերից, որոնց մեջտեղում կա մի խոռոչ, որն իրենից ներկայացնում է բոլոր կողմերով գետնից կտրված բարձր ժայռերի մի խումբ։ Տասը արշին բարձրության հասնող այս պատի վրա հողը հարթ է։ Այս խոռոչի կենտրոնում կա մի բարձր բլուր, որի վրա է գտնվում Խնուս քաղաքի ամրակուռ բերդը։ Բերդը հսկում են պահապաններ։ Բլրի ստորոտում, բերդի արևելյան պարսպի մի անցքից հոսում է մի փոքր գետ։ [Բնակիչները]մեծ մասամբ քրդեր են, որոնք պատկանում են Բեսյանի ցեղին։ Բերդում կան մզկիթ և շուկաներ։ Որենց ամառն անցկացնելու համար ամեն տարի այստեղ են գալիս հարյուր հազարավոր մարդիկ։

Մամրվանի լիվան (այլ կերպ՝ Նամրվան) մի բերդ է Խնուսի հյուսիս-արևելքում. լեռնոտ է և անտառոտ։ Այդտեղից ճանապարհը տանում է Օլթի։

Քղիի լիվան։ Քղին Էրզրումի հարավային վերջավորության վրա, մի փոքրիկ քաղաք է, որի մի կողմը դաշտ է, մյուս կողմը լեռ։։ Սանջակի նահիյեում Ծվալրք կոչված հանքերից պատրաստում են թնդանոթի գնդակներ։ Բնակիչները Բեսյանի աշիրեթի քրդերից են։

Կրզուչանի լիվան սեպաձև լեռներով հարուստ և անտառոտ վայր է։ Սրա բնակիչներն էլ Բեսյանի աշիրեթի քրդերից են։

Մելազկերտի (Մանազկերտ) լիվան։ Սրա փոքրիկ քաղաքի շենքերը սև քարից են։ Ունի բազմաթիվ աղբյուրներ, թեև ծառեր չկան։ Ախլաթին մոտիկ Մուրադ գետը սրա շրջակայքից է անցնում։ Այս գետի վրա կա տարօրինակ մի կամուրջ։ Մալազկերտը

գտնվում է գետի արևմուտքում՝ Էրզրումից երկու օրագնաց հեռավորության վրա, Էրզրումի հյուսիս-արևելյան կողմում։ Ամենից նշանավոր նահիյեն Կեթատի Սարիսուն է, որը հնագույն բերդ է և եղել է Արմենի մայրաքաղաքը։

Սիհանի (Սեփան) լեռը հսկա մի լեռ է Սարիսույի արևմուտքում։ Այս լեռան շուրջը բնակվում են քրդական ցեղեր, որոնք կոչվում են Բաթրեքի աշիրեթ։

Ալաշկերտը Ջալդրանի դաշտի և Երևանի միջև ընկած հնագույն լիվա է, որը ներկայումս իրենից առանձին կարևորություն չի ներկայացնում։

Բայազիտի բերդը գտնվում է Կոթուրի հյուսիսում։ Հայտնի բերդ է և լիվա։ Խեմրին բերդը սահմանակից է Աջեմին։ Երկու բերդերը՝ Դիադինը և Խեմրին ենթարկվում են Բայազիտի բերդին։

Փահլևան բեյը օջաքլըքի կարգով իշխում է այս լիվայի վրա։ Սրա բնակիչներն էլ Բեսյանի աշիրեթի քրդական շատ քաջարի ցեղերից են։ Կըզըլբաշները սրանցից շատ են վախենում։ Բայազիտի դաշտից հոսում է Մուրադ գետը, որը մի տեղ անհայտանալով գետնի մեջ, նորից դուրս է գալիս չորս ժամվա հեռավորության վրա։ Աղրի լեռը նայում է այս լիվային։ Այստեղ է նաև Ջալդրանի դաշտը։

Թորթում խաղաքը գտնվում է Էրզրումի հյուսիսում՝ երկու օրագնաց հեռավորության վրա ընկած ձորում։ Մոտակայքում կան բորակի հանքեր։ Թորթումի ձորում հոսող գետը, իջնելով Ակչա Կալայի նահիյեից, ապա անցնելով Վրաստանից, թափվում է Սև ծովը։ Ակչա Կալայի նահիյեն և բերդը գտնվում են Թորթումի նահիյեի հյուսիսում՝ մի բլրի վրա։ Բերդն ունի բերդապահներ։ Առատ են այստեղ տանձն ու խնձորը, ինչպես նաև այլ պտուղներ։ Հիանալի են օդն ու ջուրը։ Ունի բազմաթիվ գետեր։

Ալա Դաղ լեռը իրենից ներկայացնում է մի մեծ յայլա և որսատեղ։ Այստեղ Մուրադ գետի ակունքներին են միանում 4—5 աղբյուրի ջրերը։ Մողոլ Էրղուն խանը այստեղ կառուցել է տվել մի պալատ։ Քուս լեռը գտնվում է Կըզըլջա լեռան մոտ։ Անտառապատ է և չամի [սոճի] ծառերով հարուստ։ Էրզրումից երևում է Էյերլու լեռը, որը ձգվում է դեպի Հասան Կալա։ Մուրադ գետը սկիզբ է առնում երկու տեղից. մեկը Ալա Դաղն է, որտեղից մի քանի ակունքներով հոսելով՝ դառնում է մեծ գետ, և անցնելով Ջարմար կոչված լեռնանցքից, բաժանվում է չորս ճյուղի։ Այդ գետի վրա կառուցված է Ջեղեմն Շահ անունով մի քարաշեն կամուրջ։ Գետի այս ճյուղն այնուհետև միանում է Մալազկերտի գետին, որը

երկրորդ Մուրադ գետն է համարվում։ Սա սկիզբ է առնում Բինգյոլի յայլայից և հոսում դեպի հարավ. այն նախ խառնվում է Բերշեկերին և հետո Մուշի դաշտում՝ Կարասուին։ Այնուհետև անցնում է Կենչից, Ջափաքչրից, Փայլուից և Ռեշվանում միանում է Եփրատ գետին։

**Եփրատ գետը**, *սկիզբ առնելով էրզրումի Կալիկար լեռներից, Շուղնի ձորից անցնում է Թերջանի, Երզնկայի, Քեմախի, Կուրուչայի, էգինի և Ռեշվանի միջով և միանում Մուրադ գետին, ապա անցնում է Հեքիմ խանի մոտից։ Մալաթիայի կողմից Կըրք գյուղի մոտ Նեվշար անցքում գետը միանում է Եփրատ գետին։ Հետո Շիմշատի, Ռում Կալայի, Բերիջիքի և Ռակայի մոտ իր մեջ ընդունելով Ռուհա գետը, միանում է Խաբուր գետի հետ. սրանցից արևմուտք գտնվում են Դիր և Հեբե գյուղաքաղաքները։ Այնուհետև գետն անցնում է Մակամ Ալիից և Համասլիից։ Այստեղ կտրելով Համեր լեռը, անցնում է Սանեից, Հեյեթից և Հեդիսեից, հետո Սուլթան Սուլեյմանի Քերբելայում անցնում է իր փորած անցքից, ինչպես նաև Ակերկուկի անցքից, որը Եփրատ գետի արևելքում է։ Անցնելով Հելեի արևելքից, այնուհետև Շահի Ռումահիյե, Սեմավաթ գետերի անցքերից, Ջևաղեր լիվայի հողում միանում է Շաթ գետին, որից հետո այդ երկու գետերը կազմում են ծովանման մի մեծ գետ, առաջացնելով մի շարք կղզիներ։ Կուրնեի բերդի մոտ բոլոր ջրերն ու ջրանցքները միանում են և անցնելով Բասրայի արևելյան կողմից՝ Կալայի Ջեդիդեի մոտ թափվում է Հորմուզի ծովը։*

**Եփրատի ակունքը** *մոտ է էրզրումին։ Գարնանը այս գետի ջրով լվացվող անձը այդ տարին զերծ կլինի հիվանդություններից։ էրզենի դաշտի լիճը փոքր է, ունի ընդամենը երեք փարսախ տարածություն։ Ջուրը անուշահամ է և ձկներով հարուստ։ Հողը բարեբեր է, բուսականությամբ հարուստ և բերքառատ։ Օսմանյան զինվորների այստեղ ձմեռելու ժամանակ, սննդամթերքը բավականանում է և ոչ մի նեղություն չեն քաշում։ Երբեմն չեն հասցնում հավաքել այս վիլայեթի կալերը և բերքերը։ Ձմեռվա խստությանը հակառակ՝ ցանքսերը երեք ամսում հասունանում են, և սկսվում է հունձր։*

**Ճանապարհները և մենզիլները** *(հեռավորությունը օրագնացով), էրզրումից մինչև Կարս։ էրզրումի մոտ Իլիջայից մինչև Մենզիլ-խանեն երեք ժամ է։ Հասան Կալան (այլ անունով՝ Դեվե-Բոյնու)՝ երեք ժամ, Կարա Կոչալար՝ հինգ ժամ. Ջոբան Քյոփրյուի զեամեթը՝ հինգ ժամ, Դոմա-Դամը (այլ անունով՝ Սողան յայլա-*

սին)՝ երեք և կես ժամ։ Այնտեղից Կարս՝ երկու ժամ։ Կարսից Երեվան, Զաիմ Իսմայիլի մենզիլը՝ յոթ ժամ։ Այս մենզիլում, Կարսի գետի այն կողմում, կա մի անցք, որտեղ ջուրը հոսում է շատ ուժեղ թափով։ Այդ գետի հատակում կան խոշոր քարեր։ Մինչև Շախնեի անցքը հինգ ժամ է։ Կարսի գետի անցքից մինչև Շորագյալի մենզիլը՝ չորս ժամ։ Արփա գետը այս անցքից է հոսում։ Բինգյոլի մենզիլը երեք ժամ է։ Այստեղ Աղրի գետը գոյանում է Բինգյոլի ձնհալից։ Գետն ունի աննման կարմրախայտ ձկներ։ Շեբեբ-խանեն չորս ժամ է, հարթ դաշտավայր է՝ հարուստ կերի խոտով։ Այարանը չորս ժամ է, խոտերով հարուստ։ Էրդալարը (այլ անունով՝ Թայըլար)՝ չորս ժամ է։ Երևանի ցանքսերը հասնում են այս վայրին, մենզիլը Երևանի մոտ է։ Կետեք գյուղն է։ Էրզրումից Սվազ՝ Էշկալե, Թերջան, Քելքիթ, Շիրովաս, Կարա Հիսար, Սվազ։ Էրզրումից Դիարբեքիր՝ Քաֆիր գյուղը հեռու է մեկ կոնաք։ Ակչա Կալան մեծ գետով է անցնում։ Խան Գիլանը հեռու է և դժվարանցանելի։ Շահիկե լեռները կարելի է անցնել միայն մեծ գետերով։ Բալուն հեռու է մեկ կոնաք։ Եփրատի եզերքում գտնվող Կըզլար Կեչիդին՝ չորս ժամ է։ Շաբունշին՝ երեք ժամ է, Կիմեն՝ հինգ ժամ։ Այար-չայը՝ երեք ժամ։ Փիր Հյուսեյինի բլուրը՝ հինգ ժամ։ Սուլթանի բլուրը, որին ժողովուրդը Սիրանի բլուր էլ է ասում, Դիարբեքիրի մի այլ ճանապարհը, որը Էրզրումից Դիարբեքիր է տանում, անցնում է հետևյալ վայրերով. Հայտարի լիճ, Աղայի լիճ, Կուրդ Խուրդա, Կարղա Բազար, Քյոփրուխան, Գիլան, Սեմավե, Մուրադ գետ, Կըզըլ Փինար լիճ, Բաբա Թեքիյե գետ, Իլիջա, Այար բաշ, Փիր Հյուսեյինի բլուր, Կաթրրբիլ, Դիարբեքիր։ Մի այլ ճանապարհ՝ Էրզրումից Դիարբեքիր՝ Ներդբանլար, Մամա Խաթուն (Մամա-խաթունը կոյունլուի մելիք Իղեդդինի աղջիկն է)։ Քաղաքում կա երկու ախոռ, կենտրոնում՝ մզկիթ, դրսում՝ բաղնիք, որը հետագայում նորոգել է Մուհամմեդ փաշան։ Թերջանը, Քեշիշ խանը. Ջեմեն գյուղը։ Երզնկայի ճանապարհը՝ Սեճիլ և Քեմախի լեռը. այս մենզիլում ճանապարհը անցնում է Եփրատ գետի եզերքով, անդնդախոր վայրեր են. Բողերթի լիճը, այլ անունով՝ Խուզիսի ճանապարհը, դժվարանցանելի է, Խութո խանի ճանապարհը նմանապես դժվարանցանելի է, Կարաջա Դաղ անունով հայտնի լեռը Խութո կիրճով է անցնում։ Չմշկազեքը (Չմշկածագը) և Փերթեքը Մուրադ գետով են անցնում։ Խարփութ, Խաբուսե գյուղերի ճանապարհի կեսը դժվարանցանելի, կեսը ուղիղ է։ Բաշխան, Օրթախան, Սերբեթեն, Շելիլե, Դիարբեքիր։ Էրզրումից Երզնկա՝ Իլիջա, որը ենթակա է Թերջանին, երեք ժամ է, Խան Լոջ, Քեբադեֆ, Լոդե,

Երզնկա: Երզնկայից Սվազ՛ Խոջա Ահմեդ, *երեք ժամ է։* Սուրզադե Ռաբաթի, Խոջա Ահմեդ, Սվազ. Ռումից (Սվազ) Թավրիզ՝ Մելազկերտը՝ *վեց ժամ է։* Արճիշը՝ *ութը ժամ,* Բենդի Մահին՝ *ութը ժամ։* Նեվշեհիրը՝ *երեք ժամ,* Սեֆման Աբադը՝ *հինգ ժամ,* Ֆերսենֆը՝ *վեց ժամ,* Խոյը՝ *12 ժամ։*

*(էջ 422—428)*

Մելիքների և իշխողների դրության մասին: *Ֆարսից, Արմենից, Ռումից հետո հանդես է գալիս Իսլամը։ Խալիֆաների ժամանակ սկզբնական շրջանում խաղաղությամբ երկրներ նվաճողը եղել է նորին վսեմություն Ղիազ-բին Ղիմը։ Աբասյան պետության թուլացումից հետո հրապարակ են եկել և տիրապետություն հաստատել բռնակալ մելիքները։ Դրանցից իր սուլթանական իշխանությամբ հայտնի էրզրումի Սիլիկյան պետությունն է, որը երևան է եկել 556 (1160) թվականին։ 559 (1163) թվականին վրացիների հետ ծագած մեծ պատերազմում նա իր երևելիների հետ գերի ընկավ։ Նրա քույրը Շահ Բանուն խաթունն է, որը Սուլեյման բին-Իբրահիմ-բին Սուլեյմանի կինն էր։ Սա հայտնի է Ախլաթի տեր և Շահ Արմեն անուններով։ Վրացիները մեծ նվերներ ուղարկելով, ազատեցին էմիր Սալիկին։ Հետո Մուհամմեդ բին-էմիր Սալիկը էրզրումի վալի կարգվեց։ Նրանից հետո 598 թվականին Ռյուքնեդդին Սուլեյմանի Սելջուքին գրավեց էրզրումի վիլայեթը։ Հիշյալ Մելիքշահ Սուլեյմանը պատերազմի դուրս գալով վրացիների դեմ, նրանց պարտության մատնեց։ Մելիք Մուհամմեդից հետո էրզրումի իշխողը դարձավ Ջաքտեղ անունով մի մարդ։ Հետո 598 (1201) թվականին Սելջուկյան ճյուղից Երզնկայում և Քեմախում առաջացավ Մենգուչիեի պետությունը։ Սրանցից սուլթան Ալփ-Արսլանը այս վիլայեթը տվեց Մենգուչ Ղազիին, իսկ հետո՝ Ֆախրեդդին Բահրամշահ բին-Դավիդ բին-Մենգուչին։ Սրա որդի Մելիք Դավիթը անցավ նրա տեղը։ Վերջապես, 728 (1327) թվականին երևան եկավ Բենի Չոբանի պետությունը և նրանցից նշանավոր դարձավ Թիմուր Դաշը։ Ջենգիզյանի պետությունից էբու Սաիդը գրավեց էրզրումը։ էբու Սաիդի մահանալուց հետո 738 (1337) թվականին էրզրումում վալի դարձավ Թիմուր Դաշի որդի Շեյխ Հասանը։*

*Մելիք էշրեֆը մի բռնակալ և դաժան անձ էր։ Սրա ժամանակ Կազի Մուհեդդին Բարդայի անունով մի բարեպաշտ անձնավորություն, նրա բռնությունից ազատվելու համար, փախավ Խանի բեյ խանի մոտ։ Հիշյալ խանը նրան հովանավորեց։ Մելիք էշրեֆը մեծաքանակ զինվորներով նրա վրա գնաց։ Պատմում են, որ երբ նա Թավրիզ հասավ, Աստծու հրամանով սոսկալի խավար տիրեց, ա-*

հավոր քամի բարձրացավ, որի հետևանքով բոլոր զինվորներն ու ձիերը իրար բախվեցին։ Երբ Մելիք Էշրեֆը պարտվեց, հակառակորդները հարձակվեցին նրա վրա և սպանեցին։ Հետո 809 (1406) թվականին երևան եկավ Ակ-Կոյունլուն (որը Բայենդուրի էլ է կոչվում) և նվաճեց վիլայեթը։ Նրանցից Օսմանը, որը Թիմուրին է հասնում, Ռումի քաղաքների վալի նշանակվեց։ Հետագայում, Իսքենդեր բին-Կարայուսուֆի սպանվելուց հետո, որդին՝ Յակուբը, Էրզրումում մնաց իշխանության գլուխ։ Ալ-Օսմանիներից սուլթան Սելիմը, պատերազմելով Շահ Իսմայիլի դեմ, հաղթող հանդիսացավ և այդ կողմերը նվաճեց։ (էջ 428—429)

## ՏՐԱՊԻԶՈՆԻ ԷՅԱԼԵԹԸ

Տրապիզոնի և Բաթումի սանջակները միանալով կազմել են բեյլերբեյիություն։ Սանջակներն են՝ Տրապիզոնը, Քունիան և Բաթումը։ Ունի 404 կըլըչ, 54 զեամեթ և թեզքերեով ու առանց թեզքերեի 398 թիմար, ըստ օրենքի, ջեբելուներով միասին 700 զինվոր։ Բերդերի թիվը հասնում է 14-ի։ Այս էյալեթի երկարությունը 5—6 օրագնաց է, լայնությունը՝ երեք օրագնաց։ Հսկա և դժվարանցանելի լեռները իրենցից ներկայացնում են մի մեծ լեռնաստան, որի կարևոր մասը ընկած է ծովեզրյա շրջանում։ Այս լեռները ծածկված են անծայրածիր անտառներով։ Որոշ խճուղային ճանապարհների վրա երկու լեռնային գետակների շրջակայքում, երևում են վայրի խաղողի թփեր, որոնք ձողերով իրար են կապված ու միացված։ Էրզրումի շրջակայքը լեռնային է և մինչև Էրզրումի սահմանը ընդհանրապես զառիվայր է։ Կազաներն են՝ Էթեկբան, Երղոլը, Ակչակալան, Էրխոհը, Օֆը, Փլադանան, Թրիպոլին, Ռեհվեին, Ռիզեն, Սուրմենեն, Թուրլը, Կիրասունը, Քեշաբը, Քորթունը, Քունիյեն, Մաչկեն, Մայիրը, Միավերին, Յովաբոլին (այլ անունով՝ Քորեյլե) և Լեչեն։

**Տրապիզոնի բնութագիրը.** այս վիլայեթն ունի շատ գեղեցիկ և պտուղներով հարուստ վայրեր։ Առատ են ընկույզը, կաղինը, խնձորն ու տանձը և բազմատեսակ լեռնային պտուղները։ Տրապիզոնը գտնվում է Սև ծովի արևելյան անկյունում և հանդիսանում է այս վիլայեթի գլխավոր քաղաքն ու բերդը։ Բնակիչների մեծ մասը լեզգի ցեղից է, որոնց ժողովուրդը անվանում է լազ։ Լեզգիի լեռները գտնվում են Տրապիզոնի արևելյան և հարավային կողմերում։ Այս լեռները Դաղստանում, մինչև Բաբ էլ-Էբվաբը հասնող լեռները, Կըյթաքի, Էլսեսի և Ալբրեզի (Էլբրուսի) լեռների հետ միանալով, անցնում են Վրաստանից և հասնում մինչև Եփրատի

ու Տիգրիսի եզերքները։ Այստեղ ապրում են բազմաթիվ ժողովուրդներ՝ մեգրել, վրացի, աբազա, չերքեզ, լազ, մուսուլմաններ և անհավատներ (քաֆիրներ)։ Մուսուլմանները պատկանում են Շաֆիի դավանանքին։ Տրապիզոնի մոտ ապրողները կոչվում են լազ։ Տրապիզոնի արևմտյան և հարավային կողմում եղած Ջինի լեռներում լազ ցեղի հետ միասին ապրում են թուրքական ցեղեր։ Լեզուն թուրք և աջեմ լեզուների խառնուրդ է։ Աջեմի շահին աստված համարող ռաֆըզիներ են։

Տրապիզոնը ամրակուռ և հաստատուն պարիսպներով քաղաք է։ Հյուսիս-արևելքում է գտնվում Սուխումը։ 865 (1460—1461) թվականին, երբ էբու էլ-ֆեթհ[55] սուլթան Մուհամմեդ խանը գրավեց այս քաղաքը, Կըզըլ Ահմեդ բեյը փախավ և գնաց Ուզուն Հասանի մոտ։ Այդ նույն թվականին նվաճվեց Կասթեմունին, Տրապիզոնը և Սինոպը։ Կազմակերպվեց սրբազան պատերազմ[56] դեպի Վրաստան։

Տրապիզոնն ունի երկու պարսպով ամրակուռ բերդ։ Պարիսպներից մեկը կոչվում է աշտարակ, որն իրենից ներկայացնում է մի ամուր բերդ և ունի ութբաթորյա աղոթքի ջամի։ Բերդն ունի պահապաններ և հյուսիսային պատի մեջ պարսպին նայող մի դուռ։ Բերդի հարավում կա մի փոքր դուռ, որը բացվում է միայն կարիքի դեպքում։ Միջին պարսպի վրա ունի չորս դուռ, մեկը՝ արևելյան պատում, դեպի Միջին պարիսպը բացվող Ենի-Ջամիի դուռն է: Երկրորդը արևելյան պատի վերջում է և կոչվում է Դաբաղխանայի դուռ, որից դուրս կա խաղախորդարան։ Այս դռան առաջից հոսում է մի փոքր գետակ, որը գալիս է ընդարձակ հովտից։ Այս գետի վրա կառուցված է մի մեծ կամուրջ։ Արևմտյան պատի մեջ եղած դուռը կոչվում է Ջինդան-Կափուսու: Տրապիզոնի բանտը կառուցված է այս դռան մոտ։ Պարսպից դուրս, ընդարձակ ձորի միջով մի փոքրիկ գետակ է հոսում։ Երեք արշին երկարությամբ քարուկիր հիմքի վրա, խոշոր գերաններով կառուցված կամրջի վրա գտնվում է Ջղանոսի դուռը: Չորրորդ դուռը՝ հյուսիսային պատում, բացվում է դեպի Ստորին պարիսպը։ Սա կոչվում է Ստորին բերդի դուռ: Այս միջին պարսպի մզկիթը, նախքան նրա գրավումը, քրիստոնեական եկեղեցի է եղել։ Գրավումից հետո սուլթան Մուհամմեդը վերածել է ջամիի։ Այս ջամիին կից կա մի մեդրեսե՝ իր խցիկներով միասին, որը կառուցել է սուլթան Մուհամմեդը։ Միջին պարսպում կա երկու բաղնիք, որոնցից մեկը կառուցել են քաֆիրները։ Ստորին պարիսպը քառակուսի ձև ունի և հյուսիսային պարըսպի որոշ մասերը անմիջապես ծովին են կպած։ Այս պարիսպն էլ

ունի չորս դուռ. մեկը Ջղանայի դռան կողմն է, մյուսը Սյուրխանեն է, որից դուրս, ծովեզերքին, քրիստոնյաների թաղամասերն են։ Երրորդը Մոլոզի դուռն է, որը բացվում է դեպի ծով։ Չորրորդը Մումխանեի դուռն է, որտեղ մեղրամոմ են պատրաստում...

*Այնուհետև հեղինակը մանրամասնորեն հիշում է Տրապիզոնի ջամիները և մեդրեսեները։*

...Այս քաղաքում կան բազմատեսակ պտուղներ՝ հունար, կեռաս, տանձ, որից հայտնի են «բեյ-արմուտի» և «գյուլաբի-արմուտի» տեսակները, սինապի խնձորը, դելքուի խաղողը, բասընջանի թուզը, աննման նուռը, թուրունջը։ Տրապիզոնում աճում է սև կեռասի նման համեղ մի պտուղ, որը կոչվում է «կարա-եմիշ» (սև-պտուղ)։ Տրապիզոնի ծովում որսում են բազմատեսակ ձկներ, որոնցից են մեքլե ձուկը, մեզգիտ ձուկը, վահանաձուկը։ Տրապիզոնի ծովերում «Խամսինի օրերին»[57] որսում են փոքրիկ ձկներ։ Տրապիզոնի ժողովուրդը «խամսին» բառը աղավաղելով, այդ ձկան «խարսի» ձուկ է ասում։ Խամսինի օրերին փոքրիկ նավակներով այդպիսի փոքրիկ ձկներ որսացողները այնպիսի աղմկալի փող են նվագում, որ ձայնը լսվում է 2—3 փարսախ հեռավորությունից։ Այդ փողի ձայնը լսողները, «խարսի ձուկը դուրս է եկել» ասելով իրար են անցնում։ Իրականում այդ փոքրիկ ձկները դժվարամարս են և ծանր։ Ամառվա ամիսներին հիշյալ ձկները կեղտոտ են լինում և զզվելի հոտ արձակում։ Տներում որոշ անհանգստության պատճառ են դառնում։

Կիրասունը Սև ծովի ափին, Սամսոնի և Տրապիզոնի միջև ընկած առանց պարսպի փոքրիկ քաղաք է։ Ունի մի մզկիթ և շուկաներ։ Հարուստ է ծառաստաններով ու այգիներով։ Տրապիզոնից երեք օրադնաց դեպի Արևելք, լեռան վրա կա մի ավերակ բերդ։ Ներկայումս այս քաղաքի ծովեզրյա մասում գտնվող մի փոքր լճից սարդիոն անունով հայտնի թանկագին քար է հանվում, որը նման է Եմենի քարին։ Ստացվում են նաև այլ քարեր։

Ռիզեն գտնվում է Տրապիզոնի և Քունիայի միջև, հարթ վայրում։ Ունի ծովեզերքին նայող պարիսպ։ Արտադրում է բարձրորակ շապկի կտավ, որը հայտնի է «Ռիզեի բեզ» անունով և օգտագործվում է իբրև նվեր։ Ռիզեի գետակը հոսում է շուկայի միջով։

Քունիայի լիվան գյուղաքաղաք է։ Գտնվում է Վրաստանի սահմանի վրա։ Ունի ծովեզրյա մի բերդ։ Կազաներն են՝ Աթինա, Երխեի, Սումլե, Վիճե։ Այստեղից հոսում է Ճորոխ գետը և թափվում Սև ծովը։ Նահիյեում աճում են բազմատեսակ ծառեր։

Բարումի լիվան: *Այս լիվան մոտ է Գորելին (Դուրիա)։ Տրապիզոնի և Բայբուրդի միջև է գտնվում Յալլա Մեսջիդի լեռը, որը հարուստ է անուշահամ ջրերով։ Լեռը մշտապես ձյունով է ծածկված։ Այստեղ հին ձյուների մեջ ապրում է մի տեսակ փոքրիկ կենդանի։ Ուշադրությամբ դիտելիս կարելի է նկատել այդ կենդանու շարժումը սառույցի մեջ։ Կա նաև մի տեսակ որդ, որից ծծելու դեպքում դուրս է գալիս զուլալ ջուր։ Այս լեռներում կա մի հին մզկիթ, որը կոչվում է Յայլուի մզկիթ։ Տրապիզոնի հարավային կողմում, երկու փարսախ հեռավորության վրա գտնվում է* Խոշ-Օղլան *լեռը։ Մեծ և փոքր լեռնաշղթաների ստորոտից հոսող գետը բարեկարգել է Խոշ-Օղլան անունով մի անձնավորություն։ Նա կառուցել է նաև Ռաբաթը*[58]*, տրապիզոնցիները այս լեռը անվանում են Աղաչ Բաշը։ Երկարությունը 50 փարսախ է։ Տրապիզոնից Բայբուրդ տանող ճանապարհը այս լեռան կենտրոնից է անցնում։ Ունի մի նեղ դուռ, որտեղից բացի, այլ տեղերից անցնել չի կարելի։ Դուռը պահպանելու համար կառավարությունը կարգել է մի շարք գյուղական ռայաներ։ Տրապիզոնից մեկնողը առանց քաղաքի իշխողից ստացած գրությունը պահապաններին ցույց տալու չի կարող անցնել։ Խոշ-Օղլան գետը գալիս է Աղաչ Բաշը սարից, անցնում է Տրապիզոնից և թափվում ծովը։ Սուրմենեի գետը, Օֆ գետը, Ռիզե գետը, Աթինե գետը (կոչվում է նաև Սոյուք-Սու) վերոհիշյալ գյուղաքաղաքների մոտ նույնպես թափվում են Սև ծովը։ Ճաշ գետը (Ռիոն) մեծ գետ է, որը ծովն է թափվում Ճաշի (Փոթիի) մոտ։ Այս բոլոր գետերը սկիզբ են առնում Վրացական լեռներից։*

*(էջ 429—431)*

* * *

*Քյաթիբ Չելեբին Միջագետքի (Մեսոպոտամիա) նկարագրության մեջ մանրամասն խոսում է երեք էյալեթների՝* Ռակայի (Ուրֆա), Մուսուլի և Դիարբեքիրի *մասին։ Դրանցից բերվում են Դիարբեքիրի էյալեթին վերաբերող նյութերը։*

## ԴԻԱՐԲԵՔԻՐԻ ԷՅԱԼԵԹԸ

*Այս էյալեթը գտնվում է Տիգրիս գետի երկու եզերքին։ Արաբական ցեղերից Բեքիր բին-Վայիլ բին-Կասեթը այս երկիրը ֆարսերից գրավեց և Դիարբեքիր անվանեց։ Սահմաններն են. արևելքից՝ Վանի էյալեթը, հյուսիսից՝ Էրզրումը, արևմուտքից՝ Սվազը, Հարավից՝ Ռական և Մուսուլը։ Բաժանված է 19 սանջակի և հինգ «հյուքյումեթի»։ Սանջակներից ութը քուրդ բեյերի աննշանակելի և անհրաժարելի «օջաքլըքներ»*[59] *են։ Օսմանյան սանջակներն են.* Արղնի, Ակչա Կալա, Ամեդ, Չմշկեզեք,

*(Չմշկածագ)*, Հիսնի Քեֆ, Խաբուր, Խարփուր, Սղերտ, Սենջար, Սիվերեկ, Մեֆարկին, Մազկերտ, Նիսիբին: *Օջաքլըք հանդիսացող սանջակներն են.* Արակ, Փերբեֆ, Թերջիլ. Ջաբաֆջուր, Չերմիֆ, Սաղման, Կուլբ, Մեհրանի: *Հյուքյումեթներն են.* Էֆիլ, Փալու, Ջեզիրէ, Խեզու, Գենջ: *Այս էյալեթը 7030 կըլըջ է։ Ունի 688 զեամեթ, թեզքերեով և առանց թեզքերեի թիմարներ։ Քուրդ բեյերից բացի՝ ջեբելուներով միասին, տալիս է 1800 զինվոր։* Ամեդի լիվան *փաշայի սանջակն է և 500 ակչեի մեվլեվիություն է։ Կազաներն են՝ Ջոնքեշ, Սավեր, Թելեբ, Մարտին, Մալազկերտ, (այլ անունով՝ Մազկերտ), Մաքիր, Միդուն, Հինի (այլ անունով՝ Հունի)։*

Ամեդի լիվան: *Այս քաղաքի մեծ պարիսպը սև քարից է կառուցված: Բոլոր շինությունններն ու թաղամասերը գտնվում են պարըսպից ներս։ Պարիսպը ունի չորս դուռ՝ Մարդինի, Դաղկափուսու, Շաթի և Էրզրումի։ Ներքին բերդում կան բազմաթիվ ջամիներ, մեդրեսեներ, բաղնիքներ, բարեգործական շինություններ և տներ։ Ներքին բերդը գտնվում է քաղաքի մի բլրի վրա, որն իր սուլթանական պալատով, որոշ շինություններով և թաղամասերով ամրակուռ մի բերդ է։ Քաղաքը կառուցված է հարթ վայրում, իսկ ծայրամասում գտնվող ներքին բերդը նայում է Շաթից այն կողմն ընկած դաշտին։ Բերդի ներքևում, Շաթի եզերքին տարածվում են սեխի բոստանները։ Երբ գետի ջուրը նվազում է, ամենքը իրենց հատուկ հողերում, քարքարոտ և ավազոտ վայրերում եղած առանձին հողամասերում սեխ են ցանում։ Վերցնում են որոշ քանակությամբ քար, մի ափ աղավնու ծերտը խառնում են 5—10 հատ սեխի սերմի հետ և ցանում են քարքարոտ ավազի մեջ։ Սեխը այստեղ չափազանց համեղ է։ Բնակիչները սեխի սեզոնին գնում են բանջարանոցները, եղեգից հյուղակներ են սարքում և բաղեղի (սարմաշըք) ու վրանածաղկի գմբեթներով զարդարում։ Այնուհետև, որոշ ժամանակով հավաքվում են և կեր ու խումով զբաղվում։ Այս քաղաքում զինվորների համար կան ձմեռելու պայմաններ։ Սերդարները հաճախ ձմեռել են այստեղ։ Ամեդից դեպի հարավ, Մուսուլի կողմում, Շաթի վրա կա մի քարաշեն կամուրջ։*

Մարդինը *գտնվում է Ամեդի հարավ-արևմուտքում։ Բերդը գտնվում է մի լեռան վրա։ Գետնից մինչև բերդի գագաթը երկու փարսախ է։ Այդ բերդն անհնար է ուժով գրավել։ Այս լեռան մեջ կան ապակու հանքեր...*

Սաղըրը *Մարդինին մոտ մի գյուղաքաղաք և բերդ է, գտնվում է Ամեդից երկու օրվա ճանապարհ հարավ։ Տիգրիսը անցնում է սրա մոտից։*

**Հիզանը** հարուստ է ծառերով։ Հատկապես շատ են կաղնու ծառերը։ Լեռների միջև ունի մի բարձր բերդ։

**Մեֆարկինը** (այլ անունով՝ Միաֆարկին) Դիարբեքիրի հիմքն է։ Այգիներով և պարտեզներով նմանում է Նիսիբինին... Մուսուլից Միաֆարկինով Հիսնի Քեյֆ տանող ճանապարհը վեց օր է տևում։ Կա նաև Մարդինով գնացող ճանապարհ։ Հյուսիսում, ութ օրվա հեռավորության վրա կա մի լեռ, որի լանջին էլ գտնվում է Միաֆարկինը։

**Հիսնի Քեֆը** (կամ Հիսնի Քեֆան) մեծ քաղաք է, ընկած է Շաթի արևելյան եզերքին։ Բերդը գտնվում է քաղաքի հյուսիսում, գետի եզերքին, բարձր ժայռոտ լեռան վրա։ Քաղաքի և բերդի լեռան միջև կա մի կամուրջ։ Այս քաղաքն ունի շատ հիանալի խաղող, որը «Հիսի խաղող» է կոչվում։ Այդ քաղաքը կառուցել է Հիսնի Քեյֆի առաջին էմիր Մերդ Մահմերեն, որը եղել է քրդերի էյուբիյե ցեղից...

Անցյալում Հիսնի Քեֆը կոչվել է Ռես-էլղուլ։ Բերդի հիմնադիրը եղել է Քեֆան, որի անունով էլ կոչվել է Հիսնի Քեֆա... Նահիյեներն են՝ Բեշերի, Բեհրդի, Խենդեկի, Թուր, Մեհլեբի, Փեսենդիղե...

**Նիսիբինի լիվան**։ Այս քաղաքի հյուսիսային կողմում կա մի մեծ լեռ, որից սկիզբ առնող գետը անցնում է Նիսիբինի մոտից։ Նիսիբինը նշանավոր է իր բանջարանոցներով։ Ասում են, այս գետի ափերին կա մոտ 40 հազար բանջարանոց։ Նիսիբինին հատուկ է սպիտակ վարդը. կարմիր վարդ բոլորովին չկա։ Նիսիբինի լեռը կոչվում է Ջեբլի Ջուդի։ Ըստ ավանդության, Նոյի տապանը վեց ամիս և ութ օրից հետո այս լեռան վրա է նստել։ Կարիճները սպանիչ են և ահարկու։ Դարա գյուղում Իսքենդերը (Ալեքսանդրը) պատերազմել է Դարեհի դեմ և այդ կապակցությամբ այս գյուղը Դարա (Դարեհ) անունն է ստացել։ Ներկայումս էլ գյուղ է...։

**Սենջարի լիվան** գտնվում է Նիսիբինի հարավում։ Ջեզիրեում, Սենջարից բացի, ոչ մի տեղ արմավ չկա։ Սենջարի և Մուսուլի միջև տարածությունը երեք օրագնաց է...

**Սղերտի լիվան** Դիարբեքիրի քաղաքներից է. գտնվում է լեռան վրա, Տիգրիսի հյուսիս-արևելքում, Տիգրիս-Շաթին մոտ. շրջապատը հարթավայր է։ Միաֆարկինի և Սղերտի միջև տարածությունը մեկ և կես օրագնաց է։ Միաֆարկինը Սղերտի հյուսիսում է։ Սղերտի և Ամեդի միջև տարածությունը չորս օրագնաց է։ Սղերտի բնակիչները խմում են այդ գետերի ջուրը։ Սղերտը շատ հարուստ է թուզով, նռով և խաղողի որթատունկով։ Շատ համեղ է

այս քաղաքի խաղողը, որ կոչվում է Շաֆիի խաղող։ Բոլոր ծառերն այստեղ աճում են անձրևի ջրով։

Սղերտը գտնվում է Մուսուլի հյուսիս-արևելքում։ Սրանց միջև եղած տարածությունը հինգ օրագնաց է։ Բիթլիսի գետը գտնվում է Սղերտի հարավում, կա ևս մի փոքր գետ, որը միանում է Բիթլիսի գետին։

Ջերկի բերդը նույնպես գտնվում է հարթավայրում։ Սրա վերևի մասից հոսում է Բիթլիսի գետը։

Խարփուրի (Խարբերդի) լիվան։ Բերդաքաղաք է մի լեռան վրա։ Շրջակայքում կա մի լճակ։ Ունի ընդարձակ դաշտավայր։ Սրա վերջավորությունը միանում է Փերթեքի և Չմշկեզեքի սահմաններին։ Խարբերդը կոչվում է նաև Հիսնի Զիյադ։ Գտնվում է Մալաթիայից երկու օրագնաց հեռավորության վրա։ Սրան է ենթարկվում Ռադի Նաճիյեն, որը շատ մոտ է Ամեդի ու Խարբերդի միջև գտնվող Շեմիսաթի երկրին։

Էրղանիի լիվան կաղա և էմիրություն[60] է Խարբերդի և Ամեդի միջև։ Մոտակա լեռան վրա կա մի բերդ։ Ունի նաև նահիյեներ։ Բերդի ստորոտում Գյոքչեք անունով մի լիճ կա։

Սիվերիկի լիվան կաղա և էմիրություն է։ Գտնվում է դաշտավայրում, Ամեդի, Կարաջա Դաղի, Եփրատի ու Շաթի միջև։

Չմշկեզեքի (Չմշկածագ) լիվան Ամեդի կողմում, Եփրատ գետի ափին, մի քանի նահիյեներ ունեցող էմիրություն և կաղա է։ Բուն Չմշկեզեքը կառուցված է Եփրատ գետի ափին։ Լեռան կողին կա բերդ, որի մի կողմը դաշտավայր է։ Անցյալում եղել է մեծ վիլայեթ, որից կազմվել էր Քուրդիստանը։ Տիրակալը իշխում էր 32 բերդի և 15 նահիյեների վրա։ Սուլթան Սուլեյմանի ժամանակ գրանցվեց իբրև վիլայեթ և Չմշկեզեքի կասաբա։ Սաղմանի նահիյեն և Ջեզերեի ոչխարի հարկը[61] կայսերական խասին կցելուց հետո, վիլայեթը բաժանվեց երկու էմարեթի, 14 զեամեթի և թիմարի։ Հետագայում, սուլթան Սուլեյմանը Սաղմանի նահիյեն դարձյալ բաժանեց և շնորհեց Չմշկեզեքի որոշ իշխանների որդիներին։ Այդ երեք էմարեթներն են՝ Մեջենկերտը, Փերթեքը և Սաղմանը։ Փերթեքը օջաքլըք է, դաշտային կողմը բաց է և ընդարձակ։

Ջերմիքը գտնվում է Սիվերեկի մոտ, երկու լեռան միջև, Եփրատ գետի Նուշար անցքի դիմաց։ Սա էլ օջաքլըք է։

Ջարաքչուրը (Ճապաղջուր) օջաքլըք է Էրզրումի կողմում, Մուրադ գետի եզերքին։

Թերջիլը օջաքլըք է, Հանիից դեպի Ամեդ տանող ճանապարհին,

*Մուրադ գետի մոտ, մի լեռան վրա։ Փենբուկլի գետը սկիզբ է առնում Թերջիլի լեռներից հոսող Սեյիդ Հասան գետից, ներքևում խառնվում է Շաթի գետին։*

Արաֆը *գտնվում է Թերջիլի մոտ, Մուշի, Ֆելեքի և Թերջիլի բերդերի միջև ընկած մի դաշտում։ Օջաքլըք է։ Սալաթ գետը բխում է լեռան մի անկյունից և թափվում է Փենբուկլի գետի մեջ։ Մեֆարկինի և Ամեդի դիմաց, երկու լեռան միջև, Ալթուն Սույու կամրջի գետի վրա ավերակ մի կասաբա է։*

*(էջ 436—439)*

*Այնուհետև հեղինակը մանրամասնորեն խոսում է քրդական շրջանների, նրանց կարևոր կենտրոնների և այդ տեղերում ապրող բազմաթիվ քուրդ աշիրեթների մասին։ Քրդական նահիյեների շարքում հիշում է* Հիբեմի *նահիյեն և նշում.*
*«բնակիչների մեծ մասը և ռայաները հայեր են...*

Շախի *նահիյեի բնակիչները նույնպես հայեր են... Դիրանդեի նահիյեի Լարկեն բերդի որոշ բնակիչներ արաբ են... Այս կողմերի հայերը մեծ մասամբ արաբերեն են խոսում...*

*(էջ 440)*

*Քուրդ աշիրեթների մասին խոսելուց հետո հեղինակը շարունակում է։*

Լեզուները: *Այս էյալեթում խոսում են արաբերեն, թուրքերեն, ֆարսերեն և հայերեն։ Մուսուլմանները պատկանում են Հանեֆի և Շաֆիի դավանանքին։ Քրդերը բաժանվում են երկու խմբի, որոնցից մի մասը մուսուլմաններ են՝ Հանեֆի դավանանքից, իսկ մի մասը՝ անհավատ (քյաֆիր) եզդիներ։*

Ճանապարհները: *Դիարբեքիրից մինչև Հալեպ՝ Ջանֆեզայի արոտավայրը, երկու ժամ է, Կըզըլ-Թեփեն՝ չորս ժամ, Կոջա-Դաղը՝ երեք ժամ, Էլմալուն՝ երեք ժամ, Աջի Գյոլը՝ երեք ժամ։ Աբեգունի ճանապարհը քարքարոտ է։ Ունի սառը ջրեր։ Հեռավորությունը վեց ժամ է։ Ջելաբ գետը՝ չորս ժամ է, Ռեհանը՝ հինգ ժամ, Ուջփինարը՝ յոթ ժամ։ Շեկեֆ խանի (այլ անունով՝ Բեշ Թեփեի) ճանապարհներին գեղեցիկ, հորդառատ աղբյուրներ կան։ Մեշհետի աղբյուրի դիմաց երեք ժամ տևող գեղեցիկ ճանապարհի վրա կան սառը ջրեր...*

*Դիարբեքիրից մինչև Մուսուլ՝ Կարա Քյոփրուն, երեք ժամ է... Դիարբեքիրից Վան՝ Ափա-Ջայը, երկու ժամ է... Բիթլիսը՝ հինգ ժամ է, Դատվանը՝ հինգ ժամ է, Քյարմուխը՝ հինգ ժամ, Ադիլջեվազը՝ վեց, Արճեշը՝ երեք, Կաբա Քյոյը՝ չորս, Բենդի Մահին՝ չորս, Վանը երկու ժամ է։ Դիարբեքիրից Մալաթիա՝ Շելբե գյուղը, երկու*

*ժամ է։ Կարա Քյոփրյուն (այլ անունով՝ Մալանր) ճանապարհը այդ մենզիլից Դեվե Բոյնու կոչված վայրից մինչև Էրղանի վեց ժամ է...** (էջ 441—442)

*Դիարբեքիրի վիլայեթից հետո Չելեբին անցնում է Ռակայի (Ուրֆա) էյալեթին։ Մանրամասն կանգ է առնում Բաղդադի էյալեթի, իսլամական խալիֆայությունների, Արաբական թերակղզու և նրա գլխավոր կենտրոնների վրա։ Այդտեղից անցնում է Սիրիային ու Պաղեստինին, և հետո խոսում է Մարաշի և Ադանայի էյալեթների մասին։*

## ՄԱՐԱՇԻ ԷՅԱԼԵԹԸ

*Այս երկու էյալեթների մի մասը պատկանում է* **Փոքր Արմենիային**, *իսկ մյուս մասը՝ Շամի երկրին։ Այդ երկու էյալեթները Շամին սահմանակից լինելու պատճառով, նրանց նկարագրությունը տալիս ենք միասին։ Մարաշի վիլայեթում ապրում է Զյուլկադերիյե ցեղը։ Իսկ Ադանայի վիլայեթում իշխում է Ալ Ռամազան ցեղը։ Ալ Օսմանը այդ մասերը նվաճելուց հետո, բաժանեց երկու էյալեթի։ Սահմաններն են. հյուսիսային կողմից՝ Կարամանի վիլայեթը, արևելյան կողմից՝ Եփրատ գետը և Ուրֆայի վիլայեթը, հարավից՝ Հալեպի վիլայեթը, արևմուտքից՝ Ադանան և Ջիհան (Ջիհուն) գետը։ Սանջակները հետևյալներն են.* Մարաշ *(փաշայի սանջակն է),* Կարսի-Զյուլկադերիյե, Մալաթիա, Այնթապ *և* Սիմսաթ։

Մարաշի լիվան *էյալեթի մայրաքաղաքն է և հինգ հարյուր ակչայով մեվլեվիություն է։ Մարաշը մեծ քաղաք է և ունի բազմաթիվ ջամիներ ու մզկիթներ, մեդրեսեներ և թեքիյեներ, բաղնիքներ, շուկաներ, փառավոր տներ։ Ցածրադիր բերդը գտնվում է բարձր բլրի վրա։ Էսքի-ջամի կոչվող մեծ մզկիթի մոտ կա դատարան և մի պալատ փաշաների համար։ Այս քաղաքում կան գետեր, կանաչ տարածություններ, բազմաթիվ ծառեր։ Նահիյեներն են Էլբիստանը, Բիհիսնին, Բազարջըը, Հարունիյեն, Բերքանը, Կարա Հասանալին, Էնդերունը, Զեմաթնին, Քյուրքերը, Ջենլիքը, Ջամուսթլին, Փեշլին, Ենիջեն, Կըզըլ-Քեմիրը, Կարթան և Իսլամեքլոն։ Ստամբուլից Մարաշ գնալիս պետք է անցնել այդ նահիյեներից։*

*Մի քանի գյուղերի և անբարեբեր վայրերի բնակիչները քոչվոր են։ Այդ գյուղերը հանդիսանում են ռայաների յուրթերը։*

*Մարաշ քաղաքը կառուցել է Հարուն Ռեշիդը. այն գտնվում է Ռուքան լեռան կողմում, Քենիսեից 12 մղոն հեռավորության վրա։*

**Փազարջըքը** *մոտ է Մարաշին, ունի հոսող ջրեր և զբոսավայ-*

---

** Այս և նախորդ հատվածում ժամերով ցույց տրված հեռավորությունները ճիշտ չեն. հավանաբար տպագրական սխալ է։*

րեր։ Այստեղ կա մի լիճ, լճի վրա էլ շարժուն մի գյուղ։ Եղեգների և սեզերի արմատները իրար խառնվելով, ժամանակի ընթացքում ծածկվել են փոշով ու հողով և առաջացրել հարթ լաստի նման մի կղզի։

Որոշ թվով ջուլհակ հայեր հարդից և սեզից տներ են շինել և ապրում են այնտեղ։ Հետագայում դրանց թիվը ավելացել է և վայրը վերածվել է գյուղի։ Բոլոր բնակիչները ջուլհակներ և հայ քյաֆիրներ են։ Այդ դյուզը քամուց շարժվում է և լճում այս ու այն կողմ լողում։

**Էլբիստանը** Մարաշից Կեսարիա տանող ճանապարհի վրա բարեշեն մի քաղաք է, որը բազմաթիվ ընդարձակ գյուղերով կազմում է մի առանձին կազա։ Քաղաքը կառուցված է դաշտավայրում։ Նահիյեներն են Սարդեսը, Սեդրնան, Ահսենդերը, Օրթան, Ներաբեթը, Ջերթերը (այլ անունով՝ Ջեմաննի)։ Գտնվում է Մաբաշից ինը փարսախ հեռավորության վրա, Արմենիայի սահմանում։ Պարիսպը քարից է...

**Բիհիսնին** Մարաշի նահիյեներից մեկի կազան է, որ գտնվում է Մարաշից Կայսերի տանող ճանապարհի վրա։ Ունի մի փոքր գետ, բանջարանոցներ, շուկաներ, մզկիթ, ջամի և բազմաթիվ բարեգործական շինություններ։ Գտնվում է Այնթաբից հյուսիս-արևմուտք երկու օրագնաց հեռավորության վրա։ Նահիյեներն են Դուբազը, Գուզե Բաշը, Սոմալի կազան, Ջեմաթնի նահիյեն, Զուրսեքը, Փինար Բաշըն։

**Չյուլկադերիյե-Կարսի լիվան** կաղա է և գյուղաքաղաք։ Մսիսը[6]- գտնվում է նրա արևելքում՝ չորս ժամ հեռավորության վրա։ Փոքր բերդ է։ Ձմռան ամիսներին այստեղ են ձմեռում քոչվոր թուրքմենները. այդ ժամանակ այս կողմերը բազմամարդ է լինում. ամռանը այստեղ ոչ ոք չի լինում, քանի որ բոլորը բարձրանում են յայլաները։

**Այնթաբի լիվան**։ Գեղեցիկ է այս քաղաքը։ Ունի ժայռի վրա փորված բերդ։ Առատ են ջրերն ու բանջարանոցները։ Նահիյեի կենտրոնն է։ Ունի գեղեցիկ շուկա։ Գտնվում է Հալեպից դեպի հյուսիս, երեք օրագնաց հեռավորության վրա։ Մոտակայքում գտնվող Դելուք բերդը ավերակ է։ Հայտնի է սպիտակ բեքմեզը (ռուպ), որը կտրում են դանակով։ Անվանի են սրա աղեզը և թամբը, իսկ մրգերից՝ ծիրանն ու խնձորը, որի մեկ հատը մի օխա է կշռում։ Այնթաբը գտնվում է Բիհիսնեի հյուսիս-արևելքում, դրանից երեք օրագնաց հեռավորության վրա։ Նահիյեներն են Թելը, Իշարը, Ուրբանը, Քերչը, Սիրաչը։

Սիմսարի լիվան գտնվում է Եփրատի եզերքին։ Սրա ցանքսերը ջրովի են։ Ընկած է Կալայի Ռումի արևմուտքում և Հիսնփ-Մանսուրի հյուսիսային կողմում։ Սրանց միջև եղած տարածությունը քիչ է։ Կալայի էլնեջմի կոչված տեղից Եփրատի և Մենիջի կամրջի հեռավորությունը քսան մղոն է։ Նախապես Կալայի էլնեջմը կոչվում էր Հիսնի Մենիջ, հետո Կալա անունը ստացավ։ Սուլթան Մահմուգ բին-Զենգիի կառուցած այս կամրջի վրայից կարելի է անցնել ազատ կերպով։ Այս կամրջից մի օրագնաց դեպի վեր գտնվում է Հիսնի Հեգայան։ Նահիյեններն են Կարսը և Ռեշվանը։

Մալաթիայի լիվան Եփրատ գետի արևմուտքում, ընդարձակ դաշտի վրա հնագույն քաղաք է։ Ունի շուկա, բաղնիք, խաներ և ջամիներ։ Հարավային կողմում, լեռների լանջերին կան անթիվ պարտեզներ և առատ ջրեր։ Ամռան ամիսներին բնակիչներն, ընդհանրապես, քոչում են դեպի այդ պարտեզներն ու յայլաները։

Ունի ավերակի վերածված մի պարիսպ։ Սուլթան Մուրադ IV-ի սիլահդարը՝ Մուստաֆա փաշան, այստեղ մի խան շինել տվեց։ Գտնվելով Ստամբուլից արևելք տանող ճանապարհի վրա, ունի աշխույժ երթևեկություն։ Այստեղից կես փարսախ արևելք՝ ճանապարհը տանում է դեպի Եփրատ, որտեղից պատրաստի նավերով կարելի է անցնել քաղաք։ Այս քաղաքի դաշտը շրջապատված է լեռներով, որոնց վրա կան շատ ընկույզի և այլ ինքնաբույս պտղատու ծառեր։ Մալաթիան ընկնում է այս լեռների հյուսիսում, որի մյուս կողմում էլ գտնվում է Սիսի վիլայեթը։ Այս վայրերը ոռոգում է մի փոքրիկ գետ, որն անցնում է պարսպի մոտով. բանջարանոցները այս գետի շրջապատումն են գտնվում։ Մալաթիայի ցուրտը ուժեղ է։

Մալաթիայից Սվաղ երեք օրագնաց է։ Դեպի հյուսիս-արևմուտք, Մարաշ և Հալեպ զինվորական մենզիլով կարելի է գնալ ութը օրում։ Մալաթիան ունի Քրիստոսի վանք անունով մի գետ, որի ակունքից մինչև քաղաք՝ գետի ափերին կան այգիներով ու ծառաստաններով հարուստ 15 գյուղ։ Բնակիչները բերքի ժամանակ 3—4 ամսով քոչում են այդտեղ։ Ցերեկները քաղաքում են լինում, իսկ արևամուտին գնում են այգիները։ Գիշեր ժամանակ քաղաքում 5—10 գիշերապահներ պահակություն են անում։ Այս գետի եզերքին է գտնվում էսբոզիի կասաբան։ Այս գետից բացի, Մալաթիայում կա նաև Բեքար Բաշը անունով մի գետ, որը Մալաթիայում միանում է Դիրի Մեսիհի հետ և, Մալաթիայից հինգ մղոն հեռավորության վրա, թափվում Եփրատ գետը։ Կա նաև մի այլ գետ, որ Թեխմե է կոչվում։ Քաղաք տանող բարձր ճանապարհի

վրա, Մալաթիայից ոչ այնքան հեռու, այս գետի վրա կառուցված է Կըրք Գյոզ (քառասուն աչք) անունով մի կամուրջ։

Այս քաղաքում Բաթալ Ղազիի ծննդավայր անունով մի տեղ կա, որը ուխտավայր է համարվում։ 1056 (1646—1647) թվականին Մելեք Ահմեդ փաշան այդ վայրում քարաշեն մի գեղեցիկ կամար է կառուցել։

Մալաթիայի նահիյեներն են՝ Հիսն-Մասուրե, Դիվիրիկի, Շուրե, Մեղրուչաք, Թաշաբար, Թին Իլի, Քաթխե, Քերքեր, Ջուլաշ։ Մալաթիան հայտնի է անուշահամ խնձորներով...

(էջ 598—600)

## ԱԴԱՆԱՅԻ ԷԼԱՅԵԹԸ

Ադանան փոքր էյալեթ է։ Ունի երկու սանջակ՝ Սիսը և Թարսուսը, որոնք կցված են Կիպրոսին։ Սիսը ավերակ է։ Կազաներն են Այասը (Բերենդիի հետ միասին), Ջիյակարը, Սարի Ջամը՝ Սիսը, Աղիրը (Կենկի հետ միասին), Կարա Իսալուն, Կարա Կըշլուն և Յուրքերը։ Սահմաններն են. հարավից՝ Ռումի (Միջերկրական) ծովը, արևմուտքից՝ Սելեֆկեի վիլայեթը, հյուսիսից՝ Կարամանը, արևելքից՝ Մարաշի վիլայեթը։

Ադանան էյալեթի մայրաքաղաքն է և կադիություն է համարվում։ Այս քաղաքը կառուցել է էմիր-ուլ-Մյումինին[63] Ռաշիդը։ Վերակառուցել է Մուհամմեդի կին Ռաշիդը։ Քաղաքը գտնվում է Սիհուն գետի եզերքին, Թարսուսից 12 մղոն հեռավորության վրա։ Սիհուն գետը Ջիհուն գետից փոքր է։ Սիհունի վրա կա քարաշեն կամուրջ, որը հրաշալի շինություն է։ Ադանայի ծանր օդի պատճառով բնակիչները մոտ վեց ամիս լինում են յայլաներում։ Քաղաքում սեբիլի շինությունների[64] համար մնում են միայն մի քանի փակ խանութների և թաղամասերի պահապանները։ Նրանց յայլաները գտնվում են երկու օրագնաց հեռու, լեռան վրա։ Ռամազան Օղլուի յայլան գլխավոր ճանապարհի վրա է, իսկ բուն յայլան հանդիսանում է Թեքերի յայլան։ Այստեղ են շինված Ադանայի բնակիչների տները, որոնք ամռան ամիսներին վերածվում են բարեշեն կասաբաների։

Սիսի լիվան նախապես բարեշեն էր և նշանավոր։ Ներկայումս ավերակ է։ Ինքը Սիսը բերդ է՝ երկարավուն մի լեռան վրա։ Ունի երեք պարիսպ, մի փոքր գետ և բոստաններ։ 726 (1325—1326) թվականին Սիսը Արմեն մելիքների քաղաքն ու իշխանության կենտ-

*րոնն էր (մայրաքաղաք)։ Անցյալում Արմեն մելիքներից Սիսը հիմնել է Լավենր (Լևոն)։ Իսլամական սահմանի վրա գտնվող երկրներից մեկն է։ Այն բոլոր վայրերը, որոնք մոտ են թշնամու երկրին,* **սյուղուր**[65] *են կոչվում։ Սիսից մինչև Ջերբեի գետը 24 մղոն է։ Մսիսեն և ներկայումս հայտնի Սիսը հիմնել են Ռաշիդի մի քանի ծառայողները։ Նահիյեներն են՝ Կավեր-կալեն և Մսիսեն։ Մսիսեն երկու քաղաք է. մեկը կոչվում է Մսիսե, իսկ մյուսը՝ Քեֆր Բինա։ Գտնվում է Ջիհուն գետի երկու եզերքին. գետի վրա կա քարաշեն մի կամուրջ։ Քաղաքը նայում է դեպի Ռումի ծովը։ Ագանայից կես օրագնաց հեռավորության վրա դարձյալ կա մի կամուրջ, որի վերևի մասում մի խան է կառուցված։ Այս կամուրջը 949 (1543—1544) թվականին կառուցվել է մի քանի վաճառականների կողմից։ Կամրջի վրա բաջ (մաքս) է գանձվում։ Մսիսեի մոտ, Ջեբլ էլ-Նուր անունով լեռան վրա գեղեցիկ հակինթ (սյունբուլ) և գեղածաղիկներ կան։ Այս լեռը Մսիսեից ձգվում է մինչև ծովեզերք։ Յիլան Կալասի և Շահմարան Կալասի կոչված լեռան վրա կա մի անբնակ պարիսպ...*

**Այնի Նավզերը** *լեռան վրա մի քաղաք է. ունի բերդ և գետ. գտնվում է Սիսի և Թելլ Հեմտունի միջև։* **Այնի Զերբեն** *Սիսից դեպի հարավ գտնվող Նինհեմայից մեկ օրագնաց է։ Թելլ Հեմդունը ունի բերդ և պարիսպ։ Գտնվում է բլրի վրա։ Բերդից մի գետ է հոսում։ Նինհեմանը՝ Ջիհուն գետի հարավում, մեկ օրագնաց է։ Թելլ Հեմդունը՝ Սիսից և Նինհեմայից երկու օրագնաց է։ Հիսնի Հեմդունը Թելլ Հեմդունի արևելքումն է, որտեղից երևում է Հիսնի Հեմդունը։ Բես բերդը գտնվում է բարձր լեռան վրա, որը Արմեն քաղաքների մեծ ապաստարանն էր։ Բեսը գտնվում է Սիսի հյուսիսում, Սիսից մեկ մերհելե հեռավորության վրա։*

**Այասը** *Ռումի ծովափին, Բուղրասից երկու, իսկ Թելլ Հեմդունից մեկ օրագնաց հեռավորության վրա, ծովի մեջ կառուցված մի աշտարակ է։ Ունի բերդապահներ։ Հայտնի է ապակիով, որի համար հաճախ վաճառականներ են գալիս այստեղ։ 722(1322) թվականին իսլամական բանակը գրավել է այս աշտարակը, կողոպտել է, թալանել և ավերել։ Ունի աղահանք։ Սուլթան Սուլեյմանը այստեղ բերդ և խան է կառուցել։*

**Կիպրոս կղզին** *գտնվում է Այասից դեպի հարավ, մեկ օրագնաց հեռավորության վրա։ Սրա ամրակուռ բերդը հայտնի է իր մեծ շինություններով, խաներով, շուկայով, բաղնիքով և ջամիով։ Օդը վատառողջ է։ Կղզին ունի Նավահանգիստ։ Առատ են լիմոնն ու թուրինջը։ Կղզում կա մի գեղեցիկ լեռ, որը ձգվում է ճանա-*

պարհի եզերքով՝ կես օրագնաց երկարությամբ։ Ճանապարհը անցնում է այդ լեռով և բերդի կենտրոնով։ Այս լեռան վրա են Փայասի աննման յայլաները։ Փայասից Բակրաս մեկ օրագնաց է։ Անցորդներին կերակրում են բարեգործական շենքում, որը մեծ շինություն է։ Մերքեզը Փայասին և Իսքենդերունին նայող, լեռան գագաթին կառուցված հատուկ բերդ է։ Ունի բերդապահներ։ Գըլխավոր ճանապարհը անցնում է նրա առջևից։ Սերֆենդքյարը գտնվում է Այնի Ջերբեի հարավ-արևելյան մասում, Բինհեմայից մեկ օրագնաց հեռավորության վրա։ Բենդիմեմրին գտնվում է Բինհեմայից մեկ օրագնաց հեռու՝ Սերֆենդքյարի արևելքում։

Թարսուսի լիվայի նկարագիրը: *Այս լիվան հարում է Կիպրոսի էյալեթին. կազաներն են էլվանլուն, Ուլաշը, Կասունը, Գյոքզեն, Լոկոնը և Շիթմուրը։ Թարսուսը, Շամի ծովի եզերքին, Ռումի քաղաքներից մեկն է։ Հայերի կողմից գրավվելուց հետո հայկական քաղաք է համարվել։ Ունի քարաշեն երկու պարիսպ։ Թարսուսի լիվան լեռնային է։ Երբ Ռաշիդ խալիֆան Թարսուս հասավ, շինությունները նորոգեց։ Կան շատ բարեպաշտներ...*

(էջ 600—603)

*Հետագա էջերում Քյաթիբ Չելեբին տալիս է Շամի երկրի, Իչ-Իլիի և Կիպրոսի պատմա-աշխարհագրական նկարագիրը, որից հետո նորից վերադառնում է Անատոլիա և նկարագրում է Կոնիայի էյալեթը ու նրա հարակից շրջանները, հասնելով մինչև Սվազի էյալեթը, որի նկարագրությունը ամփոփ կերպով տրվում է ստորև։*

## ՍՎԱԶԻ ԷՅԱԼԵԹԸ

*Սվազի էյալեթը կոչվում է նաև Ռումի էյալեթ։ Սահմաններն են. արևելքում՝ մասամբ Էրզրումը և Դիարբեքիրը, հարավում՝ մասամբ Մաբաշը և Կարամանը, արևմուտքում՝ Կարամանը և Անատոլիան (էյալեթները), հյուսիսում՝ Սև ծովը։ Այս էյալեթն ունի յոթ սանջակ.* Սվազ *(փաշայի սանջակն է),* Ամասիա, Բոզոք, Ջանիկ, Չորում, Դիվրիկ և Արաբկիր: *էյալեթում կա մի բերդ, որի մի մասը ավերակ է, մի մասը բարեշեն։*

*Այս էյալեթը բաղկացած է 3130 կըլըչից, որից 130-ը զեամեթ է, իսկ մնացածները թեզքերեով և առանց թեզքերեի թիմարներ։ Ջեբելուների հետ միասին ունի մոտ 9000 զինվոր։*

Սվազի նկարագրությունը: *Սվազի կազաներն են. Արթըկ Աբագը, Իրակը, Իլբեյլին, Բեհրամշահը, Բալլում, Թուրհալը, Թոկաթը (Ջեբնի Ջունղարի հետ միասին), Հյուսեյին Արագը, Խանի Ջեգիդը,*

Դերբեքուշը, Աբադ Դյունքսարը, Զիլեն, Սունսարը, Սիվաս Իլին, Շարքի Աբադը, Թաշաբադը, Կազաբադը, Կարահիսարը, Կարաչըկան, Մեջիդ Էոզին, Նիքսարը, Բեյի Իլը, Շարք Փարեն, Հաջի Մուրադը, Կորասը, Թոփրաք Կալան, Դեկան Աբադը, Թոոզանլուն։

**Սվազը** ունի մի փոքր բերդ։ Սառեր քիչ կան, ցրտերը սաստիկ են։ Ալաեդդին Քեյքուբադի-Սելջուկին քաղաքի պարիսպները կառուցեց քարից։ Թիմուրը կործանեց այդ պարիսպները. «կործանում» բառը իբրև «պատմություն» արձանագրված է[66]։ Քաղաքը գտնվում է բլրի վրա։ Նրա հովտից հոսում է Կըզըլ-Ըրմաք գետը, որի ջուրը աղի է և չի խմվում։ Այս քաղաքն ունի ջամիներ, բաղնիքներ և շուկաներ։

Բերքերից կարևոր են հացահատիկը և բամբակը։ Պտուղների կողմից հարուստ չէ։

**Թոկաթը** Սվազի հյուսիսում է։ Արթըկ Աբադը գտնվում է Սվազի և Թոկաթի միջև ընկած դաշտավայրում։ Արթըկը բեյի կառավարության կենտրոնն է. բնակիչները մուսուլմաններ և քրիստոնյաներ են։ Ձմռանը ճանապարհորդները իջևանում են այս գյուղում։ Այս դաշտում, Սվազի ճանապարհի վրա, մի մեծ բլուր կա։

Թոկաթի բերդի շրջակայքում թաղամասերը և տները խիտ են։ Քաղաքը գտնվում է կարմրահող մի լեռան լանջին, ձորամիջում, իսկ բերդը՝ լեռան ծայրին՝ բարձր ժայռի վրա։ Առատ են բանջարանոցները, ծառաստանները և պտուղները։ Օդը բարեխառն է։ Բուն կասաբան ընկած է լեռների միջև գտնվող փոս վայրում։ Ունի աննման ջամիներ, բաղնիքներ, խաներ և մեդրեսեներ։ Քաղաքի երկու կողմերը միանում են իրար։ Թոկաթը վաճառականների կենտրոն է։ Քաղաքի մի կողմում կա գեղեցիկ դաշտավայր։

**Թերհալի** կամ այլ անունով՝ Քեշանի բերդը գտնվում է Թոկաթի արևմուտքում, Թոկաթից հինգ ժամ, իսկ Զիլեից դեպի հյուսիս՝ երեք ժամ հեռավորության վրա, գլխավոր ճանապարհին։ Թոկաթից մինչև Թերհալի ընկած են հարթ դաշտեր, որոնց կենտրոնից հոսում է Կոչհիսարի գետը։ **Զիլեն**՝ Թոկաթի հարավ-արևմուտքում, շատ գեղեցիկ մի կասաբա է, որի հարավային կողմը բաց դաշտ է։ **Նիքսարի** բերդը գտնվում է լեռան ստորոտում, Թոկաթից մեկ օրագնաց դեպի արևմուտք, սրա հարթ վայրերում պարտեզներ քիչ կան, պտուղները առատ են։ Նիքսարը գտնվում է Էրզրումի ճանապարհի վրա։ **Սունսարը** գտնվում է Նիքսարից մեկ օրագնաց դեպի արևմուտք, ընդհանուր օգտագործման ճանապարհի վրա, Նիք-

սարի լեռների ստորոտում։ Նիքսարի լեռների և Սունսարի միջև գտնվում է Ջանիկի վիլայեթը:

Մեջիդ Աբադը (այլ անունով՝ Մեջիդ էոզին) գտնվում է Զորումից ոչ հեռու, արևմտյան կողմում։ Երկու լեռների միջև ընկած այգիներով և պարտեզներով շրջապատված գեղեցիկ մի կասաբա և կազա է։ Հյուսեին Աբադը գտնվում է Զորումի ուղղությամբ, նրա հարավ-արևելքում, Մեջիդ Աբագից մեկ օրագնաց հեռավորության վրա։ Այստեղ Դելի Ըրմաք անունով մի գետակ է հոսում բնական ավազանի մեջ:

Ջանիկի լիվայի մասին: Սահմաններն են. արևելքում՝ Տրապիզոնը, արևմուտքում՝ Կասթեմունին, հյուսիսում՝ Սև ծովը, հարավում՝ Սվազը։ Կազաները՝ էրիմ, էֆրատ, Աք Չայ, Ալաչոմ, Ունիյե, Ուքսե, Այտեջիք, Բաֆրա, էրթմե, Ջորգի, Ջեվիզ Դերեսի, Հասարչըք, Սամսուն, Ֆինարիս, Կավաք, Քեշ Դերեսի, Մեյդան, Վոնե, Ֆաթսա։ Այս վայրերում որոշ գյուղեր միայն մի քանի թաղ ունեն, որոնցից յուրաքանչյուրը բաղկացած է 3—4 տնից։ Գյուղերը իրարից բավականին հեռու են և կոչվում են թաղ։ Ջանիկի բնակիչները հայտնի են որպես անարգ ու կոպիտ ժողովուրդ։ Սակայն վիլայեթն ունի բնական գեղեցկություն։ Հարուստ է աննման և առատ ջրերով, մարգագետիններով։ Լեռները ծածկված են եղևնու ծառերով։ Լեռնաստանում կան դժվարանցանելի անտառներ, որոնց ժողովուրդը հայտնի է որպես ըմբոստ և վայրենի։

Բուն Ջանիկը մի կազա է մեծ լեռների մեջ և ունի ընդամենը մի քանի գյուղ, որոնցից ամեն մեկն ունի մի քանի թաղ։ Այս գյուղերից յուրաքանչյուրն իր անունն ունի, սակայն բոլորը միասին Ջանիկ են կոչվում։ Այս կազայի ծովափը հանգստավայր է։ Սրա հյուսիս-արևելքում է Սամսունը, արևմուտքում՝ Կարա-Յալլաքը...

Բաֆրան գտնվում է Սև ծովի եզերքին։ Կըզըլ Ըրմաք գետը, անցնելով Բաֆրայի արևմուտքից, մի փարսախ հեռավորության վրա թափվում է ծովը։ Գետի վրա կա փայտե կամուրջ:

Ջանիկի շենքերը մեծ մասամբ փայտաշեն են։

Սամսունը Սև ծովի եզերքին, Քեֆեի[67] դիմաց, նշանավոր կասաբա է։ Սամսունի արևելյան կողմում Ամասիայի գետը թափվում է ծովը և կոչվում է Չհարշամբայի գետ... Սամսունը ունի ավերակ բերդ, որը հնագույն շինություններից է։ Ունի նաև նավահանգիստ։ Այս կասաբայի արևելքում Տրապիզոնն է, իսկ արևմուտքում՝ Սինոպը։

Արաբկիրի լիվայի նկարագրությունը: էգինը Արաբկիրի կազան է՝ Շատիի հետ միասին։ Արաբկիրը Սվազի վիլայեթի հյուսիս-

արևելյան վերջավորության վրա, Դիարբեքիրի էլայեթի սանջակնե-րին հարող մի սանջակ է։ Գտնվում է Եփրատ գետից 2—3 մղոն դեպի արևմուտք, Դիվրիկիից մեկ-երկու օրագնաց դեպի հարավ։

Բուն Արաբկիրը բերդաքաղաք և բարեշեն կասաբա է։ Էգինը կցված է Արաբկիրին։ Ջիլեն Արաբկիրի մեծ գյուղերից է և գտնը-վում է Եփրատի արևելյան եզերքին։ Բանուկ ջրային ճանապարհ է և ունի մի քանի նավ։ Այստեղից, երեք ժամվա հեռավորության վրա, Մուրադ գետի եզերքի մի գյուղում ևս կան նավեր...

**Էգինը** (Ակն) գտնվում է Արաբկիրի հյուսիսում, Սվազից մեկ օրագնաց դեպի արևելք։ Սա մի կասաբա է Եփրատի արևմտյան եզերքից երեք օրագնաց հեռավորության վրա, քարքարոտ լեռան ստորոտում։ Ջուրը աղի է։ Լեռան ստորոտից մինչև Եփրատի ե-զերքը կան այգիներ ու պարտեզներ, որոնք առատ բերք են տալիս։ Էգինի մոտ, լեռան վրա, մի քարի տակից բխում է վերին աստի-ճանի անուշահամ մի աղբյուր, որը անցնում է քաղաքի միջով և թափվում Եփրատ գետը։ Էգինը ընկած է այդ ջրի երկու կողմում, լեռան ստորոտին։ Տներն ու թաղերը դասավորված են իրար վրա։ Ունի ջամիներ և բաղնիքներ։ Կասաբայի և Եփրատ գետի մյուս կողմում կան քարքարոտ լեռներ, իսկ արևմտյան կողմում խիստ բարձր ժայռեր։ Եփրատի մյուս կողմում Չմշկազեքի սահ-մանն է։

**Դիվրիկիի լիվայի մասին:** Դիվրիկիի կազաներն են Դերեն-տեն...*

**Դիվրիկիի նկարագիրը:** Սվազից երկու օրագնաց դեպի արևելք հայտնի կազա և «հյուքյումեթ» է։ Արևելյան սահմանը հասնում է մինչև Փեչեքի լեռը։ Հարավում Հասանի լեռը միանում է Մալա-թիայի լեռան։ Դիվրիկին արևելքից դեպի արևմուտք ձգվող երկու բարձր լեռների մերկ ժայռերի միջև, արևմտյան լեռան ստորոտում ընկած մեծ կասաբա է, որի բերդը գտնվում է լեռնալանջի վրա, իսկ բնակելի շենքերը և շուկաները մեծ մասամբ ընկած են հար-թավայրում։ Այս հովիտը երկու ժամվա տարածություն է, ամբող-ջովին ծածկված այգիներով։ Ունի բազմապիսի մրգեր։ Հովտի մի կողմից հոսում է մի գետ, որը անցնում է այգիների ու պարտեզնե-րի միջով և դուրս գալով հովտից որոշ հեռավորության վրա, Հասան լեռան ստորոտից հասնում է մինչև հովտի վերջավորությունը։ Այս գետը Էգինի հյուսիսում միանում է Եփրատի մեջ թափվող մի այլ գետի և երկու գետերը իրար միանալու տեղից քիչ հեռու թափվում

* Այստեղ բացթողում կա (Ծանոթ. թարգմ.)։

են Եփրատ գետը։ Հասանի սարից հոսող այս գետի վրա ջրմբեր են կառուցել և այդ տեղից ջուրը տանում են պարտեզները։

Քաղաքից անցնող գետը, որը գալիս է Սվազի սահմաններից, ցածրադիր լինելու պատճառով այգիներին ու պարտեզներին օգուտ չի տալիս։ Այս գետի մոտ գտնվող լեռան դիմացի կամարի վրա կա հին և ավերակ մի բերդ, որը մոտ է քաղաքի բերդին։ Այդ լեռան հետևում՝ արևելյան մասում, կա Քեսմե անունով քաֆիրի մի գյուղ, իսկ լեռան այդ կողմում՝ մաքուր երկաթահանք, որի որոշ մասերում մեծ քանակությամբ արտադրվող երկաթի շահույթը պատկանում է բեյերին։ Այդ հանքի հյուսիս-արևմուտքում՝ լեռան վրա, կան մագնիսաքարի հանքեր, որոնցից ստացվում է բարձրորակ մագնիս։

Դիվրիկիում Ահմեդ փաշայի ջամին նմանվում է Բրուսայի Ուլու ջամիին։

**Դերենդեն** հայտնի կասաբա է, որը գտնվում է Դիվրիկիից դեպի հարավ, երկու օրագնաց հեռավորության վրա։ Սահմանակից է Մալաթիային։ Ունի հատուկ կադի (դատավոր) և Դիվրիկիի բեյի կողմից նշանակված սուբաշի։ Այստեղ կա Դերենդե քաղաքին նայող և երկու մասի բաժանված մի բարձր ժայռ, որը կարծես ճեղքված է արհեստական կերպով։ Այդ երկու բարձր ժայռերի միջից հոսում է Աքսու անունով մի գետ, որն անցնում է Դերենդե քաղաքի կենտրոնից։ Այդ քարերի գլխին կա մի ամրակուռ բերդ։

**Չորումի լիվայի մասին:** Ջիլեից երեք օրագնաց դեպի հարավ-արևմուտք, Քանղրիի սանջակի Կալեջիքի վայրի հյուսիս-արևելքում մի լիվա է։ Սրա հարավում է Բոզոքի սանջակը։ Կազաներն են՝ Իսքելիբ, Թահթի-Իլթարիք, Հաջի Հեմդե, Սաղսակըզ, Օսմանջըք, Կարահիսար, Թեմուրլու, Կոկելթարիք, Կաթսար Սարայ, Կենար, Մեհմա և Սելամ։

**Չորումի կասաբայի նկարագրությունը.** Չորումը բարեշեն մի քաղաք է, որտեղ ամեն շաբաթ մեծ բազար է լինում։ Ունի խաներ, մզկիթներ, ջամիներ, շուկաներ և փաշայի պալատ։ Քաղաքը գտնըվում է երկու լեռան միջև, ընդարձակ մի դաշտում, գլխավոր ճանապարհից դուրս։ Չորումից մեկ օրագնաց դեպի արևելք գտնվում է Շեյխ Ալվանի թեքիյեն[68], որը մեծ հյուրանոց է և որտեղ հյուրերին արժանի հարգանք են մատուցում։

**Իսքելիբը** բերդ է և կասաբա Չորումի արևմուտքում։ Մյուֆթի Էբու Էլ-Սաուդը ծնվել է այս կասաբայում։ Այստեղ նա կառուցել է մի ջամի և ուսուցչանոց։ Կըզըլ Ըրմաքը անցնում է Իսքելեբի և Չորումի միջով։

**Օսմանջըքը** *գտնվում է Ամասիայից երկու մերհելե արևմուտք։ Սրա մոտից է անցնում Կըզըլ Ըրմաքը։ Գլխավոր ճանապարհի վրա կասարա և բերդ է՝ գետից մեկ ժամ հեռու։ Այստեղ է թաղված Կայուն Դեդե անունով նվիրական անձը։ Նրա գերեզմանը ծածկված է կապարով և գտնվում է մի շիրմի ու թեքիյեի միջև...*

**Ամասիայի լիվայի մասին:** *Սրա Կազաներն են՝ Բազ, Քելիդ Գիլան, Հաֆսե (այլ անունով՝ Հոսե), Զուլենուն Աբադ, Ջեյթուն, Քեդեղրե, Քյուլքերլես, Քեմշ, Լադիկ, Աբադ, Մերզիֆոնն (Մարզվան)։*

**Ամասիայի նկարագրությունը.** *Ամասիան գտնվում է Թոկաթի գետի վրա, մի ձորում։ Ունի մի շարք թաղամասեր, շուկաներ, բաղնիքներ, ջամիներ, մեդրեսեներ, խաներ և բարձր վայրում՝ մի պարիսպ։ Ալաեդդին Քեյկուբադ Սելջուկին վերանորոգել է Ամասիայի պարիսպը։ Անցյալում այստեղ արծաթի հանքեր կային։ Քաղաքը կառուցված է երկու լեռան միջև։ Ֆերհադի և Շիրինի[69] համար բացված ջրանցքները Ամասիայում են եղել։ Ֆերհադը տեղական ժայռերը կտրելով, բացել է մեծ ջրանցքներ։ Այստեղ է սուլթան Բայազիտի երկու մինարեյով մեծ ջամին, ինչպես նաև Իսֆենդյարի պալատը։ Այս քաղաքը կոչվում է նաև Ռումի Բաղդադ, որ մի ժամանակ մայրաքաղաք է եղել։*

**Մերզիֆունը** *(Մարզվանը) գտնվում է Ամասիայից մեկ օրագնաց դեպի հյուսիս, Թաշան լեռան արևմուտքում։ Ունի հնագույն մի ջամի և քաֆիրի հնագույն բաղնիք։ Քյուրշեջի սուլթան Մուհամմեդը այստեղ մի ջամի և մի մեդրեսե է կառուցել։*

**Գյումյուշը** *գտնվում է Օսմանջըքից հյուսիս-արևելք, երեք օրագնաց հեռավորության վրա, Հաջի Քյոյի հարավում։ Սրա մոտ են գտնվում Համամ էոզի և Համամլու անունով մեծ դյուղերը, ինչպես նաև նահիյեն, որի կամարի տակ կա գեղեցիկ ջերմուկ։*

**Բուլաքը** *կաղա է Գյումյուշի մոտ։ Գտնվում է Թաշան լեռան արևելքում, ընդարձակ մի դաշտավայրի վրա։ Թաշան Օղլու անունով մի հայտնի անձ, 812 (1409) թվականին գրավել է բերդը... Անմատչելի պարիսպ է։ Սրա և Ամասիայի միջև մի ջերմուկ կա, որի ջրում ձուն եփում է։ Շատի բեյը այս ջերմուկի վրա մի կամար է կառուցել։ Ջերմուկում կանանց համար կա մի ավազան, իսկ տղամարդկանց համար երկու ավազան։ Այս ջերմուկը բուժում է մի քանի հիվանդություններ։*

**Բոզոքի լիվայի մասին:** *Այս լիվան գտնվում է Ջերմուկի հարավ-արևելքում։ Կազաներն են՝ Ակդաղ, Եմլաք, Բոտաք, էոզի, Բողազլիան, Սյուլեյմանլու, Սաղիր, Սորկուն, Գյոք-Ջըբեք, Կըզըլ Կոջալատ, Հյուսեին Օվա և Խանի Ջեդիդ-Օսաֆ։ Այս նահիյեն ունի*

բազմաթիվ գյուղեր։ Կենտրոնը Կըրշեհիրն է։ Բնակիչները հյուրասեր են։ Սեբիլի շինությունները գտնվում են Բողոքի ճանապարհի վրա։ Այստեղ ուտելիքի և խմելիքի նեղություն չի զգացվում, քանի որ յուրաքանչյուր գյուղ մի խնջույքի վայր է։ Կարևոր գետերից է Կըզըլ Ըրմաքը, որը Զիբուքի դաշտից և Կոչհիսարի կողմից գալով, հոսում է արևելքից-արևմուտք, անցնում Սվազից, Կըրշեհիրի հարավից, Զաշենգիրի կամրջի տակով և հասնում է Օսմանջըք։ Այնուհետև անցնում է Հաջի Համզայի, Կըրղի և Ջեյթունի կազաներով։ Գետը այս երկու կազաների միջև ընկած Հայ-մահալ անունով գյուղի մոտ անցնելով փայտե կամրջի տակով, Թուրղանի կազայից անցնում և Բաֆրայի մոտ թափվում է Սև ծով։

Ամասիա գետը սկիզբ առնելով Կարահիսարի Շարքիի շրջակայքից, անցնում է Կոյլու Հիսարից և Նիքսարից, ապա Թոկաթի հյուսիսում հոսելով կամրջի տակով և Ամասիա քաղաքի միջով, հասնում է Ջանիկ։ Էրիմի նահիյեում անցնում է Ջհար-Շենբեի բազարից և թափվում ծով։ Յըլդըզ Դաղ լեռը Սվազի էյալեթի սահմանից ձգվում է մինչև Կայսերի։ Այս մեծ ու բարձր լեռը ունի աննման յայլաներ։ Յըլդըզի գետակը սկիզբ է առնում այս լեռից։ Սվազի էյալեթի հարավ-արևելյան կողմը՝ Դիվրիկիի շրջանը քարքարոտ է, սակայն հյուսիս-արևելյան մասում ունի հիանալի յայլաներ և ծածկված է եղևնու անտառներով։ Հյուսիսում՝ Սև ծովի եզերքին, կան շղթայաձև բարձր լեռներ։ Հարավը մեծ մասամբ դաշտային է, բայց ունի մի քանի լեռներ։ Ջանիկի լեռները միանում են Տրապիզոնի լեռներին և Ամասիայի սահմանին։ Շահեկ լեռները դժվարանցանելի են։ Կզաքիսը այս լեռներում չափազանց շատ է։ Ժողովուրդը որսում է այդ կենդանուն և մորթին վաճառում։ Այս լեռան գագաթի հսկա ժայռը մի քանի տեղ ծակելով, երկաթյա օղեր են անցկացրել։ Իսկ մի քանի տեղերում, հայտնի չէ, թե ինչ նպատակով, մարդու հասակի բարձրությամբ ժայռեր են տաշել և ուղղահայաց ձև տվել։ Ժողովրդի կարծիքով, այն բանից հետո, երբ Ալեքսանդրը (Իսքենդերը) փակեց Սև ծովի նեղուցը (?!), այդ քարերը ծովեզերքում էին գտնվում և շինված էին նավերը կապելու համար։ Այս լեռը թե՛ Ջանիկի կողմում և թե՛ Ամասիայի ու Նիքսարի կողմերում ունի հիանալի օդ, աննման ջրեր և կանաչազարդ յայլաներ։ Ամռանը այստեղ են գալիս թուրքմենները. Շահեկ լեռան ամեն մի անկյունը վեր է ածվում քաղաքի և կենդանություն է ստեղծվում։ Այս էյալեթի բնակիչների մեծամասնությունը իսլամական ժողովուրդներ են՝ թուրքմեններ և թուրքեր։ Կան նաև հույներ։ Իսլամականները դավանանքով հանիֆիներ են։

որոշ տեղերում կան նաև գաղտնի ռաֆըղի դավանանքին պատկանողներ։ Ապրում են նաև քյաֆիրներ, որոնց մեծամասնությունը հայեր են։

Սվազի վիլայեթի ճանապարհների և մենզիլների մասին: *Սվազից Էրզրում, Աչխու-Բաշը՝ զինվորական իջևանով հինգ ժամ է։ Կոչ Հիսարը՝ հինգ ժամ է, Ալթը Կարիե՝ չորս ժամ։ Էրղնութ Էոզին, որն անցնում է մեծ կիրճից, յոթ ու կես ժամ է, Այասի յայլան՝ վեց ժամ. սրա ճանապարհը անցնում է եղևնիներով ծածկված անտառով։ Շահնե Չեմին՝ չորս ժամ է, Ակշարը՝ չորս ու կես ժամ, Բարդիկան՝ յոթ ու կես ժամ, Յար-Ղազի Փինարը՝ յոթ ու կես ժամ, Չեմեն-յայլասին՝ չորս ժամ։ Այս յայլայում ձյուների մեջ երևում են սև կակաչներ։ Յասը Չեմեն՝ չորս ու կես ժամ է, Կարա-Բոլուրը՝ հինգ ժամ, Սեքերի դաշտը՝ երեք ժամ, Ջանիկը՝ հինգ ժամ, Թոլուսլարը՝ հինգ և կես ժամ, Ակդեիրմենը՝ չորս ու կես ժամ (այս մենզիլից է անցնում Եփրատ գետը), Մամախաթունը՝ հինգ ու կես ժամ, Փենեքը՝ չորս ու կես ժամ, Խնուսը՝ հինգ ժամ, Իլիջան՝ չորս ժամ, Էրզրումը՝ չորս ժամ։ Սվազից Թոսիե, Յըլդըզ գետը չորս ժամ է, Մուհամեդ փաշայի խանը՝ չորս ժամ, Թախտ Աբադը՝ յոթ ժամ. սա Արթըք Աբադի դաշտում մի մեծ գյուղ է. ճանապարհը անցնում է կիրճից, հետո թեքվում Թոքաթ՝ յոթ ժամ։ Ինե բազարը՝ վեց ժամ է, Թուրհալը՝ չորս ժամ, Էսքի Ինեն՝ յոթ ժամ, Ակիելեր, այլ անունով՝ Թեքիելեր, հետո Ամասիան՝ յոթ ժամ, Քելքերասը՝ հինգ ժամ, Մերզիֆունի (Մարզվան) մոտ Բուլաքը՝ յոթ ժամ։ Այնուհետև, Մարզվանի դաշտի վերջավորության վրա գտնվող Քոսե Շաբանը՝ չորս ու կես ժամ, Օսմանջըքը, կամ Հաջը Քեոյու Գյումուշի կասաբան՝ դեպի հարավ, որտեղ կա երկու խան, Ջամի՝ ութ ժամ, Հաջը Համզան՝ վեց ժամ, Թուսիեն՝ յոթ ժամ։ Այստեղ Քեփիր Բելի անունով մի կիրճ կա, որը ահավոր է և դժվարանցանելի։ Սվազից Կոնիա, Էսկելեջը՝ ութ ժամ է, Աբարդի, այլ անունով՝ Շար Կըշլա, այլ անունով Չայըրլը լեռնանցքը՝ վեց ժամ, Չուբուք Չայիրին՝ վեց ժամ, Սարը Օղլանը՝ հինգ ժամ, Բարսին՝ վեց ժամ, Կայսերին՝ վեց ժամ, Ինջե Սուն՝ հինգ ժամ, Դեվելուն, Կարահիսարը՝ չորս ու կես ժամ, Գյոլբաշըն՝ չորս ժամ, Նիգդեն՝ չորս ժամ, Թեկարեոնն՝ չորս ժամ (այս ճանապարհի վրա կան մեծ ճահիճներ), Էյեկլին՝ չորս ժամ, Ակշաշարը՝ յոթ ու կես ժամ, Փինար Բաշին՝ վեց ժամ, Բեքար Օղլուն՝ վեց ժամ, Կոնիան՝ վեց ժամ։ Սվաղից Մալաթիա ինը ժամ է, կամ Սվազից Սելջուկ խանը՝ վեց ժամ։ Դեյիրմեն Քյոյուն՝ չորս ու կես ժամ, այլ անունով՝ Բահը Բուռնու Կանդալ՝ չորս ժամ, կամ Ալաջա խան, այնտեղից Հասան*

Չելեբիի գյուղը, այնտեղից Քեսիք Քյոփրյուն, այնտեղից Հասան Բաթրիկը, կամ Կոչ Հիսարից Կազլու գյոլը, այնտեղից Գյոլ Բաշը, այնտեղից Գյուղել Հիսար, այնտեղից Օյուք, այնտեղից Թախթելու, այնտեղից Թոփրաք Կալա Ակշար, այնտեղից Կարա Յակուբ (Արփա էլ է կոչվում), այնտեղից Չաթը, այնտեղից Չամարլու, այնտեղից Թերջան, այնտեղից Մամախաթուն, այնտեղից Արմուգլու, այնտեղից Ալաջա խան, կամ Խաթուն-Չայիրի՝ հինգ ժամ է։ Այս գյուղի բնակիչները թուրքմեններ են և Վալիդե սուլթանի[70] էվդաֆի ռայաներ։ Ակչա Կալան՝ հինգ ժամ է։ Հասան Չելեբի գյուղի ճանապարհը այս մենզիլի կենտրոնում միանում է։ Քեթխուդա գյուղի և Կարա Դաղի միջև կա մի փոքր դյուզ։ Ճանապարհը այստեղ հարթ է և այդտեղից է անցնում Կըրք Մեչիդ անունով մի գետ։ Բնակիչները թուրքմեններ են, որոնք գարնանը քոչում են յայլաները։ Հեքիմ խանը կառուցված է սուլթան Ալաեդդինի կողմից։ Հետագայում Հեքիմ անունով մի անձնավորություն այն նորոգել է և այդ պատճառով էլ Հեքիմ անունն է ստացել։ Հասան Բաթրիկը ունի լավ ջամի և խան։ Մալաթիան՝ հինգ ժամ է։ Սվազից Էնգյուրի (Անկարա) տանող ճանապարհի վրա՝ Իլիջա խան, Մուհամմեդ փաշա, Թոլոս գյուղը, Խըզըրլըք կամ Արթըկ Աբադ, Սիս, Զիլեռ, Ուջթաղ, Կազան, Կիյա, Սենջար, Բուդաք, Էոզի, Իլբեյլի, Դելիջե Ըրմաք, Քեսքին, Կըզըլ Ըրմաք, Ալմա Դաղը, Էնգյուրի։ Թոկաթից Անկարա՝ Իյնե Բազարը, Շեյխ Նասրեթը՝ Զիլեին մոտ է, Մեշհեդ Աբադ, Ակ Ադեր, Կազոն, Կաբա Հյուսեին Աբադ, Ակչա Կոյունլու, Նազենդե, Կարա Կողա, Չոշենգիրի կամուրջը՝ Կըզըլ Ըրմաքի վրա է, Չուկուրջուք, Լալա Չաիրի, Անկարա։ Օսմանջըքից Էրզրում, Դիրեքլի Դերբենդ, Մարզվան, Լադիք, Աթեփլու Բելլի, Սունսե, Նիքսար, Թելմեսե, Հաջի Մուրադ, Էշկիրի դաշտը, Գյուրջամես, Քեմախ, Էրզրում։

**Մելիքների և տիրակալների վիճակը։** Կուրեյշից[71], հույներից և ռումից հետո, երբ երևան եկան իսլամականները, Աբասյան խալիֆաները այս երկիրը մի քանի անգամ նվաճեցին և կողոպտեցին։ Այդ դարում Ջաֆեր Բաթալ Ղազին Սվազը գրավեց անհավատներից և իսլամական երկրի վերածեց։ Նրա մահից հետո Թոկաթի Թեքֆուրը[72] մի խումբ վաճառականների կազմակերպելով, Սվաղ ուղարկեց և, մարդկանց սնդուկների մեջ դնելով, քաղաք մտցրեց, որոնք սրերով կոտորեցին իսլամականներին և քաղաքը ավերեցին։ Հետո երևան եկան Դանիշմենդի[73] պետության մելիքները՝ հետևյալ պարագաներում։ Բաթալ Ղազիի քրոջ աղջկա աղջիկը ամուսնացավ Խորեզմի Թուրքմեն երևելիներից՝ Ալի բին-Մեզ-

րաբիի հետ, որից ունեցավ մի զավակ. նա անվանվեց Մուհամմեդ։ Երբ Մուհամմեդը մեծացավ և գիտություն ձեռք բերեց, դրա համար «Դանիշմենդ»[74] ազգանունը ստացավ։ Հետո ֆարսի գրությունն էլ ուսումնասիրելով, Սեիդ-Բաթալի թոռ Թուրսանի հետ միացավ և քյաֆիրների դեմ սրբազան պատերազմ (ջիհատ) մղելու համար Աբասյան խալիֆաներից արտոնություն ստացավ։ Խալիֆան նրանց տվեց արտոնությունը և յուրաքանչյուրին շնորհեց դրոշակ և հրովարտակ (մենշուր), որի համաձայն նրանց նվաճած վայրերը իրենց պետք է պատկանեին։ Այդ ժամանակ հիջրեթի 360 (970) թվականն էր։ Թուրսանը վերցնելով իր զորքի մի մասը գնաց Կասթեմունիի կողմը։ Ճանապարհին կատարեց մի շարք նվաճումներ և երբ հասավ Սկուդարի մոտերը, Ալեմ լեռան վրա մի բերդ կառուցեց և այդտեղ էլ ապրեց։ Դանիշմենդը գնաց դեպի Սվազ և քաղաքը նորոգելով՝ այն մայրաքաղաքի վերածեց։ Հետո ուղղվեց դեպի Սիս (այսինքն՝ Կոմնաթ) քաղաքը։ Կոմնաթը հին քաղաք էր, որը կառուցել էր Որենչ բին-Ֆրիդմանը։ Այս քաղաքում կար 360 եկեղեցի։ Քաղաքը գրավելուց հետո, կործանեց Քիշանը, այսինքն Թուրհալը։ Հետո, Կազ Գյոլի մոտ Կըզըլ Կարեյե անունով քաղաքը գրավելով՝ կործանեց։ Ապա հերթը եկավ Քանղրիին, Ամասիային և Չորումին։ Ավելի ուշ, իր մարդկանցից Օսման անունով մեկին հինգ հազար զինվորով ուղարկեց Կասթեմունիի վրա։ Նվաճման գնալիս գրավեց Էֆլենուսը, որը ներկայումս նվաճողի անունով Օսմանջըք է կոչվում։ Գրավեց նաև այս կողմերի արծաթի հանքերը։ Այնուհետև գրավեց Կասթեմունիի պարիսպը և այդ կողմերում եղած բերդերը, ապա Նիքհիսարը։ Ասում են, որ այս քաղաքը նախապես Ստամբուլի նման շատ մեծ քաղաք է եղել։ Հետո գրավեց Ջանիկը։ Հելքեներ բերդը պաշարելիս, նրա կրծքին մի նետ է դիպել և զոհվել է։ Նրա տեղը գրավեց իր որդին՝ Մուհամմեդ էլ-Ղազին, որը իր հորը թաղեց Նիքսարում և վրան բարձր մի կամար կառուցեց։ Ներկայումս այդ նահատակի վայրը ուխտատեղի է։ Ասում են, որ Բաթալ Ղազիից հետո Ռումի երկրի ֆաթիհը (նվաճողը) նա է։

Երբ Դանիշմենդի պետությունը թուլացավ, քյաֆիրները նորից գրավեցին այս վայրերը։ Այնուհետև Մուհամմեդ Ղազին դիմելով խալիֆային, օգնություն խնդրեց։ Խալիֆան սելջուկյան Սուլեյման բին-Կութելմիշին մի քանի հազար զինվորներով նրան օգնության ուղարկեց։ Այդպիսով նա բոլոր իսլամական զինվորներին միավորելով, նորից նվաճեց իր կորցրած վիլայեթները։ Հետո խալիֆան Սուլեյման Շահի քրոջը կնության տվեց Մելիք Ահմեդ Ղազիին և

*այս կերպ նրանց իրար կապեց. Սուլեյման Շահը հաստատվեց Ռումի վիլայեթում՝ Կեսարիայում։ Երկար տարիներ նրանք սիրով ապրեցին։ Հետզհետե Սելջուկյան պետությունը ուժեղանալով՝ Կոնիան մայրաքաղաքի վերածվեց։*

*Վերջապես Մուհամմեդ Ղազիին հաջորդեցին՝ որդին Բաղի Բասանը, եղբոր որդին՝ Իբրահիմը, ապա որդին՝ Իսմայիլը, նրանից հետո Զյուլնունը, որի ժամանակ պետությունը թուլացավ։ 568 (1172) թվականին սելջուկյան Կըլըչ Արսլանը[75] երկիրը նվաճեց, որով վերջացավ Դանիշմենդների պետությունը։ Սելջուկյանների պետությունը վերջանալուց հետո, Չինգիզյան ճյուղից Թուլի խանի որդի Հլչա Թիյուխանը Ռումի երկրից նվաճեց մի քանի վիլայեթ, ապա նրա տեղը գահակալեց Էբու Սաիդը, որը անչափահաս լինելով, նրա էմիրներից Չոբանը նրան աթաբեկ դարձավ։ Քանի դեռ Էբու Սաիդը ուժ էր կուտակում, նա Չոբանի վրա կասկածելով, նրան սպանել տվեց և դրանից հետո էմիր Չոբան Օղլու Թիմուր Դաշը Էբու Սաիդից գրավեց Սվաղն ու Էրզրումը։ Սակայն, երբ նա ստացավ հոր սպանության լուրը, փախավ Եգիպտոս։ Եգիպտոսում Մելիք Նասիրի հետ թշնամության մեջ լինելով սպանվեց։*

*738 (1329) թվականին Էբու Սաիդի մահից հետո, Թիմուր Դաշի կնոջ եղբայր Էրթնան Սվաղում անցնում է իշխանության գլուխ. նրան հաջորդում է որդին՝ Մուհամմեդը, իսկ սրա որդու անչափահաս լինելու պատճառով, փոխարենը նշանակվում է Սվաղի կադի Աբդուլլահը։ Այնուհետև, սրա որդին՝ Բյուրհանեդդին Ահմեդը, լինելով գիտակից և կարող մի անձնավորություն, այդ վայրերի վրա իշխանություն ձեռք բերեց և Սվազը մայրաքաղաք դարձրեց։ Զյուլկադերիյեի որդու հետ մտերկություն ձեռք բերելով, իր աղջիկը նրա որդուն կնության տվեց և, երբ ինքը մեռավ, վիլայեթի գլխավորները շատ խելացի կերպով իրենց վիլայեթը հանձնեցին Ալ-օսմանցիներից Յըլդըրըմ Բայազիդ խանին։*

*(էջ 622—630)։*

## «ՖԵԶԼԵՔԵ»

Քյաթիբ Չելեբիի պատմական կարևոր աշխատություններից է նրա երկհատոր «Ֆեզլեքե»-ն* որն ընդգրկում է Թուրքիայի պատմության XVI դարի վերջն ու XVII դարի առաջին կեսը (1592—1654)։ Առաջին հատորում շարադրվում են 1001—1031 (1592—1621) թվականների դեպքերը։ Այստեղ XVI—XVII դարերի թուրք պատմագիրներից Քյաթիբ Չելեբին հիշատակում է Փեչեվիին[1] Կարա-Չելեբի Զադեին, Հասան Բեյզադեին և այլն։

«Ֆեզլեքե»-ի երկրորդ հատորը, որն ընդգրկում է 1031—1065 (1621—1654) թվականների դեպքերը, ավելի արժեքավոր է այն տեսակետից, որ Քյաթիբ Չելեբին ականատես է եղել նկարագրված դեպքերից շատերին։

«Թուրքիայի յուրաքանչյուր ուսումնասիրողի համար անգնահատելի աղբյուր է այդ, քանի որ հեղինակը դեպքերը շարադրում է հանգամանորեն... Քյաթիբ Չելեբին, Սելանիկիից[2] հետո, ամենից ավելի լրիվ և մանրամասն տեղեկություններ է հաղորդում այդ ժամանակաշրջանի մասին... Չելեբիի հեղինակությունը անվիճելի է Թուրքիայի բոլոր պատմագիրների նկատմամբ և նրա աշխատությունը ամենալավ աղբյուրներից է Թուրքիայի XVI դարի առաջին կեսի պատմության համար»**։

Մի շարք թուրք պատմագիրներ, ընդունելով Քյաթիբ Չելեբիի հեղինակությունն ու նրա պատմական և գիտական աշխատությունների կարևորությունը, հաճախ մեջբերումներ են անում նաև նրա «Ֆեզլեքե»-ից։ Այսպես, XVII դարի թուրք պատմագիր-տարեգիր Նայիման[3] իր «Թարիխ-ի Նայիմա»-ում լայն չափով օգտվել է «Ֆեզլեքե»-ից՝ նրանից նույնությամբ վերցնելով ամբողջ հատվածներ, սակայն առանց այդ մասին հիշելու։

Հավանաբար Նայիման ևս առաջնորդվել է այդ դարերում ընդունված այն սովորությունով, որ հեղինակները օգտվելով այլ պատմիչների երկերից՝ այդ մասին չէին հիշատակում։ Պատմագիր-տարեգիր Նայիման իր առաջաբան հոդվածներում խոսելով օգտագործված մի շարք պատմագիրների գործերի մասին, նշում է նաև Քյաթիբ Չելեբիի «Ֆեզլեքե»-ն՝ նրան տալով այսպիսի բնութագիր. «Հաջի Խալիֆա անունով հայտնի Քյաթիբ Չելեբին գրել է Օսմանյան պետության պատմությունը 1000 թվականից մինչև 1066 թվականը (1591—1655) և անվանել է «Ֆեզլեքե»։ Արդարությունը այն է, որ «Ֆեզլեքեն», իր արտահայտության պարզությամբ և նրբությամբ, երկարաբանությունից զերծ, հիանալի պատմություն է»***։

Քյաթիբ Չելեբին եղել է բարեխիղճ պատմագիր։ Այդ մասին է վկայում հետևյալ փաստը։ Ինչպես պատմագիրն է հիշում, թուրք-իրանական պատերազմական դեպքերին ականատես և մասնակից Նախիջևանի Կադի Ջերրահ Զադեն Փադիշահին մի ընդարձակ գրություն է ներկայացրել այդ պատերազմական գործողությունների մասին։ «Ֆեզլեքե»-ում Քյաթիբ Չելեբին գրում է. «Մինչև այստեղ այդ գիրքը ամբողջությամբ համառոտագրեցի և մեջ բերեցի»։

«Ֆեզլեքե»-ից ներկա հատորում տրված են այդ ժամանակաշրջանի դեպքերից ամենակարևորները, ինչպես օրինակ, ջելալիների ապստամբական շարժումները, թուրք-իրանական պատերազմները, Աբազա փաշայի ապստամբական ելույթ-

* «Ֆեզլեքե» գործ է ածված համառոտ պատմության իմաստով։

** А. Тверитинова, նշվ. աշխ., էջ 17—18։

*** Ա. Սաֆրաստյան, «Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին», հատ. Ա. 1961, էջ 64։

ները և այլն, որոնք անմիջականորեն կապված են Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների պատմության հետ։

Քանի որ Քյաթիբ Չելեբին, բոլոր թուրք պատմագիրների նման, պատմական դեպքերը տալիս է տարեգրության ձևով, այդ նյութերը թարգմանելիս աշխատել ենք, հնարավորության չափ, պատմական դեպքերը տալ լրիվ կերպով (որոշ չափով չհետևելով տարեգրական ձևին)։

* * *

Նպատակ չունենալով մանրամասն վերլուծել Քյաթիբ Չելեբիի «Ֆեզլեքե»-ից թարգմանված նյութերը, անհրաժեշտ ենք համարում այստեղ որոշ պարզաբանումներ տալ ջելալիների ապստամբական շարժումների և թուրք-իրանական պատերազմների մասին։

Բոլոր թուրք պատմագիրները և տարեգիրները ջելալիական շարժումներն անվանել են «ապստամբական», «ավազակային», «կողոպուտի-թալանի», «ավերի և հրի», «անվերջ և անթիվ սպանությունների» շարժումներ։

Թուրք պատմագիրները, դրանց թվում նաև Քյաթիբ Չելեբին, միաբերան անիծում և նզովում են ջելալի[4] ավազակներին, նկարագրում են տասնյակ հազարավոր ջելալիների անխնա հալածանքներն ու կոտորածները՝ սկսած փաշաներից և բարձրաստիճան անձնավորություններից, մինչև շարքային ջելալիները (գյուղացիներ, զինվորներ և այլն)։

Այն փաստը, որ XVII և հաջորդ դարերի թուրք պատմագիր-տարեգիրները մեծ տեղ են տալիս ջելալիական ապստամբական շարժումների հետ կապված դեպքերին, ցույց է տալիս, որ Օսմանյան կառավարությունը և սուլթանական արքունիքը բացառիկ կարևորություն են տվել այդ շարժումներին։ Տասնյակ սադրազամներ, մեծ վեզիրներ, սերդարներ, փաշաներ, բեյլերբեյիներ հատկապես զբաղվել են այդ շարժումը խեղդելու և նրա պարագլուխներին ձեռք գցելու համար։ Շարժման ծավալի և նրա ընդգրկած շրջանների մասին պատկերացում կարող են տալ այն բազմաթիվ վիլայեթներն ու շրջանները, որոնց մասին խոսվում է շարժման դեմ ձեռնարկված միջոցառումների առթիվ։ Այդ շարժումն ընդգրկել է Անատոլիան և Ռումելիի կարևոր մասը։ Ջելալիական ապստամբությունները տարածվել են Սիրիական անապատից սկսած մինչև Սկյուդար, Թավրիզից մինչև Իզմիր և Այդըն ընկած ընդարձակ շրջանները։

Ուզունչարշըլըն իր «Օսմանյան պատմության» մեջ գրում է. «Տասներեքտասնչորս տարի տևած այս ավազակության պատճառով Սիրիան, Իրաքը և Անատոլիան գրեթե ձեռքից գնացել էին. ապահովություն և վստահություն չէր մնացել, առևտուրը կանգ էր առել և տնտեսական կյանքը խիստ վատացել էր։ Բացի այդ, ավազակության պատճառով հողամշակությունը դադարելու հետևանքով, երկրում զգացվում էր վտանգավոր նեղություն, միաժամանակ կրճատվել էին թիմարի սիփահիների ապրուստի միջոցները»*։

Ի. Հ. Դանիշմենդը, խոսելով Կարա Յազըջիի ղեկավարած ջելալիական շարժման ծավալի ու կարևորության մասին, ասում է. «Բնականաբար սպառնում էր այնպիսի մի վտանգ, որ կարող էր Անատոլիայի օսմանցիներից, Օսմանյան կայսրությունից անջատվելու պատճառ լինել»**։

---

* I. H. Uzunçarsill, Osmanlı Tarihi, Ankara, 1951. III c. I bolum, s. 116.

** I. H. Danismend, նշվ. աշխ., էջ 204։

Նույն հեղինակը մի այլ առիթով գրում է. «Ջելալի ավազակների խռովությունները ճնշելու համար ուղարկված «դեվշիրմե» փաշաների իրար ետևից կրած պարտությունները Անատոլիան հասցրել էին Օսմանյան կայսրությունից դուրս գալու վիճակին»*։

Ջելալիական շարժումների առաջացման պատճառների, դրանց բնույթի և հետապնդած նպատակների մասին XVII դարի թուրք պատմագիրների տված տեղեկությունները միակողմանի են և տենդենցիոզ։ Պետական-արքունական տարեգիրները և թուրք պատմագիրները իրենց ծագումով և հասարակական դիրքով առհասարակ պատկանելով թուրք տիրապետող և իսլամական հոգևորական դասին, չէին կարող չպաշտպանել սուլթանների, վեզիրների և փաշաների շահերը, ձգտումներն ու նրանց մտայնությունը։ Այդ պատճառով էլ հասկանալի է, թե ինչո՞ւ այդ պատմագիրներն ու տարեգիրները մի խոսք անգամ չեն ասում ջելալիական շարժման առաջացման և հսկայական չափեր ստանալու հիմնական պատճառների մասին։

Օսմանյան կայսրության պատմությամբ զբաղվող եվրոպացի պատմագիրները, որոնք իրենց պատմությունները գրելիս օգտվել են թուրք պատմագիրներից և տարեգիրներից. գրեթե ոչինչ չեն ավելացնում ջելալիական շարժումների մասին թուրք պատմագիրների տված տեղեկություններին և նյութերին։

Ինչ վերաբերում է այդ դարաշրջանի հայ պատմագիրներին և տարեգիրներին, նրանք էլ արտահայտել են այն ծանր դրությունը, որին անխուսափելիորեն ենթակա էր եղել հայ ժողովուրդը՝ իր հայրենի երկրում և բովանդակ Օսմանյան կայսրության սահմաններում ջելալիների ստեղծած անիշխանության, երկարատև և մշտական կռիվների, կողոպուտի, թալանի, սպանությունների և անասելի զրկանքների հետևանքով։ Ջելալիների մասին հայ պատմագիրների և տարեգիրների հաղորդած տեղեկությունների մեջ անտարակույս կան պատմական արժեքավոր նյութեր և փաստեր, որոնց լրիվ ուսումնասիրությունը, դժբախտաբար մինչև օրս չի կատարվել հայ պատմաբանների կողմից։

Ժամանակակից թուրք պատմագրությունը ևս չի զբաղվում ջելալիների սոցիալական բնույթի ուսումնասիրությամբ։ Նրանք բավականացել են ջելալիական շարժումները կապելով օսմանյան պետական ռեժիմի ընդհանուր թուլացման և դեպի անկում գնալու փաստերի հետ, այդ շարժումները համարելով օսմանյան ռազմա-ֆեոդալական ռեժիմի թուլացման անմիջական արդյունք։

Այսպես, ժամանակակից թուրք պատմաբան Իսմայիլ Հակկը Ուզունչարշըլին իր «Օսմանլի Թարիխի»-ի երկրորդ հատորի առաջին մասում ջելալիական շարժման առաջացման պատճառների մասին խոսելիս, ասում է. «Հատկապես էյալեթներում պետական վարչության լավ ձեռքերից դուրս գալը, դրամի արժեքի անկումը, տնտեսական դրության օրեցօր վատթարացումը, մասնավորապես ճնշման ենթակա գյուղացիության ցրվելը և նրա մի մասի ավազակության հետևելը, այս կերպով հողի անմշակ մնալու պատճառով առաջացած ճգնաժամը... ինչպես նաև բանակի, հատկապես ենիչերիների անկարգությունները, պետության հիմնական հենքյալ ուժը հանդիսացող թիմարի սիփահիների անտեսումն ու նման փաստերը ներքուստ քայքայում էին պետության օրգանիզմը»**։

Թուրք պատմաբանը բավականանում է հիշելով ջելալիական շարժման առաջացման պատճառներից մի քանիսը, առանց խորը և բազմակողմանի լուսաբանությունների։

---

* I. H. Danişmend, նշվ. աշխ., էջ 216։

** I. H. Uzunçarsılı, նշվ. աշխ., էջ 102։

* * *

«Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին» մեր աշխատության թե՛ առաջին և թե՛ ներկա երկրորդ հատորում կարևոր տեղ է բռնել նաև թուրք-իրանական պատերազմների հարցը։

Տարակույս չկա, որ տասնյակ տարիներ տևած և անմիջականորեն Արևմտյան և Արևելյան Հայաստանի հողի վրա տեղի ունեցած այդ պատերազմները սերտորեն կապված են հայ ժողովրդի կյանքի և ճակատագրի հետ։

Այդ պատերազմների հիմնական պատճառը հանդիսացել է այն, որ Օսմանյան կայսրությունը համառորեն ձգտել է ամրապնդել սիրիական ու եգիպտական ճակատները և նվաճողական քաղաքականություն իրագործելու համար իր ձեռքում պահել Հայկական լեռնաշխարհը և Անդրկովկասը։

Իրանն էլ իր հերթին ձգտել է կասեցնել օսմանյան թուրքերի առաջխաղացումը և իր ձեռքում պահել Անդրկովկասն ու Հյուսիսային Կովկասը։ Մերձավոր արևելքի իսլամական երկու հզոր պետությունների այս երկարատև և արյունալի հակամարտությունը արտաքուստ գունավորվել է իսլամական «սյուննի» և «շիա»[5] դավանանքների միջև գոյություն ունեցող թշնամությամբ։ Այդ պայքարի և մարտերի ընթացքում օսմանյան սուլթաններն ու Իրանի շահերը իրենց ենիչերիական և կըզըլբաշ հորդաներով, իրենց հատուկ բարբարոսությամբ և դաժանությամբ ավերել, կողոպտել ու թալանել են պատերազմական գործողությունների բեմ հանդիսացող Հայաստանը և ոտքի տակ տվել, սպանել, ոչնչացրել և բռնությամբ գաղթեցրել հայ ժողովրդի հսկայական զանգվածներ։

Թուրք պատմագիրներին ամենևին չի հետաքրքրել այգ դաժան պայքարին զոհ դարձած հայ, թուրք և քուրդ ժողովրդական մասսաների անասելի տառապանքներն ու զրկանքները։ Նրանք առանձին բավականությամբ են խոսում ու նկարագրում կըզըլբաշների դեմ մղած «սրբազան պատերազմները»[6], «իսլամական բանակի»[7] հաջողությունները։

Թուրք պատմագիրները այս դարաշրջանի թուրք-իրանական պատերազմները բաժանում են երեք շրջանի։

Առաջին շրջանը տևել է 12 տարի, և նախորդում է Շահ Աբբասի տիրակալության շրջանին։ Շահ Թահմասբի իշխանության տարիների կարևոր դեպքերն են Չըլդըրի ճակատամարտը և Վրաստանի նվաճումը, Էոզդեմիր Օղլուի պատերազմները՝ Սինան փաշայի և Ֆերհատ փաշայի սերդարության օրոք։

Այդ պատերազմներից հետո 998 (1590) թվականին Ստամբուլում կնքվում է հաշտության պայմանագիր, որով Թավրիզը, Թիֆլիսը, Շեհրի Զորը, Նիհավենդը մնում են օսմանցիներին։

Երկրորդ շրջանը Շահ Աբբասի իշխանության օրով տեղի ունեցած պատերազմներն են։ Այդ ժամանակ Թուրքիան զբաղված էր մեկ կողմից Ավստրիայի դեմ մղած երկարատև պատերազմով և մյուս կողմից՝ Անատոլիայում տարածված ջելալիական ապստամբական շարժումների ճնշումով։

Օգտվելով իրեն համար շատ նպաստավոր այդ դրությունից, Շահ Աբբասը սկսում է պատերազմական գործողությունները։ 1092 (1603) թվականից սկսած այդ պատերազմները, փոխադարձ հաջողությամբ, շարունակվում են Ջաղալե Զադե փաշայի և Կույուջի Մուրադ փաշայի սերդարության օրով։

Վերջապես 1021 (1612) թվականին Նեսուհ փաշան ընդունում է Շահ Աբբասի առաջարկները. Իրանը ետ է ստանում Ստամբուլի պայմանագրով կորցրած վայրերը, համաձայնում է վճարել տարեկան 200 բեռ մետաքս։

Երրորդ շրջանը սկսվում է Իրանի հետ Ստամբուլում կնքված երկրորդ հաշտության պայմանագրով, որը սակայն, ինչպես ասում են թուրք պատմագիրները, ավելի շուտ զինադադարի բնույթ ուներ։

1024 (1615) թվականին վերսկսվում են պատերազմական գործողությունները, որոնցից ամենակարևորը Երևանի 44 օր տևած պաշարումն էր օսմանցիների կողմից։ Սակայն, ըստ թուրք պատմագիրների, սերդար Էոքյուզ Մուհամմեդ փաշան չի կարողանում «Երևանի նման հողաչեն բերդը գրավել», որի պատճառով սուլթանը փաշային հեռացնում է և սերդար նշանակում Խալիլ փաշային (1026)։ Ղրիմի Ջանբեյ Կիրայի բանակի հետ միասին Խալիլ փաշան գնում է Թավրիզ։ Շահ Աբբասը նորից հաշտություն է առաջարկում, որը 1028 (1619) թվականին ընդունվում է օսմանյան կառավարության կողմից և կնքվում է հաշտության պայմանագիր, պայմանով, որ Բաղդադն ու Ախալցխան մնան օսմանցիների ձեռքում, իսկ 200 բեռ մետաքսը իջեցվի 100 բեռի։

Թուրք իրանական պատերազմների մասին Քյաթիբ Չելեբիի «Ֆեզլեքե»-ից քաղված նյութերը վերաբերում են այդ երեք շրջանների դեպքերին։ Այդ նյութերը թարգմանել ենք կրճատումներով։ Կրճատման հիմնական պատճառն այն է, որ մեր աշխատության առաջին հատորում զետեղված պատմագիր-տարեգիր Նայիմայի պատմության մեջ կան այդ դեպքերը, որոնք հաճախ գրեթե նույնությամբ վերցված են Քյաթիբ Չելեբիից։

## 1005 (1596) թվականի դեպքերից

### ՋԵԼԱԼԻՆԵՐԻ ԱՌԱՋԻՆ ԵԼՈՒՅԹԸ ԵՎ ԿԱՐԱ ՅԱԶԸՋԻԻ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆԸ

Իսլամական զինվորները թշնամու անհամար քաղաքներ հողին հավասարեցրին և բազմաթիվ ժողովուրդների իրենց ենթարկեցին։ Երբ բանակն զբաղված էր էնգերուսի [Հունգարիայի] դեմ մղվող սրբազան պատերազմով, անգիտակից թուրքերից և խավարամիտ քրդերից մի խումբ ավազակներ, առիթից օգտվելով, հպատակությունից դուրս եկան և դիմեցին դավաճանության ու ապստամբության։ Աբդուլհալիմը, որը հայտնի էր Կարա Յազըջի անունով և ղեկավարում էր սեկբանների[8] զորագունդը, անցավ ավազակների գլուխը և, ռայաներին թշնամի դառնալով, Օսմանյան երկրի Ռուհայի (Ուրֆա) շրջակայքում ապստամբության դրոշ բարձրացրեց։ Երբ Նորին վսեմությանը հայտնի դարձավ, որ Հաբեշի[9] նախկին բեյլերբեյի և 1007 թվականի վերջերին Անատոլիայի վերաքննիչ նշանակված Հյուսեյին փաշան բռնություններ է գործադրում և ըմբոստացել է, բարձրագույն ֆերմանի համաձայն, կարամանի մյութեսելլիմ[10] Մուհամմեդ չավուշը, մոտ հազար հոգով Ակսարայի մոտից շարժվեց Հյուսեյին փաշայի վրա և մեկ-երկու ժամ տևած պատերազմում նրանից պարտություն կրելով, վերադարձավ Կոնիա։ Երբ այս լուրը հասավ պետության կենտրոնը, այդ ժամանակի երրորդ վեզիր Սինան-փաշազադե Մուհամմեդ փաշան նշանակվեց երկրի մյուս մասում գտնված զինվորների սերդար և 1008 (1599—1600) թվականի մուհարրեմ ամսին անցավ Սկուդար։ Երբ հասավ Կոնիայի մոտերքը, Հյուսեյին փաշան այդ գիշեր մեկ-երկու մենզիլ ճանապարհ կտրեց և, համաձայնության գալով, միացավ Կարա Յազըջիին, որը գրավել էր Ուրֆայի բերդը։ Մուհամմեդ փաշան անմիջապես վրա հասավ, պաշարեց այդ բերդը և այնպիսի ճնշում գործադրեց, որ բերդից դուրս գալը անհնարին դարձավ։ Նա առաջարկեց Կարա Յազըջիին, որ եթե Հյուսեյին փաշան իր ձեռքը հանձնվի, ինքը հաշտություն կկնքի և նա սանջակ կստանա։ Կարա Յազըջին Հյուսեյին փաշային բերդից ցած իջեցրեց և հանձնեց Մուհամմեդ փաշային, իսկ ինքը պայմանի համաձայն, Ռեհայում ազատվեց և գնաց իրեն տրված Ամասիայի սանջակը։

Հյուսեյին փաշային կապեցին և շղթայակապ ուղարկեցին Ա-

սիթանե։ Դիվանում նրա ձեռքերն ու ոտքերը ջարդեցին և մյուսներին օրինակ ցույց տալու համար, մի ձիու վրա դրած սկսեցին փողոցներում ման ածել, որից հետո Օդուն Կափուլում կախեցին մի կեռից։

Հետագայում, երբ Կարա Յազըջին դարձյալ ընթացավ իր նախկին մոլորության ուղիով, Մուհամմեդ փաշային հրաման տըրվեց, որ նրան էլ իրենց ձեռքը գցի։

Վերոհիշյալ Սերդարը հետապնդեց Յազըջիին և հասավ նրան։ Կարա Յազըջին սկսեց կռիվ և կոտորածը։ Փաշայի Ջաքեր անունով քեթխուդան և մի քանի աղաներ, թեև ընկան կռվում, սակայն ի վերջո փաշան հաղթող հանդիսացավ։ Յազըջին փախավ Սվազի սահմանները և ապաստանեց անառիկ լեռներում։

Ձմեռը վրա հասած լինելով, Մուհամմեդ փաշան գնաց Դիարբեքիր քաղաքում ձմեռելու։

(էջ 127—128)

Նույն թվականի դեպքերի շարքում Քյաթիբ Չելեբին հիշում է նաև հետևյալը.

«Պետության մեջ փողի դրությունը վատթարացած լինելով, հիշյալ թվականին ռեբի ուլ-էվվել ամսի 5-ին շրջանառության մեջ մտավ Հասան փաշայի կտրած նոր ակչեն, որով ֆլորինը 220 ակչեից իջավ 120-ի, իսկ ղուրուշը՝ 80-ի»։

(էջ 142—143)

## ՍԵՐԴԱՐ ՀԱՋԻ ԻԲՐԱՀԻՄ ՓԱՇԱՆ ԳՆՈՒՄ Է ԿԱՐԱ ՅԱԶԸՋԻԻՆ ՎՌՆԴԵԼՈՒ

Նախորդ տարում Չորումի սանջակը Կարա Յազըջիին հանձնվելուց հետո՝ խաղաղությունն ապահովվեց։ Սակայն նա շարունակեց իր նախկին մոլորությունները և վերսկսեց ապստամբական շարժումը։ Շեվվալ ամսի 11-ին Հալեպի էյալեթից հրաժարեցված Հաջի Իբրահիմ փաշան զինվորներով ուղարկվեց հիշյալ ջելալիների դեմ, իսկ Բաղդադի էյալեթից հեռացված Հասան փաշան նշանակվեց սերդար։ Իբրահիմ փաշան էլ ուղարկվեց Ասիթանեից, որպեսզի միանա հիշյալ սերդարին։ Բաղդադից Հասան փաշայի ուշանալու հավանականությունը նկատի ունենալով, ֆերման տըրվեց, որ Յազըջիի ու նրա եղբայր Դելի Հասանի դեմ կռիվ սկսեն և նրանց ձեռք գցեն։ Հիշյալ Իբրահիմ փաշան իրեն հանձնված զինվորներով առաջ շարժվեց և ավազակների խմբին հանդիպելով Կեսարիայի դաշտում՝ ճակատամարտ տվեց։ Սակայն Հաջի Իբրահիմ փաշան պարտություն կրեց և քաշվեց բերդը՝ սպասելով վերոհիշյալ սերդարի հասնելուն։

Թեև մի քանի պատմագիրներ հաղորդում են, թե Հաջի Իբրահիմ փաշայի դեպքը տեղի է ունեցել 1008 թվականին, սակայն Կարա Յազըջիի հրամանը[11], պատմագիրների մեծ մասի վկայությամբ, արձակված է 1009 թվականին*։

(էջ 143)

## 1010 (1601) թվականի դեպքերից

### ՍԵՐԴԱՐ ՀԱՍԱՆ ՓԱՇԱՆ ԵՎ ԿԱՐԱ ՅԱԶԸՋԻԻ ՊԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ

Մինչ այդ Ասիթանեից ուղարկվեց Հաջի Իբրահիմ փաշան, որպեսզի միանալով սերդար Հասան փաշային, հարձակվի Կարա Յազըջիի վրա։ Իբրահիմ փաշան ինքնակամ կերպով, առանց սերդարին միանալու, Կեսարիայի մոտ վերոհիշյալ ավազակի դեմ պատերազմելով, նրանից պարտություն էր կրել և մտել բերդը։ Դիարբեքիրի մոտ կանգ առած սերդար Հասան փաշան այդ սոսկալի լուրը ստանալով, առանց հապաղելու, 1010 թվականի սեֆեր ամսի 12-ին, էլբիստանի[12] յայլաղում, Սեփետլու անունով վայրում հանդիպելով հիշյալ ապստամբ զինվորներին, պատերազմի է բռնվում։ Մարտը շարունակվում է առավոտից մինչև երեկո։ Ի վերջո Հասան փաշան հաղթում է և, ջելալի զինվորները, պարտություն կրելով, ցիրուցան են լինում և 30 հազար ավազակներից մեկ երրորդը սրո ճարակ է դառնում։

Յազըջին, թողնելով իր վրանն ու ամբողջ ունեցվածքը, սրից ազատված ավազակների հետ փախուստի է դիմում և ապաստանում Ջանիկի լեռներում։ Հասան փաշան, նրան հետապնդելով, հասնում է մինչև Թոկաթ քաղաքը։

### ԿԱՐԱ ՅԱԶԸՋԻԻ ՄԱՀԸ

Ջեմազիել-ախըրում ջելալիների ղեկավարները հայտնեցին, որ Յազըջին վախճանվել է ռամազան ամսին Ջանիկի լեռներում։ Նրան փոխարինել է եղբայրը՝ Դելի Հասանը։

(էջ 173—174)

### ԴԵԼԻ ՀԱՍԱՆԻ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՀԱՍԱՆ ՓԱՇԱՅԻ ՆԱՀԱՏԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Երբ Յազըջին մահացավ, քեթխուդա Շահվերդին, Փոլադ Կագին և Թավիլը եկան հիշյալ ավազակի եղբոր՝ Դելի Հասանի մոտ և, մի խումբ ավազակներով Ջանիկից դուրս գալով, գնացին Դիար-

* Կարա Յազըջիի այդ հրամանի թարգմանությունը տրված է այս աշխատության I հատորում, «Թարիխի Նայիմա», էջ 68—69։



6 1676

բեքիրից եկող Հասան փաշայի հարստությունը թալանելու։ Նրանք հարձակվելով մի վայրում՝ ամբողջապես կողոպտեցին և թալանեցին։ Հետո այդ նույն ավազակախումբը առանց կանգ առնելու եկավ Թոկաթ։ Հասան փաշան, զինվորական ուժեր չունենալով, չկարողացավ դիմանալ այդ հարձակմանը և ապաստանեց Թոկաթի բերդում։ Ավազակ զինվորները քաղաքը կողոպտելուց և թալանելուց հետո, ավերեցին այգու գեղեցկազարդ և թանկարժեք ծաղկանոցները և փաշային բռնելու նպատակով պաշարեցին բերդը։

Երբ այդ լուրը հասավ պետության մայրաքաղաքը, ներքինիների դասից Դիարբեքիրի բեյլերբեյի Խուսրեվ փաշան, իր տրամադրության տակ ունենալով Քուրդիստանի զինվորներին[13], նշանակվեց վեզիր՝ ջելալիներին ոչնչացնելու նպատակով։

Ընդհարումների ժամանակ Հասան փաշան զոհվեց։

Այսպիսով Դելի Հասանը հեշտությամբ հասավ իր հիմնական նպատակին և, վերցնելով իր անարգ զինվորներին, սկսեց թալանել Անատոլիայի վիլայեթները։ Հասան փաշայի հարստությունը հափշտակելիս և կողոպտելիս, նրանք [ ջելալիները ] դրամը չափում էին վահանով, իսկ կերպասեղենը՝ սրով, այդ աստիճան նրանք հարստացել և ուժեղացել էին։ Ջելալիները 7—8 տարի շարունակ երկիրը իրենց տիրապետության ներքո պահեցին։

(էջ 174—175)

### ՔՅՈԹԱՀԻԱՅԻ ԳՐԱՎՈՒՄԸ ԴԵԼԻ ՀԱՍԱՆԻ ԿՈՂՄԻՑ ԵՎ ՄԱՀՄՈՒԴ ՓԱՇԱՅԻ ԺԱՄԱՆՈՒՄԸ

Նախորդ տարվա վերջին վերոհիշյալ ավազակապետ Դելի Հասանը Թոկաթում Հասան փաշայի մահապատժի ենթարկելուց հետո, Անատոլիայում սկսեց զբաղվել կողոպուտներով։ Նրան ոչընչացնելու համար նշանակվել էր Դիարբեքիրի բեյլերբեյի Խուսրեվ փաշան, որն իր տրամադրության տակ ուներ Շամի, Հալեպի և Մարաշի զինվորներին։ Սակայն ոչ ոք նրան չհպատակվեց և երբ նա Սվազին մոտեցավ, զինվորները նրան լքեցին ու հեռացան, պատրվակ բռնելով վերահաս ձմեռը։ Ապա այդ խռովարարը [Դելի Հասանը] հայտնվեց Անկարայի մոտ։ Նա համարձակ և անվախ կերպով շարժվեց Ահմեդ փաշայի դեմ, որը խնդիր ուներ պաշտպանել Անատոլիան։ Այս փաշան նրա դեմ կռվելու կարողություն չունենալով, ապաստանեց Քյոթահիայի բերդում։ Ավազակապետը անմիջապես եկավ և իր զինվորներով երեք օրով պաշարեց բերդը, բայց քանի որ ձմեռ էր ու սառնամանիքները սկսվել էին,

քաղաքը կրակի մատնեց և ձմեռելու համար գնաց Կարահիսար։ Երբ այս սոսկալի լուրը մայրաքաղաք հասավ, վեզիրներից Գյուզիլջե Մահմուդ փաշան ռեջեբ ամսին նշանակվեց սերդար։

(էջ 184—185)

### ԲՈՍՆԻԱՅՈՒՄ ԴԵԼԻ ՀԱՍԱՆԻ ՀԵՏ ՊԱՏԱՀԱԾ ԴԵՊՔԻ ՄԱՍԻՆ

Կարա Յազըջիի եղբայր Դելի Հասանը Բոսնիայի էյալեթը ստանալուց հետո, արշավանքի էր ուղարկվել։ Նա տարօրինակ վերաբերմունք էր ցույց տալիս սերդար Մուհամմեդ փաշային, երբեմն հպատակվում էր նրան, երբեմն ապստամբում նրա դեմ։ Ատայի պատերազմում ջելալի ավազակների մեծ մասը կոտորվեց, իսկ ինքը սրից ճողոպրած զինվորների հետ վերադարձավ Բոսնիայի երկիրը։ Ժողովուրդը, չկարողանալով հանդուրժել նրա անպատշաճ վարքագիծը, էմիրներից Սեֆեր անունով էմիրին պարագլուխ (բաշբուղ) ընտրեց և դիմելով սերդար Մուհամմեդ փաշային՝ բողոքեց նրա բռնությունների դեմ։ Երբ դիմողներն արտոնություն ըստացան պաշտպանվելու, շարժվեցին Դելի Հասանի դեմ, սակայն առաջին անգամ պարտություն կրեցին։ Երկրորդ անգամ ուժեր հավաքելով, արաբներին կցված «զարբազան» թնդանոթներով հարձակվեցին և թշնամուն պարտության մատնեցին. Դելի Հասանի ունեցվածքը կողոպտեցին և բոլորին մեծ վնասներ պատճառեցին։ Դելի Հասանը փախուստի դիմեց։ Անցնելով խոր գետից, իր քեթխուդա Շահվերդիին ուղարկեց Բելգրադ՝ սերդարի մոտ։ Հիշյալ քեթխուդան Դելի Հասանից վշտացած լինելով, այնտեղ մնաց և չվերադարձավ։ Փաշան իր ծառաներից ռուզնամեջի[14] Մուհամմեդ էֆենդիին ուղարկեց Դելի Հասանի մոտ և խոստումներով նրան սիրաշահեց։ Տեղի ունեցած դեպքերի մասին նա հաղորդեց պետության մայրաքաղաք և խնդրեց, որ նրան [Դելի Հասանին] փոխադրեն Թեմեշվարի էյալեթը...

Դելի Հասանը դարձյալ ներման է արժանանում և Բոսնիայից փոխադրվում է Թեմեշվարի բեյլերբեյության պաշտոնին։ Նա գնում է Թեմեշվար և այնտեղ մնում է երկու տարի։

(էջ 225—226)

### ԴԵԼԻ ՀԱՍԱՆԻ ՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ ԹԵՄԵՇՎԱՐՈՒՄ

Ինչպես հայտնի է, նախքան այդ, անհրաժեշտության բերմամբ, Կարա Յազըջիի եղբայր Դելի Հասանին նախապես տրված էր Բոսնիայի էյալեթը, որտեղից հետո նա փոխադրվել էր Թեմեշվար։ Թեմեշվարում իբրև վալի պաշտոնավարել էր մոտ երկու

տարի։ Սակայն, ելնելով նրա անվայել վարքագծին վերջ տալու անհրաժեշտությունից, էսթերգոնի գրավումից հետո, մեծ սերդար Մուհամմեդ փաշան հայտնում է Թեմեշվարի ժողովրդին, որ զգույշ լինեն։ Դժգոհները մի օր բերդից դուրս եկան և որսի գնալու ժամանակ հարձակվեցին ու նրա [Դելի Հասանի] ենթականերին սպանեցին։ Ինքը Բելգրադ փախավ։ Այնտեղ սերդարի փոխանորդ Թերյաքի Հասան փաշան նրան արգելափակեց բերդում և Ասիթանեին զեկուցեց այդ մասին։ Օրենքի ուժով Դելի Հասանին սպանելու մասին ֆեթվա և հրաման ուղարկվեց, որից հետո նա իր եղբորորդի Քյուչյուկ Բեյի հետ միասին սպանվեց...

*Այստեղ պատմագիրը հիշում է մի դեպք, որը նա համարում է Դելի Հասանի կողմից կատարված մեծ դավաճանություն։*

*Դելի Հասանը հատուկ մարդու միջոցով, գրավոր, դիմում է Վենետիկ՝ Հռոմի պապին, առաջարկելով, որ նրանք նավատորմ և ուժեր ուղարկեն՝ Ռեսնե բերդը գրավելու համար։ Ինքը խոստանում է օժանդակել նրանց, պայմանով, որ Ռեսնեի բերդի գրավման համար իրեն վճարեն հարյուր հազար ալթուն։*

*Բոսնիայում եղած ժամանակ Դելի Հասանը այդ նամակի պատասխանը ստանալով Թեմեշվարից, մի մարդու միջոցով նորից լուր է ուղարկում։ Սակայն այդ անձը գնում է սերդար Մուրադ փաշայի մոտ և ներկայացնելով նամակը, հայտնում է Դելի Հասանի մտադրությունը։ Ահա այդ պատճառով Դելի Հասանի հիշյալ քայլը անհետևանք է մնում։*

*(էջ 272—273)*

*1015 (1606—1607) թվականի դեպքերի շարքում Քյաթիբ Չելեբին խոսում է ջելալիների բոլոր խմբավորումների մասին։ Տալիս ենք համառոտ բովանդակությունը։*

Հանգուցյալ սուլթան Մուհամմեդ խանի[15] օրով, էֆլաքի և էնգերուսի պատերազմների հետևանքով, իսլամական քաղաքներում տեղի ունեցած ապստամբությունների ու խառնակությունները վերացնելու համար թեև միջոցներ ձեռք են առնվում, սակայն այդ շարժումներն ու կռիվները շարունակվում են, որի պատճառով մոտ 15 տարի շարունակ երկրում երթևեկությունը խանգարվում է։ Իսլամական զինվորները իրենց հայրենիքում չեն կարողանում հանգըստանալ։ Անատոլիայում «ստորին դասի ռայաները» օգտվելով երկրի անտերությունից, սկսում են զբաղվել կողոպուտով ու թալանով և նման միջոցներով ձի և հագուստ ձեռք բերելով, առանձին խմբեր են կազմում ու իրենց համար ղեկավարներ նշանակում։ Սրանք զենք և զինամթերք ձեռք բերելով, առանձին խմբերով, հեծյալ ու հետևակ, ցրվում են երկրի տարբեր մասերում և շարունակում են թալանն ու կողոպուտը, բռնությունները և այլն։ Այս մո-

լորյալ ավազակների ղեկավարներից մեկը լինում է Կարա Յազըջի անունով հայտնի Աբդյուլ Հալիմ ողորմելին, որը բեյլերբեյիների մոտ քարշ էր գալիս երբեմն սեկբանություն, երբեմն սուբաշիություն[16] անելով, երկիրը անտեր տեսնելով, ավազակ ռայաներին իր շուրջն է հավաքում և ավերում է երկրի մի շարք քաղաքներն ու գյուղերը...։ Մյուսը լինում է Հյուսեին փաշա անունով հայտնի ավազակը... Երկրորդը՝ Կարա Յազըջիի եղբայր Դելի Հասանը... Հետո Կալենդեր օղլու անունով հայտնի ավազակը..., որը 1013 թվականին ավազակներին իր շուրջը հավաքելով մինչև իր մահը, քաղաքները կողոպտելով ու կրակի մատնելով շարունակում է իր չարագործություններն ու բռնությունները։ Մյուսը լինում է Կարա Սայիդը, որը ստոր մարդկանցից մի քանի հազար զինվոր հավաքելով, սկսում է երկիրը ավերել։ Թավիլ անունով ստոր արարածը, որը սկզբում սեկբան էր եղել, հետագայում իր նման ավազակներին շուրջը հավաքելով, սկսում է ավաններն ու գյուղերը ավերել... Մեկն էլ՝ Յուսուֆ փաշան էր, որը բազմաթիվ չարագործություններ կատարելուց հետո, ներման է արժանանում ու բեյլերբեյիություն ստանում...։

Այդ ժամանակ հանդես են գալիս մի շարք ապստամբներ նաև սիփահիներից «զորբա» անունով, որոնց մեծ մասը ոչնչացվում է սերդարի ձեռքով, իսկ մնացածներն էլ՝ Հասան փաշայի օրով։

Ամենից ավելի կատաղի ավազակը Ջանփոլադ-օղլի Ալի փաշան է լինում, որը Հալեպում մեծ բռնություններ է գործում և Քիլիսի սանջակի քրդերի Ջանփոլադ ցեղը սուլթանից իբրև «օջաքլըք» ստանալուց հետո, ձգտում է անկախություն ձեռք բերել։

Պատմագիր Քյաթիբ Չելեբին մանրամասնորեն խոսում է այդ «ավազակային» ապստամբական շարժումների մասին, որոնց զինվորական ուժերը տասնյակ հազարների են հասել։ Այդ ապըստամբական շարժումները տարածվել են գրեթե ամբողջ Անատոլիայում։

(էջ 289—292, 292—294, 298—300, 304—315)

## ԹՈՒՐՔ-ԻՐԱՆԱԿԱՆ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԸ ԵՎ ԽՌՈՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՍԿԻԶԲԸ ԱՋԵՄԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ

Քյաթիբ Չելեբին 1012 (1603—1604) թվականը անվանում է «խռովություններ և ապստամբությունների տարի»։ Այդ խռովությունների ղեկավարն է եղել Աջեմի շահ Շահ Աբբասը։ Պատմագրի ասելով, խոստումնադրուժ Շահ Աբբասը, չկարողանալով տանել օսմանյան պետության աշխարհի բոլոր մասերում ունեցած հաջողություններն ու օսմանյան արքայական գերդաստանի փայլն ու փառքը,

փորձում է զանազան միջոցներով հարված հասցնել օսմանցիներին, իսկ իր պետությունը ընդարձակել և ուժեղացնել։

Պատմագիրը բառեր ու ածականներ չի խնայում օսմանյան պետությունը փառաբանելու և Աջեմի շահին անարգելու ու նսեմացնելու համար։ Օրինակ, նա Շահ Աբբասին անվանում է «անփառունակ»[17]։

* * *

Շահ Աբբասի Երևանի վրա հարձակվելու նախօրյակին Թավրիզը օսմանցիների ձեռքում էր։ Այդ ժամանակ Սալմաստի բեյ Քուրդ Ղազին օսմանցիներից փախչելով ապաստանում է Շահ Աբբասի մոտ և նրանից օգնություն խնդրում։ Շահը Քուրդ Ղազի բեյին խանություն է շնորհում։ Օսմանցիները պաշարում են Քուրդ Ղազի բեյի ապաստանած Կարնը Յարըք բերդը։ Պաշարվածները անձնատուր են լինում և օսմանցիները նրանց թույլ են տալիս բերդից դուրս գալ ու գնալ իրենց ցանկացած ուղղությամբ։ Քուրդ Ղազին գնում է Իսֆահան (Սպահան) Շահ Աբբասի մոտ։ Օսմանցիները Կարնը Յարըք բերդը միացնում են իրենց մյուս բերդերին։ Օսմանյան բանակը գնում է Նախիջևան։

Շահ Աբբասը Քուրդ Ղազիի դրդումով շարժվում է Թավրիզի վրա։ Նա իր տրամադրության տակ եղած 2—3 հազար ընտրյալ զինվորներին միացնում է «Գյոք-դուլաք» և «Թուլունգի» անուններով հայտնի ավազակային տարրերին, ինչպես նաև Էրդեբիլում իշխող Զյուլֆիկար խանի զինվորներին և 15 հազարանոց բանակով շարժվում է դեպի Թավրիզ։

Սոֆիանում տեղի ունեցած կատաղի կռվում օսմանցիները պարտվում են։ Քյաթիբ Չելեբին գովաբանում է օսմանյան բանակի քաջագործություններն ու հերոսությունները և պարտության պատճառ համարում է օսմանցիների սակավաթիվ լինելը։

«Խարդախ շահը գրավում է Թավրիզը» վերնագրով հատվածում պատմագիրը մանրամասնորեն նկարագրում է Շահ Աբբասի կողմից Թավրիզի գրավումը, նշելով, որ Շահը Թավրիզը գրավում է միայն իր խորամանկությունների և կեղծ խոստումների շնորհիվ։ Բերդում եղած օսմանյան զինվորները հավատալով Շահ Աբբասի այն խոստումներին, թե իրենց կյանքին և ունեցվածքին ոչ մի վտանգ չի սպառնում, բերդը հանձնում են։ Թավրիզից օսմանցիները դուրս գալով իրենց երեխաներով, ընտանիքներով և ունեցվածքով շարժվում են դեպի Վան։ Աջեմները նրանց հետապնդում են, կողոպտում և թալանում։ Իսկ Շահը մտնելով Թավրիզ, անասելի չարագործություններ է կատարում։ Այստեղ, Շահը՝ Նախիջևանն ու Երևանը գրավելու նպատակով, ուժեր և ռազմամթերք է հավաքում։

«Երևանի նոր բերդի կառուցումը» վերնագրով գլխում Քյաթիբ Չելեբին խոսում է Երևանի հին բերդին կից նոր պարսպի կառուցման մասին։ Այդ նոր պարսպի անհրաժեշտությունը զգացվում է, երբ Նախիջևանի զինվորներն էլ են գալիս Երևան և տեղի զինվորների հետ միասին պատրաստվում են դիմադրություն ցույց տալ Շահ Աբբասին։

(էջ 202—211)

## ԱՋԵՄԻ ՇԱՀԸ ԳԱԼԻՍ Է ԴԵՊԻ ԵՐԵՎԱՆ

Ջեմազիել-ախըր ամսի 11-րդ օրը Երևանի դաշտի հարավային կողմից երևացին թշնամու զինվորները։ Այդ ստոր ցեղի

զինվորները չար ոգիների նման տարածվեցին Երևանի դաշտում։ Բուն աջեմները հազիվ չորս-հինգ հազար մարդ էին, որի մոտ երեք հազարը «Թուլունգի» և «Գյոք-դուլաք» անունով հայտնի ավազակներն էին, մի մասն էլ վատաբարո քրդերի խմբերը՝ Քուրդ Ղազիի և նրա եղբայրներ՝ Կոջի Բեյի և Սեյֆեդդինի գլխավորությամբ։ Մյուս մասը, նախապես էմարեթ[18] ստացած Միրփաշա Օղլի Շեյխ Հեյդար անունով քուրդն էր, չորրորդ մասն էլ՝ նախապես Նախիջևանի երկրի գրավման գործում փադիշահի նայիբին ճանապարհ ցույց տալու համար բարձր աստիճանի արժանացած, Ալաեդդին բեյի մարդիկ, Մակուի տիրակալ Մուստաֆա բեյի վաշտը, ապա՝ ստոր և խայտառակ քուրդ Ջեյնալ բեյի վաշտը, Ալաշկերտի Կըլըջ Բեյի վաշտը, Բերգուշատ սանջակի բեյ Ֆերեհ Ջորի վաշտը։ Բանակի կենտրոնում օձի նման նենգ, փառքով ու շքեղությամբ շրջապատված Շահը սրինգների և փողերի բարձրահնչյուն նվագով ահ ու սարսափ էր տարածում։ Ստոր ռաֆըզիները միաժամանակ Երևանի բերդի առջև իրենց ռազմական հզորությունը ցուցադրելով, կարծում էին, թե բերդի ժողովուրդը Շահի շքեղությունից և վեհությունից սարսափահար՝ ստիպված կլինի անձնատուր լինել և բերդը հանձնել։

Սակայն օսմանյան բանակում կային իսլամական խելահաս և գիտակից մարդիկ, որոնք կարողացան հասկանալ, որ այդ արտաքին փառքի և սարսափի նշաններր անհիմն ու անարժեք են։ Նրանք այդ անիմաստ շքեղություններին և նվագներին ուշադրություն չդարձնելով, իրենց «ալարղա» թնդանոթների կրակով հեռվից ողջունեցին [թշնամուն]։ Այդ զզվելիների խումբը (աջեմներ) շահական վրանը դրեցին Միհնեթի բլուր անունով վայրում։

(էջ 214—215)

* * *

Քյաթիբ Չելեբին իր «Ֆեզլեքեի» հաջորդ հատվածներում մանրամասնորեն նկարագրում է Երևանի բերդի պարիսպների տակ տեղի ունեցած խիստ կատաղի և համառ մարտերը՝ «Երևանի մոտի առաջին մարտը», «Երկրորդ մարտը», «Երրորդ մարտը» վերնագրի տակ։ Այդ նկարագրությունների մեջ պատմագիրը ածականներ է շռայլում օսմանցիների հերոսությունների ու սխրագործությունները դրվատելու, իսկ աջեմներին ստորացնելու և անարգելու համար։

## ՇԱՀԻ ՆԱՄԱԿԱԲԵՐ ԲԱԽՇԻԻ ԺԱՄԱՆՈՒՄԸ

Երբ նենգամիտ թշնամին տեսավ, որ իր բանակի հարձակումը բերդը պաշտպանողների վրա ազդեցություն չգործեց, դիմելով խարդախության և նենգության, նա փորձեց սպառնալից նամակով

մոլորեցնել մտքերը և սիրաշահել զինվորներին։ Դրանից առաջ նա նամակներ էր գրել Էրզրումի վիլայեթի պաշտպանության համար Շերիֆ փաշայի կողմից նշանակված Հասան փաշային և շրջապատի էյալեթների փաշաներին, որոնցով նա հայտնում էր, որ ինքը ստուգել է թշնամու ընկճելու համար սպասվող զինվորական ուժերի ճանապարհը, նրանց վիճակը և ուժը։ Աստծու ողորմությամբ եթե խոստացված զինվորները ժամանեն որոշված ուղղությամբ, ապա կարելի կլինի հեշտությամբ պարտության մատնել բերդի զինվորներին։ Նամակը ուղարկել էր բերդը պաշարող զինվորներից մեկի՝ Շաթըր Մուհամմեդ չավուշի միջոցով։

Հիշյալ չավուշի մոտ եղած նամակներից մեկի վրա նա հեգնանքով գրել էր. «Գոհություն Աստծո, մենք դիմել ենք խելամիտ և անհրաժեշտ միջոցների։ Դուք թողեք այն վատթար միտքը և միջոցները, որոնք այս մոտ ժամանակներում ձեզ համար անիրագործելի են։ Ո՛վ վիլայեթի ժողովուրդ, դուք բոլորդ իմ երջանկաբեր Դռան երես քսելով, հպատակություն ցույց տվեք։ Սրանից հետո ձեզ այսպիսի նամակներ ուղարկելու հնարավորություն չի լինի։ Բերդը հանձնելուց բացի փրկության այլ ճանապարհ չկա»։ Այս սպառնալից խոսքերով գրված նամակն ուղարկվեց սուրհանդակ Բախշի Խալիֆայի միջոցով։

Հիշյալ անձը պարսպի անցքով տեղեկացրեց, որ ինքը նամակաբերն է և ներկայացավ վեզիրին։ Նրա բերած թղթերի բովանդակությանը ծանոթացան։ Վեզիրը, զինվորներն ու ամբողջ հասարակությունը [Շահի] խարդավանքը անպատասխան թողնելով, նամակաբերին պարսպից դուրս հանեցին։ Սակայն այդ խորամանկ նամակաբերը, ներկայանալով դիվանին, հայտնեց. «Ինձ հանձնված գրությանը պատասխան չտվեցին, այն պատճառաբանությամբ, թե նամակը հաստատված չէ դիվանի անդամներից որևէ մեկի ձեռքով և գրված չի Շահի հայտնի ձեռագրերով, այնպես, որ այս անգամ եթե գնամ ղեկավարներից մեկի նամակով, ապա Շահի նպատակը կիրագործվի»։ Այսպես նա շարունակեց իր անտեղի միջնորդական աշխատանքը։

(էջ 216—217)

Շահը նամակաբեր Բախշիի առաջարկով մի նոր նամակ է գրում և իր վեզիրի ու պետության հավատարմատարի կնիքներով կնքել տալով, ուղարկում է Երևան։ Բերդում գտնվողները, ծանոթանալով նամակի բովանդակությանը, հաշվի չեն առնում խորամանկ Շահի սպառնալիքները, կտրականապես մերժում են նրա առաջարկը, հայտնելով, որ իրենք պատրաստ են կռվով և պատերազմով պաշտպանել բերդը։ Նրանք Շահի սուրհանդակին նորից դուրս են անում։

Երևանի բեյլերբեյի Շերիֆ փաշան դիմումներ է ուղարկում պետության մայ-

րաքաղաք և օգնություն խնդրում։ Շեյխ-ուլ-Իսլամի, մյուս վեզիրների և ավագանիի խորհրդակցությունից հետո, շրջակա վիլայեթներին հրամաններ են տրվում, և Էրզրումի բեյլերբեյի Ահմեդ փաշան նշանակվում է սերդար։

Այդ ժամանակ սուլթան Մուհամմեդը վախճանվում է և նրան հաջորդում է սուլթան Ահմեդը։ Այդ կապակցությամբ Երևանին իրական օգնություն ցույց տալու գործը մնում է անհետևանք։ Շահ Աբբասը ուժեղացնում է Երևանի բերդի պաշարումը, որը շարունակվում է վեց ամիս։ Պաշարվածների ուժերը սպառվում են։

(էջ 217—218)։

## ԻՐԱՆՑԻՆԵՐԻ ԿՈՂՄԻՑ ՊԱՇԱՐՎԱԾ ԵՐԵՎԱՆԻ ՊԱՏԵՐԱԶՄԱԿԱՆ ԴԵՊՔԵՐԸ

Երևանի բերդի պաշարման ընթացքում Շահ Աբբասը մի շարք բանակցություններ վարեց, սակայն ապարդյուն։ Բերդ ուղարկված դեսպանին սպանեցին։ Տեսնելով պաշարվածների այդ վարքագիծը, նա հասկացավ, որ հազիվ թե նրանք անձնատուր լինեն... Ռեջեբ ամսի տասներորդ օրը պաշարման երեսուներորդ օրն էր. Շահ Աբբասը, Թավրիզի և Նախիջևանի գրավումից հետո, Գենջեի և Շիրվանի էյալեթների գրավմանը ձեռնարկելով և այդ երկրների ժողովուրդներին դեպի Ղարաբաղ և Շիրվան ուղարկելու ծրագրին արգելք հանդիսանալով, կարծում էր Երևանի գրավումը կարելի է հեշտությամբ գլուխ բերել։ Իրենց ուժերը դեպի Երևան ուղարկողներից մեկին՝ Խալիֆե Յակուբ անունով անձին, և նախապես զեմեթ ունեցած ու այդ կողմերն ապաստանած Խալիֆե Ջադե Ղազան անունով սիփահիին իր մոտ կանչելով և հանգիմանելով թե «դուք եք պատճառ դարձել իմ այս կողմերը գալուն և Երևանի գրավման մինչև այսօր ձգձգվելուն», սաստեց նրանց։ Վերջիններս պատասխանեցին. «մենք չենք թերացել մեր կարողության չափ աշխատելու մեջ։ Քանդել ենք ջրանցքները, կտրել կյանքի համար անհրաժեշտ հոսող ջրերը։ Սակայն բոլորովին առանց ջրի թողնելու համար անհրաժեշտ է կտրել նաև պարսպի մոտից հոսող Զանգիբար[19] (?) գետը»։

Այդ երկու ավազակները Շահի ցանկությանը ծառայելու նպատակով, հաջորդ օրը, իրենց հիշյալ ճենգամիտ միջոցներով բերդի վրա բաց արին անկանոն կրակ։ Զյուլֆիկար խանը մի քանի մարդկանցով կրակը ուղղեց դեպի Գյուրջի բերդը։ Բերդապահները չերևացին։

(էջ 221—227)։

* * *

*Հաջորդ հատվածներում պատմագիրը մանրամասնորեն նկարագրում է բերդի շուրջը տեղի ունեցած մարտական գործողությունները, մասնավորապես պաշարվածների կատարած սխրագործությունները։*

Իրանական բանակի հարձակումները, պատմագրի ասելով, օսմանցիների կողմից հերոսաբար ետ են մղվում։ Իրանական բանակի ղեկավարները քանդում են բերդի պարսպի մոտ գտնված ջրաղացը, որն «այդ ժամանակ բերդում գտնվողների միակ ջրաղացն էր»։ Պատմագիրը նշում է, որ այդ չարագործությունը կատարում են այն ավազակները, որոնք նախապես հպատակվել էին Շահին։ Սրանք բերդի այդ մասի ճանապարհին ծանոթ լինելով, մութ գիշերով, երբ ջրաղացպանը քնած է լինում, մտնում են ջրաղացը և գետի վրա կառուցված քարուկիր կամուրջը քանդում և ավերում են...։ Ռեջեբ ամսի 15—18-ը կռիվները ավելի կատաղի են դառնում։ Երկու կողմերն էլ ծայրահեղ զոհողությունների գնով փորձում են վճռել պատերազմի բախտը, սակայն այդ բանը չի հաջողվում։ Ըստ պատմագրի Շահ Աբբասի ուժերը սպառվում են և եթե օսմանցիները մի փոքր օժանդակ ուժ ստանային՝ Շահին պարտության կմատնեին։ Սակայն «Նախկին սերդար Հասան փաշայի անփութության պատճառով,— գրում է Քյաթիբ Չելեբին,— դրությունը վատացավ և երկիրը մեծ աղետների ենթարկվեց...»։

Ռեջեբ ամսի 22-ին (պաշարման 12-րդ օրը), բերդապահ զինվորների շրջանում, մի զինվոր, ենիչերիների քեթխուդայի դրդմամբ, այսպիսի հուսահատական խոսքեր է ասում. «Եթե պաշարումը այսպես շարունակվի, մեր շտեմարանում մի հատիկ ցորեն ու սահրինջում մի կաթիլ ջուր չի մնա, և անհրաժեշտ կլինի բերդը հանձնել թշնամուն...»։ Այս թշնամական գրգռման հետևանքով մի խումբ թուլակամ զինվորներ միանում և գիշերով դուրս են գալիս բերդից։ Նրանք ոչնչացվում են գերվածների մի խմբի կողմից...։ Պաշարման օրերին տեղի ունեցած այլ դավաճանությունների համար մահվան են դատապարտվում մի շարք անձինք։

«Սուրհանդակի գալը» վերնագրով հատվածում պատմագիրը խոսում է տոնական (ռամազան) ամսի 8-ին մի սուրհանդակի բերած նամակի մասին։ Նամակը ուղարկված է լինում էրզրումի վեզիր Սաաթջի Հասան փաշան, որով նա հայտնում է, որ դիմել է Ասիթանե և սպասում է հրամանի՝ իր տրամադրության տակ եղած մոտ 40 հազար զինվորներով Երևանին օգնության գալու համար։

Այդ օրերին, ինչպես նշվեց, տեղի է ունենում սուլթան Մուհամմեդի մահը և Սուլթան Ահմեդի գահակալությունը։

(էջ 227—234)

## ԻՐԱՆՑԻՆԵՐԻ ՊԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ ՇՈՐԱԳՅԱԼԻ ՊԱՏԵՐԱԶՄՈՒՄ

[Իրանի] բռնապետության ժամանակ Շորագյալը բռնակալ Կարա խան անունով սիփահիի իշխանության կենտրոնն էր։ Այդ ժամանակ Շահից ֆերման ստացվեց ժողովրդի պատրաստակամության մասին։ Ձմեռը վրա հասնելուց առաջ, երբ խանը իր ժողովրդի հետ միասին պատրաստվում էր մեկնելու, Ջալ-Փաշազադեի ազգականներից Օսման բեյը Կարա խանից առաջ Կարսի զինվորներով և իր մոտ հավաքված ղազիներով հարձակվեց թշնամու մի քանի գյուղերի վրա։ Այսպես իրանցիներն ու Շորագյալի խանը նիզակակից դարձան։ Այնուհետև, երբ թշնամիները գրավելով լեռան լանջերը՝ փախչելու ճանապարհն էին բռնել, եկան նաև Կարսի զինվորները։ Թշնամին ամբողջությամբ պարտության մատնր-

վեց։ Կարսի զինվորները նրանց հետապնդելով, զինաթափ արին, մի մասին գերի վերցրեցին, իսկ շատերին սրի քաշեցին։

### ՇԱՀԻ ՍՈՒՐՀԱՆԴԱԿԻ ԳԱԼԸ

Օգնություն խնդրելուց անցել էր մի քանի օր և խոստացված ժամկետը լրացել էր, սակայն սպասվող զինվորներից ոչ մի նշան չէր երևում։ Պաշարվածները վերին աստիճանի հուսալքվեցին և պատերազմի ծանրությունը նրանց համար անտանելի դարձավ։ Ջիլկադդե ամսվա 4-րդ օրը թշնամու ռայաներից մեկը՝ «Դուռը բացեք, որ թշնամու հարձակման ժամանակը ձեզ հայտնեմ» ասելով ներս մտավ ու փաշային ներկայանալով, հայտնեց, որ իր նպատակն է համաձայնություն կայացնել և վերացնել երկպառակությունը բերդի ժողովրդի և Շահի միջև։ Գթություն և արգահատություն ցույց տալով, նա ասաց. «Ամեն կողմից և ամեն օր զինվորների հեղեղներ են գալիս Շահի մոտ, նույնիսկ Սիմոնի որդի Գուրգենը, իր ենթակաների հետ միասին, Շահի բանակատեղում է։ Եկել է նաև Ջեքեմի իշխող Ալեքսանդր անունով թափառական թշնամին։ Գործադրված ուժեղ ջանքերի շնորհիվ, բերդի հաղթական գրավումը կասկածի ենթակա չէ. պաշարման սկզբից մինչև այժմ ձուլվող թնդանոթներից երեքը արդեն պատրաստ են վաղը առավոտից կրակ բաց անելու։ Դրանցից մեկը արձակում է 72 կիյա (օկկա), մյուսը՝ 42 կիյա, երրորդը 24 կիյա ծանրությամբ արկ։ Դրանից հետո բերդի փրկությունն անհնարին գործ է։ Ավելի նպատակահարմար է դիմել Շահի ողորմությանը և անձնատուր լինել։ Եթե Աստված կամենա, կարող եք փրկել ձեր կյանքն ու ունեցվածքը։ Ցանկության դեպքում կարելի է այդ առթիվ միջնորդություն հարուցել»։

Երբ սուրհանդակը այդ խոսքերով հայտնեց իր առաքելության նպատակը, վեզիրն ու ժողովուրդը՝ հաշվի առնելով նրա առաջարկի անընդունելի լինելը, սուրհանդակին անարգեցին և ձմռան այդ օրերին իբրև փոքրիկ նվեր ուղարկված հիանալի պտուղները՝ տանձն ու խնձորը, պարսպից դուրս շպրտեցին ու մերժողական պատասխան տալով, վերջ դրին բանակցությանը։

(էջ 234—235)

* * *

Հաջորդ հատվածներում պատմագիրը խոսում է հետագա պատերազմական գործողությունների մասին. երկու կողմից ուժեղանում է թնդանոթաձգությունը։ Պաշարվածները բերդի պարսպի ավերված մասերը անմիջապես վերաշինում և

նույն պարսպին նոր մասեր են ավելացնում։ Բերդից դուրս գալով նրանք անակընկալ հարձակումներ են գործում թշնամու վրա և մեծ կորուստ պատճառում։

Ջիլհիջջե ամսվա 8-րդ օրը աջեմներն իրենց բոլոր ուժերով ու միջոցներով, ավելի ուժեղ և կատաղի հարձակումներ են գործում Երևանի բերդի վրա և գրավում են պարիսպը։ Պաշարվածները ամրանում են բերդի ներքին մասում։ Աջեմները փողերի ահարկու հնչյունների ներքո գիշերային ուժեղ հարձակման են անցնում... պաշարվածներից մոտ 1500 զինվոր ընկնում են մարտերում, իսկ զինվորների կեսը՝ հակառակորդ դուրս գալով, հեռանում է։ Բոլոր զինվորներից մնում են միայն 500-ը, որոնք անկարող լինելով այդ ընդարձակ բերդը պաշտպանել հրաժարվում են դիմադրելուց։ Քանի որ մուհարրեմ ամսի տասներորդ օրը աջեմների սգի օրն է, նրանք հարձակումից խուսափեցին, որպեսզի հետո ավելի ուժգին հարձակման անցնեն։ Բերդում մնացածները ստիպված են լինում անձնատվություն խնդրել։ Նրանց խնդրանքը Շահի կողմից ընդունվում է։

(էջ 235—236)

## ՇԱՀԻ ՄԵՋԼԻՍԻ ՊԱՏԿԵՐԸ

Մուհարրեմ ամսի 11-ին ազատված և փրկված բերդի ժողովուրդը, Շահի հրամանով պատրաստ կանգնեց նրա խղճուկ վրանի մոտ։ Ինչպես այդ ժամանակ պաշարման մեջ եղած Նախիջևանի կադին՝ Ջերրահ Ջադեն է պատմում, ուշադրությամբ դիտելիս, կարելի էր նկատել, որ Շահը իրեն օգնական և հենարան հանդիսացող թափառականներով շրջապատված «Ալաջըք էվի» անունով հայտնի հնացած և մրոտված վրանը իր համար Դիվանխանե էր սարքել։ Պաշարվածների վրա ազդեցություն գործելու համար, վրանի առջևի կողմում, 3—4 զույգ տերևներով ծածկված սյունի տակ նա մի քանի գորգ էր փռել տվել։ Ինքը դեռ չէր երևում։ Խիտ հոնքերով, ածիլված գլուխներին անհավատի թագ դրած, նստած էին նրա զինվորական պարագլուխները։ Հանկարծ Շահը եկավ։ Նրա դեմքը ևս զուրկ էր գրավչությունից։ Հագել էր կոշտ ասվի աբա (վերարկու)։ Նրա կապած թուրն ու դաշույնը ոսկուց և զարդերից զուրկ էին։ Նա եկավ և նստեց իր Դիվանխանեի ճիշտ կենտրոնում։ Ներկա գտնվողները շտապեցին համբուրել նրա քղանցքը։ Մոտ մի ժամ, վեզիրներն ու հասակավոր մարդիկ, Շահի դիմաց՝ ձեռքերը կրծքներին դրած կանգնած մնացին նրա հրամանին սպասողի վիճակում։ Գոռոզ Շահը այդ պահին, իրեն հատուկ մեծամտությամբ, ոչ մի սիրալիրություն չցուցաբերեց՝ ո՛չ վեզիրների և ոչ էլ մյուսների հանդեպ։ Նա զրուցեց միայն իր երկու կողմում կանգնած արքայազունների հետ, և հարց ու պատասխաններն էլ փոխանակեց միայն նրանց հետ։ Հետո անցավ վրանը և ներս հրավիրեց իր զինվորական պետերին։ Նրանք ներս մտան։ Այնտեղ

չկար շահին վայել նստելու ոչ մի տեղ, ոչ մի բարձ։ Նա ուղղակի նստեց մի անկյունում փռված գորգի վրա։ Շահի աջ կողմում նըստած էր Լեվենդ խանի որդի Ալեքսանդր խանը, ձախ կողմում՝ Սիմոնի որդի Գուրգենը, որոնք ժողովի էին նստել, ինչպես վայել է թափառաշրջիկներին։ Նրանց կողքին նստել էին Թավրիզի բեյլերբեյի Ալի փաշան, քուրդ Ղազին և մյուսները։ Շերիֆ փաշային և այլ զինվորական պետերին նա հրամայեց նստել Ալեքսանդրից հետո, իսկ դա նշանակում էր, որ Շահը այդ թշնամուն բարձր էր դասում «էհլի-սյուննեթներից»[20]։

Հետո շահը վերոհիշյալ Ջերրահ Զադեին հանդիմանելով, ասում է. «Դու խելամիտ և գիտակից մարդ ես, ինչո՞ւ ինձ հպատակություն ցույց տալու ուղիղ ճանապարհը թողնելով հեռացար շնորհներից ու առաքինություններից»։ Ջերրահ Զադեն պատասխանեց. «Իսլամական փադիշահին ծառայողը պարտավոր է նրա համար իր անձր զոհել և ավագանիի ու զինվորների համար անհրաժեշտ կռվից և պատերազմներից չհրաժարվել։ Մենք հույս ունենք, որ Ձերդ մեծության կողմից կշտամբանքի չենք ենթարկվի»։

Այս խոսքերն ընդունելի համարվեցին և, հաշվի առնելով շահին մատուցած նրա ծառայությունը, ներում շնորհվեց և հրաման տրվեց անմիջապես հեռանալ Մեջլիսից։

Շահը նախապես գերի ընկած ուլեմաներին ասաց. «Դուք այն մարդկանցից եք, որոնք ֆեթվա են տալիս այն մասին, թե թշնամիներից [իրանցիներից] մեկի սպանությունը հավասար է յոթանասուն անհավատ թշնամու սպանության»։ Այս խոսքերից հետո, Շահը հրամայեց պատռել ողջ-ողջ նրանց կուրծքը, թոքերը հանել և սոսկալի տանջանքներով սպանել...»։

Քյաթիբ Չելեբին վերջում գրում է, որ ներման արժանացած վերոհիշյալ Ջերրահ Զադեն, մոտ 500 մարդով գալիս է Կարս և հաջորդ տարվա սկզբին մեկնում Դար-ուլ-սուլթանի [Ստամբուլ]։ Վերոհիշյալ դեպքերը նա գրի առնված ներկայացնում է Նորին վսեմություն փադիշահին։

Քյաթիբ Չելեբին ավելացնում է. «Մինչև այստեղ* այդ գիրքը ամբողջությամբ համառոտագրեցի և մեջ բերի»։

(էջ 238—239)

## 1013 (1604) ԹՎԱԿԱՆԻ ՄՆԱՑԱԾ ԴԵՊՔԵՐԻ ՄԱՍԻՆ

Շահը հաղթանակ տանելուց հետո Շերիֆ փաշային Իմամ Ռիզայի վակֆին մյութեվելլի[21] նշանակեց։ Նա իր կյանքի մնացած տարիներն անց կացրեց Մեշհեդում։ Շահը պաշարվածներին ար-

* Խոսքը վերաբերում է իր գրքին՝ «Ֆեզլեքե»-ին։

տոնություն տալով, ասաց. «Ցանկացողները թող ինձ նոքյար լինեն»։ Մնացածներին՝ մոտավորապես 300—400 տուն, խըզըր փաշա-օղլի Մուհամմեդ փաշայի միջոցով ուղարկեց Կարս։ Երևանի բերդը քանդեց և հողին հավասարեցրեց։ Այդ ժամանակ վախճանվեցին նաև էրզրումի բեյլերբեյին և սերդար Սաաթչի Հասան փաշան, որից հետո բանակը ցրվեց։ (էջ 242)

Հաջորդ հատվածներում պատմագիրը խոսում է նաև Երևանի գրավումից հետո Շահ Աբբասի հետ կապված հետագա դեպքերի մասին։

Շահ Աբբասը վախենալով օսմանյան բանակի պատրաստությունից և առաջխաղացումից շտապ հեռանում է Երևանից ու Ակչե Կալայից և գնում է Թավրիզ։

Իրանի արշավանքի ղեկավար նշանակված Ջղալե Զադե Սինան փաշան ուժեր հավաքելով, կարողանում է հասնել Կարս միայն ձմռանը։ Ճանապարհին եղած ռայաների [հայերի] գյուղերի ու ավանների բնակիչները աքսորված լինելով, երկիրը մնում է անմշակ։ Երկրում սով է տիրում։ Ջղալե Զադե Սինան փաշան աննպատակ համարելով Շահին հետապնդելը, քաշվում է դեպի Վանի Քուրդ բեյերին սիրաշահելով, ուզում է իր կողմը գրավել։ Շահ Աբբասի ուղարկած ուժերը պաշարում են Վանը։ Փաշան բավականաչափ ուժեր չունենալով, Վանի լճի վրայով, նավակով, փախչում է դեպի Ադիլջեվազ և հետո դեպի էրզրում։ Դրանից հետո շահը իմանալով Սինան փաշայի փախուստը և, նկատի առնելով, որ «Վանի պաշարումը [և գրավումը] ապարդյուն է, մոտ 40 օր այնտեղ մնալուց հետո, վերացնում է պաշարումն ու մեկնում է Նախիջևան և Թավրիզ։ Ճանապարհին պաշարում է օսմանյան բերդերից՝ Մակուն, սակայն անհաջողությունից բացի, ոչինչ ձեռք բերել չի կարողանում»։

(էջ 246)

## 1014 (1605) թվականի դեպքերից

Այս ժամանակաշրջանում ևս շարունակվում են Շահ Աբբասի և օսմանյան բանակի պատերազմական գործողությունները։ Օսմանցիները մեծ ուժեր են կուտակում Արևելյան ճակատում։ Կատաղի մարտերից հետո նրանք պարտության են մատնում Շահի բանակին։ Սակայն հետագայում իրանցիները նոր ուժեր հավաքելով, շարունակում են պատերազմը։ Այնուհետև, օսմանյան բանակում անկարգություններ են ծագում, որոնք թուլացնում են բանակի ռազմական ուժը։

Նույն տարին Շահ Աբբասը գրավում է նաև Գենջեն և Շիրվանը։ Նախապես Շահ Աբբասը պաշարում է Գենջեն և 7 ամիս հետո՝ գրավում։ Ապա շարժվում է դեպի Շիրվան, որը նույնպես գրավում է 7 ամիս տևող պաշարումից հետո։ Ջնայած իր խոստումին, Շահը Շիրվանի ժողովրդի մեծ մասին կոտորում է։

(էջ 264—267)

## 1019 (1610) թվականի դեպքերից

Բարձր սերդարը [Մուրադ փաշան] Արևելք մեկնելով, Գյուրջի Մուհամմեդ փաշային նշանակեց տեղակալ։ Սեֆեր ամսի 5-ին Մուրադ փաշան իր հաղթական զինվորներով Աջեմի երկիրը գնալու համար անցավ Սկուդար։ Փադիշահական հրամանով ռե-

բուէլ-էվվելի սկզբին ճանապարհ ընկավ և մենզիլներն անցնելով հասավ սահման, որտեղ հավաքվեցին նշանակված բեյլերբեյիները և մեծ թվով զինվորներ։ Տեղեկություն ստացվեց, որ մոլորյալ Շահը Թավրիզում է գտնվում։ Քանի որ ձմեռը մոտենում էր, Մուրադ փաշան շտապ եկավ Թավրիզ, սակայն բնակիչները քաղաքը դատարկել էին, թողել անբնակ և հեռացել։ Զինվորները քանդեցին և այրեցին քաղաքի բոլոր շինությունները։ Շահը դիմադրություն ցույց տալուց խուսափելով, ապաստանել էր Թավրիզի շրջակայքում գտնվող Սյուրխաբ բերդը։

...Ձմեռը վրա էր հասնում։ Այստեղ զինվորները հանգստանալու հնարավորություն չունենալով, այդ կողմերը քանդելուց և ավերելուց հետո սերդարն ու կափուկուլի[22] զինվորները վերադարձան Դիարբեքիր։

Այս արշավանքի ժամանակ սերդարը մի անգամ ևս Շահին նամակ ուղարկեց և ստացավ պատասխանը։ Նամակում մի շարք տիտղոսներ թվելուց հետո, ասված էր. «Դուք խախտել եք Շահ Իսմայիլի ժամանակ գոյություն ունեցած պայմանները»։ Շահը իր պատասխանում մերժելով պայմանագրի խախտումը, ասում էր. «Ձեր սահմանի վրա եղած իշխանավորները գրավել են մեր վաճառականների (բեզիրգյան) ապրանքները և նույնիսկ սպանել մի քանիսին։ Այդ մասին բազմիցս հայտնել ենք Նորին վսեմություն փադիշահին, սակայն ապարդյուն։ Սուլթանության արժանապատվությունը թույլատրել է այդպիսի գործողությունների կատարումը։ Մենք բարձրյալն Աստծուն ապավինելով, ձեռնարկեցինք գրավելու մեր ժառանգական իրավունքը հանդիսացող երկրները։ Դուք պարծենում եք թաթարական զինվորներով։ Սրանից առաջ Իսլամ Կիրայն ու Ղազի Կիրայը Շիրվանի վրա արշավելով, պատերազմել էին Աջեմի դեմ։ Խաները գերի էին ընկել։ Եթե նորից գան, իրենց պատիժը կստանան։ Մեզ ծանոթ է Ալ-Օսմանի փադիշահների հարստությունը և զորությունը։ Սակայն մեր ղազիները ձեր զինվորների գերազանց թվի համար երբեք չեն անհանգստանում։ Հանգուցյալ սուլթան Սուլեյմանի և իմ հանգուցյալ պապ Շահ Թահմասբի հետ կնքված պայմանագրի համաձայն, երբ հնարավոր լինի որոշել սահմանները, ես Նորին վսեմություն փադիշահի մի կուլն եմ։ Եթե մի մարդ թշնամության մեջ ուժեղ չլինի, չի կարելի վստահել նրա բարեկամությանը։ Տեսնենք ինչպես կլինի մեր բարեկամությունը։ Եթե համաձայն չեք, այդ դեպքում, թող տեղի ունենա այն, ինչ որ կարգադրել է նախախնամությունը, վեսսելամ»։
(էջ 234—235)

## ՍԵՐԴԱՐԻ ՈՒՂԱՐԿԱԾ ՊԱՏԱՍԽԱՆԸ* ԵՎ 1021 (1612) ԹՎԱԿԱՆԻ ՀԱՇՏՈՒԹՅԱՆ ԴԱՇՆԱԳԻՐԸ

*Սերդարը իր պատասխան նամակում հայտնում է, որ հաշտությունը հնարավոր կլինի միայն այն դեպքում, եթե Շահը հրաժարվի բոլոր այն հողերից, որտեղ կարդացվում է փադիշահի խութբեն[23]։*

*1019 (1610—1611) թվականին Շահը նորից պատգամավորներ է ուղարկում և համաձայնություն է հայտնում, որ Սուլթանը բեյլերբեյի նշանակի գրավված երկրներում։ Բացի այդ, առաջարկում է այդ վայրերի բերքից տարեկան տալ 200 բեռ մետաքս։*

*Մուրադ փաշան չի համաձայնում այդ առաջարկներին և պատրաստվում է արշավանքի։*

*1020 (1611) թվականին, Մուրադ փաշայի մահից հետո, սերդար է նշանակվում Մուրադ փաշայի մրցակից Նեսուհ փաշան, որը կողմնակից էր Շահ Աբբասի հետ հաշտություն կնքելուն։*

*Նեսուհ փաշան գալիս է Ստամբուլ, իր հետ բերելով շահի պատգամավորին և խոստացված մեկ տարվա մետաքսը։*

*1021 (1612) թվականին Թուրքիայի և Իրանի միջև վերջապես որոշվում են հաշտության պայմանագրի պայմանները, նախապես Շահ Թահմասբի և սուլթան Սուլեյման Կանունիի միջև ընդունված սահմաններով, և տարեկան 200 բեռ մետաքս տալու պայմանով։*

*Սահմանագիծը որոշելու համար Իրանի պատգամավորը Էրզրումի բեյլերբեյիի հետ մեկնում է Իրանի սահմանը։ Սակայն, «մինչև 1024 (1615) թվականը,— գրում է Քյաթիբ Չելեբին,— սահմանների հարցը չի լուծվում և ձգձգվում է»։*

*(էջ 346)*

## ՀԱՇՏՈՒԹՅԱՆ ԿՆՔՈՒՄԸ ԱՋԵՄԻ ՇԱՀԻ ՀԵՏ

*Այդ տարին, Աջեմի շահի հետ կնքվելիք հաշտության պայմանագիրը՝ շեյխ-ուլ-իսլամ Մուհամմեդ էֆենդիի խմբագրությամբ, պատրաստվեց և ուղարկվեց։ Նախորդ փադիշահների հաշտության դաշնագրերում ընդունված պայմանների համաձայն ընտրյալների, մյուջթեհիդ իմամների[24] և այլ նվիրական անձերի նկատմամբ անարգանք և անեծք չպետք է արտահայտվի։ Շահ Թահմասբի խոստումի համաձայն, «էհլի-սյուննեթին» [սյուննիներին] վատ վերաբերմունք չպետք է ցույց տրվի. իրենց միջոցներով այս կողմերն եկողների նկատմամբ արգելք չպետք է հարուցվի։ Բարձր Դերգյահին ենթակա գյուղերի և երկրների գործերին միջամտություն չպետք է լինի։ Սուլթան Սուլեյման խանի ժամանակ որոշված սահմանները պետք է ընդունվեն։ Բաղդադի էյալեթին ենթակա Սենջար-Օղլի Մյուբարեքի ձեռքում եղած երկիրը դարձյալ պետք է են-*

** Սերդար Մուրադ փաշայի պատասխան նամակը տրված է այս աշխատության 1-ին հատորում՝ պատմագիր-տարեգիր Նայիմայի 1019 թվականի դեպքերի շարքում (էջ 77). այստեղ տալիս ենք միայն բովանդակությունը։*

թակա լինի Բաղդադին, սակայն նրան հովանավորություն և օգնություն ցույց չպետք է տրվի։ Շեհրի-Զոր էյալեթի մեծ քաղաքների գրավմանը աջակցող Հելու խանից այդ երկիրը ազատելու գործին պետք է օժանդակություն ցույց տրվի։ Արևելյան երկրներից եկող հաջիները պետք է գնան Հալեպի և Շամի ճանապարհով, այլ ոչ թե անապահով և անվստահելի Բաղդադի և Բասրայի ճանապարհով։ Վաղուց ի վեր մեզ հավատարիմ Շամխալ խանին և Դաղստանի երկրների իշխողներին ու նրանց երկրներին վնաս չպետք է հասցվի։ Իսկ Ռուսի (ռուսների) այս կողմերում երթևեկելու ճանապարհը փակելու նպատակով, նրանց կառուցած Թերեք բերդը քանդելու ֆերման տալու ժամանակ շահի զինվորներից ոչ մեկը չպետք է միջամտի, և սահմաններն ապահով դրության մեջ պետք է լինեն։ Այս հիմունքներով սահմանները որոշելու համար սահմանի փաշաներից նշանակվեցին Բաղդադի էյալեթի Հաֆըզ Մահմուդ փաշան և էմիր-ուլ-ումերա[25] Մուհամմեդ փաշան, որպեսզի երկուստեք սպիտակ մորուքավորների որոշումով, սահմանները ճշտվեն ու որոշվեն։ Այդ մասին ուղարկվեց հրաման։

(էջ 354—355)

## 1024 (1615) թվականի դեպքերից

### ՍԵՐԴԱՐԸ ԵՎ ՄԵԾ ՎԵԶԻՐ ՄՈՒՀԱՄՄԵԴ ՓԱՇԱՆ ԳՆՈՒՄ ԵՆ ԴԵՊԻ ԵՐԵՎԱՆ

Նախքան այդ, Աջեմի շահի հետ կնքված հաշտությունից հետո 1021 թվականի շաբան ամսին Իրան էր ուղարկվել Նեսուհ փաշայի հետ եկած Կազի անունով դեսպանը։ Նրա հետ Բարձր Դերգյահի չավուշներից մեկի՝ Ինջելի Մուստաֆա չավուշի միջոցով ուղարկված էր նաև [հաշտության] պայմանագիրը։ Պատգամավորը մոտ երկու տարի մնաց Աջեմի երկրում։ Չնայած Շահ Աբբասը ամեն տարի հարյուր բեռ մետաքս և մոտ հարյուր բեռ թանկագին ապրանքներ ուղարկելու խոստում էր տվել, սակայն անցել էր 2 տարի նա ոչինչ չէր ուղարկել։ Նա ասում էր. «Ինչո՞ւ ես հարկատու պիտի լինեմ»։ Փադիշահը խիստ զայրացավ և ասաց. «Դա կատարելապես խոստման դրժում և պայմանի խախտում է նշանակում»։ Նեսուհ փաշայի սպանությունից հետո մեծ վեզիր նշանակված Մուհամմեդ փաշային փադիշահական գրություն ուղարկելով, ֆերման տրվեց, որ արշավանքի պատրաստություն տեսնի։ Նա էլ, Բարձր ֆերմանի համաձայն, անհրաժեշտ ռազմամթերք

ուղարկեց։ Կափուկուլի, Անատոլիայի ու Ռումելիի բոլոր զինվորներն արշավանքի պատրաստվեցին Աջեմի երկրի վրա... Նույն թվականի ռեբուել-ախըր ամսի 23-ին, սերդարը հանդիսավորությամբ անցավ Սկյուտար... 20 օր այնտեղ սպասելուց հետո շարժվեց և, մենզիլներն անցնելով, շաբան ամսին Հալեպ հասավ... Ժամանակը ուշ էր և ձմեռը վրա հասավ։ Ենիչերիները ձմեռեցին Մարաշում և Մալաթիայում, սիփահիները՝ Սվազում, իսկ սիլահդարը՝ Կարամանում։ Նպատակահարմար համարվեց գարնանը մտնել Աջեմի երկիրը։

### ԱՋԵՄԻ ՇԱՀԻ ՍՈՒՐՀԱՆԴԱԿԻ ԺԱՄԱՆՈՒՄԸ

*Երբ սադրազամը սերդար նշանակվեց և պատրաստվում էր մայրաքաղաքից մեկնել, վերոհիշյալ Ինջելի Ջավուշից մարդ եկավ և հայտնեց, որ Աջեմի շահի կողմից ամեն տարի ուղարկելիք մետաքսը Կասըմ անունով դեսպանը բերել և հասցրել է Երևանի սահմաններին։ Սակայն, քանի որ երկու տարուց ի վեր, առանց որևէ պատճառի, հետաձգվել էր մետաքսի ուղարկումը, փադիշահը զայրացել էր և ուժի մեջ թողեց արշավանք ձեռնարկելու որոշումը։*

*Երբ սերդարը Հալեպ մտավ, վերոհիշյալ դեսպանն էլ հասավ Սաամբուլ և իջևանեց մի թաղում, որովհետև նրան ոչ մի հարգանք և պատիվ ցույց չտրվեց։ Օրենքի համաձայն բավարարվեցին նրա կարիքները։ Մոտ մեկ տարի նա բոլորովին մոռացության մատնվեց. ոչ նրա բերած նամակին նայեցին և ոչ էլ որևէ արժեք տվեցին նրա բերած նվերներին։*

(էջ 368—370)

## 1025 (1616) թվականի դեպքերից

### ՄԵԾ ՍԵՐԴԱՐԸ ԳՆՈՒՄ Է ԴԵՊԻ ԵՐԵՎԱՆ

*Երբ գարունը բացվեց, Հալեպի ձմեռանոցից զինվորները շարժվեցին և ռեբուել-ախըրի սկզբին՝ Գյոք Մեյդանի դաշտում վրաններ խփեցին։ Ձմեռանոցներում եղած կափուկուլերին հրաման տրվեց շարժվել դեպի Էրզրում։*

*Հիշյալ ամսի 7-րդ օրը Մարաշի և Հալեպի բեյլերբեյիները Բիրեջիկից ճանապարհ ընկան դեպի Էրզրում։ Հետո շարժվեց սերդարը և Քյուքսենի դաշտից եկավ Ակ Շակի դաշտը, որտեղ նրան միացավ Ռումելիի բեյլերբեյի Դավուդ փաշան՝ իր էյալեթի զին-*

*վորներով։ Ասիթանեից ստացան դրամ ու գանձ։ Ջեմաղիել-էվվելի կեսին Հասան էրզրում և բերդից 7 հատ թնդանոթ իջեցրին, հինգը 14-ական կիյա (օկկա) արկ էին արձակում, երկուսը՝ կըլնբորինա էին։ Պատրաստեցին նաև անհրաժեշտ ռազմամթերք։ Ըստ ընդունված կարգի կափուկուլերին մթերք բաժանելուց հետո, Անատոլիայի, Կարամանի և Սվազի էյալեթների զինվորները պատրաստվեցին հարձակման։ Դիարբեքիրի բեյլերբեյի Դիլավեր փաշան և Երևանի բեյլերբեյի Թեքելի փաշան Երևանի վրա շարժվելու հրաման ստացան։ Հրամաններ ուղարկվեցին Բաղդադի բեյլերբեյի Մուստաֆա փաշային, Մուսուլի Սեյիդ խանին և այլ վայրերի քուրդ զինվորներին, որպեսզի հավաքվեն և ենիչերիների վաշտերի հետ միասին շարժվեն Նեհավենտի վրա։ Սրանք Կարս հասան ամսի վերջին։*

## ԿԱՐՍԻ ԲԵՐԴԻ ԿԱՌՈՒՑՈՒՄԸ

*Քանի որ Կարսի բերդը ավերվել էր Շահի ձեռքով, նպատակահարմար համարվեց նորից վերանորոգել և այնտեղ զինվորներ պահել։ Կափուկուլերին և բեյլերբեյիներին զինվորներ տրամադրեցին։ Մեկ շաբաթվա ընթացքում հնարավորին չափ վերանորոգեցին. պաշտպանության համար հատկացվեցին զինվորներ ու թնդանոթներ, որից հետո ջեմազիել-ախըրի կեսին հասան Երևանի դաշտը։ Գիշերը խրամատներ պատրաստեցին և բերդը պաշարեցին։ Էմիր Գյունե խանը բերդը ամրացնելով, վիլայեթի զինվորներին լցրեց այնտեղ։ Շահ Աբբասը իր զինվորներով Նախիջևանում էր։ Ռումելիի բաժնում դրեցին չորս թնդանոթ, ենիչերիների բաժնում՝ երկու, և դրան դիմաց՝ երկու թնդանոթ ու քսան օր բերդը գնդակոծեցին, սակայն ապարդյուն։ Սկսեցին հողը փորել. ցերեկվա փորված հողը գիշերը ներս էին տանում և անհետացնում։ Խանդակներում ձգված տոպրակները և ղարարները կեռերով ներս էին քաշում։ Ի վերջո, իսլամական զինվորները, ջանք գործադրելով, հողաբլուրներ շինեցին և զարբազան թնդանոթներով անցքեր բացելով ամեն կողմից հարձակվեցին բերդի վրա։ Մազանդարանի հրացանաձիգները թաքնվեցին. նրանցից շատերը զոհվեցին մեծ մարտերում, ենիչերիների աղա՝ Մեսլի Աղան սպանվեց, իսկ Թուրքչե Բիլմեզ փաշան[26] վիրավորվեց, որից հետո զինվորները հետ քաշվեցին։*

(էջ 374—375)

* * *

*Քյաթիբ Չելեբին հաջորդ հատվածներում նկարագրում է հետագայում տեղի ունեցած պատերազմական գործողությունները։ Վանի բեյլերբեյի Թեքելի Մուհամմեդ փաշան մեծ հերոսություններ է ցուցաբերում։ Երկու կողմերը խոշոր ջանքեր են գործադրում հաղթանակ ձեռք բերելու համար։ Տեղի են ունենում կատաղի մարտեր, որոնք շարունակվում են 44 օր։ Սակայն ձմեռը մոտ լինելու պատճառով, օսմանցիները ստիպված են լինում պաշարումը վերացնել։ Վերականգնվում է Նեսուհ փաշայի օրով կնքված հաշտությունը, պայմանով, որ տրվի որոշված մետաքսի և նվերների միայն կեսը։ Ոչնչացվում են բերդի համար բերված մեծաքանակ պաշարները։ Այսպես, աջեմները բերդից դուրս են գալիս ու սկսում են առևտուր անել։ Թնդանոթները նախօրոք Կարս են ուղարկվում։ Ճանապարհին, սոսկալի սառնամանիքների պատճառով, բանակը մեծ նեղություններ է քաշում։ Շատերը սառչում են։*

*Երբ արտակարգ անհաջողության լուրը Ստամբուլ է հասնում, «այդքան զինվորներով և գանձերով Երևանի նման հողաշեն բերդը չգրավելու» համար փադիշահը զայրանում է։ Մուհամմեդ փաշան հեռացվում է իր պաշտոնից։ Նոր նշանակված սերդար Խալիլ փաշան պատրաստվում է նոր արշավանքի։ Հատուկ ֆերմանով Ղրիմի խան Ջանբեյ Կիրային առաջարկվում է մասնակցել նոր արշավանքին։*

*Աջեմի շահի դեսպան վերոհիշյալ Կասըմը բանտարկվում է Եդի Կուլեյում։*

*(էջ 376—377)*

## 1026 (1617) թվականի դեպքերից

### ԶԻՆՎՈՐՆԵՐԻ ԱՌԱՔՈՒՄԸ ՎՐԱՍՏԱՆԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

Գուրիլի [Գուրիա] իշխողը նամակ էր ուղարկել և հայտնել, որ Աջեմի շահը ցանկանում է Գյուրջիստանի վիլայեթը իր իշխանությանը ենթարկել։ Այս պատճառով Բաթումի բեյլերբեյի Օմեր փաշան իր էյալեթի զինվորներով, Չըլդըրի կամուրջի բեյ Մյուրթեզ բեյը, Արփալըք սանջակի մյութասարրիֆ փաշան և Վրաստանի իշխաններից ու էմիրներից Ղադիանի և Աչըք Բաշի մելիքներն իրենց իշխանության տակ եղած զինվորներով հրաման ստացան Վրաստանի սահմանին օգնություն ցույց տալ։ Բացի այդ, ամբողջ էրզրումի և Տրապիզոնի էյալեթներում եղած ենիչերիներին ու նրանց սպաներին, ինչպես նաև Դաղստանի իշխաններին հրաման ուղարկվեց, որ անհապաղ շարժվեն և պաշտպանության համար հավաքվեն վերոհիշյալ սերդարների մոտ։ (էջ 384)

* * *

*Գարնանը վեզիր Խալիլ փաշան տեղաշարժվում և Թիֆլիսի ու Վանի վրայով ուղղվում է դեպի Թավրիզ։ Շահը լինում է Էրդեբիլում։ Թաթարական խանը միանում է փադիշահական բանակին։*

Խորհրդակցությունը որոշում է շարժվել Էրդեբիլի վրա, որի Կոչաղայ [Կարչաղայ] խանը այդ շրջանի բոլոր ռայաներին գաղթեցրել էր և քշել դեպի Էրդեբիլ։

Թաթարական խանը, Ջանբեյ Կիրայը, ուղարկվում է Էրդեբիլի վրա. սա շարժվում է արտակարգ արագությամբ, բայց Սերավի դաշտում տեղի ունեցած կատաղի կռվում չարաչար պարտվում է։ Խալիլ փաշան, իմանալով խանի պարտությունը, ինքն էլ է շարժվում դեպի Էրդեբիլ։ Շահ Աբբասը դատարկում է Էրդեբիլը և ետ քաշվում։

Հաշտության բանակցությունները վերսկսվում են և 1027 (1618) թվականին, Նեսուհ փաշայի օրով ընդունված պայմաններով կնքվում է հաշտության պայմանագիր։ Այդ պայմանագրով Շահը ամեն տարի պետք է ուղարկեր երկու հարյուր բեռ մետաքս և հարյուր բեռ այլ ապրանքներ։ Պայմանագրի ստորագրումից հետո, Շահը օսմանյան բանակին՝ իբրև նվեր, ուղարկում է 800 ուղտի բեռ պարեն՝ բրինձ, շաքար, լիմոն, նուռ, մրգեղեն, քաղցրավենիք և այլն։ Մեծ վեզիրն էլ իր կողմից շահին մեծ նվերներ է ուղարկում...։

Ջեմազիել-էվվել ամսին գալիս է Աջեմի շահի դեսպանը, իր հետ բերելով հարյուր բեռ մետաքս, չորս փիղ, մեկ ռնգեղջյուր և այլ նվերներ։ Ստամբուլում նա ընդունվում է մեծ պատվով ու շուքով։ Հաշտության պայմանագրի շուրջը բանակցելուց հետո, ընդունվում են հետևյալ պայմանները. պետք է պահպանվեն սուլթան Սուլեյմանի ժամանակ ընդունված սահմանները, օսմանցիներին մնան Ախալցխայի էյալեթը և նրան ենթակա մասերը։ Դրա փոխարեն, իրականում իրանցիների տիրապետության տակ գտնվող Բաղդադին սահմանակից Դերթեի և Դերթենկի սանջակներն իրենց նահիյեներով և գյուղերով Իրանին պետք է պատկանեն։ Ամեն տարի պետք է ուղարկվեն հարյուր բեռ մետաքսի արժեք ունեցող նվերներ, Շամխալի և Դաղստանի մյուս իշխողների երկրներին վնաս չպետք է հասցվի։

Հաշտության պայմանագիրը երկու կողմից ստորագրվում և հաստատվում է շեվվալ ամսի 19-ին։

(էջ 397—398)

## «ՖԵԶԼԵՔԵ», ՀԱՏՈՐ II

### 1031 (1621—1622) թվականի դեպքերից

#### ԱԲԱԶԱ ՓԱՇԱՅԻ ԱՌԱՋԻՆ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆԸ

*Ստահոդ լուրեր էին տարածվել, թե իբր դրանից առաջ, հանգուցյալ սուլթան Օսմանը՝ իր ախոռապետներին շրջագայելու ուղարկելով, ենիչերիներին ոչնչացնելու նպատակ էր ունեցել։ Այս կապակցությամբ Այնթաբում, Աբդուլբակի անունով կադին, թշնամանալով տեղական ենիչերիների հետ՝ քաղաքացիներին նրանց դեմ էր հանել և սպանել էր տվել մի քանի մարդկանց։ Օրթա Չավուշը[28] ուղարկվեց հետաքննության։ Էրզրումի բեյլերբեյի Մուհամմեդ Աբազա փաշան և նրա մարդիկ, մի հարցի կապակցությամբ, թշնամացել էին հերթապահ ենիչերիների հետ և կռվի բռնվել, որի պատճառով սպանվել էին երեք ենիչերի և փաշայի մարդկանցից՝ երեք հոգի։ Փաշային անարգել էին, որի համար փաշան ցանկացել էր ենիչերիներին պատժել։ Ենիչերիները քաշվեցին ներքին բերդը։ Էրզրումից հրաժարեցված Հյուսեին փաշան ու վիլայեթի երևելիները միջնորդեցին և հաշտեցրին նրանց։ Երբ ենիչերիները ներքին բերդից դուրս եկան, Աբազա փաշան մտավ բերդ և իր դիրքը ուժեղացնելով, սկսեց սեկբաններ գրել։ Փաշան դուրս հանեց Էրզրումի բերդում գտնված ենիչերիներին, որոնք գնացին Ստամբուլ։ Այդ ժամանակ Էրզրումի էյալեթը շնորհվեց Դիարբեքիրից հեռացված Նեսուհ փաշայի քեթխուդա Մուստաֆա փաշային։ Սակայն Աբազա փաշան դուրս չեկավ և մյութեսելիմին հետ ուղարկեց։ Անատոլիայում և այլ քաղաքներում սկսվեց խռովություն և խառնակություն։ Երկրում ծայր առան ավազակային շարժումներ։ Ասում էին, թե փադիշահը խելագարվել է և պետությունը գտնվում է Վալիդե Սուլթանի[29] ձեռքին։ Այսպես, կուլերը և ստոր տարրերը երես առնելով, զավթել էին պետական բոլոր ծառայությունների ու վակֆների գործերը։ Պատվի տեր և վաստակավոր մարդիկ հալածվում էին, քանի որ օրենքը կորցրել էր իր ուժը։ Ժողովրդի դրությունը շատ ծանր էր։ Ամեն անգամ դրությունը այսպես է եղել, երբ փադիշահը հրաժարվել է պետությունը կառավարելուց։*

*(էջ 28)*

## 1032 (1622) թվականի դեպքերից

### ԱԲԱԶԱՅԻ ՄԱՍԻՆ ԳԱՆԳԱՏՆԵՐ ԵՆ ՍՏԱՑՎՈՒՄ

*Մուհարրեմ ամսի 13-ին Էրզրումի հերթապահ ենիչերիները Ստամբուլ գալով, Աբազայի մասին գանգատ ներկայացրին և հայտնեցին, որ փաշան բանտարկել է աչքի ընկնող ենիչերիներին և սեկբաններ է գրել։ Նրանք հավաքական գիմում ներկայացրին նաև վիլայեթի երևելիների անունից։ Ամսի 16-ին բոլոր հերթապահ ենիչերիները հայտնեցին, որ Աբազա փաշան Կարսի և Ախալցխայի փաշաներին նույնպես հրամանագրեր է գրել և ուղարկել, որ ենիչերիներին դուրս հանեն։ Խալիլ փաշան խրատական նամակներ գրեց Աբազա փաշային և իր մարդկանցից երկուսին ուղարկեց և հատկապես խնդրեց, որ բերդից դուրս գա։*

### ԵՆԻՉԵՐԻԱԿԱՆ ՇԱՐԺՈՒՄԸ ԱԲԱԶԱՅԻ ՀԱՄԱՐ

*Սեֆեր ամսի 19-ին ենիչերիների աղան գնալով մեծ վեզիրի պալատը՝ ենիչերիներին ոտքի հանեց։ Նրանք հայտնեցին, որ Ասիթանեյում [Ստամբուլ] Աբազայի ապստամբության պատճառը Գյուրջի Մուհամմեդ փաշան և Խալիլ փաշան են։ Աբազա փաշան մեծ վեզիրի եղբայր Հյուսեին փաշայի փեսան և Խալիլ փաշայի որդեգիրն էր։*

*Սպաները միջամտեցին գործին։ Նրանք դոնից դուրս գալով հանդիպեցին Խալիլ փաշային և նրան շրջապատելով, ասացին. «Աբազան իր շարժման մեջ քեզ վրա է հենվում»։ Քեթխուդա Ջեթեջի Ալի աղան եկավ և ցրեց սրանց։ Հաջորդ հավաքույթին նրանք նորից ոտքի ելան և ասացին. «Աբազա փաշան անպայման պետք է սպանվի»։ Սպաները միջամտեցին և արգելեցին։ Հրաման ստացվեց, որ Էրզրումի բեյլերբեյին պաշտոնազուրկ է արված։ Խալիլ փաշան այդ գործում մասնակից չէ, հետևաբար, պետք չէ նրան նեղություն տալ...*

*(էջ 32)*

### ԱԲԱԶԱ ՓԱՇԱՅԻ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆԸ

*Սրանից առաջ, Գյուրջի Մուհամմեդ փաշան հավատ չընծայելով Աբազայի մասին ժողովրդի մեջ տարածված լուրերին՝ իր եղ-*

բայր Հյուսեին փաշայի խոսքին էր հավատում: Դրությունը ստուգելու համար նա ենիչերիական օջախից մի չորբաջի էր ուղարկել։ Ջեմազիել-էվվել ամսի 11-ին պարզվեց, որ Աբազա փաշան թույլ չի տվել, որ Մուստաֆա փաշայի մյութեսելիմը ընդունի էյալեթը։ Բոլոր սանջակները նա իր մարդկանց է տվել, ռայաների յուրաքանչյուր տան վրա հազարական ակչե նշանակել և մոտ 15 հազար զինվոր հավաքել...

## ԿԱՐԱՀԻՍԱՐԻ ԳՐԱՎՈՒՄԸ

Քանի որ էյալեթի սահմանի վրա գտնվող Կարահիսարի Շարքիում Մուրթազա փաշան դիմադրություն էր ցույց տվել, Աբազա փաշան շարժվեց նրա դեմ։ Ջրի նեղության պատճառով Մուրթազա փաշան 10 օր պաշարված մնաց և հետո ստիպված եղավ հանձնրվել ու բերդից դուրս գալով, միանալ այդ ամբոխին։ Այնուհետև, Աբազա փաշան շարժվեց Սվազի ու Անկարայի վրա և շրջակայքի բեյերին նամակներ ուղարկեց։ Շատերը հպատակվեցին։ Մարաշի բեյլերբեյի Կլավուզ Յուսուֆ փաշան եկավ և միացավ նրանց։ Սվազի Թայար Մուստաֆա փաշան նույնպես բարեկամություն ցույց տվեց...

Զորումից Քանղրի գնալիս նրանց դիմավորեց Նողայ փաշան և պատիվներ տվեց։ Այսպես իր գնացած բոլոր վայրերում, քաղաքներում և գյուղերում նա սպանում էր ենիչերիներին և հափշտակում նրանց ունեցվածքը։ Գավառներում գտնվող բոլոր ենիչերիները վախենալով, հավաքվում էին իրենց օդաները։

## ՍԵՐԴԱՐ ՋԸՂԱԼԵ-ԶԱԴԵՆ

Աբազա փաշան մոտ 40 հազար զինվորներով պաշարեց Անկարան։ Երբ այդ մասին տեղեկություններ ստացվեց, կարգադրրվեց Անատոլիայի բեյլերբեյի Իլյաս փաշային և Կարամանի բեյլերբեյիին, որ իրենց էյալեթների զինվորներով օգնության հասնեն Անկարային։

Մայրաքաղաքում, վեզիրներից մեկը՝ Մահմուդ փաշան նշանակվեց սերդար։ Զորս փաշաներ, հավաքելով 4000 ենիչերիներ և այլ զինվորներ, ռեջեբ ամսին անցան Սկյուդար։ Երբ հիշյալ զինվորները Բեկբազար հասան, այնտեղ կանգ առան հանգստանալու, սակայն տեղեկանալով, որ Աբազա փաշան հաղթանակ տանելու դեպքում կարող է գիշերային հարձակում գործել, պաշտպանվելու

*համար վերադարձան Բրուսա: Աբազան պաշարեց քաղաքը, ջրերը կտրեց, գրավեց վարոշը, հարձակվեց ներքին բերդի վրա: Սակայն, իր թափած ջանքերին հակառակ՝ հաղթել չկարողացավ և, երբ ձմռան ցրտերը վրա հասան, ձմեռելու համար գնաց Նիկտեի սանջակը:*

*(էջ 34—36)*

## 1033 (1623—1624) թվականի դեպքերից

### ԱԲԱԶԱՅԻ ԿՌԻՎՆԵՐԻ ԵՎ ՇԵՅԽԻ ԽԱԲԵԲԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

*Աբազա փաշան ինքնավստահ և քաջարի անձնավորություն էր, սակայն խելամիտ մարդ չլինելով՝ ընդունակ չէր ըմբռնելու գործերի ներքին կողմը: Նա իր կամքի սանձը հանձնել էր կեսարացի տգետ մի շեյխի: Նա խռովություններ հարուցելով և ավազակներին իր շուրջը հավաքելով, խրվել էր անելանելի մի կռվի մեջ: Նա չէր կարողանում իր շուրջը հավաքված հասարակությունը ցրել, իսկ Շեյխը ամեն անգամ կրկնում էր. «Այս հասարակությունը մի ցրի: Դրա շնորհիվ դու վեզիրություն կստանաս»: Մի շարք ստահոդ նամակներով և ֆեթվաներով Արազա փաշան մոտ 30 հազար ավազակներ հավաքեց իր շուրջը: Դրանից առաջ հարձակվել էր Անկարայի վրա, սակայն վեց ամիս պաշարելուց հետո, չէր կարողացել հաղթություն ձեռք բերել և հետ վերադառնալով, ձմեռել էր Նիկտեի և Կեսարիայի կողմերում: Շրջակայքը վաշտեր ուղարկելով ապրանք ու հարստություն էր հավաքել տալիս Օսմանյան կայսրությունից:*

*Մյուս կողմից, ենիչերիների քեթխուդան՝ Մըխլաջի Սարը Մուհամմեդ աղան, ամեն օր օդա-բաշիներին[30] ազդարարում էր, որ փադիշահական արշավանքը ուղղված է միայն ենիչերիների ոխերիմ թշնամի՝ Աբազայի դեմ. Նա բազմաթիվ չորբաջիների և անհատ ենիչերիների մահվան է դատապարտել ու սպանել: Դուք էլ ջանքեր գործադրեք, վարվեք այդ կերպ: Ձեզ տեսնեմ. քանի՞ զինվորներով եք արշավանքի գնալու:*

*Աբազան լսելով այս մասին, ուղարկում է իր պատասխան նամակը:*

### ԱԲԱԶԱ ՓԱՇԱՅԻ ՆԱՄԱԿԻ ՊԱՏՃԵՆԸ

*Մեծարգո եղբա՛յր, ենիչերիների քեթխուդա Մուհամմեդ աղա, բարևից հետո դու ասում ես. «Այս գարնանը մենք Աբազայի դեմ*

*արշավանք ունենք. սադրազամի հետ միասին պետք է գնանք. այս արշավանքը ենիչերիական արշավանք է, սիփահիներից և բեյերից մեզ օգնություն չկա։ Աբազայի հոգսը մենք ենք։ Տեսնե՛մ, ինչքա՞ն ենիչերիներ կհավաքեք։ Այս ասելով դու օդա-բաշիներին խիստ պատվերներ ես տալիս։ Հաջողություն քեզ։ Փադիշահի հայը քեզ հալալ լինի...»։*

*Նամակի մնացած մասում Աբազա փաշան երկար խոսում է սուլթան Օսմանի սպանության հետ կապված դեպքերի մասին։*

*Հաջորդ հատվածում Քյաթիբ Չելեբին մանրամասնորեն նկարագրում է Աբազա փաշայի պատերազմական գործողություններն ու նրա վերջնական պարտությունը։ Այդ հատվածի թարգմանությունը չի տրվում, որովհետև սույն գրքի առաջին հատորում, գրեթե նույն բովանդակության նյութեր թարգմանվել են պատմագիրներ Փեչեվիից և Նայիմայից*։*

*(էջ 53—56)*

### ԿԸԶԸԼԲԱՇՆԵՐԻ ՊԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ ՎՐԱՍՏԱՆՈՒՄ

*Այս և հաջորդ հատվածներում (էջ 67—69) Քյաթիբ Չելեբին խոսում է 1034 (1624—1625) թվականին տեղի ունեցած դեպքերի մասին, երբ վրաց հայտնի պետական գործիչ Մաղրավ բեյը[31] սպանում է կըզըլբաշների բանակի հրամանատար Կարչղայ խանին և վրացական զինված ուժերի հետ կըզըլբաշների բանակին պարտության մատնելով, միանում է օսմանյան փադիշահական բանակին։*

*Քանի որ Քյաթիբ Չելեբին գրեթե նույնությամբ է տալիս այդ դեպքերը, որոնք նկարագրված են թուրք պատմագիր Փեչևիի և տարեգիր Նայիմայի կողմից, կրկնությունից խուսափելու համար, ավելորդ ենք համարում թարգմանել Մաղրավ բեյին վերաբերող նյութերը**։*

* * *

## 1045 (1635—1636) թվականի դեպքերից

*Թուրք-իրանական պատերազմական գործողությունները շարունակվել են։ Սեֆևյանների կողմից Վանի պաշարումը դադարում է, որից հետո մեծ վեզիր և բարձր սերդար Թաբանը-Յասսը Մուհամմեդ փաշան Ստամբուլից շարժվում է Արևելյան արշավանքի։ Անձամբ Սուլթան Մուրադ IV-ը մասնակցում է Երևանի արշավանքին։*

### ՓԱԴԻՇԱՀԻ ԱՐՇԱՎԱՆՔԻ ԳՆԱԼԸ

*Մուհարրեմ ամսի սկզբին (1045) սադրազամը իջևանեց իսլամական սահմանում գտնվող Էրզրումի Բայբուրտ գավառի մոտ։*

---

* *Այս հատորի հաջորդ գլխում ևս պատմագիր Սոլաք Զադեն բավականաչափ խոսում է Աբազա փաշայի մասին։*

** *Տե՛ս մեր «Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին» աշխատության 1 հատորը, էջ 56—59, 88—91, 94—95, 96—98։*

Աղաներին նա հրամայեց, որ գարու մեկ քիլեն՝ քսան, իսկ ալյուրի քիլեն՝ երեսուն ակչե գնահատվի, և յուրաքանչյուր զինվորի հինգական քիլե գարի ու երկուական քիլե ալյուր բաժանվի։ Հաջորդ օրը սադրազամը գնաց Նորին վսեմություն փադիշահին դիմավորելու։ Սահմանամերձ դաշտում հրաման տրվեց երկրորդ վեզիր Սիլահդար փաշայի վրանում իջևանել։ Խնճույքից հետո արժանացավ փադիշահին տեսնելու և նրա աջը համբուրելու շնորհին։ Հաջորդ օրը եկան Բայբուրտ։ Ամսի 8-ին մտան Էրզրում։ Մուհարրեմ ամսի 16-ին վսեմաշուք փադիշահը եկավ Ըլիջա[32]։ Մեծ վեզիրն էլ իր տրամադրության տակ եղած զինվորների հետ Էրզրումից եկավ այստեղ փադիշահի վրանի [օթաղ] առջև գահ սարքվեց ու Դիվան հրավիրվեց։ Օջաղի վաշտերի աղաներն ու բոլոր ենիչերիները, սիփահիներն ու այստեղ եկած միրիմիրանները, ըստ սովորության, իրենց զորամասերով անցան վսեմաշուք փադիշահի առջևից։

Մուհարրեմ ամսի 11-ին վսեմաշուք փադիշահը հրամայեց, որ, ըստ սովորության, մեծ շքերթ կազմակերպվի...

Քյաթիբ Չելեբին մանրամասնորեն նկարագրելով այդ շքերթը, ասում է, որ նման շքերթ ու հանդիսավորություն ոչ մի ժամանակ գոյություն չի ունեցել և Ալ-Օսմանի[33] զինվորների թիվն էլ ոչ մի տեղ այդքան մեծ չի եղել։

## ԻՍԼԱՄԱԿԱՆ ՓԱԴԻՇԱՀԻ ԵՐԵՎԱՆ ԳՆԱԼԸ

Մուհարրեմ ամսի 24-ին, բեռների մի մասը Էրզրումում թողնելով, նախօրոք ուղարկվեցին 25 հատ «բալյեմեզ» թնդանոթներ[34] և թուղ։ Հաջորդ օրը Էրզրումից դուրս գալով, շարժվեցին դեպի Երևան։ Սեֆեր ամսի սկզբին իջևանեցին Կարսի մոտ։ Փադիշահը դիտեց Կարսը։ Երկու օր այստեղ մնացին... Հաջորդ օրը հասան Մեսհենե-Գեչիդի մենզիլը, ուր և խփեցին փադիշահի վրանը, իսկ շրջակայքի չորս կողմը նայող մի բլրի վրա սարքեցին զորամասերի վրանները. հաջորդ օրը ստացվեցին Գուրիլի երկրի [Գուրիա] հարկերն ու նվերները։ Ուչ Քիլիսեում [Էջմիածին] չիթեր[35] հյուսելու համար մեծ քանակությամբ ճյուղեր կտրեցին։ Սեֆեր ամսի 10-ին հասան Երևանի ցանքերին և իջևանեցին Երևանի մոտ։ Հրաման տրվեց անասուններին արածացնել ցանքսերում։ Հաջորդ օրը հասան Գյոք-Քյումբեթ։ Երբ փադիշահի բանակը շքերթով անցնում էր բերդի մոտից, պարսպից արձակված թնդանոթի արկերը անցան հատուկ պահեստային մասի զինվորների գլխի վրայով, սակայն Աստծո ողորմությամբ ոչ ոքի վնաս չպատճառեցին։ Անցնելով Զանգի գետը, կանգ առան պարսպից քիչ հեռու։ Վսեմաշուք

փադիշահը հրամայեց ավելի մոտենալ։ Հաջորդ օրը փադիշահի վրանը սարքվեց Հյունքար-Թեվեսի անունով հայտնի բլրի վրա, իսկ վեզիրներն ու պետության այլ ղեկավարները տեղավորվեցին հարմար վայրերում։ Զինվորներին բաժանեցին ռազմամթերք, բահ, բրիչ, վառոդ և պատրույգ (ֆիթիլ)։ Ցերման տրվեց, որ ենիչերինե-րը այդ գիշեր մտնեն խրամատները։ Սեֆեր ամսի 12-ի գիշերը, երբ բերդի շրջակայքը լուսավորված էր լուսնի լույսով և ջահե-րով, ժամի 3-ին զինվորները մեծ զանգվածով առաջ շարժվելով դեպի պարիսպները, մտան խրամատները։ Երբ ենիչերիներից մի քանի հարյուր զինվորներ վիրավորվեցին, վսեմաշուք փադիշահը նրանցից ամեն մեկին 30—40 ղուրուշ դեղի փող շնորհեց, իսկ ո-մանց վերքերը իր ներկայությամբ վիրաբույժներին դարմանել տվեց։ Մինչև առավոտ խրամատների գործերը կարգավորվեցին և յուրաքանչյուր զինվոր ամրացավ իր տեղում։

## ԵՐԵՎԱՆԻ ՊԱՇԱՐՈՒՄԸ

Գյուրջի-Թեփեից Հյուսեին փաշայի և Հալեպի բեյլերբեյի Ահ-մեդ փաշայի զորամասերից թնդանոթները կրակն ուղղեցին դեպի բերդը և քանդեցին էմիր Գյոնե-օղլուի պալատն ու բարձր շենքերը։ Երևանի բերդը մոտավորապես էսքի Սարայի[36] մեծությունն ուներ, այնպես որ թնդանոթի արկերը բերդի վրայից թռչում-անցնում էին։ Բերդի դռան առջև դրեցին նոր ստացված վեց թնդանոթ։ Բեր-դից դեպի վրաններն արձակված արկերից զոհվեց վեզիրի դռնա-պաններից մեկը՝ քեթխուդա Ալի աղան։ Ամսի 13-ին, հին Երևա-նի մոտ խրամատ մտավ Անատոլիայի ենիչերիական զորամասը։ Նրանք ունեին վեց թնդանոթ։ Ամսի 14-ին, բերդի հյուսիսային կող-մում անհրաժեշտ եղավ պաշտպանել գետեզերքը, որի համար նշանակվեցին էրզրումի բեյլերբեյի Ահմեդ փաշան և Զըլդըրի բեյ-լերբեյի Սեֆեր փաշան։ Այդ վայրում զետեղվեցին ևս երեք թնդանոթ-ներ... Ամսի 16-րդ օրը, երբ Շեմս փաշա-Զադեն իր երեք աղանե-րի հետ միասին (որսի ժամանակ) քնել էին Կափուդան փաշայի[37] զորամասի պարտեզում, աջեմները բերդից իջնելով երեքին էլ գլ-խատեցին և նրանց գլուխները բերդ տարան։ 19-ին սերդարը գետն անցավ և հասավ Գյուրջի-Թեփեի այն կողմում գտնվող անցքը. այնտեղի կամուրջը գրավեց և այդ կողմից իջնելով դեպի գետ՝ ձեռնարկեց ժայռի մեջ պատնեշ կառուցելու գործին։ Հաջորդ օրը, Հալեպի բեյլերբեյին ու բոլոր պաշտոնազուրկ բեյերը ուղարկվեցին այնտեղ և վրաններ խփեցին։ Հետո հասնելով մինչև խանդակի [փոս] ծայրը, ամեն կողմից Երևանի վրա անձրևի նման հրացանի զըն-

դակներ և թնդանոթի արկեր տեղացին։ Մի շաբաթվա ընթացքում՝ դիշեր-ցերեկ, թնդանոթների գնդակոծությունից պարսպի աշտարակներն ու պատնեշները խանդակի վերածվեցին, մասնավորապես, ենիչերիների աղայի և Ռումելիի զորամասերի հարձակման ենթակա պարիսպը հողին հավասարվեց։ Մի օր իրանցիները, խրամատների վրա հարձակվելու նպատակով, բերդից դուրս եկան, սակայն իսլամական ղազիներին կազմ ու պատրաստ գտնելով, ստիպված եղան հուսախաբ ետ փախչել։ Թշնամին փորձում էր կողովներով ու կարպետներով փակել թնդանոթների հարվածից քանդված վայրերը և անցքերը, սակայն երբ անհամար զինվորները շարժվեցին դեպի այդ կողմը, իրանցիները տեսան, որ իրենք այլևս չեն կարող հաջողության հասնել և նախօրոք իմանալով, որ հարձակման հրաման է տրված, հաջորդ օրը, սեֆեր ամսի 21-ին, թուրքմեն Հազեր բեյ անունով մի հարյուրապետ, Շամլի օջախից՝ մի պատվավոր անձ և մի անհավատ ծառայող, արդեն հուսահատված, ներողություն խնդրող հատուկ գրությամբ դուրս եկան բերդից և սերդարին դիմելով, հաշտություն խնդրեցին...։

(էջ 170—173)

### ԵՐԵՎԱՆԻ ԲԵՐԴԻ ԳՐԱՎՈՒՄԸ

Սեֆեր ամսի 22-ը երկուշաբթի էր։ Մուրադ քեթխուդան բերդից դուրս գալով հայտնեց, որ էմիր Գյոնե-օղլու Թահմասբ Կուլու խանը որոշել է դուրս գալ բերդից և հանձնել Երևանը։ Վսեմաշուք Սուլթանը գրեց պայմանագիրը և մի մարդու միջոցով ուղարկեց, իսկ քեթխուդան մնաց։ Հաջորդ օրը սիփահիների զորամասերը հասան բերդ և շարքով կանգնեցին դարբասի առջև։ Խանը բերդից դուրս գալով, անցավ զորաշարքերի առջևից և համբուրելով փադիշահի ասպանդակը՝ բերդը հանձնեց։ Նա արժանացավ Նորին վսեմության փադիշահի շնորհին։ Մեկ օր հետո ծառայության անցնելու նրա խնդրանքը ընդունվեց և նրան շնորհվեց խալաթ, դաշույն, ակնապատ գոտի և բազմաթիվ այլ նվերներ։ Այդպիսով ենիչերիները մտան բերդ։ Փադիշահի հրամանով, բերդում գտնվող 5—6 հազար հրացանաձիգ թշնամիները, Երևանի բերդապահ Միրֆեթահ-օղլուի հետ միասին, երեկոյան վերցնելով իրենց ունեցվածքը՝ հեծյալ և հետիոտն, գնացին դեպի Էրդեբիլ... Երևանի բերդը գրավելիս, գոյություն ունեցող վիրայի[38] կարգով, պետք է հանձնվեին բոլոր զենքերը։ Սակայն այս անգամ այդ կարգը չպահպանվեց։ Իրանցիներն ուղևորվեցին զինված, և ճանապարհին հան-

դիպած ձիերը քշեցին ու տարան։ Երբ այդ մասին լուր ստացվեց, Էրզրումի Քյուչյուք Ահմեդ փաշան և Կարամանի բեյլերբեյի Մուհամմեդ փաշան իրենց էյալեթների զինվորներին ուղարկեցին նրանց ետևից։ Երբ վերջինները հասան նրանց, հրացանաձիգները, ապաստանելով սեպաձև ժայռերում և քարքարոտ տեղերում, սկսեցին կռվել։ Ահմեդ փաշան վիրավորվեց, Ենիչեհիրի Ռամազան բեյը սպանվեց և 15 զինվորներ վիրավորվեցին, իսկ մնացածները ստիպված եղան ետ վերադառնալ։ Ուրբաթ օրը, ավետաբեր լուրով Ստամբուլ ուղարկվեցին Բեշիր Աղան և Կափուջիների քեթխուդան։ Երևանի գրավման հանդեսի համար փադիշահական օթաղի առջև ճյուղերով ծածկված քառանկյունի քյոշկ կառուցեցին և զարդարեցին... Բոլոր փաշաները և բեյերը Դիվանի հավաքվեցին։ Փադիշահը բազմեց իր գահի վրա և բոլորը հրավիրվեցին ձեռքը համբուրելու... Փադիշահական հրովարտակով Մուրթազա փաշան նշանակվեց Երևանի պահպանության պաշտոնում։

## ՊԱՐՍՊԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄԸ ԵՎ ՊԱՀԱՊԱՆՆԵՐԻ ՆՇԱՆԱԿՈՒՄԸ

Սեֆեր ամսի 27-ին սկսվեցին բերդի քանդված մասերի վերանորոգման աշխատանքները։ Ճարտարապետի հետ միասին չափեցին, հաշվեցին և սաթրանջի [շախմատի] ձևով 19280 արշին տեղից 8800 արշինը տրվեց Ռումելիի և Հալեպի էյալեթներին, սիփահիներին և սիլահդարներին, 8560 արշինը՝ Անատոլիայի զինվորներին և ենիչերիներին, 1920 արշինը՝ Էրզրումի, Կարամանի և Կարսի զինվորներին։ Վերանորոգման աշխատանքները վերջացնելուց հետո, բերդի պահպանության համար ենիչերիներից և այլ զինվորներից նշանակվեցին 1200 զինվորներ, որոնց ռոճիկների համար գանձարանից հատկացվեց չորս հարյուր քիսե[39] փող, անհրաժեշտ քանակությամբ ռազմամթերք և «բալյամեզ» թնդանոթներ։

Երևանից դուրս եկան 6-րդ օրը։ Երևանի նախկին տիրակալ էմիր Գյոնե-օղլուին՝ նոր անունով Յուսուֆ փաշային, շնորհվեց Հալեպի էյալեթը, իսկ նրա քեթխուդային՝ Թարաբլուսի էյալեթը։

(էջ 173—175)

## ԻՍԼԱՄԱԿԱՆ ՓԱԴԻՇԱՀԻ ՈՒՂԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ԴԵՊԻ ԹԱՎՐԻԶ

Չորրորդ օրը, Դեհլեի լեռնանցքից, ծովանման Արաս գետից անցնելիս փադիշահի կողքին գտնվող մի սոլաքի ջուրը տարավ։ Փադիշահը իր նվիրական ձեռքով բռնեց խեղդվողի ձեռքերից և

նրան մյուս ափը հասցրեց։ Այստեղ մնացին մի օր։ Ռենբելլի և այլ աշիրեթներից մյուս կողմը փոխադրեցին մոտ հազար օբա[40], հրամաններ արձակեցին դրանց Երզնկայի, Թերջանի և Բասենի անմարդաբնակ և ավերված վայրերում բնակեցնելու մասին, իսկ նրանց մելիքներին զեամեթներ շնորհեցին։ Մակույում լուր ստացվեց, որ սուլթան Ալաեդդին անունով մի շեհզադե է ծնվել. այդ կապակցությամբ հանդեսներ կատարվեցին։ Ամսի 11-ին կըզըլբաշները թողին Զուրսեն քանդված բերդը։ Մուբթեզա փաշային ուղղված Ռուստեմ խանի գրությամբ եկավ Հազեր անունով մի մարդ և խոսեց հաշտության մասին։ Ռեբիել-էվվելի 17-ին վսեմաշուք փադիշահի առողջությունը մի քիչ վատացավ։ Փադիշահի համար չորս ջորիներով տարվող երեք թևավոր մի պատգարակ սարքեցին և հաջորդ օրն այդ պատգարակով Խոյ հասան։ Այնտեղ երեք օր մնացին, բերդը քանդեցին, այգիների ծառերը կտրեցին և ավերեցին։ Երրորդ օրագնացում Մարանդ հասան և այնտեղ էլ ծառերը կտրեցին ու այգիները փչացրեցին։

Հաջորդ օրը իջևանեցին Սոֆիանեյում և Հաջի Հարամիեյում։ Ստացվեց Ռուստեմ խանի կողմից Քյուչյուք Ահմեդ փաշային ուղղված մի գրություն, որով հայտնվում էր, թե հաշտություն կնքելու համար պետք է ուղարկվի Օսման աղան։ Ամսի 28-ին Թավրիզ հասան և իջևանեցին կամրջի գլխին՝ Սեյիդաբադ անունը կրող դաշտում։ Քյուչյուք Ահմեդ փաշան և Վանի բեյլերբեյին պահնորդ նշանակվեցին։ Երեկոյան եկան 61 ենիչերիներ և տեղեկություններ բերին աջեմների խարդախության մասին. նրանք հայտնեցին նաև, որ Ռուստեմ խանի դեմ ուղարկված զինվորները սակավաթիվ են, իսկ շահն էլ 4—5 օրագնաց հեռու է գտնվում։

Հաջորդ օրը վսեմաշուք փադիշահը շքերթով շրջագայեց քաղաքում, դիտեց Սուլթանի ջամին և հրամայեց քանդել ու ավերել շահի պալատը։ Շուկան ու բազարը ամբողջովին կրակի մատնեցին, բարեշեն տները ու գեղեցիկ մակսուրեները[41] քարուքանդ արեցին։ Այնուհետև սկսեցին ծառերը կտրատել։ Չնայած դրան, անսահման ծովի նմանվող այգիների մեկ տասներորդն անգամ զինվորները երեք օրում չկարողացան ոչնչացնել։ Հաջորդ օրը, ռեբի-ուլ-ախըրի սկզբին, Ռուստեմ խանի մոտ ուղարկված Օսման աղան և Ռուստեմ Քամիրան անունով անձը եկան քսան կըզըլբաշներով և իրենց հետ բերեցին հաշտություն կնքելու գրությունը։ Սակայն նրանց առաջարկին հավատ չընծայվեց, ուստի ձեռնամուխ եղան բանակի կարիքները բավարարելու աշխատանքներին։

(էջ 175—176)

## ՓԱԴԻՇԱՀԻ ՎԵՐԱԴԱՐՁԸ ՍՏԱՄԲՈՒԼ

*Այս հատվածում Քյաթիբ Չելեբին նկարագրում է փադիշահի վերադարձը և ճանապարհին տեղի ունեցած դեպքերը։ Փադիշահը ռեբի-ուլ ախըրի 2-ին մեկնում է Վան։ Աջեմի շահը՝ անկարող լինելով դիմադրություն ցույց տալ, փախուստի է դիմում... փադիշահը և նրա բանակը ճանապարհին մեծ դժվարությունների են հանդիպում։ Ամսի 18-ին նրանք հասնում են Վան։ Փադիշահը ծպտված դիտում է Վանի բերդը։ Ամսի 21-ին մեկնում են Դիարբեքիր։ Բիթլիսում Աբդալ խանը[42] փադիշահի պատվին մեծ խնջույք է կազմակերպում։ Ջեմազիել-էվելի 9-ին նրանք հասնում են Դիարբեքիր քաղաքը։ Շարունակելով ճանապարհը, ռեջեբ ամսի 9-ին հասնում են Ստամբուլ...։*

*(էջ 177—178)*

## ԷՄԻՐ ԳՅՈՆԵ-ԶԱԴԵԻ ՎԻՃԱԿԸ

*Երևանի նախկին տիրակալ էմիր Գյունե-Զադեն, փադիշահին ենթարկվելով, ընտանիքով և ունեցվածքով դուրս է գալիս Երևանից։ Հալեպի էյալեթը շնորհվում է նրան, իսկ Թարաբլուսի Շամի էյալեթը՝ նրա քեթխուդային։ Էմիր Գյունեն անհավատ ռաֆըզի[43] լինելով, միայն անհրաժեշտության բերմամբ էր հպատակություն ընդունել։ Երևանը հանձնելու պատճառ դարձած իր քեթխուդա Մուրադից վրեժխնդիր լինելու համար նա մի պատրվակով սպանել է տալիս նրան։ Երբ փադիշահը իմանում է այդ մասին, ասում է. «Անհարմար է նման անհավատին թողնել որպես Հալեպի էյալեթի իշխող», և նրա նախորդ Ահմեդ փաշային վերականգնում է իր պաշտոնում։*

## ԱՋԵՄԻ ՇԱՀԸ ԳՐԱՎՈՒՄ Է ԵՐԵՎԱՆԻ ԲԵՐԴԸ

*Ռեջեբ ամսի սկզբին Վանի բեյլերբեյին մի գրությամբ հայտնում էր, որ Շահը Թավրիզ գալով շրջակայքից հավաքել է իր զինվորներին և, Սպահանից չորս թնդանոթ բերել տալով, որոշել է շարժվել Երևանի վրա։ Այս մասին մեծ վեզիրը հայտնեց կառավարության կենտրոնին։ Ռեջեբ ամսի 14-ին մոլորյալ շահը, Ռուստեմ խանի հետ, պաշարեց Երևանի բերդը։ Շաբան ամսի 4-ին մեծ վեզիրը հրաման ուղարկեց Անատոլիայի, Կարամանի, Սվազի, Մարաշի, Հալեպի, Շամի, Թարաբլուսի, Էրզրումի, Տրապիզոնի, Կարսի և Չըլդըրի էյալեթներին, որ շտապ կարգով ներկայանան Էրզրում...։ Ամսի 22-ին էլ Դիարբեքիրից Էրզրում ուղևորվեց մեծ վեզիրը։ Էրզրումից ստացված գրությունից պարզվում էր, որ Կաղզմանի բերդը պաշարված է։ Ամսի 27-ին կանչվածները հասան Էրզրում...*

*Երկրի տարբեր մասերից նույնպես գալիս են զինվորական ուժեր. պատրաստ վիճակում էին նաև սիփահիների և սիլահդարների աղաների ու ենիչերիների քեթխուդան։ Հասան Կալայում էրզրումի սաստիկ սառնամանիքից սառեցին 9 զինվոր։ Շատերի էլ ձեռքերն ու ոտքերը սառեցին։ Իրանցիներն էլ իրենց ուժերն էին հավաքում և դասավորում։ Ստամբուլում խիստ միջոցներ են ձեռք առնվում զինվորական նոր ուժեր հավաքագրելու համար։ Սակայն այդպիսի զորահավաքին խանգարում են սաստիկ սառնամանիքները։ Ի վերջո, շեվվալ ամսի 22-ին, մեծ վեզիրի մոտ տեղի ունեցած խորհրդակցությունից հետո, նրանք շարժվում են դեպի Կարս։ Ստացված գրությունից պարզվում է, որ Երևանի բերդի դրությունը չափազանց դժվարացել է։ Անհրաժեշտ է 10 օրվա ընթացքում օգնության հասնել...։ Ամսի 24-ին բերդը հանձնվեց։ Այս սարսափելի լուրը հասավ սերդարին։ Սակայն, քանի որ նոր տեղացած առատ ձյունը փակել էր ճանապարհները, օգնության հասնելու հնարավորությունը վերացել էր։ Երևանի գրավման լուրը հաղորդվեց Ստամբուլ։*

*Պատմագրի ասելով, ապարդյուն են անցնում փադիշահի գործադրած բոլոր ջանքերը։*

*(էջ 179—181)*

### ԲԱՆԱՍՏԵՂԾ ՆԵՖԻԻ ՍՊԱՆՈՒԹՅՈՒՆԸ

*Էրզրումի-Նեֆի էֆենդին[44] Ռումի[45] բանաստեղծների ամենագլխավոր և ականավոր ներկայացուցիչն էր։ Նա ծառայել էր մի քանի պետական պաշտոններում։ Նա Բայրամ փաշայի մասին գրել էր երգիծական ոտանավոր [հիջվ]։*

*Սուլթան Մուրադ խանի թույլատվությամբ, շաբան ամսի 8-ին, Նեֆիին խեղդեցին իր պալատում։ Նեֆին երգիծական գրվածքներում հանդես է գալիս որպես հազվագյուտ տաղանդի տեր բանաստեղծ։ Երգիծաբանության մեջ նա գերազանցել էր բոլոր բանաստեղծներին։ Հայտնի են նրա պոեմները [կասիդե]։*

*(էջ 183)*

## 1048 (1638) թվականի դեպքերից

*Հաշտություն կնքելու նպատակով խանի դեսպան Մակսուդ խանը գալիս է Ստամբուլ։ Այդ ժամանակ Սուլթան Մուրադ IV-ը պատրաստվում է Բաղդադի արշավանքին։ Դեսպանին ուղարկում են Մուսուլ, որպեսզի այնտեղ սպասի պատերազմի հետևանքին։ Մուսուլում սուլթանը ընդունում է Մակսուդ խանին և նրան է հանձնում շահին ուղղված իր նամակը։ Այդ նամակով սուլթանը շահից պահանջում է վերադարձնել օսմանյան պետությանը պատկանող վայրերը և ամեն տարի նվերներ ուղարկել։ Հակառակ դեպքում, սպառնում է գարնանը արշավել Իրանի վրա։*

*Սուլթան Մուրադ IV-ի այդ սպառնագիրը, իբրև այդ դարաշրջանի պետությունների հարաբերության բնորոշ փաստաթուղթ թարգմանաբար բերվում է այստեղ ամբողջությամբ. գրքի հավելվածում տրվում է նաև նրա թուրքերեն տեքստը։*

### ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՀՐՈՎԱՐՏԱԿԻ («ԽԱԹԹԸ-ՀՅՈՒՄԱՅՈՒՆ») ՊԱՏՃԵՆԸ

*«Իմ փադիշահական գրությունը ստանալիս, թող հայտնի լինի, որ քո մարդկանցից խալիֆա Մակսուդին ուղարկելով հաշտություն էիր ցանկացել։ Քո դեսպանին որոշ ժամանակ սպասեցնելու պատճառն այն էր, որ մենք որոշ գործեր ունեինք։ Այժմ այդ գործերը վերջացրել ենք։ Հիմա, եթե հաշտություն ես ցանկանում, նորից մեր բեյլերբեյիներին պիտի հանձնես իմ մեծ նախահայրերի ժամանակից մեր փառավոր պետության մեջ մտնող երկրները, որոնք գրավվելու են իմ հաղթական զինվորների կողմից։ Հին պայմանի և սովորության համաձայն ամենամյա նվերներն ու փեշքեշները պետք է կանոնավոր կերպով ուղարկվեն։ Իսկ եթե դրանք չկատարես, ես այս սահմաններում ձմեռելուց հետո, գարնան սկզբին որոշել եմ իմ ծովածավալ զինվորներով արշավել քո երկրի և պետության վրա։ Թե տղամարդ ես, հրապարակ արի՛։ Ղեկավարելու հավակնություն ունեցողներին անվայել է թաքնըվել վարագույրի ետևը։ Ձիուց վախեցողը, եթե ձի հեծնի և սուր կապի՝ սխալ գործած կլինի։ Կլինի այն, ինչ նախապես սահմանված է։ Մի՝ վախենա, դեմ արի։ Վեսսելամ»[46]։*

## 1049 (1639) թվականի դեպքերից

*Այս թվականին թուրք-իրանական պատերազմական գործողությունները վերջանում են հաշտության պայմանագրով։ Սուլթան Մուրադ IV-ի սպառնագիրը շահին ուղարկելուց հետո, թուրքական բանակի հաղթական շարժումները և փադիշահի վճռական նախազգուշացումը ունենում են իրենց ազդեցությունը։ Շահը ստիպված է լինում հաշտություն խնդրել։ Մուհարրեմ ամսի 8-ին, Սեֆևի գլխավոր հրամանատար Ռուստեմ խանը հատուկ գրությամբ դիմում է մեծ սերդարին հայտնելով, որ Դերբենդի բերդը դատարկել է և հաշտության համար ուղարկում է իր ներկայացուցիչ Սարուխանին։*

*Սարուխանը գալիս է մուհարրեմ ամսի 11-ին։ Երեք օրվա բանակցություններից հետո մուհարրեմ ամսի 14-ին (մայիսի 17-ին),* Կարսի-Շիրինի մոտ Զեռաբ[47] *անունով օսմանյան գլխավոր շտաբում կնքվում է հաշտության պայմանագիր, որը ստորագրում են՝ օսմանյան կառավարության կողմից՝ մեծ վեզիր և բարձր սերդար Քեմենքեշ Կարա փաշան, Իրանի կողմից՝ արտակարգ դեսպան Սարուխանը։*

*Ինչպես հայտնի է, այդ պայմանագրով Բաղդադը, Բասրան և Շեհրի Զորը («Իրաքի-Արաբը») անցնում են Թուրքիային, իսկ Երևանը մնում է Իրանի ձեռքում։*

*Կասրի Շերինի [Զեհաբի] հաշտության պայմանագրի հայերեն թարգմանությունը տրված է սույն աշխատության առաջին հատորի «Թարիխի Նայիմա» գլխում*։ Նկատի ունենալով պայմանագրի պատմական կարևորությունը, «Ֆեզլեքե»-ից, գրքի վերջում, իբրև հավելված տրվում է նրա թուրքերեն տեքստը։*

## 1052 (1642) թվականի դեպքերից

### ԹԻՄԱՐԻ ԳՈՒՄԱՐԻ ՀԱՎԵԼՈՒՄԸ[48]

*Գանձարանի [խազինե] ծախքերը ավելանալով, կազմեցին եկամտի գումարի կեսը։ Այդ մասին անհրաժեշտ էր համապատասխան միջոցառում։ Ամբողջ Օսմանյան կայսրության մեջ ֆերման տրվեց թիմարատերերի վրա ավելացնել հազարին հինգ հարյուր ակչե։*

*(էջ 358—359)*

---

* *Տե՛ս «Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին», հատ. Ա, էջ 110—111։*

# ՍԵԼԱՆԻԿԻ ՄՈՒՍՏԱՖԱ ԷՖԵՆԴԻ

*XVI դարի 2-րդ կեսի և XVII դարի առաջին քառորդի թուրք պատմագիր Սելանիկի Մուստաֆա էֆենդիի գրչին է պատկանում թուրքական պատմագրության մեջ հայտնի «Թարիխի Սելանիկի» տարեգրությունը։*

*Սելանիկին գրի է առել իր ժամանակի դեպքերը և նույնիսկ մասնակցել դրանցից շատերին։ Այդ մասին նա բազմիցս հիշատակում է իր «Պատմության» էջերում։*

*Սելանիկիի վկայությամբ նա վարել է մի շարք պատասխանատու պաշտոններ և ճանաչվել որպես պետական կարևոր անձնավորություն։ Այս հանգամանքն ավելի արժեքավոր է դարձնում նրա կողմից գրի առնված օսմանյան պետության այդ դարաշրջանի դեպքերը։*

*Սելանիկիի «Պատմությունը» արժանահավատ աղբյուր է ծառայել նաև ժամանակակից թուրք պատմագիրների համար։ Այդ մասին վկայում են Ի. Հ. Ուզունչարշըլըն՝ իր «Օսմանյան պատմության» մեջ և Ի. Հ. Դանիշմենդը իր քառահատոր «Օսմանյան պատմության բացատրական խրոնոլոգիա»-ում*։*

*Մինչև հիմա հրատարակվել է այդ արժեքավոր աշխատության միայն առաջին մասը։ Այն տպագրվել է մոտ հարյուր տարի սրանից առաջ։ Այդ մասին հրատարակիչ Լութֆին գրքի վերջում ծանոթության ձևով գրում է.*

*«Սրանից [այսինքն՝ հիջրեթի 1000 թվականից] հետո տեղի ունեցած դեպքերը Նայիմայի «Պատմության»** մեջ գրի առնված լինելու պատճառով՝ այդ դեպքերի տպագրությունը անհրաժեշտ չհամարվեց»։*

*Թեև հրատարակիչը չի նշում, բայց հավանական է, որ հիջրեթի 1000 (1591—1592) թվականից հետո օսմանյան պատմությանը վերաբերող դեպքերը պատմագիր-տարեգիր Նայիման վերցրել է Սելանիկիից և այդ պատճառով էլ հրատարակիչը անհրաժեշտ չի համարել տպագրել հիշյալ մասը։*

*Սելանիկիի պատմությունը հրատարակվել է Ստամբուլում 1281 (1864—1865) թվականին։*

---

* Ismail Hakkl Uzunçarsılı. Osmanli Tarihi, 4 cilt, Ankara, 1949. Ismail Hami Danismend, Izahli Osmanli Tarihi kronolojisi, 4 cilt, Istanbul, 1950.

** *Տե՛ս «Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին», հատոր Ա, էջ 63—115։*

## «ԹԱՐԻԽԻ ՍԵԼԱՆԻԿԻ»

### 975 (1567—1568) թվականի դեպքերից

#### ԱՐԵՎԵԼՅԱՆ ԵՐԿՐԻ ԳԵՐԻՇԽՈՂ ՇԱՀ ԹԱՀՄԱՍԲԻ ԴԵՍՊԱՆԻ ԺԱՄԱՆՈՒՄԸ

Այս հատվածում պատմագիր Սելանիկին խոսում է այն մասին, որ սուլթան Սելիմ II-ը ձմեռելու համար՝ իր արքունիքով, վեզիրներով ու բարձրաստիճան պաշտոնյաներով, փոխադրվում է Լայսրության երկրորդ մայրաքաղաքը՝ Էդիրնե։

Այդ ժամանակ լուր է ստացվում, որ գալիս է Շահ Թահմասբի դեսպանը՝ Նախիջևանի և Երևանի իշխող Շահ Կուլի խանը, որն իր հետ բերում է շահի մեծաքանակ և թանկարժեք նվերները։ Դեսպանին պատվով, հանդիսավորությամբ դիմավորելու և ընդունելու համար տրվում են անհրաժեշտ հրամաններ։

Իրանի դեսպանը, թուրք պատմագիրների ասելով, գալիս է մոտ հազար հոգուց բաղկացած շքախմբով։

Այդ դարաշրջանի արևելյան պետությունների արտակարգ շքեղության և փարթամության մասին գաղափար է տալիս Իրանի դեսպան Շահ Կուլի խանի շքախմբի նկարագրությունը։ Հիշյալ շքախմբում եղել են ալմասների մեջ փայլող 120 բեյեր, ոսկեթել հագուստներով 120 թուրքմեն հեծյալներ, Իրանի 400 հարուստ վաճառականներ, բազմապիսի նվերներով բեռնված 1700 կենդանիներ, որոնցից միայն սուլթան Սելիմին հատկացված է եղել 44 ուղտի բեռ։

Սուլթանին ուղարկված նվերներից հիշատակության արժանի են ոսկեթել գեղանկարներով երկու մետաքսյա վրանը, ոսկեզարդ և փառակազմ «Շահնամեն», փոքր տանձի մեծությամբ մի բետեհշանի հակինթը, 40 դիհրեմ ծանրությամբ երկու մարգարիտը, Իրանի և Խորասանի ընտիր գորգերը, թանկարժեք կերպասները և այլն։ Հատուկ նվերներ են հատկացվել նաև սադրազամի ու վեզիրների համար։

Պատմագրի ասելով, Շահ Թահմասբի կողմից այսպիսի մեծարժեք նվերներով ու շքեղությամբ դեսպանություն ուղարկելու նպատակը եղել է, սուլթան Սելիմի գահակալությունը շնորհավորելուց բացի, Թուրքիայի և Իրանի միջև մոտ կես դար տևող թշնամության վերացումը և 962 (1555) թվականին կնքված Ամասիայի հաշտության պայմանագրի[1] վերահաստատումը։

Իրանի դեսպանը մեծ շքեղությամբ և պատվով ընդունվում է նախ՝ Ստամբուլում և ապա Էդիրնեյում։

Պատմագիր Սելանիկին մանրամասն նկարագրում է Իրանի դեսպան Շահ Կուլի խանի ընդունելությունը սուլթանի, սադրազամի և վեզիրների կողմից։

(էջ 78—95)

### 982 (1574) թվականի դեպքերից

#### ԱՐՔՈՒՆԻ ՀՐՈՎԱՐՏԱԿՆԵՐԻ ԿՆՔԻՉ ՖԵՐԻԴՈՒՆ ԲԵՅԸ «ՄՅՈՒՆՇԵԱԹ-ՈՒՍ-ՍԱԼԱԹԻՆ»[2] ԱՆՈՒՆՈՎ ԵՐԿԸ ՆԵՐԿԱՅԱՑՆՈՒՄ Է ՆՈՐԻՆ ՎՍԵՄՈՒԹՅՈՒՆ ՓԱԴԻՇԱՀԻՆ

Ալ-Օսմանի վեհափառների (Աստված ողորմի նրանց հոգիներին) ժամանակ տեղի ունեցած պատերազմներում և կռիվներում

*ձեռք առնված միջոցները, կրոնի թշնամիներին ուղարկված կայսերական նամակները, կրոնի և պետության թշնամիներից ստացված նամակները, որոնք վերաբերում են Օսման խան Ղազիի սուլթանությունից սկսած մինչև այժմ, այսինքն՝ երեք հարյուր տարում տեղի ունեցած դեպքերին, և որոնք բոլորովին մոռացված են ու ցրված, նիշանջի[3] Ֆերիդուն բեյը, տարիներ շարունակ մեծ ջանասիրությամբ հավաքելով դասավորել էր և այդպիսով 1880 նամակ ու կոնաքի դաֆթար ձեռք բերելով մաքուր գրի էր առել քյաֆիր [անհավատ] մելիքներին, կըզըլբաշ շահերին, Արևելքի և Արաբական երկրների իշխողներին օսմանյան սուլթանների տված փադիշահական պայմանագրերը, երկրի դրության վերաբերյալ յուրաքանչյուր փադիշահի սուլթանության շրջանի գործերը։ Բացառիկ կարևորություն ունեցող այս հոյակապ աշխատությունը Ֆերիդուն բեյը կազմել էր 11 հատորով, այսինքն՝ յուրաքանչյուր սուլթանի ժամանակաշրջանի համար մեկ հատոր՝ մինչև սուլթան Մուրադ խանի սուլթանությունն ու խալիֆայությունը։ Այդ բոլորը՝ ավելի քան 250 մասից բաղկացած, մեկ հատորի մեջ ամփոփելուց հետո ստացվեց գեղագրված, մեծածավալ և փառակազմ մի գիրք։ Այդ գիրքը սադրազամ Մուհամմեդ փաշայի ձեռքով Նորին վսեմություն փադիշահին հանձնվեց 982 (1574) թվականի շեվվալ ամսի 9-ին։ Այս դիրքը կոչվեց «Մյունշեաթ-ուս-Սալաթին»։ Այս աշխատության անզուգական լինելու մասին բոլորովին տարակույս չկար, ուստի բոլորի կողմից հավանությամբ ընդունվեց։ Սակայն արքունիքի կողմից այնքան էլ ընդունելություն չգտավ և վարձատրության չարժանանալու համար առաջացրեց ժամանակի խելամիտների զարմանքը։*

*(էջ 137)*

## 984 (1576—1577) թվականի դեպքերից

### ԱՋԵՄԻ ՇԱՀ ԹԱՀՄԱՍԲ ԽԱՆԻ ԴԵՍՊԱՆ՝ ԵՐԵՎԱՆԻ ԵՎ ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ԽԱՆ ԹՈՔՄԱՔ ԽԱՆԻ ԺԱՄԱՆՈՒՄԸ

*Այս հատվածում Սելանիկին նորից անդրադառնում է Շահի դեսպան, Երևանի և Նախիջևանի խան՝ Թոքմաք խանի ժամանմանը և նրա հանդիսավոր ընդունելությանը։*

*Թոքմաք խանը 975 թվականին սուլթան Սելիմ II-ի գահակալությունը շնորհավորելու համար եկած Շահ Կուլի խանի որդին էր։ Նա եկավ մեծ շքախմբով, իր հետ բերելով 500 ուղտի բեռ նվերներ։ Նոր դեսպանը այս անգամ եկել էր շնորհավորելու և միաժամանակ նորոգելու Թուրքիայի և Իրանի միջև եղած հաշտությունը։ Սա նույնպես մեծ պատիվներով է ընդունվում Սուլթանի կողմից։*

*Դեսպանը Ստամբուլում մնում է միայն 16 օր. Շահ Թահմասբի մահվան*

լուրն առնելով, նա ստիպված է լինում վերադառնալ։ Շահ Թահմասպը իշխել էր 52 տարի։ Ըստ ավանդության, նա թունավորվել է իր գահաժառանգների միջև տեղի ունեցած պայքարի հետևանքով։ Շահ Թահմասպի մահից հետո շարունակվում են գահի շուրջը տեղի ունեցող խարդավանքներն ու կռիվները։

Ստամբուլի կառավարական շրջանները մեծ աշալրջությամբ հետևում են Իրանի ներքին անցուդարձին և հատուկ հրահանգներ են տալիս օսմանյան պետության արևելյան սահմանի[4] բեյլերբեյիներին, որպեսզի նրանք առանց ժամանակ կորցնելու տեղեկություններ հաղորդեն Ասիթանեի կառավարությանը՝ «կրոնի և պետության թշնամուց» [Իրանից] անհրաժեշտ զգուշավորություն պահպանելու համար։ (էջ 140—145)

## 986 (1578—1579) թվականի դեպքերից

### ԷՐԶՐՈՒՄԻ ԱՎԱԳԱՆԻՆ ԷՐԶՐՈՒՄԻ ԲԵՐԴԻՑ ԴՈՒՐՍ ԳՏՆՎՈՂ ՏՆԵՐԻ ՊԱՀՊԱՆՈՒԹՅԱՆ ԵՎ ԻՐԵՆՑ ՄԻՋՈՑՆԵՐՈՎ ԲԵՐԴ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՊԵՏՈՒԹՅՈՒՆԻՑ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ Է ԽՆԴՐՈՒՄ

*Էրզրումի վիլայեթի ավագանիից (այան)[5] և ռայաներից 5—10 մարդ գալով, հայտնում են. «Մենք աստվածային շնորհով մեծ հարստության ենք արժանացել, ոչնչի կարիք չունենք և խնայասեր ժողովուրդ ենք։ Սակայն խանգարվեց խաղաղությունը անիծյալ կրզըլբաշների հետ և մենք գիտենք, որ շահի գահին տիրացած զզվելի բռնակալը անգութ է։ Մենք գտնում ենք, որ Էրզրումի բերդից դուրս կառուցված մեր տները չպետք է պարսպից դուրս մնան։ Դրանց և բերդի միջև եղած աշտարակների ու պարիսպների վրա պետք է թնդանոթներ դնենք և խրամներ փորենք»։ Վիլայեթի բոլոր ռայաները միացան և միաբերան ասացին. «Խոստանում ենք բոլոր ծախսերը և կարիքները մեզ վրա վերցնել և ապահովել մեր ընտանիքներին ու երեխաներին։ Մեր մթերքներն ու գույքը պահպանելու համար հոգով ու մարմնով կաշխատենք կառուցել մի ամբողջական և ամրակուռ պարիսպ։ Աշխարհի ապավեն փադիշահի գանձարանից մի ակչեի և մի հատիկի ծախս անգամ չենք ուզում։ Մենք մեր դրամով, մեր բանվորներով (ըրգաթ) և ռանչբարներով կաշխատենք ու կվերջացնենք պարսպի կառուցումը։ Մենք մեր այս վիճակը հայտնում ենք պետության կենտրոնին»։ Նրանք այսպիսի բովանդակությամբ մի դիմում էլ ներկայացրին Նորին վսեմության փադիշահին։ Արտոնություն շնորհվելուց հետո, նրանք ձեռնամուխ եղան 10 հազար արշին երկարությամբ պարիսպ կառուցելու համար անհրաժեշտ քար և կիր պատրաստելու գործին։ Պարսպի աշտարակների կառուցման աշխատանքները սկսվեցին 986 թվականի մուհարրեմ ամսի սկզբին։*

(էջ 145—146)

## ՉԸԼԴԸՐԻ ԴԱՇՏՈՒՄ ՕՍՄԱՆՅԱՆ ՍԱՀՄԱՆԱՅԻՆ ԲԱՆԱԿԻ ՊԱՏԵՐԱԶՄԸ ԿԸԶԸԼԲԱՇՆԵՐԻ ԴԵՄ ԵՎ ԱՅԴ ԱՆԻԾՅԱԼՆԵՐԻ ՊԱՐՏՈՒԹՅՈՒՆԸ

*Հիշյալ տարվա նվիրական շաբան ամսին, երբ մեծ սերդար Լալա Մուստաֆա փաշան՝ իր տրամադրության տակ եղած զինվորներով, Գյուրջիստանի երկրի Չըլդըրի[6] դաշտի բերդերից մեկի պաշարման համար՝ Ռումելիի էմիրներից մեկ-երկու սանջակի բեյերի և ղազիների հետ, թնդանոթներով պատերազմելու պատրաստությամբ էր զբաղված, վատաբարո կըզըլբաշները դալիս են վրացիներին օգնելու։ Երևանի և Նախիջևանի խան Իմամ Կուլի խանը և կըզըլբաշների շրջանում իր քաջությամբ հայտնի Կարս խանը ու այլ ռաֆըզիներ[7], իսլամական զինվորներից վրեժ լուծելու համար, միահամուռ ու միաբերան, նպատակ են դնում՝ առանց հրացան և թնդանոթ կրակելու, միայն սրերի հարվածներով ցույց տալ իրենց ուժը։ Նրանք դալիս են դեպի հիշյալ Չըլդըրի դաշտը... Էրզրումի, Դիարբեքիրի, Մարաշի բեյլերբեյիները և իր հերոսությամբ պատերազմներում հռչակված Յոզդեմիր-օղլու Հասան փաշայի ղեկավարությամբ, այդ անիծյալները [կըզըլբաշները] իսլամական սրի հարվածների տակ պարտություն են կրում. այդ պատերազմում 15 հազարից ավելի մարդ սրախողխող են լինում։ Սրից ճողոպրած հազարավոր անիծյալներ էլ գերի են ընկնում։ Նրանց ունեցվածքը, վրանները, նվագները և դրոշակները անարգվում են և գրավվում։ Հաջորդ օրը, կողոպուտից և թալանից ճողոպրածներն, իսլամական զինվորների միջոցով, բերվում են բարձր դիվանի առաջ սերդար Մուստաֆա փաշայի օթաղում։ Կարը-օղլի անունով հայտնի Մինուչեհրը և Գյուրջիստանի վիլայեթի անվանի կտրիճ ու երիտասարդ ազնվականները տեսնելով, որ հաղթության քամին իսլամական թուղի[8] վրա է փչում, իրենց բոլոր ենթականերով եկան և իրենց վիլայեթների բերդերի բանալիները հանձնեցին Նորին վսեմություն սերդարին ու իսլամի փառքին արժանանալու ցանկություն հայտնեցին։ Երբ այդ մասին հաղորդվեց երջանիկ գահակալին (սուլթանին), նա ֆերման տվեց, որ դրանց Ասիթանե ուղարկեն։ Երբ մեծ սերդարն իր օթաղն եկավ, հրամայեց կտրել երկու հազարից ավելի շղթայակապ կըզըլբաշների գլուխը, իսկ վրացի զինված ջերելու[9] ազնվականներին՝ անտառից փայտ կտրել տալով, իրենց ձեռքով պատրաստված խարույկի վրա նրանց այրել տվեց։*

*Այս դեպքը թշնամուն մեծ ահ ու սարսափ պատճառեց... Այդտեղից դուրս գալով գնացին դեպի Վրաստանի մայրաքաղաքը՝ նշանավոր և նախանձ գրգռող Թիֆլիսի բերդը։ Այդտեղի իշխող*

Դավիթ խանը բերդը անտեր թողնելով, փախել էր։ Թիֆլիսը գրավվեց իր բոլոր նահիյեների հետ միասին։ Երբ հաղթական բանակը ապահով կերպով դուրս եկավ Թիֆլիսի բերդից, Վրաստանի երկրի հարուստ և անվանի ազնվականները հպատակություն ցույց տվեցին։ Ալեքսանդրե Լեվենդ անունով խանը՝[10] իր բոլոր ենթականերով, համբուրում է բարձր սերդարի ոտքի տակի հողը և արժանանում նրա բարձր շնորհին։ Նա իսլամական զինվորներին սննդամթերք է հասցնում և այլ ծառայություններ մատուցում։

Թիֆլիսից հոսող Կուր մեծ գետը, որ որոշ վայրերում հայտնի է Կընըք գետ[11] անունով, այդ ժամանակ չափազանց վարարել էր և ոչ մի կերպ չէր կարելի այն անցնել։

Երբ իսլամական զինվորները շվարած, սպասողական դրության մեջ էին, բարձր սիփահսալարին[12] Կոյուն Գեչիդի կոչված վայրում, հաջողվեց գետից անցնել մյուս կողմը։ Իսլամական զինվորները հետևեցին նրան և շտապեցին գետն անցնել։ Սակայն ունեցվածքը, հագուստներն ու կենդանիները ջուրը քշեց տարավ։ Միայն մեծ կորուստներով նրանք կարողացան անցնել գետը։

Հաջորդ օրը գումարվեց բարձր Դիվան։ Վատաբարո կըզըլբաշների մասին տեղեկություններ ստանալու նպատակով, բերեցին բռնված գերիներին և խոսեցրին։ Պարզվեց, որ Թավրիզի էմիր խանը իր տրամադրության տակ եղած թուրքմեն օյմաղներից մի շարք անվանի սուլթաններ մեծ խմբերով հանդես են գալիս հաղթական զինվորների դեմ...

Այդ կատաղի կռվում, թշնամին մեծ կորուստներ տալով, փախուստի է դիմում... Շիրվանի հնագույն երկրում ապրող և սյուննի դավանանքին պատկանող հազարավոր մուսուլմաններ, որոնք կըզըլբաշներին սյուննիական հարկ[13] անունը կրող միանվագ հարկ էին վճարում, այս հաղթությունը իսլամական բանակի մեծ բախտավորություն համարելով, կանոնավոր զինված խմբերով եկան իսլամական բանակին դիմավորեցին և մեծ նվերներ բերեցին բարձր սերդարին մատուցելու համար։ Նրանք անսահման շնորհակալությամբ աղոթեցին Նորին վսեմություն փադիշահի համար և գնացին Շիրվանի երկրի մայրաքաղաք Շամախի, որտեղ անիծյալներից ոչ մի մարդ կենդանի չթողնելով՝ բոլորին էլ կոտորեցին...

Շիրվանի պաշտպանությունը հանձնվում է Դիարբեքիրի բեյլերբեյի Օսման փաշային, որը տարբեր զորամասերից բավականաչափ ուժեր է ստանում։ (էջ 146—150)

## ԲԱՐՁՐ ՎԵԶԻՐ ԵՎ ՍԵՐԴԱՐ ԷՈԶԴԵՄԻՐ-ՕՂԼԻ ՕՍՄԱՆ ՓԱՇԱՅԻ ՄՂԱԾ ԲԱԶՄԱԹԻՎ ՊԱՏԵՐԱԶՄՆԵՐԸ ԷՐԵՍ ԽԱՆԻ ԵՎ ԿԸԶԸԼԲԱՇ ԶԻՆՎՈՐՆԵՐԻ ԴԵՄ

Երբ այդ լուրը տարածվեց կըզըլբաշների մեջ, Շիրվանի նախկին խան Էրես (Օրուս) խանը, շրջակա երկրների անվանի սուլթանների անարդ խմբի հետ միանալով, արշավեց երկրի պաշտպանության համար մնացած իսլամական զինվորների վրա։ Քանի որ պատերազմն ու կոտորածը անխուսափելի էին, վերոհիշյալ սերդարը, իր տրամադրության տակ մնացած իսլամական զինվորներին քաջալերելով, նրանց պատիվներ տվեց և պատերազմի համար անհրաժեշտ միջոցներ ձեռնարկելուց հետո, պատրաստվեց պատերազմի դուրս գալ։ Ռամազան ամսի 17-ին, Շամախիի դաշտում, տեղի ունեցավ ճակատամարտը։ Շահ Օղլիի, Շիրվանի նախկին խան Օրուս խանի, նրա որդի Դեդե խանի, Գենջեի Իմամ Կուլի խանի և այլ խաների, Լեվենտի եղբայր Իսա խանի՝ 30 հազարից ավելի ընտրյալ կըզըլբաշ զինվորների երեք օր տևած կատաղի մարտերի աղմուկն ու աղաղակը երկինքն ու երկիրը թնդացրին։ Այս մարտերը կռվող կողմերին ուժասպառ արին։ Սակայն պատերազմում, մի կողմին սպասում էր հուսահատությունն ու վիշտը... Հիշյալ ամսի 27-ին, երկուշաբթի օրը, Ղրիմի խանի եղբայր Ադիլ Կիրայ խանը թաթարական զինվորներով օգնության հասավ... Աստծո ողորմությամբ և օգնությամբ թշնամին չարաչար պարտության մատնվեց և խորտակվեց... Պատերազմական գործողությունների ժամանակ Օրուս խանի որդի Դեդե խանը կենդանի գերի ընկավ, Էրթուղտի խանը սպանվեց։ Թուրք իշխող Դեդե Սուլթանը և Հյուսեին խանը կռվում ընկան թնդանոթի արկից։ Գելանի Սեյիդ Էմիր խանի և Միրզա Ալի սուլթանի գլուխները կտրվեցին։ Միրզա օղլի Այնի խանը նույնպես գլխատվեց։ Գենջեի իշխող Իմամ Կուլի խանի ձին գտնվեց, իսկ ինքը անհետ կորավ։ Լեվենտի եղբայր Իսա խանը և Շահ-օղլին փախուստի դիմեցին և գետից անցնելիս խեղդվեցին...

Բոլորի իրերն ու բեռները իսլամական զինվորներին մնացին...։ Թաթար զինվորները իսլամական բանակից բաժանվեցին և գնացին Օրուս խանի գերդաստանը թալանելու և կողոպտելու։ Թեև փաշան ցանկացավ նրանց խրատներ տալով արգելել, սակայն նրանք խոսք չհասկացան։ Նրանց հաջողվեց հեշտությամբ հասնել իրենց նպատակին, կողոպտել ու թալանել բոլորին։ Բայց երբ նրանք ուրախ-ուրախ իրենց թալանած բեռներն էին տանում, անիծյալ կըզըլբաշները, իրենց թաքնված տեղերից դուրս գալով, հարձակվեցին նրանց վրա։ Այս անգամ գոռոզ ու հարբած թաթար

զինվորները չկարողացան դիմանալ և իրենց բեռներն ու հարստությունը թողնելով, փախուստի դիմեցին...

*...Ադիլ Կիրայը գերի է ընկնում։ Օսման փաշան իր սակավաթիվ զինվորներով ստիպված է լինում քաշվել դեպի հյուսիս, Դերբենդի հայտնի բերդը։ Այստեղ նա շարունակում է կռիվները կզզլբաշների դեմ։ 987 (1579) թվականին Ղրիմի Մուհամմեդ Կիրայ խանը 100 հազարանոց բանակով օգնության է գնում օսմանցիներին և նրանց հետ շարժվում Շամախիի վրա։ Ձմեռը մոտ լինելու պատճառով Ղրիմի խանը վերադառնում է, իր որդուն թողնելով այնտեղ։ Այսպիսով Օսման փաշայի դրությունը նորից է դժվարանում։*

*(էջ 150—153)*

## 987 (1579) թվականի դեպքերից

### ԿԱՐՍԻ ԼՐԻՎ ԵՎ ՀԻՄՆԱՎՈՐ ՎԵՐԱՆՈՐՈԳՈՒՄԸ

Վերոհիշյալ տարում սկսվեցին Կարսի բերդի վերանորոգման և բարեկարգման աշխատանքները։ Պետության կենտրոնից հաղթական բանակին ուղարկեցին բարձրագույն և խիստ հրամաններ։ Սուրհանդակներ ուղարկվեցին բոլոր բեյլերբեյիներին, գեամեթների էմիրներին և սիփահիներին, որոնք մասնակցելու էին արշավանքին. հրամայվեց Նովրուզին[14] պատրաստ ներկայանալ իր հաղթանակներով հռչակված սերդարի մոտ։ Կարճ ժամանակում օսմանյան զինվորները ժամանեցին որոշված վայրը և, բարձր հրամանի համաձայն մեծ բանակ կազմեցին։ Այդ նվիրական ժամին շտապ կերպով սկսեցին բերդի վերակառուցման աշխատանքները... Զգուշության համար թշնամու կողմում հետախույզներ նշանակվեցին։ Մեծ ջանքերի շնորհիվ կարճ ժամանակում ավարտվեց բերդի աշտարակների ու պարիսպների կառուցումը[15]։

Թիֆլիսի բերդում պահպանության համար թողնված զինվորների վրա էմիր և սերդար նշանակված Սոլաք Ֆերհադ փաշազադե Մուհամմեդ փաշան, երկար ժամանակ վրացի անհավատների դեմ կռվելով և պատերազմելով հանդերձ, կարողացավ դիմանալ անիծյալ կզզլբաշների պաշարմանը։ Ուտելիքի և խմելիքի պակասության հետևանքով բոլորը հուսահատվել էին. կատուներ անգամ չէին մնացել։ Երբ այդ դրության մասին տեղեկություն ստացվեց, Իսքենդեր փաշազադեն, Ա՞մեդ փաշայի միջոցներով, որպես օգնություն սննդամթերք ուղարկեց... Ուղարկվեցին նաև Մարաշի և Շամի բեյլերբեյիները, որոնք ճանապարհին և լեռնանցքներում վրացիների դեմ անդադար պատերազմ մղելով, Աստծու օգնությամբ, միաժամանակ Թիֆլիսի բերդին օժանդակ օգնություն

ցույց տվին, բավականաչափ սննդամթերք և դրամ հասցրին։ Պահակազորքը փոխարինվեց։ Վերադարձի ճանապարհին նրանք համառ մարտի բռնվեցին կատաղած վրացիների հետ, որից հետո հաղթանակով ու փառքով հասան իսլամական բանակը և ընդունվեցին մեծ հանդիսավորությամբ ու ուրախությամբ։

(էջ 153—154)

### ՕՍՄԱՆՅԱՆ ԲԱՆԱԿԻ ԱՐՇԱՎԱՆՔԸ ԵՐԵՎԱՆԻ ՎՐԱ, ՆՐԱ ԹԱԼԱՆՈՒՄԸ ԵՎ ԹՈՔՄԱՔ ԽԱՆԻ ՓԱԽՈՒՍՏԸ

Անատոլիայի բեյլերբեյի Ջաֆեր փաշան սերդար նշանակվելով, Երևանի վրա արշավելու կոչ է անում. «Լավ զենք ունեցողների և հարմար ձիեր պահողների օրն է։ Թշնամին վիլայեթի վրա է արշավում»։ Երբ մունետիկները օրվա կացության մասին հայտնեցին բոլոր քաջերին, էմիրներին և սիփահիներին, որոնք պատրաստ էին կռվի դաշտում հերոսաբար զոհվելու, բազմաթիվ իսլամական զինվորներ՝ թեթևաշարժ ու հետիոտն, շտապ շարժվեցին և երկրորդ օրը, առավոտյան, հասան բարեշեն Երևանի երկիրը։

Իսկ զզվելի Թոքմաք խանը, նախօրոք տեղեկանալով այս պատրաստության մասին, կողոպտում ու թալանում է քաղաքն ու նրա շրջակայքը և փախուստի դիմում։ Այդպիսի ահավոր և անասելի կողոպուտի, թալանի ու հրկիզման ենթարկված Երևանի[16] բնակիչների ողբն ու կոծը, նրանց թափած արտասուքը նյութ դարձան հանրածանոթ դեսթանի համար։ Այս դեպքը տեղի ունեցավ 987 (1579) թվականի շաբան ամսի 15-ին։

(էջ 154—155)

## 988 (1580—1581) թվականի դեպքերից

### ԿԸԶԸԼԲԱՇ ԴԵՍՊԱՆԻ ԺԱՄԱՆՈՒՄԸ

Այս հատվածում Սելանիկին պատմում է Աջեմի շահ Մուհամմեդ Խուդաբենդեի Մակսուդ Սուլթան անունով դեսպանի գալու և հաշտության ու խաղաղության վերաբերյալ նամակ բերելու մասին[17]։

(էջ 160—161)

## 992 (1584) թվականի դեպքերից

### ՎՍԵՄ ՕՍՄԱՆ ՓԱՇԱՆ ԳԱԼԻՍ Է ԹԵՄՈՒՐ ԿԱՓՈՒԻՑ[18], ՂՐԻՄԻ ԽԱՆ ՄՈՒՀԱՄՄԵԴ ԿԻՐԱՅԻ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆԸ ՔԵՑԵՈՒՄ ԵՎ ՆՈՐ ԽԱՆԻ ՆՇԱՆԱԿՈՒՄԸ

Ֆաթիհ բարձր վեզիր վսեմ Օսման փաշան, որը վեց յոթ տարի շարունակ Բաբ-էլ-էբվաբում, այսինքն Թեմուր Կափույում և

Շիրվանի երկրում զբաղված էր բերդերի և քաղաքների դրավումով, բազմաթիվ իսլամական զինվորներով մեծ ջանքեր ու եռանդ գործ դրեց, մի շարք պատերազմներ մղեց կըզըլբաշների դեմ և այդ վիլայեթը ամբողջությամբ ազատեց նրանցից։ Սա՝ մեծամեծ դժվարություններով երկրի պաշտպանության իր ծառայությունն ավարտելով, Թեմուր Կափուի ու Շիրվանի պաշտպանությունը վսեմ Ջաֆեր փաշային էր հանձնել, իսկ ինքը՝ փադիշահական ֆերմանով, ինչպես նաև Սվաղի բեյլերբեյի Հայդար փաշան և էմիրներն ու նրանց հետ եկող-գնացող բոլոր զինվորները, Կըփչաքի դաշտի[19] շրջակայքի մենզիլներից և օթևաններից անցնելիս, անիծյալ թշնամի զինվորների դեմ անընդհատ կռիվներ մղելով, հասան Քեֆե։ Այստեղ, Ղրիմի խան Մուհամմեդ Կիրայը սատանայական նպատակներով և վատ վարքագծով շեղվեց իր մեծ նախահայրերի ճանապարհից և Նորին վսեմություն իսլամական փադիշահի դեմ ապստամբելով, Թեմուր Կափուից եկող օսմանյան զինվորներին, վեզիր Օսման փաշային և Հայդար փաշային պաշարեց Քեֆեյի բերդում, քանդեց բերդի ջրերի ճանապարհները, խրամատներ փորեց և 37 օր թնդանոթներով պատերազմ մղեց...։

Երբ Ստամբուլում այդ մասին տեղեկություն է ստացվում, կայսերական նավաշինարանում անմիջապես մոբիլիզացնում են տարբեր մեծության նավեր և սիփահիներից, ենիչերիներից ու թնդանոթաձիգներից բաղկացած 10 հազար զինվոր։ Բացի այդ, Կոնիայում բնակվող Իսլամ Կիրայ խանը շտապ կարգով կանչվում է Ստամբուլ և ընդունվում մեծ շուքով, պատվով ու նվերներով։

Իսլամ Կիրայը նշանակվում է Ղրիմի խան և մեծ ուժերով Քեֆե ուղարկվում։ Թաթարական զինվորները չկարողանալով դիմադրություն ցույց տալ, փախուստի են դիմում, իսկ Մուհամմեդ Կիրայը սպանվում է։

Ղրիմից Ստամբուլ վերադարձող վեզիր Օսման փաշան ընդունվում է մեծ շուքով ու հանդիսավորությամբ։

(էջ 176—179)

## ԿԸԶԸԼԲԱՇՆԵՐԻ ԴԵՍՊԱՆ ԻԲՐԱՀԻՄ ԽԱՆԸ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ Է ԽՆԴՐՈՒՄ ՍԵՐԴԱՐԻՆ ՆԵՐԿԱՅԱՆԱԼՈՒ ՀԱՄԱՐ

Հիշյալ տարվա շարան ամսի սկզբին կարմրագլուխների խուդաբենդե Շահից խաղաղության և հաշտության նամակ բերող Կամի և Քեշանի իշխող դեսպան Իբրահիմը, որը երկու և կես տարի առաջ պետության մայրաքաղաքը գալով, Կադըրղայի նավահանգըստում Մուհամմեդ փաշայի ապարանքում էր ապրել և որի հետ

եկած բոլոր կըզըլբաշները ժանտախտից մահացել էին, դիմել էր Նորին վսեմության փադիշահին և նրա գթության ու ողորմության արժանանալու խնդիրը ներկայացրել։ Կայսերական բարձր հրամանով նա ներկայացավ Բարձր Դերգյահին։ Նրա մարդկանց խալաթ շնորհվեց և արշավանքում գտնվող սերդար Ֆերհատ փաշայի մոտ գնալու հրաման տրվեց... Հետո Բարձր Դիվանում դեսպանին ընդունեց մեծ վեզիր Օսման փաշան։

*Այդ ժամանակ պատմագիր Սելանիկին դեֆթերդարի պաշտոն էր վարել, որի մասին ինքը հիշատակում է իր «Թարիխի Սելանիկի»-ում։*

(էջ 180—181)

## ԴԱՎԻԴ [ԴԱՎՈՒԴ] ԽԱՆԻՆ ՇՆՈՐՀՎՈՒՄ Է ԲԵՅԼԵՐԲԵՅՈՒԹՅՈՒՆ

Այդ ժամանակ բարձր սերդար Ֆերհադ փաշայից տեղեկություն ստացվեց այն մասին, որ Վրաստանի երկրի տիրակալ Սիմոնի եղբայրը, կըզըլբաշի խաներից՝ Դավիդ խանը լքել է իր մայրաքաղաքը, աշխարհի սուլթանների նախանձը շարժող հնագույն յուրդը՝ Թիֆլիսի բերդը և չկարողանալով դիմանալ Մուստաֆա փաշայի խորտակիչ հարվածներին, հեռացել է այդ բերդից։ Այժմ նա իր հինգ բեյերի և որդու հետ եկել է բարձր սերդար Ֆերհադ փաշայի մոտ և խնդրում է իրեն երջանիկ Ասիթանե ուղարկեն, որպեսզի հանձնի Վրաստան երկրի բանալիները, որը պետք է գրավվի Աստծու օգնությամբ։

Արդարև կըզըլբաշների շրջանում մեծ հարգանք վայելող հիշյալ Դավիդ խանը, երբ ներկայացավ բարձր դիվանին, մեծ պատվով ընդունվեց։ Նրա որդուն ու մարդկանց պատվո խալաթ տվեցին, իրեն էլ շնորհեցին Մարաշի բեյլերբեյիությունը, որից հետո 922 թվականի զիլկադդե ամսի սկզբին, փադիշահական հրաման արձակվեց Վրաստանի վիլայեթից և իր եղբայր Սիմոնի հողերից գրավված վայրերը օջաքըլըքի[20] կարգով տալ նրան։

(էջ 186—187)

## ԹԱԹԱՐՆԵՐԻ ԽՌՈՎՈՒԹՅՈՒՆԸ ԼՈՒԾԱՐՔԻ Է ԵՆԹԱՐԿՎՈՒՄ ԵՎ ՕՍՄԱՆ ՓԱՇԱՆ ՆՈՐԻՑ ԱՐԵՎԵԼՔԻ ՍԵՐԴԱՐ Է ՆՇԱՆԱԿՎՈՒՄ

*Այստեղ պատմագիրը խոսում է մեծ սերդար Օսման փաշայից ստացված զեկուցման մասին, որտեղ հայտնվում էր, որ Ղրիմում ծագած խռովությունը ճնշվել է և Իսլամ Կիրայը շարունակում է իր իշխանությունը։ Այդ պատճառով վերացվում է Քեֆե գնալու անհրաժեշտությունը։*

«Նորին վսեմություն բովանդակ աշխարհի խալիֆան կայսերական հրովարտակով հայտնում է, որ ինքը ցանկանում է կարմրագլուխների վրա դարձնել իր ուշադրությունը և այդ վատաբարոների գոյությանը վերջ տալ երկրի երեսից։ Իր հիմնական ցանկությունն է խորտակել ու լրիվ ոչնչացնել նրանց [կըզըլբաշներին]։

Բարձրյալն Աստված թող քեզ և քո ձեռքի տակ եղած հաղթական զինվորներին օգնական լինի»։

Այս խոսքերով խիստ պատվերներ ավեց և մեծ պատերազմի հրամաններ հղեց օսմանյան պետության բոլոր բեյլերբեյիներին, որպեսզի նրանք կազմ ու պատրաստ սպասեն։ 996 (1584) թվականի մուհարրեմ ամսի սկզբին բարձր հրաման ուղարկվեց, որպեսզի սերդար Ֆերհադ փաշան գա պետության կենտրոնը՝ Աստիթանե։ Նույն թվականի ռեբուել-էվվել ամսին, նախկին սերդար վսեմ Ֆերհրադ փաշային կայսերական հրովարտակ գրվեց, որպեսզի նա տեսնվի սադրազամ և բարձր սերդար Օսման փաշայի հետ։ Եվ քանի որ Արևելքի արշավանքի համար կայսերական բանակի գործերը նրան են հանձնարարված, ապա անհրաժեշտ է դիմել նրան և գործել ֆերմանի համաձայն։

Տեսակցությունից հետո նա պետք է գա Ասիթանե։

(էջ 187—188)

* * *

*Փերհադ փաշան Թոկաթում տեսնվում է սադրազամ Օսման փաշայի հետ և ապա վերադառնում է Ստամբուլ։*

*Կասթեմունիում ձմեռելուց հետո, մեծ սերդար Օսման փաշան ելնում է Արևելքի արշավանքի։* (էջ 188)

## ԹԱՎՐԻԶՈՒՄ ՄԵԾ ՍԵՐԴԱՐ ՕՍՄԱՆ ՓԱՇԱՅԻ ԵՎ ԿԸԶԸԼԲԱՇՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ԴԵՊՔԵՐԻ ՄԱՆՐԱՄԱՍՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

*Այստեղ Սելանիկին տալիս է օսմանցիների և կըզըլբաշների միջև տեղի ունեցած կատաղի պատերազմների մանրամասնությունները։*

993 (1585) թվականի շաբան ամսի 14-ին մեծ վեզիր և Բարձր սերդար Օսման փաշան Էրզրումից շարժվում է դեպի Թավրիզ։ Ճանապարհին իր բանակով նրան է միանում Վանի և Երևանի բեյլերբեյի Սինան փաշան։

Երբ Օսման փաշան Թավրիզին է մոտենում, կըզըլբաշները իրենց ուժերը հավաքելով, լավ զինված, կանոնավոր գնդերով դուրս են գալիս օսմանցիների դեմ... և պարսպանման պողպատյա թըն-

դանոթներով օսմանյան զինվորների դեմ երկաթյա շղթա են կապում... Իր սատանայական զինվորներով մեկ կոնաք հեռավորության վրա են գտնվում մոլորյալ շահը, բանակի սերդար, շահի որդի Համզա Միրզան, նշանավոր խաներից՝ Գենջեի և Ղարաբաղի իշխող Իմամ Կուլի խանը... և այլ խաներ ու սուլթաններ։ Կրոնի և դավանանքի թշնամի մոտ 30 հազար դժոխային շներ միանալով, ընդհարվում են իսլամական բանակի տարբեր զորամասերի հետ։ Մի ամբողջ օր տևող և ջահերի լուսավորության տակ շարունակվող մեծ պատերազմում երկուստեք մեծ կորուստներ են տալիս։ Այս մարտերում զոհվում է Մուհամմեդ փաշան, իսկ Մուրադ փաշան փախչելիս ընկնում է մի հորի մեջ և բռնվում կըզըլբաշների կողմից։ Այդ դեպքերից հետո Թավրիզի բնակիչները վատ վերաբերմունք են ցույց տալիս իսլամական բանակին, փակում են փողոցների ճանապարհները և կռվում նրանց դեմ։ Սակայն իսլամական զինվորները պատնեշները քանդելով մտնում են քաղաք ու առևտուր անում։ Մեծ սերդարը փութաջանությամբ ձեռնարկում է բերդի կառուցման աշխատանքներին և «Հեշթ-բիհեշթի» պալատը վերածում ամրակուռ պարսպի։ Երբ նրանք զբաղված էին պարսպի աշտարակների և պատնեշների կառուցումով, քաղաքի բնակիչներից մի շարք անիծյալներ փորձում են իսլամական զինվորներից վրեժխնդիր լինել... Զինվորների մեջ լուր է տարածվում, թե իրենք ենթարկվելու են ընդհանուր ջարդի, որպեսզի հպատակվեն...։ Վսեմ սերդարը, լսելով այդ ասում է. «Բարձրյալն Աստված պահպանի», և համաձայնություն չի տալիս ջարդին։ Սակայն իսլամական բոլոր զինվորները տարված են լինում այդ ջարդին վերաբերող խոսակցություններով։ Օսման փաշան ծանր հիվանդ լինելով, «Վայ-վայ» է ասում և անկարող է լինում ձին հեծնել ու այդ չարիքի առաջն առնել։ Այդպիսով անհնար է լինում զսպել զինվորներին։ Քաղաքը [Թավրիզը] կողոպտում և թալանում են... Որոշվում է Ջաղալե Զադե Սինան փաշային, տարբեր դասերից հավաքագրված 15՝հազար զինվորներով, թողնել քաղաքի պաշտպանության համար։ Սակայն Սինան փաշան չի համաձայնվում։ Այդ հանգամանքը մեծ սերդարին ավելի մեծ ցավ է պատճառում։ Սակայն անհրաժեշտ էր հեռանալ և քանի որ թշնամին էլ տեղյակ էր դրությանը, որոշվեց գործին հմուտ և հայտնի իսլամական զինվորներից մեկին թողնել Թավրիզում։ Վսեմափայլ սերդարի հիվանդությունը գնալով ավելի էր ծանրանում։ Երբ տեղեկություն ստացվեց, որ կրոնի թշնամին տեղեկացել է սերդարի ծանր վիճակի մասին և օգտվելով դժվարություններից, առիթ է

փնտրում իսլամական զինվորների վրա հարձակվելու, որոշեցին թողնել թիմարի և զեամեթի տերերից մեկին՝ Դիարբեքիրի բեյլերբեյի խադիմ Ջաֆեր փաշային և նրան՝ պաշտպանության համար ենիչերիների, ջեբեջիների[21], թնդանոթաձիգների, թնդանոթի կառապանների խմբերից թերաքքիի կարգով[22] տալ հազարից ավելի զինվորներ, սանջակի բեյլերբեյիներ ու ալայի բեյեր և պաշտպանության համար մնացողներին ապահովել դրամով և սննդամթերքով...։

*Կըզըլբաշները օսմանցիներին հանգիստ չեն տալիս և ճանապարհին, ամենուրեք, հարձակումներ են գործում։ Օսման փաշան ճանապարհին մահանում է (993 թվականի զիլկադե ամսի 6-ին[23])։*

*(էջ 198—201)*

* * *

*994 (1585) թվականին կըզըլբաշները շահի որդի Համզա Միրզայի գլխավորությամբ հարձակվում են Թավրիզի պաշտպանության համար մնացած օսմանյան զինվորների վրա։ Երկարատև և կատաղի մարտեր են տեղի ունենում։ Փադիշահի կողմից Արևելյան արշավանքի սերդար նշանակվում է Ֆերհադ փաշան, որը մեծաքանակ ու բազմապիսի զինվորական ուժերով նույն թվականի մուհարրեմ ամսին Ստամբուլից մեկնում է Արևելք։*

*Նույն թվականի զիլկադե ամսի կեսին արևելյան արշավանքի սերդարից ստացված գրություններից պարզվում է, որ Թավրիզ քաղաքի պաշտպանության համար մնացած զինվորական ուժերը բերդից անդադար պատերազմել են կըզըլբաշների դեմ և միաժամանակ վերանորոգել են բերդի ավերված պարիսպները։ Նոր սերդարի Թավրիզ գալուց տաս օր առաջ կողմերի միջև հաշտություն է կընքվում և հաստատվում է խաղաղություն։*

*(էջ 202, 205, 212—213)*

## 995 (1586) թվականի դեպքերից

### ԲԱՐՁՐ ՍԵՐԴԱՐԸ ՀԱՅՏՆՈՒՄ Է ԿԸԶԸԼԲԱՇՆԵՐԻ ԽԱՂԱՂՈՒԹՅԱՆ ՑԱՆԿՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Ռեջեբ ամսի կեսին Բարձր սերդարից ստացված զեկուցումից պարզվում է, որ մոլորյալ շահը՝ Մուհամմեդ Խուդաբենդեն, դիմել է նամակով և հայտնել. «Իմ սպանված որդու՝ Համզա Միրզայի[24] անչափահաս որդուն՝ Հայդար Միրզային, ուղարկում եմ օսմանյան պետության մոտ պատանդ թողնելու համար։ Մինչև հիմա սրի ուժով մեզնից գրավված երկրների վրա հարձակում չպետք է գործենք։ Խառնակ դրությանը վերջ տալու համար պետք է հրաժարվենք երկու կողմերի վեճերից։ Թող երկիրը խաղաղ և հանգիստ լինի։ Մեր անվանի դեսպանի գալու համար փադիշահական

*թույլտվություն ենք խնդրում»։ Այս առթիվ փադիշահի ուղարկած գրության մեջ ասվում էր. «Կըզըլբաշների նպատակն է իսլամական զինվորներին հեռու պահել պատերազմից և ազատվել իսլամական սրից։ Նրանց ստախոսությանը վերջ չկա։ Դուք նրանց դեմ արշավելուց և կռվելուց ետ մի մնաք»։ Այս իմաստով վսեմ սերդարին ուղարկվեցին խիստ հրամաններ։*

*(էջ 223—224)*

## ՎՍԵՄ ՍԵՐԴԱՐԸ 995 (1586) ԹՎԱԿԱՆԻՆ ՎՐԱՍՏԱՆԻ ՎԻԼԱՅԵԹՈՒՄ ԲԵՐԴԵՐ Է ԿԱՌՈՒՑՈՒՄ

*Վրաստանի վիլայեթում հնարավորություն չեղավ չեզոքացնել անիծյալ Սիմոնին։ Ի վերջո, Սիմոնի մայրաքաղաք Գորիում կառուցվեց մի ամրակուռ բերդ. Ախալցխան ևս վերածվեց բերդի, որի հետևանքով այդ անիծյալը [Սիմոն] ստիպված եղավ անօթևան թափառականի և խելագարի պես ամառն անցկացնել լեռներում, իսկ ձմռանը ողբ ու կոծ բարձրացնել։ Կառուցված բերդերում նշանակվեցին բեյլերբեյիներ և հատկացվեցին զինվորներ, դրամ և սննդամթերք։*

*Այսպիսով, Վրաստանի համար Թումաշը*, Լորին, Գորին և Ախալցխան նոր պարսպի բնույթ ստացան։ Թիֆլիսի բերդի համար ծախսվեց մեծ գումար և այն ամրացվեց։ Այս բոլորի մասին հաղորդում ստացվեց 995 թվականի ռեջեբ ամսի վերջին։*

*(էջ 225—226)*

## ՎՍԵՄ ՍԵՐԴԱՐԸ ՀԱՅՏՆՈՒՄ Է ԱՋԵՄԻ ՇԱՀ ԽՈՒԴԱԲԵՆԴԵ ՇԱՀԻ ՀԱՇՏՈՒԹՅԱՆ ԽՆԴՐԱՆՔԻ ՄԱՍԻՆ

*Շաբան ամսի սկզբին մի քանի զեկուցումներ ստացվեցին վսեմ սերդարից, որը հայտնում էր, թե մոլորյալ շահը հաշտության և խաղաղության համար անդադար դիմումներ և խնդրագրեր է ուղարկում։ Նա կրկնում է. «Ինչո՞ւ այն մեծ շահնշահը մեր հարաբերությունները չպետք է բարվոքի, ո՞ր կրոնում և ո՞ր սուլթանության սովորություններում է ցույց տրված, որ հաշտություն խնդրողը մերժում ստանա։ Սա լավ նշան չէ։ Միթե չկա աստվածային քննություն։ Սրանից հետո անկեղծ ցանկությամբ Ասիթանեի ֆերմաններին ծառա պետք է լինենք։ Եթե Սվաղի բեյլերբեյի վսեմ Մուհամմեդ փաշան Թավրիզ գա, մեր թոռանը՝ Հայդար Միրզային պետք է հանձնենք իբրև պատանդ։ Սրով գրավված բեր-*

* *Թումաշը աղավաղված է, հավանաբար պետք է լինի Թումանիս։*

դերը թող ձեր տիրապետության տակ մնան։ Բացի այդ, ինչ ֆերման էլ որ տրվի, պետք է ասեմ. «լսում եմ և հպատակվում եմ»։

Երբ նամակների բովանդակությունը կրճատումներով ներկայացրին Նորին վսեմության գահին, վսեմ փադիշահը հրամայեց, որ չնայած կըզըլբաշների ստերին և խարդախություններին վերջ չկա, երկար ժամանակ երկրի ռայաները դարձել են սուլթանական սիփահիների ձիերի ոտքերի կոխան։ Նրանց պատանդը գալուց հետո ժամանակավոր կերպով արշավանքն ու շարժումը թող դադարեցվի։ Այս իմաստով հիշյալ տարում թույլտվություն շնորհվեց։

(էջ 226)

## ԴԵՍՊԱՆՆԵՐԸ ԳԱԼԻՍ ԵՎ ՀԱՅՏՆՈՒՄ ԵՆ ԷԺԴԵՐԽԱՆԻ (ԱՍՏՐԱԽԱՆ) ԵՐԿՐԻ ԳՐԱՎՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Շեվվալ ամսի կեսին, Օզբեկի Աբդուլլահ խանի դեսպանի հետ Քյուչուկ Նողայ անունով հայտնի թաթարական ցեղից մարդիկ են գալիս և հայտնում, որ սպանված Ղրիմի Մուհամմեդ Կիրայի որդին փախել և ապաստանել է ռուսական թագավորի մոտ։ Նա հավաքել է մեծ թվով զինվորներ և իբրև Աստրախանի վիլայեթի բերդի բեյ, ներկայումս իր անթիվ զինվորներով ցանկանում է գրավել Նողայը և հետո արշավել Ղրիմի վրա։ Նա նպատակ ունի մեծ վրեժ լուծել իսլամական ժողովրդից և դրա համար պատրաստություններ է տեսնում։ Բոլոր դեպքերում, անհրաժեշտ է այդ կողմի իսլամական զինվորներին մի բարձր սերդար նշանակել և Ղրիմի Իսլամ Կիրայ խանի հետ միասին, թաթարական զինվորներով, Աստրախանի բերդերն ու շրջակայքը գրավել, որով և ճանապարհի խաչընդոտը մեջտեղից կվերացվի ու կրոնի թշնամուն ճանապարհ չի մնա։ Պետք է ճանապարհը փակել։ Աստված մի արասցե, եթե թշնամին մի առիթով ճանապարհ գտնի, վրեժխնդրությունը անխուսափելի է։

Դրության մասին տեղեկություն տալով, 995 թվականին նրանք ներկայացրին իրենց խնդիրն ու միջնորդությունը իշխողներին։

## ՎԵԶԻՐՆԵՐԻ ՀԱՎԱՔՈՒՅԹԸ ԱՍՏՐԱԽԱՆԻ ՆՎԱՃՄԱՆ ՈՒ ԳՐԱՎՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ[25]

Երբ վերոհիշյալ հարցի համար եկած մարդկանց խնդիրը կարգացվեց Նորին վսեմություն փադիշահին՝ ֆերման տրվեց. «Բոլորդ միասին հավաքվեք, միջոցներ ձեռք առեք և պատրաստվե-

ցեք»։ Մեծ վեզիրը՝ վսեմ Սիյավուշ փաշան, բարձր վեզիրներին և Մեվլանա Սադի էֆենդիին խնջույքի հրավիրեց Սկյուդարի իր այգում և այնտեղ բարձր ժողով գումարեց։ Խոսակցության ժամանակ պարզվեց, որ սուլթան Սելիմ II-ի սուլթանության ժամանակ, Աստրախանի գրավման համար Քեֆեյում հրամանատար նշանակված Կասըմ փաշան, թաթարական խանի հետ միասին մեծ գումարներ է ծախսել և մեծ դժվարությունների գնով անգամ չի կարողացել Աստրախանը գրավել։ Սակայն ներկայումս Ղրիմի Ռուլամ Կիրայ խանը իր ընտրյալ Միրզային նստեցրել է Ղրիմի գահին, պետության կողմից էլ ուղարկվել են նավատորմի նավեր և իսլամական զինվորներ, այնպես որ մի զորեղ սերդարի հետ միանալով, կարելի է գնալ։ Այս մասին որոշում ընդունվեց և 995 թվականի շեվվալ ամսի 8-ին բարձր ֆերման արձակվեց Աստրախանի արշավանքին պատրաստվելու համար։

(էջ 229—230)

ՎՍԵՄ ՍԵՐԴԱՐԸ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ Է ՏԱԼԻՍ ՎՐԱՍՏԱՆԻ ԴՐՈՒԹՅԱՆ ԵՎ ԱՅՆՏԵՂ ԲԵՐԴԵՐ ԿԱՌՈՒՑԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Զիլհիջջե ամսի սկզբին, օսմանյան բանակի սերդար Ֆերհադ փաշան նամակներով հայտնում էր, որ իր սիլահդար Դավուդ աղան իր տասը մարդկանցով եկել և տեղեկացրել է, որ անիծյալ Սիմոնի մայրաքաղաք Տորիում կառուցվել է մեծ թվով զինվորներ պատսպարող ամուր բերդ, որը Վրաստանում եղած բոլոր բերդերից ամենաամրակուռն է։ Լեվենդ ցեղի իշխող Ալեքսանդրե խանը ամեն տարի պետության Ասիթանեին 10 հազար ոսկու արժեքով ընտիր մետաքս տալու պայմանով մակթուի է[26] կապել և խոստացել է՝ գոյություն ունեցող պարիսպների կարիքներն ապահովել, լրիվ հացամթերքներ հասցնել և հպատակությունը շարունակել։

Հնուց ի վեր, մոլորյալ շահի ծառաներից մեկը՝ իր հերոսությամբ հայտնի չերքեզ Դրազ-օղլի Մուհամմեդ խանը, իր մոտ եղած քաջերի հետ միասին եկել էր և հպատակություն ցույց տալով, հայտնել. «եթե գրավված վայրերը բեյլերբեյիության կարգով իրեն շնորհվի, հանձն է առնում բռնել անտուն-անօթևան թափառող Սիմոն խանին»։

Հիշյալ տարին այդ բեյլերբեյիությունը շնորհվեց նրան։

(էջ 232—233)

## 996 (1578—1579) թվականի դեպքերից

### ՎՍԵՄ ՍԵՐԴԱՐԸ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆ Է ՏԱԼԻՍ ՍԱՀՄԱՆԻ ԴՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

*Այս հատվածում պատմագիրը խոսում է Կազվինում կըզըլբաշների հավաքվելու և Աբբաս Միրզայի մտադրությունների մասին... Կըզըլբաշ Աշեկ անունով սուլթանը դիմում և խնդրում է Շահին, որ իրեն թույլատրվի օսմանցիներից գրավել Սեյիդ Ջուքուրին և Երևանի բերդը, պայմանով, որ իրեն շնորհվի խանություն։ Թույլտվություն ստանալուց հետո նա անսպասելի կերպով մտնում է Երևան։ Սակայն օսմանյան զինվորները ջախջախիչ հարված են հասցնում կըզըլբաշներին, մի մասին գլխատում, իսկ մյուսներին փախուստի են մատնում։ Փախչողներից մի խումբ հարձակվում է Նախիջևանի վրա, սակայն այնտեղ էլ պարտություն է կրում։*

*Հիշյալ դեպքերը պատճառ են դառնում նորից արշավելու դեպի Արևելք։ Այդ առթիվ տրվում են հատուկ հրահանգներ։*

*(էջ 238—239)*

## 996 (1578) թվականի դեպքերից

*Դեպքերի բերումով, անհրաժեշտ եղավ մասնակցել արևելյան արշավանքին, գրի առնել և պետության կենտրոնին պատմել այդտեղ կատարված դեպքերի ու փոփոխությունների մասին։*

*Հիշյալ տարին, ջեմազիել-էվվել ամսին, Արևելյան արշավանքի կապակցությամբ նվաստս նշանակվեցի սիլահդարների վաշտի քարտուղար։* *(էջ 243)*

### ԳԵՆՋԻ ԳՐԱՎՈՒՄԸ

*Նույն թվականին, Արևելյան արշավանքի մեկնելու համար, Էրզրումի դաշտում մեծ թվով զինվորներ են հավաքվում։ Շաբան ամսի 13-ին, բարձր սերդար Ֆերհադ փաշան բանակով գնում է Հասան Կալե։ Այստեղ տեղի է ունենում շատ ուժեղ երկրաշարժ, որը բազմիցս կրկնվում է մի քանի օր շարունակ։ Այստեղից նրանք շարժվում են դեպի Կարս։ Կարսում փադիշահից ստացվում է նվիրական հրովարտակ, որով հրամայվում էր՝ Գենջեի և Ղարաբաղի վրա գնալու փոխարեն, շարժվել դեպի Կազվին։ Այս հանգամանքը մեծ դժգոհություն է առաջացնում բանակում։ Նկատի են առնվում Կազվին գնալու դժվարությունները։ Բարձր սերդարին հաջողվում է Կազվինի արշավանքը հետաձգել հաջորդ տարվան և ռամազան ամսի 17-ին շարժվել դեպի Գենջե, որտեղ կըզըլբաշները մեծ ուժեր էին կենտրոնացրել։*

Վրաստանից անցնելիս, վերոհիշյալ Սիմոնը, օսմանյան բանակին դժվարություններ պատճառելու համար, ամեն ինչ այրել և ոչնչացրել էր։ Այդ պատճառով բանակը մեծ նեղություններ է քաշում։ Բանակում առաջանում են մեծ դժգոհություններ և անկարգություններ։ Սերդարը ուլուֆե[27] վճարելով, կարողանում է հանգստացնել զինվորներին։

Թշնամու երկրում բանակը առաջանում էր մենզիլից մենզիլ։ Թաուսի գետի մոտ գիշերով մունետիկները կանչում են և հայտնում, որ անհրաժեշտ է զգույշ լինել, ծանր իրերը թողնել և շարժվել վաշտերով, որովհետև թշնամին դարան է մտել... Հաջորդ իջեվանում, լեռները քաշված կըզըլբաշները իրենց թաքստոցներից տեսնելով օսմանյան մեծաքանակ բանակը, փախչում են և կըզըլբաշ ղեկավարներին տեղեկություն տալիս։ Նրանց սիփահսալարը՝ Ջիյադ օղլին, Գենջե քաղաքի և նրա գյուղերում ու գավառներում ապրող բոլոր ռայաներին՝ իրենց բոլոր մթերքներով, հագուստներով և կենդանիներով քշում տանում է։ Շատերին բարձրացնում է լեռները, իսկ մնացածին՝ իր զինվորների հետ միասին, քշում տանում է Արաղ գետի եզերքը։ Նրա նպատակն էր պահել և պաշտպանել ռայաներին։ Գենջե քաղաքի այգիներում ու պարտեզներում կենդանի շունչ չէր թողել, բոլորին դուրս էր բերել...։

Շեվվալ ամսի 9-ին բանակը հասնում է Գենջե և ամեն կողմից շրջապատում քաղաքը։ Սակայն քաղաքում ոչ մի մարդ չեն գտնում։ Օսմանյան զինվորները բնակիչների թողած մթերքներն ու հագուստները հեշտությամբ դուրս բերեցին թաքցրած տեղերից և գտան մեծ քանակությամբ հացամթերք։

Արդարև, Աջեմի վիլայեթում Գենջեի տների նման գեղեցիկ և վայելուչ շինություններ ուրիշ ոչ մի երկրում չէին տեսել։ Այգիներն ու պարտեզները աննման էին։ Հոսող ջրերը, քաղաքի մոտ եղած երկու հոյակապ կամուրջները, գեղատեսիլ լեռները, պտղատու ծառերն ու անթիվ, անհամար ծաղիկներն՝ իրենց փարթամ գեղեցկությամբ, չկան ոչ մի երկրում։ Օրհնյա՜լ է Աստված։ Այդքան բազմատեսակ ու անուշահամ պտուղներ ուրիշ երկրներին չեն շնորհված։ Վճիտ և անուշահամ ջրերն էլ աննման են։ Սակայն ամռան տաք օրերին անհրաժեշտ է յայլաներ բարձրանալ։

Բոլոր դեպքերում իսլամական բանակը ժամանակին եկավ, երբ ամենուրեք հանդարտություն էր տիրում։ Զինվորները լիովին օգտվեցին այդ աստվածային բարիքներից։ Նորին վսեմություն սերդարը, բեյլերբեյիների և այլ ավագանիների հետ միասին, զինվոր-

ներին խստիվ արգելեց այգիներից պոկել հասած պտուղները։ Զինվորներին թույլ չտրվեց նաև ապրել քաղաքի տներում կամ քանդել դրանք։ Որոշվեց կարգի բերել քաղաքը իր հրապարակով, պահպանել շուկաները, քարվանսարաներն ու բաղնիքները։ Սակայն վսեմ սերդարը Շահ Թահմասբի, վրացիների դեմ մղած հաղթական պատերազմում, Սիմոնի և Լեվենդ Ալեքսանդրի հայրերի ու պապերի գլուխներից կառուցած աշտարակը քանդել տվեց և նրա կղմինդրները գործածեց բերդի պարիսպների շինության համար։

Նա [սերդարը] պարսպապատեց վեց հազար արշինից ավելի տարածություն, կառուցեց աշտարակներ և պատնեշներ, խանդակներ փորեց և մեծ տոնակատարությամբ, 40 օրվա ընթացքում, կարողացավ վերջացնել բոլոր այդ ամրակուռ կառուցումները։ 996 թվականի զիլկադե ամսի 18-ին, բոլոր զինվորական մասերի «շահի» թնդանոթների համազարկերով սկսվեց հանդիսավոր տոնակատարությունը։ Առանձին զինվորական մասերին տրված առաջադրանքների համաձայն ութը բեյլերբեյիություններ շինեցին ու վերջացրին բերդի առանձին մասերը։

Սերդարը բեյլերբեյիներին խորհրդակցության է հրավիրում։ Ընտրյալ զինվորական մասերից առանձնացնում են որոշ թվով ուժեր և նրանց խստիվ պատվերներ տալով, նախազգուշացնում են, որ թշնամին Արաղ գետի ափին կազմ ու պատրաստ կանգնած է և եթե մենք այստեղից հեռանանք, թշնամին պատրաստ է Գենջեն պաշարել, գրավել և թալանել։ Որոշվում է, որ իսլամական բանակը հարձակվի կըզըլբաշների վրա և նրանց ուժերը խորտակի։

Շիրվանի վալի Ջաֆեր փաշայի հրամանատարության տակ եղած 30 հազարանոց բանակը ճանապարհ է ընկնում և երրորդ օրը հասնում Արաղ գետի ափը։ Կըզըլբաշական բանակի հրամանատար Զիյադ օղլի Մուհամմեդ խանը, օսմանյան բանակի մասին տեղեկություն ստանալուն պես, բանակի ամբողջ հանդերձանքը թողնելով փախուստի է դիմում։ Արաղ գետը անցնելիս բազմաթիվ զինվորներ գետում խեղդվում են։ Այսպես, իսլամական հաղթական բանակը վերադառնում է Գենջե...։

Ջաֆեր փաշան, որը այդ պատերազմից առաջ հիվանդացել էր, մեռնում է և նրա փոխարեն Շիրվանի վալի է նշանակվում Անատոլիայի բեյլերբեյի Խադիմ Հասան փաշան։

Ձմեռը մոտ լինելու պատճառով բանակը ձմեռելու համար վերադառնում է Էրզրում։

(էջ 246—251)

* * *

*Սելանիկին, որը Արևելյան արշավանքի ժամանակ՝ սիփահիների խմբի քարտուղարի պաշտոնով, գտնվում էր բանակում, «Նվաստիս սիփահիների քարտուղարության պաշտոնից հեռացնելու մասին» վերնագիրը կրող հատվածում գրում է.*

*«...Պետության կենտրոնից ստացվեց բարձր հրաման, որով հայտնվում էր, որ բոլոր սիփահիները եկել են պետության Ասիթանեն։ Դու էլ պետք է գաս և շարունակես քո ծառայությունը։ 997 (1588—1589) թվականի ռամազան ամսին, Քեթխուդա բեյի հետ Ասիթանե եկա և բաժանեցի Ռեշենի ռոճիկները*։ Շեվվալ ամսի 25-ին, իմ քարտուղարության պաշտոնը, առանց հանցանքի և առանց պատճառի, փադիշահական հրամանով տրվում է Իբրահիմ Չելեբիին... Այդպիսի անարդարացի վերաբերմունքի շարունակումը խանգարեց պետության կարգն ու կանոնը և պետական գանձարանը գնալով դժվարին վիճակի մեջ ընկավ»։*

*(էջ 258)*

## 998 (1589) թվականի դեպքերից

*Այս թվականի դեպքերի շարքում պատմագիրը հիշում է իրանցիների առաջարկը՝ հաշտության բանակցությունների համար, շեհզադե Հայդար Միրզային իբրև պատանդ ուղարկելու մասին։ Շահի հատուկ դեսպանի և մեծ շքախմբի ուղեկցությամբ, բազմաթիվ նվերներով, Հայդար Միրզան գալիս է օսմանյան բանակատեղը՝ Հասան Կալե, և հետո անցնում Ստամբուլ։ Մանկահասակ շեհզադեն Ստամբուլում ընդունվում է մեծ պատվով ու շքեղությամբ։ Նրան հատկացվում է հատուկ պալատ։*

*Սելանիկին գրում է, որ փադիշահական ֆերմանով, պատանդ ուղարկված շեհզադեին և Իրանի դեսպանությանը դիմավորելու համար, ինքը նշանակվում է մեհմանդար (հյուր ընդունող)։*

*Առանձին մանրամասնություններով նկարագրվում է Իրանի շեհզադեի և դեսպանության հանդիսավոր ընդունելությունը փադիշահի կողմից։*

*Պալատական հանդիսավորությունների նկարագրությամբ տարված, պատմագիր Սելանիկին անուշադրության է մատնում գլխավոր և հիմնական հարցը՝ 998 (1589—1590) թվականին, Իրանի և Թուրքիայի միջև կնքված հաշտության պայմանագիրը, որը հայտնի է Ստամբուլի պայմանագիր անունով[28]։*

*(էջ 259, 261, 263)*

### ՕՐԵՆՔԻ ՀԱՄԱՁԱՅՆ ՖԵՐՄԱՆ Է ՏՐՎՈՒՄ ԱՋԵՄԻ-ՕՂԼԱՆՆԵՐԻ ԴԵՎՇԻՐՄԵԻ[29] ՄԱՍԻՆ

*Օսմանյան հնագույն սովորության համաձայն, աջեմի-օղլանների դեվշիրմեի համար բեռնակիր կենդանիներ քշող ենիչե-*

* *Ռեշենի ռոճիկը՝ տե՛ս այս գլխի ծանոթ. 27։*

*րիների հետ միասին, փադիշահական ֆերմանով ենիչերիների օջա-ղից Անատոլիա և Ռումելի ուղարկվեցին նաև խղճի տեր և նշանավոր չորբաջիներ[30]։ Երկրի ռայաներից հավաքագրվեցին ծառայության ընդունակ տղաներ, որոնք ընդունելով իսլամական հավատը, կրոնի սրբազան պատերազմներում (ջիհադ և ղազա[31]) փրկության էին արժանացել։*

*Ժամանակի իշխողները տղաների դեվշիրմեի գործում անխիղճ են եղել և նվերի անվան տակ շատ մեծ կաշառքներ են վերցրել. ինչպես գայլն է հարձակվում ոչխարի հոտի վրա, այնպես էլ նրանք ագահորեն հարձակվել են երկրի ռայաների վրա։ Հարուստ ռայաներից խլել են անթիվ անհամար հարստություն, իսկ աղքատ ռայաներից՝ նրանց զավակներին, քանդել են նրանց տունն ու տեղը։ Այսպես ենիչերիների օջաղի մեջ մտել են օտար տարրեր՝ հրեա, գնչու, ռուս, չերքեզ։ Էթրաք խաժամուժին և այլ ստոր տարրերին դաֆթարում արձանագրելով, նրանցից մեծ քանակությամբ հարստություն են խլել, որի պատճառով լուսավոր աշխարհը խավարել է, վատագույն ապօրինությունները հետզհետե ավելացել են։*

*Նորին վսեմություն բարձր Դերգյահին ներկայացված դիմումների հետևանքով ենիչերիների Մահմուդ աղան և Քեթխուդա բեյը պաշտոնազուրկ են արվել։*

*...Ռայաներից մեծ քանակությամբ ակչե առնելով, տղաների դեվշիրմեին գնացողների մեծ մասը պաշտոնազուրկ է արվել և հրաման է տրվել քննություն կատարելու համար։*

*Ստամբուլում իրար ետևից մի քանի հրդեհներ են[32] առաջանում և բազմաթիվ շենքեր հրո ճարակ դառնում։*

*Պաշտոնազուրկ Մահուդ աղան Ստամբուլից արտաքսվում է այն կասկածի հիման վրա, որ նա է այդ հրդեհների պատճառը։*

*(էջ 263—264)*

## 999 (1590) թվականի դեպքերից

### ԳԵՆՋԵԻ ԻՇԽՈՂ ԿԸԶԸԼԲԱՇ ԶԻՅԱԴ ՕՂԼԻՆ ԳԱԼԻՍ Է ՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՍԻԹԱՆԵՆ, ՍԱԿԱՅՆ ՉԻ ԸՆԴՈՒՆՎՈՒՄ ՈՒ ԲԱՆՏԱՐԿՎՈՒՄ Է

*Սրանից առաջ Գենջեի և Ղարաբաղի իշխող Զիյադ օղլի Մուհամմեդ խանը, որը Արաղ գետի ափին պատերազմի բռնվելով հաղթական սերդար Ֆերհադ փաշայի իսլամական զինվորների հետ, իր տրամադրության տակ եղած կըզըլբաշ զինվորների հետ պարտության և կողոպուտի էր մատնվել, այդ անիծյալը, նորից մի խումբ ավազակներ ու պոռնկորդիներ հավաքելով, եկել էր և*

*Գենջեի բերդը պաշարել։ Սակայն մի քանի օր տևող մարտերից հետո հազիվ էր իր գլուխը ազատել և, փախչելով, ապաստանել էր Վրաստանի երկրում՝ Լևենդ ցեղի իշխող Ալեքսանդրեի մոտ, որտեղ բավական ժամանակ թաքնվելուց հետո, եկել էր Ասիթանե և բարեխոսական ոճով մի նամակ էր ներկայացրել։ Երբ ոչ ոք նրա երեսին չնայեց և ինքը ընդունելության չարժանացավ, ստիպված եղավ գնալ շահի որդի Հայդար Միրզայի մոտ։ Այդտեղ պնակալիզությամբ իր համար լավ պայմաններ ապահովեց։ Սակայն չկարողանալով այդ ամենը գնահատել և ունենալով իշխանության տիրանալու ցանկություն, նա նորից սպետության Ասիթանե ներկայացավ և փադիշահական գահին խնդրագիր ներկայացրեց։ Երբ նրա ինքնությունը պարզվեց, 999 թվականի ռեջեբ ամսի վերջին բանտարկվեց Եդի կուլեյում[33]...*

*(էջ 284—285)*

### ՆՈՒՅՆ ԹՎԱԿԱՆԻ ԴԵՊՔԵՐԻՑ

*Զիլկադե ամսի 19-ին, Շահ Աբբասի դեսպան Կարա Ահմեդ խանը գալիս է Ասիթանե, իր հետ բերելով փադիշահին ուղղված շահի նամակը։*

*Դեսպանը հայտարարում է, թե ինքը եկել է շահի կողմից խնդրելու, որ Ստամբուլի հաշտության պայմանագրով Թուրքիային անցած Նիհավենդի բերդը վերադարձվի Իրանին և պատանդ շեհզադե Հեյդար Միրզային նոր լալա [խնամող] նշանակվի։ Նրա խնդրանքները մերժվում են...։*

# ՍՈԼԱՔ ԶԱԴԵ

*Մուհամմեդ էֆենդի Սոլաք Զադեն XVII դարի թուրք պատմագիրներից է։ Նրա գրչին է պատկանում «Սոլաք Զադե Թարիխի» վերնագրով գիրքը, որն ընդգրկում է օսմանյան պետության պատմությունը՝ նրա հիմնադրումից մինչև 1053 (1643—1644) թվականը։*

*Սոլաք Զադեի պատմության հրատարակիչը գրքի առաջաբանում գրել է. «Մուհամմեդ էֆենդին այն ժամանակի օսմանյան լեզվի արտահայտություններով ու ոճով գրած «Թարիխ»-ում ընդգրկում է 699 թվականին Կոնիայում կործանված Սելջուկյան պետությունից հետո 700 թվականին հիմնված օսմանյան պետության մինչև 1053 թվականը տեղի ունեցած դեպքերը։ Գիրքը ճշտելու և հրատարակելու հնարավորություն մինչև հիմա չի եղել։ Սոլաք Զադեի պատմության ձեռագրի օրինակները շատ հազվագյուտ էին։ Միայն 1298 (1880—1881) թվականին հնարավոր եղավ այն տպագրել Ստամբուլում՝ Բաբը Ալիի մոտ գտնվող Մահմուդ բեյի տպարանում»։*

*Սոլաք Զադեի պատմությունը 773 էջ է։ Գրքի սկզբում տրված է բովանդակությունը։ Հետո գալիս է օսմանյան սուլթաններին ձոնված ոտանավորը՝ Օսմանից սկսած մինչև սուլթան Իբրահիմը (1049—1058)։*

*Սոլաք Զադեի պատմությունը գրված է տարեգրության ձևով։ Լեզուն պարզ է և հասկանալի. կան շատ բանաստեղծական տողեր, մի գրելաձև, որն, ինչպես հայտնի է, ընդունված էր այդ դարաշրջանի պատմագիր-տարեգիրների մոտ։*

*Սոլաք Զադեի պատմությունից քաղված և թարգմանված նյութերը վերաբերում են գլխավորապես թուրք-իրանական պատերազմներին և Աբազա փաշայի ապստամբության դեպքերին։ Թուրքական այլ աղբյուրներից այդ նույն դեպքերի մասին բավականաչափ նյութեր բերվել են սույն գրքում. այդ պատճառով Սոլաք Զադեի նյութերը կարող են կրկնություն համարվել։ Սակայն նկատի ունենալով այդ դեպքերի կարևորությունը մեր պատմության, հատկապես Երևանի պատմության համար, այստեղ չենք խուսափել այդ կրկնությունից, մանավանդ, որ թուրք պատմագիրները միմյանց կրկնելով հանդերձ, տալիս են նաև որոշ մանրամասնություններ, որոնք կարող են լուսաբանել մեր պատմության հետ կապված առանձին հարցեր։*

*Սոլաք Զադեն լրիվ ինքնուրույն և հեղինակավոր պատմագիր չէ, ինչպես Նայիման, Քյաթիբ Չելեբին և Սելանիկին։ Ինչպես պարզվում է նրա «Թարիխի» բովանդակության ուշադիր վերլուծումից, նա բավականաչափ օգտվել է մյուս թուրք պատմագիրներից՝ առանց այդ մասին հիշատակելու։ Այդ պատճառով Սոլաք Զադեի պատմությունից այստեղ բերվում են սահմանափակ քանակությամբ նյութեր։*

## «ԹԱՐԻԽԻ ՍՈԼԱՔ ԶԱԴԵ»

### 925 (1519) թվականի դեպքերից

#### ՋԵԼԱԼԻՆԵՐԻ ԱՊՍՏԱՄԲՈՒԹՅՈՒՆԸ

*Սրանից առաջ հիշված էր, որ աշխարհի ապավեն Նորին վսեմության փադիշահը ամբողջությամբ քննելով Անատոլիայի վիլայեթը, բոլոր կըզըլբաշ ստոր տարրերին սրո ճարակ է դարձել։ Այդ օրերին, մոլորյալների գլուխ կանգնած Ջելալի անունով մի անհավատ չարագործ, խելագար ձևանալով, ապուշի արտաքինով ու հագուստով, իր հավաքած ավազակների հետ միասին Բոզոքից փախել էր Թոկաթ։ Այդ երկրի մարդիկ նրան Աստծու ընտրյալ համարելով, հարգանք են ցույց տվել։ Բազմաթիվ ավազակներ հավաքվել են նրա շուրջը և սկսել զբաղվել գաղտնի խոսակցություններով և սատանայական գործերով։ Հայտարարելով, թե «Մենդին[1] այս քարայրից պետք է երևա, և ես նրան եմ սպասում», նա [Ջելալին] նման սուտ խոսքերով մարդկանց խաբելով, հետզհետե ավելացնում է իր շուրջը խմբվածների թիվը և պատրաստվում ապստամբության։ Ի վերջո հայտարարելով, թե «Ես ինքս եմ Մենդին», նա կոչ է անում և իր շուրջը հավաքում 20 հազարից ավելի հետիոտն ու հեծյալ, որոնք սկսում են հարձակվել այդ շրջանի գյուղերի ու գյուղաքաղաքների բնակիչների վրա և բռնություններ գործադրում։ Երբ այս մասին հայտնում է Բարձր սուլթանական գահին, Ֆերհադ փաշան՝ վեզիրի աստիճանով, սերդար է նշանակվում և զորեղ էմիրների հետ միասին ուղարկվում վերոհիշյալ ապստամբի դեմ... Չարագործ Ջելալին տեղեկանում է այդ մասին, բայց դիմադրության անկարող լինելով, կըզըլբաշների երկիրը փախչելու նպատակով շտապում է դեպի Սվազ։*

*Ջյուլկադերի[2] վիլայեթի իշխող Շահսուվար-օղլի Ալի բեյը, մոտ լինելով այդ սահմանին, տեսնում է, որ եթե ինքը Ֆերհադ փաշայի գալուն սպասի, ապա թշնամին կարող է փրկվել։ Ուստի նա իր թուրքմեն կտրիճներին անմիջապես հավաքելով, շտապ կերպով առաջ է շարժվում և նրանց ետևից հասնելով Ակշեհիրի մոտ՝ նրանց պարտության է մատնում, իսկ իրեն՝ Ջելալիին, կենդանի բռնելով, կտոր-կտոր անում։ Այդ մասին նա հայտնում է պետության կենտրոնին և արժանանում վսեմ փադիշահի շնորհին։ Ֆերհադ փաշան այս գործի պատճառով թշնամանում է Շահսուվար-օղլի Ալի բեյի հետ և ի վերջո այդ ազնվական մարդու ոչնչացման պատճառ դառնում...* *(էջ 414—415)*

## ԷԼԿԱՍ ՄԻՐԶԱՅԻ ՀԵՏ ՊԱՏԱՀԱԾ ԴԵՊՔԻ ՄԱՍԻՆ

*Այս հատվածում Սոլաք Զադեն մանրամասն խոսում է Իրանի Թահմասբ Շահի եղբոր՝ Էլկաս Միրզայի մասին, որը Շիրվանում իշխելու ժամանակ, գահի ժառանգման խնդրում թշնամանում է Շահի հետ, որոշ ժամանակ թափառաշրջիկ կյանք վարելուց հետո, գնում է Ղրիմ ու Քեֆեից[3] նավով մեկնում է Ստամբուլ։*

*Փադիշահի հրամանով Էլկաս Միրզային մի շքեղ պալատ է հատկացվում։ Փադիշահը Էդիրնեից Ստամբուլ վերադառնալիս, դիմավորում է մեծ շուքով և հանդիսավորությամբ։ Մի քանի օր հետո Էլկաս Միրզան նույնպիսի շքեղությամբ և փառքով ընդունվում է փադիշահի կողմից և արժանանում շքեղ և թանկարժեք նվերների։ Միրզան իր եղբոր մասին գանգատ է հայտնում փադիշահին և խնդրում արշավանք կազմակերպել դեպի Արևելյան երկրները...*

*Սկսվում են պատերազմի պատրաստությունները։*

*(էջ 507—509)*

## ՍՈՒԼԹԱՆԻ ՄԵԿՆՈՒՄԸ ԻՐԱՆ

Փադիշահը հարմար առիթ էր փնտրում կըզըլբաշ ժողովրդից վրեժ լուծելու համար։ Էլկաս Միրզայի փադիշահի մոտ ապաստանելը հազվադեպ առիթ համարելով, անմիջապես պատերազմի պատրաստվելու ֆերման տրվեց։ 955 (1549—1550) թվականի սեֆեր ամսի 18-ին, նախօրոք, որոշ ուժերով ուղարկվեց Էլկաս Միրզան, իսկ հետո ինքը փադիշահը մեծ ուժերով մեկնեց Արևելյան արշավանքի։ Կոնիայից, Կեսարիայից և Սվազից անցնելով նա հասավ Էրզրում և այնտեղից մեկնեց Ադիլջեվազ։ Վանի բերդը, որ մինչ այդ մտնում էր օսմանյան երկրի մեջ, կըզըլբաշները նորից կարողացել էին գրավել։ Այդ շրջանի բեյլերբեյի Ուլամե փաշան և Կարամանի բեյլերբեյի Փիրի փաշան ուղարկվեցին այդ բերդը ազատելու համար։

Ջեմազիել-ախըրի 14-ին, փադիշահը գրավեց Խոյը և մի շաբաթ հետո հասավ Թավրիզ։ Քաղաքի պաշտպանության համար կարևոր պատրաստություններ տեսան։ Էլկաս Միրզային Թավրիզի իշխող նշանակելու մտադրությունը փոխվեց, քանի որ իր ստացած շնորհների և բարության հանդեպ, նա հանդես եկավ իր ապերախտությամբ և Շիրվանում կատարած բռնություններով...

*Պատմագիրը Վանի դեպքերի մասին գրում է.*

Փադիշահը Թավրիզից մեկնեց Վան։ Ռեջեբ ամսի 10-ին, բազմահազարանոց բանակը կանգ առավ Վանի դաշտում։ Ռումի [Սվազ] և Կարամանի զինվորների հետ նախապես ուղարկված թընդանոթների համար տեղեր պատրաստվեցին, խրամատներ փորվեցին և բերդի նվաճման համար ձեռք առան բոլոր անհրաժեշտ մի-

չոցները։ Մոտ 10 օր թնդանոթներով, հրացաններով և նետերով պատերազմելուց հետո, բերդում պաշարված կըզըլբաշները բերդը հանձնեցին։ Այդ ամրակուռ բերդը կառուցող փորձված երկրաչափների նման մարդիկ խիստ հազվագյուտ են, և սրա վաստակավոր ճարտարապետները միայն իրենց երևակայությամբ են նկարել նրա պատկերը։ Այս բերդը Աջեմի երկրի բանալին է և այդ կողմերի ամրակուռ պարիսպը։ Մոլորյալ շահը պարծենալով ասում էր. «Քանի որ դեղին ժայռը[4] իմ հովարտակի տակ է գտնվում, օսմանյան սուլթաններից ի՞նչ վախ ունեմ»։ Բերդը գրավվեց և նրա կարիքները բավարարելուց հետո, նրա բեյլերբեյիությունը հանձնըվեց Անատոլիայի դեֆթերդար Իսքենդեր փաշային։

Մոտալուտ ձմեռվա ցրտերի և սառնամանիքների պատճառով նրանք մեկնեցին Դիարբեքիր և շաբան ամսի 25-ին կրոնի մարտիկները[5] անցնելով Ադիլջեվազից և Ախլաթից՝ կանգ առան Ամետի դաշտում։ Այդ ժամանակ, կարմրագլուխները շտապ կերպով շարժվելով դեպի Ադրբեջան, ավերեցին այս բարեշեն երկրի գյուղերն ու քաղաքներն, իսկ ժողովրդին ցիրուցան արեցին։ Երբ այդ լուրը հասավ վսեմաշուք փադիշահին, երրորդ վեզիր Ահմեդ փաշան, որոշ քանակությամբ աշխարհակալ զինվորներով, ուղարկվեց նրանց դեմ, որից հետո Նորին վսեմությունը նույնպես շարժվեց այդ ուղղությամբ։ Վերոհիշյալ Ահմեդ փաշան, երբ հասավ Քեմախի մոտ, «սերդեն գեչտիների»[6] սերդար Չերքես Օսման փաշան, շտապ հասնելով այդ զզվելիների ամբոխին, նրանց ցիր ու ցան արեց, հավաքեց նրանից ամբողջ ավարն ու հարստությունը, վերադարձավ Խարբերդ և միացավ իսլամական բանակին...

Էլկաս Միրզան հայտնելով փադիշահին, որ Սպահանի և Քաշանի կողմերում շահը մեծ քանակությամբ հարստություն է պահում, թույլտվություն է խնդրում այդ հարստությունը կողոպտելու համար։ Սոլաք Զադեի ասելով, Էլկաս Միրզան փադիշահի մոտ կորցրած լինելով իր հարգանքն ու վստահությունը, այնուհանդերձ թույլատվություն է ստանում։ Սակայն քրդական մի քանի խմբերից բացի, նրան զինվորական ուժեր չեն տրամադրվում։ Էլկաս Միրզան «երկնային պատուհասի նման» հարձակվում է Սպահանի վրա, կողոպտում և թալանում է շահի անթիվ հարստությունները, և դրանցից մի մասը՝ որպես նվեր, ուղարկում է փադիշահին։ Դրա փոխարեն Էլկաս Միրզային ուղարկվում է ակնազարդ մի սուր, թանկագին վրան և արքայական հագուստներ։ Այնուհետև, Էլկաս Միրզան կողոպտելով և ավերելով հայրենի երկիրը, շարունակում է իր «արշավանքը» Իրանում։ Զգուշանալով իր եղբայր Շահ Թահմասբից, նա քաշվում է Դուհիստան[7], ապա գալիս Շեհրի Զորի շրջանը, որտեղ և հիվանդանում է։ Շահ Թահմասբի մարդիկ անակնկալ կերպով հարձակվում են Միրզայի մարդկանց վրա և ցրում են նրանց, իսկ իրեն գերի են վերցնում և տանելով շահի մոտ, ըստ ավանդության, նրա քաշով ոսկի են ստանում։ Շահը Էլկաս Միրզային ուղարկում է Կահկահա բերդը, որտեղ, ըստ ավանդության, նրան թունավորում են։

...Իսլամ մյուջահիդները[8] գրավել էին Վանի բերդը։ Իր հերոսությամբ փառք ու պատիվ վաստակած և շահի վստահությանն արժանացած Դենբելլի Հաջի բեյ անունով մի ստոր արարած նշանակվեց Խոյի խան և մի երկու հազար ստոր, ավազակ կըզըլբաշներով ուղարկվեց Վանի վրա, այն հաշվով, որ զանազան խորամանկություններով կարողանա դիմադրություն ցույց տալ Վանի մյուջահիդներին։ Վերոհիշյալ Դենբելլի Հաջի բեյը, Վանի բեյլերբեյի Իսքենդեր փաշայից Վանի բերդը ուժով և բռնությամբ վերագրավելու նպատակով, գնում է Խոյ։ Իսքենդեր փաշան, տեղեկանալով այդ մասին, անսպասելի կերպով հարձակվում է այդ չարագործների վրա։ Քաջամարտիկ զինվորները բերդը ամեն կողմից պաշարում են և ուժեղ կռիվ մղելով՝ շուտով գրավում են այն։ Անվանի և հաղթական Իսքենդեր փաշան հիշյալ Դենբելլի Հաջիի և նրա մարդկանց գլուխները կտրել է տալիս և նրանց ունեցվածքն ու հարստությունը հափշտակում է։ Կտրված գլուխները նիզակների ծայրն անցկացնելով ուղարկում է Նորին վսեմություն փադիշահի բարձր Դերգահը։

(էջ 507)

ՎՐԱՍՏԱՆԻ ՍՐԲԱԶԱՆ ՊԱՏԵՐԱԶՄԻ ՄԱՍԻՆ

Փադիշահն այդ ձմեռն անցկացրեց Հալեպում։ Գարնանը, 956 (1549) թվականի ջեմազիել-էվվելի 10-րդ օրը, մեծ շուքով նա Հալեպից դուրս եկավ և մեկնեց դեպի Դիարբեքիր։ Նա ծրագրել էր այդտեղից արշավել Վրաստանի վրա։ Այս արշավանքի պատճառն այն էր, որ իրենց սեպ և անառիկ բերդերում, վրաց ապստամբ ցեղերը, մշտապես ապստամբական շարժման մեջ էին. երբեմն նրանք ապաստանում էին մոլորյալ շահի, երբեմն էլ օսմանյան փադիշահի մոտ։ Մի անգամ, նույնիսկ, երբ աշխարհակալ փադիշահը գնացել էր Բաղդադի արշավանքին, վրացիները օգտվելով առիթից, մեծ բանակ էին կազմել, անսպասելի կերպով հարձակվել էին Էրզրումի բեյլերբեյի Մուսա փաշայի վրա և սպանել նրան։ Անշուշտ, հարկավոր էր արշավել նրանց վրա և պատժել։ Երբ փադիշահը երջանկությամբ և փառքով Դիարբեքիր հասավ, Կարամանի, Էրզրումի և Սվազի բեյլերբեյիները՝ իրենց ձեռքի տակ եղած զեամեթի և սանջակների բեյերի[9], որոշ քանակությամբ արքունական ենիչերիների և ազաբ աղաների[10], երկրորդ վեզիր Ահմեդ փաշայի տրամադրության տակ դնելով, նրան Վրաստան ուղարկեցին։ Շաբան ամսի 19-ին, անվանի սերդարը շարժ-

վեց Վրաստանի Թորթում բերդի վրա և, մի քանի օր պաշարելուց հետո, գրավեց այն։ Իսկ շրջակայքում գտնվող Նեջահ և Մերխոյի բերդերի բնակիչները, սարսափահար եղած, բերեցին և հանձնեցին իրենց բերդերի բանալիները։ Վրաստանի երկրի բանալին համարվող Ակչա Հիսար բերդը Աստծու ողորմությամբ նույնպես նվաճվեց։ Վերջապես, թվով տասնհինգ բերդերից մի քանիսը գրավվեցին ուժով, մյուսներն էլ հպատակվեցին և հնազանդություն ցույց տվեցին։ Այդ բերդերը մեկական սանջակի հաշվով տրվեցին էմիրներին։

Դրանից հետո նրանք վերադարձան մեծ ավարով և փառքով։ Մեկ ամսից մի քիչ ավելի կարճ ժամանակում ձեռք բերվեցին մեծ հաղթություններ և նվաճումներ, իսկ իսլամական սահմանները մասամբ կարգի բերվեցին և ապահովվեցին... Սուլթանն ու բանակը ամսի 10-ին մեկնեցին Ստամբուլ։

## ՆԱԽԻՋԵՎԱՆԻ ՈՒ ՇԱՎԱՆՔԻ ՄԱՍԻՆ

Ամեն անգամ, երբ վսեմաշուք և երջանիկ փադիշահը մեկնում էր Արևելք, խարդախ Շահ Թահմասբը, իր սովորության համաձայն, փախչում էր և թաքնվում, իսկ երբ փադիշահը վերադառնում էր Ռումի կողմերը, մոլորյալ շահը, բռունցք և ուժ ցույց տալով, հարձակվում էր սահմանամերձ շրջանի բնակիչների ու ռայաների վրա և մոտակա բերդերը էմիրներից վրեժխնդիր լինում։ Վնաս պատճառելու հետամուտ լինելով նա մշտապես թափառում էր այդ կողմերում և առիթ ներկայանալու դեպքում՝ կողոպտում էր ու ավերում։ Մի օր, անակնկալ կերպով հարձակվեց Արճեշի բերդի վրա և ամեն կողմից պաշարեց։ Բերդի վալին, քուրդ Իբրահիմ բեյը, որը Ռուստեմի նման քաջ փահլևան էր, բերդից թնդանոթներով, հրացաններով ու այլ զենքերով պատերազմեց կըզըլբաշ ամբոխի դեմ և նրանց ցիրուցան արեց։ Տեսնելով, որ բերդի գրավումը հնարավոր չէ, շահը գնաց Ադիլջևազի վրա։ Նրա վալին՝ Սինան Ջադե Մուստաֆա բեյը, որը նույնպես անվանի զորավար և վերին աստիճանի քաջակորով տղամարդ էր, մինչև անգամ բերդի դռները փակելու կարիքը չզգալով, պաշարված ռազմիկների մի խմբի հետ թշնամու դեմ դուրս եկավ։ Ռազմիկները ուժեղ և կատաղի կռվում այնպիսի խիզախություն ցույց տվին, որ անգամ երկընքի հրեշտակները փառաբանեցին նրանց։

Անիծյալներն այս անգամ ևս պարտված և կորուստներով վերադարձան ու գնացին Ախլաթի բերդի վրա, որի պահապանների

մի մասը ցրված էր։ Բերդում պաշարվածները բերդը պաշտպանելու համար ջանք չխնայեցին, սակայն կըզըլբաշ մի քանի խռովարար և ստոր արարածներ բերդ էին ուղարկել սուտ և կեղծ նամակներ, որոնց մեջ գրել էին. «Ձեր փադիշահը իր զինվորներով Ռումելիի սահմանում է գտնվում։ Մոտ ժամանակում դուք օգնություն ստանալ չեք կարող, այնպես, որ ձեր հոժար կամքով բերդը մեզ հանձնեցեք. դրանով դուք կփրկվեք։ Իսկ եթե համառեք՝ ձեր վիճակը շատ ծանր կլինի։ Թողեք համառությունն ու թշնամությունը»։ Այսպիսի խորամանկությամբ նրանք բերդը գրավեցին, ամբողջ ժողովրդին սրի մատնեցին, բերդի պարիսպները քանդեցին և հողին հավասարեցրին։ Երբ այս դժբախտ լուրը հասավ Արճեշ, այնտեղ գտնվողների և Իբրահիմ բեյի կողմնակիցների միջև առաջացավ թշնամություն, որի հետևանքով Իբրահիմ բեյին անսպասելի կերպով սպանեցին և բերդը թողնելով, ցրվեցին ու գնացին։ Կըզըլբաշները այստեղ էլ քարը քարի վրա չթողեցին և բերդը հողին հավասարեցրին։

Դրանից հետո Շահը իր որդուն՝ Իսմայիլ Միրզային, մի քանի հազար կըզըլբաշ զինվորներով, ուղարկեց Էրզրումի բերդի վրա...

*Սոլաք Զադեն մանրամասն նկարագրում է Էրզրումի վալի Իսքենդեր փաշայի և կըզըլբաշների միջև տեղի ունեցած խիստ կատաղի և արյունահեղ պատերազմը։ Նրա ասելով, կըզըլբաշները իրենց գերազանց ուժերի և խորամանկության շնորհիվ հաղթող են հանդիսանում։ Մի քանի հայտնի բեյեր սպանվում են, իսկ Էրզրումի աղաների մի մասը գերի է ընկնում։ Իսքենդեր փաշան, որը բերդից դուրս գալով, անձամբ մասնակցում է ամենակատաղի մարտերին, նորից ապաստանում է Էրզրումի բերդում։ Պատմագիրը գրում է. «Իսքենդեր փաշայից բացի, ուրիշ որևէ սերդար նման կռիվ իր երազումն անգամ չէր կարող տեսնել»։ Փադիշահը հատուկ նվիրական գրությամբ Իսքենդեր փաշային շնորհավորում և նվերներ է ուղարկում։*

(էջ 518—520)

## 960 (1552) թվականի դեպքերից

*Պատմագիրը մանրամասնորեն նկարագրում է Իրանի արշավանքի հետ կապված դեպքերը։ Հալեպում ձմեռելուց հետո, 960 թվականի ջեմազիել-էվվելի 5-ին, փադիշահը մեծաքանակ բանակով առաջ է շարժվում և անցնելով Դիարբեքիրից ու Էրզրումից, շաբան ամսի 4-ին իջևանում է Կարսի դաշտում։ Ամբողջ ճանապարհին, երկրի բոլոր կողմերից, բեյլերբեյիները իրենց բանակներով միանում են փադիշահական բանակին։ Իրենց բանակներով գալիս են նաև Քուրդիստանի հայտնի էմիրները։*

*Կարսի դաշտից Շահին՝ «նախազգուշացնելու և հորդորելու» նպատակով, հատուկ փադիշահական գրություն է ուղարկվում։*

*Այդ երկարապատում նամակում օսմանյան սուլթանը Շահին համարում է*

«անհավատ», «մոլորյալ», «իսլամական ուղիղ և ճշմարիտ դավանանքից հեռացած» և այլն։ «Հիմա այս վեհանձն [մերզիլք] կռվում,— ասված է նամակում,— նամարդությամբ, կնոջ նման ասպարեզից փախչելն ու թաքնվելը անվայել է քեզ...»։ Ապա սպառնում է, որ դիմադրության դեպքում, իր [շահի] և իր մոլորյալ ավազակներից կազմված բանակի վերջնական ոչնչացումը անխուսափելի է...

Այդտեղից, շաբանի 15-ին, նրանք շարժվում են դեպի Երևան։

...Երևան քաղաքը իսկապես Իրան երկրի մարմնի հոգին էր համարվում։ Այստեղ, շահի որդու և նշանավոր խաների ու սուլթանների շքեղազարդ, ոսկեզօծ պալատները կրակի մատնվեցին, այգիներն ու պարտեզները հողին հավասարվեցին, բուերի, ագռավների բույնի վերածվեցին։ Այդ ամսի 21-ին Նախիջևանի դաշտը բանակատեղիի վերածվեց։ Այստեղ «աքընջիների» խմբին[11] թույլատրվեց կործանել և թալանել կարմրագլուխների տները։ Քսան օր շարունակվող ավերիչ կրակը հողին հավասարեցրեց վարդանման, գեղեցիկ, բարեշեն տներն ու ապարանքները և քարը քարի վրա չթողեց։ Հիշյալ աքընջիների ձեռքն անցած ավարը այնքան անչափ ու անսահման էր, որ չի կարելի նկարագրել։ Աշխարհակալ, վսեմաշուք փադիշահի շուրջը հավաքված բազմահազար զինվորների հարձակումից մոլորված շահը, աղվեսի նման այնպես էր ապաստանել սեպաձև լեռներում, որ նրանից ոչ մի նշան կամ հետք չէր երևում։ Երբ լուր ստացվեց, որ նա բոլորովին մտադիր չէ որևէ հարձակում ձեռնարկել և կամ որևէ կողմից հանդես գալ, նրա վրա շարժվող իսլամ-ղազիների[12] առջև չէին կարող արգելք հանդիսանալ անգամ քարերն ու լեռները...

Այդքանով բավականանալով, փադիշահը նպատակահարմար է համարում վերադառնալ։ Ռամազան ամսի 7-ին իջևանում է Բայազիտ բերդի մոտ և հետո Հասան Կալեում։ Այստեղ Վանի բեյլերբեյիին և Քուրդիստանի էմիրներին հրաման է տրվում վերադառնալ իրենց տեղերը։ Շահը իր մարդկանցից Շահ Կուլի անունով մեկին, հաշտության և խաղաղության խնդրանքով ուղարկում է փադիշահական բանակ։ Փադիշահը պատգամավորին ընդունում է մեծ պատվով ու շուքով։ Շահը իր նամակում, ի միջի այլոց, հայտնում է, որ «Ջալդրանում իմ հայր Շահ Իսմայիլը սխալվել էր և ներկայումս՝ հրացանով ու թնդանոթով, պատերազմի կրակի մեջ մտնելն անիմաստ է...»։

Փադիշահը պատասխանում է Շահի նամակին և սպառնում ձեռնարկել արևելյան նոր արշավանքի։ Շահը սարսափահար է լինում և նորից հատուկ գրությամբ, մեծաքանակ ու թանկագին նվերներով պատգամավոր է ուղարկում և հայտնում է հաշտության իր հաստատ մտադրությունը։ Երբ փադիշահը ժամանել էր Ամասիա ձմեռելու համար, այնտեղ է գալիս շահի պատգամավորը և ընդունվում մեծ պատվով ու շուքով։ Հաշտության պայմանների մասին համաձայնության գալուց հետո հաշտության պայմանագիրը հաստատվում է փադիշահի կողմից և ուղարկվում շահին։ Փադիշահը էյալեթների զորամասերն ուղարկում է իրենց տեղերը և ինքը վերադառնում է Ստամբուլ։

(էջ 525—532)

* * *

*Կանունի Սուլթան Սուլեյմանը վերադառնալով Նախիջևանի արշավանքից և երկարատև բանակցություններ վարելուց ու զինադադարից հետո, 962 (1554—1555) թվականին, Իրանի և Օսմանյան պետության միջև վերջապես հաշտության պայմանագիր է կնքվում։ Այդ պայմանագիրը երկու պետությունների միջև կնքված հաշտության առաջին պայմանագիրն էր, որի համաձայն հովանավորություն պետք է ցույց տրվեր Իրանի հաջիներին։ Վերջինս պարտավորվում է չխախտել խաղաղությունը, իսկ օսմանյան պետությունը՝ հավատարիմ մնալ պայմանագրին։*

*Այս հաշտությամբ բավականին երկար ժամանակ դադարում են Իրանի և Թուրքիայի միջև շարունակվող պատերազմական գործողությունները։*

## 993 (1585) թվականի դեպքերից

### ԹԱՎՐԻԶԻ ԱՆԱՐԳԵԼ ԳՐԱՎՈՒՄԸ

*Օսման փաշան Աստծուն ապավինած, իր հաղթական զինվորներով հասավ Թավրիզի ընդարձակ դաշտավայրն ու դուրս եկավ կըզըլբաշ զինվորների դեմ։ Պատերազմի ու սպանության կրակը բորբոքվեց և այնպիսի մարտեր տեղի ունեցան, որ նկարագրել անհնար է։ Թեև Մուրադ փաշան գերի ընկավ, սակայն կըզըլբաշները սրո ճարակ դարձան։ Մեծ թվով խաներ ու սուլթաններ սպանվեցին և Աջեմի զինվորները պարտության մատնվեցին։ Թավրիզ քաղաքը իսլամական բանակի ձեռքն անցավ, գրավվեց և իսլամական երկրին միացվեց։ Ներքինիների խմբից մեկը, Ջաֆեր փաշան, բավական թվով իսլամական զինվորներով նշանակվեց Թավրիզի պահապան։ Սա պետք եղածին պես ամրացրեց բերդը. Նրա պաշտպանության համար նշանակված զինվորների հետ մտավ բերդը և այնտեղ հանգստացավ։ Սակայն պատերազմից հետո Օսման փաշայի առողջությունը խանգարվեց, նա ծանր կերպով հիվանդացավ և մի քանի օր հետո մահացավ...։*

*Թավրիզի անարգել գրավման առթիվ Ստամբուլում երեք օր ու գիշեր հրավառություն կատարվեց, բայց քանի որ կըզըլբաշների նկատմամբ վստահություն չկար, բեյլերբեյիներին անհրաժեշտ հրահանգներ տվեցին և սահմաններն ամրացրին։ Գարնանը նորից պատրաստություններ սկսեցին Աջեմի դեմ արշավելու համար։ Ֆերհադ փաշան նորից օսմանյան հաղթական բանակի սերդար է նշանակվում և մեծաքանակ զինվորական ուժերով շարժվում դեպի արևելյան սահմանը...*

*...Իսլամական բանակը, կըզըլբաշների հեռու և մոտ վայրերի վրա հարձակվելով, գրավեց մի շարք երկրներ. կըզըլբաշների մի*

մասը սրո ճարակ դարձավ, մի մասն էլ գերի ընկավ։ Վրաստանցի Սիմոն և Ալեքսանդրե խաներին նախազգուշական գրություններ ուղարկվեցին։ Թեմուր Կափու [Դերբենդ], Շիրվանի վիլայեթ, Կարս, Թիֆլիս, Երևանի բերդ և օսմանյան տիրապետության տակ ընկած քաղաքներ ուղարկվեցին զորավոր միրիմիրաններ, պահպանության զինվորներ և բոլոր կողմերն ամրացնելու համար մեծ ջանքեր գործադրեցին։

(էջ 609—613)

## 1000 (1591—1592) թվականի դեպքերից

### ԳԵՆՋԵԻ ԳՐԱՎՈՒՄԸ ԵՎ ՀԱՇՏՈՒԹՅԱՆ ԿՆՔՈՒՄԸ

Նախորդ տարին, երբ հավաքվեցին հաղթական զինվորները, անվանի սերդարն իր փառապանծ բանակով գնաց Գենջեն ու Բերդան նվաճելու և այդ շրջաններում եղած կըզըլբաշներին սաստելու։ Գենջեն նրա հպատակների ու ռայաների հետ միասին իր տիրապետության տակ առնելուց հետո, Անատոլիայի էյալեթի իշխող Խադիմ Հասան փաշան, որը հետագայում սադրազամ նշանակվեց և ապա սպանվեց, վեզիրության աստիճանով ստացավ Գենջեի էյալեթը և այդ երկրում մետաքսի բերքի հարստությունը գրավելու համար նշանակվեց դեֆթերդար։ Երեքական տարի ծառայելու պայմանով բավականաչափ կուլեր [զինվորներ] գրանցեց և այնտեղ թողեց։ Այդ մետաքսի եկամտից. այնտեղի կուլերի ռոճիկներն ու ծախքերը վճարելուց հետո, ամեն տարի հավասարապես 150 բեռ[13] ակչեի արժեքով մետաքս էր ուղարկվում արքունական գանձարանը։

Գենջեի գրավումից հետո, դեպի Ռեշտ նահանջած Աջեմի շահը՝ իր եղբոր որդի Հայդար Միրզային պատանդ տալով, մտադրվեց հաշտություն կնքել։ Աշխարհի ապաստան փադիշահն էլ այդքան երկար տարիներ տևած արշավանքներից հոգնած լինելով և իսլամական զինվորներին երկարատև շարժման մեջ պահելը այլևս անտեղի համարելով, գթաց նրանց ծանր վիճակին. մյուս կողմից էլ ռայաների անվտանգությունն ու հանգիստը ապահովելու նպատակով, սերդար Ֆերհադ փաշային ֆերման տրվեց, որ [շահի] հաշտության առաջարկությունը ընդունի և իբրև պատանդ տրված Հայդար Միրզային վերցնի ու վերադառնա։ Սերդարը հաշտություն կնքելով և Հայդար Միրզային վերցնելով, հիջրեթի 1000 թվականին եկավ պետության մայրաքաղաքը։ Տեղի ունեցավ մեծ հանդի-

*սավորություն, և [շահի] նամակներին համաձայնության պատասխաններ ուղարկվեցին...*

*Վերոհիշյալ Միրզայի բոլոր կարիքները բավարարվեցին. դեպի Վեֆայի հրապարակը[14] նայող Փերթև փաշայի պալատում նրան բնակարան հատկացվեց և ծառայողներ նշանակվեցին... Հայդար Միրզան որոշ ժամանակ հետո մահանում է ժանտախտից։ Նրան թաղում են մի հարմար վայրում և գերեզմանի վրա գիշերով կամար են կառուցում։ Քիչ ժամանակ հետո, ռաֆըզի ավազակները գերեզմանը բաց են անում և Միրզայի մարմինը փախցնում են իրենց երկիրը...*

*(էջ 624—625)*

## 1031 (1621—1622) թվականի դեպքերից

### ԱԲԱԶԱ ՓԱՇԱՅԻ ԴԵՊՔԵՐԻ ՄԱՍԻՆ[15]

*Երբ Կոջա Մուրադ փաշան պարտության մատնեց Ջանփոլադին, Աբազա փաշան խազինեդար[16] էր։ Այդ կռվում Աբազան գերի ընկավ, սակայն ենիչերիների Աղայի խնդրանքով Մուրադ փաշան նրան ազատ արձակեց և իր մոտ վերցնելով, հոգ տարավ նրա կրթության մասին։ Հետագայում, երբ Խալիլ փաշան ծովակալ նշանակվեց, Աբազայի ծառայությունը գնահատելով, նրան որդեգրեց և ծովի բեյություն տվեց։ Իսկ երբ Խալիլ փաշան ծովակալությունից Արևելյան արշավանքի սերդար նշանակվեց, Աբազային իր հետ տարավ և բեյլերբեյի նշանակեց։ Ի վերջո, Աբազան նշանակվեց Էրզրումի բեյլերբեյի։ Աբազան ամուսնացավ մեծ վեզիր Գյուրջի Մուհամմեդ փաշայի եղբոր աղջկա հետ... Այդ ժամանակ Էրզրումում եղած ենիչերիների մեծ մասը եկավ Ստամբուլ և սագրազամ Մուհամմեդ փաշային հայտնեցին, որ [Աբազա փաշան] «Մեզ բոլորիս բերդից դուրս հանեց և բացի այդ, մտադիր է Կարսի և Ախալցխայի բերդերում գտնվող ենիչերիներին ևս դուրս հանել»։ Ծովակալ Խալիլ փաշային էլ հայտնեցին, որ «Քո որդին ապստամբության է պատրաստվում»։ Խալիլ փաշան Աբազային գրություն ուղարկեց և հայտնեց. «Բերդից դուրս արի և եթե ինձ հարգում ես, իմ խոսքին մի հակառակի»։*

*Սեֆեր ամսի 19-ին, ուրբաթ օրը, ենիչերիների Աղա Մուստաֆա փաշան, գնալով մեծ վեզիր Մուհամմեդ փաշայի մոտ, հայտնեց, որ ենիչերիների խումբը ըմբոստացել է և ասում են, որ*

«Արազա փաշան ապստամբել է, մեր պահապան ընկերներից մի մասին բերդից դուրս արել և մեր կարող ընկերներին էլ բանտարկել։ Աբազա փաշան Ստամբուլում մեծ վեզիր Գյուրջի Մուհամմեդ փաշայի և ծովակալ Խալիլ փաշայի վրա հենվելով, չի ցանկանում փադիշահի բերդից դուրս գալ և համառում է։ Գյուրջի Մուհամմեդ փաշան և ծովակալ Խալիլ փաշան հովանավորում են նրան, քանի որ Աբազա փաշան ներկայումս մեծ վեզիր Գյուրջի Մուհամմեդ փաշայի եղբոր, Էրզրումի Հյուսեին փաշայի աղջիկն է առել, այդ պատճառով էլ վերջինս պաշտպանում է Աբազա փաշային։ Սպաները միջամտեցին, կռիվը արգելեցին»։ Երբ ենիչերիների Աղան փաշայի դռնից դուրս գալով ձի էր հեծնում, ճանապարհին հանդիպեց ծովակալ Խալիլ փաշան։ Երբ սա անցնում էր ենիչերիների մոտից, Էրզրումի բերդից արտաքսված և ունեցվածքները հափշտակված մի քանի ենիչերիներ առաջ անցնելով, Խալիլ փաշային ասացին. «Որդիդ՝ Աբազա փաշան, ապստամբել է։ Մեր նկատմամբ նրա կատարած դավաճանությունը մենք հայտնեցինք մեծ վեզիր Մուհամմեդ փաշային. նա անտարբեր մնաց, և այդ ամենը ի պատիվ քեզ։ Աբազան քեզ վրա է հենվում և նման գործեր է կատարում»...

Քեթխուդան և մյուս աղաները ենիչերիներին ցրեցին և Խալիլ փաշայի համար ճանապարհ բացեցին... Հաջորդ օրը ենիչերիները հավաքվելով հայտարարեցին. «Աբազա փաշան անպայման պետք է սպանվի։ Մեր ընկերների նկատմամբ նրա կատարած դավաճանությունը մեզ էլ է վերաբերում։ Նա փադիշահի բերդի պահպանման համար նշանակված ընկերներից մի քանիսին բերդից դուրս է արել և սեկբան գրելով[17] է զբաղված»։ Օջաքի սպաները միջամտեցին և կռիվը դադարեցրին։

Սեֆեր ամսի 21-ին փադիշահը գրեց մի նվիրական հրովարտակ, որով Էրզրումի բեյլերբեյիին հայտնում էր, թե «Աբազա փաշան պաշտոնազուրկ է եղել։ Այդ գործում Խալիլ փաշան մեղավոր չէ...»։ Այդ ամսի վերջին, Էրզրումի բեյլերբեյի Աբազա փաշայի ապստամբությունը քննելու համար գանգատավորներ եկան։ Նրան պաշտոնազուրկ արեցին և նրա փոխարեն նշանակեցին Նեսուհ փաշայի քեթխուդա Մուստաֆա փաշային։ Աբազա փաշան դիվան կազմեց, Էրզրումի բերդի բոլոր բնակիչներին՝ թե՛ մեծերին և թե՛ ստորադասներին դիվանի կանչեց և հարցրեց. «Իմ բեյլերբեյիու-

*թյունն եք ուզում, թե՞ ուրիշինը»։ Բոլորը վախից պատասխանեցին. «Մենք քեզնից բացի ուրիշ մարդ չենք ուզում, քեզնից գոհ ենք»։ Այս կերպ քաղաքի ժողովուրդը իր գոհունակությունը հայտնելով, իրենց կնիքով գրությունը կնքեցին և Ստամբուլ ուղարկեցին։ Սրա պատճառն այն էր, որ Աբազա փաշան իր հավաքագրած սեկբաններից ամեն մի տան վրա հինգական հոգի բաժանելով, տան տերերին պարտավորեցրել էր ապահովել նրանց ուտելիքն ու խմելիքը և այդ պատճառով էլ նրանք մյուսելլիմի[18] ներկայությամբ վկայություն տվեցին այն մասին, որ նա [Աբազա փաշան] լավ մարդ է։ Արաղա փաշան մյուսելլիմին ասաց. «Ստամբուլից ստացա մի քանի նամակ, որոնք հայտնում են, թե Ստամբուլում գտնվող ենիչերիներն ու սիփահիները ապստամբություն են բարձրացրել և ո՛չ փադիշահին են լսում ու ո՛չ էլ մեծ վեզիրին։ Դու այդ կողմերում զինվորներ հավաքագրիր։ Անհրաժեշտ է դրանց վռնդել»։ Նա պատասխանեց. «Ես իմ կամքով զինվորներ հավաքագրել չեմ կարող»։ [Աբազա փաշան] մյուսելլիմին թույլ չտվեց վիլայեթը գրավելու և ինքը զբաղվեց կանոնավոր զորքեր պատրաստելու գործով, որպեսզի, եթե Ստամբուլից իր դեմ զինվորներ ուղարկվեն, կարողանա պատերազմել...*

(*էջ 725—729, 730, 734*)

* * *

*Այդ ժամանակ կըզըլբաշները, Բաղդադի բերդը ամրացնելով, այնտեղ մեծ քանակությամբ զինվոր էին կուտակել։ Ինքը՝ շահը անձամբ, անչափ զինվորներով գտնվում էր այդ կողմերում։ Բերդի պահպանության համար ծառայող բերդապահները ապահովված էին պաշարով և զինվորներով, այնպես որ բերդի գրավումը անհնարին էր, իսկ շահի բանակի հաղթությունը՝ հավանական։ Իսլամական զինվորներն ինը ամիս անցկացրին այսպիսի պայմաններում...*

*Երբ օսմանյան բանակը Բաղդադը գրավելու համար պատրաստություններ էր տեսնում, Աջեմի սահմանի քաղաքներից լուրեր ստացվեցին, որ կըզըլբաշները պաշարել են Ախալցխայի բերդը։ Այնտեղից օգնություն էին խնդրում։ Քանի որ գարունը եկել էր, կարելի էր սպասել հաղթական բանակի շարժմանը։ Ամենից առաջ, Ախալցխայի բերդի ազատագրմանը հասնելու համար Դիշլենգ Հյու-*

սեխ փաշան նշանակվեց մեծ վեզիր, իսկ Խալիլ փաշան, սերդար։ Դիարբեքիրի էմիրների էմիր Մուհամմեդ փաշան, Սվազի բեյլեր-բեյին և մի քանի այլ բեյլերբեյիներ նույնպես նշանակվեցին, իսկ Էրզրումի բեյլերբեյի Աբազա փաշային ուղարկվեց մի նամակ, որով հայտնվում էր. «Դու էլ Հյուսեին փաշայի և մյուս բեյլերբեյիների հետ պետք է գնաս Ախալցխայի ազատագրմանը, ես էլ ձեր հետևից կհասնեմ։ Դուք ինձնից առաջ ճանապարհ ընկեք»։ Հիշյալները Էրզրում հասան։ Դիշլենգ Հյուսեին փաշան մեծ սերդար Խալիլ փաշայի նամակը հանձնեց Աբազա փաշային։ Աբազա փաշան նրանց բանակները տեղավորեց բերդից դուրս, բաց դաշտում, Դիշլենգ Հյուսեին փաշային խնջույքի պատրվակով բերդը տարավ և այդ գիշերը նրան սպանելով, դիակը անհետացրեց։ Հաջորդ օրը, որսի գնալու պատրվակով, մեծ թվով զինվորներով նա Էրզրումի բերդից դուրս եկավ և վերոհիշյալ բեյլերբեյիների բանակների առջևից անցնելով, կողոպտեց նրանց անասուններն ու սարքերը և ունեցվածքը ոչնչացրեց։ Խեղճ բեյլերբեյիները իրենց մերկ ձիերն հեծան և եկած ճանապարհով շտապ ետ գնալիս, տեսան, որ սերդար Խալիլ փաշան գալիս է դեպի Էրզրում։ Բեյլերբեյիներին տեսնելով նա հարցրեց. «Սա ի՞նչ վիճակ է»։ Նրանք պատասխանեցին «Ի՞նչ պետք է լինի, Աբազա փաշան Դիշլենգ Հյուսեին փաշային ոչնչացնելուց հետո, մեզ այս վիճակին ենթարկեց։ Մենք էլ մեր գլուխը փրկելու համար մի կերպ դուրս եկանք և գնում ենք»։ Երբ նրանք մանրամասն բացատրեցին իրերի վիճակը, Խալիլ փաշան իր տրամադրության տակ եղած զինվորներով և փախչող բեյլերբեյիների զինվորներով շարժվեց դեպի Էրզրում, պաշարեց բերդը և նամակ ուղարկելով Աբազա փաշային, նրան հպատակության կոչ արեց ու շատ խրատներ տվեց։ Սակայն Աբազա փաշան ոչինչ չլսեց և բերդում փակվելով, որոշեց շարունակել կռիվն ու պատերազմը։ Նա հպատակությունը անհնարին էր համարում։ Էրզրումի բերդը շատ ամրակուռ և անառիկ լինելով, նրա գրավումըն ու նվաճումը դժվար էր։ Այդ տարվա արտակարգ դեպքերը թույլ չտվին, որ [օսմանյան բանակը] Էրդեբիլի վրա գնա և այդ բերդը գրավի, ինչպես նախատեսված էր։ Աբազայի դեմ մղված կռվում Դիշլենգ Հյուսեին փաշան և մի քանի այլ էմիրներ թշնամու սրով սպանվեցին և ոմանք էլ գերության շղթաներով կաշկանդվեցին։ Մեծ սերդար Խալիլ փաշան այս դեպքերի պատճառով շատ վշտացավ և Աջեմի երկիրը թողնելով, անցավ Էրզրումի պաշարման գործին։

Սակայն բերդը գնդակոծելու համար նա միայն մի թնդանոթ

ուներ, որ բերել էր Վրաստանի էմիրներից մեկը՝ Մաղրավ* անունով անձը։ Անկարելի էր Էրզրումի նման ամրակուռ բերդը ավերել մեկ-երկու թնդանոթով, իսկ բերդի շատ խոր խանդակներն (խրամներ) անցնել և լաղըմներ (կոյուղի) փորելն անհնարին էր։ Մյուս կողմից շրջակա քաղաքներից թնդանոթներ բերելու և հողը դուրս թափելու համար եղանակը աննպաստ էր։ Ձմեռվա ցրտերը մոտ լինելու պատճառով նրանք ստիպված եղան բերդի պաշարումից հրաժարվել և գնալ ձմեռելու վայրերը։ Ճանապարհին, սաստիկ սառնամանիքի պատճառով, իսլամական զինվորներից շատերի ձեռքերն ու ոտքերը սառեցին և վիրահատները ստիպված եղան կտրել դրանք։

Երբ փադիշահը այդ մասին տեղեկություն ստացավ, անմիջապես վեզիրներին և ուլեմաներին[19] իր մոտ խորհրդակցության հրավիրեց։

Որոշվեց նոր ուժեր և անհրաժեշտ ռազմամթերք ուղարկել Աբազա փաշայի ապստամբական շարժմանը վերջ տալու համար...։

1037 (1627—1628) թվականին բանակը մեծ պատրաստություններով մեկնում է Ստամբուլից։ Ճանապարհին լուր է ստացվում, որ Աբազա փաշան դիմել է Շահ Աբբասին և խնդրել, որ քանի դեռ սերդարը իսլամական բանակով Էրզրում չի հասել, շտապ կարգով Էրզրում ուղարկի որոշ քանակությամբ կըզըլբաշ զինվորներ և մի քանի խաներ, որպեսզի ինքը Էրզրումի բերդը նրանց հանձնի, և դրանից հետո ինքը շահին ներկայանա և նրան հպատակություն հայտնի։ Իսկ սերդարի Էրզրում հասնելուց հետո բերդի հանձնումը անհնար կլինի։ Շահ Աբբասը տեղեկացրել էր, որ «մի քանի հազար զինվորներ ու զորեղ խաներից մի քանիսը արդեն նշանակված են և մոտ ժամանակներս գալու են Էրզրում»։ Այս պատճառով սերդարը, զիլհիջջե ամսի 26-ին, մի քանի հազար հեծյալ ենիչերիներից և այլ խմբերից շտապ կարգով ընտրեց գործին օգտակար զինվորներ և առույգ ձիեր։ Նրանց հանձնարարեց թնդանոթների փոխադրությունը և ասաց. «Երբ ես Էրզրում հասնեմ, դուք էլ թնդանոթները թռչունի նման թռցնելով տեղ պիտի հասցնեք, այնպես որ, եթե ինձնից մի քայլ անգամ ետ մնաք, ձեզ բոլորիդ կսպանեմ. ձեզ փրկություն չկա»։ Քաջամարտիկ զինվորները շտապ մեկնեցին և հաջորդ օրը, կեսօրին, Աստծո ողորմու-

* Պատմագիրը (կամ հրատարակիչը) Մաղրավ անունը աղավաղել ու գրել է Մաղուլ (?)։ Դա վրաց ազգային հերոս Գ. Սաակաձեն է, որին թուրք պատմագիրները Մաղրավ են կոչում։

թյամբ Հասան էրզրումի շրջակայքը։ Թնդանոթները բերդի առաջ դասավորելու համար նշանակված զինվորները, թնդանոթները թողնելով, նույն ամսի 9-ին բերդի առաջ տեղավորեցին։ 1038 (1628—1629) թվականի մուհարրեմ ամսի 7-ին ենիչերիները խրամատ մտան և հաջորդ օրը սկսեցին գնդակոծել։ Բերդի պարիսպների տակ մի քանի լաղըմներ փորեցին։ Սակայն անհնար էր քանդել ու ավերել այդ ամրակուռ բերդը, անդամ նրանից մի քար պոկել, հատկապես շատ խորն էր նրա շուրջը փորված խրամը։

Բերդում պաշարված Աբազա փաշան, տեսնելով մեծ սերդարի պատրաստությունները, նրա անհագին ռազմամթերքը և զգալով, որ ինքը փրկություն չունի, շատ վախեցավ և հատկապես տեսնելով, թե ինչպես են բերդը պաշարող հաղթական հոչակ վայելող ղազիները հրացանով և թնդանոթով անընդհատ կռվում, իր սրտում ահ ու սարսափ զգաց։ Մեծ սերդարը Աբազայի մոտ եղած ստոր արարածներին լուր ուղարկեց և խրատական խոսքերով հպատակության ու հանձնվելու կոչ արեց. «Ինչո՞ւ եք ապստամբում վսեմաշուք փադիշահի դեմ։ Եթե ձեր նպատակը դիրլիք[20] ստանալն է, եկե՛ք, ձեր ցանկացած դիրլիքին արժանացե՛ք։ Ձեզ նման քաջերին անվայել է մնալ ապստամբ։ Մասավանդ դուք գիտեք, որ ապստամբությունը վերջ չունի։ Մինչև հիմա ո՞վ է կարողացել օսմանցիի հետ չափվել, որ Աբազան չափվի։ Հետո, երբ նա [Աբազա փաշան] մեր ձեռքն անցնի, ձեր վիճակը հայտնի կլինի։ Փադիշահի ֆերմանի համաձայն ձեր ոճիրները պետք է ներվեն և ձեր պահանջած դիրլիքները կստանաք։ Իմ նպատակն է ձեզ խրատ տալ, թե չէ հետո՝ զղջումը օգուտ չի տա»։ Այսպես, շատերը մեծ սերդարի հողը համբուրեցին և շնորհի արժանացան...

Աբազայի զինվորների թիվը պակասեց, մնացածներն էլ երկար ժամանակ պաշարված մնալով, տառապում էին և ցանկանում հպատակություն ցույց տալ մեծ սերդարին։ Աբազան և նրա խռովարար շեյխը տեսնելով, որ հաշտություն խնդրելուց բացի, իրենք ուրիշ ելք չունեն, հիշյալ ամսի 17-ին, վեց մարդ ուղարկեցին վսեմ սերդարի մոտ և հայտնեցին, որ պատրաստ են հաշտություն կընքելու։ Ամսի 22-ին, Աբազան ինքը բերդից դուրս եկավ և սերդարին ներկայացավ։ Տեսակցությունից հետո նորից բերդ վերադարձավ։ Ամսի 23-ին, մեծ վեզիր տուսրեվ փաշան բերդը մտավ և ուրբաթ օրվա նամազը Մեծ Ջամիում կատարեց։ Հետո Աբազա փաշային իր հետ առնելով, բերդից դուրս եկավ և նրան իր վրանը տարավ։ Դրանից հետո Աբազային իր մոտ պահեց։

Ախալցխայի բերդի գրավման ու պահպանման համար նշա-

*նակվեցին անհրաժեշտ քանակությամբ զինվորներ։ Ինքը Խուսրեվ փաշան Աբազա փաշայի հետ միասին մեկնեց Ստամբուլ... 1038 (1629) թվականի ռեբիուլ-ախըրի 16-ին նա մեծ հանդիսավորությամբ Ստամբուլ մտավ։ Հաջորդ օրը ընդունվեց վսեմաշուք փադիշահի կողմից և մեծ նվերների ու շնորհների արժանացավ...*

*(էջ 742—746)*

## 1044 (1634—1635) թվականի դեպքերից

### ՍՈՒԼԹԱՆ ՄՈՒՐԱԴ ԽԱՆԸ[21] ԳՆՈՒՄ Է ԵՐԵՎԱՆԸ ԳՐԱՎԵԼՈՒ

*Այդ գարնանը, փադիշահը մտադրվեց Արևելյան արշավանքի գնալ անձամբ և գրավել Երևանի բերդը։ 1044 թվականի շաբան ամսի 2-րդ օրը սուլթանական փառապանծ թուղը[22] Սկուդար տարվեց և նույն ամսի 4-րդ օրը մեծ շուքով և հանդիսավորությամբ հաստատվեց փադիշահական օթաքը։ Սկուդարի դաշտում՝ Ռումելիի զինվորներին բերելու համար ուղարկվեց վեզիր Խալիլ փաշան։ Ռամազան ամսի 8-ին ստացվեց Կարսի բերդի մոտի Մազիզ բերդի գրավման լուրը։ Այդ օրերին Բայրամ փաշան ավարտեց արշավանքի պատրաստությունները և ամսի 17-ին, մեծ շուքով և հանդիսավորությամբ, բանակը դուրս բերեց. 20-ին փադիշահը, շեյխ-ուլ-իսլամը, սադրազամ Մուհամմեդ փաշան և այլ երևելիներ, սիփահիներն ու ենիչերիները՝ շքերթով, աղոթքով և գովաբանությամբ, Ստամբուլից Սկուդար անցան և կանգ առան փադիշահական բանակում...*

*Բանակը շարժվում էր դանդաղ։ Ճանապարհին տեղի ունեցան բազմաթիվ մահապատիժներ։ Գյոքբոզեում սպանեցին մի քանի ավազակների, Դիլեքլի դաշտում՝ Սոլաք Բաշիին, Իզնիկի և Ենիշեհրի բազարում՝ մի ենիչերի օդաբաշիի. Կոնիայում Կարաիլանօղլի Սեֆերին շղթայեցին և սպանեցին։ Ինենյուի և Էսկիշեհրի մոտ բարևի կանգնած Թուջուջի Հասան փաշան հրավիրվեց փադիշահական վրանը, որտեղ դահիճը թռցրեց նրա գլուխը։ Սեյիդ Ղազի մենզիլում սպանվեց զորբաներից մեկը, Բուլավադինի մենզիլում Կաբա Աղաչի կադին, որի դեմ գանգատներ կային։ Ակշեհիրում սպանվում է Կարամանի բեյլերբեյի Ալի փաշան, որը փադիշահի կամքին հակառակ շրջագայության գնալով, բռնություններ էր կատարել։ Կոնիայում մահապատժի են ենթարկվում Արաբ-օղլի և Նալիզե անունով ավազակները, իսկ սուլթան Օսմանի[23] սպանության գործին մեղսակից զորբաներից[24] սպանվեցին*

Գյուրջի Օսմանը, Հաջի Հասան օղլին և Շաբանը։ Թիքե Փընարում մահվան դատապարտվեց Ջեվհերի Ջադեն, Նիկդեյում սպանվեց էդիրնեի բեյլերբեյի Հյուսեին փաշան, Կեսարիայի կադին սպանվեց կաշառակերության համար, Փալասի, Թուղլայի և Ջենեքի կըշլակների Թուրքմեն ավազակներից 10 մարդ բերվեցին և սպանվեցին Օթաքի առաջ։

Սվազում սպանվեցին Քեսքենլի Ալի փաշան և Սուլեյման անունով ավազակը, որոնց դեմ գանգատավորներ էին եկել. Նույն մենզիլը ժամանած հինգ կըզըլբաշներից չորսը գլխատվեցին, իսկ մեկը՝ Վանի բերդում բռնված խոջա Մուհամմեդ Թեբրիզի անունով լրտեսը՝ ներման արժանացավ։ Այդ վայրում սպանվեցին անհամար թվով խռովարարներ։ Քանի որ էրզրումում գանգատներ էին ստացվել Սվազի բեյլերբեյի Ալի փաշայի դեմ և նրա ոճիրները ապացուցվել էին, փաշան գլխատվեց...[25]

1045 (1635—1636) թվականի մուհարրեմ ամսի 24-ին բանակը շուքով առաջ շարժվեց։ Բասիրեի մենզիլում վեց օր կանգ առան։ Այնուհետև, Կարսի բերդի մոտի Քյունբեթ անունով գյուղում, Կարսի Շեյխխան փաշան իր քաջ զինվորներով շքերթ կազմակերպեց։ Այդտեղ նրանք մնացին երկու օր... Սեֆեր ամսի 14-ին անթիվ-անհամար զինվորներով իջևանեցին Ույոք-Քյունբեթ կոչված վայրում, որը սակայն անհարմար համարելով, մուսուլման ղազիների հետ միասին եկան Երևանի բերդի առաջ։ Երևանում եղած անհավատները մուսուլման ղազիների վրա հրացան և թնդանոթ կրակելիս՝ թնդանոթի մի արկ կայծակի նման սլանալով փողոցների վրայով, ընկավ սիփահիների զորամասի մեջ, սակայն բարձրյալ Աստծո կամքով ոչ ոքի վնաս չպատճառեց։ Վեհաշուք փադիշահը տեսնելով այդ ստոր արարածների հրացանները և թընդանոթները, Երևանի դիմացի Ջանգի խան լեռնանցքից ցասումով և զայրույթով անցնելով, կանգ առավ Երևանի առջև։ Վրանները շրջապատեցին բերդը։ Այդ օրը, բերդի դռան մոտ, մարտերը շարունակվեցին մինչև երեկո։ Շատերը շրջապատեցին բերդի դուռը։ Հաջորդ օրը զենք և ռազմամթերք բաժանվեց ենիչերիներին և մյուս զինվորներին։ 16-րդ գիշերը ենիչերիները մտան խրամատները։ Հին Երևանի կողմից՝ Քյուչյուկ Ահմեդ փաշան, էրզրումի զինվորներով, մյուս՝ հին քաղաքի դռան կողմից Անատոլիայի բեյլերբեյի Գյուրջի Մուհամմեդ փաշան, միջին թևից՝ մեծ վեզիրը՝ լեվենդ[26] և սեկբան զինվորներով, Թավրիզի դռան կողմից էլ Ջանփուլադ Ջադե Մուստաֆա փաշան, ծովակալ փաշան և ծովային մասի զեամեթի ու թիմարի տերերը, սկսեցին պատերազմը։

Ռումելիի թևից չորս ահարկու թնդանոթներից արձակված արկերը բերդին դիպչելիս՝ դղրդացնում էին երկինք ու երկիր։ Այդ օրը, Շամի բեյլերբեյի Մուստաֆա փաշան և ծովակալ Հյուսեին փաշան տվեցին հինգական թնդանոթ, որոնցից արձակված արկերը անհավատների տների վրա ընկնելիս մարդկանց ճիչն ու աղաղակը բարձրացնում էին մինչև երկինք։ Ենիչերիների աղայի թևում դրված էր չորս թնդանոթ, Գյուրջիի թևում՝ չորս թնդանոթ, Քյուչյուկ Ահմեդ փաշայի կողմում՝ նույնպես չորս թնդանոթ. ամեն մի թընդանոթին լծված քառասուն գոմեշները դժվարությամբ էին տեղից շարժում թնդանոթները։ Բերդը այդ հինգ վայրերից շրջապատելով, նրանք սկսեցին գնդակոծել։ Իսլամական փադիշահը, բարձրանալով դեպի բերդը նայող բլրի վրա, գիշեր-ցերեկ դիտում էր պատերազմական գործողությունները և բարձրաձայն աղոթում էր Աստծուն. նահատակներին թաղել էր տալիս, մեկ ձեռքով էլ նվերներ, թիմարներ էր շնորհում և աստիճանները բարձրացնում... Այդ օրը, նրանք 12 հազար զինվորով գնացին Թոփրաք Կալե... Դրանից առաջ, հանգուցյալ վեզիր Մուհամմեդ փաշայի օրով, պաշարման ժամանակ Թոփրաք Կալե մարդ չուղարկելու և պատրաստություն չտեսնելու պատճառով, Մերջաղա խանը այդ կողմը գնալով շատ վնասներ էր պատճառել։ Կափուջիների քեթխուդա[27] Ալի աղան թնդանոթի պատահական գնդակից սպանվեց՝ աքդեսթի[28] ժամանակ։ Փադիշահը ֆերման տվեց, որ թնդանոթաձիգները անպայման ոչնչացնեն այդ թնդանոթը։ Թնդանոթաձիգների պետը և թընդանոթաձիգները փադիշահական ֆերմանի համաձայն, ջանքեր գործ դրեցին։ Շամի էմիր-ուլ-ումերա[29] Սիլահդար փաշայի և ծովակալ փաշայի զինվորները հրետանային շատ ուժեղ կրակ բացեցին, որի հետևանքով անհավատների թնդանոթը և աշտարակի ծածկը ավերվեց, և այսպիսով մուսուլման ղազիները վնասից ազատվեցին։ Այնուհետև, Ռումելիի և սիլահդարի զորամասերի դեմ ևս մի թնդանոթ ուղղվեց, որը կարող էր վնասներ պատճառել մուսուլման ղազիներին։ Առանց երկրորդ օրվան սպասելու, Ռումելիի զորամասից արձակված թնդանոթի արկը հողին հավասարեցրեց բերդի կեսը։ Երեք օր շարունակ, օրական թնդանոթի հազար արկ արձակելով, բերդում եղած անհավատների տրամադրությունը խորտակեց։ Էմիր Գյոնե-օղլին էլ իր պալատում չէր կարող հանգիստ մնալ։ Երբ նա՝ մուսուլմանների թնդանոթները ոչնչացնելու մտադրությամբ, 5—6 հարյուր կըզըլբաշ զինվորներով, անսպասելիորեն հայտնվեց իսլամ զինվորների մեջ, ղազիները ամեն կողմից սրերով ընկան կըզըլբաշների վրա, որոնք Ռու-

մելիի զորամասից մի դրոշակ էին խլել։ Ռումելիի մարտիկներից մեկը՝ մի երիտասարդ, հասավ և հիշյալ ռաֆըզիին սպանեց։ Կափնները մնացածներին սրախողխող արեցին։ Երբ վսեմաշուք փադիշահը՝ ձին հեծած, իր զորամասերով պատերազմելու պատրաստվիճակումն էր, թշնամին փախավ և մտավ բերդը. փադիշահը ուղղըվեց դեպի իր վրանը և օրվա հերոսներին անչափ շատ նվերներ շնորհեց։

Հինգերորդ և վեցերորդ օրը բերդի պարիսպները այն աստիճան ավերվել էին, որ մի ենիչերի խլեց քանդված պատերի վրա եղած կըզըլբաշների դրոշակներից մեկը և վազելով հասցրեց փադիշահին, որի վրա ստացավ հարյուր ակչե։ Ջեբելուներից[31] մի քաջ երիտասարդ պարսպի վրայի դրոշակը պոկելիս, դեմը մի կըզըլբաշ դուրս եկավ։ Ջեբելուն կըզըլբաշի գլխից խլեց դրոշակն ու թաշկինակը և դրա համար ստացավ նվեր և սիփահիություն[31]։

Երբ կըզըլբաշները այս դրությունը տեսան և լաղըմ փորելու հավանականությունը նկատի առան, «Այս աստիճանի ջանքեր ոչ մի տեղում չեն եղել» կրկնելով, մտահոգության մեջ ընկան... Աստծո կամքով, պաշարման յոթերորդ օրվա կիրակի գիշերը, իսլամական փադիշահը՝ բերդը հինգ կողմից պաշարած վեզիրներին հրավիրելով, ասաց. «Բերդը վաղը անպայման պետք է գրավեք»։ Նրանք բոլորը պատասխանեցին. «Մենք պատրաստ ենք մեր ունեցած միակ հոգին զոհելու կրոնի և պետության համար»։ Այդ գիշեր մյուս օրերից ավելի շատ թնդանոթներ կրակեցին և բերդում պաշարված կըզըլբաշները թաքնվելու տեղ չգտան։ Կըզըլբաշները առավոտյան տեսան, որ թնդանոթների ու հրացանների կրակը չափազանց ուժեղացել է և թշնամին հարձակման է պատրաստվում։ Սիփահիներին ֆերման տրվեց, որ հող կուտակեն։ Մի գիշերում կուտակված հողը նմանվեց մի լեռան։ Յոթերորդ օրը վերին աստիճանի կատաղի մարտեր տեղի ունեցան։ Բերդում, խանի քեթխուդա Մուրադ աղան և Երևանի դատավոր Միր Ֆեթահ-օղլին, պաշարված խաներն ու սուլթանները հավաքվեցին և քեթխուդա Մուրադ Աղային, էմիր Գյոնե-օղլիին և Թահմասբ Կուլի խանին ասացին. «Մեզ վրա եկած փադիշահը հերոս է։ Եթե մենք համառենք, Ահմեդ փաշան լաղըմներ կփորի և հարձակման կանցնի։ Եթե բերդը գրոհով գրավվի, մեզնից ոչ մեկին փրկություն չկա։ Մենք մեր ընտանիքներով սրո ճարակ կդառնանք։ Ո՞րն է փրկության միջոցը»։ Մուրադ քեթխուդան ասաց. «Փադիշահը արդարադատ է։ Բերդը հանձնենք։ Փադիշահները մարդասեր են լինում։ Մեր մի մազին անգամ վնաս չի հասնի»։ Թահմասբ Կուլի խանը, Խըզըր Ա-

ղան և մյուս խելացիներն ասացին. «Ճիշտ պատասխանը այդ է»։ Սակայն Միր Ֆեթահ-օղլին չհամաձայնվեց և ասաց. «Ես Բաղդադի նման վայրից 18 օրում եկա, 5—10 ձի զոհեցի։ Ես այդ բանին չեմ կարող համաձայնվել։ Ի՞նչ պատասխան պետք է տամ Շահին»։ Մյուսները պատասխանեցին. «Հիմա բերդը մերն է և մենք վիրայով բախտավոր փադիշահին կհանձնենք, քեզ տեսնենք, ի՞նչ միջոցներ ձեռք կառնես»։

Այս խոսքերի վրա Միր Ֆեթահ-օղլին խելակորույս ասաց. «Հիմա դուք աշխարհի ապավեն փադիշահից կխնդրեք, որ ինձ՝ իմ մարդկանց հետ միասին, բաց թողնի»։ Նրանք խոստացան և պատասխանեցին. «Քո ապահովությունը մենք մեզ վրա ենք վերցնում»։

Ութերորդ օրը, կեսօրին, 1045 (1635—1636) թվականի սեֆեր ամսի 26-ին, Աստծո հրամանով, բերդի աշտարակից երկինք հասան աղաղակներ. «Ո՜վ աշխարհի և ժամանակի բախտավոր [փադիշահ], ամա՜ն ամա՜ն»։ Երբ այդ բարի լուրը փադիշահին հասավ, բարձր վեզիրները և մեծ ուլեմաները փադիշահի ոտքն ընկան և խնդրեցին. «Ո՛վ փադիշահ, շնո՛րհ արեք ընդունել մեզ»։ Վեհաշուք փադիշահը ֆերման տվեց. «Նրանց ոճիրները ներեցի։ Գնացեք և ասեք թող գան»։ Ուղարկվեց Չավուշ-Բաշի[32] Թուրաք աղան։ Կըզըլբաշներից մեկը ասաց. «Բերդը հանձնվեց, գոնե այս մարդուկին սպանենք»,—և պարսպի որմնածակից մի գնդակ արձակեց, որը սակայն, Աստծո կամքով նրա գլխարկը ծակեց, բայց գլխին չդիպավ։

Այնուհետև, չորսհարյուր կըզըլբաշներով Թավրիզից օգնության եկած Խըզըր Աղան, թնդանոթի քանդած վայրից իջնելով և ձիերը դռնից դուրս բերել տալով, 4—5 կըզըլբաշներով սադրազամի վրանի առաջ վրան սարքեց և այնտեղ իջևանեց։ Նա հրավիրվեց փադիշահի կողմից և Նորին վսեմությանը ծանոթացրեց իրերի դրության հետ։ Փադիշահը հրամայեց. «Քանի որ բերդը վիրայով հանձնեցիք, այսօր իսկ այնտեղից պետք է դուրս գաք»։ Շատ խնդրելով՝ հետաձգեցին մինչև առավոտ, միայն այն պայմանով, որ մինչև վաղ առավոտ թնդանոթների կրակը չդադարի և բերդը առաջվա նման գնդակոծվի։ Այդ գիշեր ավելի հզոր թնդանոթներ կրակեցին ու բերդում եղածների քունն ու հանգիստը վրդովեցին։ Հաջորդ օրը, վաղ առավոտյան, էմիր Գյոնեի քեթխուդա Մուրադ աղան բերդի տակ համբուրեց մեծ վեզիրի ձեռքը։ Սրա համար ևս վրան պատրաստվեց, փադիշահի կողմից հրավիրվեց և ֆերման տրվեց։ Ֆերմանով հայտնվում էր. «Միր-օղլիի ցանկությամբ «ամանը» հաստատ է։ Բոլորը իրենց զենքերով, ամբողջ ունեցված-

քով ու դրոշակով կարող են դուրս գալ և գնալ»։ [Մուրադ Աղան] փադիշահի ոտքն ընկավ և փրկվեց...

Հաջորդ օրը, վաղ առավոտյան, նվիրական ֆերմանով սիփահիների և սիլահդարների զորամասերը բերդի դուռը եկան և դրոշակներով կանգնեցին աջ ու ձախ կողմերում... Թահմաս Կուլին «Մնաս բարով, ով Երևանի բերդ» ասելով, մեծ շուքով ու հանդիսավորությամբ դուրս է գալիս և, անցնելով սիփահիների միջից, գնում է Բարձր Դիվանը, վեհափառ փադիշահի առաջ համբուրում է գետինը, հրաժարվում ռաֆըզիությունից և մուսուլման դառնում։ Իբրև հավատարիմ կուլ, Հալեպի էյալեթը վեզիրության աստիճանով նրան է շնորհվում...

Խըզըր Աղայի խնդրանքով, ինքը՝ Միր Ֆեթահ-օղլին, նրանց հետ եղած սուլթանները և իրենց ձեռքի տակ գտնվող կըզըլբաշները այդ գիշեր իրենց ընտանիքներով և ղավակներով, թվով 4—5 հազար հոգի, դուրս են գալիս ու հեռանում։ Սրանք իրենց ճանապարհին պատահած աթ-օղլաններից[33] ոմանց գլխատում են, ոմանց էլ շղթայում և անարգում...

Այնուհետև, բերդի պարիսպների համար նշանակվեցին չորբաջիներ[34] և իսլամական զինվորները լցվեցին բերդը։ Զինվորներն անսահման քանակությամբ հարստություն և մթերք ձեռք բերեցին։

Հաջորդ օրը փադիշահական վրանի դաշտում շքեղ Դիվան կազմվեց և Դիվանի անդամներն արժանացան փադիշահի ձեռքը համբուրելու պատվին և շնորհավորեցին իսլամի փադիշահի հաղթությունը։ Բոլորին խալաթ հագցրին։ Երևանի բերդի մասին «Թարիխ» է ասվել. «Սուլթան Մուրադ IV-ը նվաճեց Երևանը»։

Հինգշաբթի օրը, Թահմաս Կուլի խանը, փադիշահի թույլտվությամբ, եկավ բերդում եղած իր պալատը, պատրաստություն տեսավ և 1045 (1635—1636) թվականի հաջորդ օրը, նվիրական ջամին զարդարվեց... Սուլթան Մուրադը մեծ շուքով և հանդիսավորությամբ բերդ մտավ։ Նրան դիմավորեց Թահմասբ Կուլի խանը։ Նամազի ժամանակ լինելով սալավաթ[35] կարդացվեց, որից հետո եկան Թահմասբ Կուլի խանի պալատը, այնտեղ աջեմական խընջույք տեղի ունեցավ. խանը իր ծառայությունը հայտնեց մեծամեծ նվերներով։ Փադիշահը խանին սամույրի խալաթ հագցրեց և Հալեպի էյալեթը նրան շնորհելով՝ իր մարդկանցով բերդից դուրս գալու ֆերման տվեց...

Սկսվեց [Երևանի բերդի] ռմբակոծությունից քանդված մասերի

վերանորոգման աշխատանքները, որը ավարտվեց 8 օրում... Մուրթեզա փաշան նշանակվեց Երևանի պահպանության համար. նրան տվեցին զինվորներ և չորբաջիներ, որոնք կամավոր գրվեցին ենիչերի ու սիփահի լինելու պայմանով։

Այն հարցին, թե ո՞ր ուղղությամբ պետք է գնալ, պատասխան տրվեց. «Նպատակահարմար և հեշտ է գնալ դեպի Գենջե, Ղարաբաղ և Շիրվան»։ Փադիշահական վրանը դեպի այդ կողմը շարժվեց։ Երբ լուր ստացվեց, որ Աջեմի շահը Ռուստեմ խանի կըզըլբաշ զինվորներով գտնվում է Թավրիզի, Խոյի և Սոֆիանի մենզիլներում, փադիշահը անմիջապես Թավրիզ գնալու ֆերման տվեց։ Շարժվեցին դեպի այդ կողմը։ Ախալցխայի մոտ գրանցվեց 15 ենիչերիական վաշտ (օրթա) և ուղարկվեց Սեֆեր փաշայի ու Քենան փաշայի հետ։ Ռեբի-ուլ-էվվելի 6-ին, նրանք իջևանեցին Թոփրաք Կալեի մոտակայքում։ Երևանի պահպանության համար նշանակված Մուրթեզա փաշան իր 12 հազար զինվորներով շքերթ կազմակերպեց և մնաց բերդում։ Էրզրումի գետի մոտ, Սեյֆեդդին մենզիլին հասնելիս, այդ կողմերի բերդերի խաները եկան, հողը համբուրեցին և բերդերի բանալիները հանձնելով վերահաստատվեցին իրենց տեղերում... Կարա Խոջա Խոյի դաշտի տասը գյուղերը, որոնց բնակիչները փախել էին, հրո ճարակ դարձան... Այդտեղից նրանք Թավրիզ հասան։ Այդ շրջաններում բռնված մի քանի հազար կըզըլբաշների սրի անցկացրին և նրանց տները կրակի մատնելով այրեցին... Փադիշահի ներկայությամբ բերված մի կըզըլբաշ հայտնեց, որ Աջեմի շահը իր անունն ու պատիվը մոռացած, էրդեբիլը դատարկել, ռայաներին քշել և ինքն էլ փախչելով, անուն ու հետք չի թողել։ Փադիշահը Թավրիզի մոտ վրան հաստատեց։ Զինվորները Թավրիզ մտնելով, անթիվ հարստություն և ապրանքներ կողոպտեցին ու թալանեցին։ Ռեբի-ուլ-էվվելի 20-ին [փադիշահը] մեծ շուքով Թավրիզ մտավ։ Քաղաքը կրակի տրվեց և բոլոր շինությունները այրվեցին։ Այդ ժամանակ, երբ մի խումբ կըզըլբաշներ իբրև «սերգեն գեչդի» գալիս էին իսլամական բանակից մի քանի մարդ բռնելու նպատակով, հանդիպեցին Մարաշի բեյլերբեյի Վարվար Ալի փաշային, որի հետ բավական երկար կռվելուց հետո, դրանց մի մասը սպանվեց, մնացածները բռնվեցին և իրենց սերդար Օշար Ալի փաշայի հետ միասին գլխատվեցին...

Ռուզի-քասըմին[30] հիսունհինգ օր մնացած լինելով, իսլամական բանակը ապահով կերպով դուրս բերելու համար շարժվեցին դեպի Երևան և ռեբի-ուլ-էվվելի 18-ին իջևանեցին Երևանի բեր-

*դում... Երեք օր այնտեղ մնացին... Հետո Բիթլիսից, Դիարբեքի-րից և Սվազից անցնելով Իզնիկ, այնտեղ էլ, ռեջեբ ամսի 16-ին, նավերով, մեծ շուքով և հանդիսավորությամբ Ստամբուլում մտան փադիշահական պալատ։*

*1046 (1636—1637) թվականին փադիշահը մեկնեց Բաղդադի արշավանքին։*

*(էջ 753—762)*

# ՇԱՆԻ ԶԱԴԵ

Շանի Զադե Մուհամմեդ Աթաուլլահ էֆենդին տարեգիր է նշանակվել 1235 (1819) թվականին՝ Ասըմ էֆենդիից հետո։ Շանի Զադեն իր «Թարիխի Շանի Զադե»-ում գրի է առել օսմանյան պետության պատմության 1223—1237 (1808—1821) թվականների իրադարձությունները։

Շանի Զադեի պատմության սկզբում զետեղված կենսագրական համառոտ տեղեկություններից պարզվում է, որ նա եղել է իր ժամանակի գրական և գիտական նշանավոր անձնավորություններից մեկը։ Բացի արքունական տարեգրի պաշտոնից, նա վարել է նաև այլ պետական բարձր պաշտոններ (սրբազան Մեքքայի մեվլեվի[1], սադրազամի իշխանության էվկաֆի տեսուչ և այլն)։ Սակայն, ինչպես նշվում է այդ կենսագրական ակնարկում, մի քանի չարամիտների խարդավանքների պատճառով Շանի Զադեն 1241 թվականին աքսորվում է Թիրե՝ իր կալվածում ապրելու, ուր և մահանում է 1242 (1826) թվականին։

Շանի Զադեն տիրապետել է բազմակողմանի գիտելիքների. նա ուսումնասիրել է մի շարք գիտություններ՝ մաթեմատիկա, աստղագիտություն, բժշկություն, նկարչություն և երաժշտություն։ Գիտության տարբեր բնագավառներին վերաբերող աշխատությունների հետ միասին, նա ունի նաև գրական ստեղծագործություններ։

Իր «Պատմության» առաջին հատորի սկզբում Շանի Զադեն շատ խրթին լեզվով խոսում է պատմության բացառիկ կարևորության մասին։ Նրա ասելով, օսմանյան կառավարությունը և հատկապես օսմանյան սուլթանները պատմությունը հատուկ ուշադրության առարկա են դարձրել։

«Պատմությունը իբրև գիտություն և պատմությունը ուսումնասիրելու մեթոդի մասին առաջաբան» վերնագրով երկարապատում հոդվածում Շանի Զադեն պատմական էքսկուրս է կատարում դեպի մարդկության պատմության ամենահնագույն ժամանակները և հասնում է մինչև նոր շրջանը։ Շանի Զադեն հետաքրքիր դատողություններ է անում մարդկության պատմության ընդառաջի համար խոշոր դեր կատարած Չինաստանի, Հնդկաստանի և Եգիպտոսի հնագույն կուլտուրաների մասին։ Նա գրում է. «Թե՛ չին և թե՛ հնդիկ ժողովուրդները, ներկայումս գոյություն ունեցող բոլոր ժողովուրդներից և պետություններից առաջ, ստեղծել են բազմաթիվ գեղարվեստական արժեքներ...»։ Շանի Զադեի կարծիքով, հնագույն կուլտուրաների զարգացումը բացատրվում է այդ մեծ ժողովուրդների «հնագույն օրենքների, նրանց բարքերի, նրանց մեջ տարածված, գործածված և հուշակ ստացած տառերի, խոսակցական լեզվի չորս հազար տարուց ի վեր անփոփոխ և անաղարտ մնալու փաստով»։

Նա մեծ գովասանքով և նույնիսկ հիացմունքով է խոսում Օսմանյան կայսրության և նրա ժողովրդի կուլտուրական արժանիքների մասին. դրա ապացույց-

ներից մեկը Շանի Զադեն համարում է օսմանյան երկրում պատմության՝ իբրև գիտության, բացառիկ զարգացումը։

Շանի Զադեն իր տարեգրության մեջ, նախորդների նման, շատ մեծ տեղ է հատկացնում արքունիքին և սուլթանին, բազմաթիվ նշանակումներին, պաշտոնազրկումներին, աքսորներին, պատիժներին՝ սկսած պետության առաջին անձնավորությունը հանդիսացող սադրազամից, վեզիրներից, փաշաներից, ենիչերիական և այլ զորամասերի պետերից, վերջացրած հասարակ ավազակներով ու բախտախնդիր անձերով։ Իսկ պատերազմական դեպքերին, բանակների շարժումներին, ավարառությանը և կողոպուտներին հատկացված նկարագրությունները հարյուրավոր էջեր են կազմում։

Տարեգրի լեզուն ու ոճը, ուրիշ շատ տարեգիրների նման, խրթին է և ծանր, մասնավորապես նրա բանաստեղծական անթիվ մեջբերումները («բեյթերը»), որոնք հաճախ գտնվելով պաշտոնական փաստաթղթերում և դիվանագիտական գրություններում, դժվարացնում են բնագրերի ընթերցումն ու թարգմանությունը։

«Թարիխի Շանի Զադեն» բաղկացած է չորս հատորից։ Առաջին հատորը տպագրվել է Ստամբուլում 1284 (1867) թվականին, երկրորդը՝ 1290 թվականին, երրորդ և չորրորդ հատորները՝ 1291 թվականին՝ «Ջերիդեի հավադիս» թերթի տպարանում։

* * *

Թուրքական արքունական տարեգիրների երկերը, ինչպես նշել ենք սույն աշխատության առաջին հատորի առաջաբանում, իրար հաջորդել են ժամանակագրական կարգով և այդ պատճառով նրանց «պատմությունները» կազմել են օսմանյան պատմության լրիվ ժամանակագրությունը։

Մեզ չհաջողվեց պարզել, թե ինչո՞ւ Շանի Զադեի տարեգրությունը կրկնում է տարեգիր Ջեվդեթ փաշայի տարեգրությունը («Թարիխի Ջեվդեթ փաշա», 1188—1241)։ Քանի որ Ջեվդեթ փաշան տարեգիր է նշանակվել Շանի Զադեից հետո, ապա պարզ է, որ նա պետք է օգտված լինի վերջինից։ Այդ մասին Ջեվդեթ փաշան ունի հիշատակություններ իր «Թարիխի Ջեվդեթ»-ում։

Կրկնությունից խուսափելու համար Շանի Զադեից այստեղ չեն բերվել այն նյութերը, որոնք ավելի հանգամանալից տրված են «Թարիխի Ջեվդեթ»-ում։

## «ԹԱՐԻԽԻ ՇԱՆԻ ԶԱԴԵ»

*Շանի Զադեի պատմության մեջ ընդգրկված ժամանակաշրջանը, այսինքն՝ XIX դարի առաջին երկու տասնամյակը, Օսմանյան կայսրության շատ ծանր տարիներն են եղել։*

*Սուլթան Սելիմ III-ի (1789—1807) իշխանության վերջին տարիներին Օսմանյան պետությունը մղում էր մի քանի պատերազմներ, թե՛ երկրի եվրոպական մասում և թե՛ Արևելքում։ Այդ ժամանակ քայքայման ու անկման հասած ենիչերիական բանակը երկրի թե՛ արտաքին և թե՛ ներքին կյանքում մեծ դժվարությունների և անկարգությունների պատճառ էր դառնում։*

*Ենիչերիական բանակը վերացնելու և, թուրք պատմագիրների արտահայտությամբ, «Նիզամի ջեդիդ»[1] անվան տակ «եվրոպական ձևով» բանակ ստեղծելու ուղղությամբ Սուլթան Սելիմ III-ի նախաձեռնությունը կատաղի դիմադրության է հանդիպում թե՛ ենիչերիների և թե՛ պետության ղեկավար շրջանների կողմից։ Սուլթան Սելիմի այդ փորձը վերջանում է նրա գահընկեցությամբ և ապա սպանությամբ։*

*Պալատական ինտրիգների, ենիչերիների օջախների և պատահական անձերի՝ զորբաների հարուցած անվերջ խռովությունների հետևանքով արքունիքի և կառավարության հեղինակությունը չափազանց ընկնում է։ Ահա այդպիսի պայմանների հետևանքով էլ գահազրկվում է Սուլթան Սելիմ III-ը և փադիշահ է հայտարարվում Մուստաֆա IV-ը, որի իշխանությունը շատ կարճատև է լինում։*

*Այդ շրջանի կարևոր պետական գործիչներից է լինում Բայրաքդար Մուստաֆա փաշան*, որը Ռուսչուքում իր մի խումբ համախոհների հետ կազմակերպում է «Ռուսչուք Յարանի»[2] կազմակերպությունը։ Բայրաքտար Մուստաֆա փաշան ձեռք է բերում սադրազամության բարձր պաշտոնը և փորձում Սելիմ III-ին կալանքից ազատել և գահ բարձրացնել։ Սակայն արքունիքում և Ստամբուլում ստեղծված դրության, ռեֆորմիստների և ռեակցիոներների միջև եղած ուժերի անհավասարության հետևանքով, սուլթանական պալատի ներսում տեղի ունեցած կատաղի և արյունահեղ կռվում Բայրաքտար փաշան զոհվում է. նրանից առաջ սպանվում է գահազուրկ Սելիմ III-ը։*

---

* *Այս ամենի մասին տե՛ս* А. Ф. Миллер, Мустафа паша Байрактар, османская история в начале XIX века, М.-Л., 1947.

*1223 թվականին սուլթան Մուստաֆա IV-ը, չորս ամսից հետո, գահազուրկ է լինում և գահ է բարձրանում սուլթան Մահմուդ II-ը (1223—1255)։*

## 1224 (1809) թվականի դեպքերից

### ԼՈՒՐ Է ՍՏԱՑՎՈՒՄ ՖԱՇԻ ԲԵՐԴԻ ՊԱՇԱՐՈՒՄԸ ՎԵՐԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

*Մի քանի օր առաջ ցավալի լուր ստացվեց, որ թշնամին [ռուսները] ցամաքից և ծովից հարձակվել են Ֆաշ բերդի վրա։ Այդ ժամանակ Տրապիզոնի վալի և Անատոլիայի սևծովյան եզերքի սերասքեր Շերիֆ Մուհամմեդ փաշայից ստացված գրությունից պարզվեց, որ երբ վերոհիշյալ փաշան իմացել է այդ լուրը՝ մի կողմից ինքը անմիջապես մեծ թվով զինվորներ է ուղարկել, իսկ մյուս կողմից Ռիզեի այաններից Թուզչի-օղլուն բազմաթիվ զինվորներով շտապել է օգնության հասնել։ Գոհություն բարձրյալն Աստծուն, բազմաթիվ ղազիների ուժեղ ճնշումները թշնամուն ահ ու սարսափ են պատճառել և ստիպել թողնել բերդի պաշարումն ու հեռանալ։ Շեվվալ ամսի 27-ին, Դերսաադեթում [Ստամբուլում] լուր ստացվեց, որ հիշյալ բերդը [թշնամու] հարձակումից ազատվել է և գտնվում է հանգիստ, ապահով վիճակում։*

*(էջ 285)*

* * *

*Հաջորդ հատվածներում տարեգիրը տալիս է հետևյալ տեղեկությունները. «Նկատի առնելով ռուսների [ռուսյալու] նենգությունն ու խարդախությունը, անհրաժեշտ համարվեց միջոցներ ձեռք առնել Բաթումի նավահանգստի և Ֆաշի բերդի ապահովությունը ամրապնդելու համար»։ Միջոցներ են ձեռնարկվում նաև Սև ծովի կարևոր նավահանգիստներից մեկը՝ Սինոպը ամրացնելու համար։*

### ԻՐԱՆՑԻՆԵՐԻ ՀԵՏ ԴԱՇԻՆՔ ԿՆՔԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՖԵՐՄԱՆ Է ՏՐՎՈՒՄ ԱՐԵՎԵԼՔԻ ՍԵՐԱՍՔԵՐԻՆ

*Հայտնի էին ռուսների նկատմամբ Իրանի պետության սնուցած թշնամությունն ու մղած պատերազմները։ Հայտնի էր նաև, որ օսմանյան պետությունը նկատի ունենալով սիրո ու համակրության, իսլամական անկեղծ բարիկամության ոգով Իրանի շահի նախկին անկեղծ արտահայտությունները բարձր սուլթանության*

նկատմամբ, ձգտում էր մեջտեղից վերացնել Իրանի պետության հետ ունեցած մի շարք երկրորդական տարաձայնություններ[4]։ Նորին վսեմություն շահի հարգելի զավակ գահաժառանգ Աբբաս Միրզան՝ իր տրամադրության տակ եղած իրանական բանակով, շարժվելով թշնամու [ռուսների] վրա, եկել էր սահմանները և պատերազմական գործողություններ սկսել։

Հիշյալ շեհզադեի հետ նամակագրություն պահպանելով և տեղեկություններ փոխանակելով՝ կրոնի թշնամու [ռուսների] դեմ միացյալ ուժերով հարձակումը ապահովելու համար, անհրաժեշտ էր լավ հարաբերություններ պահպանել Իրանի շեհզադեի սահմանի վրա եղած պաշտոնյաների հետ և նրանց նկատմամբ ցուցաբերել անկեղծություն։ Այդ մասին նույն թվականին առանձին-առանձին բարձր հրամաններ ուղարկվեցին Արևելքի սերասքերին, Չըլդըրի վալիին և Վանի ու Կարսի մութասարրիֆներին։

(էջ 309)

## ՖԱՇԻ ԳՐԱՎՄԱՆ ԼՈՒՐԸ

Ինչպես սրանից առաջ հիշվեց, թշնամու [ռուսների] զինվորները ծովից և ցամաքից հարձակվել էին Ֆաշ բերդի վրա։ Գիշեր ու ցերեկ շարունակվող նրանց անընդհատ կրակը մեծ նեղություն էր պատճառում բերդի պահապաններին։ Երբ Տրապիզոնի վալի Շերիֆ փաշան և Ռիզեի այան Թուզջու-օղլուն լուր ստացան այդ մասին, նրանք շուտափույթ օգնության հասան, որի շնորհիվ բերդը ազատագրվեց։ Այս ռազմական ընդհարումը մեջտեղից վերանալուց հետո, վրացական ցեղի Գուրյալ անունով ցեղապետը դիմում ներկայացրեց վերոհիշյալ վեզիրին և հայտնեց, որ եթե օսմանյան պետությունը բարձր հրամանով իրեն սերքերդե (զորապետ) նշանակի, նա խոստանում և երաշխավորում է, որ սրանից հետո ինքը այդ շրջանում ամրակուռ պատվար կլինի ռուսների դեմ և թույլ չի տա, որ թշնամիներից որևէ մեկը երբևէկի Ֆաշի և այդ շրջանի ծովեզերքի հողերում։ Վերոհիշյալ Գուրյալը, նախազգուշացման կարգով, սուլթանական Բարձր Դերգյահին գրավոր հայտնել էր, որ եթե իր առաջարկը ուշադրության առնվի, ապա ինքը այդ ուղղությամբ գործի կանցնի և իր ջանքերով Քեմհալը կազատի ռուսներից։ Այդ քայլով նա ապացուցած կլինի իր ասածն ու խոստումը։

Այն պահին, երբ նրան հայտնել էին, որ անհրաժեշտ ռազմական լրացումներով իրեն տրվում է սերքերդեություն և նա էլ այդ գործը ստանձնելով, ինչպես ասվեց վերևում, պատրաստվում էր իրագործել իր խոստումները, այդ շրջանի վեզիրների և ղեկավար-

ների միջև գոյություն ունեցող հակառակության և երկպառակության պատճառով, ուրիշների գործերին արգելք լինելու և նրանց խանգարելու նպատակով և, բացի այդ, վերոհիշյալ վրացու նկատմամբ մի քանիսի ունեցած ատելության հետևանքով, վրացու նախաձեռնության մասին տեղեկություն հաղորդեցին ռուսական գեներալին, որի պատճառով այդ օգնության գործը այս անգամ հետաձգվեց և անհետևանք մնաց։ Այսպիսով վերոհիշյալ սահմանային գոտին դուրս եկավ իսլամների ձեռքից։ Ախալցխայի ազնվատոհմերից մի քանի անկողմնակալ և վստահության արժանի անձանց տված վերոհիշյալ տեղեկությունները արձանագրվեցին այստեղ [Շանի Զադեի պատմության մեջ]։

(էջ 313—314)

## 1225 (1810) թվականի դեպքերից

Շանի Զադեն այս թվականի դեպքերից նշում է, որ Իրանի գահաժառանգ Աբբաս Միրզան նորից առաջ է քաշում երկու իսլամական պետությունների միջև բարեկամություն և եղբայրություն հաստատելու իր ցանկությունը։ Օսմանյան կառավարությունը ընդառաջելով նրա այդ ցանկությանը՝ հայտնում է, որ կրոնական կապի ամրապնդման համար անհրաժեշտ է համատեղ միջոցներ ձեռք առնել երկու իսլամական երկրների ընդհանուր թշնամու՝ Ռուսաստանի հարձակումների և իսլամական երկրների հաշվին իր սահմանները ընդարձակելու նրա ձգտման դեմ։

Այնուհետև, տարեգիրը մանրամասնորեն խոսում է Արևելքի երկրների նկատմամբ [Ռուսաստանի] ձեռնարկած միջոցների, ինչպես նաև այդ առթիվ հրավիրված խորհրդակցական մեջլիսի մասին։ Այդ մեջլիսում, նկատի առնելով Էրզրումի, Տրապիզոնի, Ախալցխայի, Կարսի, Չըլդըրի վիլայեթների վալիների և փաշաների միջև գոյություն ունեցող թշնամությունն ու հակառակությունները, որոշվում է նրանցից [վալիներից] մի քանիսին պաշտոնից հեռացնել և փոխարինել այլ փաշաներով։ Արևելքի սահմանները պաշտպանելու և ամրացնելու համար հատուկ կարգադրություններ են արվում անհրաժեշտ զենքեր, հատկապես թնդանոթներ և ռմբաձիգներ հայթայթելու մասին։ Միջոցներ են ձեռք առնվում Փաշի բերդը ռուսներից վերագրավելու համար։ Հատուկ հրահանգներ են տրվում նավատորմին՝ Սև ծովի եզերքի և նավահանգիստների պաշտպանության կապակցությամբ։

Նույն 1225 թվականի դեպքերից պետք է հիշել նաև հետևյալը։

Ռուսաստանի դեմ պատերազմական գործողությունները շարունակվում էին թե՛ եվրոպական և թե՛ ասիական մասերում։ Ռուսները միաժամանակ պատերազմում էին Թուրքիայի և Իրանի դեմ։ Սակայն երկու իսլամական երկրների միջև շարունակվող երկրորդական բնույթի վիճելի հարցերի պատճառով, Թուրքիան և Իրանը չէին կարողանում միասնական ճակատ ստեղծել ռուսների դեմ։

Ռուսները հարձակվում էին Սև ծովի եզերքի և Ախալցխայի շրջանի վրա։ Օգտագործելով Իրանի և Թուրքիայի միջև շարունակվող տարաձայնությունները, նրանք աշխատում էին ուժեղացնել իրենց դիրքերը Դաղստանում և Վրաստանում։

1225 (1810) թվականին ռուս գեներալ Տորմոսովը գրավեց Թիֆլիսը և փորձեց դուրս վռնդել Աչըք Բաշի Սոլոմոն խանին[5], սակայն վերջինիս հաջողվեց փախչել Ախալցխա և օգնություն խնդրել Թուրքիայից և Իրանից։

(էջ 408—409)

## 1226 (1811) թվականի դեպքերից

*Վեց տարուց ի վեր շարունակվող ռուս-թուրքական պատերազմը վերջանում է 1226 (1811) թվականի Բուխարեստի հաշտության նախնական պայմանագրով, իսկ վերջնական պայմանագիրը կնքվում է հաջորդ՝ 1227 թվականին։*

*Թուրք պատմագիրների ասելով, Բուխարեստի հաշտության պայմանագրի ստորագրումից հետո օսմանյան կառավարությունը ձեռնարկում է ներքին բարենորոգումների (երկրի բազմաթիվ մասերում գլուխ բարձրացրած ապստամբ, հաճախ կիսանկախ մյութեղալիբների[6] տարբեր տեսակի անկարգությունների վերացում և այլն)։*

*Փաշի բերդը թշնամուց [ռուսներից] ետ գրավելու պայմանով, փադիշահական հրամանով Քունիայի սանջակը շնորհվում է Բարձր Դերգյահի Կափուջի Բաշի և Տրապիզոնի մյութեսելլիմ [հարկահավաք] խազինեդար Ջադե Սուլեյման աղային։*

*Էրզրումի վալի և Արևելյան ճակատի սերասքեր վեզիր Էմին փաշային անհրաժեշտ ուժեր և միջոցներ են տրվում Արևելյան ճակատը ամրապնդելու և պաշտպանելու համար։*

*Կարսի պահապան միրիմիրյան Աբդուլլահ փաշան, Ախալցխայի պատերազմում ցույց տված ջանքերի և ծառայության համար, պարգևատրվում է վեզիրության աստիճանով։ Միաժամանակ նրան հանձնարարվում է ապահովել այդ շրջանի պաշտպանությունը։*

*(Հատ. II, էջ 2—7)*

### ՎՐԱՍՏԱՆԻ ՌԱՅԱՆԵՐԻ ԴՐՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ԱՉԸՔ-ԲԱՇԻ ՆՇԱՆԱՎՈՐ ԻՇԽԱՆ ՍՈԼՈՄՈՆԻՆ ՏՐՎԱԾ ԲԱՐՁՐ ՀՐԱՄԱՆԸ

*...[Ռուսաստանը] ամենից առաջ հեռացրեց իր խաբեբայության զոհ դարձած Աչըք Բաշի իշխողին [Սոլոմոնին] և աքսորեց Թիֆլիսի կողմերը։ Հետո, նրա ազնվականներից յուրաքանչյուրին՝ զանազան պատրվակներով բռնությունների ենթարկեց, անպատվեց բոլոր այն զինվորներին, որոնք իրենց ամբողջ կյանքում օսմանյան պետության շնորհիվ ոչ մի բռնության չէին ենթարկվել, ձանձրացրեց նրանց և այդ բարեհամբույր ժողովրդին [վրաց ժողովրդին] մեծ նեղություններ պատճառելով՝ դավեր լարեց նրա դեմ։*

*Միայն այդ ժամանակ վրաց ժողովուրդը դժվարությամբ կարողացավ հասկանալ, թե ինքը ի՞նչ մեծ դժբախտության առաջ է կանգնած։ Խելամիտ մարդկանց մեծ մասը առանձին-առանձին, մեկ կամ երկու հոգով, մի կերպ Ախալցխա փախան և այնտեղ վեռոհիշյալին [Սոլոմոնին] տեղեկացրին կատարվածների մասին։*

*Այդ քաջարի և հազվագյուտ հերոսը [Սոլոմոնը] բոլորին իր շուրջը հավաքելով և ապացուցելով իր՝ Ռուստեմ Ջալի սերնդից լինելու մասին տարածված լուրը, իր բազուկի ուժով ռուսների մեջլիսից ազատվեց և նորից Ախալցխա եկավ։ Այստեղ իր հավաքած քաջերով սկսեց կռվել ռուսների դեմ։*

*Ընդունելով թշնամու մոտ եղած ժամանակ իր թույլ տված*

սխալները և արտահայտելով իր զղջումը դրանց համար, նա դիմեց սուլթանական կառավարությանը և ներողամտություն ու օժանդակություն խնդրեց։

Նորին վսեմության գահին ներկայացրած նրա [Սոլոմոնի] խնդրագիրը նախօրոք Ստամբուլ հասած լինելով, օսմանյան բարձր կառավարության ողորմության շնորհիվ, Նորին վսեմություն փադիշահի կողմից նրան շնորհվեց արքայական խալաթ և փադիշահական ֆերման, փադիշահական նվերներ ու մի քանի պատվերներ և հրամաններ, որոնք [Սոլոմոնի] վերոհիշյալ հավատարմության խնդրագիրը բերող մարդկանց միջոցով նրան ուղարկվեցին։

(հատ. II, էջ 27—29)

* * *

Նկատի ունենալով, որ օսմանյան կառավարության վարած կեղծ և դավադիր քաղաքականությունը Վրաստանի նկատմամբ բավականին պարզ կերպով արտահայտված է սուլթանի՝ Աչըք Բաշի իշխան Սոլոմոնին ուղարկված ֆերմանում, այստեղ թարգմանաբար բերվում է այդ ֆերմանը, իսկ դրա թուրքերեն տեքստը տրրվում է հատորի հավելվածում։

## ԲԱՐՁՐ ՀՐԱՄԱՆ

Աչըք Բաշի իշխան Սոլոմանին [Սոլոմոն] հրաման։

Բարձր սերդար Քեյխուսրեվի* և սերդարի օգնական Դավիթի ձեռքով ուղարկված քո և քեզ հետ համախոհ, հնազանդ և հպատակ ազնվականների խնդրագրերը այս անգամ հասել են բարձր և փառապանծ ապարանքին և իր ողորմությամբ հռչակված Դռանը։ Բովանդակությունից [երևում է] օսմանյան պետության հանդեպ ձեր հնուց ի վեր ունեցած անկեղծությունն ու հավատարմությունը։

Համաձայնության և ուղղամտության մեջ հարատև վրացական ցեղերին խաբելով և մոլորեցնելով, խարդավանքով և որոգայթներով Վրաստանը գրավելու և նվաճելու մտում ունեցող Ռուսաստանը [Մոսկովը], սրանից առաջ խարդախությամբ և դավերով ձեռքը երկարել էր Թիֆլիսի կողմերը։ Իմ օսմանյան պետության ռայաներին, նրանց կալվածներին և հողերին վնասներ չպատճառելու մասին Աստծու անունով երդում տալով, սկզբում արտաքուստ վստահություն էր ցույց տվել, իսկ հետո՝ դավադրությամբ և խաբեբայությամբ, քեզ ուղարկել էր Թիֆլիսի կողմերը՝ ձերբակալելու և բանտարկելու սպառնալիքներով։

---

* Շանի Զադեի պատմության մեջ Քեյխուսրեվը հիշատակված է աղավաղված ձևով՝ Քենչերեվ։

Սակայն դո՛ւ, որ վերոհիշյալ մելիքն ես, քո բնածին ջանասիրությամբ և արիությամբ, ռուսների [ռոպյալու] բռնակալ ու չարագործ ձեռքից ազատվելուց և այս կողմերը գալուց հետո, ձեռնարկեցիր պաշտպանվելու ռուսական զորքերից։ Քո բոլոր հպատակներն ու ազնավուրները քեզ հետ համախոհ են։ Սրանից հետո, իմ պետության հավերժական թշնամու դեմ շարժվելու համար, ներկայումս քո բոլոր ռազմական միջոցներով գտնվում ես Ախալցխայում։ Այդ մասին գրված և հայտնված է ինձ։

Վերոհիշյալ խնդրագրով եկած իմ բարձր սուլթանության վեքիլներին կատարած քո մարդկանց բերանացի և գրավոր դիմումները մատուցվեցին իմ կայսերական բարձր ունկընդրությանը և ես ծանոթացա բոլորի բովանդակությանն ու հավատարմական արտահայտություններին։ Իմ մեծ նախնիների բարձր հոգատարությամբ Վրաստանի երկիրը իմ կայսերական երկրի մաս կազմելու օրից մինչև այսօր, նրա բնակիչները, էմիրները և վարիչները մշտապես շնորհից, համակրանքից, ապահովությունից և հանգստությունից բացի ուրիշ ոչինչ չեն տեսել։ Իմ հավերժական պետության մեջ ապրող բոլոր ռայաների, տկարների ու թույլերի, բոլոր բեյերի ու ծառաների (գյադա) ընտրած ծիսակատարություններին և սովորություններին միջամտություն ցույց չտալը իմ բարձր սուլթանության մեջ ընդունված կարգերից է, որը հայտնի է բոլորին և փորձված է բոլորի կողմից։

Ակնհայտ է, որ այսպիսի ռայասեր, արդարադատ և հաստատուն պետության ծառայությունը թողնելով, վտանգավոր հետևվանք և ցավալի վախճան ունեցող այլ ճանապարհով գնալու հակամիտություն ցույց չպետք է տրվի։ Այդ կապակցությամբ՝ իրենց օգուտն ու վնասը հասկացող և գործի վախճանը նախատեսող իմ ծառաները, դու և քեզ հետ միասին իմ փադիշահության համար հավատարմությամբ աշխատողներդ, ամեն կողմից հովանավորություն և պաշտպանություն եք գտնում իմ բարձր փադիշահական շնորհներով։ Իմ արքայական գթասիրությունն ու ողորմածությունը ձեր նկատմամբ, իմ փադիշահական շնորհները միշտ անպակաս են լինելու։ Քանի որ այս ամենը պարզ է ու ակնհայտ, ապա՝ ժամանակի և պայմանների համաձայն, այդ շրջաններեն հատկացված մեծաքանակ և առատ սննդամթերքը ու ժամանակին հասցնելու և պատերազմական միջոցներով Վրաստանից ռուսներին բոլորովին դուրս հանելու ու վռնդելու համար էրզրումի վալի և Արևելքի ճակատի սերասքեր, իմ բարձր վեզիր էմին փաշային անհրա-

ժեշտ միջոցառումներ ապահովելու մասին գրվեց և կարևոր պատվերներ տրվեցին։

Տնահատելով քո ցույց տված հավատարմական գործերը, վերահաստատվում ես քո իշխանության ենթակա Աչըք Բաշի երկրի մելիքության մեջ, որի համար անհրաժեշտ նոր հրովարտակը (մենշուրը) և դրա հետ միասին իմ կայսերական հատուկ խալաթները՝ սամույրից կարված մի բերկրալի խալաթ ու ծախսի համար՝ առայժմ հինգ հազար ղուրուշ, իբրև նվեր, ուղարկված է վերոհիշյալ սերասքերի միջոցով։

Դրության մասին հայտնված է նաև իմ բարձր վեզիր Չըլդըրի վալի Շերիֆ փաշային, իսկ սույն բարձր հրամանը ուղարկվում է քո մարդկանց միջոցով։

Այժմ, իմ բարձրարժեք նվերի հետ քո [իշխանության] վերահաստատման մասին տրված փադիշահական հրամանը, երբ վերոհիշյալ սերասքերի միջոցով քեզ հասնի, դու պետք է դիմավորես հարգանքի, մեծարանքի նշաններով և պարծանքի արտահայտություններով։

Օսմանյան պետության հանդեպ քո ցույց տված անկեղծությունն ու հավատարմությունը շարունակելու ես սրանից հետո ևս, և պետք է հաստատակամ լինես քո հպատակության մեջ։ Հավատարմություն և հպատակություն ցույց տվողները, սուլթանական հնագույն սովորության համաձայն, կարժանանան իմ կայսերական շնորհներին և ողորմությանը։ Աշխատեցե՛ք և ջանացե՛ք հասկացնել և ներշնչել Վրաստանի բոլոր այն ցեղերին, որոնց անհրաժեշտ է։

Վերոհիշյալ վեզիրի ու սերասքերի հավանությամբ և միջոցառումներով Չըլդըրի վալիի թշնամուց պաշտպանվելու գործում մըշտապես գործակցե՛ք միմյանց հետ։

Ռայաներին օգնելու և երկրում կարգ ու կանոնի պահպանության քո ջանքերը շարունակելու դեպքում, քո նկատմամբ իմ փադիշահական ակնհայտ համակրանքը օր ավուր պետք է աճի ու ավելանա և, ինչպես քեզ հայտնի է, իմ արքայական շնորհներն ու փաղաքշանքը անպակաս պետք է լինեն։

Քո բնածին անկեղծությունն ու հավատարմությունը, ինչպես և անհրաժեշտ հպատակությունը պահպանելով, ամեն պարագային իմ փադիշահական համակրությունն ավելանալու համար քո ջանասիրության մասին տրված է իմ բարձր ֆերմանը։

Գրվեց 1226 (1811 թ.) ռեբի-ուլ-էվվելի կեսին։

(հատ. II, էջ 29—30)

## 1231 (1815) թվականի դեպքերից

### ՎԱՆԻ ՍԱՀՄԱՆՈՒՄ ՈՐՈՇ ԻՐԱՆՑԻՆԵՐԻ ՀԱՆՑԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆԸ ԵՎ ՍԱՀՄԱՆԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՏՐՎԱԾ ՖԵՐՄԱՆԸ

Դրանից առաջ, որոշ իրանցիներ հարձակում են գործել Վանի էյալեթի սահմանում։ Երբ այդ դեպքի մասին հարցում արվեց Իրանի պետական պաշտոնյաներին, նրանք պատասխանեցին, որ [այդ մասին] լուր չունեն։ Նրանք ավելացրին, որ Մուհամմեդ Ալի Միրզան՝ Բաղդադի կողմերում, իսկ Խոյի խանը՝ Վանի կողմերում, իրենց կատարած ասպատակություններով դավաճանություն են արել, որի համար իրենք էլ են դժգոհ։ Այս մասին Արևելքի սերասքեր Փահլևան Իբրահիմ փաշան գրել էր և հայտնել փառապանծ [սուլթանական] Դերգյահին։ Նկատի ունենալով, որ վերոհիշյալների շարժումը ապստամբական բնույթ ունի, Վանի պահապանին և Արևելքի վերոհիշյալ սերասքերին հանձնարարվեց և պատվիրվեց, որ արգելի Իրանի սահմանի որևէ խախտում, իսկ Օսմանյան կայսրության սահմանն անցնողներին վռնդելու մասին հոգատար լինեն և միջոցներ ձեռք առնեն։

Այս անգամ Ստամբուլում ստացված գրություններից պարզվում էր, որ վերոհիշյալ Մուհամմեդ Ալի Միրզան կողոպտել և թալանել է Բաղդադի շրջանը։ Աբաս Միրզան մեծ քանակությամբ զինվոր էր հավաքել Բաղդադի շրջակայքում ապրող քուրդ աշիրեթներից, որպեսզի հարձակվի Դեվանդեր աշիրեթի վրա։ Երբ այդ դեպքը ստուգվեց, նախազգուշության համար՝ ներկայիս Բաղդադի վալի Մուհամմեդ Սաիդ փաշային վերոհիշյալ Աբբաս Միրզային ու Մուհամմեդ Ալի Միրզային հատուկ գրություններ ուղարկելով, հայտնեցին, որ համաձայն չեն փադիշահական երկրի սահմաններից մի թիզ հող անգամ տալ։

Կատարված հարձակումները ետ մղելու համար՝ իբրև պատասխան այդ շրջանի բնակիչների ուղարկված գրությունների, պարսկերեն լեզվով գրված հավաքական մի դիմում ստացվեց ժողովրդից։

Սերասքերից ստացված գրությունից փադիշահը ծանոթացավ իրերի դրությանը։ Պարզվեց, որ նրանք խախտում են օսմանյան պետության սահմանները և քանի որ իրանական պետության պաշտոնյաները հայտնում են, որ իրենք ևս համաձայն չեն այդ գործերին, ապա պարզ է, որ եթե այդ դեպքերի վրա աչք փակվի և թուլություն ցուցաբերվի, այդ շրջանում նման խախտումները կշարունակվեն։ Դեվանդերի աշիրեթը և այդ շրջանում եղած լիվաներն ու կազաները Օսմանյան կայսրության մասն են կազմում։ Տեղի

ունեցած հարձակումները արգելելու համար անհրաժեշտ միջոցների իրականացումը պետք է ընդունել իբրև ժամանակի պահանջ։ Նկատի ունենալով, որ վերոհիշյալ աշիրեթը և նրա շրջակայքը Մուսուլին մոտ են և սահմանակից, միաժամանակ շատ հեռու չեն, ջեմազիել-ախըրի վերջին փադիշահական հրաման ուղարկվեց Մուսուլի վալիին և Փահլևան փաշային, որպեսզի ամեն կերպ օժանդակություն ցույց տան վերոհիշյալ աշիրեթին և անհրաժեշտ միջոցներ ձեռք առնեն այդ շրջանում իրանցիների միջամտությունները արգելելու համար։

(հատ. II, էջ 290—291)

## ԱՊՍՏԱՄԲԱԿԱՆ ԴԵՊՔԵՐ ՉԸԼԴԸՐԻ ԷՅԱԼԵԹՈՒՄ

Այս հատվածում Շանի Զադեն մանրամասնորեն նկարագրում է փաշաների և պետական այլ բախտախնդիր պաշտոնյաների հրահրած ապստամբական շարժումները, խլրտումները և ավազակությունները Չըլդըրի էյալեթում, որոնք ինչպես հայտնի է, այդ դարաշրջանում Օսմանյան կայսրության գրեթե բոլոր մասերում դարձել էին սովորական երևույթ, խանգարում էին երկրի անդորրը և ծանր հարվածներ հասցնում ժողովրդական մասսաներին։ 1231 թվականին Չըլդըրի դեպքերը նույն բնույթն ունեին։ Չըլդըրի վալի Սելիմ փաշա Զադե Ահմեդ բեյը գրգռելով էյալեթի Վերին Աջարայի ժողովրդին, նրան ոտքի է հանում և ապստամբում։ Փադիշահական հրամանով նրա վրա են ուղարկվում էրզրումի և Տրապիզոնի վալիները։ Ուղարկված ուժերի ղեկավար Բաշբուղը գրավում է Աջարան։ Ահմեդ բեյը փախչում և թաքնվում է անտառում։ Վերին Աջարայի թվով 150 ուլեմաները և սուլեհաները', աղաներն ու ժողովուրդը հպատակություն են հայտնում Բաշբուղին և խոստանում են բռնել և հանձնել Ահմեդ բեյին։

Ախալցխայի օջախի աղաներից մեկը՝ Աղզը-աչըք Մուհամմեդ բեյ անունով անձը, որը կապված է եղել ապստամբ Ահմեդ բեյի հետ, սուտ լուրեր տարածելով, իր շուրջն է հավաքում մի շարք բախտախնդիրների և փորձում է օգնել Ահմեդ բեյին։

Անտառում թաքնված Ահմեդ բեյը տեսնելով, որ չի կարող ազատվել կառավարական ուժերի հետապնդումից, փախչում և ապաստանում է վերոհիշյալ Աղզը-աչըք Մուհամմեդ բեյի մոտ։ Այս վերջինը հավաքելով իր բոլոր ուժերը, բռնում և բանտարկում է Ախալցխայի միրիմիրանին։ Նա Չըլդըրի էյալեթի էրդունի (։), Մամրվանի, Օլթիի և Փենեքի սանջակներին գրություն ուղարկելով, փորձում է նրանց ևս մասնակից դարձնել այդ խռովարարական շարժմանը։

Սակայն հիշյալ սանջակների ժողովուրդները մերժում են ապստամբությանը մասնակցելու այդ առաջարկը և պաշտպանվելու համար խրամատներ են կառուցում ճանապարհների քարքարոտ վայրերում։ Տեղի ունեցած կռիվներում սպանվում են բազմաթիվ զինվորներ։ Խրամատները քանդում են։

Վերոհիշյալ Աղզը-աչըքը իր ավազակախմբով գալիս և պաշարում է Գենջեվան անունով գյուղը, որտեղ ամրացել էին կառավարության ուժերը։ Պաշարումը և մարտերը շարունակվում են տասնհինգ օր։ Էրզրումից օժանդակ ուժեր են հասնում։

Տարեգիրը գրում է.

«..Երբ այս դեպքերի մասին տեղեկություն տրվեց փադիշահին, նա չկարողացավ հանդուրժել այդ բոլորը։ Նկատի ունենալով, որ Չըլդըրի էյալեթում և հատկապես Ախալցխայում մի քանի անգամ տեղի են ունեցել նման ապստամբական շարժումներ, բայց այդ վայրերը իսլամական [երկրի] սահման լինելու պատճառով, նախքան այդ նրանց նկատմամբ ճնշում և բռնություն չի գործադրվել, այլ բավականացել են նախազգուշացումով, խրատներով և գթություն ու ողորմություն ցուցաբերելով։ Սակայն նրանք ապըստամբության վարժված լինելով և դրանից հաճույք զգալով, նման նախազգուշացումներով չեն խրատվել և այս անգամ նորից են ապստամբել և օսմանյան երկրում խռովություն առաջացրել...

Փադիշահը ուրիշներին օրինակ տալու նպատակով անհրաժեշտ համարեց խիստ պատժել նման վատ գործերի դիմող հիշյալ Աղզը-աչըքին և նրա գործակիցներին։ Այդ դավաճաններին մահվան դատապարտելու և Ախալցխայում կարգ ու կանոնը վերականգնելու մասին նա հրաման տվեց և փադիշահական հրովարտակով այդ գործին նշանակեց վերոհիշյալ Փահլևան փաշային։ Նկատի ունենալով նաև, որ Ախալցխան կայսերական երկրի սահմանն է և պաշտպանության համար ամրություններ ունի, որոշվեց վերոհիշյալ ապստամբների այնտեղ ապաստանելու դեպքում՝ նրանց զսպել և ոչնչացնել։ Դժվարության դեպքում որոշվեց Էրզրումի և Չըլդըրի էյալեթների բոլոր էշքինջի թիմարների և զեամեթների զորամասերը[8] ուժեղացնել և ուղարկել այնտեղ։ Բացի այդ, օգնության կարիք լինելու դեպքում, պետք է ուղարկվեին նաև համապատասխան բոլոր պաշտոնյաները։ Այս բոլորի մասին անհրաժեշտ հրամանները տրվեցին և անհրաժեշտ հասցեներով գրություններ ուղարկվեցին։ Այս մասին, շաբան ամսի սկզբին, տրվեց և ուղարկվեց փադիշահական բարձր հրաման։

(հատ. II, էջ 296—298)

## 1233 (1817—1818) թվականի դեպքերից

### ԻՐԱՆԻ ԴԵՍՊԱՆԻ ՎԵՐԱԴԱՐՁԸ

Իրանի դեսպան Մուհիբ Ալի խանը, իր դեսպանության գործերը ավարտելուց հետո, վերադառնալու արտոնություն էր ստացել։ Նրա հետ տեղի ունեցած մի քանի տեսակցությունների ժամանակ պարզվեց, որ դրանից առաջ վսեմ շահը ընդունել և հաստատել էր մի կարգ, որ Քուրդիստանից ձեռք քաշի և պատանդներից բացի

մնացածներին վերադարձնի։ Օսմանյան դեսպաններին բերանացի խոստում էր տվել, որ այլևս փախստականներին չընդունեն, սահմանը խախտելու դեպքերն արգելեն, ինչպես նաև՝ կարգավորեն Սեդմանիշ բերդի ավերման հարցը։

Երբ դեսպանին հարցրին վերոհիշյալների մասին, նա պատասխանեց, որ խոստացածի համաձայն, էրզրում հասնելուն պես իր մարդկանցից մեկին կհանձնարարի, որ Վանի կողմերում գտնվող օսմանյան պետության պաշտոնյաների հետ միասին ձեռնարկեն վերոհիշյալ բերդի վերականգնման և նորոգման աշխատանքներին, քանի որ բոլոր ծախսերը օսմանյան պետության պաշտոնյաներին ինքն է վճարելու։ Մնացած հարցերը կարգավորելու մասին ինքը կհայտնի Իրանի կառավարությանը։

Դրանից հետո, դեսպանը մեծ պատվով և հարգանքով Իրան է վերադառնում՝ իր հետ տանելով շահին, Իրանի սադրազամին, գահաժառանգ Աբբաս Միրզային և պետական այլ անձանց ուղղված նամակներ։

(հատ. II, էջ 350)

## ՍՎԱԶԻ ԽՌՈՎՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

*1233 թվականի դեպքերից Շանի Զադեն մանրամասնորեն նկարագրում է Սվազում տեղի ունեցած խռովությունները, որոնք տարածվել էին ամբողջ երկրում։ Փաշաների և այլ բարձրաստիճան անձանց այդ կարգի խռովարարական շարժումներից, անտարակույս ամենից ավելի տուժել են ժողովրդական մասսաները*։*

* * *

Սվազի բնակիչ Քենան-օղլու անունով բախտախնդիր մի մարդ սպանում է մյուլթեզիմ Մուհամմեդ աղային և կողոպտում է նրա հարստությունը։ Սպանվածի եղբայրը գնում է Ստամբուլ և դիմում է ներկայացնում։ Փադիշահը Սվազի վալիին հրամայում է գործը քննել դատական կարգով և պատժել մարդասպանին։ Վերջինս իր շուրջը հավաքելով իր նման մի շարք ավազակների, հարձակվում է դատարանի, ինչպես նաև Վալի փաշայի պալատի վրա և նոր չարագործություններ կատարում։

Երբ այս բոլորի մասին լուր է հասնում Ստամբուլ՝ սադրազամը զեկուցում է փադիշահին։ Վալին Ստամբուլ է կանչվում։ Նման

* Այդ շարժումների մասին տե՛ս «Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին», հատ. Ա. «Թարիխի Ջեվդեթ», էջ 303—307։

*դեպքերը մյուս քաղաքներում կանխելու նպատակով որոշվում է դրանց պատճառ հանդիսացողներին աքսորել տարբեր վայրեր, իսկ կատարված դեպքերը բազմակողմանի կերպով քննելու համար հատուկ մյուբաշիր ուղարկել և Վալիին օգնական ուժեր տալ։*

*Տարեգրի ասելով, «այդ դեպքերը գաղտնի պահվեցին»։*

*Սվազի վալին՝ փադիշահական հրամանի համաձայն, խառնակիչ ավազակներին աքսորելու համար մեկ-մեկ ձերբակալում է։ Վալիի քեթխուդայի դրանից առաջ կատարած բռնություններից ձանձրացած Սվազի ժողովուրդը սարսափում է և վալիին սպանելու համար հարձակվում է պալատի վրա և պաշարում այն։ Մի քանի օր անց՝ պալատում բանտարկվածներին ազատելու պայմանով, երկուստեք վեճը դադարեցվում է։ Այդ դեպքերից հետո՝ նկատի առնելով ժողովրդի և վալիի միջև համաձայնության հասնելու անկարելիությունը, որոշվում է Սվազի վալիին հեռացնել պաշտոնից։*

*(հատ. II, էջ 394—395, 411—412)*

## 1234 (1819) թվականի դեպքերից

*Այս տարվա կարևոր դեպքերից են Վանում և Դիարբեքիրում տեղի ունեցած ապստամբական շարժումները։ Այդ դեպքերի նկարագրությունը կա նաև «Թարիխի Ջեվդեթ»-ում։ Կրկնությունից խուսափելու համար Շանի Զադեից չեն թարգմանվել «Ապստամբությունը Վանի բերդապահությունում» վերնագրով հատվածը և հաջորդ հատվածները։*

*(հատ. III, էջ 4—9, 46—50, 54—57)*

*Նույն թվականի բնորոշ դեպքերից են նաև Ստամբուլում ապրող քրդերի և խումբարաջի[9] զորամասերի միջև տեղի ունեցած կատաղի ընդհարումներն ու անթիվ սպանությունները։ Այդ հատվածները թարգմանվում են կրճատումներով։*

### ԹՇՆԱՄՈՒԹՅՈՒՆ ԵՎ ԽՌՈՎՈՒԹՅՈՒՆ ԽՈՒՄԲԱՐԱՋԻՆԵՐԻ ԵՎ ՔՐԴԵՐԻ ՄԻՋԵՎ

*Ստամբուլի Խասքյոյ թաղամասում պոռնիկի պատճառով մի խումբարաջի սպանում է մի քրդի։ Հաջորդ օրը, 15 քուրդ հարձակվում են մի խումբարաջիի սրճարանի վրա և սպանում մի քանի խումբարաջիների։ Այդ պատճառով քրդերի և խումբարաջիների թշնամությունը գնալով ուժեղանում է և խորանում։ Մի քանի օր հետո քրդերը հարձակվում են խումբարաջիների զորանոցի վրա։ Խումբարաջիներն ու մյուս զինվորները զինվում և պատրաստվում են թնդանոթներով հարձակվելու նավաշինարանում (թերսանե) աշխատող քրդերի վրա։ Կափուդան փաշան, այս թշնամության առաջն առնելու նպատակով, կանչում է երկու կողմի սպաներին ու խելահաս մարդկանց և փորձում է նրանց հաշտեցնել։ Երբ պարզվում է, որ այդ թշնամությունը հրահրողները խումբարաջի և լա-*

ղըմջի օջախների չավուշներն են, դրանց անմիջապես հեռացնում են պաշտոնից և աքսորում։ Խռովությունը լրիվ վերացնելու համար կափուդան փաշան, փադիշահական հատուկ հրամանով, նոր խորհրդակցություն է հրավիրում և քրդերի պարագլուխ Մանդե Աղայի միջոցով հանգստացնում է քրդերին։ Մանդե Աղան խոստանում և երաշխավորում է, որ այլևս նման դեպքեր տեղի չեն ունենա։ Նման խոստումներ են տալիս նաև խումբարաջիների պարագլուխները։ Այդ ձևով խռովարարական շարժումը և արյունահեղությունը կանխվում է։

(հատ. III, էջ 41—43)

## 1235 (1819—1820) թվականի դեպքերից

### ԿՈՒՄ ԿԱՓՈՒԻ ԵԿԵՂԵՑՈՒ ԹԱՆՋԲԱՐՆԵՐԻ ԵՎ ԵՆԻՉԵՐԻՆԵՐԻ ՄԻՋԵՎ ՏԵՂԻ ՈՒՆԵՑԱԾ ԿՌԻՎԸ

*Ստամբուլում տիրող դրության բնորոշ պատկերներից է նաև այս դեպքը, որի մասին Շանի Զադեն խոսում է, այն համարելով սովորական երևույթ։*

Այդ ժամանակաշրջանում իրենց ենիչերի համարող մի շարք բախտախնդիր մարդիկ, այս ու այն կողմ թափառելով, զանազան պատրվակներով, թե՛ մուսուլմաններին և թե՛ հարուստ ու աղքատ ռայաներին մեծ նեղություններ էին պատճառում։ Այսպես, տարբեր արհեստավորների (ներկարար, ծեփող, նկարազարդող և այլն) անվան տակ իրենց «ըրղադ-բաշը» (շինարարական բանվորների պետ) համարելով, երկու անգամ ավելի բարձր աշխատավարձ էին ստանում և զանազան խաբեբայական միջոցներով, բանվորներին հասնող շաբաթական աշխատավարձից ավելին բռնությամբ առնում էին շինարարությունների տերերից և միայն կեսը տալիս բանվորներին։ Շինարարական բոլոր տեսակի նյութերը միայն ըրղադբաշիների միջոցով ձեռք բերելով, դրանից էլ մեծ գումարներ էին կորզում, իսկ խեղճ բանվորներին ստիպում էին աշխատել ամենածանր պայմաններում։

*Կում Կափու թաղամասում ծագած հրդեհի ժամանակ այրվում է նաև հայկական եկեղեցին, որի վերաշինման համար մեծ դժվարությամբ են հրաման ձեռք բերում։ Եկեղեցու կառուցման կապակցությամբ շրջակայքի բախտախնդիրները և չարագործ տարրերը, դրամ կորզելու նպատակով, միջամտում են և դժվարություններ հարուցում։ Եկեղեցու կառուցման գործով զբաղվող հայերը փորձում են կաշառք տալու միջոցով այդ չարագործներից ազատվել, բայց՝ ապարդյուն. դրանց թիվը գնալով ավելանում է։ Չարագործները շինարար բանվորներին մեծ նեղություններ են պատճառում, հաճախ խանգարում են նրանց աշխատանքը և բան-*

վորներին ցրում։ Ի վերջո գործը հասնում է ընդհարումների, կռվի և սպանու-թյունների։ Տարեգրի ասելով, «վանքի (եկեղեցու) համար լինում են իրենց անձը զոհողներ»։

(հատ. III, էջ 87—88)

## ՀԱՅԵՐԻ ԵԼՈՒՅԹԸ ՊԱՏՐԻԱՐՔԻ ԴԵՄ

Այս հատվածում տարեգիրը նորից է անդրադառնում հայ լուսավորչական-ների և հայ կաթոլիկների միջև շարունակվող վեճերին ու պայքարին։ Այդ մասին գրեթե նույնությամբ պատմում է պատմագիր Ջևդեթ փաշան իր «Թարիխի Ջևդեթ»-ի 11 հատորում*։

(հատ. III, էջ 118—120)

1236 թվականի դեպքերից Շանի Զադեն կանգ է առնում նաև Իրանի սահ-մանի վրա տեղի ունեցած իրադարձությունների վրա, որոնք ավելի մանրամասն տրված էր Ջևդեթ փաշայի «Պատմության» 12-րդ հատորում**։

(հատ. III, էջ 87—88, 127—128)

* * *

1236 (1820—1829) թվականի դեպքերի շարքում Շանի Զադեն բավականա-չափ կարևոր տեղ է հատկացնում Մորայի (Հունաստանի) ապստամբությանը։ Այդ կապակցությամբ իր պատմության IV հատորում հիշատակում է նաև Ստամբուլի հունական պատրիարքի և մի քանի մետրոպոլիտների կախաղան բարձրացնելը։

Այդ նյութերից բերվում են մի քանի բնորոշ հատվածներ։

## ՀՈՒՆԱԿԱՆ ՊԱՏՐԻԱՐՔԻ ՄԻ ՔԱՆԻ ՄԵՏՐՈՊՈԼԻՏՆԵՐԻ ԿԱԽԱՂԱՆ ԲԱՐՁՐԱՑՆԵԼԸ

Ռեջեբ ամսի 19-ին Զատկի կիրակի օրը, Նորին վսեմություն փադիշահի հրովարտակով, սադրազամը հունական պատրիարքին բերելով Բաբը Ալի, հարցրեց. «Դու նախապես տեղեկություն չե՞ս ունեցել այս ապստամբության մասին, ինչո՞ւ մեզ ոչինչ չես հայտ-նել»։ Երբ հիշյալը [պատրիարքը] ժխտեց այդ, սադրազամը, շա-րունակելով իր հարցումը, ասաց. «Երբ ձեր կրոնի համաձայն, մի պոռնիկ կնոջ մեղքի և շնության հարցում լրիվ տեղեկություն ու ծանոթություն եք ստանում, մի՞թե կարելի է հավատ ընծայել ամ-բողջ մի ազգի համար մեծ և ընդհանուր խռովարարական շարժ-ման մասին ձեր «տեղեկություն չունեմ» ասելուն։ Երբ այս խոս-

---

* Տե՛ս «Թուրքական աղբյուրները...», հատ. I, էջ 300—302։

** Տե՛ս նույն տեղում, էջ 308—315։

*քերով [պատրիարքին] կշտամբեց, վերջինս պատասխանեց. «Իմ վեհաշուք տե՛ր, ձեր ծառան իննսուն տարեկանից ավելի անգիտակից մի ծերունի է, իսկ եթե որևէ մեկը գիտե, ապա դա «տասներկուսն[1]» են»։ Այս անճիշտ պատասխանը, արդարև, հասարակ մի ծերունու և վարդապետի պատասխանը չէր։ Երկար ժամանակից ի վեր իրեն [պարտիարքին] լավ հայտնի ազգային շարժման մասին նրա անտեղյակ լինելը անհավանական էր և անհիմն։*

*Հետևաբար, [սադրազամը] ոստիկաններին հրամայեց, որ առայժմ [պատրիարքին] տանեն Կազը Քյոյ[2]։ Այսպես դուրս վռնդեց այդ անիծյալին։*

*Հիշյալի [պատրիարքի] նկատմամբ Վսեմ փադիշահի ունեցած զայրույթը ավելի ևս հրահրվեց և տրված ֆերմանի համաձայն նրան նորից պատրիարքարան տարան ու իր քեթխուդայի հետ միասին՝ Փեթրեի դռան մոտ, իրար դեմ առ դեմ կախեցին և այդպիսով նրանց մասին տրված վճիռը ի կատար ածեցին։ Դրանից հետո Կեսարիայի, Իզմիրի և Թարաբիայի մետրոպոլիտներին բերեցին և տարբեր վայրերում կախաղան բարձրացրեցին։*

*Բացի այդ, հույն ժողովրդի ավազանիից և մեծ վաճառականներից հինգ հոգու մահվան դատապարտեցին՝ մարդաշատ վայրում կախաղան բարձրացնելու միջոցով, այն մեղադրանքով, որ տեղեկություններ և գրավոր փաստաթղթեր էին ձեռք բերվել խռովության ունեցած նրանց մասնակցության մասին։*

(*Հատ. IV, էջ 29—30*)

* * *

*Ինչպես հայտնի է, կախաղան բարձրացնելիս դատապարտյալի հանցագործության մասին հատուկ պատրաստված գրությունը (դատավճռի բովանդակությունը) կախվում է դատապարտյալի վզից։ Այդ գրությունը կոչվում է «յաֆթա» (պիտակ, հայտագիր)։*

*Հունական պատրիարքի «յաֆթան», որ բերում է տարեգիրը, երկու տպագրական էջից ավելի է։ Այստեղ թարգմանաբար բերվում են «յաֆթա»-յի մի քանի բնորոշ մասերը միայն։*

## ՊԱՏՐԻԱՐՔԻ ՅԱՖԹԱՅԻ ՊԱՏՃԵՆԸ

*Ամեն մի դասի և ժողովրդի ղեկավարները իրենց պաշտոնում պարտավոր են հետևել իրենց վարչությանը հանձնված մարդկանց վիճակին ու գործերին և նրանց ապօրինի շարժումների ու գործերի մասին հաղորդեն օսմանյան կառավարությանը։*

*Պատրիարքներն էլ նշանակված են Նորին վսեմության ողորմության շնորհիվ հանգիստ և խաղաղ կյանքով ապրող ռայաների*

*վրա։ Նրանք պարտավոր են նախ և առաջ իրենք անձամբ հավատարմություն ցուցաբերել, և հետո, իրենց ժողովրդի մեջ լավն ու վատը ճանաչել և մշտապես հետևել նրանց ընթացքին ու գործերին, խրատով չուղղվողներին առհարկին պատժել կամ պատժել տալ...»։*

*«... Հունական անարգ պատրիարքը, վաղուց ի վեր, թեև արտաքուստ հավատարմություն էր ցույց տալիս, բայց վերջերս օժանդակում էր անգիտակից խռովարարների սատանայական և ցնորամիտ նպատակներին... Հազար տարիներից ի վեր, գոհությո՜ւն Աստծո, հաստատ և անսասան Մուհամմեդի կրոնի և պետության դեմ նման մտքերի անիրականանալի լինելը ինքը գիտենալով և չգիտեցողներին հասկացնելու փոխարեն, իր մեջ կենտրոնացած դավաճանության և մոլորության բերմամբ, միամիտ խռովարարներին արգելք լինելու փոխարեն, ինքը այդ խռովություններին առաջնորդ և ուղեցույց էր հանդիսացել...*

*...Վերոհիշյալ [պատրիարքը] թե՛ օսմանյան պետության հանդեպ և թե՛ իր ազգի նկատմամբ կատարել է ամեն տեսակ դավաճանություններ, որոնք լրիվ կերպով երևան են հանված։ Դրանով անհրաժեշտ էր դարձել այդ անարգ և ստոր անձնավորությանը մեջտեղից վերացնելը։ Դավաճանը, ուրիշներին օրինակ լինելու համար, կախվեց...»։*

*Պատրիարքի դիակը երեք օր կախված մնալուց հետո, փադիշահի հրամանով, հրեաները նրա դիակը տանում են դեպի ծովը և քարեր կապելով նրանից նետում են ծովը...*

*Տարեգիրը իբրև հավելված հիշում է նաև. «Իրազեկ և գիտակից մարդկանց տված տեղեկության համաձայն, [պատրիարքը] հույների շրջանում մեծ հեղինակություն էր վայելում։ Եվրոպայում նրա խոսքը մեծ կշիռ ուներ և եթե նրա նկատմամբ այդ պատիժը չգործադրվեր, նա կարող էր խաղաղեցնել հույների խռովությունները...* (?!)

*Պատմում են, որ մի ռուսական առևտրական նավի նավապետ, Ստամբուլի Ոսկեղջյուրից (Խալիջ) մի պատահական դիակ է տարել Պետերբուրգ և այնտեղ ժողովրդին ցուցադրել է իբրև պատրիարքի դիակ...*

*Կայսրի [ռուսական] մոտ ծառայության մեջ գտնվող հարգելի մի անձնավորություն այդ դիակը թաղել է իրենց եկեղեցում։ Այսպիսով [ռուսները] ուզեցել են հույներին իրենց կողմը գրավել»։*

*(Հատ. IV, էջ 30—33)*

*Օսմանյան պետությունը մշտապես հավատարիմ է մնացել բոլոր պետությունների և ազգերի հետ կնքած դաշնագրերին և պաշտպանել է ռայաների իրավունքները։*

*Միաժամանակ, պայմանագրերը խախտողների և դրանց հակառակ ընթացք բռնողների նկատմամբ, համաձայն իր կրոնական պարտավորության, գործադրել է շարիաթի վճիռները։*

*Հետևաբար, հնուց ի վեր ընդունված պատրիարքի ընտրության ծիսակատարության համաձայն, ազգի կողմից տասներկուսից [բարձր հոգևորականներ] մեկի ընտրությունը այս անգամ էլ անհրաժեշտ համարվեց և ռեջեբ ամսի 19-ին, հույն ժողովրդի մեծերին և փոքրերին ուղղված փադիշահական բարձր հրաման տրվեց...*

*(հատ. IV, էջ 29—33)*

# ՄՅՈՒՆԵՋՋԻՄ ԲԱՇԻ[1]

XVII դարի պատմագիր Մյունեջջիմ Բաշին (Դերվիշ Ահմեդ էֆենդին) առանձնահատուկ տեղ է գրավում թուրքական պատմագրության մեջ։ Նրա «Պատմությունը»՝ գրված այդ դարերի արաբական պատմագրության տրադիցիաներով, ավելի շուտ ընդհանուր պատմություն է։ Մյունեջջիմ Բաշին թուրք պատմագիրներից առաջինն է, որ փորձել է ստեղծել համաշխարհային պատմություն, որի կարևորությունը այդ դարաշրջանում մեծ էր օսմանցիների համար։

Դերվիշ Ահմեդ էֆենդին, որի ծննդյան թվականը անհայտ է, մեռել է 1113 (1702) թվականին։ Նա սուլթան Մուհամմեդ IV-ի պալատում վարել է աստղագուշակի պաշտոնը, որը ձևական և ժամանակավոր բնույթ է կրել։ Հիմնականում նա զբաղվել է պատմագրությամբ։ Իր կյանքի վերջին տարիները պատմագիրն անց է կացրել իսլամական նվիրական քաղաքներում՝ Մեքքայում և Մեդինեում։

Դերվիշ Ահմեդ էֆենդին, Մյունեջջիմ Բաշին, իր հիմնական աշխատությունը, որը հայտնի է «Մյունեջջիմ Բաշիի պատմություն» («Մյունեջջիմ Բաշի Թարիխի») անունով, գրել է արաբերեն։ Սուլթան Ահմեդ III-ի իշխանության տարիներին (1707—1730) բանաստեղծ Նեդիմ էֆենդին Մյունեջջիմ Բաշիի «Սահաիֆ-ուլ-Ախբար»[2] անունով պատմությունը թարգմանել է թուրքերեն։ Թարգմանիչը գրում է. «...Այդ շատ արժեքավոր ժողովածուն հրատարակելու և տարածելու, այն պարզ թուրքերեն լեզվով թարգմանելու պատվավոր աշխատանքը նվաստիս հանձնարարվեց սուլթանական հրովարտակով։ Սույն 1132 թվականի (1719) ջեմազիել-ախըր ամսին ձեռնարկեցի թարգմանական աշխատանքին»*։ Մյունեջջիմ Բաշիի պատմության թարգմանությունը կատարվել է նրա մահվանից հետո։ Գիրքը տպագրվել է միայն 1285 թվականին (1868) Ստամբուլում, պետական տպարանում («Մաթբաաի Ամիրե»)։

Մյունեջջիմ Բաշիի «Սահաիֆ-ուլ-Ախբարը» կազմված է երեք մեծածավալ հատորներից՝ ընդամենը 2200 էջ ծավալով։

Մյունեջջիմ Բաշին, պատմության բնորոշման և պատմությունը գրելու մեթոդի մասին առաջաբանից հետո տալիս է աշխարհի և Ադամի ստեղծման, հրեական մարգարեների պատմությունն ու նրանց գործունեությունը։ Նա հանգամանորեն կանգ է առնում իսլամի ծագման վրա։ Իրանի մասին խոսում է ըստ պարսկական ավանդությունների, իսկ արաբական իշխողներին ներկայացնելիս հենվում է արաբական ավանդությունների վրա։ Մյունեջջիմ Բաշին խոսում է նաև «Մյուլքի Ռումի», «Սյուրյանիյանի», «Ասորիյանի», «Նինվեյանի», «Բաբելիյանի» փադիշահների մասին։ Այնուհետև հիշում է հնդիկ, չին և թուրք փադիշահներին։ Անցնելով իսլամից հետո առաջացած պետություններին, խոսում է Լմեվիների, աբբասյանների, էնդելուսի (Անդալուզիա) էմիրների և այլոց մասին։ Դրանց շարքում որոշ

* «Մյունեջջիմ Բաշի Թարիխի», հատ. I, էջ 6։

*տեղեկություններ է տալիս «Թուրք հյուքյումդարների» (տիրակալների), Թուրքեստանի իշխողների, Չինգիզյան մյուլուքների, Դեշտի Կըփչաքի, Կազանի խաների և այլնի մասին։*

*Մյունեջջիմ Բաշին իր «Սահաիֆ-ուլ-Ախբար»-ի III հատորի երկրորդ կեսից սկսած (165-րդ էջից) տալիս է օսմանյան պետության պատմությունը՝ սկզբից մինչև 1083 (1672) թվականը՝ սուլթան Մուհամմեդ IV-ի իշխանության շրջանը (1648—1687)։*

*Իր առաջաբանում պատմագիրը նշում է, որ այդ հսկա աշխատությունը կազմելու համար օգտվել է արաբական ու պարսկական բազմաթիվ աղբյուրներից և մի քանի թուրքական պատմագիրներից։ Արաբական աղբյուրներից հիշում է 32 հեղինակների, պարսկականից՝ 15, թուրքականից՝ 7*։*

*Սովետական հայտնի արևելագետ ակադեմիկոս Ի. Յու. Կրաչկովսկին, խոսելով Մյունեջջիմ Բաշիի «Պատմության» մասին, նշում է. «Ա. Զ. Վալիդին[3], Ստամբուլի արաբերեն ձեռագրի հիման վրա ցույց է տվել, որ Մյունեջջիմ Բաշին օգտվել է Դերբենդի ու Անդրկովկասի պատմությանը և աշխարհագրությանը նվիրված «Դերբենդնամեի» արաբերեն բնագրից»**։*

*Պատմության ամբողջ գիրքը (երեք հատոր) բաժանված է երեք մասի։ Ա գրքում խոսվում է աշխարհի ստեղծագործության, գլխավոր մարգարեների և սրբերի մասին։ Բ գրքում՝ իսլամից առաջ գոյություն ունեցած պետությունների մասին։ Գ գրքում իսլամից հետո եղած պետությունների մասին։ Այնուհետև, օսմանյան պատմությունը սկզբից մինչև XI դարի վերջը (հիջրի)։ Ամբողջ պատմությունը տրված է առանց վերնագրերի։ Նյութերի բաժանումը կատարված է փակագծերում առնված հատուկ տերմիններով՝ «Ունվան» (անվանում), որը բաժանված է տարբեր մասերի՝ «սահիֆե» (էջ), «սաթըր» (տող), «քելիմե» (բառ) և «հարֆ» (տառ)։ Գիրքը ունի բազմաթիվ հավելումներ և հավելումների հավելվածներ։*

*Այդ բաժանման հիման վրա գրքի սկզբում տրված է բովանդակությունը, որը որոշ չափով հեշտացնում է ընթերցումը և օգտագործումը։*

*Մյունեջջիմ Բաշին իր «Սահաիֆ-ուլ-Ախբար»-ի տարբեր մասերում օգտվելով, հավանաբար, արաբական և պարսկական աղբյուրներից, բավականաչափ նյութ է տալիս նաև Հայաստանի և հայերի մասին։ Հայ ժողովրդի պատմության խիստ համառոտ բովանդակությունը տալիս է չորս մասով՝ ըստ դինաստիաների (հեղինակը գործ է ածում «թաբակա»-տոհմ տերմինը), հետևյալ բաժանումով 1)* Հայկյաններ՝[4] *իրենց մի քանի ճյուղերի հետ միասին, 2)* Արշակունիներ՝ *իրենց ճյուղերով, 3)* Բագրատունիներ՝ *իրենց ճյուղերով, 4)* Ռուբինյաններ՝ *իրենց ճյուղերով։*

*Մյունեջջիմ Բաշին հայկական տեղանունների և անձնանունների մի կարևոր մասը տալիս է խեղաթյուրված ձևով։ Դրա պատճառն այն է, որ նա, ինչպես ասվեց, իր պատմությունը գրել է արաբերեն, որը հետագայում թարգմանվել է թուրքերեն։ Եվ քանի որ երկու բնագրերն էլ արաբատառ են, ապա այդ անունների սխալ տառադարձումը երբեմն անխուսափելի է։ Այստեղ, հնարավորին չափ, աշխատել ենք տալ այդ անունների ճիշտ ձևը՝ պատմագրի տված ձևի հետ միասին։*

---

* *«Մյունեջջիմ Բաշի Թարիխի» հատ. I, էջ 6—7։*

** **И. Ю. Крачковский**, Избранные сочинения, том IV, М.—Л., 1957, стр. 633.

# ՍԱՀԱԻՖ-ՈՒԼ-ԱԽԲԱՐ

*Մյունեջջիմ Բաշին իր «Սահաիֆ-ուլ-Ախբար»-ի առաջին հատորի երկրորդ գլխի «Իսլամից առաջ եղած պետությունները» բաժնում՝ այլ երկրների շարքում ունի նաև «Արմենիայի մելիքները» և «Արմեն ազգը»[1], հետո նաև «Գյուրջի ազգը» («Վրաց ազգը») մասերը։*

## ԱՐՄԵՆ ԱԶԳԸ

*Սրանք էլ Ցաֆեսի [Հաբեթի] որդիներից են։ Վիլայեթը[2] [երկիրը] Արմենիան է, մայրաքաղաքը՝ Ախլաթ քաղաքը։ Հնուց ի վեր քրիստոնյա են եղել, հետո իսլամականները տիրել են նրանց վիլայեթը։ Իրենք ռայա[3] են եղել։ Այնուհետև, նորից հաղթելով, նրանք գրավել են իրենց դերբենդները[4]։ Իսլամականներից գրավել են Տարսոնն (Տարսուս) ու Մսիսը (Մսիսեն)[5] և, արշավելով Սիս քաղաքի վրա, նվաճել են այն։ Սիսը մի քաղաք է, որն ունի ամուր բերդ և ներկայումս Արմենիա վիլայեթի [երկրի] մայրաքաղաքն է։*

*(հատ. I, էջ 400)*

## ԳՅՈՒՐՋԻ ԱԶԳԸ[6]

*Ցաֆեսի [Հաբեթի] որդիներից են։ Վիլայեթը [երկիրը] Ախլաթի երկրին սահմանակից է՝ Կոստանդինյան ծոցի[7] եզերքի ուղղությամբ։ Այստեղ կան հսկա լեռներ։ Բազմաքանակ ժողովուրդ է, մեծ մասը քրիստոնյա։ Վիլայեթը ընդարձակ է և ունի ամուր բերդեր։ Մայրաքաղաքն է Թիֆլիս քաղաքը։ Սրանք բեյական (ազնըվական) ցեղին են պատկանում, ուրիշներից [հասարակներ] չեն. տղամարդ թե կին, բոլորն էլ այդ տոհմից պետք է լինեն։ 986 (1579) թվականի ռեջեբ [ամսին] Մուստաֆա փաշան[8] սուլթան Մուրադ խանի հրամանով նվաճել է Վրաստանը։*

*(հատ. I, էջ 400)*

* * *

*Երկրորդ գրքի երրորդ մասում հունական, ֆրանսիական և այլ երկրների ու իշխողների համառոտ նկարագրությունների շարքում Մյունեջջիմ Բաշին զետեղել է նաև Արմենիայի մյուլուքներին [մելիքներին]։*

*Սրանց [Արմենիայի] պատմությունից տեսնում ենք, որ նրանք ունեցել են չորս տոհմ*[9]*, դրա համար էլ մենք նրանց կհիշենք չորս «տառով»*[10]*։*

*ԱՌԱՋԻՆ ՏԱՌ* («հարֆ»). առաջին տոհմը Հայկյաններն են։ *Սրանք 10 հոգի են. մայրաքաղաքը Նախջվանն [Նախիջևան] է։ Սրանց սկիզբը [ծագումը] Հայկն է՝ Թերջոմի [Թորգոմի] որդին, Թերասի որդին, Ջոմերի որդին, Ճաֆեսի որդին, Նոհի [Նոյի] որդին։ [Հայկը] Բաբելի արքաների (Նեմրուդ)*[11] *գլխավոր Դեվալքին ծառայելուց ձանձրանալով, հավաքեց իր հպատակներին, գնաց դեպի հյուսիսային կողմը և Արարատ անունով լեռան վրա բնակություն հաստատեց։ Այնտեղ երևացին շենքեր և կոչվեց Նախջվան (Նախիջևան), որ նշանակում է սկզբնական բնակավայր։ Հետո այդ [անունը] արաբականանալով, կոչվեց Նախիջևան։ Նեմրուդներից մեկը նրանց վրա զորք ուղարկեց, բայց ոչինչ չկարողացավ անել։ Մինչև անգամ ասում են, որ Նեմրուդը նրանց վրա գնաց անձամբ։ Հայկը մի նետով նրան խփեց և սպանեց։ Այդ օրվանից [Հայկը] անկախություն ձեռք բերեց, երկարատև կյանք ունեցավ և հպատակները բազմացան։ Մահվանից հետո նրան հաջորդեց անդրանիկ որդին՝ Արմենակը։ Արմեն (բառը) նրանից [Արմենակից] է առաջացել։ [Սա] իր եղբայրներին՝ և՛ Խոռին և՛ Մենավասին [Մանավազին] մաս տվեց իր երկրից, ունեցվածքից և հպատակներից։ Խոռին բաժին ընկավ Խոռխոռյան ցեղը, իսկ Մենավասին [Մանավազին] Մանավազյան ցեղը։ Կրտսեր որդուն Ճասին [Բաղին] նույնպես որոշ տարածությամբ երկիր տվեց. Ճասունական [Բզնունյան] ցեղը նրանից է առաջանում։ Այս ցեղերը հաստատվելով Վանի լճի շուրջը, շենացրին այդ երկիրը և կառուցեցին Վանի բերդը։ Արմենակի մահից հետո նրան հաջորդեց իր մեծ որդին՝ Արամայիսը, որը Արմենիա երկրում իր հպատակների ու ցեղերի համար շատ քաղաքներ կառուցեց։ Իր որդուն Շարազն [Շարան] ուղարկեց, նրա անունով մի քաղաք կառուցեց, այնտեղ բնակություն հաստատեց և այնտեղ էլ մահացավ։ Նրան հաջորդեց Ամասիան, որը նույնպես մի շարք շինություններ կառուցեց և հետո մեռավ։ Նրան հաջորդեց իր որդին՝ Գեղամը, հետո՝ նրա որդին Գեղամը, հետո նրա որդին Հարմանը, հետո նրա որդին Արամը։ Սրա պետությունը հաղթեց հունական և սուրեանի (ասորական) թագավորներին և նրանցից շատ վիլայեթներ դրավեց։ Սրա ժամա-*

նակ ուղարկվեց Իբրահիմը [Աբրահամը]։ Սա հիմնեց Կեսարիա քաղաքը և իր իշխաններից Մշակ անունով մեկին այնտեղ կառավարիչ նշանակեց, նրա մոտ զինվորներ թողեց, որպեսզի մնացած հունական քաղաքներն էլ գրավեն։ Նրա մահվանից հետո նրան հաջորդեց իր որդին՝ Արան, որը խիստ վայելուչ և գեղեցիկ լինելով, նրա վրա սիրահարվեց Ասորեստանի թագավոր Նինոսի կին Շամրամը [Շամիրամը]։ [Շամիրամը], թագավորությունը նրան փոխանցելու պայմանով ուզեց տիրանալ Արային, բայց որովհետև հավանություն չստացավ, նրա վրա բանակ ուղարկեց։ Պատերազմի ժամանակ Արան սպանվեց և նրա որդին՝ Կարդոսը, գերի ընկավ։ Բայց հետո Շամիրամը նրան գերությունից ազատեց, Արայան անունը տվեց և հոր տեղը թագավոր նշանակեց, սակայն նրան իր մոտ պահեց և նրա վիլայեթը գրավելու համար իր կողմից փոխանորդ նշանակեց և ուղարկեց։ Հետո Շամիրամի որդի Նինոսը կռվում հաղթեց Շամիրամին ու նրան սպանելով, նրա տեղը գրավեց և քանի որ Արայանն էլ իր մոր նման ամբաստանվում էր, ուզեց նրան էլ սպանել, բայց Արայանը փախավ իր երկիրը և ազատվեց։ Այնուհետև, նրա տեղն անցավ նրա որդի Անուշավանը։ Նինոսը մի քանի անգամ հարձակվեց նրա վրա, սակայն ոչ մի կերպ չկարողացավ հաղթանակ տանել։ Նրա [Անուշավանի] մահվանից հետո Հայկի սերունդը վերջացավ։

Հավելված. ինչպես որ հավելվածում կհիշենք, Արմենի ազգն իր բեյերին [իշխաններին] նշանակեց իբրև առանձին-առանձին իշխողներ։

Լրացում. Հայկյանների ճյուղի հիշատակության մասին։ Սրանք սկիզբ են առնում Կագերից։ Երբ հայկյանները վերջացան, Արմենի ցեղը նրան հպատակվեց՝ իբրև ամենամեծ իշխանի։ Հետո նրան հաջորդեցին էրբակը [Արբակը], հետո Դավանը [Ջավանը], հետո Փառնասը, հետո Սուրը, որի ժամանակ Նունի* որդի Հակոբը[12] Իսրայելի որդիներին Քանաանի երկիրը բերեց, իսկ քանաանցիները փախան շրջակա քաղաքները։ Նրանցից Քանդոսը Արմենի երկիրը գալով նշանավոր մարդ դարձավ. Քանգոսական ցեղը նրան է պատկանում։ Հետո [նրան հաջորդեցին] Խեվանակը [Հավանակը], էշվակը [Վաստակը], հետո Հայկակը, հետո էմյալը [Ամպակը], հետո Առնակը [Արտակը], հետո Շավարշը, հետո Նորայրը, հետո Կարը [Վարասկարը], հետո Գր(արակը) [Գրրակը], հետո էբխակը [Ընծակը], հետո Գլակը, հետո Հորոյը [Հորան], հետո Զարմայրը, որը

* Բնագրում՝ Յաշա բին-Նուն։

*ժամանակակից է Դավիթ Մարգարեին. սպանվել է հին Ստամբուլի կռվում. հետո Արբունը, հետո Խոյը [Հոյը], հետո Օսուկը [Հուսակը], հետո Կիբակը [Կայպակը], հետո Սեկան [Սկայորդին], հետո Բուրավիրը [Պարույրը], հետո Հրաչեն [Հրաչյան], որի ժամանակ Բախտ-Նասարը [Նաբուգոդոնոսորը] Երուսաղեմն ավերեց ու Իսրայելի որդիներին գերի տարավ։ Հրաչեն Իսրայելի ազնվականներից մեկին՝ Շեմյաթ [Շամբաթ] անունով մարդուն, Նաբուգոդոնոսորի մոտ միջնորդելով, իր երկիրը բերել տվեց։ Շեյմաթը մնաց Արմենի երկրում։ Նրա որդիներն օրեցօր մեծ հռչակ ստացան և հետո թագավոր դարձան, որի մասին կխոսենք ստորև։ Հրաչեի մահից հետո նրան հաջորդեցին Փարդեսը [Փառնավազը], հետո Բաջուհը [Պաճույճը], հետո Կերտնոկը [Կոռնակը], հետո Փարսը [Փավոսը], հետո Դիասը, հետո Հայկակը, հետո Երվանդը, հետո նրա որդի Տիգրանը։ Սա [Տիգրանը] հարձակվելով հույների վրա, սպանեց նրանց թագավորին։ Նա քաջ և բարի վարքի տեր անձնավորություն լինելով մեծ հռչակ ստացավ։ Նրա իշխանությունը երկար տևեց և նրա երկիրը ընդարձակվեց։ Նրանից հետո իր չորս որդիները մեկ-մեկ թագավոր եղան։ Առաջինն էր Պապը, հետո Տիրանը, հետո Վահագը, հետո Առվանը [Առավանը], ապա սրա որդի Ներսուհը, հետո սրա որդի Զարեհը, հետո սրա որդի Փադամը, հետո սրա որդի Վանը, հետո երկրորդ որդի Վահեն։ Վահեն պատերազմելով Ալեքսանդրի[13] դեմ, կռվում սպանվեց և նրանով էլ կործանվեց թագավորական ցեղը ու պետությունն անցավ Արամենի իշխաններին, որոնք իշխեցին մոտ յոթանասուն տարի, մինչև որ Արշակ Մեծը հաղթություն տարավ։ Դրա մասին կխոսենք հետո։*

Հավելված: *Նրանց ճյուղի մասին է։ Ասքենդերը [Ալեքսանդրը] տիրելով Արմենի երկրին, մահվանից առաջ իր կողմից վալի (կուսակալ) նշանակվեց։ Արամենեն հավաքվելով, իրենց իշխաններից Սելեֆկոս անունով մեկին՝ Ալեքսանդրի թագավորության իններորդ տարում, իրենց վրա թագավոր նշանակեցին։ Սա 31 տարի հետո մեռավ և նրան հաջորդեց Տիտոսը, որը իշխեց 11 տարի։ Նրանով էլ վերջացավ այս տոհմը։*

*ԵՐԿՐՈՐԴ ՏԱՌ.* Արմենի իշխանների երկրորդ տոհմի («բաբակա»)՝ Արշակունիների մասին: *Տրվում է մեկ «վերնագրով» մեկ «նպատակով» և մեկ հավելվածով։*

*ՎԵՐՆԱԳԻՐ։ Արշակ Մեծի գործունեության մասին է։ Արշակը... սուրբ Աբրահամի սպասուհի Քեդուրայի որդիներից է, Բելխի[14] և Խորասանի իշխաններից է և չորս տարի իշխանություն է վարել։*

Սա մեծ բանակով եկավ Արմենիայի վրա, Տիտոսից գրավեց այն և նրան էլ գերի բռնելով՝ տարավ Բելխ։ Հետո հանդես եկավ Տիտոսի եղբայր Անդիոքսը։ Երբ Արշակը իմացավ, որ իր երկիրը գրավել են, նորից եկավ և բոլոր դիմադրողներին ոչնչացրեց։ Այնուհետև, գրավելով Իրանի և Ասորեստանի երկրները, բոլորի վրա իշխան նշանակեց իր եղբայր Աղարշակին [Վաղարշակին]։ Սա Արշակունյան տոհմի սկիզբն է։ Հետո Արշակը գալով իր մայրաքաղաք Բելխ քաղաքը, 31 տարի իշխանություն վարելով՝ մեռավ և նրան հաջորդեց իր որդի Արտաշեսը։ Սա իշխեց 21 տարի։

ՆՊԱՏԱԿ. Արշակունյանների մասին է:

Սրանք 26 մարդ են, իրենց երկիրը Արմենիան է, սկիզբը Ալեքսանդրի թվականության 70-րդ տարին է։ Կործանումը 605 թվականին։ Իշխանության ժամանակաշրջանը 535 տարի է։ Սկիզբ են առնում Արշակ Մեծի եղբայր Աղարշակից [Վաղարշակից], որը բարի վարքի տեր անձնավորություն էր. Նա իր զինվորների և ռայաների համար լավ օրենքներ մշակեց, ամեն մի ցեղի համար պարտականություններ որոշեց և խսրայելցի Շեմյադի [Շամբադի] որդիներին մեծ «խասեր»[15] տվեց։ Նա մեծ քաղաքներ կառուցեց և մի շարք երկրներ բարեշեն դարձրեց։ 22 տարի իշխելուց հետո, մեռավ Նիսիբին քաղաքում՝ Ալեքսանդրի թվականության 22-րդ տարին, և նրան հաջորդեց իր որդի Արտաշեսը, որը գրավեց Խորասանը և Միջագետքը, հետո գնաց դեպի Ռումերի[16] քաղաքները՝ գրավեց, սպանեց Լիբիայի թագավորին և հետո հաղթություն տարավ նաև Եգիպտոսի թագավորի դեմ։ Հետո վերցրեց նաև Սպիտակ ծովի[17] կղզիները և այսպիսով մեծապես ուժեղացրեց ու ընդարձակեց իր պետությունը, այնպես որ Արևելքի և Արևմուտքի թագավորները հպատակվեցին ու ենթարկվեցին նրան։ Կառուցեց մեծ քաղաքներ։ Մեռավ 25 տարի իշխելուց հետո և նրան հաջորդեց իր որդի Տիգրանը [Տիգրան Բ.], որը իշխանության գլուխ անցավ 130 թվականին։ Նա գնաց Երուսաղեմ և գերեց քաղաքի բնակիչներին, ավերեց նաև Նաբելսը և նրա բնակիչներին էլ գերի վերցրեց։ Մեռավ 33 տարի իշխելուց հետո։ Նրան հաջորդեց իր որդի Արտավասդը [Արտավազդը]։ Սա շռայլ և զբոսասեր լինելով, չկարողացավ երկրներ գրավել։ Երկու տարի հետո, երկրի ավագանիները նրա վրա հարձակվեցին և սպանեցին։ Նրան հաջորդեց իր հորեղբայր Արշամը, որը 22 տարի իշխելուց հետո մեռավ և, 185 թվականին, նրան հաջորդեց իր որդի Աբգարը։ Սրա իշխանության երկրորդ տարում, ասում են, որ տեղի է ունեցել Քրիստոսի ծնունդը, բայց դա ճիշտ չէ։ Սա էլ 38 տարի իշխելուց հետո մեռավ և նրան

հաջորդեց իր եղբոր որդի Սանատրուկը, որի իշխանությունը տևեց 30 տարի։ Հետո նրան հաջորդեց Երվանդը՝ 253 թվականին, որը մոտ 20 տարի իշխելուց հետո մեռավ, ու նրան հաջորդեց Սանատրուկի որդի Արտեշիսը [Արտաշեսը]։ Սրա իշխանությունը տևել է մոտ 41 տարի։ [Նա] մեծ հոչակ ձեռք բերեց, տիրեց հունական քաղաքների մեծ մասին, Պարսկաստանի և այլ սահմանակից երկրների բազմաթիվ վայրերին, որով ավելացավ նրա փառքն ու հզորությունը։

314 թվականին մեռավ, և նրան հաջորդեց իր որդի Արտեվասդը [Արտավազդը]։ Սա աքսորեց իր եղբայրներին. երկու տարի հետո, որսի ժամանակ, նրա ձին սայթաքեց, ընկավ և ինքն էլ մահացավ։ Նրան հաջորդեց իր եղբայր Արտաշեսի որդի Տիրանը։ Սա հաշտություն կնքեց հունական թագավորի հետ։ Ընդհանրապես զբաղվում էր որսորդությամբ և սիրում էր զվարճություններ։ 21 տարի իշխելուց հետո մեռավ և նրան հաջորդեց իր եղբայրը՝ Արտաշեսի որդի Տիգրանը։ [Տիգրանը] իշխանության գլուխ անցավ 337 թվականին։ Նա կողոպտեց Շամը [Դամասկոսը] և Երուսաղեմը, հետո՝ հույների դեմ մղած կռվում, գերի ընկավ։ (Լուկիոս Վեդոս) Բունկիանո կայսրը նրան ազատեց, իր ազգականներից Ռագիե [Ռոփի] անունով կնոջ հետ ամուսնացրեց և նորից իր երկիրն ուղարկեց։ Ռագիյեն [Ռոփին] երկու որդի ունեցավ, բայց հետո Տիգրանը՝ մի պատճառաբանությամբ կնոջն ապահարզան տվեց և որդիների հետ միասին աքսորեց իր երկիրը։ [Տիգրանի] իշխանությունը տևել է 42 տարի. 379 թվականին մեռավ և նրան հաջորդեց իր որդի Վաղարշը։ Սա կառուցեց երեք մեծ քաղաք, քանիցս իր բանակով արշավեց Խորասանի և Պարսկաստանի վրա։ Ի վերջո, կռիվներից մեկում սպանվեց։ Սրա իշխանությունը տևել է մոտ 20 տարի։ 399 թվականին նրան հաջորդեց իր որդի Խոսրեվը [Խոսրովը]։ Սա մեծ թվով զինվորներ հավաքելով արշավեց Խորասանի և Միջագետքի վրա, պարտության մատնեց նրանց արքաներին, շատերին սպանեց և լուծեց իր հոր վրեժը։ Պարսկաստանի արքա Արտշիրը [Արտաշիրը] նրա ձեռքից փախավ Հնդկաստան։ Հետո, Բելխի վեզիրներից Անակ անունով մեկը եկավ և Խոսրովի մոտ ապաստանեց. շատ մոտեցավ և բարեկամացավ նրա հետ։ Մի օր, որսի ժամանակ, հարմար առիթ գտնելով, նրան սպանեց ու փախավ։ Իշխանությունը տևել է 48 տարի։ 447 թվականին նրան հաջորդեց իր որդի Տիրդատը [Տրդատը]։ Սա քաջ և դյուցազն անձնավորություն լինելով, շատ երկրներ նվաճեց։ Արմենի թագավորներից սա է առաջին Քրիստոսին հավատացողը։ Նա կործանեց իր երկրում

եղած կռատներն ու մեհյանները և նրանց փոխարեն կառուցեց եկեղեցիներ ու վանքեր։ [Քրիստոսի] առաքյալների աշակերտներից Գրիգոր անունով մեկին իր երկրում նշանակեց իբրև պապ [կաթողիկոս]։ Իսկ երբ լսեց, որ Հռոմի կայսր Կոնստանդինը նույնպես ընդունել է քրիստոնեություն, սկզբում նամակագրություն ունեցավ նրա հետ, ապա անձամբ գնաց նրա հետ տեսնվելու, իր հետ տանելով Գրիգոր պապին [կաթողիկոսին] և 70 հազար մարդ։ Կայսրի հետ տեսակցությունը տեղի ունեցավ Հռոմում։ Նրանք կնքեցին փոխադարձ բարեկամության պայմանագիր։ Հետո վերադարձավ իր երկիրը։ Նա մեծ հաջողություններ ունեցավ շենքեր կառուցելու, քաղաքներ նվաճելու և հաղթանակներ տանելու գործում։ 54 տարի իշխելուց հետո, 503 թվականին թունավորվեց իր վեզիրների [Նախարարների] կողմից։ Նրան հաջորդեց իր որդի Խուսրեվը [Խոսրովը]։ Զբաղված լինելով զվարճություններով, պետական գործերը վարում էին նրա վեզիրները։ 9 տարի իշխելուց հետո մեռավ ու նրան հաջորդեց իր որդի Տիգրանը։ Սրա գործերից է Թոփրակ Կալե[18] բերդը։ Մեռավ 527 թվականին և նրան հաջորդեց իր որդի Արշակը։ Սա պատերազմելով Պարսկաստանի դեմ՝ հաղթանակ տարավ, բայց հետո Պարսկաստանի թագավորը մեծաքանակ զորքով եկավ և Արշակին գերի վերցրեց։ Մեռավ գերության մեջ և 557 թվականին նրան հաջորդեց իր որդի Պապը։ Սա լինելով զբոսասեր և վատ բարքի տեր անձնավորություն, դավաճանեց քրիստոնեությանը։ Յոթ տարի իշխելուց հետո, կայսրը նրան տարավ և 564 թվականին սպանեց։ Նրան հաջորդեց Վարազդատը, որը քաջ, դյուցազն անձնավորություն էր։ Նա մարդ ուղարկեց Պարսկաստանի թագավորի մոտ և խնդրեց նրա աղջկա ձեռքը։ Նա կայսրից երես դարձնելով, նրան [Պարսից թագավորին] հպատակություն ցույց տվեց։ Արմենի ավագանիներն այս մասին հայտնեցին կայսր Սեոդիոսին [Թեոդոսին], որը նրան Ստամբուլ տանելով, շղթայակապ աքսորեց մի կղզի։ Այնտեղ նա մեռավ։ Իշխանությունը տևել է 4 տարի։ Նրան հաջորդեցին Պապի որդիներ Արշակն ու Վաղարշակը, որոնք թագավոր եղան միասին, [Նրանք] Պարսկաստանի թագավորի դեմ մղած կռվում պարտություն կրեցին։ Յոթ տարի հետո, 575 թվականին, իշխանության գլուխն անցավ Խոսրովը։ Սա բազմաթիվ պատերազմներ մղեց պարսից թագավորի դեմ։ 580 թվականին գերի ընկավ։ Նրան հաջորդեց իր եղբայր Տիրամ-Շափուխը [Վռամշապուհը], որը նշանակվեց Պարսկաստանի թագավորի կողմից, սակայն կայսրին էլ բարեկամություն ցույց տվեց։ Մեռավ 601 թվականին՝ 21 տարի իշխելուց հետո, և պապի

[կաթողիկոսի] ջանքերով նրա տեղն անցավ նրա եղբայր Խոսրովը, որը սակայն մի տարի հետո գահընկեց եղավ ու նրա փոխարեն թագավոր նշանակվեց իր եղբորորդի Արդեխսը [Արտաշեսը]։ Սա զվարճասեր և կնամոլ անձնավորություն լինելով, Պարսկաստանի թագավորը հարմար առիթ գտավ, գրավեց նրա երկրի մեծ մասը, բռնեց նրան և բանտարկեց։ Բանտում նա մահացավ և նրանով էլ վերջացավ Արշակունյան տոհմը։ Արմենի ավագանիները հավաքվելով առանձին-առանձին թագավորներ ընտրեցին իրենց իշխաններից։

Հավելված. Արշակունիների ճյուղի մասին։ Սրանք 12 անձնավորություն են. մայրաքաղաքը [երկիրը] Արմենիան է. սկիզբը 605 թվականն է, կործանումը՝ 932 թվականը և տևողությունը 325 տարի։ Սկիզբ են առնում Իսհակ պապի թոռ Վարդանից։ Երբ Արտաշեսը գերի ընկավ, Արշակունիների գերդաստանում թագավոր դառնալու արժանի ոչ ոք չգտնվեց։ Արմենի ժողովուրդը վերոհիշյալ Վարդանին թագավոր ընտրեց։ Վարդանը թագավոր դառնալով բազմիցս պատերազմ մղեց Պարսկաստանի դեմ։ Բայց հետո որոշ հարստություն տալով հաշտություն կնքեց։ Սակայն Պարսկաստանի թագավորը դրանով չգոհացավ։ Նա ուզում էր նրանց [արմեններին] բռնությամբ կռապաշտ դարձնել և նորից հաշտությունը խախտելով, պատերազմ սկսեց։ Կովի դաշտում Վարդանը սպանվեց Արմենի ավագանիներից շատերի հետ։ Պարսկական թագավորի կողմից Արմենի իշխաններից թագավոր նշանակվեց Վարդը. նրանից հետո՝ Մանգոսը, հետո Արշամը, հետո Վահանը, հետո երկրորդ Վարդը, հետո Դավիթը, հետո Թոտերվորսը [Թեոդորոսը]։ Այս վերջինի ժամանակ պարսկական պետությունը կործանվեց և երբ իսլամականները պատերազմում էին Արմենի ծրկրում, Թեոդորոսը նրանց հպատակվեց և սրբազան Ռաշիդյան խալիֆաների կողմից նրան կայսերական ֆերման շնորհվեց։ Նրան հաջորդեց Համազասպը, հետո Գրիգորը, հետո Մեժեժը [Մժեժը], հետո Ներսեն, որով և վերջացավ պետական իշխանությունը։

ԵՐՐՈՐԴ ՏԱՌԸ. Արմենի մելիքներից երրորդ տոհմի («թաբակա»)՝ Բագրատունյան տոհմի մասին։ Սրանք Շմփոտ [Սմբատ] Իսրայելի որդիներից 13 իշխաններ են։ Նրանց մայրաքաղաքը [երկիրը] դարձյալ Արմենիան է. ծագումը՝ Ալեքսանդրյան թվականի մոտավորապես 930 տարին է։ Կործանումը տեղի է ունեցել 1225 թվականին, տևողությունը 195 տարի է եղել։ Սկիզբ են առնում Արմենի մելիքներից՝ Աշոտից, որը մեծ պատիվ և համբավ էր վաստակել։ Բագրատունիները նրա ցեղից են։ Այս տոհմը վերո-

հիշյալ Բագրատունիներին է պատկանում։ Աշոտի իշխանությունը տևել է 17 տարի։ Նրա մահվանից հետո, 947 թվականին, նրան հաջորդեց իր որդի Շմփատը [Սմբատը]։ Սա մոտ 20 տարի շարունակեց իր հոր ուղին, 967 թվականին մեռավ և նրան հաջորդեց իր որդի Աշոտը։ Սա հարկ վճարելու խնդրում համառություն ցույց տվեց և այդ պատճառով էբուջաֆեր էլ-Մենսուր էլ-Աբասին նրա վրա բանակ ուղարկեց և նրան բռնելով, կապեց և Բաղդադ տարավ։ Հետո բանտում մեռավ։ Իշխանությունը տևել է 20 տարի։ Երբ վերոհիշյալը 987 թվականին գերի ընկավ, նրա որդի Շմփատը [Սմբատը] իշխանության գլուխ անցավ. Նրա հայրանունը էբու ուլ-Աբասի է։ Սրա իշխանության 35-րդ տարում, խալիֆան իր սերասքեր Բեզային մեծ բանակով սրա վրա ուղարկեց։ Մեծ պատերազմից հետո իսլամական բանակը հաղթեց, Շըմփատին [Սմբատին] բռնեցին և կապելով խալիֆայի մոտ տարան, որը նրան սպանել տվեց և նրա փոխարեն 1022 թվականին նշանակեց նոր որդի Աշոտին։ Սա թե՛ խալիֆայի և թե՛ կայսրի նկատմամբ բարյացակամ գտնվեց, մինչև անգամ կայսրը նրան մի արքայական թագ ուղարկեց։ 37 տարի իշխելուց հետո, 1059 թվականին մեռավ և նրան հաջորդեց իր որդի Շմփատը [Սմբատը], որը, հետևելով իր հոր ճանապարհին, շատ մեծ հռչակ ձեռք բերեց։ Գյուրջի [վրացական] քաղաքների մեծ մասը նույնպես նրա իշխանությանը ենթարկվեց։ Ռոմանոս կայսրը նրան թագ ուղարկեց։ Այդ ժամանակ խալիֆայական պետության մեջ խառնակություն էր առաջ եկել. [Սմբատը] քանիցս հարձակվեց իսլամական և խալիֆայական քաղաքների վրա և ավերեց։ Հետո հիշյալի [Սմբատի] քրոջ տղան՝ Վանի իշխանը, օգնություն ստանալով սուլթանից, պատերազմի դուրս եկավ Շմփատի [Սմբատի] դեմ։ Արմենի իշխանները վերոհիշյալին [Սմբատին] բռնեցին և հանձնեցին։ Իսլամական սուլթանը նրան կախեց Թոփրակ Կալեի աշտարակից։ Իշխանությունը տևել է 24 տարի։ 1083 թվականին նրան հաջորդեց իր որդի Աշոտը, որին կայսրը թագ նվիրեց։ Աշոտը շատ քաջ լինելով Պողպատ [Երկաթ] անունը ստացավ։ Մեռավ 8 տարի իշխելուց հետո և, 1091 թվականին նրան հաջորդեց իր եղբայր Սմբատը, որը Կարս քաղաքում մի մեծ եկեղեցի և շորս մեծ...* կառուցեց, քաղաքները մաքրեց խռովարարներից։ Մեռավ 1115 թվականին, 24 տարի իշխելուց հետո, և նրան հաջորդեց իր որդի Աշոտը։ Սա լավ վերաբերմունք ցույց տվեց թե՛ իսլամականներին և

* Անընթեռնելի։



13 1676

թե՛ անհավատներին։ Կինը երկու մեծ եկեղեցի է կառուցել։ Մեռավ 27 տարի իշխելուց հետո և 1142 թվականին նրան հաջորդեց իր որդի Շմփատը [Սմբատը]։ Սա ընդարձակեց իր մայրաքաղաքը՝ Անին։ 13 տարի հետո մեռավ և 1155 թվականին նրան հաջորդեց իր եղբայր Գագիկը. սա Ծաղկաձորում[19] . . . անվան[20] մի եկեղեցի է կառուցել։ Մեռավ 29 տարի իշխանություն վարելուց հետո և նրան հաջորդեց իր որդի Շմփատը [Սմբատը], որը իշխեց մոտ 20 տարի և մեռավ 1204 թվականին։ Նրան հաջորդեց իր եղբորորդի Գագիկը։ Սա իմաստուն և փիլիսոփա մի անձնավորություն լինելով, 21 տարի ապրեց աշխարհիկ գործերից ու պետական իշխանությունից հեռու և անտարբեր։ Հետո նրա իշխանների միջև անհամաձայնություն առաջացավ։ Սրանցից մի խումբ դիմեց կայսրին, իսկ մյուսները՝ իսլամական փադիշահին։ Ֆելաջերմ Ալբ-Արսլանը մեծաքանակ զորքերով հարձակվեց Արմենիայի վրա և Գագիկի բանակի դեմ մղած մարտերում հաղթեց նրան՝ 25 օրվա պաշարումից հետո։ Հիջրեթի 456 (1063) թվականին գրավեց Անի մայրաքաղաքը, կոտորեց բնակչության մեծ մասին և թալանեց նրանց ունեցվածքը։ Այդ ժամանակ, Անի քաղաքում, բացի բազմաթիվ բարձր շինություններից, կար 400 հսկա եկեղեցի։ Գագիկը 400 զինվորով փախավ և ապաստանեց Ստամբուլում՝ կայսրի մոտ։ Որոշ ժամանակ այնտեղ ապրելուց հետո, նրան իբրև խաս[21] շնորհվեցին Սվազն [Սեբաստիա] ու Կայսերին [Կեսարիան]։ Բացի այդ, նա խոստում ստացավ նորից վերագրավելու իր երկիրը։ Գագիկը եկավ Սվազ և որոշ ժամանակ այնտեղ մնալուց հետո, մի օր, հույն բնակիչներից մի քանի հոգի, որսորդության ժամանակ հարմար առիթ գտնելով, նրան սպանեցին։ Նրանով վերջացավ Բագրատունյան պետությունը։

Հավելված. Արմենի իշխանների պառակտումը շարունակվեց։ [Սրանցից] ոմանք տուրք էին տալիս իսլամներին, իսկ ոմանք էլ՝ անհավատներին։

ՉՈՐՐՈՐԴ ՏԱՌԸ Արմենի մելիքներից չորրորդ տոհմի՝ Ռուբինյան տոհմի մասին։

Սրանք 11 անձնավորություն են։ Իրենց մայրաքաղաքը Սիս քաղաքն է։ Երկիրը հունարեն Կիլիկիա է կոչվում։ Սրանց սկիզբը Ալեքսանդրյան թվականության մոտավորապես 1230 տարին է, հիջրեթի թվականության՝ 460 տարին, կործանումը՝ հիջրեթի 722 (1322) թվականին, տևողությունը՝ 262 տարի է։ Ռուբենը վերջին՝ երրորդ տոհմից էր, Գագիկի ազգականներից, որը նրա սպանությունից հետո փախել և թաքնվել էր Սվազում։ Երբ դուրս եկավ

այնտեղից, Գագիկի հպատակները և Արմենի իշխանները նրա շուրջը հավաքվեցին։ Նա [Ռուբենը] երկրի բերդերից գրավեց Գուսենդարը և այդ բերդում ու շրջակայքում իշխանություն վարելուց հետո, 480 թվականին մեռավ և նրան հաջորդեց իր որդի Կոստանդինը, որը բազմաթիվ բերդեր և քաղաքներ գրավելով, ընդարձակեց իր երկիրը։ Հինգ տարի հետո մեռավ և նրան հաջորդեց իր որդի Թորոսը։ Սա իմաստության և քաջության մարմնացում էր։ Երկրում կառուցեց եկեղեցիներ, նվաճեց Իմալսիյեն (?)։ Մեռավ 508 թվականին և նրան հաջորդեց իր եղբայր Լևոնը, որը գրավեց Տարսուսի և Սիսի շրջանները։ Կայսրը նրա վրա զայրացած լինելով, էմիր Ահմեդ Դանիշմենդին զինվորներ տալով նրա վրա ուղարկեց։ Լևոնի դեմ մղած կռվում [էմիրը] նրան գերի վերցրեց և ուղարկեց կայսրին։ [Լևոնը] բանտում մեռավ. կայսրը նրա որդու՝ Ռուբենի աչքերում միլ քաշել[22] տվեց։ Նրան հաջորդեց փոքր որդի Թորոսը, որը իր հոր և եղբոր վրեժը լուծելու համար բազմաթիվ հույների սպանեց և շատ քաղաքներ գրավեց։ Կայսրը անճար մնալով, դաշինք կնքեց Կոնիայի փադիշահ Կըլըջ Արսլանի հետ և նրան որոշ քանակությամբ զինվոր տալով, Թորոսի վրա ուղարկեց։ Սակայն սա էլ չկարողացավ նրան հաղթել։ Կայսրը ստիպված եղավ միջնորդության ուղին բռնել և գեղեցիկ խոստումներով նրան իր կողմը գրավել։ Որոշ ժամանակ նրանց հարաբերությունները լավ ընթացք ունեցան, բայց հետո Թորոսը դարձյալ կայսրից երես դարձրեց և հարձակվեց նրա երկրի վրա։ Կայսրը այս անգամ ավելի մեծ նվերներ ուղարկեց Կըլըջ Արսլանին և խնդրեց, աղաչեց, որ նորից հարձակվի Թորոսի վրա։ Կըլըջ Արսլանը զորքեր հավաքելով, պաշարեց Սիսի բերդերից Թելնավանը։ Իսկ Թորոսը մեկ այլ ճանապարհով գնաց և կողոպտեց Կոնիայի շրջակայքը։ Կըլըջ Արսլանը ստիպված եղավ հաշտություն կնքել և իր երկիրը քաշվել։ Թորոսը 14 տարի իշխանություն վարելուց հետո մեռավ և նրան հաջորդեց իր որդի Ռուբենը։ Մի տարի հետո Կըլըջ Արսլանը՝ Հալեպի փադիշահի օգնությամբ, հաղթեց և սպանեց Ռուբենին։ Նրան հաջորդեց Թորոսի որդի Կըլըջը։ Սրա իշխանությունը տևեց 7 տարի։ Սա վատ բարքի տեր լինելով, զինվորները հարձակվեցին նրա վրա և սպանեցին։ Նրան հաջորդեց իր հորեղբոր որդի՝ Ստեփանի որդին՝ Ռուբենը, որը խելացի և բարի վարքի տեր անձնավորություն լինելով, իր երկիրը շենացրեց և ամուսնացավ ֆրենգի [Ֆրանսիայի] թագավորի աղջկա հետ։ 22 տարի հետո աշխարհիկ

գործերից հեռացավ և հոգևորական դարձավ։ Նրան հաջորդեց իր եղբայր Լևոնը։ Սա շատ ընդարձակեց իր երկիրը՝ Անթակիայից մինչև Անթալիա և Վարկելիե։ [Լևոնը] այդ երկրների մի մասը նվաճեց, մի մասն էլ գնեց հույներից և ֆրանսիացիներից։ Կառուցեց բազմաթիվ եկեղեցիներ ու վանքեր։ Հունական կայսրը նրան թագ ուղարկեց և Կիպրոսի թագավորի քրոջը նրան կնության տվեց։ Մեռավ 24 տարի իշխելուց հետո և նրան հաջորդեց իր ազգական Ֆիլիպպը [Փիլիպպոսը], որի իշխանությունը տևեց երեք տարի։ Հետո պետության ավագանիները նրան սպանեցին և նրա փոխարեն նշանակեցին նրա ազգական Հեթում անունով մեկին։ Սա նվաճեց Սահմի և Մարաշ քաղաքները, շինել տվեց մի եկեղեցի՝ Այա Սոֆիայի[23] պատկերով [նմանությամբ]։ Երբ [Հեթումը] նրան հպատակություն ցույց տվեց և ներման հրովարտակ ստացավ... Նորից իսլամների վրա հարձակվեց և բռնություն ցույց տվեց։ Սիսում պատերազմ տեղի ունեցավ. [Հեթումը] պարտվեց։ Նրա մի որդին ըսպանվեց, իսկ մյուսը գերի ընկավ և Եգիպտոս ուղարկվեց։ Իսկ երբ հաշտություն կնքվեց, ազատ արձակվեց։ Երբ [Հեթումի] որդին եկավ հոր հետ տեսնվելու, նա թագավորությունն հանձնեց իր որդուն և ինքը մի եկեղեցում հոգևորական դարձավ։ Իշխանությունը տևել է 44 տարի։ Նրան հաջորդեց իր վերոհիշյալ որդի Լևոնը։ Սա էլ, իր հոր նման, լավ հարաբերություն պահպանեց թաթարական մելիքների հետ և իր երկիրն ապահովեց նրանց չարագործություններից։ Եվ որովհետև Լևոնը մեծ սեր ուներ դեպի գիտությունն ու գիտնականները, նա իր ժամանակի մեծ մասն անց էր կացնում նրանց հետ տեսակցելով և զրուցելով։ Հավաքել է բազմաթիվ գրքեր։ Մեռավ 18 տարի իշխելուց հետո և նրան հաջորդեց իր որդի Հեթումը։ Սա ենթարկվում էր թաթարական իշխաններին. մի շարք կռիվներ մղեց Եգիպտոսի և Շամի իշխողների դեմ։ Իսլամների նկատմամբ խստություն ցույց տվեց։ Վեց տարի իշխելուց հետո հոգևորական դարձավ և նրա փոխարեն նշանակվեց իր եղբայր Սափատը [Սմբատը], որը նրան սպանեց և իշխանությունը խլեց։ Սակայն երեք տարի հետո սա բանտարկվեց, և նրան փոխարինեց իր եղբայր Կոստանդինը։ Սա էլ մի տարի հետո բանտարկվեց և նրան հաջորդեց իր եղբորորդի Լևոնը։ Երեք տարի հետո թաթարական բեյերից մեկը՝ Արգոնը, նրան սպանեց և փոխարենը նշանակեց նրա որդուն՝ Օշինին։ Օշինը մարդ ուղարկեց թաթարական փադիշահին և գանգատվեց իր հոր սպանության համար։ [Թաթարական] փադիշահը մարդիկ ուղարկեց հիշյալ Արգոնին սպանելու համար։ Օշինը 13 տարի իշխանությունը վարելուց հետո մեռավ և

*նրան հաջորդեց իր որդի Լևոնը։ Սա փոքր էր։ 23 տարի իշխելուց հետո, էմիր Զորանի որդի Թեմուր Դաշը 30 հազարի չափ զինվորներով հարձակվեց Լևոնի վրա։ Բայց հետո հաշտություն կնքեց և Թեմուր Դաշը վերադարձավ իր երկիրը։ Այնուհետև, եգիպտական բանակը եկավ և պաշարեց Այաս բերդը, սակայն չկարողացավ գրավել։ Երկրորդ անգամ առաջինից ավելի մեծ բանակով հարձակվելով, 722 թվականին, [եգիպտացիները] գրավեցին բերդը։ Այս պատերազմում Լևոնը սպանվեց և նրանով էլ վերջացավ [Ռուբինյան] տոհմը։*

Հավելված. *Չորրորդ տոհմի ճյուղի[24] մասին է։*

*Այս վերջին՝ չորրորդ տոհմից, սկզբում իշխանությունը վարեց Լևոնի ազգականներից մեկը՝ Կոստանդին անունով անձը, որի իշխանությունը տևեց մոտ 7 տարի։ Հետո Լևոնի ազգականներից՝ Խեվանը [Հովհաննեսը], հետո նրա եղբայր Կիտանը [Գվիդոնը], հետո ֆրանսիական տոհմից՝ երկու եղբայրներ։ Սակայն Արմենի իշխանները նրանց չհպատակվեցին և սպանեցին։ Նրանց հաջորդած Լևոն անունով անձը իշխեց միայն մեկ տարի։ Հետո Եգիպտոսի թագավորը եկավ և հիշյալին [Լևոնին] իր կնոջ՝ Մարունի [Մարիամի] հետ միասին գերի տարավ. գրավեց ամբողջ Արմենի երկիրը, կործանեց եկեղեցիներն ու վանքերը և նրանց փոխարեն կառուցեց ջամիներ և մեսջիտներ[25]։ Լևոնին և կնոջը տարավ Եգիպտոս։ Լևոնը բանտում մեռավ, կինն ազատվեց և Երուսաղեմում հոգևորական դարձավ։ Այսպես, Արմենի երկիրն ամբողջությամբ ավերվեց և կործանվեց։*

*(հատ. I, էջ 652—663։)*

* * *

*Մյունեջջիմ Բաշին իր «Պատմության» II հատորի երրորդ մասում նույն ձևով տալիս է իսլամից հետո առաջացած պետությունների պատմությունը։ Արաբական խալիֆայությունները, Պարսկաստանի, Միջագետքի իշխանությունները. Եգիպտոսի մելիքությունները թվարկելուց հետո, նա տալիս է հիջրեթի IV դարում Իրաքում և Ադրբեջանում գոյություն ունեցած իշխանությունների համառոտ պատմությունը։*

ԵՐՐՈՐԴ ՀԱՏՎԱԾ. *Տարմի[26] և Ազերբայջանի [Ադրբեջանի] իշխողների՝ «Մեսաֆիրի որդիների»[27] մասին։ Սրանք կոչվում են նաև Սալարի որդիներ[28]։ Սկիզբ են առել 330 թվականին և կործանվել 420 թվականին։ Նրանց տոհմը շարունակվել է հետևյալ կարգով. Սալար Մուհամմեդ բին-Մեսաֆեր, էլդիլմի Սալարի որդիները՝ Դեսուդան և Մարզբան, Դեսուդանի որդի Իսմայիլ, Իսմայիլի որդի երկրորդ Մարզբան, երկրորդ Մարզբանի որդի Իբրահիմ, առա-*

ջին Մարզբանի որդի Ջեսրան Իբրահիմ։ Հայտնի պետք է լինի, որ Տարմը՝ Դելիմ երկրի սահմանում, Գազվինի նվիրական լեռներում մի մեծ գավառ[29] է, որի ջուրը և խոտը շատ առատ է և գտնվում է լեռների մեջ։ Այս երկիրը երկար ժամանակ գտնվել է անկախ իշխանների ձեռքում, որոնք կոչվում էին Սելար, որը հավանաբար Սալար[30] բառի արաբական ձևն է։ Ադրբեջանը մի ընդարձակ երկիր է. խառն է Արանի և Արմենիայի քաղաքների հետ։ Նրա արևելյան կողմում են գտնվում Դելիմի քաղաքները և Ջեբլեյի քաղաքների մի մասը։ Հարավային կողմից սահմանակից է Իրաքին և Ջեզիրեի մի քանի քաղաքներին, արևմտյան կողմից՝ Արմենիայի քաղաքներին ու հունական մի քանի երկրներին, հյուսիսային կողմից սահմանակից է Արանի քաղաքներին և վերջանում է Խազերի [Կասպից] ծովեզերքում։ Այս վիլայեթի մայրաքաղաքներից մեկը Էրդեբիլ քաղաքն է, որը գտնվում է չորրորդ կլիմայում[31]։ Երկարության 37 աստիճանի, լայնության 38 աստիճանի վրա այդ կլիմայի ամենամեծ քաղաքը և ամրացված երկիրն է։ Հավանաբար այս քաղաքը կառուցել է Էրդեբիլ բին-Արդմին բին-Լեմբդի բին-Յուհան և նրա անունով էլ հայտնի է եղել։ Թավրիզի և նրա [Էրդեբիլի] միջև եղած տարածությունը 25 փարսախ է։ Մյուս մայրաքաղաքը Թեբրիզ [Թավրիզ] քաղաքն է, որը գտնվում է հինգերորդ կլիմայում՝ երկարության 73 աստիճանի և լայնության 39 աստիճանի վրա։ Սա կոչվում է նաև Թուրիզ։ Երրորդը Շիրվանն է, որը գտնվում է հինգերորդ կլիմայում՝ երկարության 68 աստիճանի և լայնության 42 աստիճանի վրա։ Ադրբեջան երկրում են գտնվում նաև հետևյալ քաղաքները. Խուրեվ, Ջեզե, Սալմաս, Նախչևան, Բերդիճ, Խույիխ, Խոյ, Էրմիյե [Ուրմիա], Մարաղա, Օջան, Միեանիչ, Մերենդ, Մուգան, Բերզենդ, Բարդա, Սուլթանիե, որը Չինգիզյաններից մեկը՝ Էրգրում-օղլու Խուդաբենդեն, կառուցել և իր համար մայրաքաղաք էր դարձել։ Թավրիզից արևելք՝ ութ կոնաք[32] հեռու է։ Այդ ցեղից վերոհիշյալ Սալար Մուհամմեդը հնուց ի վեր Դելիմի սերասքերներից լինելով, նրա կողմից վալի [կուսակալ] նշանակվեց Տարմի սահմաններում։ Հետո Մազանի պետության մեջ հեղաշրջում տեղի ունեցավ և նա, անկախություն ձեռք բերելով, որոշ ժամանակ իշխելուց հետո մեռավ և նրան հաջորդեց Սալար Մարզբանը։ Սրան հաջորդեց Սալար Ջեստոնը։ Սա էլ որոշ ժամանակ իշխելուց հետո մեռավ և նրան հաջորդեց Սալար Դեսուդան։ Սրան հաջորդեց Իսմայիլը, իսկ վերջինիս՝ Իբրահիմը։ Սրա մեռնելուց հետո էլ հաջորդեց Մարզբանը։ Վերևը հիշատակված թվականին ամբողջովին կործանվեցին։ Նրանք նման էին մի երկրի վրա

իշխող վալիի [կուսակալի]։ Երկրների ու սուլթանության տեր հայտնի մելիքներ չէին, այդ պատճառով նրանց մասին համառոտակի խոսեցինք և մանրամասն կանգ չառանք։

ՉՈՐՐՈՐԴ ՀԱՏՎԱԾ. Արանի մելիքների՝ Շեդադի-որդիների[33] մասին է։ Սրանց տոհմը հետևյալ կարգով է. Մուհամմեդ բին-Շեդադ, Մուհամմեդի որդիները՝ Մարզբան և Ֆազը, Լեշկերի Մարզբանի որդի Էբու-ուլ-Ֆեթհ Մուսա, Մուսայի որդի Լեշկերի, Լեշկերի որդի Նուշիրվան, Ֆազլի որդի Էբու-ուլ-Սեվար Շաբուր, Շաբուրի որդիներ Ֆազլ, Շուբ և Ֆազլուն։ Սկիզբը 340 թվականին է։ Կործանումը տեղի է ունեցել 468 թվականին։ Արան կոչված այս երկրի արևմտյան կողմը Արմենիան է, արևելյան և հարավային կողմը՝ Ադրբեջանը, իսկ հյուսիսային կողմը՝ Կընըքի լեռները։ Մայրաքաղաքներից մեկը Նախիջևանն է, որը գտնվում է հինգերորդ կլիմայում՝ երկարության 73 աստիճանի և լայնության 43 աստիճանի վրա։ Մյուս [մայրաքաղաքը] Դեմիր Կափու կոչված քաղաքն է, որը գտնվում է երկարության 75 աստիճանի և լայնության 41 աստիճանի վրա։ Մյուս [մայրաքաղաքը] Գենջեն է, որը գտնվում է երկարության 71 աստիճանի և լայնության 43 աստիճանի վրա։ Հինգերորդ կլիմայում է գտնվում։ Արանի երկրի նշանավոր քաղաքներից մեկն էլ Թիֆլիսն է։ Շեմկորը [Շամխոր], Բելեգանը և Սերիր Ալանը մեծ գավառներ են։ Լեկզ[34] կոչված ցեղն այս շրջանում է ապրում։

Արմենիայի վիլայեթը մեծ է։ Նրա արևմտյան կողմը Արմեն վիլայեթն է, արևելյան և հարավային կողմը՝ Արանի և Ադրբեջանի սահմաններն ու Ջիզիրեի մի քանի քաղաքներն են։ Հյուսիսային կողմը նորից Արանի սահմաններն են։ Այս երկրի մեծ մասը լեռնային լինելով, բաժանվում է երեք մասի։ Մի մասը՝ Գալիգա, Նիմշադ և սրանց հարակից սահմաններն են, մյուս մասը՝ Հեզրան և Բաբի Ալաև քաղաքներն ու դրանց միջև ընկած տարածությունը։ Երրորդ մասը՝ Բերդան, Բաբ էլ-էբվաբը և հարակից մասերը։ Ուրիշներն այս [երկիրը] բաժանում են չորս մասի, որից մի մասը Բելգան և Շիրվանն է և դրանց միջև ընկած տարածությունը։ Մի մասը Մեզրանն է, որ Թիֆլիս է կոչվում, և Ֆիրուզ Աբադի ու Լեկեզի գավառները։ Հաջորդ մասը՝ Սիոխանն ու Նախիջևանն են, իսկ մյուս մասը՝ Խըրդ Բրրթը, Ախլաթը, Էրզրումը և նրանց հարակից մասերը։ Այս գավառներից ամեն մեկում անկախ վալիներ [կուսակալներ] են իշխում։

Արմենիայի կլիմայի[35] և Ռումի կլիմայի միջև ընդհանուր քաղաքներն են՝ Կաստեմունին, Սինոպը և Սամսոնը։ Արմենիայի սև-

ծովյան նավահանգիստը Տրապիզոնն է. Տրապիզոնի նշանավոր քաղաքները հետևյալներն են. Երզնկա, Մուշ, Էրզին [Էրզրում]. Մելազջերդ [Մանազկերտ], Բիթլիս, Ախլաթ, Արճեշ, Ոստան, Շիրվան և Դեբիլ, որը մայրաքաղաք է և գտնվում է չորրորդ կլիմայում՝ երկարության 72 աստիճանի և լայնության 38 աստիճանի վրա։ Դվինը չորրորդ կլիմայի վերջում է՝ երկարության 72 աստիճանի և լայնության 39 աստիճանի վրա, Դանը՝ երկարության 68 աստիճանի, լայնության 38 աստիճանի վրա։ Երբ 337 թվականն եղավ, Ադրբեջանի իշխողը՝ Սալաթ Մուհամմեդը, գերի ընկավ, անվանի և հպատակներ ունեցող նրա բոլոր բեյերը տարբեր կողմերում անկախություն ձեռք բերեցին։ Վերոհիշյալ Մուհամմեդ բին Շեդադը նույնպես ձեռնամուխ եղավ երկրներ գրավելու և թշնամուց պաշտպանվելու։ Հետզհետե նվաճեց իր շրջակայքը և մինչև 344 թվականը իշխեց և ապա մեռավ։ Նրա իշխանության վերջին շրջանում [երկրում] կարգը խանգարվեց և նրա ձեռքից դուրս եկավ։ Որոշ ժամանակ հետո հրապարակ եկավ նրա որդին՝ Լեշկերի Էբու-Լ-Հասան Ալին, և 360 թվականին իր հոր տիրապետած երկրները թշնամուց ազատեց ու ինքը իշխանության գլուխ անցնելով՝ շրջակայքը գրավեց, բանակը պատշաճ կերպով կարգի բերեց և վարչական կարիքները լրացրեց. ութ տարի իշխելուց հետո մեռավ, և նրա տեղը թագավոր դարձավ իր եղբայր Մարզբանը։ Սակայն սա պետական գործերում անկարող և անտարբեր լինելով, նրա իշխանության շրջանը խռովությամբ անցավ։ Սրա և իր եղբայր Ֆազլի միջև թշնամություն էր առաջացել. մի օր, որսի ժամանակ, Ֆազլը հարմար առիթ գտնելով, սպանեց նրան և նրա փոխարեն պահ բարձրացավ։ Այս դեպքը տեղի է ունեցել 375 թվականին։ Ինքը լավ բարքի տեր լինելով, ժողովուրդը նրանից գոհ էր։ 418 թվականին Արազ գետի վրա մի մեծ կամուրջ շինել տվեց, որը նրա լավագույն գործը եղավ։ 47 տարի իշխելուց հետո մեռավ և նրան հաջորդեց իր որդի Էբու-ուլ-Ֆեթհ Մուսան։ Երեք տարի հետո նրան հաջորդեց իր որդի Լեշկերի բին-Մուսան։ Սա իշխեց 15 տարի և նրան հաջորդեց իր որդի Նուշիրվանը։ Որոշ ժամանակ իշխելուց հետո, նրան հաջորդեց Էբու-ուլ-Սեվար Շաբուտ-բին Ֆազլը։ Սա լավ կառավարեց իր երկիրը և որոշ ժամանակ անց երկրում տիրող անկարգությունները վերացրեց, վերանորոգեց քաղաքները և բանակը կարգի բերեց։ 457 թվականին, Սելջուկների սուլթան Ալփ Արսլանը Արմենի և Ռումի երկրներում սրբազան պատերազմ հայտարարեց և քաֆիրների [անհավատների] ձեռքից ազատած երկրները միացրեց Էբու-ուլ-Սեվարի երկրներին և այդ երկրները Նվի-

*րեց ու շնորհեց նրանց։ 459 թվականին Էբու-ուլ-Սեվարը մեռավ և նրան հաջորդեց Ֆազլ բին-Շավերը, որի ժամանակ, երբ սուլթան Ալփ Արսլանը Արանի երկրի վրա եկավ, Ֆազլը նրան դիմավորեց և հպատակություն հայտնեց, որով և արժանացավ նրա նվերներին ու պատիվներին։ 466 թվականին նրա որդի Ֆազլուն ապստամբվեց և նրա երկիրը ձեռքից խլեց, բայց երկու տարի շարունակ չկարողացավ երկրում կարգ հաստատել։ Ալփ Արսլանը հարձակումներ գործեց Արանի երկրի վրա և այդ տոհմը կործանվեց։*

*(հատ. II, էջ 500—508)։*

# ՖԵՐԻԴՈՒՆ ԲԵՅ

## «ՍՈՒԼԹԱՆՆԵՐԻ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ»

*XVI դարի պետական գործիչ և գրող Ֆերիդուն Ահմեդ Բեյը իր կրթությունն ստացել է սուլթան Սյուլեյման Կանունիի Բաշ Դեֆթերդառ Չիվի-Զադե Աբդուլլահ Չելեբիի մոտ։ 960 (1563) թվականին, քարտուղարի պաշտոնով, նա ծառայել է սադրազամ Սոկուլլու Մուհամմեդ փաշային։ Մասնակցել է մի շարք արշավանքների։ Իր ընդունակության և բարձր կրթության շնորհիվ աստիճանաբար բարձրանալով, 978 (1570) թվականին նշանակվել է արտաքին գործերի ընդհանուր քարտուղար (ռեյիս-ուլ-քյութթաբ), այնուհետև, 981 (1573) թվականին, նշանակվել է արտաքին գործերի մինիստրի պաշտոնին համապատասխանող* Tevkıılik*-ի և* Niçancilik***-ի պոստերում։*

*Ֆերիդուն Բեյը թուրքական պատմության մեջ հայտնի է իր «Սուլթանների գրությունններ»* (Müngeat-üs-Selatin) *անունով հայտնի աշխատությամբ, որը պատմական և քաղաքական փաստաթղթերի մի ժողովածու է և իր մեջ ընդգրկում է օսմանյան կայսրության (սուլթան Օսմանից սկսած մինչև սուլթան Մուրադ III-ը՝ մոտավորապես 700 (1300) թվականից մինչև 1000 (1591) թվականը) սուլթանների, սադրազամների, վեզիրների, շեյխ-ուլ-իսլամների պետական պաշտոնական բնույթի ֆերմանները, օտար պետությունների վեհապետներին և իշխաններին գրված պաշտոնական գրությունները, Թուրքիայի և այլ պետությունների միջև կնքված պայմանագրերը, համաձայնագրերը, հայտարարությունները և այլն, ինչպես նաև վերոհիշյալ գրությունների առթիվ ստացված պատասխանները։ Ֆերիդուն Բեյի «Սուլթանների գրությունները» ընդգրկում է այդ դարի արևելյան և արևմտյան բոլոր երկրները։*

*Թուրք պատմագիրները նշում են, որ Ֆերիդուն Բեյը իր ժողովածուում հավաքել է մոտ 1880 փաստաթուղթ և տարբեր բնույթի գրություններ։*

*Հասկանալի է, որ իր գրաված դիրքի պատճառով մոտ կանգնած լինելով սուլթանական արքունիքին, կառավարական շրջաններին, նրա համար մատչելի են եղել պետական բոլոր տեսակի փաստաթղթերը, մինչև անգամ ամենակարևոր գաղտնի գրությունները։*

*Ֆերիդուն Բեյի «Սուլթանների գրություններ»-ի պատմական և գիտական արժեքը մեծ է։ Այդ աշխատությունը լուսաբանում է Օսմանյան կայսրության, մասնավորապես XIV—XVI դարերի ներքին և արտաքին կյանքին վերաբերող բազմաթիվ կարևոր հարցեր։*

---

* *Տե՛ս I հատորի բառարանը, էջ 360, 372։*

Ֆերիդուն Բեյը աշխատությունը ավարտել է 982 (1574) թվականին և իր հովանավոր սադրազամ Սոկուլլու Մուհամմեդ փաշայի միջոցով ներկայացրել է սուլթան Մուրադ III-ին։

XVII դարի հայտնի թուրք պատմագիր Սելանիկին իր «Թարիխի Սելանիկի»-ում նշելով Ֆերիդուն Բեյի «Սուլթանների գրությունները»-ի՝ այդ «հոյակապ աշխատության», բացառիկ կարևորությունը, գրում է. «տարակույս չկա այդ աշխատության անգուգական լինելու մասին, որը բոլորի կողմից ընդունվել է մեծ հավանությամբ։ Սակայն [Արքունիքի կողմից] չարժանացավ բավարար ընդունելության, որի համար շատ զարմացան ժամանակի խելամիտները»*։

Ժամանակակից թուրք պատմաբան Ի. Հ. Դանիշմենդը, նշելով «օսմանյան պատմության ամենակարևոր աղբյուրներից այս արժեքավոր աշխատության»**, սուլթանի կողմից անուշադրության մատնվելու փաստը, քննադատում է սուլթան Մուրադ III-ին։ Դանիշմենդը և մյուս թուրք պատմագիրները սուլթան Մուրադի այդ անտարբերությունը Ֆերիդուն Բեյի աշխատության նկատմամբ բացատրում են սուլթանի ունեցած ատելությամբ և թշնամությամբ դեպի սադրազամ Սոկուլլու փաշան։ Արդարև, սուլթան Մուրադը 984 (1576) թվականին Ֆերիդուն Բեյին զրկում է նիշանջիության պաշտոնից և Ստամբուլից նրան հեռացնելով, նշանակում է Բելգրադի, իսկ հետո՝ Քյոսթենդելի սանջակի բեյի պաշտոնում։ Միայն Սոկուլլու Մուհամմեդ փաշան մահվան դատապարտվելուց հետո, Ֆերիդուն Բեյը վերադառնում է Ստամբուլ և նորից նշանակվում է նիշանջիության պաշտոնին։

Ֆերիդուն Բեյը մեռել է 991 (1583) թվականին։

Ժամանակակից թուրք պատմաբանները, բարձր գնահատելով Ֆերիդուն Բեյի «Սուլթանների գրությունները» աշխատությունը, նշում են նաև, որ այդ աշխատության մեջ, մասնավորապես, Օսմանյան կայսրության սկզբնական շրջանին վերաբերող գրություններում, կան մի շարք անճշտություններ և թերություններ։

Ֆերիդուն Բեյի ժողովածուն տպագրվել է Ստամբուլում երկու անգամ՝ նրա մահվանից մոտ 270 տարի հետո։ Առաջին անգամ տպագրվել է 1265 (1848) թվականին սուլթան Աբդուլ Մեջիդի թույլտվությամբ և Մուհամմեդ Սաիդի խմբագրությամբ։ Երկրորդ, ավելի հաջող տպագրությունը տեղի է ունեցել 1274 (1857—1858) թվականին։

Ֆերիդուն Բեյի «Սուլթանների գրությունները»-ի պատմական և գիտական արժեքը մեծ է։ Գրքում ընդգրկված փաստաթղթերը լուսաբանում են սուլթանական Թուրքիայի XIV—XVI դարերի ներքին և արտաքին քաղաքականության բազմաթիվ հարցեր, որոնք սերտորեն կապված են նաև մեր աշխատության առարկա հանդիսացող հայ և Անդրկովկասի մյուս ժողովուրդների պատմության հետ։

Ֆերիդուն Բեյի «Սուլթանների գրությունները»-ից բերված նյութերը մեծ մասամբ կրճատված են. միայն առավել ուշագրավ նյութերն ու փաստաթղթերն են տրվում նույնությամբ և լրիվ։ Բացի դրանից որոշ նյութերի թարգմանությունները տրվում են հատորի հավելվածում։

---

* «Թարիխի Սելանիկի», էջ 137։ Մանրամասնությունները տե՛ս այս հատորի «Թարիխի Սելանիկի»-ի 982 թվականի դեպքերից հատվածը և 2-րդ ծանոթագրությունը։

** I. H. Danismend, Izahli Osmanli Tarihi kronolojisi, cilt III, s. 5.

## ՎԱՆԻ ՀԱՂԹԱՆԱԿԻ ԱՌԹԻՎ ԴՐԱԽՏԱԲՆԱԿ ՍՈՒԼԹԱՆ ՍՈՒԼԵՅՄԱՆ ԽԱՆԻ ԴԵՐԳՅԱՀԻՑ ՖՐԱՆՍԻԱՅԻ ԹԱԳԱՎՈՐԻՆ ՈՒՂԱՐԿԱԾ ԳՐՈՒԹՅՈՒՆԸ¹

*Փաստաթղթում Ֆրանսիայի թագավորին հայտնվում է, որ թշնամու նկատմամբ իսլամական բանակի տարած հաղթանակը մեծ գոհունակություն և ուրախություն է պատճառել իսլամական ժողովրդին։*

*«.. Սրանից առաջ ստոր և խավարի մեջ սլպրող կըզըլբաշ ցեղը, որը խռովության ու երկպառակության կրակը բորբոքելով և ռաֆըզիական անհավատության անվան ներքո ծածկված մոլորության ճանապարհով տարածում է գարշելի շիա դավանանքը, այդ ցեղի պետությանը զրկել է հավատի լույսից։*

*Նրանց մոլորյալ սերդար Թահմասի [Թահմասբի] եղբայր Էլկաս [Միրզա] սատանան, ապաստանելով մեր բարձր Դռան, գանգատ ներկայացրեց իր կրած բռնությունների մասին։ Սրանց անհավատության պատճառով կրոնում առաջացած ժանգն ու արատը Զյուլֆիկարի փայլուն սրով մաքրելու և ոչնչացնելու համար, հաղթանակի դրոշը բաց անելով, իմ հաղթական բանակով փադիշահական արշավանքի դուրս եկա դեպի արևելք։ Ադրբեջանի երկիրը նվաճելով, իմ հովանու տակն առա և, Թավրիզի երկիրը իմ բախտավոր դրոշակի [իշխանության] կենտրոնը դարձավ։ Շրջակա և հարևան երկրներն ազատվեցին խռովարարներից և անհավատներից [կըզըլբաշներից], նրանց տիրապետությունից։ Ստոր և եղկելի շահը, արիության ու քաջության նշույլ անգամ երևան չբերեց և պարզ ու ակնհայտ եղավ, որ [նա] մեր սրի առաջ վիզը ծռած թուլամորթի նման թաքնվել է մեր փառապանծ զինվորների ահից ու սարսափից։*

*Այդ երկրի ռայաներն ու հպատակները, մեր Բարձր հովանավորության ներքո, արժանանալով թագավորական արդարության և աշխարհապարփակ ողորմության, զերծ մնացին կողոպուտից ու թալանից և վայելեցին իմ փադիշահական գթության ու ողորմության շնորհիվ ստեղծված ապահովությունը և անդորրությունը։*

*Մեր հաղթական արշավի և Ադրբեջանի երկիրը գալու բուն նպատակն էր ձեռք բերել այդ երկրի իշխանությունը և ապահովել այն։ Անտարակույս, նվաճման այդ նպատակը իրականացնելու համար իմ փադիշահական ուղևորության ժամանակ անհրաժեշտ էր ազատել Վանի բերդը, որը հանդիսանում է Աջեմի երկրի ամրակուռ բերդը։ Երջանկաբեր 955 թվականի ռեջեբ ամսի սկզբին եկա [Վանի] բերդի վրա։ Վերոհիշյալ անհավատը [շահը], այդ երկնամբարձ բերդը կարգի բերելով և ամրացնելով, լցրել էր ան-*

հավատներով [զինվորներով]։ Փա՜ռք և պատի՜վ ամենահզոր Աստծուն, որը մշտապես օգնել է իմ բարի նպատակներին։ Ապավինելով Նրա շնորհներին և հետևելով տիեզերքի ու բոլոր արարածների պարծանք [փեյղամբերի] ցուցմունքներին... իմ մեծ վեզիր Ռուստեմ փաշայի և մյուս բարձր վեզիրների ու իմ կուլեր՝ բեյլերբեյիների, սանջակի բեյերի և բոլոր հաղթական ղազի զինվորների հետ միասին ձեռնարկեցինք [բերդի] նվաճմանը... Կարճ ժամանակում մեզ հաջողվեց գրավել [Վանի] բերդը, Նրա շրջակայքն ու հարակից վայրերը, որոնք մեր Մուհամմեդի երկրի մասն էին կազմում. Նրանց գրավման և պահպանման համար իշխողներ նշանակեցի մեր առյուծաբար կռվողներից և հաղթական մյուջահիդներից։ Իմ հավատարիմներից մեկին նշանակեցի բեյլերբեյի։ Այդ ժամանակ վերոհիշյալ պարտվածի [շահի] իշխանության ներքո գտնվող Շիրվանիի երկիրն էլ մեր հաղթական էվլիյաների ձեռքն անցավ և այդ երկիրը մաքրվեց անհավատ ռաֆըզիներից։ Այս հաջողություններից հետո, մեր հաղթական զինվորներով շարժվեցինք դեպի Դիարբեքիր և, որովհետև մոտենում էին ձմեռվա օրերը, երջանիկ և բախտավոր ձմեռեցինք Հալեպում, իսկ մեր զինվորներն էլ ձմեռեցին Դիարբեքիրի տարբեր վայրերում...

*Այնուհետև մանրամասն խոսվում է Վանի բեյլերբեյիի և թշնամու բազմաթիվ ուժերի միջև Խոյում տեղի ունեցած կատաղի մարտերի մասին, որոնց ժամանակ օսմանցիները միշտ հաղթություն են տարել։ Նշվում է, որ օսմանցիների մոտ ապաստանած Էլկաս Միրզան, իր ստացած փոքրաթիվ զինվորներով, Համադանից գնում է Սպահանի և Կազվինի վրա, ավերում, կողոպտում և թալանում է այդ երկրները։ Այնուհետև, գարնանը, փադիշահական բանակը Հալեպից շարժվում է դեպի Դիարբեքիր և հետո՝ Վրաստան։*

...Իմ փադիշահական երկրին սահմանակից Վրաստանի անհավատները երկերեսանի խռովարարներ են և երբեմն իմ Բարձր իշխանության են ապավինում, երբեմն էլ ապաստան փնտրում հավատուրաց կըզըլբաշների մոտ։ Նկատի առնելով Նրանց խռովությունների վերջ տալու կարևորությունը և անհրաժեշտությունը, որոշ քանակությամբ զինվորներ ուղարկեցի դեպի այդ կողմը [Վրաստան], որոնք քյաֆիրների դժոխանման Սերլեքան անունով ամրակուռ և բարձրադիր բերդի վրա գնալով, հաղթանակ ձեռք բերեցին. անհավատները պարտության մատնվեցին և սրո ճարակ դարձան։ Այդ բերդից հետո նվաճեցին նաև բազմաթիվ այլ բերդեր, որոնք միացվեցին իմ կայսերական երկրին։ Հաջողությամբ և բախտավորությամբ իջևանեցինք Դիարբեքիրի մոտի Կըզըլ Դեփե

կոչված վայրում և այնտեղ մնացինք մի քանի օր։ Այն ժամանակ իմ երջանկաբեր Դուռն ապաստանած էլկասր [Միրզան], որը իմ փադիշահական բազմաթիվ շնորհներով հարգանքի էր արժանացել և իր խռովարարական բնության պատճառով հակամիտ էր հավատարմությունը փոխարինելու գժտությամբ և թշնամությամբ, մի շարք անգիտակից քրդերի խաբելով և մոլորեցնելով, ապստամբել էր և ապաստանել Քուրդիստանի լեռներում։ Իմ հաղթական և առյուծանման զինվորներից մեծ բանակ նրա [էլկասի] դեմ ուղարկեցի. բանակը շտապ շարժվեց դեպի այդ կողմը։ Բարձրյալն Աստծո օգնությամբ մեր զինվորները սրո ճարակ դարձրին թշնամու զինվորներին, նրանց ունեցվածքն ու տունուտեղը կողոպտեցին և թալանեցին։ «Ով փրկում է իր գլուխը, նա է շահում» առածի համաձայն վարվելով, նա իր երկու-երեք մարդկանց հետ թաքնվեց լեռներում, որի հետևանքով երկիրը և ժողովուրդը ազատվեցին ու մաքրվեցին նրա չարությունից և խառնակչությունից։ Այդ կողմերում ապրող բոլոր քուրդ էմիրները մեր հաղթ սրի սարսափից մեր պաշտպանությունը խնդրեցին. նրանց մարդիկ ու զավակները եկան մեր բանակը և արժանացան իմ փադիշահական Բարձր գթությանը։ Այսախով, այդ կողմերի անարգ կըզըլբաշիների հետ կապված հպատակ էմիրներն ու ավագանին հպատակվեցին ու հնազանդվեցին իմ երջանկաբեր Դռանը և ցույց տվեցին հավատարմություն ու ծառայություն։ Լրիվ վրեժխնդիր եղան նաև Վրաստանում ապրող և վնասի ու դժբախտության ենթարկված անհավատներից։ Այդ կողմերը [երկրները] ամբողջովին կազմում էն մեր իսլամական երկրի մասը։ Այդ պատճառով իմ բարձր վեզիր Ահմեդ փաշան, թո՛ղ Աստված նրան մշտապես պահպանի, որոշ թվով Կափու-կուլի, Ջյուֆենքչի և ենիչերի կուլերով, ինչպես նաև Կարամանի, Զյուլկադերի և Էրզրումի բեյլերբեյիները՝ իրենց բոլոր զինվորներով, մտան Վրաստան։ Հսկա և բարձրադիր Թութումի [Թորթում] բերդը, լինելով դժբախտ անհավատների որջն ու հավաքատեղին, այդ երկրի մայրաքաղաքն էր հանդիսանում և նշանավոր էր իր ամրությամբ ու անառիկությամբ...

Օսմանյան բանակը պաշարում է Թորթումի բերդը. երկար ու կատաղի հարձակումներից և թնդանոթաձգությունից հետո քանդվում են բերդի ամրակուռ պարիսպները. վրացիներնստիպված անձնատուր են լինում։ Թորթումի բերդը գրավվում է 956 թվականի շաբան ամսի 18-ին (սեպտեմբերի 17). Ահմեդ փաշան Թորթումում նշանակվում է սանջակի բեյ. նշանակվում են նաև բերդապահներ։ Հետո օսմանցիները գրավում են նաև Թորթումի մոտ գտնվող Լահոն կոչված բերդը, Ակչակալան և այլ բերդեր...։

...Թշնամուն պատկանող 35 բերդերից 14-ը հողին հավասարեցրին, իսկ մնացած 21 բերդերում բերդապահներ նշանակելով, երկրում մի բեյլերբեյիություն և չորս սանջակ կազմակերպեցին... ողջ և առողջ, ավարով հարստացած [օսմանյան բանակը] վերադարձավ Վրաստանի նվաճումից հետո...։ Վանի բեյլերբեյին շարժվեց կըզըլբաշի [շահի] ազգականներից Հյուսեին խանի, Կիթմաս և Նեչեր անունով սուլթանների վրա։ Անհավատների զինվորները չկարողանալով դիմագրել, ցրվեցին և ապաստանեցին լեռներում։

Նախիջևանը, Սաաթ Չուկուրի և Դերդան անունով վայրերը ամբողջովին թալանի ու հրի մատնեցին։ Բարձրյալն Աստծո ողորմությամբ և օգնությամբ իմ վսեմությունը մեծ հաղթության արժանացավ։ Այս հաղթական արշավանքով բովանդակ Ադրբեջանի երկիրը միացվեց իմ կայսերական տիրապետությանը։

Այս սրբազան արշավանքից երջանիկ և բախտավոր վերադարձա սուլթանության կենտրոնը [մայրաքաղաքը]։

Բովանդակ իսլամական հասարակության և իմ բոլոր հպատակներին մեծ խնդություն ու ուրախություն պատճառող այս փառավոր հաղթանակի ավետիսը ձեզ հաղորդեցի իմ կայսերական նամակով, իմ... կուլի միջոցով։ Երբ բարձրյալն Աստծո կամքով այս նամակը ձեզ հասնի և դուք այն ստանաք, այս ավետաբեր լուրը հայտնեք և ծանուցեք ձեր շրջակայքին, բոլորին և զարդարեք ձեր քաղաքները»։

(հատ. II, էջ 603—606)

## ԿԱՐՍԻ ԲԵՐԴԻ ՄԻ ՔԱՆԻ ՀԱՐՑԵՐԻ ՄԱՍԻՆ ՇԱՀ ԹԱՄԱՍԲԻՆ ՈՒՂԱՐԿՎԱԾ ՓԱԴԻՇԱՀԱԿԱՆ ՆԱՄԱԿԸ[2]

Նամակի սկզբում, սուլթանական գրություններին հատուկ բարձր ոճով և ածականների ու տիտղոսների շռայլությամբ, խոսվում է ազգություններին հանգիստ ու խաղաղ կյանք ապահովելու համար սուլթանության և իսլամական խալիֆայության պարտավորության և բարձր կոչման մասին։ Ապա նշվում է, որ Ամասիայի հաշտության պայմանագրով երկու երկրների միջև թշնամությունը վերացվել է և խաղաղությունը ապահովվել, որը համապատասխանում է սուլթանության ցանկությանն ու նպատակներին։ Այնուհետև փադիշահը հայտնում է, որ ներկայումս այդ խաղաղությունն ու անդորրությունը խանգարվում են անգիտակից և կրոնի լույսից զուրկ որոշ տարրերի, հատկապես վրացիների կողմից...

Աչըք Բաշի էմիրները կողոպտել և թալանել են վիլայեթի մի շարք նահիյեները, մեծ վնասներ են պատճառել և [երկիրը] ավերակի վերածել։ Արդահանի վիլայեթում նրանց կատարած բռնու-

թյունները հայտնի են և ծանոթ։ Ներկայում[2], որոշ մարդկանց ուղարկելով, նպատակ են ունեցել դրավել Կարսը։ Հաշտության կընքումից հետո Կարսի վիլայեթը քանիցս նվիրել եմ իմ բարձրության ծառաներից մի քանիսին՝ իբրև սանջակ։ Նրան [Կարսին] ենթակա մի շարք գյուղեր և հողեր իմ փադիշահական դաֆթարում գրանցված են և՛ իբրև զեամեթ, և՛ թիմար և տրված են իմ սիփահի ղազիներին։ Սրանք [սիփահիները] այդ տեղերում տներ ու շենքեր են կառուցել և ապրում են այնտեղ։ Սակայն վիլայեթի սահմանի վրա գտնվող որոշ մարդկանց միջամտությունը նրանց [գործերին] և պատճառած վնասները բոլորովին հակառակ են օրենքին ու իրավունքին։

Այժմ չի կարելի թույլ տալ, որ խախտեն և խանգարեն կընքված պայմանները, պատվի ու դիրքի տեր մարդկանց գործերը։ Այդ պատճառով հարմար է, թերևս նաև անհրաժեշտ է, որ սրանից հետո էլ՝ համերաշխության, միության և բարեկամության հիմքերը պահպանելու համար, վերացվեն բռնության դեպքերը։ Կարս եկած մեծերին ու փոքրերին այդտեղից հեռացնելու և իմ փառքին ու պատվին համապատասխան անհրաժեշտ ջանքեր գործադրեք, կատարեցեք այն ամենը, ինչ անհրաժեշտ է, որ ուժի մեջ մնան պայմանագրի պայմանները։ Անցած ժամանակներից ի վեր իմ արքայական հովանու տակ գտնվող և վիլայեթների ու էյալեթների դաֆթարներում հիշատակված բերդերը, գյուղերը և հողերը պետք է միշտ աչալուրջ լինեն և զգուշանան հարձակումներից, որոնք հակառակ լինելով սուլթանական օրենքներին, անընդունելի գործեր են։

Իմ սուլթանության օրով փադիշահական ամենամեծ ցանկությունս է՝ խռովարարների բռնությունից և վնասարար մարդկանցից ապահովել երկրի և ժողովրդի պաշտպանությունը, նրանց զերծ պահել ամեն տեսակի չարիքներից... Սակայն սահմանի վրա գտնվող ձեր բեյլերբեյիներից՝ Շահ Կուլիի, Մենսուրի և այլոց ուղարկած նամակները այդ դեպքերի մասին հաստատում են լուրերի ստուգությունը։ Այս մասին ծանուցվել և հայտնվել է այդ կողմերին։

(հատ. II, էջ 625—626)

## ԵՐԿՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՎՐԱՍՏԱՆԻ ԷՄԻՐՆԵՐԻՆ ԵՎ ԽԱՆԵՐԻՆ ԳՐՎԱԾ ՓԱԴԻՇԱՀԱԿԱՆ ՀՐԱՄԱՆԸ[3]

Վրաստանի հավատարիմ էմիրները, հնուց ի վեր հպատակվելով իմ Բարձր և հարատև աղնվական գերդաստանին, խնդրել են

*իրենց հովանավորել վատաբարո կըզըլբաշի հարձակումներից, պաշտպանել իրենց երկիրը, փրկել իրենց պատիվն ու գույքը շրջակայքի զինվորների ոտնձգություններից, բոլորին՝ հարուստին ու աղքատին, ապահովելու երջանիկ օրեր և հանգստություն։*

*Սակայն ոմանք [վրացի իշխաններից], խաբվելով սևերես շահի խարդավանքից, նրան ցույց են տվել հպատակություն և առերես բարեկամություն, որի հետևանքով կողոպուտի են ենթարկվել նրանց բազմաթիվ բարեշեն վայրերը, մեծ վնասներ են կրել նրանց ընտանիքներն ու զավակները, թալանվել են սեփականություններն ու գույքերը։ Օրեցօր ուժեղացել են թշնամու [կըզըլբաշի] ճնշումն ու բռնությունները։*

*Իրենց բնավորության մեջ ունեցած եռանդով ու փութաջանությամբ [վրացի իշխանները] չկարողացան հանդուրժել և տանել կրզըլբաշների ստոր արարքները։ Ջեքեմի իշխող Թահմուրաս [Թեյմուրազ] խանը, Քարթլիի իշխող Մաղրավ խանը, Գորիլի (Գուրիա), Դադիանի, Կարա Կալկանի և Վրաստանի մյուս էմիրները միաբերան և համերաշխ դիմադրություն ցույց տվեցին և կռվեցին վատ նպատակներով Վրաստան եկած կրզըլբաշների նենգ ու սատանաբարո զինվորների դեմ։ Սպանեցին նրանց մի քանի խաներին, իսկ սրից ազատվածներին և փախչողներին հետապնդեցին մինչև Ղարաբաղի սահմանը։ Սպանեցին բազմաթիվ անվանի կրզըլբաշների և կողոպտելով ու թալանելով նրանց երկիրը, գրավեցին մի շարք բերդեր։*

*Երբ այդ անիծյալները [կըզըլբաշները], վրեժ լուծելու նպատակով, մի քանի անգամ հավաքվեցին ու եկան, [վրացիները] նրանց դեմ դուրս գալով, մեծ մարտեր մղեցին, բռնեցին կրղըլբաշների սերդարին և սպանեցին նրանց բազմաթիվ երևելիներին. բարձրյալն Աստծո օգնությամբ նրանց պարտության մատնեցին և մեծ հաղթանակ տարան։*

*Մաղրավ խան! [Այդ մասին] դուք մանրամասնորեն ինձ զեկուցել և հայտնել եք, որի շնորհիվ ավելի հաստատուն է դարձել իմ փադիշահական բարյացակամ կարծիքը ձեր մասին։ Դուք արժանացել եք իմ աղոթքներին և բարձր համակրանքին։ Ես այժմ ձեզնից սպասում եմ այնպիսի եռանդ և փութաջանություն, որ միշտ ցուցաբերել եք դուք։ Հիմա ձեր ցույց տված օգտակար ծառայությունների փոխարեն, ձեր նկատմամբ իմ արքայական ողորմածությունը ավելի հաստատուն դառնալով, ձեզ շնորհեցի իմ թանկարժեք խալաթներից մի երջանկաբեր հագուստ, որը ձեզ ուղարկելու համար հատուկ մարդ է նշանակված։ Հրամայեցի, որ դուք հագ-*

*նելով այդ պատվո խալաթը և փառավոր հագուստը, ձեր եռանդի ու փութաջանության, ձեր կորովի և արիության համապատասխան. ձեր բոլոր ուժերը տաք ձեր բազուկներին։ Իմ բարձր Դերգյահից նշանակված ենիչերիների հետ միասին, այդ սահմաններին մոտ էյալեթների բեյլերբեյիների, Ջեքեմի իշխող Թեյմուրազ խանի, Քարթլիի իշխող Մաղրավ խանի, Գորիլի, Դադիանի, Կարա Կալկանի մելիքների և Վրաստանի մյուս էմիրների հետ միաբան և համերաշխ լինեք։ Աստծո կամքով, մինչև իմ հաղթական սերդարը այդ կողմերը հասնի, դուք պետք է կողոպտեք և թալանեք անարգ կրզըլբաշների երկիրը, պետք է գրավեք սահմանամերձ բերդերը և այդ ստոր ամբոխին ամբողջովին ոչնչացնելու գործում ցուցաբերեք ձեր արիությունը։*

*Դո՛ւք, Վրաստանի էմիրնե՛ր, ձեր բազմաթիվ փորձերով գիտեք, թե ինչ աստիճանի կհասնի անկեղծություն ցուցաբերողների պատիվն ու արժեքը։ Ամենքին հայտնեցե՛ք և վստահեցրե՛ք, որ չի կարելի հավատ ընծայել խոստմնադրուժ, երդումն ու հավատը թույլ [կրզըլբաշների] ցեղին, չի կարելի հավատալ նրանց խարդավանքներին ու պատրանքներին և, վերջապես, չի կարելի վստահել այդ աստվածուրացներին։ [Ուստի] պետք է լինեք հեռատես և զգույշ, պատվի ու նամուսի արժանի և իմ կայսերական հավանությանը համապատասխան միջոցներ ձեռք առնեք, եռանդ ու ջանք չխնայեք երկիրը պահպանելու և պաշտպանելու գործում։*

*Բարձրյալն Աստծո կամքով, ձեր ցույց տված ծառայությունները չեն կորչի և անպայման կարժանանաք իմ բարձր ու բազմատեսակ շնորհներին։*

*Սրանից հետո էլ տեղի ունեցած դեպքերի մասին պետք է գրեք ու հայտնեք երջանիկ Ասիթանեին և իմ վսեմաշուք սերդարին։*

*(հատ. I, էջ 223)*

## ԱՐՔՈՒՆԱԿԱՆ ՀԱՆԴԻՍԱՎՈՐՈՒԹՅԱՄԲ ՎՐԱՍՏԱՆԻ ՏԻՐԱԿԱԼԻՆ ՇՆՈՐՀՎԱԾ ՓԱԴԻՇԱՀԱԿԱՆ ՆԱՄԱԿԸ

*Դո՛ւ, որ արիությամբ և քաջությամբ հայտնի Վրաստանի էմիրների երևելին ես և իսլամական եռանդով ու փառասիրությամբ Ալբրեզիստանի[4] անվանիների գլխավորը։*

*Սրբազան կրոնի և ընտրելագույն Ռաշիդյան խալիֆաների (թող Աստված ողորմի՛ նրանց հոգուն) բարության համար, բարեպաշտ ու ազնիվ մարդիկ՝ մեծ եռանդով և փութաջանությամբ, մշտապես վրեժխնդիր են եղել անհավատ ռաֆըզիների ցեղից։ Իմ մեծ նախորդների օրով Արևելյան երկրները նվաճելու համար նշա-*

նակված սերդարներն ու սերասքերները՝ դեպի Շիրվան ուղևորվելու ժամանակ, այդ երկիրը մաքրել են սյուննի դավանանքն ու մաքուր հավատը արատավորող ռաֆըզիներից և հնազանդեցրել բազմաթիվ ըմբոստների։

Քո հավատարիմ նախորդներն էլ՝ միասիրտ և միահոգի, միաբանեցին կրոնի անիծյալ թշնամի ռաֆըզիների դեմ և կրոնի պաշտպանության գործում իրանց մատուցած ծառայությունների փոխարեն արժանացան իմ փադիշահական գովասանքներին և սիրաշահությանը։

Այժմ, դու էլ իմ ազնվատոհմ գերդաստանին լրիվ հավատարմություն և անկեղծություն ցույց տալով, արդարության ճանապարհին, հաստատակամ և անսասան ես մնում քո նախորդների հավատարմության մեջ, որը հայտնի է դարձել իմ արքայական լսողությանը և հաստատուն դարձրել իմ փադիշահական բարյացակամ կարծիքը քո մասին։ Դու արժանացել ես իմ աղոթքներին, բարձր ուշադրության շնորհներին։ Բախտավո՛ր լինես։

Այժմ, իմ բախտավոր Դերգյահի նկատմամբ քո ցույց տված անկեղծության փոխարեն, իմ արքայական ողորմածությունը ավելացած լինելով, քեզ նվիրեցի և շնորհեցի իմ մեծարժեք խալաթներից մի երջանկաբեր հագուստ, որը ուղարկելու համար մարդ է նշանակված։ Երբ ստանաս իմ շնորհած մեծարժեք խալաթն ու փառավոր հագուստը, պիտի հագնես մեծ պատվով ու մեծարանքով և քո բնության մեջ պահած ու արմատացած եռանդին և արիությանը համապատասխան, մեծաթիվ զինվորներով՝ ցեղերի և աշիրեթների երևելիների հետ միասին, կազմ ու պատրաստ պիտի լինես։

Բարձրյալն Աստծո կամքով, երբ իմ հաղթական սերգարը գա այդ կողմերը և, եթե Վրաստանի էմիրներն էլ շարժվեն իրենց տեղերից, դու նրանց պիտի միանաս՝ պետք եկած վայրում։ Արարչի կամքին հակառակ, դաշինքն ու ուխտը դրժող անհավատ ռաֆըզիների ղեկավարներից վրեժ լուծելու համար բոլոր ուժերդ բազուկիդ տալով, ստոր կըզըլբաշներին ոչնչացնելու գործում ցույց պիտի տաս քո արիությունը, պատիվն ու նամուսը և ջանքեր գործ դնես նվիրական շարիաթը պաշտպանելու համար։ Վստահ եղի՛ր, որ քո ծառայությունները չեն կորչի, անպայման արժանի կլինես իմ բարձր շնորհներին և բազմատեսակ ողորմածություններին։

Սրանից հետո էլ՝ կրոնի և պետության գործերի մասին պետք է զեկուցեք և հայտնեք երջանիկ Ասիթանեին և իմ հաղթապանծ սերդարին։

(Հատ. II, էջ 224)

## ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԵՐԿՐԻ ԷՅԱԼԵԹՆԵՐԻ ԵՎ ԼԻՎԱՆԵՐԻ ՄԱՍԻՆ[5]

### Սրբազան Մեքքայի շերիֆությունը[6]

| | | |
|---|---|---|
| *Լիվա* | — | *Ռեդուս՝ Դեդիրմենլիքի հետ միասին* |
| *Լիվա* | — | *Սուղլե* |
| *Լիվա* | — | *Էնդրե* |

### Ղրիմի խանություն

| | | |
|---|---|---|
| *Լիվա* | — | *Նակշե* |

*Ծովակալություն (Կափուդանլըքի— Դեյրա[7])*

| | | | | |
|---|---|---|---|---|
| *Լիվա* | — | *Լեմիե՝ Կավալայի հետ միասին* | | |
| *Լիվա* | — | *Միդիլլի* | | |
| *Լիվա* | — | *Սակըզ* | | |
| *Սալյանե* | — | *Սակըզ . . . . . .* | | *(?) բեռ* |
| *Սալյանե* | — | *Սակըզ* | *100.000* | *բեռ* |
| *Սալյանե* | — | *Սակըզ* | *800.000* | *բեռ* |
| *Սալյանե* | — | *Սակըզ* | *800.000* | *բեռ* |
| *Սալյանե* | — | *Սակըզ* | *800.000* | *բեռ* |
| *Լիվա* | — | *Մորե* | *Սալյանե Մորե* | *800.000 բեռ* |
| *Լիվա* | — | *Էղրիբոզ* | *—»—* | *100.000 բեռ* |
| *Լիվա* | — | *Մեզեսթրե* | *—»—* | *800.000 բեռ* |
| *Լիվա* | — | *Էյամորե* | *—»—* | *800.000 բեռ* |
| *Լիվա* | — | *Ինչե Բեխթի* | *—»—* | *800.000 բեռ* |
| *Լիվա* | — | *Բենեկշե* | *—»—* | *800.000 բեռ* |
| *Լիվա* | — | *Իսքենդերիյե* | | |
| *Լիվա* | — | *Դեմյատ* | | |
| *Լիվա* | — | *Մաղոսե* | | |
| *Լիվա* | — | *Բաֆ* | | |
| *Լիվա* | — | *Լիմոսոն* | | |
| *Կափուդանլըք* | — | *Լեվին* | | |
| *Կափուդանլըք* | — | *Անաբոլի* | | |
| *Լիվա* | — | *Թուզլե* | | |
| *Լիվա* | — | *Կասթել* | | |
| *Լիվա* | — | *Բիղա* | | |
| *Լիվա* | — | *Կոջա-Իլի* | | |

Լիվա — Բերե
Լիվա — Կարլը-Իլի

## Կայսերական Եգիպտոսի էյալեթ

Սալյանե[8] — Եգիպտոս
Սալյանե — Եգիպտոս
Սալյանե — Եգիպտոս
Սալյանե — Եգիպտոս
Սալյանե — Եգիպտոս
Սալյանե — Եգիպտոս
Սալյանե — Եգիպտոս
Սալյանե — Եգիպտոս

Սալյանե — Եգիպտոս
Սալյանե — Եգիպտոս
Սալյանե — Եգիպտոս
Սալյանե — Եգիպտոս
Սալյանե — Եգիպտոս
Սալյանե — Եգիպտոս
Սալյանե — Եգիպտոս
Լիվա-Ջետտեի — Մամուրե

Եգիպտոսի Դիվանի դեֆթերդարությունը[9]

## Ռումելիի էյալեթ

Լիվա — Քոսթենգիլ
Լիվա — Թերհալե
Լիվա — Փերչերին
Լիվա — Յանյա
Լիվա — Դելվինե
Լիվա — Վելչեթրին՝ Ոսքյուբի նեզարեթի հետ միասին
Լիվա — Ոսքյուբ
Լիվա — Էլբիսան
Լիվա — Ավլոնիա
Լիվա — Դուկեգին
Լիվա — Իսքենդերիյե
Լիվա — Օխրի
Լիվա — Ալաջա Հիսար
Լիվա — Սելանիկ
Լիվա — Վինոչան—Ռումելի
Քեթխուդայություն[10]— Ռումելիի դեֆթերի
Դեֆթերդարություն— Ռումելիի թիմարների
Լիվա — Նիկոպոլիի և Սիլիսթրեի միրի-աքընչյան[11]
Լիվա — Ռումելիի միրի-յուրուքան[12]

### Բոսնիայի էյալեթ

Լիվա — Հերսեք
Լիվա — Քելիս
Լիվա — Իզուրնիկ
Լիվա — Կարկե, այլ անունով՝ Լեկե
Լիվա — Չախեսթե, այլ անունով՝ Չերնիք
Լիվա — Բոսնիա
Քեթխուդայություն — Բոսնիայի թիմարների,
Դեֆթերդարություն — Բոսնիայի թիմարների։

### Բուդինի էյալեթ

| | |
|---|---|
| Լիվա — Սեմենդրե | Լիվա — Ուսթերջան |
| Լիվա — Շերմ | Լիվա — Նեվի Բելգրադ |
| Լիվա — Կոբան | Լիվա — Սեչան |
| Լիվա — Շեմութուրթե | Լիվա — Սեքսար |
| Լիվա — Ուսթունի Բելգրադ | Լիվա — Մեհաչ |

Դեֆթերդարություն — Բուդինի եկամտականի (մալիյե)[13]
Քեթխուդայություն — Բուդինի դեֆթերի
Քեթխուդայություն — Բուդինի թիմարների

### Թեմեշվարի էյալեթ

Լիվա — Լիվե
Լիվա — Չենար
Լիվա — Քյոլե
Լիվա — Մեդվե
Լիվա — Յանվե
Դեֆթերդարություն — Թեմեշվարի եկամտականի
Քեթխուդայություն — Թեմեշվարի դեֆթերի
Դեֆթերդարություն — Թեմեշվարի թիմարների

### Կանիժեի էյալեթ

Լիվա — Սեքթեվար
Լիվա — Փեչեվի
Լիվա — Փոզղե

Քեթխուդայություն — Կանիժեի դեֆթերի
Դեֆթերդարություն — Կանիժեի թիմարների

## Էյրիի էյալեթ

Լիվա — Սեքտին, այլ անունով՝ Փեչկե
Լիվա — Սոլթիք
Լիվա — Խեթվան
Քեթխուդայություն — Էյրիյի դեֆթերի
Դեֆթերդարություն — Էյրիյի թիմարների։

## Էոզիի էյալեթ

Լիվա — Սիլիսթրե
Լիվա — Նիկեպոլի
Լիվա — Չերմեն
Լիվա — Վիդին
Լիվա — Կըրք Քիլիսե
Լիվա — Վիզե
Դեֆթերդարություն — Թունիայի
Քեթխուդայություն — Էոզիի դեֆթերի
Դեֆթերդարություն — Էոզիի թիմարների։

## Քեֆեի էյալեթ

Լիվա — Ակկերման
Լիվա — Բենդար
Լիվա — Աչաք
Լիվա — Կըլ Բուրուն

## Անատոլիայի էյալեթ

Լիվա — Խուդավենդիդյար
Լիվա — Կասթեմունի
Լիվա — Կարասի
Լիվա — Սուլթան Էոնի
Լիվա — Սարուխան
Լիվա — Կարա Հիսար (Սահիբ)
Լիվա — Համիդ
Լիվա — Բոլի
Լիվա — Անկարա
Լիվա — Քանկրի
Լիվա — Այդըն
Լիվա — Թեքե
Լիվա — Մենթեշա

*Քեթխուդայություն — Անատոլիայի դեֆթերի*
*Դեֆթերդարություն — Անատոլիայի թիմարների։*

## Կարամանի էյալեթ

*Լիվա — Նիկդե*
*Լիվա — Կայսերիե [Կեսարիա]*
*Լիվա — Բեկշեհրի*
*Լիվա — Ակշեհիր*
*Լիվա — Ակսարայ*
*Դեֆթերդարություն — Կարամանի եւլեմտականի*
*Քեթխուդայություն — Կարամանի թիմարների*
*Դեֆթերդարություն — Կարամանի թիմարների*

## Մարաշի էյալեթ

*Լիվա — Մալաթիա*
*Լիվա — Այնթաբ*
*Լիվա — Կարս՝ Մարաշի*
*Քեթխուդայություն — Մարաշի դեֆթերի*
*Դեֆթերդարություն — Մարաշի թիմարների*

## Սվազի էյալեթ

*Լիվա — Ամասիա*
*Լիվա — Ջանիկ*
*Լիվա — Չորում*
*Լիվա — Դիվրիկի*
*Լիվա — Բոզոք*
*Լիվա — Արաբկիր*
*Դեֆթերդարություն — Թոկաթի եւլեմտականի*
*Քեթխուդայություն — Ծվազի դեֆթերի*
*Դեֆթերդարություն — Սվազի թիմարների։*

## Շամի [Դամասկոսի] էյալեթ

*Լիվա — Կուդսի Շերիֆ [Երուսաղեմ]*
*Լիվա — Ղազա*
*Լիվա — Սեֆեդ*

*Լիվա — Նաբլուս*
*Լիվա — Ջեբել Աջլուն*
*Լիվա — Լեջուն*
*Լիվա — Թեդմեր*
*Լիվա — Կերք-վե Ջեբեք*
*Դեֆթերդարություն — Շամի եկամտականի*
*Քեթխուդայություն — Շամի թիմարների*
*Դեֆթերդարություն — Շամի թիմարների։*

## Հալեպի էյալեթ

*Լիվա — Մարե*
*Լիվա — Նաբլուս*
*Լիվա — Ազիր*
*Լիվա — Բերեջիկ*
*Դեֆթերդարություն — Հալեպի եկամտականի*
*Քեթխուդայություն — Հալեպի դեֆթերի*
*Դեֆթերդարություն — Հալեպի թիմարների։*

## Թարաբլուսի-Շամի էյալեթ

*Լիվա — Համա*
*Լիվա — Հումս*
*Լիվա — Ջեբլիե*
*Լիվա — Սելմիյե*
*Դեֆթերդարություն — Թարաբլուսի — Շամի եկամտականի*
*Քեթխուդայություն — Թարաբլուսի — Շամի դեֆթերի*
*Դեֆթերդարություն — Թարաբլուսի թիմարների։*

## Ադանայի էյալեթ

*Լիվա — Թարսուս*
*Լիվա — Սիս*
*Քեթխուդայություն — Ադանայի դեֆթերի*
*Դեֆթերդարություն — Ադանայի թիմարների*

## Կիպրոսի էյալեթ

*Լիվա — Ալայիե*
*Լիվա — Քերինե*

Լիվա — Մաղոսե
Լիվա — Յաֆ
Լիվա — Ջեզիրեի — Րներուզ
Լիվա — Սելեֆկե, այլ անունով՝ Իչ—Իլ
Լիվա — Հարսոյ
Դեֆթերդարություն — Կիպրոսի ելևմտականի
Քեթխուդայություն — Կիպրոսի դեֆթերի
Դեֆթերդարություն — Կիպրոսի թիմարների։

## Ռակայի [Ուրֆա] էյալեթ

Լիվա — Հաթուր
Լիվա — Համասիյե
Լիվա — Բենի Ռաբիե
Լիվա — Սերուհեչիք
Քեթխուդայություն — Ռուհայի դեֆթերի
Դեֆթերդարություն — Ռուհայի թիմարների։

## Դիարբեքիրի էյալեթ

Հյուքյումեթ[14] — Ջետր օջաքլըք[15]
Հյուքյումեթ — Հետր օջաքլըք
Հյուքյումեթ — Էքուր օջաքլըք
Հյուքյումեթ — Բերհել օջաքլըք
Հյուքյումեթ — Բալու օջաքլրք
Հյուքյումեթ — Գենչե օջաքլըք
Լիվա — Ջերնեք օջաքլրք
Լիվա — Հիսնի Քեֆ
Լիվա — Բերմեք
Լիվա — Մարկերտ օջաքլըք
Լիվա — Չեմեշկեզեք [Չմշկածագ]
Լիվա — Խարփութ [Խարբերդ]
Լիվա — Սիվիրեք
Լիվա — Կալեբ օջաքլըք
Լիվա — Էրակ օջաքլըք
Լիվա — Արղնի
Լիվա — Մեհրանի օջաքլըք
Լիվա — Չաբաքչուր
Լիվա — Սղերտ

Լիվա — Քորքիշ օջաքլըք
Լիվա — Ահաքես օջաքլըք
Լիվա — Մեֆարկին օջաքլըք
Լիվա — Բեսթան
Լիվա — Սուման
Լիվա — Նիսիբին
Լիվա — Ակչա Կալա
Լիվա — Սանջար
Լիվա — Քուրդքան օջաքլըք
Դեֆթերդարություն — Դիարբեքիրի Ջեզրեի
Դեֆթերդարություն — Դիարբեքիրի թիմարների
Քեթխուդայություն — Դիարբեքիրի դեֆթերի։

## Էրզրումի էյալեթ

Լիվա — Կարահիսարի Շարքի
Լիվա — Փասեն (Բասեն)
Լիվա — Խնուս
Լիվա — Մելադեք [Մալազկերտ]
Լիվա — Թորթում
Լիվա — Մջնկերտ, օջաքլըք
Լիվա — Կուրջան [Կոզիջան], օջաքլըք
Լիվա — Իսպիր
Լիվա — Բայբուրդ (Բաբերտ)
Լիվա — Քղի
Լիվա — Բայազիտի բերդ
Լիվա — Մամրվան
Լիվա — Ալաշկերտ
Լիվա — Թեքման
Լիվա — Քեոյ
Դեֆթերդարություն — Էրզրումի ելեմտականի
Քեթխուդայություն — Էրզրումի դեֆթերի
Դեֆթերդարություն — Էրզրումի թիմարների։

## Չըլդըրի էյալեթ

Լիվա — Արդահանի Բյուզուրք [Մեծ Արդահան]
Լիվա — Էրլի [Օլթի]
Լիվա — Բերմեքդեք [Բերթքերք]

Լիվա — Էրլուհ
Լիվա — Ճուշատ, օջաքլըք
Լիվա — Նըսֆի — Լիվանի, օջաքլըք
Լիվա — Մամեհջել [Մահջել], օջաքլըք
Լիվա — Լիք
Լիվա — Աջարեի Ուլյա [Վերին Աջարա], օջաքլըք
Լիվա — Աջարեի Սուֆլա [Ստորին Աջարա] օջաքլըք
Լիվա — Էմիրհոյ
Լիվա — Էսթիշե
Լիվա — Բոսջոք [Փոսխով]
Լիվա — Խերթվիս
Լիվա — Ալթուն Կալա՝ Օսթհետի հետ միասին
Լիվա — Մեհրեք
Էյալեթ — Ահմեդ խան, օջաքլըք
Քեթխուդայություն — Չըլդըրի դեֆթերի
Դեֆթերդարություն — Չըլդըրի թիմարների։

Կարսի էյալեթ

Լիվա — Զարշատ
Լիվա — Կեչվան, օջաքլըք
Լիվա — Արդահանի Քյուչուք, օջաքլըք
Լիվա — Կաղզման
Լիվա — Քոլե
Քեթխուդայություն — Կարսի դեֆթերի
Դեֆթերդարություն — Կարսի թիմարների։

Բաթումի էյալեթ, այլ անունով՝ Տրապիզոն.

Լիվա — Քունիյե
Քեթխուդայություն — Բաթումի դեֆթերի
Դեֆթերդարություն — Բաթումի թիմարների։

Վանի էյալեթ

Հյուքյումեթ — Բիթլիս, օջաքլըք
Հյուքյումեթ — Հարան, օջաքլըք
Հյուքյումեթ — Հեքքարի, օջաքլըք
Հյուքյումեթ — Մահմուդի

Լիվա — Քերքեր [Կարկար]
Լիվա — Վերֆայի, օջաքլըք
Լիվա — Սերվի
Լիվա — Մոկս, օջաքլըք
Լիվա — Շենավ, օջաքլըք
Լիվա — Էլբաֆ
Լիվա — Կուրկուր, օջքալըք
Լիվա — Էսնաներտ [Սպարկերտ]
Լիվա — Էրջիշ [Արճեշ]
Լիվա — Քեսան
Լիվա — Բարկիրի [Բերկրի], օջաքլըք

Քեթխուդայություն — Վանի դեֆթերի

Դեֆթերդարություն — Վանի թիմարների։

## Բաղդադի Էյալեթ (Դար-ըլ-իսլամ)

Հյուքյումեթ — Ամադիե
Լիվա — Խելե
Լիվա — Ջեվազեր
Լիվա — Կաբայիլի-ուրբանի-բերիյե[10]
Լիվա — Դերթենք
Լիվա — Կասրի Շիրին
Լիվա — Զախո
Լիվա — Մեհվան
Լիվա — Սեքերմեթ
Լիվա — Մաջվան
Լիվա — Զենդ Արադ
Լիվա — Ջեսան
Լիվա — Աթր, օջաքլըք
Լիվա — Հարիր Դումեք
Լիվա — Էրհե
Լիվա — Կըզըլ Ռաբաթ
Լիվա — Ալթուն Քիփրի
Լիվա — Հարիր, այլ անունով Շեհրանի, հյուքյումեթ-օջաքլըք

Դեֆթերդարություն — Բաղդադի եկամտականի

Քեթխուդայություն — Բաղդադի դեֆթերի

Դեֆթերդարություն — Բաղդադի թիմարների

## Շեհր-Զորի էյալեթ

Լիվա — Հորի
Լիվա — Կըզըլչա Կալա
Լիվա — Սեհրան
Լիվա — Դենքենի, օջաքլըք
Լիվա — Կարա Դաղ
Լիվա — Քյոյ
Լիվա — Շեմամեք
Լիվա — Դուլկըրան
Քեթխուդայություն — Շեհրի Զորի դեֆթերի
Դեֆթերդարություն — Շեհրի Զորի թիմարների։

## Մուսուլի էյալեթ

Լիվա — Էսքի Մուսուլ
Լիվա — Քեշան
Լիվա — Խարուն
Դեֆթերդարություն — Մուսուլի ելևմտականի

## Բասրայի էյալեթ

Լիվա — Ռումլե ենթակա Ջեզարիի Հիդիթի
Լիվա — Հաֆար

## Լահսայի էյալեթ

Լիվա— Կաթիֆ
Լիվա — Սանաա
Լիվա — Հաշե

## Հաբեշի էյալեթ

Էյալեթ — Ջեզայիրի Արաբ
Էմիր Հաջլեք — Ջեզայիրի Արաբ
Էյալեթի Թունուս, Կափուդանլըք Բենի Դերտ
Վոյվոդալըք[17] — Բուղտան
Վոյվոդալըք — Էֆլաք։

(Հատ. II, էջ 298—300)

## ՍՏԱՄԲՈՒԼԻ ԹԱՂԱՄԱՍԵՐԻ ՔՆՆՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ ՏՐՎԱԾ ԲԱՐՁՐ ՀՐԱՄԱՆԸ[18]

*Ֆերիդուն Բեյը իր աշխատության երկրորդ հատորում այս վերնագրով տալիս է մի սուլթանական հրաման։*

*Հրամանի մեջ նշվում է, որ Ստամբուլը երկար ժամանակից ի վեր քննության չի ենթարկվել։ Փադիշահը լսում է, որ քաղաքի տարբեր մասերում նկատվում է բարքերի ապականություն։ Շարիաթին հակառակ ամեն տեսակի գործեր արգելելու և վերացնելու համար փադիշահական ֆերման է տրվում, որ յուրաքանչյուր թաղամասի իմամը, մյուեզինը և թաղամասի բնակչության ներկայացուցիչը քննեն ու պարզեն, թե ո՞վքեր են քաղաքի կարգ ու կանոնը խանգարողները, ապօրինի աշխատանքով և վաստակով զբաղվողները, գավառներից եկածները (բեքար) և այլն։ Այդպիսի տարրերին հրամայվում է խիստ քննության ենթարկել, ցուցակագրել, կալանավորել, մասնավորապես, անկարգության և խռովության պատճառ հանդիսացողներին։ Ֆերմանում ասված է.*

*«...Որոշ դերձակների, նպարավաճառների և այլ արհեստավորների խանութներից և սենյակներից (օդա) յուրաքանչյուրում ապրում է հինգ, նույնիսկ տասը և ավելի մարդ։ Այդպիսիներից ում անհրաժեշտ է, հարկավոր է երաշխավորության տակ առնել, արձանագրել ռայա դասին պատկանողներից այն մարդկանց, որոնք իրենց վարն ու ցանքը թողած՝ շրջակայքից և տարբեր վայրերից եկել են [Ստամբուլ]. այդպիսիներին քննության ենթարկել և պարզել, թե ովքե՞ր են եկել, ե՞րբ են եկել, այստեղ ի՞նչ աշխատանքով են զբաղվում. այդպիսիներին հարկավոր է խիստ նախազգուշացնել, որ սրանից հետո այլևս չմնան քաղաքում, վերադառնան իրենց հայրենիքը և զբաղվեն իրենց աշխատանքով ու վաստակով։ Նախազգուշացումից հետո իրենց տեղերը չվերադարձողներին հականե-հանվանէ պետք է ցուցակագրել և ինձ ներկայացնել։ Այդպիսիներին պատժելու համար ինչպիսի հրաման որ տամ, դրա համաձայն պետք է վարվեք։ Քաղաքը [Ստամբուլը] պետք է ապականությունից և անառակությունից սրբել ու մաքրել ամբողջապես և լիովին։ Պետք է պարզել, թե [քաղաքում] ովքե՞ր են բնիկները և ովքե՞ր նորեկները։ Իրենց հայրենիքը թողած և եկած օտարներին պետք է ետ ուղարկել իրենց տեղերը, իսկ վաղուց եկածներին երաշխավորության տակ առնել, որպեսզի սրանից հետո շարիաթին հակառակ և իմ Բարձր հրամաններին հակառակ չվարվեն»։*

*(հատ. II, էջ 131—132)*

# ԿՈՉԻ ԲԵՅ

Կոչի բեյի մասին շատ քիչ տեղեկություններ են հասել մեզ։ Նրա գրքի հրատարակիչ Ահմեդ Ռեֆիք էֆենդիի տված տեղեկություններից պարզվում է, որ Գյուրիջելի Կոչի Բեյը եղել է սուլթան Մուրադ IV-ի մոտիկ անձնավորություններից, որին ներկայացրել է իր «Ռիսալեն» («զեկուցագիր») 1041 (1631—1632) թվականին։

Կոչի բեյը լինելով փադիշահի անձնական ծառայողներից, դեռևս մանկությունից կապված է եղել արքունիքի հետ։

Սուլթան Մուրադ IV-ից հետո սուլթան Իբրահիմը, հետևելով իր նախորդին, հրամայել է Կոչի Բեյին իր համար էլ մի «Ռիսալե» գրել։ Կոչի Բեյը իր երկրորդ Ռիսալեն գրում է գրեթե նույն բովանդակությամբ։

Ահմեդ Ռէֆիք էֆենդիի վկայությամբ Կոչի Բեյը հավանաբար արդեն վախճանված է եղել, երբ Քյաթիբ Չելեբին դրել և վերջացրել է իր «Ֆեզլեքե»-ն։ Այդ պատճառով էլ «Ֆեզլեքե»-ում Կոչի Բեյի մահվան մասին հիշատակություն չկա։ Ահմեդ Ռեֆիքի կարծիքով, Քյաթիբ Չելեբին, հավանաբար չի էլ ճանաչել Կոչի Բեյին, քանի որ վերջինս գրական ասպարեզում հայտնի անձնավորություն չի եղել և նրա «Ռիսալե»-ները պետական գաղտնի փաստաթղթեր լինելով, մատչելի չեն եղել բոլորի համար։

Կոչի Բեյը «Ռիսալե»-ներում իր մասին կենսագրական տեղեկություններ գրեթե չի հաղորդել։ Եղած հիշատակություններից պարզվում է, որ նա Ստամբուլ է եկել Ռումելիից Ալբանական Գորիցա (թուրքերեն՝ Կորչա) քաղաքից, որը գտնվում է Օխրիդա լճի եզերքին։ Կոչի Բեյը կոչվել է նաև Գյումյուլջինելի (Գյումյուլջինացի)՝ Գյումյուլջինա քաղաքից լինելու համար։

Ռուս հայտնի արևելագետ Վ. Դ. Սմիրնովը, որը հատուկ ուսումնասիրության առարկա է դարձրել Կոչի Բեյի «Ռիսալե»-ն*, իր հետազոտական աշխատանքի ժամանակ ձեռքի տակ է ունեցել Կոչի Բեյի «Ռիսալե»-ի հինգ ձեռագիր օրինակ, որոնք եղել են Պետերբուրգի հանրային գրադարանում։

Կոչի Բեյի «Ռիսալեն» տպագրվել է մի քանի անգամ։ 1860 թվականին այն հրատարակել է Աթաբեյը՝ լիտոգրաֆիայով։ Ահմեդ Ռեֆիքը «Ռիսալեն» լույս է ընծայել 1862 թվականին, էրուզիան՝ 1887 թվականին։ Թարգմանվել է ֆրանսերեն, գերմաներեն և հունգարերեն։

---

* В. Д. Смирнов, Кучибей Гюмюрджинский и другие Османские писатели XVII века о причинах упадка Турции, С.-Петербург, 1873.

## «ՌԻՍԱԼԵ»-Ի ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆԸ

Կոչի Բեյի «Ռիսալե»-ում արծարծված հարցերը, հեղինակի տված տեղեկությունները և նրա դատողությունները վերաբերում են XVII դարի Թուրքիայի պետական-վարչական, սոցիալ-տնտեսական հարցերին, որոնք կարող են որոշակի պատկերացում տալ նաև հայ և հարևան ժողովուրդների կյանքի պայմանների մասին, մանավանդ, որ Կոչի Բեյը խիստ քննադատության է ենթարկել Օսմանյան Թուրքիայում ժողովրդական մասսաներին ճնշող և շահագործող տիրող շրջանների չարաշահությունները և բռնությունները, հարկերի և այլ պարտավորությունների գործում արմատացած ապօրինությունները, երկրում ստեղծված անապահովությունը, թալանն ու կողոպուտը, ենիչերիական բանակի և այլ զորամասերի սանձարձակությունները։

«Ռիսալեն» կազմված է զեկուցման ձևով։ Կոչի Բեյը քննության է առել այն բոլոր հարցերը, որոնք իր կարծիքով հանդիսանում են երբեմնի հզոր օսմանյան պետության քայքայման ու անկման պատճառները։

Չնայած Կոչի Բեյը չի կարողացել տալ կայսրության քայքայման իսկական պատճառները, այնուամենայնիվ, նրա հաղորդած տեղեկությունները իրենցից ներկայացնում են պատմական որոշակի արժեք։ Վ. Դ. Սմիրնովը Կոչի Բեյի «Ռիսալե»-ի մասին գրում է. «Նրանում, ինչպես մի ֆոկուսում, հավաքված են Թուրքիայի անկման պատճառները և նրա հզորության մասին այն մտքերը, որոնք ցրված են նրա ժամանակակիցների աշխատությունների մեջ... Նկատի ունենալով Կոչի Բեյի աշխատության անկասկած արժանիքները... ես որոշեցի նրան առաջին տեղը տալ Թուրքիայի պատմության և թուրքական ցեղի պետական-հասարակական կյանքի գրականության իմ ուսումնասիրության մեջ»*։ Կոչի Բեյի «Ռիսալեն», որպես XVII դարի պատմական աշխատություն, իր նշանակությունը պահպանել է մինչև մեր օրերը։

«Ռիսալե»-ի 17 գլուխներում Կոչի Բեյը մեծ հմտությամբ և պարզությամբ քննության է առել Թուրքիայի պետական, հասարակական, վարչական և տնտեսական կյանքի բոլոր բնագավառները, քննադատության ենթարկել երկիրը դեպի քայքայում և անկում տանող երևույթները։ Այդ բազմաթիվ հարցերը վերաբերում են սուլթանների, վեզիրների, պետական խորհրդի անդամների բնութագրությանը, մեծ և փոքր ագարակատերերի պետական ծառայությանը, նրանց կարգապահությանը, պետությունից ռոճիկ ստացողների թվի անընդհատ աճմանը, ենիչերիական օջախի քայքայմանը, աղքատ ռայաներից գանձվող հարկերի ավելացմանը, իսլամական երկրներում[2] առաջացած ապստամբություններին և այլն։

Ինչպես տեսնում ենք, XVII դարի պատմաբան-քննադատը ուշադրության է առել պետական կյանքի, ժողովրդի և «աղքատ-ռայաների» առօրյա կյանքի հետ կապված բազմաթիվ հարցեր, փորձել է երևան հանել չարիքի արմատը և ներկայացնել պետության ղեկավարների, գլխավորապես ռազմա-ֆեոդալական ռեժիմի գլուխ կանգնած սուլթանի ուշադրությանը։

Պարզ է, որ քննադատի բոլոր անկեղծ ջանքերն ապարդյուն են անցել։ Կոչի Բեյը իր պատմական արժեքավոր երկով՝ «Ռիսալե»-ով, Թուրքիայի պատմագրության մեջ գրավում է իր պատվավոր տեղը։

---

* В. Д. Смирнов, նշվ. աշխ., էջ 33—37։

## ՀԱՏՎԱԾՆԵՐ ԿՈՉԻ ԲԵՅԻ «ՌԻՍԱԼԵ»-ԻՑ

Կոչի Բեյը միջնադարյան մյուս թուրք պատմագիր-տարեգիրների նման պետությունը և երկիրը չի պատկերացնում առանց սուլթանի։ Այդ պատճառով էլ միջնադարյան քննադատը իր աշխատության մեջ առաջին հերթին խոսում է մի քանի սուլթանների և նրանց գործերի մասին։

Այսպես, Յավուզ սուլթան Սելիմի մասին գրում է.

«Հին Դիվանխանեում անձամբ Դիվան էր կազմում. փադիշահը գիտեր իր կուլերին[3], կուլերն էլ գիտեին իրենց փադիշահին... Մեծ վեզիրը անկախ էր և ոչ ոք չէր միջամտում սուլթանության գործերին... Թե՛ փադիշահները և թե՛ վեքիլներն ու մյուս մարդիկ չէին ձգտում շքեղության ու փառքի, հավատարիմ էին նվիրական շարիաթին, հարգում էին օսմանյան օրենքները, անհրաժեշտ չափով և խիստ զգուշանում էին ապօրինություններից»։

Սուլթան Սյուլեյման Կանունիի մասին.

«Այս սուլթանի ժամանակ աշխարհի կարգը խանգարվել էր, որովհետև փադիշահը ինքը չէր հարգում նախկին կարգերն ու կանոնները... Փադիշահը իրեն շրջապատում էր իր ծառաներով, որոնք կարճ ժամանակում հասնում էին ամենաբարձր, անգամ վեզիրության աստիճանի, յուրացնում բազմաթիվ պետական և հասարակական կալվածները և հողերը, հարստանում ու ապրում շռայլ և փարթամ կյանքով...»։

«Մեծ վեզիր Ռուսթեմ փաշան՝ իր գործունեությամբ, նվիրական շարիաթին հակառակ, կայսերական խասերը և մուկաթաաները, որոնք իսլամական բեյթ-ուլ-մալեր են, սկսեց իլթիզամի տալ։ Եվ որովհետև պատվավոր էմինները մերժեցին իլթիզամ վերցնել, այդ իլթիզամները անցան անարժան և անբարոյական հրեա էմինների ձեռքը, իսկ այդ հանգամանքը պատճառ դարձավ կայսերական խասերի և մուկաթաաների գյուղերի քայքայմանը... Շռայլությունն ու ղեխությունը հետզհետե այնպիսի աստիճանի հասան, որ պաշտոնյաների և «կուլ» դասի եկամուտը չէր բավականացնում նույնիսկ հացի փողի... Բռնության և թշնամության պատճառով, աշխարհը ավերվեց»...

### ՆԵԴԻՄՆԵՐԻ ԵՎ ՄՅՈՒԿԱՐՐԻԲՆԵՐԻ ՉԱՐԱԳՈՐԾՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

«Մինչև 982 (1574) թվականը բարձր վեզիրները միանգամայն ինքնուրույն էին գործում Մեծ վեզիրի նախագահության ներքո և ոչ ոք չէր կարող միջամտել նրանց գործերին։ Պաշտոններում նշա-

նակելու և ազատելու իրավունքը նրանց էր պատկանում և ոչ ոք չէր իմանում փադիշահի հետ նրանց ունեցած գործերի մասին...։ Վերոհիշյալ թվականներից սկսած ներիմներն ու այլ մոտիկ անձինք, փադիշահի մոտ դիրք և պատիվ ձեռք բերելով, սկսեցին միջամտել սուլթանության գործերին։ Նրանք մինչև անգամ մեծ վեզիրներին մի շարք առաջարկներ ներկայացրին...

Մեծ վեզիրները նրանց [ներիմների և մյուսահիբների] ցանկությունններին չընդառաջելու դեպքում, բոլորը միասիրտ և միաբերան, փադիշահին դիմելով բազմաթիվ զրպարտություններ էին ներկայացնում և փադիշահի բարկությունն ու զայրույթը գրգռելով, անմեղներից ոմանց սպանության, ոմանց աքսորի և ոմանց էլ ունեցվածքի ու հարստության հափշտակման և նրանց անարգանքի ենթարկվելու պատճառ էին լինում...»։

Հեղինակը իբրև օրինակ հիշում է Իրանի դեմ մղված պատերազմում սերդար նշանակված Ֆերհադ փաշային, որը Օսմանյան պետության մատուցած իր բազմաթիվ ծառայությունների համար փոխանակ փադիշահի շնորհներին և պատիվներին արժանանալու, վերոհիշյալ ներիմների ու մոտիկ մարդկանց զրպարտությունների և թշնամության հետևանքով, մահվան էր դատապարտվել...

«Սրանից առաջ սուլթան Մուրադ III-ի և սուլթան Մուհամմեդ III-ի սուլթանության ժամանակ սիփահի զորամասերը անհնազանդություն ցույց տալով և պետության վեքիլների դեմ բռնություն գործ դնելով, Ռումելիի բեյլերբեյի Կարա Մուհամմեդ փաշային, «Բաբ-ուս-սեադեի[5] աղա Ղազենֆեր Աղային չենք ուզում» ասելով, սպանել տվին և բազմաթիվ պատվավոր մարդկանց վրա հարձակվեցին, ռայաների և բերայաների[6] նկատմամբ բռնություններ կատարեցին։ Ոչ ոք չկարողացավ սրանց գործունեությունը կանխել։ Միայն հանգուցյալ Եմիշլի Հասան փաշան, իր խելամտությամբ, ենիչերիների օջախը իր կողմը գրավելով, անսպասելի կերպով փակեց Ստամբուլի դռները. վերոհիշյալ խմբի [սիփահիների] ավազակապետներին և չարագործներին միանգամից սրի քաշեց և նրանց հետ իր հաշիվը մաքրեց։ Սակայն անմեղ և անպարտ [Հասան փաշային] փադիշահի առաջ թշնամական ապրստամբությամբ սպանել տվեցին։ Որոշ մարդկանց միջոցով զրպարտություններ ներկայացնելով Դերվիշ Մահմուդ փաշայի և սեսուհ փաշայի նման վեհանձն, հերոս և հավատարիմ բազմաթիվ վեզիրների մասին ևս, Բարձր սուլթանության նկատմամբ, Աստված մի արասցե՛, դավադրություն կազմակերպելու մեջ ամբաստանեցին և նրանց փադիշահի զայրույթին արժանացրին։ Նրանցից հետո եկած վեզիրները ստիպված էին ենթարկվել «ներքին մարդկանց»[7] [ար-

քունիքի մարդկանց] և ծառայել նրանց ցանկություններին. ինչ որ նրանք ցանկանում էին, այն էլ կատարում էին։ Ներքին մարդիկ սկսեցին միջամտել նաև մի շարք այլ գործերի։ Այսպես, հարյուրավոր տարիներ առաջվա նվիրական պատերազմների [ղազավաթ][8] հետևանքով նվաճված գյուղերն ու մշակելի հողերը տարբեր ճանապարհներով, մի մասը իբրև բաշմաքլըք[9], մի մասը իբրև արփալըք, մի մասն էլ իբրև մյուլք յուրացրին։ Իրենց բավարարելուց հետո, իրենց ենթակա մարդկանց բաժինը տվին որպես թիմար և զեամեթ, կտրեցին սրի մարդկանց դիրլիքները։ Նրանք մուսուլմանների բեյթուլ-մալերը քայքայելով, աշխարհը այսպիսի վիճակի հասցրին։ Դրանով էլ նրանք չբավականացան։ Կաշառակերության դուռը բաց անելով, սկսեցին միջամտել սանջակների բեյլերբեյիների և փադիշահի մյուս ծառայողների գործերին։ Կաշառակերության մոլուցքով տարված, մի շարք անկարող և անարժան մարդկանց բեյլերբեյիություն պարտագրելով, դրան արժանի բազմաթիվ գործունյա և վաստակ ունեցող մարդկանց, իրենց կորովով և քաջությամբ հայտնի կուլերին, անարգանքի ու անուշադրության դատապարտեցին և աղքատության դուռը հասցրին։ Թիմարի և զեամեթի տերերը լրիվ կերպով ոչնչացվեցին։ Նվաճումներն ու գրավումները դադարեցին։ Աշխարհի երեսից կարգն ու կանոնը վերացվեց... Աշխարհը լցվեց ուլուֆե [ռոճիկ] ստացող կուլերով, սիփահիների խումբը խորտակվեց, նրանցից անվանիները ենթարկվեցին վեքիլներին և դրանց միջոցով երևան եկան ամեն տեսակի անկարգություններ ու խռովություններ, «փադիշահական հարեմը մտան թուրք և յուրուք[10], չինգանե (գնչու), հրեա, անկրոն և անհավատ բազմաթիվ սրիկա և հարբեցող քաղաքի օղլաններ»։

### ԵՆԻՉԵՐԻԱԿԱՆ ԿԱՐԳԱՊԱՀՈՒԹՅԱՆ ԽԱԽՏՈՒՄԸ

Ենիչերիական օջախում օտարների մուտքը սկսվում է 909 (1503) թվականից։ Դրա պատճառը հետևյալն էր. հիշյալ թվականին տեղի ունեցավ Նորին վսեմություն սուլթան Մուհամմեդ III-ի հարսանեկան հանդեսը և շարունակվեց գիշեր-ցերեկ՝ մոտ երկու ամիս։ Շրջակայքից և ամեն կողմից անթիվ-անհամար մարդիկ հավաքվեցին ու այնպիսի խառնաշփոթություն առաջացավ, որ բազմաթիվ մարդիկ ոտքի կոխան դարձան։ Բազմությունը ցրել անհնարին էր. կտավատի յուղով յուղված պարկեր բերեցին և դրանցով հարձակվեցին ժողովրդի վրա... երբ բազմությունը մի քիչ ցրվեց, փադիշահական հարսանիքը վերջացավ. փոխանակ [ենի-

չերիական] դասի հանդեպ հարգանք ցուցաբերելու, հավաքված բազմությունը միաբերան պահանջեց, որ իրենց էլ ընդունեն ենիչերիների շարքերը։ Փադիշահը ստիպված եղավ նրանց ցանկությունը ընդունել։ Այդ ժամանակ ենիչերիների աղա Ֆերհադ Աղային հրաման տրվեց այդ մասին։ Սա էլ խորհրդակցելով օջախի սպաների հետ, հետևյալ կարծիքը հայտնեց. «եթե այդպես լինի, ապա օտար տարրերը մուտք կգործեն մեր օջախը. օջախում գոյություն ունեցող կարգն ու կանոնը և օսմանյան պետությունը դրանով վնաս կկրեն»։ Այս խորհրդածությամբ նրանք այդ հրամանը չընդունեցին...։

Փադիշահը պնդում է իր հրամանի վրա և ենիչերիների աղան հեռացվում է պաշտոնից։ Նրան փոխարինող Յուսուֆ Աղան այդ օտար տարրերին՝ «աղա չրաղի» անունով, ենիչերիական օջախն է ընդունում և դրանով ստեղծում մի նոր ապօրինություն ևս։ Հետագայում, 1030 (1620) թվականին, ստեղծվում է «բեչայիշ» [փոխարինում] անունով մի ապօրինություն ևս. այդ միջոցներով ենիչերիների շարքերն են ընդունվում օտար տարրեր։ «Օջախը իր մաքրությունն ու փայլը կորցրեց, գոյություն ունեցող օրենքը խախտվեց և առաջ եկան խառնակություններ... 10 հազարից ավելի «օթուրաքներ» [թոշակի անցածներ] երևան եկան և այսպիսով ոչնչացվեց մուսուլմանների բեյթ-ուլ-մալը...»։

Այնուհետև Կոչի Բեյը հիշատակում է բազմաթիվ «նորամուծություններ», որոնց հետևանքով աշխարհում տարածվում են չարությունը, խռովությունն ու դավադրությունը, խանգարվում է աշխարհի կարգն ու կանոնը։

«Եթե այս եղանակով հավաքված զինվորներով կարելի լիներ կրոնին և պետությանը վայել գործեր տեսնել, մեր նախկին սուլթանները... զեամեթները և թիմարները միայն սիփահիներին չէին շնորհի և կուլերի դասին տարեկան այդպիսի գանձեր [դրամ] չէին տա։ Միայն փադիշահական արշավի ժամանակ տարբեր ցեղերից մեկ-երկու հազար զինվորներ չէին հավաքի և ըստ իրենց ծառայությունների՝ դերձակը դերձակությամբ, նպարավաճառը նպարավաճառությամբ, անուշահոտություններ վաճառողը իր գործով, ամենքը չէին զբաղվի իրենց արհեստներով...»։

## XI ԴԱՐԻ [ՀԻՋՐԵԹԻ] ԱՂՔԱՏ ՌԱՅԱՆԵՐԸ

*Ուշադրության է արժանի նաև Կոչի Բեյի գրքի այս հատվածը, որի մեջ նա տալիս է ժողովրդական մասսաների կյանքի իրական պատկերը։*

*Մինչև 990 (1582) թվականը աղքատ ռայաների ամեն մեկ շնչից գանձվում էր 40—50 ակչե՝ ջիզիե և 40 ակչե՝ տան ավարիզ։ Երկու ոչխարից մեկ ակչե՝ ոչխարի հարկ։ Սակայն մյուրաշիրն ու տուրքահավաքները ջիզիեից և տան ավարիզից երկուական, երեքական և մինչև հինգական ակչե փող էին առնում որպես «ղուլամիյե»[11], և ոչ ոք չէր համարձակվում միջամտել։ Փադիշահական խասերի գրանցումը երկու հազար չորս հարյուր քառասուն մեկ ակչե էր։ Ներկայումս կուլ դասի թիվը ավելացել է. երբ կուլերի թիվը ավելանում է, ծախքերն էլ կավելանան, իսկ երբ ծախքերն ավելանում են, ռայաների ճնշումն էլ է ավելանում և աշխարհը ավերվում է։*

*Սկզբում տան ավարիզից առնվում էր 40—50 ակչե, ներկայումս ջիզիեից միայն պետության համար նշանակվել է շնչից 240 ակչե, ամեն մեկ տան ավարիզից՝ 300 ակչե, ամեն մեկ գլուխ ոչխարի համար՝ մեկ ակչե։ Սիփահիների վեց վաշտի զինվորները, մի քանի տարուց ի վեր փադիշահական եկամուտների գանձումը յուրացնելով, սուլթանության վեքիլներից բռնի կերպով վերցրել են բոլոր դեֆթերները։ Սուլթան Մուհամմեդի ջամիի բակում ժողովրդի ներկայությամբ աճուրդի են դնում և մեկ, թերևս մեկ ու կես «ղուլամիեյով» վաճառում, իսկ գնողները մեկ ղուրուշով չբավականանալով, իսլամական երկրում սկսել են յոթ-ութ հարյուր ակչե ջիզիե առնել, իսկ վիլայեթներում մեկ ոչխարի դիմաց 30—40 ակչե են առնում։ Ռայաները ինչպե՞ս կարող են տանել այս բռնությունները։ Երկրի ժողովուրդը ինչպե՞ս կարող է ապրել այսպիսի պայմաններում։ Փադիշահական խասերի դրությունն էլ է վատացել։ Չորս հարյուր ութսուն բեռ ակչե արձանագրված Վրաստանի, Գենջեի, Երևանի և Բաղդադի երկրներում փադիշահական խասերի գյուղերը ձեռքից դուրս են եկել և անցել թշնամու ձեռքը։ Սրանց մի մասը, շարիաթին հակառակ, սեփականացվել է և վերածվել մյուլքի, վակֆի և բաշմաքլըքի, մի մասն ավերվել է և քայքայվել, մի մասն էլ վեզիրների խասերի վերածվել։ Ներկայումս գոյություն ունեցող փադիշահական խասերի գյուղերից հազիվ հարյուր բեռ ակչե եկամուտ է մտնում պետության գանձարանը, իսկ մնացած [գումարից] անուն և հետք անգամ չի մնացել։*

*Վերջապես աղքատ ռայաների նկատմամբ ներկայումս կիրառվող այդ ճնշումներն ու բռնությունները տեղի չեն ունեցել ո՛չ մի ժամանակ, ո՛չ մի տեղ և ո՛չ էլ փադիշահի որևէ երկրում։*

*Իսլամական երկրներից որևէ մեկում որևէ անձի նկատմամբ եթե մի հյուլեի չափ բռնություն գործադրվի, վերջին դատաստանի*

*օրը այդ երկրի իշխողն է պատասխան տալու. վեքիլներից չեն պահանջելու և իշխողը աշխարհի արարիչ Աստծուն չի կարող պատասխանել և ասել, որ ինքը վեքիլներին է հանձնարարել։ Ա՜խ, ուժեղ բռնությունը գերդաստաններ կոչնչացնի և վշտաբեկ մարդկանց արտասուքը դժբախտության մեջ կխեղդի աշխարհը։*

*Աշխարհը անհավատություն կարող է հանդուրժել, սակայն բռնություն չի հանդուրժի։ Արդարությունն է երկարակեցության պատճառը։ Երկրի կարգն ու կանոնը փադիշահի աղքատների համար արքայություն է ստեղծում։ Այս ասածներս իմ խոսքերը չեն, ուլեմաների և շեյխերի խոսքերն են։ Եթե հավատ չընծայվի, նրանցից պետք է հարցնել։*

## XI ԴԱՐԻ [ՀԻՋՐԵԹԻ] ԱՌԱՋԻՆ ԿԵՍԻՆ

*Սկսած 990 (1582) թվականից փադիշահական պաշտոնները անարժաններին կաշառքով էին տրվում, իսկ պատերազմի և կռվի իրավունք ունեցող զեամեթների և թիմարների տերերը խրամատներ մտնելով [պատերազմների գնալով] քայքայվում էին...*

*Սրանից առաջ Անատոլիայի վիլայեթներում «ջելալի» ավազակներ երևան գալով կողոպտեցին և թալանեցին Անատոլիայի, Կարամանի, Սվաղի, Մարաշի, Հալեպի, Դամասկոսի (Շամ), Ուրֆայի, Դիարբեքիրի, Էրզրումի, Վանի և Մուսուլի էյալեթների գյուղերն ու գյուղաքաղաքները, որով բազմաթիվ երկրներ քանդվեցին ու ավերվեցին։ Նույնիսկ օսմանյան պետության հնագույն մայրաքաղաք Բրուսան թալանվեց, կրակի մատնվեցին ու այրվեցին բազմաթիվ քաղաքներ և վայրեր։ Վրանաբնակները և թուրքմեն ցեղերը հպատակությունից դուրս գալով, աղքատ ռայաների նկատմամբ ծայր աստիճանի բռնություններ գործադրեցին, որի պատճառով բազմաթիվ գյուղեր ավերվեցին։*

*Սև ծովի կողմից էլ կազակներ են գալիս և կողոպտում ու թալանում են ծովեզերքում գտնվող գյուղերն ու գյուղաքաղաքները, բնակիչներին գերի են տանում, որովհետև նրանց դիմադրություն ցույց տվող չկա։ Կազակները մոտենալով Ռումելի Հիսարին[12], այրել են Ենի Քյոյն ու մի շարք այգիներ, կողոպտել ու թալանել են մուսուլմանների ունեցվածքը։ Դրանց պատճառած վնասների ու չարիքների առաջն առնելու համար անհրաժեշտ եղավ Նեղուցում (Բոսֆորում) բերդեր կառուցել և պաշտպանել Ստամբուլի շրջակայքը։*

*Իրանի շահն էլ իր գրաված մի քանի էյալեթներից բացի, մեր*

ձեռքից խլեց Բաղդադի նման ամրակուռ բերդը և մեր իմամն ու կրոնի առաջնորդը հանդիսացող Նորին սրբություն մեծ իմամ Էբու-Հանիֆեի նվիրական և լուսավոր գերեզմանը գրավելով, անթիվ դավաճանություններ կատարեց։ Այսքան ժամանակ է [շահի] դեմ արշավանքներ են կազմակերպվում, անհաշիվ բեյթ-ուլ-մալեր են ոչնչացվում, սակայն բոլորովին ապարդյուն. նրանից [շահից] երկու գյուղ անգամ չեն կարողացել գրավել, իսկ այս դարի զինվորներով գրավելու հավանականություն անգամ չկա։ Միակ միջոցը այն է, որ փադիշահը ինքն անձամբ [պատերազմի] գնա և շնորքի արժանանա։

Եմենի երկիրն էլ ձեռքից դուրս է եկել և Իմամ համարվող մի անձի սեփականությունը դարձել. Մուանի-օղլին էլ հպատակություն ցույց տալու փոխարեն, ապստամբել է և բռնությամբ գրավել մեկ բեյլերբեյիության չափ երկիր։ Բասրայի և Լահասայի վալին էլ «Թավայիֆի-մյուլուքի»[13] ձևն է ստացել։ Սկսած 1005 (1596) թվականից իսլամական երկրից գրավվել է ընդամենը 19 էյալեթ։

Մնացած երկրներն էլ բռնությունների ներքո այրվում են, իսկ ռայաներն ու բերայաները քայքայվում...

Ինչպիսի՜ դժբախտություն է այս։

Եվ վերջապես, Օսմանյան սուլթանության հզորությունն ու փառքը զինվորով է ապահովվում, իսկ զինվորի գոյությունն ապահովողն էլ դրամն է։ Դրամը ռայաներից կգանձվի։ Ռայաների ապահովությունը կարելի է իրագործել արդարությամբ և արդարադատությամբ։ Իսկ ներկայումս աշխարհը քայքայված է, ռայաները ցրված են, գանձարանը դատարկ է և կռվող մարդիկ մեր նկարագրած վիճակումն են։ Մեկ կողմից իսլամական երկիրը ձեռքից գնում է, բայց դարձյալ միջոցներ ձեռք չեն առնվում և դարման չեն հասցնում։ Սակայն ամեն տեսակի զեխությունները նորից անպակաս են։ Այս ի՞նչ անգիտակցություն է...

## ԿՈՉԻ ԲԵՅԻ ԵՐԿՐՈՐԴ «ՌԻՍԱԼԵՆ»

Կոչի Բեյը 1041 (1631—1632) թվականին սուլթան Մուրադ IV-ին ներկայացրած «Ռիսալե»-ից հետո, սուլթան Իբրահիմի հրամանով նրան ներկայացնում է իր երկրորդ «Ռիսալեն»[14]։

Իր երկրորդ «Ռիսալե»-ում Կոչի Բեյը սուլթան Իբրահիմին առաջարկում է հիմնական ուշադրությունը դարձնել պետական գանձարանի կարգավորման և ռազմական ուժերի (գլխավորապես ենիչերիական բանակի) վերակազմության գործերին։ Կոչի Բեյը իր այս «Ռիսալե»-ում հիմնականում կրկնում է իր տեսակետներն ու դատողությունները Օսմանյան կայսրության անկման և քայքայման պատճառների, «աղքատ ռայաների» տնտեսական վիճակի վատթարացման, գյուղատնտեսության դեգրադացիայի մասին և այլն։

Ինչպես իր առաջին զեկուցագրում, այստեղ ևս, փոքր և միջին ավատատեր-թիմարատերերի գաղափարախոս և նրանց ձգտումների արտահայտիչ Կոչի Բեյը հավատացած է, որ «բավական է միայն վերականգնել «սրի մարդկանց» առանձնաշնորհումները և ամեն ինչ կստանա իր նորմալ վիճակը... Բարձրյալն Աստծու կամքով պետության մեջ կարգ կհաստատվի, բարձրագույն իշխանությունը [փադիշահական իշխանությունը] կվերստանա իր նախկին փայլը, իսլամի սուրը կլինի անպարտելի և թշնամիները՝ հլու-հպատակ»*։

Երկրորդ «Ռիսալե»-ի 19 գլուխներում ընդգրկված են բազմատեսակ վարչական, ռազմական, տնտեսական, հողային, հարկային և այլ հարցեր։

Նրա քննության առած հարցերից առանձնապես պետք է նշել սուլթանական արքունիքի կազմակերպության, շնորհումների [պաշտոններ, աստիճաններ, տիտղոսներ և այլն], պատմությունը կարդալու և գործի հանգամանքներին ծանոթանալու, ենիչերիական բանակը վերակազմելու, սեփականությունների [հողային] բաժանման և խասերի քանակի, հարկերի, դատավարության, դրամների մասին և այլ հարցեր։

---

* А. С. Тверитинова, նշվ. աշխ., էջ 218։

# Հ Ա Վ Ե Լ Վ Ա Ծ

## ՖԵՐԻԴՈՒՆ ԲԵՅԻ «ՍՈՒԼԹԱՆՆԵՐԻ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ»-ԻՑ

### ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԳԱՆՁԱՐԱՆԻ[1] (ԽԱԶԻՆԵԻ ԱՄԻՐԵ) ԵԿԱՄՈՒՏՆԵՐԻ ԵՎ ԾԱԽՔԵՐԻ ՄԱՍԻՆ ԴԵՖԹԵՐԴԱՐ ԷՖԵՆԴԻԻ ԹԱՔՐԻՐԸ[2]

*Նվաստս հայտնում եմ, որ կայսերական գանձարանի լրիվ տարին մուկաթաաից[3], չիզիեից[4], ավելի չիզիեից, ավարիզից[5] իչեվանի (օթևանի) տուրքից[6] և տարբեր ստացվածքներից եկող եկամուտները կազմում են գանձարանի ելքն ու մուտքը, և որոնք հատկացված են կարիքների և ծախքերի՝ ընդամենը 14503 քիսե ակչե է։*

*— Հիշված ակչեից 7448 քիսեն ստացվում է մուկաթաաից և կայսերական խասերից.*

*— 297 քիսեն՝ չելեպների ոչխարի աղնամից[7].*

*— 50 քիսեն բեյթ-ուլ-մալից, բերաթների և հրովարտակների եկամտից.*

*— 1203 քիսեն՝ օթևանի և իչևանի տուրքերից.*

*— 150 քիսեն՝ զեամեթի և թիմարների տերերի՝ թիմարի համար վճարած ակչեներից.*

*— 47 քիսեն՝ կայսերական անշարժ կալվածների և հողերի ամրացման եկամտից[8]։*

*— 71 քիսեն՝ օգնության...*

*— 115 քիսեն՝ Բոգդանի բեյլերբեյիի, Բոսնիայի դեֆթերդարի և Հերսեգի բեյի կուլերի ռոճիկները վճարելու համար ապահոված ակչեից։*

*Լրիվ տարվա ընթացքում կատարված ծախքերը հետևյալներն են.*

*— Փոքր ռուզնամեչիի[9] գրասենյակում գրանցված և թվով 2301 մարդուց բաղկացած փադիշահական ասպանդակի աղաների, չավուշների և այլ նշանավոր անձերի լրիվ տարեկան ռոճիկները՝ 573 քիսե։*

*— 19843 մարդուց բաղկացած սիփահիների, սիլահդարների,*

աջ և ձախ ուլուֆեջիների, աջ և ձախ ղարիբների[10] լրիվ տարվա ռոճիկն է 3116 քիսե.

— 2465 մարդուց բաղկացած կափուջի կուլերի լրիվ տարվա ռոճիկը կազմում է 180 և կես քիսե.

— Աջեմի օղլանների[11], բոստանների օղլանների[12] և բալթաջի կուլերի[13], որոնք թվով 13826 մարդ են, լրիվ տարվա ռոճիկն է 442 և կես քիսե.

— 5128 մարդուց բաղկացած ջեբեջի կուլերի լրիվ տարվա ռոճիկը՝ 264 և կես քիսե.

— 1455 մարդուց բաղկացած թնդանոթաձիգ կուլերի լրիվ տարվա ռոճիկը՝ 111 և կես քիսե.

— 320 մարդուց բաղկացած թնդանոթի կառապանների լրիվ տարվա ռոճիկը՝ 27 և կես քիսե.

— Թվով 3217 թամբագործ կուլերի լրիվ տարվա ռոճիկը՝ 195 և կես քիսե.

— Կայսերական խոհանոցի 1321 ծառայողների լրիվ տարվա ռոճիկը՝ 73 քիսե.

— 735 արհեստավոր կուլերի լրիվ տարվա ռոճիկը՝ 40 քիսե.

— 221 խալաթի դերձակ կուլերի լրիվ տարվա ռոճիկը՝ 10 քիսե.

— 909 վրանի նվագողների լրիվ տարվա ռոճիկը՝ 55 քիսե.

— Դրոշակի 100 նվագողների լրիվ տարվա ռոճիկը՝ 12 և կես քիսե.

— Դիվանի 35 ջրկիրների լրիվ տարվա ռոճիկը՝ երեք քիսե.

— Միայն մի մարդ մնացած եվրոպացի խմբի տարեկան ռոճիկը՝ 10600 ակչե.

— Վարաթի բերդի 717 բերդապահների լրիվ տարվա ռոճիկը՝ 227 քիսե։

Ներկայումս գրանցված և ռոճիկ ստացող բոլոր կուլերին ընդամենը վճարվում է 9206 քիսե ռոճիկ։

— Ներկայումս արքունական նավաշինարանում (թերսանե) եղած 50 նավերի (կատարղա) բոլոր կարիքների և ակչեյով թիավարների վարձի և բեյլիք (պետական) գերիների հացի, կայսերական նավատորմի 13 կալիոնների[14] նավաստիների վարձի և այլ կարիքների համար կանխիկ դրամով վճարվում է 988 և կես քիսե.

— Օջաքլըքներից իբրև ավարիզ առնված թիավարներին վճարում է 621 և կես քիսե ակչե։ Այս ծախսերին ավելացնելիք նավաշինարանի սարքավորանքը կազմում է 1609 քիսե։ Սակայն վերոհիշյալ 621 քիսեն օջաքլըքի անվան է պատկանում և չի մտցված

եկամտի և ծախսերի մեջ, միայն նավաշինարանի ընդհանուր ծախսը իմանալու համար է, որ այստեղ այդ մասին բացատրություն տրվեց։

— Արքունական խոհանոցի կարիքների համար, բացի Եգիպտոսի իրսալիեյից[15] ամբողջ տարին ծախսվում է 965 և կես քիսե.

— Քաղաքապետության ծառայողների համար, թե՛ նրանց ռոճիկների և թե՛ հին պալատի, Իբրահիմ փաշայի պալատի և Ղալաթայի պալատի մսի և այլ կարիքների համար ամբողջ տարին ծախսվում է 724 և կես քիսե.

— Կայսերական ախոռի հատկացումների համար, բացի Արփա էմինի[16] և օջաքլըքների միջոցով կատարված ծախսերից, ծախսվում է 254 և կես քիսե.

— Ստամբուլի աղայի միջոցով, օջաքլըքներից բացի ամբողջ տարին ծախսվում է 114 և կես քիսե.

— Գավառական գանձարանի միջոցով խալաթի ատլասի և այլ իրերի համար ամբողջ տարին ծախսվում է 225 քիսե.

— Արքունի պալատի կանանոցի (էնդերուն) համար բազմատեսակ դիպակի, ասվիի և ատլասի ծախսերը ամբողջ տարին կազմում են 150 քիսե.

— Ենիչերիների համար ասվիի և աստառի արժեքը ամբողջ տարին՝ 436 և կես քիսե.

— Ենիչերիների համար մսի արժեքը ամբողջ տարին 210 և կես քիսե.

— Էդիրների և պալատի տղաների (ղուլամ) համար ամբողջ տարին 46 քիսե.

— Սեքբանների փոի համար անհրաժեշտ ալյուրի արժեքը ամբողջ տարին 25 քիսե.

— Ղրիմի խանի և Կալղայի[17] սալյանեի համար որոշ միրմիրանների և ծովային բեյերի սալյանեի համար ամբողջ տարին 400 քիսե.

— Նվիրական Հաջջի համար ամբողջ տարին 139 և կես քիսե.

— Արքայական սովորույթների, ներբողի, գովասանքի և սովորությունների, շնորհումների և ճանապարհածախսերի համար ամբողջ տարին 50 քիսե.

— Կարամանի էյալեթում վառոդ պատրաստելու համար ամբողջ տարին 10 քիսե.

— Թոշակի անցածների և աղոթքով զբաղվողների, ինչպես նաև որոշ բերդերի զինվորների համար ամբողջ տարում 1911 քիսե.

— Մի քանի մուկաթաա ստանալու, բրնձի մշակույթի և մու-

կաթսաների ծախսերի, մզկիթների, վակըֆների և մենզիլների ձիերի ծախքերի համար ամբողջ տարին 427 և կես քիսե.

— Պետական մսագործների աղնամի (ոչխարի) տուրքերը, որը հատկացված է արքունական խոհանոցի, հին պալատի, Իբրահիմ փաշայի պալատի, Ղալաթայի պալատի և ենիչերիների պետերի համար, ամբողջ տարին 188 քիսե։

Ներկայումս բոլոր ծախսերի գումարը հավասար է 16400 քիսե ակչեի, որը գերազանցում է եկամտի գումարից 2000 քիսեով։

Գրվել է 1064 (1653) թվականին։

(հատ. II, էջ 304—307)

## ԱՇԱՐԻ (ՏԱՍԱՆՈՐԴ) ԵՎ ԽԱՐԱՋԻ ՀՈՂԵՐԻ ՄԱՍԻՆ ՎԵՐՋՆԱԿԱՆ ՄԵԿՆԱԲԱՆՈՒԹՅՈՒՆ ՏՎՈՂ ՇԵՅԽ-ՈՒԼ-ԻՍԼԱՄ ԷԲՈՒՍՈՒՈՒԴ ԷՖԵՆԴԻԻ ՆՎԻՐԱԿԱՆ ՖԵԹՎԱՆԵՐԸ[18]

ՀԱՐՑ. Ի՞նչ է տասանորդային և խարաջային[19] հողը, շնորհ արե՛ք մանրամասնորեն բացատրել.

ՊԱՏԱՍԽԱՆ. Եթե իմամը մի երկիր նվաճելով նրա հողերը բաժանի հաղթողների միջև, այդ հողերի համար տրված պարտավորությունը, հարկավ տասանորդ է, որովհետև մուսուլմանների համար տրված պարտականությունը չի կարող լինել սոսկ պրուստի միջոց։ Եթե նվաճման ժամանակ [հողը] քյաֆիրների ձեռքում է եղել, տեղն ու տեղը տրված որոշումով, հողը պահպանվում է իբրև սեփականություն։ Այդ հողում նշանակվածը, հարկավ, խարաջ կլինի, չի կարող տասանորդ լինել, որովհետև տասանորդը բովանդակում է նաև բարեպաշտություն, իսկ քյաֆիրը արժանի չէ դրան։ Խարաջի մի մասը ըստ հողաբաժնի է, տարեկան որոշ չափով ակչե է առնվում, մի մասն էլ ըստ եկամտի ստացվածի (եկամտի) կամ տասանորդն է, կամ արժեքը, որը նշանակում է ըստ հողի բերրիության աստիճանի՝ մինչև կեսը։

Այս երկրի, այսինքն՝ Ռումելիի, հասարակության հողերը ո՛չ տասանորդային են և ո՛չ էլ խարաջային, այլ երկրին պատկանող հողեր են, որոնք իրենց տերերին չեն տրվում իբրև սեփականություն, այլ տրվում են ժամանակավոր օգտագործման կարգով։ Դրանց [հողերի] ըստ հողաբաժնի և ըստ եկամտի խարաջները տալիս են սիփահիներին, [հողը] մշակում են, բայց չեն կարող վաճառել կամ սեփականացնել. [մշակողը] եթե զավակ ունենա, սա ևս հոր նման հող կմշակի, բայց [հողը] չի անցնում ժառանգորդներին։ Տասանորդային հողերն ու խարաջային հողերը իրականու-

թյան մեջ իրենց տերերի սեփականությունն են, որոնք օգտվում են այդ հողերից, որպես իրենց կալվածքի։

...ՀԱՐՑ. Եթե մի երկրում տասանորդի փոխարեն յուրաքանչյուր չիֆթից հնուց ի վեր առնվել է որոշ քանակի հացահատիկ, այդ երկրում թիմարատեր սիփահիների այդ կարգի տասանորդի փոխարեն առած հացահատիկը արդյոք հալալ կլինի՞։

ՊԱՏԱՍԽԱՆ. Այն հողերը, որոնք երկիրը նվաճելիս բաժանվել են նվաճողների միջև և որոնցից առնվում է շարիաթական տասանորդ և կամ այն հողերը, որոնք իմամի որոշումով թողնվել են խուլամ ընդունողներին, այդպիսի հողերը չեն կազմում երկրի հողերի մեծ մասը։ Քյաֆիրների վրա խարաջ է նշանակվում ըստ շնչի և, բացի այդ, խարաջ է նշանակվում նաև իրենց ձեռքում ունեցած հողի համար։ Խարաջը նշանակվում է ըստ հողի բերրիության աստիճանի, տասից մեկ, ութից մեկ, ավելի կամ պակաս։ Եթե հիշված վայրերը տասանորդային հողեր են, տասանորդից ավելին առնելը հալալ չի լինում, իսկ եթե խարաջային հողեր են ու խարաջ է նշանակվում, և եթե այս հողերը կարող են [ավելին] դիմանալ, արտոնված է այդպիսի հողերից առնել ավելին։

(հատ. II, էջ 302—303)

## ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԵՐԿՐՈՒՄ ԵՂԱԾ ԹԻՄԱՐՆԵՐԻ ԴՐՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երկրում ընդհանուր առմամբ զեամեթը 20 հազար ակչե է, ամենապակասը՝ 20 հազար, եթե ավելի լինի [դրանից] 20 հազար ակչեն կըլըջ, իսկ մնացածը խիսս է համարվում։ Ռումելիում եղած թիմարների կըլըջը երկու տեսակ է, մեկը վեց հազար ակչե, մյուսը՝ երեք հազար։ Օրինակ՝ Ռումելիում եղած բեյլերբեյիները տալիս են մինչև 5999 ակչեով փոխանցված թիմարները և իրենց կնիքով կնքված բերաթները[20]. 6000 ակչե լինելու դեպքում բեյլերբեյիները բերաթ չեն տալիս, այլ տալիս են գրություն (թեզքերե)[21] և ուղարկում երջանիկ Ասիթանե (Ստամբուլ)։

Անատոլիայի, Ջեզայիրի և Կիպրոսի էյալեթներում կըլըջ թիմարը 5000 և 2000 ակչե է։ Մինչև 4999 ակչեի [թիմարները] բեյլերբեյիներն են բաժանում և բերաթները տալիս իրենց կնիքով, իսկ 5000 ակչե լինելու դեպքում, բերաթ չեն տալիս, ինչպես վերևում նշվեց, այլ տալիս են թեզքերե, որով և ստացվում է բերաթը [Ստամբուլից]։

Բասրայի, Դիարբեքիրի, Էրզրումի, Շամի [Դամասկոս], Հա-

լեպի, Բաղդատի և Շեհրի Զորի էյալեթներում կիրառվում է Ռումելիում գործող կարգը։

Կարամանի, Մարաշի և Ռումի [Սվազ] բեյլերբեյիները իրենց բերաթներով տալիս են մինչև 2999 ակչեի թիմարներ, իսկ 3000 ակչե լինելու դեպքում, թեղերքեով ուղարկում են Ստամբուլ։ Եթե թիմար ստացողը չի հրաժարեցված և թիմար է ստացել նախնական կարգով, նրան բերաթի փոխարեն տալիս են թեղքերե, որովհետև օրենքով բերաթը սկզբում տրվում էր Ասիթանեից։

Օրենքի համաձայն սիփահիի որդիները ևս իրենց հոր սկզբնական բերաթները պետք է տանեն Ասիթանե և [բերաթը] այնտեղից ստանան։ Բեյլերբեյիների կողմից բերաթ եղած թիմարները տրվում են երջանիկ Ասիթանեից և սերդարների կողմից, հետո դեֆթերխաներից թեղքերե է տրվում և բերաթ լինում։ Սրա պատճառն այն է, որ մի քանի տարուց ի վեր արշավանքներ են տեղի ունենում դեպի Արևելք և Արևմուտք, բեյլերբեյիները իրենց տեղերում չեն լինում և շարժման մեջ են գտնվում։

Ինչպես բացատրվեց, բեյլերբեյիների կողմից բերաթ եղած թիմարներից բացի, երջանիկ Ասիթանեից ուլուֆե (ռոճիկ) ունեցող կամ թիմարի իրավունք ունեցող մարդկանց բերաթ է տրվում և հաստատվում հրամանով։ Երբեմն երջանիկ Ասիթանեում թեղքերե է գրվում և բերաթ լինում, երբեմն էլ բեյլերբեյիին է ուղարկվում նախապես տրված հրամանը, որից [բեյլերբեյիից] եկած թեզքերեով բերաթ է լինում Ստամբուլում։

Բեյլերբեյիների բերաթներով տրված թիմարները անունների մատյանում կոչվում են առանց թեզքերեի [թիմարներ]։

Իսկ իրենց [բեյլերբեյիների] բերաթներով չտրված, այլ թեզքերեով տրված և պետության մայրաքաղաք ուղարկված ու ներկայացված թիմարները կոչվում են թեզքերեով թիմարներ։ Վեսսելամ!»

(հատ. II, էջ 304)

## ՖԵՐՀԱԴ ՓԱՇԱՅԻՆ[22] ՇՆՈՐՀՎԱԾ ԳՅՈՒՂԵՐԻ ՀԱՄԱՐ ՏՐՎԱԾ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԿԱԼՎԱԾԱԳԻՐԸ

*Սույն կայսերական նիշանի հրամանը հետևյալն է...*

*Փադիշահական գրությունների ու հրովարտակների հատուկ երկար նախաբանից և Ֆերհադ փաշայի գործերն ու արժանիքները թվարկելուց հետո նշվում է, որ Ֆերհադ փաշան շատ գեղատեսիլ, հոյակապ և նվիրական մի մզկիթ է կառուցել Կասթեմունի քաղաքում։*

«...Կասթեմունի քաղաքում վեց հազար ակչեով գրանցված Սարկավան անունով գյուղի բերքերը, վերոհիշյալ մզկիթում ծա-

ռայոդների ծախսերին հատկացնելու համար, Ֆերհադ փաշան դիմում ներկայացնելով խնդրել է, որ բարեգթորեն այդ գյուղը իրեն տրվի՝ սեփականության իրավունքով։ «Իմ բարձր գթության և փադիշահական բարերարության համաձայն... հիշյալը իր բոլոր շարիաթական իրավունքներով և սովորութային հարկերով իբրև սեփականություն շնորհեցի վերոհիշյալին [Ֆերհադ փաշային] և, տալով այս բարեբաղդ կալվածագիրը, հրամայեցի, որ սրանից հետ վերոհիշյալ գյուղը իր որոշյալ սահմաններով և այդ սահմանների մեջ եղած խաս-չիֆլիքը, հողերն ու ցանքսերը, լեռները, գետերը, ծառերը իրենց հարակից ենթակա մասերով, պատրաստ եղածներով և փոխվածներով[23], հեյթ-ուլ-մալը, պատրաստի և բացակա հարստություններով, բադհավան, հանցանքի և ոճիրի, ոչխարի և հացահատիկների հարկերը և բոլոր շարիաթական ու հանրային իրավունքները, ինչպես նաև սովորութային հարկերը, առանձին մասերով կամ ընդհանուր կարգով, սերնդից-սերունդ նրա [Ֆերհադ փաշայի] անձնական սեփականությունն ու իրավունքն է... մինչև որ Աստված ինքը ժառանգի հողն ու նրա վրա գտնվողներին, ու նա է ժառանգների լավագույնը»։ Նա՝ Ֆերհադ փաշան, սեփականության բոլոր տեսակներով սեփականատեր է։ Եթե ցանկանա՝ կվաճառի, եթե ցանկանա՝ կնվիրի, եթե ուզենա՝ վակըֆի կտա։

Այդ մասին իմ զավակները և հետագա փառապանծ սերունդները, բարձր կարողության տեր վեզիրները, բարեպաշտ մենակյացները, բոլոր առաքինիներն ու բարեպաշտները, բոլոր ընտիր և հասարակ իրերի [ապրանք, հարստություն] սեփականատերերը, գործակալները, վերջապես ոչ մի անձ և ոչ մի արարած, հավիտյանս չպիտի միջամտեն և արգելք չպիտի լինեն այս որոշման գործադրմանը։ Եթե որևէ մեկը փոփոխի, խախտի կամ ջնջի [այս որոշումը]... թող Աստծու առաջ մշտապես հանցավոր և մեղավոր լինի։

(հատ. II, էջ 275—286)

## ՍԱԴՐԱԶԱՄ ՆԵՍՈՒՀ ՓԱՇԱՅԻՆ[24] ՇՆՈՐՀՎԱԾ ԳՅՈՒՂԵՐԻ ԵՎ ՀՈՂԵՐԻ ՀԱՄԱՐ ՏՐՎԱԾ ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ԿԱԼՎԱԾԱԳԻՐԸ

Սույն կայսերական նշանի հրամանը այս է որ... ...Խուդավենդիգյարի սանջակում[25], Ակհիսարի սանջակում հազար ակչեով գրանցված գյուղերը, և նույն սանջակի Կարահիսարնալլու նահիյեում հազար ակչեով գրանցված գյուղերը, նոր համառոտ և ըն-

դարձակ գեֆթերներում[26] արձանագրված բոլոր հացահատիկներից և բերքերից գանձվող շարիաթական ու սովորութային հարկերը[27], րեննաքի, մյուջերրեդի, բաղհավայի և հողի թափուի հարկերը[28], ինչպես նաև [այդ գյուղերի] սահմաններում գտնվող հողերը, արոտավայրերը և խոտհարքները, նաև դրանց կից եղած վայրերը, շենքերը և ավերակները, մարգագետիններն ու անմշակ վայրերը, «ինչ որ հիշված է կամ չի հիշված, ինչ որ գրված է կամ չի գըրված» [բոլորը] շնորհեցի [Նեսուհ փաշային] իբրև սեփականություն և [դրանց] կալվածագիրը տալով, հրամայեցի, որ վերոհիշյալ գյուղերի վրա, վերևում նշվածի համաձայն, [Նեսուհ փաշան] անձնական կալվածքի և սեփականության իրավունք ունի, կարող է տիրանալ իր ցանկացած ձևով, եթե ցանկանա՝ կծախի, եթե ուզենա՝ կարող է ուրիշին նվիրել, եթե նպատակ ունենա, կարող է վակըֆի տալ։ Այդ մասին իմ սուլթանական գերդաստանը, նրա ճյուղերն ու գլխավորները, իմ նվիրական խալիֆայության հետնորդներն ու հաջորդները, Դիվանի բարձրաշնորհ վեքիլները, այանները, էմիրները, կալվածների դեֆթերդարները և այլ անձինք, բարձրաստիճան ու հասարակ մարդիկ արգելք չլինեն, չխանգարեն և ոչ մի կերպ չմիջամտեն։ Եթե որևէ մեկը [այս հրամանը] փոփոխի, խախտի կամ ջնջի, թո՛ղ հանցավոր ճանաչվի բարձրյալն Աստծու առաջ։ Թո՛ղ այդպես գիտենան։ Այս կալվածագրի բովանդակությունն ու անունները հաստատվեցին իմ փառավոր նշանով փադիշահական թուղրայով։ Թո՛ղ վստահեն բարձր նիշանին[29]։

(հատ. II, էջ 283—285)

## ՇԱՆԻ ԶԱԴԵՆ ՖԻՆԱՆՍԱԿԱՆ-ԴՐԱՄԱԿԱՆ ԵՎ ԿԵՆՑԱՂԱՅԻՆ ՀԱՐՑԵՐԻ ՄԱՍԻՆ

*Շանի Զադեն իր տարեգրային դեպքերի շարքում բավականաչափ նյութեր է տալիս նաև XVIII դարի վերջի և XIX դարի սկզբի Թուրքիայի և նրա ժողովուրդների սոցիալ-տնտեսական դրության մասին։*

*Անհրաժեշտ է նշել, որ տարեգիրը այդ հարցերը շոշափում է ոչ թե երկրի սոցիալ-տնտեսական կյանքի իր կատարած ուսումնասիրությունների կամ դիտումների հիման վրա, այլ որպես արքունական-պետական տարեգիր, որի պարտականությունն էր «պատմության» տարեգրություններում նշել փադիշահական բոլոր հրամանագրերն ու կարգադրությունները, տալ նրանց պատճենը նույնությամբ։*

*Հատկանշական է, որ Շանի Զադեն, ի տարբերություն նույն ժամանակի պատմագիր-տարեգիր Ջեվդեթ փաշայի, կարծես թե ձեռնպահ է մնում իր կարծիքն ու տեսակետները հայտնելու ժողովրդի սոցիալ-տնտեսական կյանքին վերաբերող հարցերի մասին։ Մինչդեռ պատմագիր-տարեգիր Ջեվդեթ փաշան, գրեթե միշտ, վերլուծելով պետական-քաղաքական և տնտեսական-կենցաղային*

բազմատեսակ հարցերը, տալիս է իր սեփական կարծիքը, որը անշուշտ, միշտ չէ, որ ճիշտ է և ընդունելի։

Շանի Զադեից թարգմանաբար բերված են թվով 7 նյութեր, որոնք, ըստ բովանդակության, կարելի է բաժանել երկու մասի։

1. Ֆինանսական-դրամական և տնտեսական միջոցառումներ, որոնք պետության և ժողովրդի համար ունեին բացառիկ կարևոր նշանակություն։

2. Կենցաղային (բնակարան, հագուստ) միջոցառումներ, որոնք բնորոշ են երկու տեսակետից. ա) փադիշահական ֆերմանով որոշվում և հաստատվում է մուսուլմանների և ոչ-մուսուլմանների նկատմամբ Օսմանյան երկրում նույնիսկ բնակարան կառուցելու գործում կիրառված խտրականությունը և բ) օսմանյան կառավարության և մասնավորապես սուլթանական արքունիքի ֆանատիզմն ու խիստ պահպանողական վերաբերմունքը դեպի առաջադիմական քայլերը և նորաձևությունները հագուստի, արդուզարդի նկատմամբ։ Սուլթանը հատուկ ֆերմանով փորձել է արգելակել ժողովրդի լավ, գեղեցիկ և կոկիկ հագնվելու ձգտումը։

## ԴՐԱՄԻ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ

*Տարեգիր Շանի Զադեն 1224 (1809) թվականի դեպքերից հիշատակում է նաև այդ ժամանակի դրամական միավորների և շրջանառության մեջ եղած դրամների մասին՝ «Դրամի կարգավորումը» վերնագրով հատվածում։*

Արքունական փողերանոցում (զարբխանե) կտրված տարբեր տեսակի ոսկիների (ալթուն) գինը գնալով բարձրանում է, իսկ ներկայումս փողերանոցից [ոսկիները] բաց են թողնվում հին գներով և պետությունը վնաս է կրում։

Ներկայումս շրջանառության մեջ եղած բազմատեսակ ոսկիները ժողովրդի մեջ վաճառվում են բարձր գներով, իսկ դրամի արժեքի կարգավորումը պատճառ պետք է լինի, որ Աստծու ծառաները[1] [ժողովուրդը] վնասի չենթարկվեն։ Թե՛ պետությանը վնաս չպատճառելու և թե՛ Աստծու ծառաներին վնասից զերծ պահելու նպատակով, անհրաժեշտ համարվեց հատուկ որոշում ընդունել այս մասին։ Այդ պատճառով Շահնշահի [սուլթանի] հրովարտակով Շեյխ-ուլ-իսլամության դիվանում մի քանի անգամ գումարված խորհրդակցական մեջլիսում քննության առնվեց այս հարցը և միաձայն որոշվեց, որ տարբեր տեսակի ոսկիները գնվեն և վաճառվեն հետևյալ գներով.

Ներկայումս շրջանառության մեջ եղած, «յալդըզլի ոսկին» պետք է արժենա տասը ղուրուշ, «մաջար ոսկին»՝ իննը և կես ղուրուշ, «ֆընտըք ոսկին»՝ իննը ղուրուշ, սրա քառորդը արժե հարյուր փարա, Ստամբուլի «զերրի մահբուբեն»՝ վեց և կես ղուրուշ, իսկ նրա կեսը՝ երեք ղուրուշ, «եգիպտական մահբուբեն»՝ հինգ և կես ղուրուշ, իսկ կեսը՝ հարյուր տաս փարա։

Օրինական համարելով փողերանոցի գները շրջանառության գների հետ համաձայնեցնելու գործը, Շեյխ-ուլ-իսլամության կողմից այս առթիվ տրվեց նվիրական ֆեթվա, որպեսզի առևտուրը կատարվի հրամանով սահմանված գներով։

Ոսկու գների բարձրացման պատճառներից մեկն էլ այն է, որ որոշ ժլատ մարդիկ առևտրական կարգով ոսկիները ուղարկում են այլ քաղաքներ։ Ուստի հայտարարվեց, որ այդ նպատակով ուղարկված ոսկիները սրանից հետո մյուբաշիրների միջոցով պետք է բռնագրավվեն պետության օգտին։ Այս մասին հայտարարվեց կայսերական երկրում, որպեսզի բոլորը նկատի ունենան այդ որոշումը։

(հատ. I, էջ 242—243)

* * *

*Երեք տարի անց, 1227 (1812) թվականին տարեգիրը նորից է անդրադառնում դրամների շրջանառության հարցին և «Դրամի շրջանառության կարգավորումը» վերնագրով հատվածում խոսում է փողերանոցի կտրած արծաթ դրամի մասին։ Հատվածը թարգմանվում է կրճատումներով։*

## ԴՐԱՄԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ

Նախապես տեղի ունեցած խորհրդակցության ընդունած որոշման համաձայն[3] զիլհիջջե ամսի սկզբին արքունական փողերանոցում որոշ քանակով բարձրորակ արծաթից, շրջանառական գնով, սկսեցին կտրել հինգ ղուրուշ «ջիհադիե» անունով դրամներ։ Բացի այդ, «ֆընտըք քառորդ» անունով ոսկին, որը նախապես արժեր հարյուր փարա, գավառներում առնվում ու վաճառվում էր երեք ղուրուշով, այսինքն՝ հարյուր քսան փարայով...

Տարեգիրը նշում է նաև հետևյալ փաստը։ Առևտրականները հաշվի առնելով թուրքական դրամի բարձր գնողական ուժը, փոխանակ ապրանք տանելու Ռուսաստան, նախընտրում էին ոսկի և արծաթ դրամ տանել։ Այսպիսով վաճառականները շահում էին, սակայն այդ ոսկու արտահանումը Ռուսաստան, պակասեցնում էր Թուրքիայի փողի քանակը։ Այդ հանգամանքը հաշվի առնելով, դրամների արժեքը փոփոխության է ենթարկվում հետևյալ կերպ. «Ռյուբիյեն»՝ հարյուր տաս փարա, «յալդըզ ոսկին»՝ տասը ղուրուշ, «ֆընտըք ոսկին»՝ ինը ղուրուշ։ Արգելվում է առևտուրը եվրոպական դրամներով և ռայալով։ 90 օրվա ընթացքում այդ դրամները իջեցված գներով պետք է փոխանակվեին սուլթանական դրամներով։ Այդ կապակցությամբ խիստ միջոցներ են ձեռք առնվում։

Տարեգիրը այնուհետև շարունակում է. «Սակայն սարրաֆներն ու առևտրականները [եվրոպական] այդ դրամները, իբրև սպեկուլյատիվ դրամագլուխ անմիջապես թաքցրին. այնպես, որ դրանից վնասվեցին միայն իրենց ձեռքում մի քանի ռայալ և դինար ունեցող աղքատներն ու չքավորները, որոնք ստիպված էին այդ դրամները հատկացնել իրենց օրական ապրուստին։ Ինչ վերաբերում է կառավարական գանձարանին, ապա նա գրեթե օգուտ չունեցավ այդ միջոցառումից։»

(հատ. II, էջ 160)

## ՓՈՂԵՐԱՆՈՑԻ ԷՄԻՆԻՆ ՏՐՎԱԾ ԲԱՐՁՐ ՀՐԱՄԱՆԸ

1234 (1818) թվականի դեպքերից Շանի Զադեն նորից անդրադառնում է դրամի կարգավորման հարցին[3] և այդ կապակցությամբ մեջ է բերում փողերանոցի էմինին տրված փադիշահական հրամանը։ Հրամանը թարգմանվում է կրճատված։

«.. Վերջերս կեղծ (կալբ) դրամները շատացել և գրեթե իսկական որակի դրամին հավասար մտել են շրջանառության մեջ։ Շարիաթի կողմից անթույլատրելի համարված այդ կեղծ և աղարտված դրամների շրջանառությունը պատճառ է լինում ընդհանուր առևտրի խանգարման։ Կարգադրվում է Ստամբուլում և շրջակայքում, երեք քաղաքներում[4] և բովանդակ Օսմանյան կայսրության մեջ կեղծ և աղարտված դրամները (փարա, ղուրուշ և այլն) լրիվ կերպով դուրս հանել շրջանառությունից և խստորեն պատժել այդ կարգը խախտող սարրաֆներին, չարաշահողներին և դրանց նմաններին։»

(հատ. III, էջ 37)

## ԴՐԱՄՆԵՐԻ ՇՐՋԱՆԱՌՈՒԹՅԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՈՒՄԸ

1236 (1820) թվականի դեպքերից տարեգիրը կրկին անդրադառնում է շրջանառության մեջ եղած դրամների կարգավորման հարցին։

Նախ հանգամանորեն խոսում է առևտրի, կենցաղի մեջ դրամի ունեցած կարևորության մասին։ Այնուհետև նշում է.

Ժողովրդի տարբեր խավերում երևան եկած ճոխությունն ու շքեղությունը ավելացնում է հատկապես արտասահմանյան ապրանքների պահանջը։ Այդ պատճառով դրամը հոսում է այլ երկրներ և արծաթի գինը սովորականից ավելի է բարձրանում։ Կայսերական դրոշմով կտրված սպիտակ ակչեի արժեքը հետզհետե ավելանալու հետևանքով չարաշահողները այդ դրամը հավաքում են և թաքցնում։ Մյուս կողմից, կտրված հինգ ղուրուշանոցը և մյուս տե-

սակի դրամները ավելի մեծ չափով են պահանջվում գավառների և արտասահմանի վաճառականների կողմից։ Այս հանգամանքը դրամի պակասության պատճառ են դառնում...

Արծաթի գնի տարբերության պատճառով, ներկայումս հատը երեք դիրհեմ ծանրությամբ կտրված ղուրուշի մեջ տասը փարա, ֆրնտըք ոսկու քառորդի հազար հատի մեջ ավելի քան երկու հարյուր ղուրուշ տարբերություն է առաջացել, որը արքունական փողերանոցին մեծ վնաս է պատճառել...

Արծաթի չարաշահությունների հետևանքով պետությանը հասնող վնասի առաջն առնելու համար, որոշվեց դրամները կարգավորել հետևյալ կերպով. արծաթի հին որակը (այար) պահպանելու պայմանով կտրել երկու դիրհեմից՝ մեկ ղուրուշանոց, չորս դիրհեմից՝ երկու ղուրուշանոց և այդ հաշվով քառորդ դրամներ։ Ավելի մեծ քանակությամբ կտրել ռումի քառորդ, ֆրնտըքի քառորդը բարձրացնել երեք ղուրուշի, Ստամբուլի քառորդը՝ երկու և կես ղուրուշի։ Այս գների և սրանից առաջ ընդունված դրամների տեսակների գների խստիվ պահպանման մասին հատուկ փադիշահական բարձր հրովարտակ (խաթթ-ի հյումայուն) տրվեց...

Վերոհիշյալ կարգավորումից հետո էլ արքունական փողերանոցը որոշակի օգուտ չունեցավ, որովհետև չարաշահությամբ պարապողները և դրամի առևտրով զբաղվողները սկսեցին հին դրամները մի քիչ ավելի բարձր գնով հավաքել, թաքցնել և ավելի բարձր գնով ու դիրհեմով ծախել օտար վաճառականներին[5]։

(հատ. IV, էջ 51)

## ԿԱՅՍԵՐԱԿԱՆ ՀԱՆՔԵՐԻ (ՄԱԴԵՆ) ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐ

Հանքերի [հանքավայրեր ունեցող] կազաներում ապրող Օմերգանլու քուրդերը անհանգիստ վիճակում լինելով և մշտապես աղքատներին ու այլոց նկատմամբ բռնություններ կատարելով, անկարգության և խռովության պատճառ էին դառնում։ Երբ Նորին վսեմություն արդարադատ փադիշահը տեղեկացավ այդ մասին, ամբողջ Օսմանյան երկրի և հատկապես կայսերական հանքերի կազաների ժողովրդին և բնակիչներին ծանուցեց, որ Նորին վսեմության բարեխնամության շնորհիվ բոլորը պարտավոր են մըշտապես հանգիստ ու խաղաղ ապրել, և վերոհիշյալ վատաբարո քուրդերի նման անկարգություններ կատարելու համար համարձակությունը բոլորովին հակառակ է ռայաների հովանավոր փադիշահի կամքին և ցանկություններին։ Վերոհիշյալ քուրդերին ոչ ոք հովանավորություն ցույց չպետք է տա և ամեն պարագային նրանց

այդ շրջաններից հանելով և հեռացնելով, պետք է կայսերական հանքերի կաղաների մաքրման գործին ուշադիր և հոգատար լինի, ինչպես նաև ապահովի ժողովրդի, աղքատների և ռայաների հանգիստ և խաղաղ կյանքը։ Այս բոլորի մասին Փալուի և Էքիլի իշխողներին, Քղիի բեյին, Ջավի սանջակի և Ճաբաքջուրի վոյեվոդաներին, Էրղանիի կառավարիչներին[6] ուղղված բարձր հրամանը վերոհիշյալներին ուղարկվեց ռամազան ամսի կեսին։

(հատ. I, էջ 272)

## ԲՆԱԿԻՉՆԵՐԻ ՀԱԳՈՒՍՏՆԵՐԸ ԿԱՐԳԱՎՈՐԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՏՐՎԱԾ ՖԵՐՄԱՆԸ[7]

«Մաքրությունը հավատքի մասն է կազմում» [շարիաթական] սկզբունքը վերաբերում է նաև մուսուլմանների հագուստին։ Սակայն անմիտ պճնասիրությունից խուսափելն էլ հավատացյալների բարքի պահանջներից է։

Ներկայումս [պճնասիրությունը] տարածված է շատերի, հատկապես տգետների և անգիտակիցների շրջանում։

Բարեկրթության և ամոթխածության բացակայության պատճառով, մարդիկ իրար նայելով, կանանց նման զարդարանքի միտում են ցուցաբերում... [այդպիսիները] մարդկայնությունն ու արժանապատվությունը միմիայն զարդարանքի և շքեղության մեջ տեսնելով, հագուստն ու տարազը այլանդակում են. հարուստն ու աղքատը ձգտում են հագնվել բազմատեսակ ձևերով, իսկ մարդկանց մեծամասնությունը աղքատ լինելով, տարվում է հագուստի և իրերի ցուցամոլությամբ՝ հաճախ իրար նախանձելու և իրար հետ թշնամանալու ստիճան։

...Չնայած նախապես հայտարարված արգելքներին և կարգադրություններին [հագուստի և հագնվելու մասին], ներկայումս այդ պճնասիրությունը ավելի մեծ չափերի է հասնում։

Հասարակ մարդիկ թողնում են անգամ իրենց հին տարազները և բազմատեսակ շքեղ ու թանկագին սարըքներ (գլխի փաթթոց) են կապում։ Մի խումբ պճնասերներ մեջքերին արծաթյա յաթաղան և դանակ կապած, սրճարաններում, գինետներում, հանրատներում և այլ զբոսավայրերում աղմուկ, կռիվ և անկարգություններ են առաջացնում, իսկ ոստիկանությունը ի վիճակի չէ այդպիսիներին զսպելու և պատժելու...

Այնուհետև հիշում է հագուստի և տարազի զանազան տարօրինակությունները և այլանդակությունները, որոնք տարածված են հասարակության տարբեր խավերի մեջ։

...Այսպիսի անմիտ և ավելորդ տարազներ, վարք ու բարքեր, Նորին վսեմության փադիշահի խառնվածքին ու ցանկության հակառակ լինելու պատճառով և նման վտանգավոր ու անկարգ բարքերի վերացումը անհրաժեշտ համարելով, դրան առանձին ուշադրություն ընծայվեց և մանրամասն բացատրություններով՝ կայսերական հրամանով, կարգադրվեց, որ այսուհետև ժողովրդից յուրաքանչյուրը հագնի իր կարողությանը և վիճակին համապատասխան հագուստ։ Այդ հիման վրա կափուդան փաշային (ծովակալ), Ստամբուլի կադիին, սեկբանների պետին, բոստանջիների պետին և այլ կառավարիչներին ուղղված բույրուլթիներ (հրամանագիր) ուղարկվեցին...

(հատ. I, էջ 287—288)

## ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԻ (ՇԻՆԱՐԱՐՈՒԹՅԱՆ) ԿԱՆՈՆԱԳԻՐ

*Շանի Զադեն հետաքրքիր տեղեկություններ է տալիս նաև բնակարանների (տների) կառուցման կանոնների մասին, որոնք թեև ընդհանրապես վերաբերում են Ստամբուլին, բայց բնորոշ են ոչ-մահմեդական ժողովուրդների նկատմամբ Թուրքիայի ղեկավար շրջանների ունեցած խտրական վերաբերմունքի համար։*

..Հնուց ի վեր ընդունված կարգով մուսուլմանների շենքերի երկարությունը 12 արշին էր, իսկ ռայաներինը՝ 10 արշին, ավելին արգելված էր։ Ռայաների դասի շենքերի համար ընդամենը 10 արշին հատկացված լինելով, այն հողամասը (արսա), որի վրա կառուցվում էր շենքը, շատ նեղ, շենքերի միջև ընկած տարածությունը նույնպես նեղ էր, իսկ շենքերը ցածր էին։ Չնայած գոյություն ունեցող արգելքին, [ոչ-մուսուլմանները] ստիպված էին դարատափներ (տեռասս), հարկերի միջև քյոշկեր և նման մասեր կառուցել։

Վերոհիշյալ արգելքները հաստատելով և ուժի մեջ պահելով հանդերձ, թույլատրվեց սրանից հետո կառուցվելիք բնակարաններին մեկ-երկու արշին ավելացնել և հրդեհից պաշտպանվելու համար, կարողություն ունեցող բնակարանատերերին թույլատրել, որ բնակարանի չորս կողմում հողամաս (արսա) գնեն և դրանք իրար միացնելով պարտեզի վերածեն, իսկ եթե դա հնարավոր չլինի, այդ դեպքում արսայի վրա ամբողջությամբ բնակարան չպետք է կառուցեն, այլ մի փոքր մասը ազատ պետք է թողնեն։ Չնայած այդ մասին անհրաժեշտ էր հատուկ հրամաններ և պատվերներ տալ, սակայն նկատի առնվեց, որ գնվելիք արսաները էվկաֆին պատկանելու համար, վակըֆը դրան չի համաձայնի և հետո իրար միաց-

ված արսաների (հողերի) տերերի միջև վեճեր կարող են առաջանալ։ Բացի այդ, նկատի առնելով, որ ոչ-մուսուլման ռայաները իրենց [բնակարանների] շրջակայքում թանկարժեք արսաներ գնելու և իրենց բնակարանները ընդարձակելու կարողություն և միջոցներ չունեն, որի հետևանքով ստիպված են բաց տարածություն չթողնել և առաջվա նման ամբողջ արսայի վրա բնակարան կառուցել, բնակարանների ընդարձակման ու լրացուցիչ արսաների հարցը վերացվեց և որոշվեց, որ կարողության տեր թե՛ մուսուլմանները և թե՛ ռայաները, երկու տների միջև եղած ձեղնահարկից (չերդակ) մի արշին ավելացնելով, հրդեհի տարածումը արգելող քարուկիր պատեր շինեն և այդ գործը հեշտությամբ գլուխ բերելու համար ծախքերը վճարեն հավաքաբար։

Դար-ուլ-խելաֆեթում[8] և շրջակայքում կառուցված բնակարանների, խանութների և այլ շինությունների արտաքին մասերը ու քիվերը (սանաք) պետք է տախտակապատ լինեն, բոլորը պետք է իսկական խուրասանիով[9] ծեփվեն. կառուցվելիք տների ու խանութների օջաքները և նրանց դռները շինվեն թրծված աղյուսից։

Կարողության տեր մուսուլմաններին թույլատրվում է տարբեր տեղերում իրենց տների կեսը կառուցել քար ու կրից։ Այդպիսի տներում եղածի նման թրծված աղյուսից պետք է շինել կամար, շրջակայքը պատել քարաշեն պատով, իսկ հատակը շինել տախտակամածով։

Փայտաշեն շենքերի երկարության համար տրված փադիշահական թույլատվությունը վերաբերում է նաև այս կես քարուկիր շինություններին։ Քարուկիր շենքերի կառուցումը միայն մուսուլմաններին է վերաբերում, իսկ ռայաներին երբեք չի թույլատրվում. այս պայմանների վերաբերյալ թաքրիրը Նորին վսեմություն փադիշահին ներկայացվեց և այդ մասին կայսերական թույլտվություն շնորհվեց...

Վերոհիշյալ կանոնագրի գործադրությունը հատուկ հրամաններով հանձնարարվում է համապատասխան անձանց և հիմնարկներին։

(հատ. II, էջ 405—407)

# ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

## ՔՅԱԹԻԲ ՉԵԼԵԲԻ

1. Հաջջ, հաջի — իսլամական սրբազան Մեքքա քաղաքում գտնվող Նվիրական Քաաբեյի (Սև քար) ուխտագնացությունը կոչվում է հաջջ, իսկ այդ ուխտագնացության մասնակցողը՝ հաջի։ Հաջջի ուխտագնացությունը և հաջի բարձր կոչման արժանանալը իսլամական կրոնի կարևոր պայմաններից է։ Հաջի կոչման արժանացող անձինք համարվում են բարեպաշտ, կրոնասեր և հարգանքի արժանի մուսուլմաններ։

2. Պոլիգիստոր — բազմազան գիտելիքների տեր մարդ։

3. ա) Ակադեմիկոս Կրաչկովսկի Իգնատիյ Յուլյանովիչ (1883—1951) — հայտնի արևելագետ-արաբագետ։ Ունի բազմաթիվ աշխատություններ արաբական գրականության և արաբական ձեռագրերի մասին։ ՍՍՌՄ ԳԱ հրատարակությամբ լույս է տեսել նրա ընտիր երկերի ժողովածուն՝ 7 հատորով։

բ) Ակադեմիկոս Բարթոլդ Վասիլիյ Վլադիմիրովիչ (1869—1930) — արևելագետ։

գ) Համմեր (1774—1856) — ավստրիացի դիվանագետ, պատմաբան։ Իբրև արևելյան լեզուների մասնագետ, 1799 թվականից ուսումնասիրել է հնագույն գրությունները ու մումիաները։ 1802 թվականից Ստամբուլում վարել է ավստրիական դեսպանության քարտուղարի պաշտոնը, իսկ 1835 թվականից նշանակվել է Վիեննայի գիտական ընկերության նախագահ։

Հայտնի է Համմերի «Օսմանյան կայսրության պատմությունը» (ծագումից մինչև մեր օրերը) գերմաներեն կապիտալ աշխատությունը՝ 18 հատորով։ Համմերը Օսմանյան պատմությունը սկսում է 1300 թվականից և հասցնում մինչև 1774 թվականը։ Համմերի աշխատությունը թարգմանվել է նաև ֆրանսերեն և թուրքերեն։

դ) Թեշներ Ֆ. (ծնվ. 1888) գերմանացի արևելագետ։ Ուսումնասիրել է Թուրքիայի պատմական աշխարհագրությունը։ Զբաղվել է հատկապես Էվլիյա Չելեբիի և Քյաթիբ Չելեբիի աշխատությունների ուսումնասիրությամբ։

ե) Մորդթման Յ. Ն. (1852—1922), գերմանացի արևելագետ։ Հատուկ աշխատություն ունի Քյաթիբ Չելեբիի և Իբրահիմ Մյութեֆերիկայի մասին։

զ) Բաբինգեր Ֆ. (ծնվ. 1891) գերմանացի թրքագետ, զբաղվել է Քյաթիբ Չելեբիի «Ջիհան նյումա»-ի ուսումնասիրությամբ։

## «ՋԻՀԱՆ ՆՅՈՒՄԱ»

1. Թուրքիայում տպագրական արհեստը սկսվել է շատ ուշ, XVIII դարի առաջին քառորդից, այսինքն տպագրության գյուտից մոտ երեք դար հետո։ Թուր-

իայում տպագրության հիմքը դրել է ազգությամբ հունգարացի Իբրահիմ Մյութեֆերրիկան, 1140 (1727—1728) թվականին։ Տպարանը հիմնվում է սուլթանական հատուկ հրովարտակով («Հաթթը հյումայուն») Իբրահիմ էֆենդիի տանը։ Առաջին տպագրված գիրքը Վանի ուլեմաներից Մուհամմեդ բին-Մուստաֆայի բառարանն է։ Այնուհետև տպագրվում է Քյաթիբ Չելեբիի «Ծովային պատմությունը», «Ջիհան նյուման», Նայիմայի «Թարիխի Նայիման», տարեգիր Ռաշիդի «Թարիխի Ռաշիդը» և այլն։

«Մյութեֆերիկա» էին կոչվում կայսերական Դիվանի որոշ ծառայողներ։

2. Էվլիյա Չելեբին XVII դարի հայտնի թուրք ճանապարհորդ է, որը երկար տարիներ ուղևորություններ է կատարել Մերձավոր արևելքի, Ասիայի և Արևելյան Եվրոպայի բազմաթիվ երկրներում։ Իր ուղևորության ընթացքում հավաքած նյութերի հիման վրա նա գրել է 10 հատորանի մի աշխատություն, որը հայտնի է «Էվլիյա Չելեբիի Ուղեգրություն» Evliya Çelebi seyahatnamesi անունով։ Այդ աշխատասիրության մեջ բավականաչափ նյութեր են տրվում նաև Հայաստանի և հայերի մասին։ Հեղինակի նկարագրություններն ու տեղեկությունները խիստ բազմակողմանի և բազմազան են։ Նա տալիս է պատմական-աշխարհագրական, էտնոգրաֆիական, կենցաղային և այլ նյութեր, խոսում է ժողովուրդների արհեստների, լեզվի և կուլտուրայի, տեսարժան վայրերի, պատմական հուշարձանների և դրանց նշանակության մասին։

«Էվլիյա Չելեբիի ուղեգրության» առաջին վեց հատորները տպագրվել են Ստամբուլում 1896 թվականին՝ արաբատառ, իսկ մնացած հատորները Հանրապետական Թուրքիայում, ըստ որում, 9-րդ և 10-րդ հատորները՝ լատինատառ թուրքերենով։

«Ուղեգրության» որոշ հատորներ թարգմանվել են նաև անգլերեն, հունգարերեն և այլ լեզուներով։

ՍՍՌՄ գիտությունների ակադեմիայի արևելագիտության ինստիտուտը «Էվլիյա Չելեբիի ուղեգրությունից» ռուսերեն թարգմանել և տպագրել է այն նյութերը, որոնք վերաբերում են Ուկրաինական և Մոլդավական ՍՍՌ-ների պատմությանը։

3. Թեշդիդ—արաբերեն տառը կրկնակի հնչյունով կարդալու համար տառի վրա դրվում է հատուկ նշան, որը կոչվում է թեշդիդ։ Այսպես «Արան» բառը թեշդիդով կարդացվում է «Արրան»։ Թեշդիդով են կարդացվում բազմաթիվ բառեր՝ շիդդեթ, շեվվալ, թեշեքքյուլ, թերակկի և այլն։

Թուրքերենում ևս այդ բառերը կարդացվում են կրկնակի հնչյունով։ Բայց հաճախ թեշդիդը, ինչպես նաև բազմաթիվ այլ նշաններ, չի դրվում բառի վրա։ Այդ դեպքում ընթերցողը, եթե ծանոթ է տվյալ բառին, պետք է այն կարդա կրկնակի հնչյունով։

4. Թեռճվե—միջնադարյան արաբ պատմագիր-աշխարհագրագետ. «Էհսեն իլթիկասի»-ն նրա աշխատությունն է։

5. Համդուլլաճ կամ Համդուլլաճ ալ-Կազվինի (1281—1349)—Իրանի պատմագիրներից է։

6. «Կարմրագլուխ» (կըզըլբաշ) պարսկերեն՝ «սերխսեր»։ Իրանի Շահ Իսմայիլի զինվորները իրենց գլխին կարմիր թաշկինակ կապելու պատճառով կոչվել են «կըզըլբաշներ»։ Հետագայում այդ անունը տարածվեց Իրանի բոլոր զինվորների և ժողովուրդների վրա։ Օսմանյան թուրքերը և առանձնապես թուրք պատմագիրները, արհամարհական և անարգական իմաստով «կըզըլբաշ» են անվանու

իրանցիներին։ Կըզըլբաշներին համարում են «անհավատ» և «կրոնի թշնամի», Իրանի Շահին անվանում են «կըզըլբաշների շահ» և այլն։

7. Իբնի Սայիդ կամ Իբնի Սայիդ ալ-Մաղրիբի — արաբ պատմագիր, աշխարհագրագետ և ուղեգիր։

8. Դիվանային իրավունքը (հուքուքի-դիվանիյե) այն գումարն է, որ տվյալ քաղաքի բնակչությունը պարտավոր էր վճարել պետությանը։

9. Էմին Ահմեդ—պարսիկ գրող աշխարհագրագետ, աշխարհագրական հանրագիտարանի հեղինակ։

10. Մենջենիք (հունարեն)—ծանր քարերով գնդակոծելու մեքենա։

11. Հոջա (խոջա) Նասեր Թուսի—XII դարի երկրորդ կեսի պարսիկ աշխարհագրագետ։

12. Բաբ էլ-Էրվաբ—բառացի նշանակում է դռների դուռ։

13. Բաբ էլ-Հադիդ—բառացի՝ երկաթյա դուռ։

14. Նեվշիրվան, Իրանի Սասանյան շահերից։ Նա իր իշխանությունը տարածելով դեպի արևելք, գրավել է նաև Դաղստանի և Կասպից ծովի շրջանները։ Կասպից ծովի ափին, Դերբենդի շրջանում կառուցել է մի մեծ պարիսպ։

15. Սոլաքներ էին կոչվում փադիշահի ապանդակին ծառայող զինվորները։

16. Սուլթան Մուրադը 1045 (1635) թվականին Երևանի արշավանքի ժամանակ անցել է Զանգի գետը։

17. Կաֆ լեռ, առասպելական լեռ։ Արաբական տիեզերագիտական առասպելական գրականության մեջ Կաֆի լեռնաշղթան իբր շրջապատում է ամբողջ երկրագունդը։

Կաֆ լեռան մասին հիշատակություն կա նաև ղուրանում։

18. Էբու Բեքիր բին-Բեհրամ էլ-Դեմեշկին ակտիվ մասնակցություն է ունեցել XVII դարի թուրք դիտնական-աշխարհագրագետ Քյաթիբ Չելեբիի «Ջիհան նյումա»-ի խմբագրման և հրատարակման գործին։ Նա շարունակել և ավարտել է «Ջիհան նյումա»-ն։ Այդ մասին հիշատակություն կա «Ջիհան նյումա»-ում։ Մեռել է 1691 թվականին։

19. Ալ-Օսման, Ալ բառացի նշանակում է գերդաստան, դինաստիա։ Օսմանյան սուլթանների դինաստիան կոչվում էր նաև Ալ-Օսման։

20. Ներիզ, արմավից և չամիչից քամված խմելիք (շուրուբ)։

21. Օջաքլըք— Տե՛ս «Ջիհան նյումա»-ի 58-րդ ծանոթագրությունը։

22. Կըլըջ—բառացի սուր, թուր. Օսմանյան կայսրության մեջ ֆեոդալական հողաբաժինների (թիմար և զեամեթ) սիփահիների կողմից ռայաներին մշակելու տրվող հողերի երեք կամ հինգ հազար ակչեի եկամուտը կոչվում էր կըլըջ։ Սիփահիների ընդհանուր եկամտի այդ «կըլըջ» կոչված գումարի համար սիփահին ոչ մի պարտավորություն չուներ պետության հանդեպ, քանի որ այդ գումարը համարվում էր նրա «սրի իրավունքը»։ Այդ գումարից բացի, եկամտի մնացած ամբողջ գումարի յուրաքանչյուր երեք և հինգ հազար ակչեի համար սիփահիները պարտավոր էին մեկ «ջեբելու» տալ։ Ջեբելու էին կոչվում թիմարի և զեամեթի տերերի կողմից պատերազմի ուղարկվող հեծյալ կինվորները, որոնք պետք է զինվեին իրենց սեփական միջոցներով։

23. Թեզքիրեով թիմարները այն թիմարներն էին, որոնց բերաթները (հրամանագրերը) տրվում էին Ստամբուլից։ Իսկ առանց թեզքերեի թիմարները բեյլերբեյիի կողմից ավելի փոքր եկամտի գումարով տրվող թիմարներն էին։



17 1676

24. **Ջեբելու** — *Տե՛ս նույն գլխի 22-րդ ծանոթագրությունը։*

25. *Քյաթիբ Չելեբին Ախալքալաքը սխալմամբ թարգմանել է Սպիտակ բերդ։ Պետք է լինի Նոր քաղաք։*

26. **Շերեշին** *(Շարիշի, Ալ-Շարիշի)— արաբ աշխարհագրագետ, որը հայտնի է իբրև «վայրիրի» (մակամների) մեկնաբանող։ Մեռել է 619 (1222) թվականին։*

27. **Մասիսե** *(կամ Մսիս)— հայտնի պատմական քաղաք Կիլիկիայում։ Թուրք պատմագիրները գործ են ածում նաև Մսիս, Մըսիս անունները։ Պատմական անունները՝* Mamistra, Mapsuhista.

*Ներկայումս Ադանա քաղաքից 30 կմ դեպի արևելք, Ջիհուն գետի ափին ընկած գավառական փոքր Սեյհուն քաղաքն է։*

28. **էհլի զիմմեթ.** *էհլը՝ նշանակում է տեր, իմացող, հասկացող, գիտակ, զիմմեթ նշանակում է հովանավորություն։ էհլի զիմմեթ էին կոչվում իսլամական պետության հովանավորության ներքո գտնվող աստվածապաշտ ժողովուրդները, այսինքն՝ քրիստոնյաները և մովսիսականները։*

29. **Թաքվիմ ալ-Բուլդան** *—արաբական գիտնականների կազմած տարեցույցները կոչվում էին «Թաքվիմ»։ «Թաքվիմ ալ-Բուլդանը» արաբ պատմագիր և աշխարհագրագետ Աբուլ Ֆիդայի տարեցույցն է, որի մասին և հիշում է Քյաթիբ Չելեբին։*

30. **Հյուրյումեթ** — *բառացի նշանակում է կառավարություն, բայց պատմական նշանակությունը այլ է։ Օսմանյան կայսրության XVI—XVII դարերի վարչական բաժանման մեջ ինքնավար և կիսանկախ որոշ տերիտորիաներ կոչվում էին* «հյուրյումեթ»: *«Հյուքյումեթներ» կային գլխավորապես քրդաբնակ էյալեթներում։ Մանրամասնությունները տես նույն գրքի «Ֆեզլեքե»-ի I հատորի 13-րդ ծանոթագրությունը։*

31. **Այնի Ալի էֆենդի** *XVII դարի թուրք պետական ծառայող և պատմագիր։ Նրա կարևոր աշխատություններից են «Օրենքների գրքույկները», որոնց մեջ հեղինակը տալիս է կայսրության 17-րդ դարի վարչական բաժանումը։ Մանրամասնությունները տես մեր «XVII դարի օսմանյան պետության վարչական բաժանումը» հոդվածում. (Արևելագիտական ժողովածու, հատ. I, Երևան, 1960, էջ 285—301)։*

32. **Կոչա Նիշանջի Մուստաֆա Չելեբի** *—սուլթան Սուլեյման Կանունիի (Օրենսդիր) ժամանակաշրջանի հայտնի նիշանջիներից է։ Նիշանջի էին կոչվում սուլթանական հրովարտակների և այլ պաշտոնական գրությունների վրա սուլթանական հատուկ նշան՝* **թուղրա**, *դրոշմող բարձրաստիճան պաշտոնյաները։ Նիշանջիները կոչվում էին նաև «թուղրաքեշ» (թուղրա նկարող) և «թեվքիի»։*

33. **Թյուրբե** — *դամբարան, գերեզման։ Իսլամական սրբերի դամբարանները կոչվում էին թյուրբե, որոնք հաճախ դառնում էին ուխտատեղի։ Օսմանյան սուլթանների դամբարանները նույնպես կոչվում էին թյուրբե։*

34. **Միր Շերեֆ**—*հայտնի է Միր Շերեֆ խան Բիդլիզի անունով. Բիթլիսի քուրդ խաների ցեղից է։ Հայրը՝ Շեմսուդին III-ը Թուրքիայից փախել և ապաստանել է Իրանում։ Շերեֆ խանը Սեֆեվիների ժամանակ Նախիջևանում եղել է վալի, իսկ հետագայում, 986 (1578) թվականին Արևելյան արշավանքի ժամանակ, անցել է օսմանցիների կողմը։ «Շերեֆ նամե» անունով հայտնի քրդական պատմության հեղինակն է։*

*«Շերեֆ նամեն» գրված է պարսկերեն, հետո թարգմանվել ֆրանսերեն, ապա*

նաև՝ թուրքերին։ Թուրքական աղբյուրներում Միր Շերեֆը անվանվում է Շերեֆ-խանի-Բիդլիչի։

35. Այս առասպելը Բիթլիսի մասին Քյաթիբ Չելեբիից բացի կրկնում են նաև այլ հեղինակներ՝ ինչպես Էվլիյա Չելեբին և ուրիշներ։

36. Սովորական կամ սովորութային հարկեր (էորֆիյե). Օսմանյան կայսրության մեջ, մինչև թանզիմաթի* հայտարարումը, գոյություն ունեին բազմաթիվ և բազմատեսակ հարկեր, որոնք հիմնականում բաժանվում էին երկու խմբի.

ա. շարիաթական հարկեր և բ. սովորական կամ սովորութային հարկեր։

Շարիաթական հարկերը՝ զեքաթ, աշար, խարաջ և ջիզիե ընդհանուր անուններով հայտնի հարկերի հիման վրա մոտ 80 անուն հարկատեսակ կար։

Սովորութային հարկերը, որոնք թվով 97-ի էին հասնում, գանձվում էին ժողովրդից ռազմական և պետության այլ կարիքների համար։

XVI—XVII դարերում Թուրքիայում գանձվող հարկերի մասին միջնադարյան թուրք պատմագիրները շատ քիչ և կցկտուր տեղեկություններ են հայտնում։

37. Քուֆի տառերը — Քուֆեն արաբական հնագույն քաղաք է եղել։ Քուֆի՝ Քուֆե քաղաքին հատուկ արաբական գրերի ամենահին տեսակն է։ Քուֆին ուղանկյան ձև ունի և ներկայումս անգործածելի է և պատահում է հին գրքերում և հուշարձաններում։

38. «Հեշթ-բեհիշթ» — բառացի նշանակում է ութը դրախտ, դրախտի ութը հարկեր։ Պարսկերեն լեզվով գրված Ալ-Օսմանի պատմությունն է, որ գրել է Իդրիսի Բիթլիզին սուլթան Բայազիտ II-ի հրամանով։

«Հեշթ-բեհիշթը» XV դարի պատմական ուշագրավ հուշարձաններից է։

39. Արքայական դաֆթար (Դեֆթերի խաքանի)—կալվածների և հողերի արձանագրության հատուկ արքայական մատյան է, որի գործերի վարիչը կոչվում էր դեֆթերխանեի էմին։

40. Զիմմի — իսլամական պետություններում ոչ-իսլամ հպատակները կամ ռայաները կոչվում են զիմմի։

41. Մակթու, մակթուի կարգով — տե՛ս Սելանիկիի «Թարիխի-Սելանիկի»-ի 26-րդ ծանոթագրությունը։

42. Չալդրանի դաշտը — Իրանական Ադրբեջանում, Մակու քաղաքի հարավում և Խոյ քաղաքի հյուսիս-արևմուտքում հայտնի դաշտ է, ուր տեղի է ունեցել օսմանյան պատմության մեջ հայտնի «Չալդրանի հաղթանակը», որ Յավուզ սուլթան Սելիմը տարել է Իրանի Շահ Իսմայիլի դեմ 920 (1514) թվականին։

43. Բիդաթ — բառացի նշանակում է նորամուծություն, նոր սովորություն կամ կարգ, որը շարիաթով նախատեսված չլինելով համարվում է ապօրինություն։ Սակայն բիդաթ բառը իսլամական երկրների պատմության մեջ գործածվում է շատ լայն իմաստներով։ Ռեսմի-Բիդաթ նշանակում է ապօրինի ձևով առնված հարկը։ Դրա հայտնի օրինակներից է սուլթան Սուլեյման II-ի (1687—1691) ժամանակ Ստամբուլում և նրա հարևան վայրերի մաքսատներում

---

* Սուլթան Աբդուլ Մեջիդի (1255—1277) իշխանության առաջին տարին, 1255 (1839) թվականի շաբան ամսի 26-ին, սուլթանական հրովարտակով («խաթթը-հյումայուն») հրատարակված բարենորոգումների ծրագիրը հայտնի է «թանզիմաթ» անունով։

*ներմուծվող սուրճից գանձվող հարկր, ըստ որում մուսուլմաններից գանձվում էր օկկայից[*] 8 ակչե, իսկ ոչ-մուսուլմաններից՝ 10 ակչե։*

*XV—XVI դարերի օսմանյան պետության էյալեթներին և լիվաներին վերաբերող օրենքներում հիշված են այն բոլոր հարկերը, տուրքերը և մաքսերը, որոնք գանձվում էին ժողովրդից։ Այդ հարկային սիստեմում ներմուծվել էին բազմաթիվ և բազմատեսակ հարկեր, որոնք իբրև բիզաթ (ապօրինություն), վերացվում էին փադիշահական ֆերմաններով։*

*Ժամանակակից թուրք գիտնական Օմեր Լութֆի Բարկանը վերոհիշյալ կանոններից և կանուննամեներից կազմել է մի ստվարածավալ աշխատություն.* «XV ve XVI asırlarda Osmanlı Imparatorlugunda zirai ekonominin hukukî ve malî esaslari», cilt I. kanunlar. Istambul, 1945. «XV *և* XVI *դարերի Օսմանյան կայսրության գյուղատնտեսական էկոնոմիկայի իրավական և ֆինանսական հիմունքները», հատ. 1, օրենքներ, Ստամբուլ, 1945*[**]*։*

*Ձնայած բիզաթների վերացման համար տրված հրամաններին, նման ապօրինի հարկեր և պարտավորություններ շարունակվել են պահպանվել օսմանյան պետությունում։*

*44.* Բի–Սյուբուն — *բառացի նշանակում է առանց սյունի։*

*45.* Ռում — *բառացի նշանակում է հույն։ Սակայն թուրքերեն լեզվում և պատմության մեջ գործածվել է տարբեր իմաստներով։ Միջին Ասիայի ժողովուրդները և նույնիսկ Թուրքիայում ապրող որոշ ժողովուրդներ օսմանյան թուրքերին «ռում» էին անվանում։ Հռոմեական կայսրությունը երկու մասի բաժանվելուց հետո Բյուզանդական կայսրությունը կոչվել է Ռումերի երկիր։*

*Օսմանյան պետության եվրոպական մասը, ինչպես հայտնի է, կոչվել է Ռումելի (Ռումի երկիր)։ Միջին դարերի թուրքական աղբյուրներում Սվաղ քաղաքը և վիլայեթը նույնպես կոչվել են «Ռում», հաճախ «Ռումի-սուղրա»՝ Փոքր Ռում։ Քյաթիբ Չելեբիի «Ջիհան նյումա»-ում Էրզրումի էյալեթի սահմանները որոշելիս «Ռումը» գործածվել է Սվաղ իմաստով։*

*46.* «Նյոբեթլու թիմար» — *նյոբեթ բառացի նշանակում է հերթ, կարգ, նյոբեթլու՝ հերթով։*

*Թուրքիայում, ֆեոդալական կարգերի օրոք, երբ թիմարը տրվում էր ոչ թե մի անհատի (սիփահիի), այլ մի քանի սիփահիների, պատերազմի դեպքում այդ թիմարատերերը հերթով էին պատերազմի գնում։ Այդ կապակցությամբ նման թիմարները կոչվում էին «նյոբեթլու թիմար»։*

---

[*] *Օկկա կամ գըյա, 400 դիրհեմ, թուրքական ծանրության չափ է, որը հավասար է 1 կգ. 225 գր.։ Օկկան շատ՝էր տարածված Մերձավոր արևելքի և Բալկանյան երկրներում։*

[**] *Նկատի ունենալով Օ. Լ. Բարկանի այս աշխատության բացառիկ նշանակությունը (նա առաջին անգամ այդ «կանոնները» թուրքական արխիվներից դուրս բերել, վերծանել և անհրաժեշտ բացատրություններով լույս աշխարհ է հանել), Հայկ. ՍՍՌ ԳԱ պատմության ինստիտուտի ավագ գիտաշխատող Մ. Զուլալյանի հետ Բարկանի «Կանուններ»-ից թարգմանել ենք Արևմտյան Հայաստանին և այլ հայաբնակ շրջաններին վերաբերող օրենքները* «Օրենքների ժողովածու» *ընդհանուր անունով։ Գիրքն ունի ծավալուն առաջաբան և ծանոթագրություններ, լույս կտեսնի 1964 թ.։ Կարևոր սկզբնաղբյուր է Արևմտյան Հայաստանի XV—XVI դարերի սոցիալ-տնտեսական կյանքի ուսումնասիրության համար։*

Քյաթիբ Չելեբին նշում է, որ նման թիմարներ գոյություն ունեին միայն Էրզրումի էյալեթում։ Ոչ մի աղբյուրում չի հիշատակված Էրզրումի էյալեթում ընդունված այդպիսի բացառիկ կարգի պատճառը։

47. Մեվլեվիություն (մեվլեվիյեթ) — տե՛ս պատմագիր Շանի Զադեի «Թարիխի Շանի Զադեի» 1 ծանոթագրությունը։ Այստեղ գործածված է մեծ կադիի կադիության շրջանի իմաստով։

48. Բեզիստան (կամ Բեդիստան) — թանկագին իրերի, զենքերի և գոհարեղենի վաճառքի հատուկ շուկա, որն առհասարակ ծածկված էր լինում։

49. Քյաբե — ըստ ավանդության, Աբրահամից մնացած սրբազան շինությունն է Մեքքա քաղաքում, որը համարվում է բոլոր մուսուլմանների ուխտատեղին և կըբլեն։ Աշխարհի բոլոր մուսուլմանները աղոթելիս իրենց երեսները դարձնում են դեպի կըբլե։ Քյաբեն միաժամանակ համարվում է հաջջի ուխտատեղի (տե՛ս նաև Քյաթիբ Չելեբիի 1 ծանոթագրությունը)։

50. Կալիկա, Կալիկայի լեռներ — լեռներ Էրզրումի շրջանում։

51. Մուկաթաա — որևէ հողից կամ կալվածից տասանորդի (աշար) փոխարեն գանձվող նախապես որոշված միանվագ գումար։

Թուրք պատմագիրների տված տեղեկություններից երևում է, որ հիջրեթի 1000 թվականից հետո, այսինքն XVI դարի վերջերին և XVII դարի սկզբներին, մեծ թիմարները և զեամեթները ազատ մնալու դեպքում, նոր թիմարատերերի (սիփահիների) չէին տրվում, այլ փոխանցվում էին արքունական գանձարանին (խազինեի ամիրե) և իլթիզամի կարգով այդ հողամասից ստացված եկամուտը մտնում էր պետական գանձարանը։ Այս կարգի մուկաթաաները կոչվում էին պետական մուկաթաաներ (մուկաթաաի մերիյե)։

52. Սուրաշի, սուրաշիություն — տե՛ս Քյաթիբ Չելեբիի «Ֆեզլեքե»-ի I հատորի 16 ծանոթագրությունը։

53. Ուրբաթ օրվա աղոթք — իսլամական կրոնի համաձայն ուրբաթ օրը (ջումա) համարվում է հանգստի և նվիրական օր։ Այդ օրը ջամիում կատարվում է մուսուլմանների հավաքական աղոթքը՝ ուրբաթօրյա աղոթքը կամ ուրբաթօրյա նամազը։

Ստամբուլում ուրբաթօրյա աղոթքին մասնակցում էր նաև սուլթանը։ Այդ օրը, որոշված ժամին, հատուկ հանդիսավորությամբ և շուքով աշխարհի բոլոր մուսուլմանների խալիֆան, այսինքն՝ փեյղամբերի (մարգարեի) փոխանորդը, գալիս էր նվիրական ջամին՝ ուրբաթօրյա աղոթքի։ Սուլթան-խալիֆայի այս այցը և աղոթքը հատուկ ջամիում կոչվում էր «սելամլըք» կամ սելամլըքի արարողություն։ Ուրբաթօրյա և բայրամների աղոթքի ժամանակ ջամիում հաթիբը (կարդացող) կարդում էր զորանի որոշ այեթներից, հադիսներից և կրոնական խրատներից կազմված հատուկ աղոթք, որը կոչվում էր «խութբե»։ Խութբեյում հիշատակվում է փադիշահ-խալիֆայի անունը։

Քյաթիբ Չելեբիի կողմից հիշված Բայբուրտ (Բաբերտ) քաղաքի ջամիում կատարվում էր միայն ուրբաթօրյա աղոթքը, իսկ սելամլըքն ու խութբեն կատարվում էին միայն Ստամբուլի ջամիում։

54. Կանթարը մեծաքանակ ապրանքներ կշռելու հատուկ կշեռք է։ Միաժամանակ կշռի չափ է և հավասար է մոտավորապես 44 օկկայի, թեև ըստ վայրերի որոշ տարբերություն է տալիս։

55. Էբու էլ-ֆեթհ, էբու՝ հայր, ֆեթհ՝ հաղթող, նվաճող։ Ինչպես հայտնի է, սուլթան Մուհամմեդ 11-ը (1451—1480) 1453 թվականին Կոստանդնուպոլիսը

գրավելու համար, ստացավ «ֆաթիհ» տիտղոսը։ Էբու էլ-ֆեթհ նշանակում է ֆաթիհների հայր։

56. Սրբազան պատերազմ (ղազա, ջիհադ)—իսլամական կրոնի և նրա տարածման համար մղված պատերազմները համարվում են սրբազան պատերազմներ։ Այդ պատերազմներում հաղթող մուսուլմանները համարվում են «ղազի»։ Օսմանյան սուլթաններից շատերը, որոնք սրբազան պատերազմներ են մղել, ստացել են «ղազի» տիտղոսը։ Թվով 36 սուլթաններից 20-ը ունեցել են այդ տիտղոսը։

57. «Խամսինի օրեր»—խամսին բառացի նշանակում է հիսուն։ Իսլամական երկրներում ձմեռվա «էրբաին» (քառասուն) կոչված 40-օրյա ցրտերից հետո սկսվող և 50 օր տևող տաք օրերը կոչվում էին խամսին։

58. Ռաբաթ (ռիբաթ) — բառացի նշանակում է ամուր շինություն։ Ռաբաթ էին կոչվում բերդերի և բերդաքաղաքների պարիսպներից դուրս մնացած շինությունները, ինչպես օրինակ, թիքեյները, քարվանսարաները և այլն։

59. Աննշանակելի և անհրաժարելի օջաքլըքն այն է, երբ մի քանի գյուղերի կամ մի գավառի (կազա) տասանորդի եկամուտները հատկացվում էին օսմանյան նավաշինարանի (թերսանե) ծախսերին, կամ որևէ բերդի և քաղաքի պահապանների և տեղական զինվորների (երլի նաֆարաթ) ուլուֆեներին (ռոճիկ)։ Նման հողամասը համարվում է օջաքլըք։ Օջաքլըքի մեջ մտնում էին նաև ջիզիեն, մետաքսի կշռի և մաքսային հարկերը։

Օջաքլըքի տերը այդ իրավունքը ստանալուց հետո այլևս նոր նշանակման և հրաժարեցման ենթակա չէր։ Նման օջաքլըքներ կային օսմանյան պետության արևելյան և հարավային վարչական միավորումներում, օրինակ, Դիարբեքիրի էյալեթում։

60. Էմիրություն կամ էմարեթ—տե՛ս Քյաթիբ Չելեբիի «Ֆեզլեքե»-ի I հատորի 18-րդ ծանոթագրությունը։

61. Ոչխարի նարկ (ադաթի աղնամ), փոքր եղջերավոր անասուններից (ոչխարը իր գառնուկով միասին և այծ) բնատուրքով կամ ակչեով գանձվող հարկ, որ տարբեր դարաշրջաններում և վիլայեթներում տարբեր է եղել։

62. Մսիս — տե՛ս «Ջիհան նյումա»-ի 27-րդ ծանոթագրությունը։

63. Էմիր ուլ-մյումինին—տե՛ս Քյաթիբ Չելեբիի «Ֆեզլեքե»-ի I հատորի 25-րդ ծանոթագրությունը։

64. Սեբիլի շինությունները ճանապարհների կարևոր կետերում անցորդներին խմելու ջուր տվող հատուկ բարեգործական շինություններ էին։ Խմելու ջուրը բաժանողները կոչվում էին սիբիլջի։

65. Սյուղուր — բառացի նշանակում է սահման, պետական սահման։ Իսլամական երկրների՝ ոչ-իսլամական երկրների հետ ունեցած սահմանները «սյուղուր» էին կոչվում։ Այսպես էին կոչվում նաև իսլամական երկրներին սահմանակից ոչ-իսլամական երկրները։

66. Թուրքիայի և առհասարակ Արևելքի պատմագիրները պատմական որևէ կարևոր դեպքի թվական նշում են փոքր ոտանավորով (երկու տող), որը կոչվում է «թարիխ»— պատմություն։ Այստեղ խոսքը վերաբերում է Թիմուրի կողմից Սվազի պարսպի կործանման, կամ, ինչպես հեղինակն է գրում, «ավերման» թվականին։

67. Քեֆեն նավահանգիստ-քաղաք է Ղրիմի արևելյան կողմում, ներկայիս Ֆեոդոսիան է։ XVI—XVII դարերում Քեֆեն Ղրիմի և Ազովի ծովեզրերի մի քանի

*թերդերի հետ միասին կազմում էր օսմանյան պետության առանձին էյալեթ։ Ղրիմի թաթարական խաների մասնակցությամբ տեղի ունեցած բազմաթիվ պատերազմական գործողություններում Քեֆեն կարևոր դեր է կատարել։*

68. **Թեքիյե**—*որևէ շեյխի իշխանության ներքո գտնվող և դերվիշական խմբի պատկանող հատուկ շինություն, որտեղ կատարվում էին դերվիշական խմբի աղոթքներն ու արարողությունները։*

69. **Ֆերհադ և Շիրին** — *արևելյան ժողովրդական լեգենդ, որը հիմք է ծառայել մի շարք բանաստեղծների երկերի համար։*

*Ենթադրվում է, որ այդ ավանդական պոեմը սկիզբ է առել Անդրկովկասում։ Սասանյան շահ Խոսրով Փերվիզիի սիրահարն է եղել գեղեցկուհի Շիրինը։ Ավանդություն կա, որ Շիրինը հայուհի է եղել։ Մի այլ ավանդության համաձայն, Շիրինը բյուզանդական կայսրերից մեկի աղջիկն է եղել, և իբր Շիրին անունը հունական Իրանա անվան աղավաղված ձևն է։ Ֆերհադ և Շիրին լեգենդը առաջին անգամ մշակել է Ֆիրդովսին (Ֆիրդուսի) իր «Շահնամե»-ում։ Նիզամին այդ թեմայով գրել է «Խոսրով և Շիրին» իր հայտնի պոեմը։ Ալիշեր Նավոյին ևս ունի պոեմ «Խոսրով և Շիրին» անունով։*

70. **Վալիդե Սուլթան** — *օսմանյան սուլթանների հարազատ մայրերը կոչվում էին Վալիդե Սուլթան կամ ուղղակի Վալիդե (մայր)։ Տվյալ դեպքում Քյաթիբ Չելեբին նկատի ունի Վալիդե Սուլթանի անունով վակֆային հողերի վրա ապրող և աշխատող ռայաներին։*

71. **Կուրեյշ** — *Արաբական թերակղզու Հիջազի շրջանում ապրող հայտնի ցեղ։ Կուրեյշի ցեղապետները Մեքքայի վիլայեթում իշխել են մինչև իսլամական կրոնի հանդես գալը։*

72. **Թեքֆուր կամ թեքիր**—*բառացի նշանակում է իշխող, թագավոր։ Երբ օսմանյան սուլթանները նվաճեցին Ռումելին և Անատոլիան, որոշ վայրերում իրենց նախկին իշխանությունը շարունակող վալիներին թեքֆուր անունը տվին։*

73. **Դանիշմենդների պետությունը** *(Դանիշմենդներ, Դանիշմենդ օղուլլարը)*—*Դանիշմենդների հայտնի դինաստիան հիմնել է թուրք նվաճող Ահմեդ Դանիշմենդը։ Նրանց պետության մայրաքաղաքը եղել է Սվազը։*

*Քյաթիբ Չելեբին Դանիշմենդների պետության ղեկավարների և նրանց մղած պատերազմների մասին մանրամասն տեղեկություններ է տալիս։ Դանիշմենդների պետությունը կործանվել է 568 (1172) թվականին, այսինքն XII դարի վերջերին, սելջուկյան պետության իշխող Կըլըչ Արսլանի ձեռքով։*

*Դանիշմենդների դինաստիայից Կարասի բեյը մի նոր թուրք բեյություն հիմնեց, որը հայտնի է Կարասիի բեյություն կամ Կարասի օղուլլարը անունով։*

74. *«Դանիշմենդ»—բառացի նշանակում է գիտության տեր, գիտնական անձնավորություն։*

75. **Կըլըչ Արսլան (1156—1192)**—*Անատոլիայի Սելջուկյան պետության տիրակալներից է, որը բյուզանդական կայսր Մանուելին պարտության մատնեց Կոնիայի մոտ և 1180 թվականին Դանիշմենդների իշխանությանը վերջ տալով, Անատոլիայում հաստատեց Սելջուկյան իշխանությունը։*

76. **Աթաբեկ**— *բառացի նշանակում է բեյ-հայր (բեյ-բաբա)։ Աթաբեկ էին կոչվում Իրանի և Իրաքի հիջրեթի XVI—XVII դարերի թուրք իշխողները, որոնք իրենց վիլայեթներում կիսանկախ էին, բայց սուլթանության տիտղոսի չէին արժանացել։ Աթաբեկների կառավարած երկրները կոչվում էին աթաբեկություն։*

1. Փեչեվի—*XVI—XVII դարերի թուրք պատմագիր, որ իր «Թարիխի Փեչեվի» գրքում շարադրել է օսմանյան պետության պատմությունը՝ 926 թվականից մինչև 1048 թվականը (1518—1639)։ «Թարիխի Փեչեվին» տպագրվել է Ստամբուլում 1238 (1822—1823) թվականին։ Նրա մասին մանրամասն տե՛ս «Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին» գիրքը, հատ. Ա, Երևան, 1961, «Թարիխի Փեչեվի» գլուխը, էջ 25—59։*

2. Սելանիկի—*տե՛ս ներկա աշխատության Սելանիկի գլուխը։*

3. Նաիմա—*XVII դարի հայտնի թուրք պատմագիր-տարեգիր. Հալեպի Նայիմա Մուստաֆա էֆենտին գրել է օսմանյան պետության պատմությունը վեց հատորով, որը հայտնի է «Թարիխի Նայիմա» անունով։ Նայիման իր տարեգրությունը սկսում է հիջրեթի 1000 թվականից և հասցնում մինչև 1070 (1591—1659) թվականը։ «Թարիխի Նայիման» տպագրվել է Ստամբուլում մի քանի անգամ։ Մանրամասնությունները Նայիմայի և նրա «Պատմության» մասին տե՛ս մեր «Թուրքական աղբյուրները Հայաստանի, հայերի և Անդրկովկասի մյուս ժողովուրդների մասին», հատ. Ա, Երևան, 1961, «Թարիխի Նայիմա» գլխում, էջ 63—111։*

4. Ջելալի *բառը թուրքերեն լեզվի մեջ ստացել է ավազակ, ապստամբ, ըմբոստ իմաստը։*

5. *Իսլամական կրոնի երկու հիմնական դավանանքները կոչվում են «սուննի» և «շիա»։ Օսմանցի թուրքերը համարվում են սուննի դավանանքի, իսկ իրանցիները՝ շիա դավանանքի ներկայացուցիչներ։ Այդ երկու դավանանքների միջև գոյություն ունեցած հակամարտությունը գրեթե միշտ պահպանվել է։ Անշուշտ, չի կարելի ընդունել թուրք պատմագիրների այն «տեսակետը», որ իբր սուննի և շիա դավանանքի տարբերությունն է հանդիսացել օսմանյան թուրքերի և իրանցիների միջև դարավոր թշնամության հիմքը։ Կասկած չկա, որ կրոնական-դավանական խտրականությունը բավական կարևոր զենք է հանդիսացել օսմանյան սուլթանների ու Իրանի շահերի և, առհասարակ, տիրող շրջանների ձեռքում ժողովրդական մասսաների կրոնական ֆանատիզմը հրահրելու և նրանց միջև թշնամություն գրգռելու գործում։*

6. *Շարիաթական կարգով անհավատների («քաֆիր») դեմ մղված պատերազմները համարվում են սրբազան պատերազմներ («ջիհադ»)։ Վերում մեր նշած կրոնական խտրականության և թշնամության հետևանքով իրանցիների՝ շիա մուսուլմանների դեմ օսմանցի թուրքերի մղած պատերազմը նույնպես համարվել է սրբազան պատերազմ։*

7. *Թուրքական պատմագիրների արտահայտությամբ, ի տարբերություն իրանական, կըզըլբաշական «անհավատ բանակի», թուրքական բանակը համարվում է «իսլամական բանակ»։*

8. Սեկբան *(գործածվում է նաև սեկման)— ենիչերիական օջախին կից հատուկ զորախումբ։ Այդ զորախմբի պետը կոչվում է* Սեկբան բաշը։

9. *Հաբեշի էյալեթը կազմում էին Արաբական թերակղզու Օսմանյան կայսրության մեջ մտնող հողերը (Մեքքա, Մետինա, Ջիտտե և Թաիֆ)։*

10. Մյութեսելլիմ — *բառացի նշանակում է հանձնված որևէ բան պահպանող. մյութեսելլիմ էին կոչվում հարկեր ու տուրքեր հավաքող անձինք։*

11. *Կարա Յազըջիի «հրամանը» (հյուքմ)։ Ջելալիական ապստամբական շարժման առաջին ղեկավար Կարա Յազըջի Աբդուլհալիմը, որը Հալիմ Շահ տիտ-*

*դոսով սուլթանություն էր հայտարարել, փադիշահական ֆերմանի բնույթի «հրաման» էր տվել։ Հրամանի տեքստում ասված է. «գրված է 1009 (1601) թվականի ռեբի-ուլ-էվվելի սկզբին»։*

12. Էլբիստան—*Մարաշի վիլայեթում կազայի կենտրոնական քաղաք։ Հնում Էլբիստանը կոչվել է* Ablastha, *իսկ իսլամական աղբյուրներում՝ Աբելիստան։*

13. Քուրդիստանի զինվորներ, Քրդական «ճյուՖյումեթներ»: *XVI—XVII դարերում օսմանյան սուլթանները միշտ օգտագործել են քուրդ ցեղապետների զինված ուժերը։ Տվյալ դեպքում քրդական զինված ուժերը օգտագործվել են «ջելալիներին ոչնչացնելու համար»։*

*Օսմանյան պետության քրդաբնակ վայրերը այդ ժամանակաշրջանում կիսանկախ, արտոնյալ դրության մեջ են եղել։ Թուրքական աղբյուրներում հիշվում են այնպիսի կիսանկախ, կիսաինքնավար շրջաններ, որոնք լրիվ կերպով չեն ենթարկվել օսմանյան կենտրոնական և նրա էյալեթների վարչական իշխանություններին։ Այսպես, Վանի, Դիարբեքիրի, Բիթլիսի էյալեթներում եղել են «հյուքյումեթ», «օջաքլըք» անունը կրող գրեթե կիսանկախ վարչական միավորներ։*

*XVII դարի Թուրքիայի վարչական բաժանման ցուցակից պարզվում է, որ Դիարբեքիրի էլայեթում պաշտոնական սանջակներից բացի եղել են նաև 8 «օջաքլըք» և 5 «հյուքյումեթ»՝ չորս հարյուրից ավելի քրդական աշիրեթներով, որոնք անմիջականորեն գտնվել են քուրդ բեյերի իշխանության ներքո և կառավարվել այդ բեյերի միջոցով։*

*XVII դարի հայտնի թուրք ուղեգիր Էվլիա Չելեբին այդ քրդական ցեղերի իրավունքների մասին տալիս է հետևյալ շատ կարևոր տեղեկությունները. «Դիարբեքիրի 19 սանջակներից 11-ը, որպես Օսմանյան կալված, կառավարվում էին երկրի մյուս մասերի նման։ 8-ը գտնվում էին քուրդ բեյերի տիրապետության տակ, քանի որ սուլթան Սելիմը հիշյալ երկրները նվաճելու ժամանակ այդ շրջանները շնորհել էր քուրդ բեյերին իբրև «յուրթլուք և օջաքլըք»։ Նշանակելու և ազատելու իրավունքը իրենց էր պատկանում... Իբրև «հյուքյումեթ» արձանագրված սանջակներում, սուլթան Սելիմի օրենքների համաձայն, թիմարներ և զեամեթներ չկային։ Նրանց իշխողները այդ կալվածները կառավարում են որպես իրենց սեփականություն։ Տներն ու բերքերը պատկանում են իշխողներին*»*։*

*Քուրդ բեյերի ազդեցությունը շատ մեծ էր նաև Վանի և Բիթլիսի վիլայեթների քրդաբնակ շրջաններում։*

*Էվլիյա Չելեբին շատ հետաքրքիր և կարևոր տեղեկություններ է տալիս նաև Բիթլիսի քրդական իշխանությունների («հյուքյումեթների») և Օսմանյան կենտրոնական կառավարության ու սուլթանի հետ նրանց ունեցած հարաբերությունների մասին։ Այդ ամենը նա անձամբ դիտել է Բիթլիսում կատարած ուղևորության ժամանակ։*

*Աբդալ խանի և նրա Բիթլիսի «հյուքյումեթի» մասին Էվլիյա Չելեբին «Բիթլիս քաղաքի բնութագիրը» վերնագրով հատվածում գրում է. «920 (1514—1515) թվականին Բիթլիսի խանը սուլթան Սելիմ I-ին հպատակություն է ցույց տվել. «հյուքյումեթի» կարգով նրա որդիները մինչև հիմա էլ իշխում են իբրև խան»***։ *Մի այլ հատվածում նա ասում է. «Բիթլիսը Վանի էյալեթում մի հյուքյումեթ է։*

---

* *Էվ. Չելեբիի ուղևորությունը, հատ. I, էյալեթների սանջակները։*

** *Էվ. Չելեբին Բիթլիսում է եղել 1065 (1654) թվականին։*

Ստացված եկամուտը փադիշահը բեյին է տալիս իբրև խաս... Քաղաք եկած քարավանների մաքսն ու տուրքերը խանին են պատկանում... Մուշի դաշտի տուրքերը Երևանի ֆաթիհ սուլթան Մուրադ խանի կողմից շնորհված են Բիթլիսի խանին... Խանի հրամանի տակ կան 70 աշիրեթ և ցեղ։ Ամենագլխավորը Մուդիկի բերդի Ալի բեյն է, որն ունի 700 հրացանաձիգ զինվոր։ Խանը ցանկացած դեպքում ցեղերից կարող է վերցնել 70 հազար զինվոր»*։

Էվլիյա Չելեբին, իր սովորության համաձայն, մանրամասն նկարագրում է Բիթլիսի քուրդ Աբդալ խանի արքայավայել, հարուստ և ճոխ կյանքը, նրա հոյակապ պալատն ու այգիները, հազվագյուտ գրքերով հարուստ նրա գրադարանը։ Ուղեգրի ասելով, Աբդալ խանը իր ժամանակի վերին աստիճանի զարգացած անձնավորություն է եղել։

Այդ բոլոր վկայությունները հաստատում են, որ օսմանյան պետության մեջ քուրդ ցեղերը իրենց բնակեցրած շրջաններում ապրել են կիսանկախ։ Քուրդ բեյերը և խաները իրենց ռազմական ուժով ու զինված աշիրեթներով օսմանյան սուլթանների ուշադրության առարկան են եղել և հաճախ, տարբեր նպատակներով, օգտագործվել են օսմանյան կառավարության կողմից։

14. Ռուզնամեջի — բառացի նշանակում է օրագիր (ռուզնամե) կազմող։ Այդպես էին կոչվում բարձրաստիճան անձանց օրագրեր կազմողները, այսինքն՝ կարևոր դեպքերն ու գործերը արձանագրողները։

15. Խոսքը վերաբերում է սուլթան Մուհամմեդ III-ին, որը իշխել է 1003—1012 (1595—1603) թվականներին։

16. Սուբաշի, սուբաշիություն էին կոչվում վարչական այն ծառայողները, որոնք հսկում էին թաղամասերի, շուկաների կարգապահությանը և մաքրությանը։ Այս պարտականությունից բացի, նրանք գիշերները ևս պատժում էին կարգը խանգարողներին։

17. Արևելյան երկրներում ընդունված սովորության համաձայն որոշ անձանց տրված ածականները հանգավորվել են։ Այսպես Քյաթիբ Չելեբին Շահ Աբբասին անվանում է «Շահի քեմրահ» (մոլորյալ շահ)։

18. Էմարեթ, էմիրլիք, բեյլիք էին կոչվում իսլամական երկրներին հպատակ որոշ երկրամասեր, որոնք կիսանկախ էին և լայն իրավունքներ էին վայելում։ Սրբազան Մեքքան, օրինակ, էմարեթ էր համարվում։

19. Պետք է լինի Զանգի։

20. «Էճլի-սյունեթ» էին կոչվում Մուհամմեդին ու նրա հաջորդներին հավատարիմ մուսուլմանները, այսինքն՝ սյուննի դավանանքին պատկանողները։

21. Վակֆի մյութեվելի: Վակֆ էին կոչվում իսլամական այն անշարժ կալվածները և հողերը, որ մուսուլմանները բարեգործական նպատակով նվիրում էին ջամիներին ու մեդրեսեներին։ Վակֆի վաճառքը արգելված էր։ Վակֆերի գործերի կառավարիչը կոչվում էր մյութեվելի:

22. Կափու կուլի զինվորները, տե՛ս «Թարիխի-Սելանիկի»-ի 21-րդ ծանոթագրությունը։

23. Խութբե, փադիշահի խութբեն—տե՛ս Քյաթիբ Չելեբիի «Ջիհան նյումա»-ի 53-րդ ծանոթագրությունը։

24. Մյուջթեհիդ, մյուջթեհիդ իմամներ — այն իմամները, որոնք մեկնաբանում են սրբազան «այեթները» և «հադիսները»։

Այեթ (հոգ. այաթ) են կոչվում Ղուրանի այն մասերը (սուրա), որոնք

* Էվ. Չելեբիի ուղևորությունը, հատ. IV, էջ 81—90։

իրենց իմաստով չեն կապվում նախորդ և հետագա սուրաների հետ։ Ղուրանի 114 մասերից յուրաքանչյուրը մի սուրա է։

Հադիս են կոչվում փեյղամբարի (մարգարեի) նվիրական խոսքերից ու գործերից յուրաքանչյուրը։

25. Էմիր-ուլ-ումերա. էմիր է կոչվում մի երկրի կամ ցեղի գլխավորը, որը բարձր գերդաստանի պատկանող ազնվատոհմ անձնավորություն պետք է լինի։ Էմիր ուլ-ումերա նշանակում է էմիրների էմիր։ Այս տիտղոսը տրվում էր բարձրաստիճան և ազդեցիկ անձանց։

26. Բառացի՝ թուրքերեն չիմացող փաշա։

27. Նայիման այս խանին անվանում է Ջանիկ խան։

## «ՖԵՋԼԵՔԵ», ՀԱՏՈՐ II

28. Օրթա չավուշ—ենիչերիական օջախում վաշտը կոչվում էր «օրթա»։ Չավուշ էին կոչվում.

ա) փադիշահի կամ պետական բարձր շրջանների հատուկ ծառայողները՝ սպայի աստիճանով.

բ) բանակում տասնապետից բարձր կրտսեր սպաները.

գ) հրամանատարի հրամաններն ու գրությունները հաղորդող անձինք։

Անցյալ դարերում չավուշ բաշին (չավուշների պետը) համարվում էր բարձրաստիճան պաշտոնյա և կատարում էր դատական նախարարի պաշտոն։ Օրթա չավուշը ենիչերիական բանակի կրտսեր սպաներից էր, որին տրվում էին հատուկ հանձնարարություններ։

29. Վալիդե — Տե՛ս «Ջիհան նյումա»-ի 70-րդ ծանոթագրությունը։

30. Օդա, օդա բաշը—օդա՝ բառացի սենյակ, գրասենյակ։ Գյուղերում՝ հյուրասենյակ։ Օդաբաշի էր կոչվում խաների բոլոր սենյակների (օդաների) վերահսկիչը։ Ենիչերիների սենյակները ևս կոչվում էին օդա։ Օդան ուներ սահմանված թվով ենիչերի զինվորներ։ Օդաբաշին զինվորների կարգ ու կանոնին հսկող չորբաջիի օգնականն էր։

31. Թուրք պատմագիրները վրաց ազգային հերոս Գեորգի Սաակաձեին Մաղրավ բեյ են անվանում։

32. Իլիջա—էրզրումից ոչ հեռու գտնվող տաք հանքային ջրերի վայր։

33. Ալ-Օսման — տես «Ջիհան-նյումա»-ի 19-րդ ծանոթագրությունը։

34. «Բալյեմեզ» թնդանոթ—Օսմանյան բանակում գործածվող հին տիպի թնդանոթ։ «Բալյեմեզ»՝ այդ թնդանոթը հնարող իտալացի Բալիյեմեզի անվան աղավաղված ձևն է։

35. Չիբեր-չիբ՝ ծառի ճյուղերից և եղեգնից հյուսված զամբյուղ կամ զամբյուղանման ցածր պարկ։

36. Էսքի-Սարայ—սուլթանի պալատներից մեկը Ստամբուլում։

37. Կափուդան փաշա—կափուդանը իտալերեն capitano բառի աղավաղված ձևն է, ունի ռուսերեն կապիտան բառի իմաստը։ Նշանակում է նավապետ։ Կա առաջին կափուդան, երկրորդ կափուդան։ Ծովային բարձրաստիճան սպաները ևս կափուդան են կոչվում։ Կափուդանի դերյա կամ կափուդան փաշա տիտղոս ունեցող բարձրաստիճան սպաները ծովային մինիստրի դեր են կատարել։

38. Բերդը վիրայով հանձնել նշանակում է անձնատուր լինել։

39. Քիսե (քեսե) — քսակ, դրամի տոպրակ։ Հնում, Թուրքիայում 500 ակչեն համարվում էր մեկ քիսե։

40. Օբա — *քոչվոր մեծ ընտանիք։*

41. Մակսուրե—*փադիշահի համար առանձնացված տեղ ջամիներում։*

42. Աբդալ խան, *տե՛ս «Ֆեզլեքե»-ի I հատորի 13-րդ ծանոթագրությունը։*

43. Անճավատ ռաֆըզի — *ինչպես թուրք պատմագիրներն առհասարակ, այնպես էլ Քյաթիբ Չելեբին իրանցիներին, որպես շիա դավանանքին պատկանողների, համարում է «անհավատ»։ Բացի դրանից, նրանք նաև «ռաֆըզի» են։ Շիա դավանանքին պատկանող որոշ աղանդավորներ կոչվում էին ռաֆըզի, իսկ այդ աղանդը ռաֆըզիլիք։*

44. Էրզրումի Նեֆի էֆենդի. *ինչպես Քյաթիբ Չելեբին է նշում, այդ դարաշրջանի հայտնի բանաստեղծ Նեֆին սուլթան Մուրադ IV-ի հրամանով խեղդամահ է արվում։ Թուրք պատմագիրները նշում են բանաստեղծի բացառիկ վարպետությունը հատկապես երգիծական գրվածքներում, որոնցից մեկը պատրվակ է հանդիսանում նրա սպանության համար։*

45. Ռում—*այստեղ գործ է ածվում թուրք, օսմանցի իմաստով։*

46. Վեսսալամ —*ողջ լինես։ Ընդհանրապես գործ է ածվում նախադասության վերջում «ահա բոլորը» իմաստով։*

47. Կասրի-Շիրինի *(Զեհաբի) հաշտության պայմանագիրը։*

*Այդ պայմանագրով սահմանված թուրք-իրանական սահմանը հիմնականում պահպանվել է մինչև օրս, միայն Անդրկովկասում Իրանին թողնված Երևանը հետագայում անցնում է Ռուսաստանին։*

*Կասրի-Շիրինը Գերմանշահից 160 կմ դեպի արևմուտք, Իրանի և Իրաքի սահմանի վրա ընկած Սասանյանների ժամանակաշրջանից մնացած ավերակ գյուղաքաղաք է։*

*Հաշտության պայմանագիրը կնքվել է Կասրի Շիրինի մոտ գտնվող Զեհաբ անունով գյուղում, որտեղ այդ ժամանակ գտնվում էր օսմանյան բանակի գլխավոր շտաբը. որոշ աղբյուրներում գրվում է «Զոհաբ»։*

48.Թիմարի գումարի ճավելում. *Քյաթիբ Չելեբիի կողմից հիշատակված «Թիմարի գումարի հավելումը» երկրի տնտեսության, գյուղացիության (ռայաների) դրության վատթարացման տեսակետից չափազանց կարևոր է։ Պատմագրի խոսքերը պարզ կերպով ցույց են տալիս Օսմանյան կայսրության ֆինանսական ծանր վիճակը։*

*Ինչպես թուրք պատմագիր-տարեգիրները առհասարակ, այնպես էլ Քյաթիբ Չելեբին, շատ քիչ է զբաղվել նման հասարակական տնտեսական կարևոր հարցերի լուսաբանմամբ։ Այստեղ Քյաթիբ Չելեբին բավականանում է հիշելով այն միջոցառումը, որը պետությունը պետք է հաներ ծանր ֆինանսական դրությունից։ Անտարակույս, այդ հարկերի հավելումը առաջին հերթին դրվել են գյուղացիության վրա։*

## «ԹԱՐԻԽԻ ՍԵԼԱՆԻԿԻ»

1. Ամասիայի ճաշտության պայմանագիրը, *որը հայտնի է «Օսմանլի-Սեֆեվի» պայմանագիր անունով, կնքվել է Թուրքիայի և Իրանի միջև 962 (1554) թվականին սուլթան Սուլեյման Կանունիի և Շահ Թահմասբի իշխանության շրջանում։ Այդ պայմանագրով որոշվեց երկու երկրների սահմանները՝ հիմք ընդունելով օսմանցիների վերջին նվաճումները (Արդահանի, Գեոլեի, Ջարշատի—Արփաչայի շրջաններն Իրանից անցան Թուրքիային), 2) վերջ տրվեցին սուննի և շիա դավանանքների միջև ստեղծված թշնամություններին, 3) թույլտվություն և*

*օժանդակություն պետք է տրվեր իսլամական սրբազան վայրերը Իրանից գնացող ուխտավորներին (հաջի)։*

*Ամասիայի հաշտության պայմանագրով Արևելյան Անատոլիան ու Իրաքը վերջնականապես անցան Թուրքիային։*

2. **Ֆերիդուն Ահմեդ բեյը** *XVI դարի երկրորդ կեսի Թուրքիայի հայտնի պատմագիրներից է, նա միաժամանակ վարել է մի շարք կարևոր պետական պաշտոններ։*

*Տեքստում հիշատակված «Մյունշեաթ-ուս-Սալաթին»-ը պատմական փաստաթղթերի ժողովածու է. այն պարունակում է իշխողների, վեզիրների, ուլեմաների և ումերաների տիտղոսներին վերաբերող մի գլուխ՝ «Դրախտի բանալի» խորագրով, բարոյախոսական մի գիրք, մարգարեի (փեյղամբար) և նրա մերձավորների նամակները, Օսման Ղազիից սկսած՝ օսմանյան պատմության առաջին երեք դարերին վերաբերող քաղաքական, վարչական և զինվորական գրությունների պատճենները։ Գոյություն ունի ավանդություն, ըստ որի բնագրում եղել է 1880 փաստաթուղթ։ Տպագրված գրքում կան որոշ կրճատումներ և հավելումներ։ Ֆերիդուն Բեյի աշխատությունը տպագրվել է երկու անգամ՝ երկու հատորով. առաջին անգամ՝ 1265 (1848), երկրորդ անգամ՝ 1274—1275 (1857—1858) թվականին։ Երկրորդ տպագրությունն ավելի կատարյալ է։*

3. **Նիշանջի, Նիշանջիլիք** — *տե՛ս Քյաթիբ Չելեբիի «Ջիհան Նյումա»-ի 2-րդ ծանոթագրությունը։*

4. **Արևելյան սահման** — *այդ ժամանակաշրջանում օսմանյան պետության արևելյան սահմանը, այսինքն Իրանի հետ Արևելյան Անատոլիային, Անդրկովկասին և Իրաքին կից սահմանները, բացառիկ կարևորություն են ստանում՝ կապված Իրանի և Թուրքիայի միջև շարունակվող երկարատև պատերազմական գործողությունների և թշնամության հետ։ Այդ իսկ պատճառով արևելյան սահմանի էյալեթների վարչական-ռազմական ղեկավարները՝ բեյլերբեյիները, որոնք նշանակվում էին հայտնի վեզիրներից և փաշաներից, ունեին կարևոր և պատասխանատու վարչական-քաղաքական ու ռազմական ֆունկցիաներ։ Հիշատակված հրահանգը ևս վկայում է այդ բեյլերբեյիների պատասխանատվության մասին։*

5. **Ավազանի** *(«այան») — արաբերեն բառացի նշանակում է «աչքեր»։ Նոր թուրքերենում «այան» նշանակում է «ծերակուտական», «մեջլիսի-այան»՝ ծերակույտ։ Պատմական իմաստը բոլորովին այլ է։ Այան էին կոչվում նահանգական քաղաքների և գավառների հասարակության ազդեցիկ, բանիմաց և հարուստ ներկայացուցիչները, որոնք երբեմն ընտրվում էին հասարակության և կամ առաջ էին քաշվում բեյլերբեյիների կողմից ու հաստատվում էին արքունիքում՝ «այան» տիտղոսով։ Այանները որոշ չափով վերահսկում էին բեյլերբեյիների, սանջակի բեյերի գործունեությունը (հարկերի որոշման և բաշխման, տեղական ծախսերի և տեղական բնույթի այլ գործերի գծով)։ Բեյլերբեյիները և վարչական մյուս բարձր պաշտոնյաներն իրենց գործունեության ընթացքում ստիպված էին հաշվի առնել այանների կարծիքն ու ցանկությունները, քանի որ վերջիններս կարող էին բողոքել արքունիքին և կենտրոնական կառավարությանը։*

*Հետագայում այանները, օգտագործելով իրենց հարստությունն ու ազդեցությունը, փաշաների և այլ բարձրաստիճան պաշտոնյաների գործակիցները դարձան՝ ժողովրդական մասսաներին շահագործելու և ճնշելու գործում։*

6. **986 (1578) թվականի թուրք-իրանական երկարատև և կատաղի պատերազմը,** *որի գլխավոր նպատակն է եղել Վրաստանի և Շիրվանի գրավումը, հայտ-*

նի է «Չըլդըրի պատերազմ» անունով։ Այդ պատերազմի նախաձեռնողները լինում են թուրքերը, որոնք օգտվելով Շահ Թահմասբի կեսդարյա իշխանությունից հետո Իրանում սկսված ներքին խռովությունից ու նրա թուլությունից, ձեռնարկում են մեծ արշավանք (պաշտոնական տերմինով՝ «աջեմ սեֆերի»)։ Այդ պատերազմի սերդարը լինում է Լալա Մուստաֆա փաշան, իսկ Չըլդըրի պատերազմի հաղթանակի կազմակերպիչը՝ Յոզդեմիր-օղլի Օսման փաշան։

7. **Ռաֆըզի** — *տե՛ս Քյաթիբ Չելեբիի «Ֆեզլեքե»-ի II հատորի 43-րդ ծանոթագրությունը։*

8. **Թուղ** — *Թուրքիայում ընդունված և երկար ժամանակ գործածության մեջ եղած հատուկ շքանշան, որը պատրաստված էր ձիու պոչի մազերից։ Թուղ կրելու իրավունքը տալիս է փադիշահը։ Թուղերի քանակը կապված էր աստիճանի բարձրության հետ։ Այսպես, կային մեկ, երկու կամ երեք թուղավոր փաշաներ։ Այստեղ «իսլամական թուղը» գործ է ածվում թուրքական շքանշան, դրոշ իմաստով։*

9. **Ջեբելու** — *տե՛ս Քյաթիբ Չելեբիի «Ջիհան նյումա»-ի 22-րդ ծանոթագրությունը։*

10. *Նկատի ունի Կախեթի Ալեքսանդրե II թագավորին։*

11. **Կընըք գետ** — *թուրքերը այսպես են կոչում Իորա գետը։*

12. **Սիփահսալար** — *սիփահ կամ սիփահի բառացի նշանակում է զինվոր, մարտիկ. սալար՝ գլխավոր պետ, հրամանատար։ Սիփահսալար՝ բանակի հրամանատար, այլ խոսքով սերդար, սերասքեր։*

13. **«Սյուննիական հարկ» և միանվագ հարկ:** *Պատմագիր-տարեգիր Սելանիկին և առհասարակ թուրք պատմագիրները համակրանքով են խոսում Շիրվանի մուսուլմանական բնակչության մասին, որովհետև նրանք պատկանում են իսլամական սյուննի դավանանքին։ Դրան հակառակ, նույնքան անարգանքով և թշնամությամբ են նրանք խոսում իսլամական շիա դավանանքին պատկանող իրանցիների (կըզըլբաշների, աջեմների) մասին։*

*Ինչպես նշում է Սելանիկին, իրանցիները՝ Շիրվանի մուսուլմաններին ճնշելու և ստորացնելու համար նրանց վրա նշանակել են նաև «սյուննիական» կամ «սյուննիության հարկ», որ նրանք պարտավոր էին վճարել որպես միանվագ հարկ, (մակթու)։*

14. **Նովրուզ.** *նով՝ պարսկերեն նոր, րուզ օր։ Նովրուզ՝ նոր օր։ Հին իրանական տոմարով՝ տարեսկիզբ, նոր տարի, որ զուգադիպում էր գարնան սկիզբը համարվող մարտի 9-ին։ Նովրուզ բայրամը՝ Նովրուզի տոն։*

15. **Կարսի և Երևանի բերդերը** *թուրք-իրանական պատերազմի ժամանակ խիստ կարևոր դեր են կատարել։ Երևանը համարվել է Իրանի բանալին, իսկ Կարսը՝ Երևանի նախադուռը։ Օսմանյան բանակների ղեկավարները միշտ նկատի են ունեցել այս բերդերի կարևորությունը և իրենց բոլոր արևելյան արշավանքների ժամանակ՝ Անդրկովկասում և իրանական Ադրբեջանում այդ բերդերը ծառայեցրել են իրենց նվաճումների համար։*

*Սելանիկին և մյուս թուրք պատմագիր-տարեգիրները հիշատակում են Կարսի ու Երևանի բերդերի վերակառուցմանը և ամրացմանը վերաբերող թուրքական կառավարության մի շարք միջոցառումները։*

*Այդպիսի մի նախաձեռնություն է նաև 987 (1579) թվականի Կարսի վերանորոգումը, որի մասին Սելանիկին խոսում է շատ համառոտակի, սակայն թուրք մյուս պատմագիրները այդ առթիվ տալիս են ավելի հետաքրքիր տեղեկություններ։*

ժամանակակից թուրք պատմաբան Ի. Հ. Դանիշմենդը թուրքական աղբյուրներից քաղել է նյութեր, որոնք վերաբերում են Կարսի և շրջակա մյուս բերդերի ու քաղաքների 1579 թվականի շինարարական աշխատանքներին։

Դանիշմենդի ասելով, այդ թվականին Կարսում վերջանում է «Կարս քաղաքի շինարարությունը»։ Բերդի կառուցումը կատարվում է ընդամենը 58 օրում։ Ամրացվում են Նարնկալե անունով հայտնի ներքին բերդը և նրա աշտարակները, արտաքին բերդի շրջապատում մեծ խրամատ (փոս) է փորվում, բերդի երեք կողմերում հսկիչ աշտարակներ են կառուցվում։ Այս ռազմական շինարարություններից բացի, կառուցվում են նաև մի պալատ, մեդրեսեներ, երկու կամուրջ Կարս-Ջայի վրա, նրբակերտ և փառավոր մինարեներով հինգ ջամի, բնակելի տներ, բաղնիքներ, ջրաղացներ և այլն։ Դանիշմենդը ասում է, որ մինչև օրս էլ պահպանվել են թուրքական բանակի այդ քաղաքակրթական գործերից մի քանիսը, օրինակ, Էվլիյա ջամին, հայերի կողմից այրված բեյլերբեյիի պալատը, որն այսօր էլ աչքի է ընկնում իր հոյակապությամբ։ Ամենամեծ գործերից է նաև Կարս-Ջայից բերված ջրուղին, որը ջուր է ապահովում խանդակների և ժողովրդի համար։

«Կարսը, որի քարերն ու հողը թուրքերի արյունով են շաղախված (?), ոչ միայն ռազմական այլև քաղաքաշինության տեսակետից զուտ թուրքական գործ էր (?!), ազգային մի կառուցում՝ բանակի զինվորները ներկայացնող բոլոր վիլայեթների կոլեկտիվ աշխատանքի արդյունք...։ 52 օր անընդհատ մոտ հարյուր հազար զինվորներ միայն Կարսում չեն աշխատել։ Նրանք միաժամանակ կառուցել են Կիչևանի բերդը և այդ ժամանակ իրանցիներից գրաված Անիի, Մաղազբերդի և Կաղըզմանի բերդերը, որոնք կարծես դիվային հարվածներով գետնից դուրս են ցցվել, և այս կերպով ստեղծվել է ամրությունների մի անառիկ ցանց»*։

**16. Երևանի կողոպուտը Թոքմաք խանի կողմից,** ինչպես նշում է Սելանիկին, տեղի է ունեցել 987 (1579) թվականի հոկտեմբերի 3-ին և 4-ին։ Օսմանցիների (Ջաֆեր փաշայի) հարձակումից և իրանցիների (Թոքմաք խանի) փախուստից մեծապես տուժել են հատկապես հայերը, որի մասին հիշատակում է նաև Դանիշմենդը։

Կարսի վերակառուցումը ավարտելուց հետո՝ 30 հազարանոց հեծելազորով, Ջաֆեր փաշան Կարսից շտապ արշավում է Երևանի վրա։

Ըստ թուրք աղբյուրների, նա երկու կամ երեք օրում հասնում է Երևան։ Խորամանկ Թոքմաք խանը, մինչև թուրքական բանակի գալը, կողոպտում, թալանում, հրդեհում է Երևանը ու նրա շրջակայքը, գերի է տանում 20 հազար մարդ, որոնց մեծ մասը լինում են հայեր։ Դանիշմենդը նշում է, որ վերջիններին վաճառելու համար շտապ կարգով ուղարկվում են տարբեր շուկաներ**։

987 (1579) թվականի Երևանի այդ բարբարոսական ավերումից մի քանի տարի հետո օսմանցիները Երևանը գրավելու նոր միջոցների են ձեռնարկում։ 991 (1583) թվականին Սերդար Ֆերհադ փաշան հսկայական բանակով շարժվում է Երևանի վրա։ Երևանի վալին՝ Ուսթաջլու Թոքմաք խանը թողնում է Երևանը և ետ քաշվում։ Օսմանցիները մի «պտույտով» գրավում են Երևանը և անմիջապես սկսում Երևանի բերդի կառուցման աշխատանքները։ Թուրք պատմագիրների վկայությամբ այդ կառուցումը ավարտվում է 45 օրում։ Պատմագիր Գելիբոլուլու Ալին այդ մասին գրում է. «Հիշյալ Թոքմաք խանի պալատի շուրջը պարիսպներ շինեցին

---

* I. H. Danısmend, Izahlı Osmanli Tarihi Kronolojisi, Istanbul, 1950, III c., s. 44.

** Danişmend, նշվ. աշխ., էջ 45։

և այդ պալատի բարեշեն մասերը բեյլերբեյիների պալատի վերածեցին։ Ներքին բերդում կառուցեցին 8 աշտարակ, մի ջամի և պարսպի 725 պատնեշ։ Արտաքին բերդը լրացրին 43 աշտարակներով և պարսպի 1726 պատնեշներով։ Բերդում «շահանի» թնդանոթ դրեցին։ Վերոհիշյալ աշխատանքները ավարտվեցին 45 օրում»*, Երևանում նշանակվում է 5600 զինվորներից կազմված պահակազոր։ Բացի այդ, շրջակայքում՝ Շորագյալի, Թալինի, Ակչակալայի, Սուրմալուի, Իգդիր-Կարակալայի և Բեջենի բերդերում նույնպես պահակազորեր են նշանակվում։ Երևանի բեյլերբեյի է նշանակվում Վանի բեյլերբեյի Ջաղալե Ջադե Յուսուֆ Սինան փաշան, որը միաժամանակ պահպանում է իր էյալեթը և ստանում «վեզիր» տիտղոսը։

17. Սեֆեվիների 988 (1580) թվականի հաշտության առաջարկը. *Թուրք պատմագիրների տված տեղեկությունների համաձայն, սովորական քաղաքական խաղի բնույթ է կրել սուլթան Սուլեյման Կանունիի ժամանակ գոյություն ունեցող սահմանները հաշտության հիմք ընդունելու Իրանի առաջարկը։ Ինչպես հայտնի է, օսմանցիները մերժել են այդ առաջարկը։*

18. Թեմուր կափու, Բաբ էլ-էբվաբ, Դերբենդ — *հայտնի ամրակուռ բերդ Դաղստանում. արևելքի պատմագիրները՝ Թեմուր կափու, արաբները՝ Բաբ էլ-էբվաբ (Դռների դուռ) են անվանել։ Ըստ ավանդության, Դերբենդը կառուցել է Մեծն Ալեքսանդրը, հետո գրավել և ամրացրել է Նեվշիրվանը։ Այս բերդաքաղաքումն է ապրել նաև Հարուն էլ-Ռաշիդը։*

19. Կըփչաքի դաշտը *(Դեշթի Կըփչաք). Թուրքական պատմության մեջ Ռուսաստանի հարավային դաշտավայրը կոչվում է Դեշթի Կըփչաք։ Չինգիզ խանի մահից հետո այսպես է կոչվել նաև այդ դաշտավայրում, Ղրիմի թերակղզում և Սև ծովի հյուսիսային մասում ստեղծված պետությունը, որը հետագայում բաժանվել է յոթ խանությունների։*

20. Օջաքլըք, *տե՛ս «Ջիհան նյումա»-ի 57 ծանոթագրությունը։*

21. Ջեբեջի—*Թուրքական բանակը XVI—XVII դարերում բաժանվում էր երկու հիմնական մասի ա.* Կափու կուլիի *և բ.* էյալեթի զինվորներ: *Կափու կուլիի զորքերը փադիշահական զինվորներն էին՝ «խասսե ասքերի» և բաժանվում էին հետևակային ու հեծյալ չորս մասերի: Հետևակային զորամասերի մեջ մտնում էին 7 օջաքներ, որոնցից մեկը կոչվում է* ջեբեջի: *Ջեբեջիները նորոգում, բաժանում և պահում էին բանակի զենքերը։ Ջեբեջին չպետք է շփոթել թիմարատերերի և զեամեթի տերերի «ջեբելու» կոչված զինվորների հետ։*

22. Թերաքքի, թերիքքի կարգ ունեցող զինվորները *ունեին իրենց որոշակի ռոճիկը, որ կոչվում էր «ուլուֆե»։ Թերաքքին այստեղ հավելումի իմաստ ունի։ Այն զինվորները, որոնք հատկացված ռոճիկից բացի, հավելման կարգով ստանում էին նոր գումար, կոչվում էին թերաքքիով զինվորներ։*

23. Զիլկադե ամիսը—*Թուրք պատմագիրները առհասարակ գործ են ածում իսլամական լուսնային տարվա ամիսների անունները. դրանք են՝ մուհարրեմ, սեֆեր, ռեբի-ուլ-էվվել, ռեբի-ուլ-ախըր, ջեմազիել-էվվել, ջեմազիել-ախըր, ռեջեբ, շաբան, ռամազան, շեվվալ, զիլկադե, զիլհիջջե։*

*Տե՛ս «Թուրքական աղբյուրները...», հատ. Ա, էջ 339*

24. Համզա Միրզան՝ *Իրանի Խուդաբենդե շահի որդին (շեհզադե), հերոսությամբ կռվել էր օսմանցիների դեմ։ 994 (1586) թվականին, քնած ժամանակ նա սպանվում է իր ծառայողներից մեկի ձեռքով։*

---

* Danismend. *Նշվ. աշխ., էջ 69։*

Իրանի գահաժառանգի սպանությունը քաղաքական բնույթ է կրել։ Թուրք պատմագիրների ասելով, այդ սպանությունը կազմակերպել են թուրքմեն ցեղերի բեյերը, որոնք թշնամացել էին Համզա Միրզայի հետ՝ Իրանի ժառանգության խնդրով։

25. **Աստրախանի (Էժտերխանի) արշավանքը։** Պատմագրի հաղորդած տեղեկություններից պարզվում է, որ Աստրախանի վրա արշավելու նախաձեռնողը եղել է Օզբեկի Աբդուլլահ խանը։ Աստրախանի գրավման խնդիրը կապված է եղել Վոլգա-Դոն գետերի միջև ջրանցք կառուցելու փորձի հետ, որը տեղի է ունեցել 977 (1569) թվականին, Սոքուլլու Մուհամմեդ փաշայի սադրազամության օրոք։ Ջրանցքի կառուցման փորձի և Աստրախանի արշավանքի մասին խոսում են թե XVII դարի պատմագիրները (Փեչեվին, Քյաթիբ Չելեբին, Սելանիկին), և թե ժամանակակից թուրք պատմաբանները (Ուզունչարշըլըն, Դանիշմենդը), ինչպես նաև ժամանակակից թուրքական պատմագրության պետական-պաշտոնական աղբյուրը հանդիսացող «Թարիխը», որտեղ կարդում ենք.

«Ընդհանուր թուրքական պատմության տեսակետից Սոքուլլուի կառավարության շրջանի ամենանշանակալի դեպքը այդ խելացի և գիտակ վեզիրի լուրջ նախաձեռնությունն է, որը կարծես ապագան կանխագուշակելով, հասկացել էր այդ գործի մեծ կարևորությունը օսմանյան պետության համար և ցանկացել էր արգելք լինել Մոսկվայի ցարիզմի առաջխաղացմանը թուրքական երկրներում և թուրքական աշխարհը կապել Օսմանյան կայսրության հետ։ Սելիմ II-ի ժամանակ, Թեն [Դոն] և Իթիլ [Վոլգա] գետերի իրար մոտեցող ոլորանների միջև ջրանցք բաց անելով և այդ ջրանցքի միջոցով օսմանյան բանակն ու նավատորմը Սև ծովից հեշտությամբ Կասպից ծովը փոխադրելով, [փաշան] նպատակ ուներ մի կողմից հյուսիսից սպառնալ օսմանյան փադիշահության մրցակից և թշնամի Իրանի Շահությանը, մյուս կողմից՝ ճանապարհ բաց անելով դեպի Միջին Ասիա, Իթիլ գետի վրա գտնվող Կազանի և Հաջը-Թարհանի (Աստրախանի) խանությունները նվաճած Մոսկվայի ցարիզմը հեռացնել այդ վայրերից»։

Կազանի և Աստրախանի թուրքական խանությունների գրավումը Ռուսաստանի կողմից, թուրք պատմագիրների ասելով, խիստ բացասական ազդեցություն է թողել օսմանյան թուրքերի և Միջին Ասիայի «թուրքական աշխարհի» վրա։

Փեչեվին դառնությամբ նշում է, որ այդ իսլամական ժողովուրդներից «կենդանի շունչ անգամ չի մնացել»։ Քյաթիբ Չելեբիի ասելով, «Մոսկվայի քյաֆիրների դաժանությանը ենթակա մնացածները ներկայումս աշխարհի ապավեն Դարուլյահին** խնդիր են ներկայացրել»։

Համմերը Աստրախանի արշավանքի մասին գրում է, որ 977 (1569) թվականին օսմանյան նավատորմը Ստամբուլից շարժվեց Ազովի ծովը։ Բանակն ուղարկվեց երկու նվագով, սկզբում 3000 ենիչերիներ, ապա 5000 ենիչերիներ, 3—5 հազար բանվոր, 20—30 հազար սանջակի զինվոր և սիփահի, որոշ թվով մասնագետներ և ինժեներներ, ինչպես նաև մեծ քանակությամբ գործիքներ։ Ղրիմի խան Դևլեթ Գիրայը 30 կամ 50 հազար թաթար զինվորներով միանում է օսմանյան բանակին***։

Ըստ մի շարք պատմագիրների, ջրանցքի աշխատանքները շարունակվել են մոտ երեք ամիս. նախագծված աշխատանքի 1/3-ը կատարվել է և «թշնամուց

---

* „Tarih“, c. III, Jeni ve Yakin zamanlar, 1933, Ankara, s. 63—64.

** Սուլթանական արքունիքի Բարձր Դուռը։

*** J. de Hammer. Histoire de l'Empire Ottoman, Paris, v. XVI, p. 322.

ռչ մի վախ չի եղել»։ Ի. Հ. Դանիշմենդը նշում է, որ Իվան IV-ը 15—20 հազարանոց բանակով հարձակվել է թուրքերի վրա և խանգարել ջրանցքի կառուցման աշխատանքները*։

Աստրախանի արշավանքի և ջրանցքի բացման աշխատանքների անհետևանք մնալու գործում, թուրք պատմագիրների կարծիքով, Ղրիմի խանը վախենալով, որ գործի հաջողության դեպքում Ղրիմը վտանգի կարող է ենթարկվել, խիստ ողբերգական խաղ է խաղացել։

XVIII դարի թուրք պատմագիր Ջևդեթ փաշան իր «Թարիհի Ջևդեթ»-ում գրել է. «Փոխանակ Մաջարիստանի [Հունգարիա] և Խրվաթիստանի նվաճումով զբաղվելու, օսմանյան պետության համար ավելի ձեռնտու էր զբաղվել Կազանի և Աստրախանի էյալեթների գրավմամբ ու պահպանմամբ, որովհետև Կովկասի, Աստրախանի և Կազանի բնակիչները, մոտիկության, ցեղակցության և կրոնական և դավանական միության տեսակետից կենթարկվեին օսմանյան կառավարության ազդեցությանը և կմիանային Օսմանյան երկրին։ Այդ դեպքում Ղրիմն էլ աստիճանաբար կդառնար պետության մյուս էյալեթների նման։ Աստրախանի և Կազանի միջոցով Մեծ Թաթարիստանը ևս կենթարկվեր օսմանյան պետության ազդեցությանը» ։

Աստրախանի պաշարումը վերացվում է, ջրանցքի աշխատանքները դադարեցվում են և մնում անավարտ. բանակն ու բանվորները վերադառնում են մեծ դժվարություններով։ Մի քանի պատմագիրների ասելով, շատերը զոհվում են ռուսական սահմանամերձ շրջաններից։ Կենդանի են մնում և վերադառնում միայն 17 հազար մարդ։ Ի. Հ. Դանիշմենդը, իր վերոհիշյալ գրքում մանրամասն խոսելով այդ արշավանքի մասին, տալիս է Օսմանյան կայսրության հետապնդած նպատակները, որոնք հանգում են հետևյալին։

1) Աստրախանի խանության վերականգնումով Ռուսաստանին Կասպից ծովից հետ մղել դեպի հյուսիս և նրան զրկել սև-ծովյան ճանապարհից։ 2) Վերջ տալ Ղրիմին սպառնացող ռուսական վտանգին և ապահովել նրա անկախությունը։ 3) Գրավել և միացնել Կասպից և Ազով ծովերի միջև եղած հողերը։ 4) Ապահովել Հյուսիսային և Հարավային Կովկասի գրավումն ու միացումը։ 5) Ծովային ճանապարհով հյուսիսից սպառնալ Իրանին և հեշտացնել բանակի փոխադրությունը [դեպի Իրան]։ 6) Կապ հաստատել Թուրքիայի ու Միջին Ասիայի միջև և այլն***։

26. Մակրու, մակրուի կապել. մակթու բառացի նշանակում է գինը որոշված, առանց չափի և կշռոքի, միանվագ վաճառք։ Ըստ եկամուտի և բերքի գանձված հարկից բացի, կար նաև մակթու գանձվող հարկ։ Այդպիսի հարկատվության համար գործ էր ածվում «մակթուի կապել» տերմինը։ Թուրքիայում կային վիլայեթներ, որոնք «մակթուի էին կապված», այսինքն վճարում էին միանվագ գումար. դրանք էին Բաղդադի, Բասրայի էյալեթները, Եգիպտոսը և այլն։ Դրանց կողմից տարեկան մի անգամ վճարված մակթուն կոչվում է «իrsալիյե»։

27. Ուլուֆե—զինվորներին տրվող ռոճիկը։ Ըստ սովորության, ուլուֆեի բաժանումը կատարվում էր հատուկ հանդիսավորությամբ, հրավիրվում էր սադրաղամի և վեզիրների դիվան։ Ուլուֆեն տրվում էր ըստ զինվորների խմբերի, որը զորանոցում բաժանվում էր առանձին զինվորների միջև։

---

* Danişmend, նշվ. աշխ., հատ. II, էջ 382—387։

** Ahmed Cevdet, Tarlhi Osmanı, c, 1, s. 241—242.

*** Danismend, Նշվ. աշխ., էջ 383։

Ուլուֆեն տրվում էր տարեկան չորս անգամ։ Դրանք հայտնի էին հատուկ անուններով. «լեզեզ» «մասար» «ռեջեջ» և «ռեջեն»։ Այդ բառերը կազմված էին լուսնային յուրաքանչյուր տարվա երեք ամիսների անուններից վերցրած մեկական տառերից, (օրինակ, լեզեզը կազմված էր շեվվալ, զիլկատե և զիլհիջջե ամիսների լ, զ, զ, տառերից)։

28. Ստամբուլի պայմանագիրը կնքվել է 998 (1590) թվականի մարտի 21-ին։ Դա Իրանի և Թուրքիայի միջև կնքված երկրորդ պայմանագիրն էր։ Հաշտության պայմանները տրված են Ֆերիդուն Բեյի «Մյունշեաթում»․ տե՛ս սույն գլխի ծանոթագրությունը։ Նոր պայմանագրով Թուրքիային են անցնում օսմանցիների կողմից գրավված վայրերը՝ Թավրիզը, Կարաջադաղը և դրանց նահիյեները, Գենջեի և Ղարաբաղի շրջանները, Շիրվանն ու նրա շրջակայքը, Գյուրջիստանն ու նրան ենթակա մասերը, Նիհավենդը իր շրջակայքով, Լորիստանն ու նրա շրջակայքը։ Դավանական հարցում նախկին պայմանները մնում են ուժի մեջ։ (Տե՛ս սույն գլխի 1 ծանոթագրությունը)։

29. Աջեմի օղլանների դևշիրմեն. «դեվշիրմե» նշանակում է հավաքել, ժողովել։ Ենիչերիական բանակը համալրելու համար Թուրքիայի ոչ-մուսուլման ժողովուրդների երեխաների բռնի հավաքումը հայտնի է «դեվշիրմե» (Մանկահավաք) անունով։ Օսմանյան սուլթանների հավաքագրած երեխաները կոչվում էին «աջեմի օղլաններ» (անփորձ, անվարժ տղաներ), որոնք կրթվում և դաստիարակվում էին հատուկ զորանոցներում՝ իսլամական և զինվորական ոգով։ Ուսման և դաստիարակության երկարատև ընթացքը ավարտելուց հետո, աջեմի օղլանները բաժանվում էին զինվորական տարբեր դասերի՝ ենիչերիների, սիփահիների, սիլահդարների, ուլուֆեջիների, ղարիբների և ազաբների։ Աջեմի օղլանների մի մասն էլ ծառայության էր մտնում արքունիքում կամ վեզիրների և բեյերի մոտ, մյուս մասը աշխատում էր նավակների վրա՝ որպես թիավար և ջամիների շինարարությունում՝ որպես բանվոր։

Արքունիքում ծառայության մտած աջեմի օղլաններից եղել են այնպիսիները, որոնք աստիճանաբար բարձրանալով հասել են մինչև վեզիրության, սադրազամության և այլ բարձր աստիճանների ու կոչվել են «դեվշիրմե» սադրազամներ և վեզիրներ։

30. Չորբաջի — օգտագործվում է մի քանի իմաստով։ Գյուղում հարգված, բարեգործ և սպիտակամորուք մարդիկ կոչվում էին չորբաջի։ Քրիստոնյա հպատակների (գլխավորապես գավառներում) առևտրական և պատվավոր դասին պատկանողները նույնպես չորբաջի էին կոչվում։ Ենիչերիական բանակում միևնույն կաթսայից չորբա (սուպ) ստացող զորքերի խմբի պետը (հարյուրապետի աստիճան ունեցող սպան) նույնպես չորբաջի էր կոչվում։ Տվյալ հատվածում օգտագործված է վերջին իմաստով։

31. Ջիհադ, ղազա—իսլամական կրոնի հաղթանակի համար անհավատների (քյաֆիր) դեմ մղված պատերազմը։

32. Հավանաբար աշխարհի ոչ մի քաղաքում այնքան հաճախակի և կործանարար հրդեհներ տեղի չեն ունեցել, որքան Ստամբուլում։ Թուրք պատմագիրներն իրենց գործերում արձանագրել են մեծ և կործանարար հրդեհների բազմաթիվ դեպքեր։

Ի. Հ. Դանիշմենդը 977 (1569) թվականի սեպտեմբերի 19-ին տեղի ունեցած մեծ հրդեհի մասին իր «Խրոնոլոգիա»-ում գրում է. «Այս մեծ հրդեհը տևել է 7 օր 7 գիշեր... մի քանի օտար աղբյուրների տվյալներով, այս սոսկալի հրդ-

դեհի հետևանքով այրվել է 36 հազար տուն, բայց անտարակույս դա չափազանցություն է։ Քաղաքաշինության տեսակետից Ստամբուլի դեմքը շատ հաճախ փոփոխող նման հրդեհների պատճառած ամենամեծ վնասներից մեկը լինում էր այն, որ բազմաթիվ կուլտուրական հուշարձաններ և մեր ազգային պատմությունը լուսաբանող հազարավոր փաստաթղթեր մոխիրի էին վերածվում... Ավելի հետաքրքիր է հետևյալ փաստը... Հրդեհը մարելու եկած ենիչերիները, առանց ղեկավարի մնալով, սկսում էին կողոպուտը և թալանը, որով պատճառ էին դառնում հրդեհի տարածմանը»*։

Ստամբուլի այդպիսի հաճախակի հրդեհների հիմնական պատճառն այն էր, որ քաղաքի հին թաղամասերի շինությունները ընդհանրապես փայտաշեն էին, փողոցները վերին աստիճանի նեղ և տները շատ խիտ, չկային հակահրդեհային միջոցառումներ, բնակչության կուլտուր կենցաղային մակարդակն էլ շատ ցածր էր։

Ստամբուլի հրդեհները անտարակույս մեծ պատուհաս են հանդիսացել հատկապես բնակչության ցածր դասերի համար, որոնք ստիպված են եղել ապրել բնակարանային շատ վատ պայմաններում, իսկ հրդեհներից հետո էլ մնացել են անօթևան և անօգնական։

33. Եդի-կուլե—հայտնի բերդ Ստամբուլում, որտեղ բանտարկվում էին նշանավոր մարդիկ։

## «ԹԱՐԻԽԻ ՍՈԼԱՔ ԶԱԴԵ»

1. Մեկդին — իսլամական 12 իմամներից տասներկուերորդն է, որի գալըստյանը սպասում էին մուսուլման հավատացյալները։

2. XVI—XVII դարերում Օսմանյան կայսրության վարչական բաժանման համաձայն Զյուլկադերիյեի վիլայեթը (կամ էյալեթը) ուներ վեց սանջակ՝ Մարաշ, Մալաթիա, Այնթաբ, Կարս-Զյուլկադերիյե և Սամսատ։

3. Քեֆե—տե՛ս Քյաթիբ Չելեբիի «Ջիհան նյումա»-ի 67-րդ ծանոթագրությունը։

4. Խոսքը վերաբերում է Վանի բերդին (ժայռին)։

5. Կրոնի մարտիկներ — Թուրք պատմագիրները օսմանյան բանակի զինվորներին անվանել են իսլամական կրոնի համար մարտնչողներ (մարտիկներ)։

6. «Սերդեն գեչտի»— բառացի նշանակում է «գլխից ձեռք քաշեց»․ Օսմանյան բանակի «աքընջիների» (գրոհողների, արշավողների) զորամասերից հետագայում կազմվեցին «սերդեն գեչտի» և «դալ կըլըչ» (սուրը մերկացրած, սուսերամերկ) անունները կրող հատուկ զորախմբեր։

«Սերդեն գեչտի» զորախմբի պարտականությունն էր՝ անսպասելի կերպով խրվել թշնամու բանակի շարքերը կամ մտնել պաշարված բերդը։ Այս խմբի զինվորները իրական մահն աչքն առած հարձակվում էին թշնամու բանակի վրա աջից, ձախից կամ թիկունքից։ Այդ հարձակումները եղել են շատ ահարկու և ընդհանրապես վերջացել են հաղթանակով։ Երբ պաշարված բերդի գրավումը ուշացել է, այդ դեպքում «դալ կըլըչ» խմբի զինվորները, գիշերով գաղտնի աստիճաններով անսպասելիորեն մտել են պաշարված բերդը, շփոթություն առաջացրել թշնամու շարքերում և դրանով հեշտացրել բերդի գրավումը։

7. Գուհիստան—Իրանի էյալեթներից է։ Սահմաններն են. հյուսիսից՝ Խորասանը, արևելքից Աֆղանստանը, հարավից՝ Կիրմանը և Ֆարսը, արևմուտքից՝

* Danışmend, նշվ. աշխ., էջ 387։

Իրանական Իրաքը։ Կենտրոնն է Շարիսթանը։ Գուհիստան անունով երկրներ կան նաև Հնդկաստանում և Բելուջիստանում։

8. Իսլամ մյուջահիդներ—կրոնի մարդիկ, կրոնի համար պատերազմող իսլամական զինվորներ։ Կրոնի համար մղվող պատերազմը կոչվում էր «ջիհադ» (սրբազան պատերազմ), իսկ մասնակցողը՝ «մյուջահիդ»։

9. Թուրքական ֆեոդալական կարգերի օրոք թիմարներից ավելի մեծ «զիր-լիքները» կոչվում էին զեամեթներ, նրանց տերերը՝ զեամեթի բեյեր։ Էյալեթների բեյլերբեյիներին ենթակա սանջակի բեյերը իրավասու և պատասխանատու էին սանջակի թե՛ վարչական և թե՛ զինվորական գործերի համար։ Պատերազմի դեպքում, բեյլերբեյիի հրամանատարությամբ, սանջակի բոլոր թիմարատեր սիփահիները, իրենց ջեբելուների հետ միասին գնում էին պատերազմի։

10. Օսմանյան բանակի այն զորամասերը, որոնք էյալեթների փաշաների (միրիմիրան) և սանջակի բեյերի հրամանատարությամբ գնում էին պատերազմի, կոչվում էին «էրլի կուլի» զինվորներ։ Էրլի կուլիների զորամասը բաժանվում էր ազաբների, սեկբանների, իչարելիների (վարձկանների) և մյուսելլեմների։ Ազաբների դասին պատկանող զինվորներն ամուրի էին։ Սեկբաններ էին համարվում կամավոր կերպով զինվորական ծառայության մտած գյուղացիները։ Իչարելիները սահմաններում, քաղաքներում ու բերդերում ծառայող թնդանոթաձիգ զինվորներն էին և ծառայում էին որոշ վարձով։ Մյուսելլեմները կամուրջներ, ճանապարհներ նորոգելու և խրամատներ փորելու համար ընթանում էին բանակի առաջապահ ջոկատի առջևից։

Անատոլիայում այդ դասի զինվորները կոչվում էին «յուրուկներ»: Նրանց տված 80—100 դյոնում հողի՝ «չիֆթլիքի», շարիաթական տասանորդը (աշարը) իբրև զինվորական ծառայության վարձատրություն մնում էր իրենց։ Նրանց պետերը կոչվում էին «միրի-մյուսելլամ» և «միրի-յուրուկան»:

Այստեղ հիշված ազաբ աղաները ազաբների դասի հրամանատարներն էին։

11. «Աքընջիների» խմբերը եղել են օսմանյան բանակի արշավող, հարձակվող առաջին զորամասերը։ Նրանք կազմակերպվել էին Օրխան Ղազիի ժամանակ։ Թուրք պատմագիրների վկայությամբ, աքընջիները օսմանյան բանակում ծառայել են 250 տարի։ Բայց քանի որ աքընջիները կանոնավոր զորք չէին համարվում, ձմռան ամիսներին նրանք վերադառնում էին իրենց վայրերը և զբաղվում արհեստներով։

12. Իսլամ-ղազիներ — տե՛ս «Թարիխի Սելանիկիի» 31-րդ ծանոթագրությունը։

13. Բեռ (յուք) — գործ է ածվում իբրև դրամի (ակչե) միավոր։ Յուքի քանակը տարբեր է եղել թե՛ ըստ ժամանակի և թե՛ ըստ վայրի։ Թուրքական որոշ աղբյուրներում ցույց է տրվում 100 հազար ակչե, այլ աղբյուրներում՝ 500 հազար ակչե։

14. Վեֆայի հրապարակը Ստամբուլի եվրոպական մասի հրապարակներից է։

15. Աբազա փաշայի ապստամբությունը Էրզրումում և դրա հետ կապված դեպքերը, անտարակույս շատ կարևոր են XVII դարի Թուրքիայի վարչական կարգի քայքայման և երկրում տիրող անկարգությունների ընդհանուր բնույթն ուսումնասիրելու տեսակետից։ Նկատի ունենալով այն հանգամանքը, որ Աբազայի ապստամբությունը տեղի է ունեցել Արևմտյան Հայաստանի հողի վրա, պարզ է, որ այդ շարժումը խիստ կործանարար ազդեցություն է ունեցել նաև հայ ժողովրդի համար։ Դրա պերճախոս ապացույցն է հանդիսանում այդ դարաշրջանի հայ պատմիչների կողմից դառնությամբ գրի առնված այն անասելի չարիքները, որ այդ

*ապստամբական շարժումը պատճառել է հայ ժողովրդին։ Հայ պատմագիրները անիծում են Աբազային՝ իբրև թուրքական բռնապետական ռեժիմի տիպիկ ներկայացուցչի։*

*Աբազա փաշայի ապստամբության մասին տե՛ս նաև սույն աշխատության առաջին հատորում, Նայիմայի պատմության 82—85 էջերը։*

16. **Խազինեդար** — *խազինե՝ գանձարան, դրամարկղ, խազինեդար՝ գանձարանի վարչության և պահպանության պաշտոնատար անձ։*

17. **Սեկբան, սեկբան գրել** — *տե՛ս Քյաթիբ Չելեբիի «Ֆեզլեքե»-ի I հատորի 8-րդ ծանոթագրությունը։*

18. **Մյուսելլիմ** — *տե՛ս սույն գլխի 10-րդ ծանոթագրությունը։ Մյուսելլիմ էին կոչվում նաև կանոնավոր զինվորական կազմակերպության հեծյալ զինվորները, որոնք հետագայում ծառայում էին բանակի թիկունքի աշխատանքներում։*

19. **Ուլեմա** — *«ալիմ»-ի հոգնակին, բառացի նշանակում է գիտնական։ Մուսուլմանական բարձր հոգևորականությունը կոչվում էր ուլեմա, այսինքն գիտնականներ, քանի որ այդ դարաշրջանում գիտությունը հոգևորական դասի մենաշնորհն էր։ Հաճախ գործ է ածվում «ուլեմա» և «սուլեհա» միասին։ Սուլեհա («սալիհ» բառի հոգն.) նշանակում է բարեպաշտ, կրոնի հրամաններն ու ցուցումները կատարող անձ։*

20. **Դիրլիք** — *Օսմանյան իշխանության մեջ վաղուց ընդունված, ավելի ճիշտ սելջուկյան իշխանությունից և Անատոլիայի բեյությունից օսմանցիներին անցած պետական բոլոր տեսակի ծառայությունների համար տրված ռոճիկը, կամ հողը (խաս, զեամեթ, թիմար) կոչվել է «դիրլիք», որի քանակությամբ սահմանվել են խասը, թիմարը և զեամեթը։*

21. **Սուլթան Մուրադ IV-ը** *իշխել է 1032—1049 (1623—1640) թվականներին։*

22. **Թուղ** — *տե՛ս «Թարիխի Սելանիկի»-ի 8-րդ ծանոթագրությունը։*

23. *Խոսքը Սուլթան Օսման II-ի մասին է, որ իշխել է 1027—1031 (1618—1622) թվականներին։ Նա հայտնի է «Գենջ Օսման» («Երիտասարդ Օսման») անունով։ Այդպես է կոչվել 14 տարեկան հասակում գահ բարձրանալու համար։ Ոռհվել է 18 տարեկան հասակում։*

24. **Զորբա** — *բառացի՝ ուժով գործ տեսնող, բռնի ուժ գործադրող, հափշտակող, իրավունքն ու արտադրությունը ոտնահարող անձնավորություն։ Այդ դարաշրջանում պետական իշխանության թուլացման հետևանքով, Ստամբուլում երևան են գալիս «զորբաներ», որոնք պետական և հասարակական կյանքում առաջացնում են ամեն տեսակ անկարգություններ և բռնություններ գործադրում։ Տես նաև հաջորդ՝ 25-րդ ծանոթագրությունը։*

25. *Սուլթան Մուրադ IV-ը արշավանքի ելնելով Երևանի վրա, ճանապարհին բազմաթիվ սպանություններ է կատարել։*

*Համմերը իր «Օսմանյան կայսրության պատմության» մեջ նշում է, որ սուլթան Մուրադ IV-ը իր կարճատև իշխանության ընթացքում սպանել է տվել 20 հազար մարդ։ Ժամանակակից թուրք պատմաբան Դանիշմենդը, չժխտելով այդ հանգամանքը, աշխատում է «մեղմացնել» սուլթանի դաժանությունները՝ դրանք համարելով «պատմական անհրաժեշտություն»։*

26. **Լեվենդ զինվորներ** *էին կոչվում վենետիկցիների մոտ վարձով ծառայող թեթև զորամասերի զինվորներ։ Օսմանյան բանակում ևս այդ տիպի զինվորները ստացել էին «լեվենդ» անունը։*

27. **Կափուջիների քեթխուդան** — *կափուջի բառացի նշանակում է դռնապան։ Կափուջի էին կոչվում բարձր հիմնարկների մուտքը հսկող և դիմողներին ընդունող պաշտոնյաները։ Կափուջի բաշին սուլթանի արքունիքի դռնապանների ղեկավարն էր և որպես այդպիսին ուներ իր քեթխուդան (գործակալը, տեսուչը)։*

28. **Աբդեսթ** — *աբ՝ ջուր, դեսթ, ձեռք։ Իսլամական շարիաթական կարգով, նամազ անելու համար երեսը, ոտները և ձեռքերը լվանալու արարողությունը կոչվում էր «աբդեսթ»։*

29. **Էմիր-ուլ-Ումերա** — *տե՛ս Ք. Չելեբիի «Ֆեզլեքե»-ի I հատորի 25-րդ ծանոթագրությունը։*

30. **Ջեբելու** — *տե՛ս Քյաթիբ Չելեբիի «Ջիհան նյումա»-ի 22-րդ ծանոթագրությունը։*

31. **Սիփահի, սիփահիություն** — *տե՛ս «Թարիխի Սելանիկի»-ի 12-րդ ծանոթագրությունը։*

32. **Չավուշ, Չավուշ բաշի** — *տե՛ս Ք. Չելեբիի «Ֆեզլեքե»-ի II հատորի 28-րդ ծանոթագրությունը։*

33. **Աք-Օղլան** — *սուլթանական արքունիքի կառապանի և ձիապանի օգնականները կոչվում էին աթ-օղլանը կամ աթ-ուշաղը։*

34. **Չորբաջի** — *տե՛ս «Թարիխի Սելանիկի»-ի 30-րդ ծանոթագրությունը։*

35. **Սալավաթ, Սալավաթ կարդալ** — *սալավաթ կամ սելաթ՝ աղոթք, նամազ, փեյղամբարին (Մուհամմեդ մարգարեին) ուղղված հատուկ աղոթք։ Սալավաթը կարդում են օրվա որոշ ժամերին. գոյություն ունի առավոտյան սալավաթ, երեկոյան սալավաթ և այլն։ Կան նաև բայրամի հատուկ սալավաթ։*

36. **Ռուզի-կասըմ** — *ռուզ օր, ցերեկ, կասըմ՝ բաժանող, բաժանում։ Ռուզի-կասըմը, Ռուզի խըզըրի հետ միասին տարին բաժանում է երկու հավասար մասի։ Ռուզի-կասըմի օրը հոկտեմբերի 26-րդ օրն է։ Այդ օրը համարվում է ձմեռվա սկիզբը Ռուզի խըզըր (կամ խըդրը), այսինքն խըզըրի օրը, ապրիլ ամսի 26-րդ օրն է։*

## ՇԱՆԻ ԶԱԴԵ

1. **Սրբազան Մեքքայի մեվլևի.** *մեվլևի էին կոչվում Մեվլանա Ջելալ-էդ-Դինի կողմից XIII դարում հիմնված դերվիշական աղանդին պատկանողները և նրա հպատակները։ Այդ դերվիշական միաբանությունը (թարիքաթ) հատկապես տարածվել էր Ստամբուլում։ Մեվլևի դերվիշների հայտնի* մեվլևիական թեքիյեն *(իսլամական վանքը)՝* մեվլևի-խանեն, *գտնվել է Ղալաթայում։ Մեծ կադիի, այսինքն՝ մեծ մոլլայի պաշտոնն ու նրան ենթակա շրջանը կոչվել է* մեվլևիյեթ *(մեվլևիություն)։ Այսպես, Ստամբուլը բաժանված է եղել չորս մեվլևիության, որոնք հետագայում կազմեցին քաղաքապետության (շեհր-էմանեթի) շրջանները, քաղաքամասերը։*

*Սրբազան Մեքքայի մեվլևին այդ քաղաքի կրոնական բարձր պաշտոնյաներից էր, որը նշանակվում էր իսլամական խալիֆայի՝ սուլթանի կողմից։*

*Պատմագիր-տարեգիր Շանի Զադեն սրբազան Մեքքա քաղաքում վարել է մեվլևիի պաշտոն։*

## «ԹԱՐԻԽԻ ՇԱՆԻ ԶԱԴԵ»

1. **Նիզամի ջեդիդ** *(նոր կարգ). Սուլթան Սելիմ III-ի կանոնավոր զինվորական բանակ ստեղծելու և կենտրոնացած կառավարական ապարատ կազմակեր-*

սելու ռեֆորմիստական նախաձեռնությունը պատմության մեջ հայտնի է «նիզամի ջեդիդ» անունով։ Սուլթան Սելիմ III-ի իշխանության շրջանը զուգադիպում է համաշխարհային նշանակություն ունեցող Ֆրանսիական մեծ հեղափոխության և եվրոպական երկրներում սկսված առաջադիմական ռեֆորմների տարիներին։ Ինչպես իրավամբ նշում է Ա. Ֆ. Միլլերը, «Մի շարք երկրներում սկսված ռեֆորմներն այդ երկրների և ժողովուրդների առաջադիմության արտահայտությունն էին, իսկ Թուրքիայում ռեֆորմների հիմնական, գուցե և միակ պատճառը, կառավարող դասակարգի առաջադիմական մի փոքրիկ խմբի ձգտումն էր կայսրությունը փրկելու սպառնացող վտանգից»։

Արդարև, այդ ժամանակ, երբեմնի հզոր Օսմանյան կայսրությունը, մի շարք արտաքին և ներքին գործոնների հետևանքով, արագորեն քայքայվում էր։

Սուլթան Սելիմ III-ը, Օսմանյան կայսրությունը այդ վերահաս վտանգից փրկելու նպատակով, ձեռնարկում է ռեֆորմների։

Ենիչերիական բանակի կազմալուծումը և հիմնականում դրա հետ կապված պատերազմական անհաջողությունները, որոնք շարունակվում էին վերջին տասնամյակներում, պետության ֆինանսական դժվարությունները և պետական գանձարանի բացարձակ դատարկությունը, սուլթան Սելիմին դրդում են վճռական միջոցներ ձեռնարկել կայսրության ռազմական, վարչական և ֆինանսական հզորությունը վերականգնելու համար։

Նա ձգտում է Օսմանյան կայսրության հզորությունը վերականգնել ոչ թե ենիչերիական բանակի վերակազմությամբ, որը բազմաթիվ փորձերից հետո ապարդյուն էր անցել, այլ եվրոպական ձևի, կարգապահ և կանոնավոր բանակի կազմակերպումով։ Իսկ պետության ֆինանսական դրությունը բարելավելու համար նա ցանկանում է ստեղծել կենտրոնացված և ամուր պետական բյուջե։

2. Ռուսչուք յարանի» («Ռուսչուքի բարեկամներ»). սուլթան Սելիմի ռեֆորմների փորձերը կատաղի դիմադրության են հանդիպում ռեակցիոն, ֆանատիկ շրջանների և կայսրության տարբեր մասերում գրեթե կիսանկախ դրություն ձեռք բերած խոշոր ֆեոդալների կողմից։ Սուլթան Սելիմ III-ը գահընկեց արվեց։

Ռումելիի (Թուրքիայի եվրոպական մաս) խոշոր ֆեոդալ Մուստաֆա Աղան (1765—1808), որը հետագայում հայտնի է դառնում Բայրաքդար (Ալեմդար, դրոշակակիր) փաշա անունով, 1808 թվականին, կարճ ժամանակում ստանում է սադրազամի պաշտոնը։

Նա մի շարք պատերազմներում և, մասնավորապես, 1806 թվականի ռուս-թուրքական պատերազմում վարում է Դանուբյան բանակի սերասքերի պաշտոնը և մեծ հռչակ ու հեղինակություն է ձեռք բերում։

Մուստաֆա փաշան լինում է Սելիմ III-ի ռեֆորմիստական նախաձեռնությունների համոզված կողմնակիցներից և երբ 1806 թվականին սուլթան Մուստաֆա IV-ի կողմից սադրազամ է նշանակվում, Սելիմ III-ի ռեֆորմները կյանքում իրականացնելու համար փորձում է գահընկեց արված Սելիմ III-ին նորից գահ բարձրացնել։ Այդ նպատակով, Բայրաքդար փաշան՝ իրեն հավատարիմ և իր հետ կապված բարեկամներից կազմակերպում է խիստ գաղտնի քաղաքական մի խմբակցություն։ Այս գաղտնի կազմակերպությունը հայտնի է «Ռուսչուքի բարեկամներ» (թուրքերեն՝ «Ռուսչուք յարանի» կամ «Ռուսչուք էրենլերի») անունով։

* А. Ф. Миллер, Мустафа паша Байрактар, Османская империя в начале XIX века. Москва, 1947, стр. 73.

Թուրք պատմագիր-տարեգիր Ջևդեթ փաշայի ասելով, Բայրաքդար փաշան հենվել է 20—30 հազար զինվորներից կազմված կանոնավոր և լավ զինված իր բանակի վրա։

«Ռուսչուքի բարեկամներ» գաղտնի կազմակերպությունը կարելի է համարել Թուրքիայի առաջին քաղաքական կազմակերպությունը, պարտիան*, որն ուներ իր որոշակի քաղաքական նպատակները։

Ռուսչուքը կազմակերպության կենտրոնն էր, որտեղ պատրաստվում էին այն զինվորական ուժերը, որոնք Բայրաքդար փաշայի ղեկավարությամբ պիտի պաշտպանեին և իրականացնեին Սելիմ III-ի ռեֆորմները։

«Ռուսչուքի բարեկամների» կազմակերպության անդամներից մեկը՝ Բայրաքդար փաշայի գլխավոր խորհրդական Ռամիզ էֆենդին, որ իր ժամանակի բազմակողմանի կրթություն ստացած պետական և քաղաքական հայտնի գործիչներից էր, դառնում է Սելիմ III-ի ռեֆորմների ակտիվ պաշտպանը։ «Ռուսչուքի բարեկամների» նշանավոր անդամներից էին նաև Մուհամմեդ Թահսին էֆենդին, Մուհամմեդ էմին Բեհչեթը, Մանուկ Միրզոյանը (Մանուկ Բեյը) և ուրիշներ։

Մանուկ Բեյը Բայրաքդար փաշայի ֆինանսական և առևտրական գործերի ղեկավարն ու կազմակերպիչն էր, որի մասին սովետական թրքագետ Ա. Ֆ. Միլլերը, առանց աղբյուրը ցույց տալու, գրում է. «Դանուբյան քաղաքների և բուն Ստամբուլի հայ բուրժուազիան, որը նյութական կապերով կապված էր Մանուկ Բեյի հետ, նրա մեջ տեսնում էր բովանդակ հայ «ազգի» (millet) հզոր պաշտպանին...»։ Մի այլ տեղում նա գրում է. «Մանուկ Բեյն իր անձը և հարստությունը դրեց գաղտնի կազմակերպության տրամադրության ներքո։ Բայրաքդարի գիրքը և հարստությունը առաջնակարգ տեղ էին ապահովում խմբակցության անդամների միջև»**։

Մանուկ Բեյի ազդեցությունը հատկապես ուժեղանում է 1807—1808 թվականներին։ Բայրաքդարի սադրազամության ժամանակ Մանուկ Բեյը գալիս է Ստամբուլ։ Բայրաքդար փաշան «Ռուսչուքի բարեկամների» գործունեության ամենակարևոր շրջանում մեծապես օգտվում է Մանուկ Բեյի խորհուրդներից։ Այդ ժամանակ նա Բարձրագույն Դռան թարգմանի (դրագոման) պաշտոն էր վարում։

Բայրաքդարի և «Ռուսչուքի բարեկամների» պարտությունից հետո Մանուկ Բեյը Ստամբուլից փախչում է Ռուսչուք և ապա Բուխարեստ***։

3. Ցաշ — թուրքական աղբյուրներում սեծովյան նավահանգիստ Փոթին կոչվում է Ցաշ։ Ցաշ-կալեսի՝ Ցաշի բերդ։ Ցաշի մոտ Սև ծովը թափվող Ռիոն գետը կոչվում է Ցաշ-գետ (Ցաշ-չայը)։

4. Շանի Զադեն «Իրանի հետ դաշինք կազմելու համար սերասքերին տրված ֆերմանի» կապակցությամբ նշում է, որ երկու իսլամական պետությունների միջև գոյություն ունեցող «երկրորդական տարաձայնությունները» արգելք են հանդի-

* Թուրք բառարանագետ Շ. Սամին այդ կազմակերպությունը անվանում է Comite des liberaux ottoman («Օսմանյան լիբերալների կոմիտե»)։ Kamus ül alem, Istambul, 1306, էջ 1336.

** А. Ф. Миллер, նշվ. աշխ., էջ 201—203.

*** Մանուկ Բեյի (Մանուկ Միրզոյան) կյանքի և գործունեության մասին թուրք պատմագիրները գրեթե ոչինչ չեն հաղորդում։ Միլլերը, որ իր վերոհիշյալ գրքում տեղեկություններ է տալիս Մանուկ Բեյի մասին, իր գրքի ծանոթագրություններում հիշում է (էջ 395), որ 1852 թվականին Վիեննայում հայերեն լեզվով լույս է տեսել Ղևոնդ Վ. Հովնանյանի գիրքը՝ «Միրզայան Մանուկ Բեյի վարուց պատմությունը»։

սացել ընդհանուր թշնամու՝ Ռուսաստանի դեմ միասնաբար գործելու համար։

Պատմագրի «երկրորդական» համարվող տարաձայնությունները իսլամական սյուննի և շիա դավանանքների միջև դարերով շարունակվող կրոնական-դավանական հակամարտություններն են, որոնք երկարատև պատերազմների առիթ են հանդիսացել Իրանի և Թուրքիայի միջև։ Շանի Զադեն 1225 և 1226 (1810—1811) թվականների իրադարձություններից միայն հարևանցիորեն է հիշում Վրաստանի հետ կապված դեպքերը։ Հայտնի է, որ այդ իրադարձությունները կապված են եղել Ռուսաստանի՝ դեպի Կովկաս սկսած առաջխաղացման հետ։ Սուլթանական Թուրքիան և շահական Իրանը տագնապալի քայլեր են արել Ռուսաստանի առաջխաղացումը կանգնեցնելու համար, սակայն ապարդյուն։ Ինչպես ցույց են տալիս պատմական դեպքերը, երկու իսլամական երկրները փորձել են միանալ իրենց ընդհանուր թշնամու՝ Ռուսաստանի դեմ, սակայն հաջողություն չեն ունեցել։ 1225 թ. ռուս գեներալ Տորմոսովը իր բանակով շարժվում է Թիֆլիսը գրավելու և այնտեղ գտնվող Աչըք Բաշի Սոլոմոն խանին խաբեությամբ գերի վերցնելու համար. վերջինս փախչում է Ախալցխա և օգնություն խնդրում Իրանից և օսմանյան կառավարությունից։

Ստամբուլի կառավարությունը, օգտվելով Սոլոմոնի դիմումից և փորձելով օգտագործել նրա ուժն ու հեղինակությունը, «Վրաստանի ռայաներին և այդ բարեհամբույր ժողովրդին» (վրացիներին) հովանավորելու և պաշտպանելու կեղծ պատրվակով, պարգևատրում է Աչըք Բաշի Սոլոմոն խանին և նրան ուղարկում է հատուկ փադիշահական ֆերման։

6. Մյութեղալիբե — *ուժով և բռնությամբ գործող, ապստամբ, ավազակ, զորբա։*

7. Սուլեհաներ — *բարեպաշտ մարդիկ։*

8. Էշքինջի թիմարների և զեամեթների զորամասեր — *թիմարների և զեամեթների տերերի՝ սիփահիների, օսմանյան բանակին տված զինվորները՝ «էշքեջիները» կարևոր դեր են կատարել Օսմանյան կայսրության մղած պատերազմներում։ Էշքինջի թիմարների զինվորները, ի տարբերություն այլ թիմարների զինվորների, պատերազմի են գնացել իրենց ալայ-բեյերի դրոշակի ներքո։*

9. Խումբարաջի — *«հավան» կոչվող թնդանոթներից արձակվող մեծ արկերը կոչվել են խումբարա, իսկ այդ թնդանոթներ կրակողները՝ խումբարաջի։ Խումբարա գործ է ածվում նաև ռումբ իմաստով։ Խումբարաջի՝ ռմբաձիգ։*

10. Կում Կափուն *Ստամբուլի հայաբնակ թաղերից է, որտեղ գտնվող հայկական եկեղեցին համարվում է մայր եկեղեցի։*

11. *Հունական պատրիարքին կից գործել է տասներկու բարձր հոգևորականներից կազմված խորհուրդ, որը կոչվել է «Տասներկուսի խորհուրդ»։*

12. Կաղը Քյոյ — *Ստամբուլի ասիական թաղամասերից մեկը։*

## ՄՅՈՒՆԵՋՋԻՄ ԲԱՇԻ

1. Մյունեջջիմ — *աստղագուշակ, այդ պաշտոնի պետը կոչվել է մյունեջջիմ բաշի։ Սուլթանի պալատում մյունեջջիմ բաշիները կազմել են պաշտոնական տարեցույցներ, աստղերի դիրքերից և շարժումներից եզրակացություններ են հանել և հայտնել են սուլթանին։ Սուլթանները իրենց պատերազմական ծրագիրը և այլ պետական գործերը համաձայնեցրել են աստղագուշակների ցուցմունքների հետ։*

2. «Սահաիֆ-ուլ-ախբար» — *բառացի նշանակում է տեղեկությունների էջեր։ Հիշյալ գրքում ամփոփված են այդ դարաշրջանի բոլոր կարևոր պատմական իրադարձությունները։*

3. Ա. Ձ. Վալաաի — *ժամանակակից Թուրք պատմաբան։*

4. *Բնագրում՝ Հայկիյե։*

## «ՍԱՀԱԻՖ-ՈՒԼ-ԱԽԲԱՐ»

1. *Բնագրում՝ «Ումմեթի Արմեն». պատմագիրը գործ է ածում «Արմենիա» և «Արմեն» և ոչ «Էրմենիստան» և «Էրմենի», ինչպես առհասարակ ընդունված է թուրքերենում։*

2. Վիլայեթ — *բառացի նշանակում է նահանգ, կուսակալություն։ Մինչև XVII—XVIII դարերը Թուրքիայում «վիլայեթ» և «էյալեթ» անունները գործածվել են գրեթե նույն իմաստով։ Հետագայում վերջնականապես ընդունվում է «վիլայեթ» տերմինը, որը և պահպանվում է մինչև հիմա։ Մյունեջջիմ Բաշին և մյուս թուրք պատմագիրները «վիլայեթ» բառը գործ են ածում ավելի լայն՝ երկիր, երկրամաս, հողամաս իմաստով։ Օրինակ, Մյունեջջիմ Բաշին «Արմենիայի վիլայեթը», «Վրացական վիլայեթը» գործ է ածում երկիր իմաստով։*

3. Ռայա—*արաբերեն «ռայիյե» (հոգն. ռեայա) բառի գործածական ձևն է։ Բառացի նշանակում է հոտ (անասունների)։ Ռայա էին կոչվում իսլամական պետությունների հարկատու ոչ-իսլամ հպատակները, որոնք զենք կրելու իրավունք չունեին։ Զենք կրելու իրավունք ունեցող իսլամ հպատակները կոչվում էին «բերիյե» (հոգն. բերայա)։*

4. Դերբենդ—*տե՛ս «Թարիխի Սելանիկի» 18-րդ ծանոթագրությունը։*

5. Մասիսե — *տե՛ս Քյաթիբ Չելեբիի «Ջիհան նյումա»-ի 27-րդ ծանոթագրությունը։*

6. *Բնագրում՝ «Ումմեթի գյուրջ»։*

7. Կոստանդինյան ծոց — *Թուրքերեն կոչվում է «Խալիջի Կոստանդինե» (Ոսկեղջյուր)։ Այդ փոքր ու գեղեցիկ ծոցը Ստամբուլից ձգվում է մինչև Քյաղըտխանե։ Ոսկեղջյուրի վրա է կառուցված Ստամբուլի շարժական կամուրջը։*

8. Մուստաֆա փաշայի *կողմից Վրաստանի նվաճման մասին մանրամասն տե՛ս «Թուրքական աղբյուրները...», հատ. I, էջ 44—48։*

9. *Բնագրում՝ «Թաբակա»։*

10. *Բնագրում՝ «Հարֆ»։*

11. Նեմրութ — *ըստ ավանդության եղել է Բաբելոնի հիմնադիրն ու իշխողը։ Նեմրութը գործ է ածվում նաև որպես բաբելոնյան թագավորների տիտղոս, ինչպես փարավոնը Եգիպտոսում։*

12. *Բնագրում՝ Յաշա բին-Նուն։*

13. *Բնագրում՝ Իսքենդեր բին-Ֆիլիբուս, Ֆիլիպպի որդի Ալեքսանդր։*

14. *Բելխ-Բալխ (*Balkh, Bactras*)— հնագույն Բակտրիոնե երկրի կենտրոնական քաղաքը։ Կոչվել է նաև Զերյասբ կամ Զերասբ։ Կենտրոնական Ասիայի հնագույն և պատմական քաղաքներից է։*

15. Խաս կամ խասս *(հոգնակի խասսե), բառացի նշանակում է սեփական, հատուկ, առանձին, Թուրքերեն լեզվով գործ է ածվում՝ «խաս օրդու»՝ փադիշահական հատուկ բանակ, «խազինեի խասսե»՝ փադիշահական հատուկ կալվածների և գույքերի վարչություն, «խաս-բախչե»՝ արքունական պարտեզ։ Խաս էին կոչվում այն հողերն ու կալվածները, որոնք պատկանում էին փադիշահին կամ նրա ընտանիքի անդամներին։ Թուրք պատմագիրների վկայությամբ, տարեկան 100 հազար ակչեից ավելի եկամուտ (դիրլիք) ունեցող թիմարները, որոնք փադիշահի կողմից շնորհվում էին վեզիրներին ու էմիրներին, նույնպես խաս են կոչվել։*

16. Ռում — տե՛ս «Ջիհան նյումա»-ի 45-րդ ծանոթագրությունը։

17. Սպիտակ ծով—թուրքերեն՝ Ակ Դենիզ, արաբերեն՝ Բահրի Սեֆիդ, Սպիտակ ծով է կոչվում Միջերկրական ծովը։

18. Թոփրակ կալե—բառացի նշանակում է հողե բերդ. գտնվում է նախկին Էրզրումի վիլայեթի Բայազիդ սանջակում։ Ալաշկերտի գավառի կենտրոնն է, գտնվում է Տրապիզոնից դեպի Իրան գնացող քարավանային հայտնի ճանապարհի վրա։

19. Բնագրում՝ «Զիշեքլիք Դերեսի»։

20. Բնագրում՝ «Ջերջեքսի—Բենի» (աղավաղված է)։

21. Խաս—տե՛ս այս գլխի 15-րդ ծանոթագրությունը։

22. Աչքերում միլ քաշել — կուրացնել։

23. Այա-Սոֆիա — Ստամբուլում հայտնի ջամի է, որ նախկինում եկեղեցի է եղել. հնում կոչվել է նաև Սերջիոսի և Բաքոսի եկեղեցի. կառուցվել է Հուստինիանոս կայսրի կողմից։ Ըստ պատմագիրների տված տեղեկությունների, այս եկեղեցին հայտնի է եղել իր գեղարվեստական և ճարտարապետական կառուցվածքով։ Եկեղեցու քարերն անգամ ոսկեզօծված են եղել։ Թուրքերի կողմից Ստամբուլի գրավումից հետո, սուլթան Բայազիդ II-ի ժամանակ, Կըզլար աղասի Հյուսեին Աղայի կողմից վերածվել է ջամիի, որի չորս անկյուններում հետագայում կառուցվել են մինարեներ։

24. Նկատի ունի Լուսինյան թագավորությունը։

25. Ջամի և մեսջիտ (մզկիթ) — առաջինն ավելի մեծ է և ունի մինարե, որտեղ կատարվում է ուրբաթօրյա աղոթքը, քարոզը (խութբե). մեսջիտը ավելի փոքր է։

26. Տարմ—իսլամական աշխարհագրագետների տված տեղեկությունների համաձայն Տարմը Իրանում, Կազվինից հյուսիս ընկած լեռներում, անտառներով և դաշտերով հարուստ մի մեծ գավառ է եղել։

27. Բնագրում՝ «Բենու-Մեսաֆիր»։

28. Բնագրում՝ «Բենու-Սալար»։

29. Բնագրում՝ «Նահիյե»։

30. Սալար (պարսկ.)—նշանակում է գլխավոր, պետ, հրամանատար, սեբասքեր։

31. Կլիմա—արաբերեն և թուրքերեն «իկլիմ» բառից։ Գործածվում է կլիմայական գոտու իմաստով։ Հին աշխարհագրության մեջ, արևմտյան կիսագնդի (Ամերիկայի) և արևելյան կիսագնդի հարավային կեսի հայտնաբերումից առաջ, երկրագնդի հյուսիսային կեսը, այսինքն՝ երկրագնդի քառորդ մասը, հասարակածից մինչև հյուսիսային բևեռ, որ համարվում էր երկրագնդի բնակեցված տարածությունը, բաժանվում էր 7 մասի (կլիմայական գոտիների), որոնցից ամեն մեկը կոչվում էր «կլիմա»՝ «առաջին կլիմա», «երկրորդ կլիմա» և այլն։

32. Կոնաք — մեկ օրվա ճանապարհ, օրագնաց.

33. Բնագրում՝ «Բենի-Շեդադ»։

34. Լեկզ—ըստ արաբական աշխարհագրագետների, Լեկզը Կովկասում, Դերբենդի շրջանում եղել է մի երկիր, որի բնակչության մեծ մասը եղել է մահմեդական, իսկ մյուսը՝ քրիստոնյա, խոսել է իրեն հատուկ լեզվով։ Ըստ Շեմսեդդին Սամիի, այս անունը (Լեկզ) լեզգի բառի աղավաղված ձևն է։ Այս դեպքում լեկզ ցեղը պետք է ընդունել լեզգի իմաստով։

35. Տե՛ս սույն գլխի 31-րդ ծանոթագրությունը։

## ՖԵՐԻԴՈՒՆ ԲԵՅ, «ՍՈՒԼԹԱՆՆԵՐԻ ԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ»

*1. Սուլթան Սուլեյման Կանունին (926—974) վերոհիշյալ նամակը գրել է Ֆրանսիայի Ֆերդինանդ թագավորին։ Նամակում հիշատակված պատերազմական գործողությունները վերաբերում են սուլթան Սուլեյմանի՝ պատմության մեջ «Ափադիշահական 11-րդ արշավանքը» և «Իրանի 2-րդ արշավանքը» անուններով հայտնի դեպքերին։*

*Դեռևս 940 (1534) թվականին սուլթան Սուլեյմանի մեծ վեզիր Իբրահիմ փաշան, նախքան Վանի բերդի առումը, գրավել էր Արճեշի, Ադիլջեվազի և Ախլաթի բերդերը, որոնք հանձնվել են գրեթե առանց դիմադրության։ Նույն ձևով գրավվում է նաև Վանի ամրակուռ բերդը (հունիսի 23-ին)։*

*Սուլթան Սուլեյման Կանունին իր փադիշահական հզոր բանակով, Կոնիա-Կեսարիա-Սվազ-Էրզրում ճանապարհով, հասնում է Արճեշի բերդը և այնտեղից շարժվում է դեպի Թավրիզ։ Սակայն Թավրիզ չհասած, սուլթանը իր բանակի հետ գնում է Բաղդադ և ձմեռում այնտեղ։ Սուլթանի Ադրբեջանից հեռանալու առիթից օգտվելով, Իրանի Շահ Թահմասբ I-ը գնում է Թավրիզում գտնվող մեծ վեզիր Իբրահիմ փաշայի վրա և գրավում Թավրիզը, որի վալի Ուլեմա փաշան ստիպված է լինում փախչել, ապաստանել Վանի բերդում և փադիշահից օգնություն խնդրել։*

*Սուլթան Սուլեյման Կանունին վերադառնում է Բաղդադից։ Սեֆեվիները ստիպված են լինում վերացնել Վանի բերդի պաշարումը և հաշտություն առաջարկել։*

*Սուլթանը նպատակ ունենալով ջարդել շահի բանակը, մերժում է հաշտության առաջարկը։ Նա գրավում է Թավրիզը (երկրորդ անգամ) և շարժվում է իրանական բանակի վրա։ Շահը նորից հաշտություն է խնդրում, սակայն սուլթանը նորից է մերժում։ Շահի խուսափողական դիրքը մեծ դժվարություններ է պատճառում օսմանցիներին։ Սուլթան Սուլեյմանը իրանական բանակը ջախջախելու իր հիմնական նպատակը չիրագործած՝ Թավրիզից վերադառնում է Ստամբուլ։ Շահը իր անվթար մնացած ուժերով գրավում է Ադրբեջանը և նորից ետ խլում Վանի բերդը։ Թուրք պատմագրության մեջ կա ավանդություն, որ Վանի բերդը իրանցիների ձեռքն է անցել այն բանից հետո, երբ բերդում գտնվող ենիչերիական բանակը բերդը թողնելով միացել է օսմանյան բանակին։*

*Սուլթան Սուլեյման Կանունին, դրանից հետո տարիներ շարունակ զբաղված լինելով օսմանյան պետության եվրոպական մասում տեղի ունեցող պատերազմներով, չի զբաղվել Արևելյան Անատոլիայի և Ադրբեջանի հարցերով։*

*954 (1547) թվականին Շահ Թահմասբի եղբայր Էլկաս Միրզայի (սուլթանի նամակում Էլկաս Միրզան անվանում է սոսկ Էլկաս) Օսմանցիների մոտ ապաստանելու կապակցությամբ վերսկսվում են թուրք-իրանական պատերազմական գործողությունները։ Կանունին լավ ընդունելություն է ցույց տալիս Իրանի իշխանազուն Էլկաս Միրզային և իր ցանկությամբ նշանակում է Շիրվանի վալի։*

*955 (1548) թվականին սուլթան Սուլեյման Կանունին ձեռնարկում է «Իրանի երկրորդ արշավանքը»։ Նա շտապ կարգով հասնում է Ադիլջեվազ և այնտեղից Էրզրումի բեյլերբեյի Ուլեմա փաշային և Կարամանի բեյլերբեյի Փիրի փաշային մեծ ուժերով ուղարկում է իրանցիների կողմից գրավված Վանի բերդի վրա։*

*Սուլթան Սուլեյմանը գնում է Խոյ, այնտեղից Թավրիզ և շուտով գրավում այն։ Սակայն սուլթանը միայն մի քանի օր Թավրիզում մնալուց հետո դուրս է գալիս այնտեղից։ Կա ավանդություն այն մասին, որ սուլթանը ստիպված է լի-*

նում շուտով հեռանալ Թավրիզից՝ բանակի և կենդանիների մեջ տարածված հիվանդության պատճառով։

Ինչպես նախորդ արշավանքի ժամանակ, այս անգամ էլ Շահ Թահմասբը շարունակում է իր նախկին ռազմական տակտիկան. առանց վճռական կռվի բռնվելու օսմանյան բանակի հետ, իր բանակը անվթար պահելով ետ է քաշվում։

Սուլթանը գնում է Վանի բերդի վրա։ Բերդը շուտով հանձնվում է։ Թուրք պատմագիրների ասելով Վանի բերդը նորից Սեֆևիների ձեռքը չանցնելու նպատակով սուլթանը խիստ ամրացնում է այն, ապահովում անհրաժեշտ ռազմական ուժերով և նոր բեյլերբեյիության կենտրոնի վերածելով՝ վալի է նշանակում Չերքեզ Իսքենդեր փաշային։

Սուլթանը ձմեռելու համար գնում է Դիարբեքիր և հետո Հալեպ։

Էլկաս Միրզան իր երկերեսանի դիրքով ու օսմանյան կառավարության դեմ ուղղված անբարյացակամ գործերով կորցնում է սուլթանի վստահությունը և ստիպված լինում փախչել ու ապաստան փնտրել քուրդ բեյերի մոտ, որոնք խաբեբայությամբ Էլկաս Միրզային բռնում և հանձնում են Շահին։ Շահ Թահմասբը իր ապստամբ եղբայր Էլկաս Միրզային բանտարկում է Կահկահա բերդում և սպանել տալիս։

958 (1551) թվականին Շահ Թահմասբը արշավում է Արևելյան Անատոլիա։ Վրաստանում նա գրավում է մի շարք բերդեր ու վայրեր։ Այնուհետև շարժվում է Վանի լճի հյուսիսում գտնվող Արճեշի, Ադիլջեվազի և Ախլաթի բերդերի վրա և գրավում դրանք։

Թուրք պատմագիրների վկայությամբ, Իրանի շահը Վանի լճի հյուսիսային և հյուսիս-արևմտյան ափի շրջանները ծայրից ծայր ավերում, կողոպտում է և թալանում, որպեսզի դրանով հակահարված հասցնի սուլթան Սուլեյմանի արշավանքներին։

Այս դեպքերի կապակցությամբ սուլթան Սուլեյման Կանունին Ֆրանսիայի թագավորին գրում է իր վերոհիշյալ «ֆեթհ-նամեն» (հաղթանակի նամակը)։

2. Ֆերիդուն բեյի «Սուլթանական գրությունների» II հատորի վերջում բերված այս նամակում չի հիշվում ոչ մի թվական։ Հավանական է, որ նամակը գրվել է Վանի գրավումից, այսինքն՝ «հաղթանակի» վերոհիշյալ նամակից հետո։ Նամակից պարզ է դառնում, որ այդ գրության պատճառ են հանդիսացել Իրանի այնպիսի գործողությունները, որոնք հակասել են Ամասիայի հաշտության պայմանագրին (Ամասիայի հաշտության պայմանագրի մասին տե՛ս «Թարիխի Սելանիկի» 1-ին ծանոթագրությունը)։

Ամասիայի հաշտության պայմանագիրը կնքվել է Թուրքիայի և Իրանի միջև 962 (1554) թվականին։ Այդ պայմանագիրը վերջ տվեց օսմանցիների և Իրանի միջև մոտ կես դար շարունակվող թշնամությանն ու ավերիչ պատերազմական գործողություններին։

Ամասիայի հաշտության պայմանագրով Թուրքիային միացան օսմանյան բանակի նվաճած քաղաքներն ու վայրերը, այդ թվում Արդահանը, Գյոլեն, Ջարշադ-Արփաչայը և այլն։ Ընդունվեց հատուկ որոշում այն մասին, որ վերջ տրվի սյուննի և շիա դավանանքների միջև եղած հակառակությանը և թշնամությանը։ Այդ որոշմամբ Իրանի հաջիներին հնարավորություն և օժանդակություն պետք է ցույց տրվեր իսլամի նվիրական վայրերը ուխտի գնալու։

Ինչպես պարզվում է նամակի բովանդակությունից, որոշ դեպքեր տեղի են

ունեցել Իրանի կողմից Ամասիայի հաշտության պայմանագիրը խախտելու հետևանքով։ Հիշվում են Աշըք Բաշի վիլայեթի մի շարք նահիյեների և «անսահման ստաքինության զարդ» հանդիսացող (սուլթանի) կուլերի կողոպուտն ու թալանը վրացիների կողմից, ինչպես նաև Կարսը գրավելու փորձերը և այլն։

Սուլթանը Շահ Թահմասպին գրած վերոհիշյալ նամակում նշելով, որ այդ փորձերը հակասում են հաշտության պայմանագրին, կոչ է անում միջոցներ ձեռք առնել և թույլ չտալ, որ կրկնվեն նման խռովարարական գործերն ու հարձակումները։

3. **Թուրք-իրանական պատերազմների** *շրջանում, երբ թուրքերը համառորեն ձգտել են ամբողջովին նվաճել Կովկասը և վերջ տալ Վրացական թագավորությունների և իշխանությունների, սուլթանն ու նրա պետական գործիչները Վրաստանի և վրաց իշխանների նկատմամբ վարել են կեղծ և դավադիր քաղաքականություն։ Նրանք փորձել են վրաց իշխաններին իրենց կողմը գրավել՝ ընդդեմ կըզըլբաշական Իրանի։*

*Վրաց էմիրներին և խաներին ուղղված բազմաթիվ փաստաթղթերից իբրև սուլթանական գոռոզամիտ և կեղծ հրամանների նմուշ բերվում են միայն երկուսը, «Երկրի պաշտպանության համար Վրաստանի էմիրներին և խաներին գրված փադիշահական հրամանը», «Արքունական հանդիսավորությամբ Վրաստանի տիրակալին շնորհված փադիշահական նամակը»։ Առանձնապես հետաքրքիր է հայտնի ազգային հերոս Գեորգի Սաակաձեին (Մաղրավ բեյին) ուղղված փադիշահական գրությունը, որտեղ սուլթանը կեղծավոր կերպով իր բարյացակամ վերաբերմունքն է հայտնում նրան, որը սակայն, որոշ ժամանակ անց, չի խանգարում սուլթանին գաղանաբար գլխատելու Սաակաձեին և նրա որդուն։*

4. **Ալբրեզիստան** — *թուրքերը Իբերիան անվանում են Ալբրեզ։ Ալբրեզիստան նշանակի Իբերիայի երկիր։ Գործ է ածված Վրաստան իմաստով։*

5. **Ֆիրդուն Բեյը** *Թուրքիայի վարչական բաժանման այս համառոտ ցուցակով ոչ մի լրացուցիչ տեղեկություն չի տալիս երկրի վարչա-տնտեսական կազմի մասին։ Կասկած չի կարող լինել, որ նա այդ ցուցակը կազմել է պետական պաշտոնական տվյալների հիման վրա։ Չնայած Ֆերիդուն Բեյը չի հիշատակում, բայց հասկանալի է, որ այդ վարչական բաժանումը վերաբերում է XVI դարի վերջին քառորդին։*

*Ֆերիդուն Բեյի այս համառոտ ցուցակը ունի պատմական կարևոր նշանակություն, քանի որ թուրքական այլ աղբյուրներում չկան լրիվ տեղեկություններ երկրի վարչական կառուցվածքի մասին։*

6. **Շերիֆություն, շերիֆ** — *իսլամական սրբազան քաղաքների և երկրամասերի կառավարիչները, որոնք իրենց ծագումով պատկանում են իսլամի նվիրական գերդաստանին, կոչվում են շերիֆ, իսկ նրանց իշխանության տակ եղած երկիրը՝ շերիֆություն (շերաֆեթ)։ Հիջազը շերիֆություն էր և իբրև այդպիսին Օսմանյան կայսրության վարչական կազմում ուներ որոշ առանձնաշնորհումներ։ Մեքքայի շերիֆությունը ուներ երեք լիվա։*

7. **Կափուդան, կափուդանլըք, կափուդան փաշա** — *տե՛ս «Ֆեզլեքե»-ի 37-րդ ծանոթագրությունը։*

*16-րդ դարի Թուրքիայի վարչական բաժանման համաձայն Էգեյան ծովի մի շարք կղզիներ կազմում էին Միջերկրականի կղզիների էյալեթը, որը կապված էր կափուդանի փաշայությանը և որի բեյլերբեյին կոչվում էր կափուդան փաշա։*

8. **Սալյանե** — *Թուրքիայի հողատիրության կարգը, ինչպես հայտնի է, ընդ-*

գրկում էր **խասս**, **զեամեթ** և **թիմար** անուններով հայտնի հողամասերը, որոնց ցարիաթական տասանորդային հարկերը և մյուս եկամուտները, որոշ զինվորական ծառայության և պարտավորության համար, պետությունից իբրև «դիրլիք» ստանում էին սիփահիները, էմիրները, սանջակի բեյերը, վեզիրները, չեհզադեները և այլն։

Այդ հողերից բացի կային նաև այնպիսի հողեր, որոնց շարիաթական եկամուտները անմիջականորեն պատկանում էին պետությանը։ Պետությունը այդ եկամուտները իբրև ուլուֆե (ռոճիկ) հատկացնում էր միրմիրաններին, միրլիվաներին և այդ վայրերի «եըլի կուլի» կոչված զինվորներին։ Այդ հատկացումները կոչվում էին **սալյանե**: Օսմանյան երկրի որոշ վարչական միավորներ (էյալեթ, սանջակ) և երկրամասեր թիմար և զեամեթ չունեին և համարվում էին «**սալյանելի**» (սալյանեյով կառավարվող) վայրեր: Այսպես, XVII դարի Թուրքիայի վարչական միավորներից Բաղդադի, Բասրայի էյալեթները, Եգիպտոսը, Եմենը, Հաբեշստանը, ինչպես նաև Միջերկրականի և Հալեպի էյալեթների որոշ սանջակներ «սալյանեի» էին։

Ֆերիդուն Բեյի Օսմանյան կայսրության էյալեթների և լիվաների ցուցակից պարզվում է, որ Միջերկրականի ծովակալության մեջ (կափուդանլըք) կար սալյանեյով կառավարվող 11 վարչական միավոր, իսկ կայսերական Եգիպտոսի էյալեթում՝ 15 միավոր։

9. **Դեֆթերդար. դեֆթերդարություն** — դեֆթեր (դաֆթար) էին կոչվում պաշտոնական մատյանները։ Էյալեթներում թիմարատերերի անունն ու հայրանունը, իբրև դիրլիք ստացած հողերի տեղն ու քանակը արձանագրելու համար գոյություն են ունեցել հատուկ մատյաններ, որոնք կոչվել են **թիմարի դաֆթարներ**: Այդ դաֆթարներում գրանցումներ կատարողները կոչվում են **դեֆթերդար**: Եղել են նաև էյալեթի (կամ վիլայեթի) մարդահամարի արդյունքների գրանցման մատյաններ։ Դեֆթերդարությունը (դեֆթերդարլըք) եղել է էյալեթների հատուկ վարչական պաշտոնը։ Ֆերիդուն Բեյի ցուցակում էյալեթի վարչական միավորներից հիշվում են նաև թիմարի դեֆթերդարություններ (օրինակ, Ռումելիի թիմարների դեֆթերդարություն)։ Վարչական միավորների մեծ մասը ունեցել են դեֆթերդարություն։

10. **Քեթխուդա, քեթխուդայություն.** քեթխուդա բառն ունի տարբեր իմաստներ. օրինակ՝ մի տան, վարչական օրգանի, կամ հատուկ գործի համար նշանակված վստահելի անձը։

Վեզիրներն ունեցել են իրենց հատուկ քեթխուդաները։ Եղել են նաև սուլթանի քեթխուդաներ, էսնաֆների քեթխուդաներ և այլն։ Քեթխուդայությունը քեթխուդայի պաշտոնն է, որի պարտականությունն էր կատարել թիմարների և նրանց դիրլիքների գրանցումները։ Ֆերիդուն Բեյի ցուցակում հիշվում են էյալեթների քեթխուդայությունները (օրինակ՝ Դիարբեքիրի կամ Ռումելիի դեֆթերի քեթխուդայություն)։

11. **Միրի աքընջյան**—Օսմանյան բանակում լավ զինված ու զրահավորված թեթև հեծյալ զորամասերը կոչվում էին **աքընջի**: Այս զորամասերը հետախուզում էին թշնամու դիրքերը։

Աքընջի զինվորների պետը կոչվում էր միրի աքընջյան։

Ֆերիդուն Բեյը իր ցուցակում հիշում է «միրի աքընջյան» Ռումելիի էյալեթում և Նիկոպոլի ու Սելիսթրեի լիվաներում։ Հավանորեն այդ լիվաներումն են կենտրոնացվել աքընջի զինվորները։

12. **Միրի յուրուքան** — Օսմանյան կայսրության ենիչերիական բանակից ա-

ռաջ գոյություն ունեցող զորամասերից հայտնի են յայա, յուրուք և մուսելլեմ կոչված զինվորները։ Ենիչերիական կանոնավոր բանակը կազմակերպվելուց հետո, վերոհիշյալ զորամասերը ճակատից անցել են թիկունք և պատերազմի ժամանակ ճանապարհներ են կառուցել, խրամատներ փորել, սննդամթերք ու ռազմամթերք փոխադրել և այլն։ Յուրուք զորամասերը աշխատել են գլխավորապես Թուրքիայի եվրոպական մասում։ Յուրուքների պետը կոչվել է «միրի յուրուքան»։ Յուրուքանը՝ յուրուքի հոգնակի ձևն է։

13. Մալիե — բառացի նշանակում է ելևմտական, ֆինանսական, պետական եկամտի և ծախքերի վարչություն, ավելի ուշ՝ մինիստրություն (նեզարեթ)։ Մալիյե նեզարեթի՝ ֆինանսների մինիստրություն։

Ֆերիդուն Բեյը Թուրքիայի վարչական բաժանման ցուցակում մի շարք վարչական միավորումներից հիշում է նաև ելևմտական դեֆթերդարությունները։ Այսպիսի միավորներ են հիշվում եվրոպական մասում՝ Բոդինի, Թեմեշվարի էյալեթներում, ասիական մասում՝ Կարամանի, Սվազի, Շամի, Հալեպի, Էրզրումի և Մոսուլի էյալեթներում։ Այդ ելևմտական վարչությունները էյալեթի սահմաններում վարել են ելևմտական գործերը։

14. Հյուքյումեթ — տե՛ս Ք. Զելերիի «Ջիհան նյումա»-ի 30-րդ ծանոթագրությունը։

15. Օջաքլըք — տե՛ս Ք. Զելերիի «Ֆեզլեքե»-ի ծանոթ. 5. օջաք բառը թուրքերեն լեզվում լայն իմաստ ունի (հայերեն օճախ), կրակի օճախ, հանքահոր, օսմանյան բանակում զինվորական խումբ (օր. ենիչերիական օջաք) և այլն։ Այստեղ «օջաքլըքը» այլ իմաստ ունի։ Պատմագիր Ահմեդ Ռասիմը հետևյալ բնորոշումն է տալիս։ «Օջաքլըք» էին կոչվում այն վարչական փոքր միավորումները, որոնց մեջ մի քանի գյուղերի կամ կաղայի տասանորդից և սովորութային հարկերից ստացված եկամուտը հատկացվում էր նավաշինարանի (թերսանե) ծախքերին և կամ բերդապահների, քաղաքի տեղական զինվորների ուլուֆեներին (ռոճիկ). հաճախ օջաքլըքի եկամտի մեջ, վերոհիշյալներից բացի, մտնում էին նաև ջիզիեի (գլխահարկ), մետաքսի և մաքսային եկամուտները»*։

Ի. Հ. Ուզունչարշըլըի բացատրությամբ, Արևելյան Անատոլիայում կային մի շարք սանջակներ, որոնք չունեին թիմարներ և զեամեթներ. կառավարությունը այդ սանջակները հանձնել էր իրենց նախկին տերերին՝ իբրև սեփականություն։ Այդ սանջակները ճանաչում էին օսմանյան պետության գերիշխանությունը և հարկ եղած դեպքում կատարում էին զինվորական ծառայություն։ Այդ սանջակները ժառանգական կարգով անցնում էին բեյի որդուն, եղբորը կամ մոտիկ ազգականներին**։

Ֆերիդուն Բեյի ցուցակում Դիարբեքիրի էյալեթում հիշվում է հյուքյումեթ և օջաքլըք միասին վերցրած և 8 օջաքլըք, Չըլդըրի էյալեթում՝ 6 օջաքլըք, Վանի էյալեթում 3 հյուքյումեթ-օջաքլըք, 5 օջաքլըք, մեկական օջաքլըք՝ Բաղդադի և Շեհր Զորի էյալեթներում։

16. Ուրբանի բերիյե — ուրբան էին կոչվում արաբական անապատներում ապրող վրանաբնակ արաբները (արաբ բեդեվիներ)։ Բերիյե նշանակում է անապատ։ Ուրբանի բերիյե-անապատաբնակ։ Ֆերիդուն Բեյի ցուցակում, Բաղդադի էյալեթում հիշված են անապատաբնակ ցեղեր, որոնք կազմում էին առանձին լիվա։

* Ahmet Rasim, Osmanli Tarlhi, c. I, s. 429.
** I. H. Uzunçarşılı, Osmanlı Tarlhi, c. II, s. 572.

17. Վոյվոդա, վոյվոդալըք (վոյեվոդություն) — վոյվոդա՝ սլավոնական воевода բառից։ Այն Ռուսաստանում վոյեվոդա էին կոչվում զորավարները, քաղաքի և քաղաքային շրջանի պետերը, իսկ Լեհաստանում՝ խոշոր վարչական միավորների պետերը։ Վոյեվոդությունը դա վոյեվոդայի կոչումն ու պաշտոնն է, կամ վոյեվոդայի իշխանությանը ենթակա երկիրը կամ մարզը։

Օսմանյան կայսրության եվրոպական մասում որոշ երկրամասեր և մարզեր կոչվում էին վոյեվոդություն, նրանց վարչական պետերը՝ վոյեվոդա։

Ֆերիդուն Բեյի ցուցակից պարզվում է, որ Էֆլաքն ու Բողդանը (Վալախիան և Մոլդավիան) համարվել են վոյեվոդություն.

18. Ստամբուլի թաղամասերի քննության հրամանը ուղղված է աշխատանք և ապրուստի միջոցներ փնտրելու համար Թուրքիայի տարբեր շրջաններից Ստամբուլ եկած հայ, քուրդ և մասամբ նաև թուրք աշխատավոր (մշակ, բանվոր, քայքայված արհեստավոր) տարրերի դեմ, որոնք ստիպված էին թողնել իրենց տունն ու տեղը, ընտանիքն ու երեխաները և իբրև «պանդուխտ» (ղարիբ) ապրել Ստամբուլի խաների «օդաներում», արհեստանոցներում («դյուքաններում»)։ Ֆերմանից պարզվում է, որ պանդխտության այս հոսանքը դեպի Ստամբուլ սկսվել է դարեր առաջ և շարունակվում է մինչև մեր օրերը։

Ստամբուլի այդ «պանդուխտների» շարքում մեծ թիվ են կազմել հայ աշխատավորները, արհեստավորները, մասամբ նաև մանր առևտրականները։ Թուրքիայի հայաբնակ շրջաններից եկած տասնյակ հազարավոր հայ պանդուխտներ Ստամբուլում ապրել են խիստ ծանր պայմաններում։ Ֆերմանում պարզ կերպով հիշատակված է, որ մեկ «օդայում» կամ «խանութում» ապրել են մինչև 8—10—15 մարդ։ Պետք է նկատի ունենալ, որ այդ «օդաներում» և «դյուքաններում» նրանք թե՛ աշխատել են և թե՛ ապրել։ Պարզ է, որ յուրաքանչյուր պանդուխտ ծննդավայրում թողել էր իր ընտանիքը, որի ապրուստը պիտի հոգար իր թափած քրտնաջան աշխատանքով։

Ֆերմանում նշվում է, որ այդ տարրերը «խախտում էին Ստամբուլի կարգն ու կանոնը, շարիաթով սահմանված բարքերն ու սովորությունները»։ Փադիշահը սրտի ցավով (?) նշելով, որ այդ տարրերը իրենց «հայրենիքում վարն ու ցանքը թողել եկել են Ստամբուլ», ֆերմանով կարգադրում է այդ պանդուխտներին վերադարձնել իրենց տեղերը և «Ստամբուլը սրբել ու մաքրել» նման տարրերից...»

Պետք է նկատել, որ Ստամբուլի արքունիքը, վեզիրները, փաշաները և առհասարակ տիրող շրջանները դարեր շարունակ հալածել են երկրի հեռավոր շրջաններից եկած աշխատավորությանը՝ մայրաքաղաքը, ինչպես իրենք են անվանել «Երջանիկ Ասիթանեն» մաքրելու և այդ «անհարազատ տարրերից» ազատվելու համար։

XVI դարին վերաբերող այդ դաժան հալածանքը շարունակվել է նաև հետագա դարերում, ընդհուպ մինչև սուլթան Աբդուլ Համիդի շրջանը և նրանից հետո՝ ավելի դաժան միջոցներով երիտասարդ թուրքերի իշխանության տարիներին։

## ԿՈՉԻ ԲԵՅ

1. Ռիսալե — բառացի նշանակում է նամակ, բրոշյուր, փոքր ուսումնասիրություն, զեկուցման ներկայացված գրություն։ Կոչի Բեյի «Ռիսալեն» փադիշահի հրամանով կատարված ուսումնասիրության վերաբերյալ ներկայացված զեկուցագիր է։ Հետագայում հաճախ հանդիպում ենք նման ռիսալեների։

2. Թուրք պատմագիրները «իսլամական երկրներ» ասելով նկատի ունեն օսմանյան պետությունը։

3. Կուլ — նշանակում է գերի, ռազմագերի (որին կարելի է վաճառել), ստրուկ, ծառա, ռազմագերիներից կամ ստրուկներից կազմված բանակի զինվոր։ Կափու կուլի՝ փադիշահական բարձր Դռան ծառայող զինվոր։ Սրանք կոչվում էին նաև Կափը խալքը։ «Կուլ դասի» մասին խոսելիս, Կոչի բեյը նկատի ունի ժողովրդի հասարակ խավերը, ցածր ծագումով մարդկանց։

4. Նեդիմ և մյուկարրիբ.— նեդիմ նշանակում է խոսակից, զրուցակից, բաժակի և զվարճության ընկեր։ Մեծ մարդկանց, սուլթանին գեղեցիկ խոսքերով և զվարճալի ասացվածքներով զբաղեցնող անձնավորություն։ Այդ ընդունակության տեր մարդը, հատկապես սուլթանների նեդիմները, կոչվում էին «նեդիմի խաս»։

Մյուկարրիբ՝ մոտիկ և վստահելի անձնավորություն։ Սուլթանին մոտ կանգնած անձինք նույնպես «մյուկարրիբ» էին կոչվում, որոնք օգտվելով սուլթանի հետ ունեցած հարաբերություններից, ինչպես նշում է Կոչի Բեյը, որոշ մարդկանց, անգամ վեզիրների նկատմամբ չարախոսություններ և զրպարտություններ էին անում և հաճախ անմեղ մարդկանց դժբախտության պատճառ դառնում։

5. Բաբ-ուս-Սեադե — Բաբ՝ դուռ, մուտք, դերգահ իմաստով է գործածվում, սակայն ունի շատ բարդություններ, որոնցից կարևորներն են՝ Բաբը Ալի, Բաբը Մեշեյխեթ, Բաբը Սերասքերի և այլն։ Բաբ-ուս-Սեադե՝ հաճախ գործ է ածվում նաև Բաբ-ուս-Սեադե էլ-Շերիֆե, նշանակում է սուլթանական հարեմ (կանանոց)։ Այդ հարեմի մեծը կոչվում էր Հարեմ-Աղասը, կամ Բաբ-ուս-Սեադե Աղասը։

6. Բերայա—հաճախ գործ է ածվում ռեայա և բերայա, որոնք ռաիյեի և բերիյեի հոգնակի ձևն են։ Ռաիյե կամ ռայեթ բառացի նշանակում է հոտ, արածող կենդանիների հոտ։ Գործածական իմաստով մի գերիշխողի իշխանությանը ենթակա և պետական հարկերը վճարող մարդիկ, ժողովուրդ, զենք կրելու իրավունք չունեցող հպատակներ։ Բերայա (բերիյե)—զենքի իրավունք ունեցող ընտրյալ մարդիկ, հպատակներ։

7. Ներքին մարդիկ (էնդերուն)— էնդերուն՝ բառացի նշանակում է ներքին, ի սրտե, ներքուստ։ էնդերուն էր կոչվում փադիշահի հարեմը (էնդերունի-հյումայուն)։ էնդերունի ծառայողները կոչվում էին էնդերունի մարդիկ, իսկ նրանց պետերը՝ էնդերունի աղաներ։

8. Ղազավաթ (եզ. ղազա)—սրբազան պատերազմ. թշնամու կրոնի նկատմամբ իսլամական կրոնի ձեռք բերած հաղթանակը։

9. Բաշմաքլըք — սուլթանների հատկացումը. կոչվում է նաև խաս արփալըք (ռոճիկ, թոշակ)։

10. Յուրուք — բառացի նշանակում է արագավազ ձի կամ կառք, մշտական բնակավայր չունեցող քոչվոր ժողովուրդ, բեդվի, վրանաբնակ։ Անատոլիայում մեծ քանակությամբ ոչխարներ պահող թուրքմեն քոչվոր աշիրեթները կոչվում էին յուրուքներ։

11. Ղուլամիյե — ղուլամ բառացի նշանակում է տղա, ծառա, ստրուկ. Ղուլամիյե՝ ծառա կամ իրավազուրկ մարդկանցից գանձվող ապօրինի հարկ։ Ինչպես նշում է Կոչի Բեյը, գլխահարկին (ջիզիե) և տան հարկին (ավարիզ) իբրև հավելված մյուբաշիրները (տուրքահավաքները) վերցրել են նաև որոշ գումար, որը կոչվել է «ղուլամիյե»։

12. Ռումելի Հիսար—Բոսֆորի նեղուցի եվրոպական ափին սուլթան Ֆա-

թիհի կառուցած ամրությունն ու բերդը կոչվում է Ռումելի Հիսար, իսկ դրա դիմաց, ասիական ափում գտնվում է Անադոլու Հիսարը:

13. Թավայիֆի մյուլուք — Անատոլիայի սելջուկյան սուլթանության խորտակումից հետո կայսրության տարբեր մասերում առաջացան անկախ իշխանություններ, որոնք կոչվում էին «Թավայիֆի մյուլուք» (մելիքների ժողովուրդներ, թայֆաներ)։ Սրանք կոչվել են նաև «Անադոլու բեյլիքլերի» (Անատոլիայի բեյություններ)։ Դրանց թվում էր Օսմանի գլխավորությամբ կազմված «Օսմանլի բեյլիքին» (Օսմանյան բեյություն)։

14. Թուրքական աղբյուրներից պարզվում է, որ Կոչի Բեյի այս «ռիսալեն» մինչև վերջերս մնացել է անհայտ։ Միայն 1932 թվականին թուրք պատմաբան Ալի Քեմալ Ակսյաթը թուրքական արխիվներում հայտնաբերել է այդ «Ռիսալեն» և հրատարակել։ Դժբախտաբար մեզ չհաջողվեց ձեռք բերել թուրքերեն բնագիրը։ Մեր ձեռքի տակն է այդ «Ռիսալե»-ի ռուսերեն թարգմանությունը, որ նատարել է Ա. Ս. Տվերիտինովան (տե՛ս Ученые записки Института востоковедения, VI, 1953, стр. 212—268):

## ՀԱՎԵԼՎԱԾ

### Ֆերիդուն Բեյի «Սուլթանների գրություններ»-ից

1. Կայսերական գանձարանը («Խազինեի Ամիրե») սկզբնական շրջանում ունեցել է սոսկ գանձարանի (խազինե, խազնե) բնույթ, հետագայում վերածվել է մինիստրության, որի գործերը վարել են դեֆթերդարները, որոնք մյուս դեֆթերդարներից տարբերվելու համար կոչվել են «բաշ դեֆթերդար» (հետագայում ֆինանսների մինիստր)։

2. Թաքրիր էին կոչվում այն պաշտոնական գրությունները, որոնք ներկայացվում էին սուլթանին՝ կառավարության առանձին մինիստրների, պաշտոնական մարմինների կամ անձանց, ինչպես նաև օտար պետությունների դիվանագիտական ներկայացուցիչների կողմից։

Հայկական և հունական պատրիարքարանների կողմից ներկայացված պաշտոնական գրությունները նույնպես թաքրիր են կոչվել։

Թուրք բառարանագետ Շեմսեդդին Սամին թաքրիրը համարում է եվրոպական լեզուների «ռապորտ» բառի թարգմանությունը, որը երբեմն ստանում է «նոտա» իմաստը։ Այստեղ հիշված թաքրիրը կազմված է պետության բաշ դեֆթերդարի կողմից, որը սադրազամ Թերխունջի Ջաղե Ահմեդ փաշայի կողմից ներկայացվել է սուլթան Մուհամմեդ IV-ին։ Թաքրիրը գրված է 1064 (1653—1654) թվականին։

Թուրք պատմագիրների ասելով, այդ թաքրիրը, որը պետության եկամտի և ծախքերի համառոտակի բովանդակությունն է, օսմանյան պետության բյուջեի առաջին նմուշն է հանդիսանում։ Թաքրիրի բովանդակությունը պարզ կերպով ցույց է տալիս այդ «բյուջեի» պրիմիտիվ բնույթը և միաժամանակ որոշ գաղափար տալիս Օսմանյան հզոր կայսրության ֆինանսական սահմանափակ միջոցների ու պետության եկամտի հիմնական աղբյուրը հանդիսացող բազմաթիվ հարկերի մասին։

Վերոհիշյալ թաքրիրով ներկայացված բյուջեի նախագծից բացի, թուրք պատմագիրները հիշատակում են մեկ ուրիշ «կայսերական գանձարանի նախա-

գէծ» (բյուջե), որը վերաբերում է 1071 (1660) թվականին և շատ քիչ է տարբերվում առաջինից։

Այդ բյուջեների նախագծի մասին ավելի կոնկրետ պատկերացում տալու համար հիշենք մի քանի թվական տվյալներ։ «Թաքրիրի» և «նախագծի» տվյալներով, օսմանյան կայսրության պետական ծախսերը հիմնականում կազմել են.

Սուլթանի տարեկան «գրպանի ծախսերին» հատկացվում է «վեց անգամ հարյուր հազար ալթուն (ոսկի)»**։

Բարձր Դերգյահի 54.220 ենիչերիներին իբրև տարեկան ռոճիկ (չորս վճարով)՝ մոտ 3710 քիսե***։

Տարբեր դասերի զինվորներին և զինվորական ծառայողներին, արքունի ծառայողներին, որոնք թվով 75976 մարդ էին, տարեկան մոտ 5070 քիսե։

Բյուջեի նախագծով ամբողջ Օսմանյան կայսրության մեջ (մայրաքաղաքում *և բերդերում) ծառայող բոլոր կափու-կուլերին (թվով) մոտ 95.000 մարդ)՝ տարեկան մոտ 7720 քիսե։

Այսպիսով ծախսերի առյուծի բաժինը ընկել է արքունիքին և բանակին։

Օսմանյան կայսրության ֆինանսական դրության մասին շատ հետաքրքիր տեղեկություններ է տալիս XVII դարի հայտնի պատմագիր-գիտնական Քյաթիբ Չելեբին (Հաջի խալիֆան) իր «Դյուսթուր-ուլ-Ամել» աշխատության մեջ****.

Սուլթան Սուլեյմանի ժամանակ 970 (1562) թվականին բոլոր ռոճիկ ստացողների թիվը կազմել է 41.479 մարդ, որոնց տարեկան ստացած ռոճիկը 1223 բեռ (յուք)***** ակչե էր, իսկ 997 (1588) թվականին՝ համապատասխանորեն, 64,425 մարդ և 1782 բեռ։

1004 (1595) թվականին՝ 81870 մարդ, 2512 բեռ։

1017 (1608) թվականին՝ 91202 մարդ, 3800 բեռ։

Սուլթաններ Օսմանի և Մուստաֆայի օրոք ռոճիկ ստացողների թիվը հասել է 100.000 մարդու, իսկ սուլթան Մուրադ IV-ի օրոք դրանց թիվը զգալիորեն կրճատվում է։

«Այս դարում,—գրում է Քյաթիբ Չելեբին,—սիփահի դասի թիվը՝ 20 հազարից, ենիչերի դասի թիվը՝ 30 հազարից պակաս չէր...։ Զինվորների թվի ավե-

---

* Ahmet Rasim, Osmanli Tarihi, c. II, s. 225—229.

** Այդ հաշվով սուլթանը, իբրև «գրպանի ծախս» ստացել է 100.000×6 = 600,000 ալթուն = 3750 քիսե։ Այլ խոսքով, այդ «գրպանի ծախսը» կազմել է Օսմանյան կայսրության պետական եկամուտների (և ծախսերի) մոտ 26 տոկոսը։

*** Քիսեն այդ դարում հավասար է 40,000 ակչեի, կամ 500 ղուրուշի, իսկ ղուրուշը՝ 125 ակչեի։

Պետք է նկատի ունենալ, որ դրամական միավորների այդ արժեքները շատ անկայուն էին և մշտական փոփոխության ենթակա։ Գոյություն ուներ նաև դրամների պետական կուրս և շուկայի կուրս, ըստ որում վերջինը միշտ ցածր էր լինում։ Ֆրանսիացի գիտնական Մ. Բելինը Թուրքիայի դրամական սիստեմի և կուրսի մասին տալիս է պատմական հետաքրքիր տեղեկություններ. տե՛ս նաև մեր «Թուրքական աղբյուրները...» հատ. Ա, էջ 114—115։

**** Հաջի խալիֆայի կամ Քյաթիբ Չելեբիի մասին տե՛ս աշխատության Քյաթիբ Չելեբի գլուխը։

***** Բեռը (յուք) հավասար է 100.000 ակչեի։

վացումը այնքան էլ ցավալի չէ։ Անհրաժեշտ է ռոճիկների գումարը հին օրենքների համաձայն և նպատակահարմար միջոցներով պակասեցնել*։

Գանձարանի եկամուտների և ծախքերի մասին Քյաթիբ Չելեբին տալիս է հետևյալ տեղեկությունները։

972 թվականին պետական գանձարանի եկամուտը 1827 բեռ էր։

1000 թվականին եկամուտը՝ 2934, ծախսերը՝ 3604 բեռ։

1006 թվականին եկամուտը՝ 3000, ծախքերը՝ 9000 բեռ։ Հետագայում, մինչև 1053 թվականը ծախսերը սկսում են կրճատվել։ 1060 (1650) թվականին եկամուտը հասնում է 5329 բեռի, իսկ ծախսերը 6872 բեռի։ Այսպիսով ծախսերը 1600 բեռով ավելի էր։ Պատմագիրը նշում է, որ ծախսերի այդ բացը փակվել է գանձարանում պահված պահեստի գումարներով։

Օսմանյան կայսրության XVI—XVII դարերի, հատկապես դրանց նախորդած ժամանակաշրջանի ֆինանսական դրության մասին թուրք պատմագիրները գրեթե տեղեկություն չեն տալիս։

Վերոհիշյալ տվյալները, անտարակույս անբավարար են և իրական դրությունը չեն արտացոլում։ Գիտահետազոտական ուսումնասիրություններ գրեթե չկան։ Արժեքավոր է Ստամբուլի ֆրանսիական դեսպանության թարգման Մ. Բելինի աշխատությունը, որի մեջ հեղինակը տալիս է Թուրքիայի ֆինանսական դրությունը (պետական բյուջեն, ֆինանսական օրգանները, օսմանյան դրամները և այլն)։ Այդ աշխատությունը թարգմանված է թուրքերենի**։

3. Մուկաթաա — հաճախ գործ է ածվում մուկաթաաի միրիյե։ Մուկաթաա նշանակում է միանվագ վճարով տրված հող, կալված։

Մուկաթաան Թուրքիայի պետական եկամտի կարևոր աղբյուրներից է։ Թուրքիայում հնուց ի վեր կային «փադիշահական խասեր» կոչվող մեծ հողատարածություններ, որոնց շարիաթական տնօրինողը մնում էր պետության գանձարանը։ Ավելի ուշ, վեզիրներին և էմիրներին հատկացված խասերը ետ ստիճանաբար կրճատվելով, միացվեցին փադիշահական խասերին։ Բացի այդ, թիմարներն ու զեամեթները ազատ մնալու դեպքում, նրանց հողերն էլ գրավվում էին պետության կողմից։ Այդ բոլոր հողերը համարվում էին պետական մուկաթաաներ, որոնցից ստացված եկամուտներն անմիջականորեն պետությանն էին պատկանում։

4. Ջիզյե — շարիաթական գլխահարկ, որը առնվում էր ոչ-մուսուլմաններից։ Սա ես օսմանյան կառավարության պետական եկամտի կարևոր աղբյուրներից էր։

Քրիստոնյա հպատակները այս հարկը վճարում էին երեք կատեգորիաներով. ցածր, միջակ և բարձր՝ 10, 20 և 30-ական ակչե։ Հետագայում սուլթան Մուրադ III-ի օրոք, 982—1003 (1574—1595) թվականներին, խմիչքներից գանձված հարկը ավելացվեց ջիզյեի վրա, որով ստացվեց 15, 30 և 45 ակչե։ Հետագայում նորից բարձրացվեց։ Միայն 1272 (1855—1856) թվականին ջիզյեն վերացվեց և քրիստոնյաները զինվորական ծառայության փոխարեն սկսեցին վճարել հարկ, որը հայտնի է «բեդելի ասկերի» անունով։ Այս նոր տուրքը քրիստոնյաների դրու-

*Քյաթիբ Չելեբիի հաղորդած հիշյալ տեղեկությունները տպագրված են Ահմեդ Ռասիմի «Օսմանլը Թարիխի»-ում իբրև հավելված. հատ. 2-րդ, էջ 177—180։

** M. Belin, Essais sur l'histoire economique de la Turquie d'après les ecrivains originaux. Paris, 1865.

Turkiye iktisadi tarihi hakkinda tetkikler, Türkçeyc ceviren M. Ziya Istanbul, 1931.

*ծյունը ոչնչով չէր փոփոխում։ Նրանք դարձյալ վճարում էին երեք կատեգորիայով՝ 15, 30 և 60-ական ղուրուշ։ Հարկը վճարում էին միայն տղամարդիկ։ Հոգևորականները և պետական ծառայողների ընտանիքները ազատված էին հարկ վճարելուց։ 1908 թվականի սահմանադրության հրատարակումից հետո այս հարկը վերացվեց, քանի որ քրիստոնյաները ևս կանչվեցին զինվորական ծառայության։*

*Թաքրիրում հիշված* «ավեյի ջիզիեի» *տակ պետք է հասկանալ հետագայում այդ հարկի վրա կատարված հավելումները։*

5 Ավարիզ— *սովորական (կամ սովորութային) հարկերից է։ Այս կարգի բազմաթիվ հարկերը միացվելով, հավասարապես բաժանվում էին տվյալ վայրի բնակիչների վրա և գանձվում միանվագ։*

6. Իջևանի (օջևանի) տուրք *(«բերդելի նյուզուլ») —սա ևս սովորութային հարկերից է։ Թուրք պատմագիր Ահմեդ Ռասիմը այսպես է բնորոշում այդ հարկը. «Բանակը կամ զորամասը մի օթևանում իջևանելիս, ձիերի կերը և բանակի կարիքները ապահովող և* իջևանի էմին *(«նյուզուլ» կամ «նեզլ-էմինի») անունը կրող պաշտոնյան տեղական ժողովրդից «ավարիզ» և «նյուզուլ» անուններով հարկեր էր առնում։*

7. Ոչխարի աղնամ *(հարկ) — ոչխարից և այծից ստացված հարկը շարիաթական էր։ Այս հարկը, որը կոչվում էր նաև «ադեթի աղնամ», մակաղատեղի հարկի («աղըլ ռեսմի») հետ միասին նշանակվել է 1040 (1630—1631) թվականին։ Ոչխարի հարկը տարբեր ժամանակներում և երկրի տարբեր վայրերում գանձվել է տարբեր ձևով և տարբեր քանակով՝ ոչխարով կամ դրամով։ Այսպես, Ռումելիում 10 ոչխարից առնվում էր մեկը։ Ոչխարն ու այծը միասին էին հաշվվում, իսկ գառն ու ուլը մոր հետ միասին հաշվվում էր մեկ գլուխ։*

*Ոչխարի հարկը հավաքելու համար ոչխարները համրող պաշտոնյաները կոչվում էին «միրիջի», իսկ ոչխարի մեծաքանակ գնողներն ու վաճառողները կոչվում էին «ջելեբ»։ Ինչպես պարզվում է թաքրիրից, ջելեբներից ստացված ոչխարի հարկը կազմում էր մեծ գումար (մոտ 300 քիսե)։*

*8. Մեր ձեռքի տակ եղած աղբյուրներից հնարավոր չեղավ ստուգել այս հարկի էությունը։*

*9.* Ռուզնամեջի — *ռուզ, օր, նամե՝ գրություն. ռուզնամեջի էին կոչվում պետության ամենօրյա եկամուտներն ու ծախսերը արձանագրող ֆինանսական պաշտոնյաները։*

*10.* Սիփահի, սիլահդար, աջ ու ձախ ուլուֆեջիներ, աջ ու ձախ ղարիբներ. *XV դարից սկսած օսմանյան բանակը բաժանվում է կանոնավոր և ոչ-կանոնավոր երկու հիմնական մասի։ Կանոնավոր մասը բաժանվել է յոթ հատուկ զորամասերի՝ ենիչերիներ, սիփահիներ, սիլահդարներ, աջ-ուլուֆեջիներ, ձախ-ուլուֆեջիներ, աջ-ղարիբներ և ձախ-ղարիբներ։ Ոչ կանոնավոր զորամասերը՝ աքընջիներ, Անատոլիայի թիմարի և զեամեթի զինվորներ, Ռումելիի թիմարի և զեամեթի զինվորներ։*

*Ուլուֆեջի և ղարիբ զորամասերի զինվորները, պատերազմի ժամանակ գտնվելով բանակի աջ ու ձախ թևերում, կոչվեցին աջ-ուլուֆեջիներ և ձախ-ուլուֆեջիներ։ Նույն ձևով էլ ղարիբների զորամասերը։ Ղարիբ էին կոչվում ենիչերիական զինվորների այն խմբերը, որոնք հավաքագրվում էին հեռու վայրերից։*

*11—12.* Աջեմի օղլաններ, բոստանջի օղլաններ, բալթաջիներ, ջեբեջիներ— *տե՛ս Ա հատորի բառարանը։*

*13.* Կուլեր — *Օսմանյան կայսրության ռազմա-ֆեոդալական կազմակերպու-*

թյան մեջ բոլոր զինվորները համարվում էին սուլթանի կուլեր (ստրուկներ, ծառաներ)։ Այդ պատճառով էլ առանձին զինվորական մասերը ընդհանրապես կոչվում էին «կափու կուլի», «երլի կուլի» և այլն։ Տե՛ս Ա. Հատորի բառարանը։

14. Կալիոն — մի տեսակ ռազմանավ։

15. Իրսալիե—«իրսալ» բառից, որը նշանակում է ուղարկել՝ մարդ, զինվոր, մթերք, ռազմամթերք և այլն։ Այստեղ խոսքը վերաբերում է փադիշահական արքունիք ուղարկված գումարին կամ մթերքներին։

16. Արփա-էմինի — տե՛ս Ա. Հատորի բառարանը։

17. Ղրիմի խան, Ղրիմի խանություն, Կալղայ — Ղրիմի թերակղզին Օսմանյան կայսրությանը ենթակա մի խանություն էր կազմում։ Մայրաքաղաքը Բաղչե Սարայն էր։ Սակայն Ղրիմը փաստորեն բաժանված էր մի շարք խանությունների։ Խաներից յուրաքանչյուրը նստում էր մի քաղաքում և իշխում որոշ երկրամասի վրա։ Օսմանյան կառավարությունը պաշտոնապես կապ էր պահպանում Բաղչե Սարայի խանի հետ, որը վեզիրի աստիճան ուներ։ Ընդհանրապես սերասքերի պաշտոն վարող խանը կոչվում էր կալղայ։ Ղրիմի խաները իրենց զինվորական ուժերով հաճախ մասնակցում էին օսմանյան կառավարության կազմակերպած արշավանքներին՝ Արևելքում և Արևմուտքում։ Ղրիմի խաներն իրենց տրամադրության տակ ունեին մոտ հազար կանոնավոր զինվոր, սակայն պատերազմի դեպքում Ղրիմի խանը երկրի տարբեր մասերի ցեղերից մեծ քանակով զինվորներ էր հավաքում պատերազմելու համար։

Պատմական դեպքերից հայտնի է, որ Ղրիմի խաները պատերազմի էին գնում 30—40 հազար, երբեմն ավելի զինվորներով։

Ղրիմի խաները օսմանյան պատմության մեջ հայտնի են «Կիրայ» տիտղոսով, Մուհամմեդ Կիրայ, Սելիմ Կիրայ և այլն։

18—19. Շեյխ-ուլ-իսլամ Էբու Սուուդ էֆենդիի ֆերվան (հաճախ կոչվում է նվիրական ֆեթվա, ֆեթվայի շերիֆ) իսլամական շեյխ-ուլ-իսլամի տված որևէ հարցի մեկնաբանությունն ու որոշումն է։

Շեյխ-ուլ-իսլամ Էբու-Սուուդ էֆենդին երեք անգամ շեյխ-ուլ-իսլամ է եղել սկսած 1053 (1644) թվականից։

Ֆեթվայի բովանդակությունը ցույց է տալիս, թե իսլամական հոգևոր ղեկավարը՝ շեյխ ուլ-իսլամը, ինչպիսի հեղինակություն է ունեցել երկրի ոչ միայն կրոնական, այլև պետական քաղաքական, նույնիսկ տնտեսական հարցերում։ Ֆեթվայում Էբու-Սուուդ էֆենդին, հիմք ընդունելով իսլամական շարիաթի սկզբունքներն ու ցուցումները, մեկնաբանում է օսմանյան պետության հողային սեփականության և հողային հարկերի հարցերը։ Ֆեթվայի երկրորդ հարցից պարզվում է, որ տասանորդային հողերից առնված աշարի հարկը (տասից մեկը), շարիաթական օրենքին համապատասխանում է («հալալ է»), իսկ խարաջային հողերի վրա նշանակված խարաջը (հարկը) կարող է ավելի լինել, «եթե հողը կարող է ավելիին դիմանալ»։

Թե՛ առաջին և թե՛ երկրորդ հարցում շեյխ-ուլ-իսլամի «մեկնաբանությունները», ինչպես հայտնի է պատմական փաստերից, լոկ ձևական նշանակություն են ունեցել և մնացել են թղթի վրա։ Նույնիսկ պետական պաշտոնական փաստաթղթերում, XV—XVI դարերին հատուկ կանուննամեներում (օրենքի գրքերում) կան բազմաթիվ փաստեր, ըստ որոնց, օսմանյան պետության տարբեր էյալեթներում և լիվաներում տասանորդի հարկերը շատ հաճախ հասել են ութից-մեկի, յոթից-մեկի, վեցից-մեկի, երբեմն էլ դանձվել է երկու տասանորդ (այլ խոսքով հինգից մեկը), իսկ խարաջային հողերի համար ֆեթվայի այն ցուցումը, թե «ար-

տոնված է ավելին առնել, եթե հողը կարող է դիմանալ ավելիին, պարզապես հակասում է պատմական փաստերին, քանի որ հայտնի է, որ հողերից շատ հաճախ վերցվել են շատ ծանր հարկեր, առանց երբեք հաշվի առնելու հողի՝ այդ հարկերին «դիմանալու» հանգամանքը։

20. Բերաթ էին կոչվում այն փադիշահական ֆերմանները, որոնք տրվում էին աստիճաններ, նշաններ կամ որոշ արտոնություններ, ինչպես նաև թիմարներ և զեամեթներ շնորհելու մասին։

21. Թեզքերե էին կոչվում այն պաշտոնական թղթերը, որոնք տրվում էին Թուրքիայի բնակիչներին նրանց ինքնությունը որոշելու համար. դրանք կոչվում էին «նյուֆուս թեզքերեսի»։ Այստեղ հիշված «թեզքերեն» նույնպես պաշտոնական վկայագիր է, որը տեղական իշխանությունների կողմից տրվում էր թիմարի տերերին։

Կառավարական հիմնարկների և անձանց միջև փոխանակված գրությունները նույնպես կոչվում էին թեզքերե։

22. Ֆերհադ փաշան սադրազամ է եղել երկու անգամ, 999 (1591) թվականին և 1003 (1595) թվականին. ազգությամբ ալբանացի է։

23. Խոսքը, հավանաբար, հողերի և կալվածքների վրա աշխատող ռայաների մասին է։

24. Նեսուհ փաշան ազգությամբ ալբանացի է, սադրազամ է եղել 1020–1023 (1611—1614) թվականներին։

25. Հավանաբար պետք է լինի «էլթուլեթում»։

26. Դաֆթար, հին և նոր, համառոտ և ընդարձակ դաֆթարներ — Դաֆթար (դեֆթեր) բառացի նշանակում է մատյան, տետր։ Պատմական իմաստով դեֆթեր էին կոչվում օսմանյան պետության վարչական միավորումներում պարբերաբար կատարված հաշվեհամարների գրանցման մատյանները («թահրիր դեֆթերի»)։ Գրանցվում էին տվյալ վարչական միավորի բնակիչները ըստ տների (խանե), տան ավագի անունով, գյուղի կամ ավանի բնակիչների վճարելիք բոլոր տեսակի հարկերի անունները և քանակը (դրամով կամ բնատուրքով)։ Դաֆթարում արձանագրվում էին նաև գյուղի կամ քաղաքի հանրային օգտագործման արոտավայրերը, խոտհարքները, ջրաղացները և այլն, ինչպես նաև վակֆերը։ Քանի որ նման գրանցումները կատարվում էին պարբերաբար, այդ պատճառով դաֆթարները լինում էին հին դաֆթարներ (դեֆթերի աթիք) և նոր դաֆթարներ (դեֆթերի ջեդիդ)։ Դաֆթարները կարող էին լինել նաև մանրամասն դաֆթարներ (դեֆթերի մուֆասսալ) և համառոտ դաֆթարներ (դեֆթերի մուհթասար)։

27. Սովորութային կամ սովորական ճարկեր—տես «Ջիհան նյումայի» 36-րդ ծանոթագրությունը։

28. Բեննաք, մյուջերրետ, բաղճավա և բափու. Սադրազամ Նեսուհ փաշային տրված կալվածագրում նշված այս անունները կրող հարկերը պատկանում էին «շարիաթական հարկեր» (թեքալիֆի շերիյե) անունով հայտնի հարկերին։ Այդ հարկերը, ի տարբերություն սովորական հարկերի, արտոնված և հաստատված էին շարիաթի կողմից։ Այդ շարիաթական հարկերի հիմքը կազմող չորս անուն հարկերի (զեքաթ, աշար, խարաջ և ջեզիյե) հիման վրա նշանակվում և գանձվում էին գլխահարկի տարբեր տեսակները, երկրագործության և անասնապահության բոլոր բնագավառների բազմաթիվ հարկերը, արհեստների և այլ աշխատանքների, առևտրի բոլոր տեսակների հարկերն ու մաքսերը և այլն։

Նեսուհ փաշայի կալվածագրում հիշված բեննաքի, մյուջերրետի հարկերը

բաղձավան գլխահարկի տարատեսակներն են, որոնք առնվում էին հողամշակությամբ զբաղվող և այլ աշխատանքների ընդունակ մարդկանցից։

Թափուի ճարկը գանձվում էր պետական հողերից, որոնք մշակությունից դուրս էին մնացել և որոնց վրա շենքեր էին կառուցվել։

29. Նիշան — բառացի նշանակում է նշան, պատկեր, որոշիչ պատկեր, տարբերելու համար տրված նշան և այլն։

Նիշանը գործածվում է նաև շքանշանի և մեդալների իմաստով։ Պատմականորեն նիշանը նշանակում է փադիշահներին հատուկ թուղրա։ Ինչպես հայտնի է փադիշահական ֆերմանների, բերաթների գլխին դրոշմվել է այդ պաշտոնական նիշանը, թուղրան։

## ՇԱՆԻ ԶԱԴԵԻ ՓԱՍՏԱԹՂԹԵՐԻ ՄԱՍԻՆ

1. Դրամի շրջանառությունը կարգավորելու համար սուլթանական արքունիքի, կառավարության, շեյխ-ուլ-իսլամի միջոցառումները իրականում ամենևին նկատի չունեին ժողովրդի շահերը, այլ ամբողջապես բխում էին օսմանյան ռազմաֆեոդալական ղեկավար շրջանների շահերն ապահովելու ցանկությունից։

2. Նկատի ունի 1824 թվականի որոշումը։

3. Թե պատմագիր Շանի Զադեն, և թե գրեթե բոլոր թուրք պատմագիր-տարեգիրները, իրենց «պատմություններում» հաճախ անդրադառնում են այդ հարցերին և հիշատակում պետական ղեկավար շրջանների գումարած խորհրդակցությունները այդ հարցի վերաբերյալ, օրենսդրական և վարչական կարգադրությունները, սուլթանական ֆերմանները և այլն։ Տարեգիր Շանի Զադեի XIX դարի առաջին քսանամյակին վերաբերող հիշյալ փաստերը, ինչպես նաև նրանից առաջ Ջիվդեթ փաշայի և մյուս պատմագիր-տարեգիրների բերած նույնանման փաստերը, պարզ կերպով ցույց են տալիս, որ Թուրքիայում դրամի շրջանառությունն ու նրա արժեքը XVII դարի վերջերից սկսել է խախտվել և ժողովրդական մասսաների նյութական դրության քայքայման պատճառ հանդիսացել։ Սակայն ո՛չ թուրք պատմագիրները, ո՛չ էլ օսմանյան պետության ճակատագիրը տնօրինողները չեն կարողացել բացատրել այդ փաստը, գտնել չարիքի իրական պատճառը։

Դրամի արժեքի անկումը, շրջանառության խանգարումը կապված էր երկրի տնտեսական կյանքի, օսմանյան Թուրքիայի ռազմաֆեոդալական իրավակարգի անկման ու քայքայման հետ։ Այդ պատճառով պետության բոլոր միջոցառումները, որոշումներն ու սուլթանական ֆերմանները անցնում էին ապարդյուն։ Օսմանյան կառավարությունը, սուլթանը շատ կարճ ժամանակի ընթացքում, 10—12 տարում, չորս անգամ անդրադարձել են դրամի շրջանառությունը կարգավորելու հարցին։

4. Տարեգիրը նկատի ունի Ստամբուլ, Էդիրնե և Բրուսա քաղաքները։

5. Այս հատվածում Շանի Զադեն սրտի ցավով ստիպված է արձանագրել, որ դրամների կարգավորման հարցը «որոշակի օգուտ չապահովեց», «չարաշահությունները շարունակվեցին» և այլն։ Տե՛ս նաև 3-րդ ծանոթագրությունը։

6. Նշված վայրերը գտնվում են Դիարբեքիրի էյալեթում, միայն Քղին՝ Էրզրումի էյալեթում։

7. Որպես խտրականության բնորոշ օրինակ Շանի Զադեի վերոհիշյալ հատվածից նշենք կոնկրետ փաստերը. 1) «Հնուց ի վեր ընդունված կարգով մուսուլմանների շենքերի երկարությունը 12 արշին էր, իսկ ռայաներինը՝ 10 արշին...»։

2) Քարուկիր շենքերի կառուցումը միայն մուսուլմաններին է թույլատրվել, իսկ ռայաներին արգելվել է։

Խտրականության նման փաստերի կարելի է հանդիպել նաև մյուս թուրք պատմագիր-տարեգիրների երկերում։

8. Դար–ուլ–խելաֆեթ, խալիֆայության կենտրոն՝ Ստամբուլ։

9. Ցեմենտի գյուտից առաջ թրծված աղյուսի փոշուց և կրից պատրաստում էին ծեփ, որը կոչվել է խուրասանի։

(صورت خط همايون بودر)

اصلح الله الملك القادر نامهٔ همايونم واصل اولیجق معلوم اوله كه ادملرندن خليفه
مقصودى كوندروب صلح مراد ايلمشسك بر مقدار ايلچيكى اكلندرمكدن مراد
بعض اشغالمز واريدى اول اشغالمزى برطرف ايلدك امدى اكر صلح مرادك ايسه
اجداد عظامم زمانندن تحت حكومت شعارمده داخل اولان مملكتلرى بنده
بكلر بكلريمزه تسليم ايليه سك عساكر ظفرمآثرم واروب ضبط ايليه لر وحادثا
ويريله كلن پيشكش وهدايايى سال بسال ارسال وايصال ايليه سك اكر ايچمزسك
بو سرحدلرده قشلايوب اول بهارده عساكر بامداد ايله ايل ومملكته وارم
مقرردر [illegible] ميدانه كل سرورلك دعواسنده اولا [illegible] پرده نشينلك نامردادر
والحق فورقن انه بنوب قليچ قوشانمق خطادر ازل ازالسده مقرر اولان كلورلكم
چكمیه سك طرشو كلديك والسلام على من اتبع الهدى الواقع في شهر رمضان
سنه ثمان واربعين والف

Տեքստ 1. Սուլթան Մուրադ IV-ի Իրանի շահ Սաֆիին 1049 թվականին (1639)
ուղարկած սպառնական նամակը
(Քյաթիբ Չելեբի, «Ֆեզլեքե», հատ. II, էջ 206)

(صورت عقد مصالحه و شروط صلح)

جسان و بدره و مندلجین و درتنك و درنه تا سرمیل نام محله دك و مندلجین و درتنك
مابینده اولان صحرا ال وجاق عشیرتنك ضیاء الدین و هارون قبیله لری وزنجیر
قلعه نك طرف غربیسنده اولان طاغلر قلعهٔ مزبوره یه ناظر اولان اطراق
شهرزوله چیقان كدوك ده دك و قزلجه قلعه و توابعی طرف شهریاریدن ضبط
اولنوب بونلردن ماعدا اخسقه و قارص و وان و شهرزول و بغداد و بصره نك
سائر سنورلری داخلنده اولان قلاع و بقاع و نواحی و اراضی و جبال و تلال
شاه جانبندن قطعا دخل و تعرض اولنمیه و مندلجیدن درتنكه وارنجه اولان
طاغلر و پیروزی و یكه رزد یادخی دیرلر وزنجیر قلعه نك جانب شرقیسنه قلان
قلعه لر و اورمان و توابعی اولان قریه لر و مهربان و توابعی شاه جانبندن مضبوط
اولوب انلرك سنورلری داخلنده اولان یرلره طرف سلطنتدن اولنمیه وزنجیر
قلعه كه طاغك قله سنده واقع اولمشدر و وان سرحدنده اولان قطور و ماكو و قارص
جانبنده مغازبرد نام قلعه لر طرفیندن هدم اولنه و السلام

*Տեքստ 2. Կասրի Շիրինում (Զեհաբում) 1049 թվականի (1639—1640) մուհարրեմ ամսի 14-ին Թուրքիայի և Իրանի միջև կնքված հաշտության պայմանագիրը։*

*(Քյաթիբ Չելեբի, «Ֆեզլեքե», հատ. II, էջ 217)։*

( صورت أمر شريف )

اچق باش ملکی سلومانه حکم که ایمرهٔ بالا سرداری کنجرو وایمرهٔ زیر
سرداری داوید زیدت معالیهما یدزله بو دفعه عتبهٔ علیهٔ کردون وقار
وسدهٔ سنیهٔ عنایت مدارمه سنك وسنکله معا دائرهٔ اطاعت وانقیادده اولان نوات
وازناورلرینك ورود ایدن عریضه لری مفهوم ومنداولنه دنیر و دولت علیه یه
اختصاص ومصادقتلری درکار ومرکز رضاجویی واستقامتده استقرارلری
پدیدار اولان کورجی طائفه سنی براز زماندر اضلال واغوا وحیل وخدعه
ایله کورجستانه قصد تعدی واستیلا ایدن مسقولو عسکری بوندن اقدم
تفلیس طرفنه پای انداز مکر وحیل اولدقلرنده رعایای دولت علیه ده
واملاك واراضیلرینه ضرر وزیانلری اولیه جغنه یمین بالله ایدرك اول امرده
استمالت وامنیت صورتنی کوستروب صکره دن سوء قصد واقتدا وبالنفس
سنی اغفـال وتفلیس طرفنه ارسـال ایله حبس وتوقیف مثللو تهدیدات
اشعـار وایما ایتملر ایسه ده سنکه ملك مومی الیه سن ذاتکده مرکوز
اولان غیرت وشجـاعت لازمه سنجه روسـیه اونك دست ستم پیوست
خدیعه کارانه زندن قورتیلوب بو طرفه کلدکدن صکره مسقولو عسکرینی
مدافعه یه قیام ایلدیکك ومجموع نوات وازناورزینك سوزلری سنکله برابر
اوله رق تمام اولی بوندن بویله دخی اعدای دولت ابدمدتم علیهنه حرکت

*Տեքստ 3. Վրաստանի Աչըք Բաշի Սոլոմոն խանին փադիշահի ֆերմանը։*
*(«Շանի Զադե Թարիխի», հատ. II, էջ 29—31)*

ایتمك اوزره تكمیل لوازمات سفریه مترقبا شمدی اخسخه‌ده اقامت ایتدیکك
تحریر و بیان قلنمش اولمغله ذکر اولنان عریضه ایله مأموری الیهما آدملرکك
وکلای سلطنت سنیه‌مه قالا وقلما عرض ایتدکلری تقریر رکاب مستطاب
شاهانه‌مه تقدیم اولندقده جمله‌سنك مفهوم ومآل صداقت اشتمالی معلوم
علم عالم آرای خدیوانم اولمشدر کورجستان ممالکی اجداد عظاممك هم
جلیله‌زیله ضمیمهٔ ممالك موروثه‌م اولدیغی تاریخدن بو آنه کلنجه سکان
وقطان وامرا وضابطانی دائما لطف ونوازش وامن وآسایشدن غیری
برشی مشاهده ایتمدکلرندن ماعدا دائرهٔ تبعهٔ دولت ابدی الدوامیمهٔ اولان
صنوف رعایا وعجزه وضعفا وبالجمله بای وکدانك مألوف اولدقلری آیین
وعادتلرینه بیوجه مداخله اولنمامق اصول سلطنت سنیه‌مدن ایدوکی
هرکسك مجرب ومجزومی اولدیغنه بناء بویله رعایا پرور وعدالت کستر
دولت قوی شوکتم قوللغنی براغوب اجانبی وخیم وعاقبتی حیف عظیم
اوله‌جق آخر طرفلره میل ومتابعت ایتمیه‌جکاری ظاهر وبو بابده نفع
وضرر زینی اکلار وایشك صوکنی ملاحظه ایدر بندکان حمیت نشانه‌له
معادن وسنکله برابر اعور همابونمده صادقانه سعی وغیرت ایدنلر سایهٔ
مکارم وایهٔ داورانه‌مده مستظل ومحمی الاطراف اولوب اوزریکزدن
من کل الوجوه انظار مراحم آثار خدیوانه‌م بیدریغ والطاف بیغایات
خداوندکارانه‌م دائمی التسویغ قلنه‌جغی بدیهی وباهر اولمقدن ناشی
مقتضای وقت وحاله کوره اولحوالی‌یه ترتیب وتسریب اولنان مهمات
وافیه‌نك وقت وزمانیله ایرشدرلمسی وسنکله فتح باب مخابرات ایدرك
کورجستاندن روسیه‌لونك کلیا دفعی اسبابی استحصال اولنمسی
خصوصلری حالا ارضروم والیسی وشرق جانبی سرعسکری دستور
وزیرم امین پاشا ادام الله تعالی اجلاله طرفنه مقدما و بودفعه مخصوصا
تحریر وتنبیه وتأکید ووقوعه کلان حرکات صادقانه‌کی تحسینا عهدکده
اولان اخچق پاشه‌لقلکی ابقا اولنوب اقتضا ایدن منشور جدیدیله معا

خلع خاصهٔ ملوکانه‌مدن سمور مستوجب السروره دوحته بر ثوب خلعت
٢ مورث البهجه وشمدیلك خرجلق اوله‌رق بشبیك غروش عطیه اولنق
اوزره سرعسکر مشار الیه طرفنه ارسال واسرا وکیفیت چلدر والیسی
دستور وزیرم شریف پاشا ادام الله تعالی اجلاله جانبنه دخی افاده وانها
اولنمغله مخصوصا اشبو امر شریف عالیشانم اصدار وادملرك مومی الیهما
معاودتاریله بعث وتسیار اولنمشدر ایمدی خلعت سنیهٔ پادشاهانه‌می وعطیهٔ
بهیهٔ شهنشاهانه‌مله ابقای منشور همایونمی سرعسکر مشار الیه جانبندن
طرفکه واصل اولدقده حطوات تعظیم واجلال ایله استقبال وآرایش ٣
جیب ودوش مفاخرت واستیهال ایدوب دولت علیه‌مه ابراز واظهار
ایلدیکك اخلاص ومصادقت لوازمنی بوندن بویله دخی ایفایه ومرکز
رعیتده ثابتقدم اولوب مراسم صدق ومطاوعتی اجرا ایدنلر داب دیرین
٤ سلطنت سنیه‌م اوزره طرف همایون خدیوانه‌مدن مظهر عنایت والتفات
اوله‌جقلرینی طوق کورجستاندن اقتضا ایدنلرك کوش هوشلرینه القایه
سعی وغیرت وصرف مکنت ایدرك چلدر والیسی وزیر مشار الیهك معینی
وسرعسکر مشار الیهك رأی وتدبیری ایله علی الدوام مدافعهٔ اعدایه
وتألیف قلوب رعایا وضبط وربط مملکت والکایه قیام ودوام ایلدیکك
حالده حقکده درکار اولان حسن توجهات پادشاهانه‌م روز بروز متزاید
وافزون ووجوهله لطف ونوازش خدیوانه‌م ظاهر ورونمون اوله‌جغی
معلومك اولدقده مجبول اولدیغك اخلاص ومصادقت ولوازم متابعت
ومطاوعتی اجرا وهر حالده توجه شاهانه‌م تزایدینه اعتنا ایلمك بابنده
فرمان عالیشانم صادر اولمشدر تحریرا فی اواسط ربیع الاول سنة ست
وعشرین ومأتین والف

# РЕЗЮМЕ

В настоящем томе собраны материалы, касающиеся истории армянского и соседних с ним народов, извлеченные из трудов турецких хроников и историков XVI—XIX вв.

В томе использованы труды:

**Кятиба Челеби** — историка и географа XVII в., **Селаники Мустафы** — историка XVI—XVII вв., **Солака-заде** — историка XVII в., **Шани-заде** — придворного летописца, историка XIX в., **Мюнеджжим-баши** — историка XVII в., **Феридун бея** — высокопоставленного чиновника Османского правительства, автора сборника «Султанские послания» (XVI в.), **Кочи-бея** — известного историка-критика XVII в.

В сборнике каждому из них посвящена отдельная глава в следующем порядке:

**Кятиб Челеби** — известный представитель турецкой мысли XVII в., привлекший своими многочисленными ценными научными трудами внимание ученых Востока и Запада.

Нашей теме соответствуют следующие два историко-географических труда Челеби: «Джихан-Нюма» (Зеркало мира) и «Фезлеке» (краткая история Турции в двух томах). Из них переведены довольно обширные материалы, касающиеся географии и истории Армении и соседних стран.

Согласно утверждениям советских, европейских и турецких ученых, изучавших наследие Кятиба Челеби (Крачковский, Бартольд, Гаммер, Мордтман, Бабингер, Тешнер и другие), «Джихан-Нюма» является одним из значительных географических трудов турецкого средневековья, в котором впервые географические знания, существовавшие на Западе, преподносятся турецкому читателю на довольно высоком научном и техническом уровне (многочисленные карты, рисунки, диаграммы, географические открытия и т. д.). «Джихан-Нюма» издан в 1732 г.—через 80 лет после смерти автора.

Сведения, приводимые автором в упомянутом труде, почти всегда преподносятся в тесной связи с историческими событиями и поэтому составляют важный первоисточник для изучения социально-экономической и культурно-бытовой жизни народов Армении и Закавказья.

Исходя из этого, полностью переведены все материалы «Джихан-Нюма», касающиеся Западной и Восточной Армении, Киликии и Закавказья. В качестве примера укажем названия некоторых глав из «Джихан-Нюме»: «Страны Армении»*, «Эйалет Вана», «Эйалет Эрзерума», «Эйалет Диарбекира», «Эйалет Сваза», «Эйалет Мараш и Адана», «Эйалет Карса», «Грузия», «Страны Аран, Муган, Ширван» (Азербайджан).

Материалы по географии Кятиба Челеби относятся к XVII веку. Он приводит по каждому эйалету географические сведения относительно городов и крепостей, рек и озер, гор и долин. Указанные сведения, хотя и кратки, но иногда весьма интересны. Например, при описании Ванского эйалета Челеби дает сначала границы эйалета, затем административное деление, особо останавливается на характеристике ванской крепости, ворот и стен ее, а также кварталов, дворцов и других городских строений. Далее он подчеркивает торговые связи Вана (через Ванское озеро) с городами и округами эйалета. Подобным же образом описывает санджаки эйалета: Арджеш, Адилджеваз, Ахлат, Битлис и др. Говоря о г. Битлисе, как о стратегическом пункте между Азербайджалой. Этот горо дс давних пор освобожден от обычных нало-«Путники, идущие из Туркистана, Ирана и Хорасана в Шам (Дамаск) и Хиджаз, непременно должны пройти под его скалой. Этот город с давних пор освобожден от обычных налогов (Tekalif-ı orfiye), по причине возложения на него обязанностей по сохранению дорог. Большинство жителей города— армяне-зимми». Описывая обширные пастбища, многоводные реки и равнину Муша, Челеби подчеркивает, что эта мест-

---

* В отличие от современных турецких историков, которые не хотят даже употреблять название Армении (Armenya), средневековые турецкие историки, в том числе Кятиб Челеби, Джевдед-паша и др. безоговорочно употребляют термины Великая Армения (Böyük Armenya) и Малая Армения (Küçük Armenya).

ность изобилует зерновыми, что повсеместно в деревнях проживают армяне. Упоминая об округе Хнусе, историк отмечает особую важность Бингёльской яйлы (высокогорного пастбища).

Все сведения по географии, данные Челеби, содержат интересные исторические факты. Историк приводит интересные материалы известного курдского историка Мир-Шерефа, касающиеся Битлиса, Муша и других местностей.

Почти аналогичным образом Кятиб Челеби описывает другие эйалеты Армении: Эрзерум, Диарбекир, Сваз, Карс и другие. После описания географии эйалетов приводятся краткие сведения о дорогах и привалах данного эйалета, что несомненно, очень важно для изучения средневековых караванных и торговых путей Армении, особенно если учесть, что некоторые из них до сих пор сохранили свое значение.

В конце описаний географии эйалетов Кятиб Челеби дает также краткие исторические сведения о князьях и владыках данного края.

Из исторических трудов Кятиба Челеби использован только «Фезлеке», являющийся, по свидетельству советских и европейских историографов, ценным и достоверным источником, в котором история Турции (с конца XVI до середины XVII в.) освещается умело и объективно. Челеби был очевидцем и участником большей части описываемых им событий, охватывающих шесть десятилетий. В «Фезлеке» освещаются повстанческое движение «джелали» и военные действия между Турцией и Ираном.

Об этих событиях в I томе настоящего издания приводится довольно много материалов из трудов Печеви и Наима. Может показаться, что упомянутые материалы — простое повторение, однако это не так. При переводе учитывалось особо важное значение этих событий не только для истории Турции, но и для истории Армении и соседних стран. Поэтому в обоих томах настоящего сборника использованы разные источники, в которых одни и те же события освещаются под разным углом зрения, а иногда о них приводятся различные подробности.

Кятиб Челеби в I и II томах своего исторического труда «Фезлеке» описывает турецко-иранские военные действия, которые почти целиком происходили на территории Армении и

в местностях, населенных армянами. Он особенно останавливается на суровых и продолжительных военных действиях между шахаббаским Ираном и Турцией, которые имели тяжелые последствия для исторических судеб армянского народа. Как известно, эти войны закончились в 40-х годах XVII в., когда в 1639 г. был заключен «Касри-Ширинский» мир (Зехаб) между Турцией и Ираном, по которому гг. Багдад, Басра и Шехри-Зор перешли к Турции, а Ереван остался у Ирана.

**Селаники Мустафа.** Его «Тарихи Селаники» охватывает историю Турции второй половины XVI в. и первой четверти XVII в.

По утверждениям средневековых и современных турецких историков, Селаники является наиболее видным представителем османской историографии. Его современники, а также последующие историки Турции в своих трудах ссылались на «Тарихи Селаники», как на достоверный источник. Селаники был очевидцем и участником большей части описываемых им событий.

Летописец XVII в. Наима в своем «Тарихи Наима» полностью заимствовал описание Селаники, начиная с 1591 г.*. По этой причине Лютфи, издавая в 1864 г. в Стамбуле труд Селаники, не нашел нужным опубликовать упомянутую часть «Тарихи Селаники», которая была издана ранее в «Тарихи-Наима».

Значительными событиями, касающимися Армении и соседних стран, описание которых взято из «Тарихи Селаники», являются следующие:

В 975 (1567) г. состоялись переговоры с Шах Тахмасбом о прекращении войны между Турцией и Ираном, продолжавшейся почти полвека. Напряженные отношения с Ираном продолжаются и в последующем десятилетии, т. е. вплоть до смерти Шах-Тахмасба в 984 (1576) г.

В 986 (1578) году большая война, происшедшая в Чилдирской равнине, завершилась поражением Ирана, вследствие чего османы захватили важные крепости Грузии, в т. ч. Тифлис, а затем Ширван и его столицу Шамахи.

---

* В средневековой Турции принято было заимствование трудов других авторов без указания наименования источника.

Важными событиями 987 (1579) года являются: реставрация прочных стен крепости Карса; нашествие османской армии на Ереван, ограбление Еревана Токмак-ханом и др.

О событиях, связанных с нашествием турков на Астрахань (Эждерхан), в 995 (1586) г., историк Селаники говорит коротко. В комментариях к «Тарихи Селаники» авантюристические события в Астрахани освещаются более обстоятельно.

Война между Турцией и Ираном с 996 (1587) г. принимает новый размах. В Турции начинается подготовка к «нашествию на Восток». На этот раз удар был направлен на Закавказье — Грузию и Гянджу. Селаники пишет. «В Гяндже кызылбаши не сумели собрать большие силы. Сипахсалар Гянджи Зияд-оглы сгоняет и уводит со всем имуществом всех райя Гянджи и его районов. В г. Гяндже и его садах он не оставил ни одной живой души. Османы завладели Гянджой без боя». На этот раз город каким-то чудом уцелел от разрухи и пожаров».

Сердар Ферхад паша восстанавливает и укрепляет стены крепости Гянджи.

Надо отметить, что в этом нашествии принимал участие сам историк Селаники в качестве секретаря сипахского войска. Селаники упоминает также о фермане падишаха относительно «девширме»—закона, согласно которому малолетних христианских мальчиков, в том числе армянских, набирали для пополнения янычарских войск. Об этом варварском порядке историк пишет: «правители того времени в деле «девширме» проявили бессовестное отношение и под видом подарков брали чрезмерно большие взятки. Они, подобно тому как волки набрасываются на стадо овец, нападали на райя и захватывали неимоверно большие богатства у имущих, а у бедных райя насильно отнимали детей, разрушая их очаги».

**Солак-заде** — историк XVII в., написал историю Османской империи с начала возникновения империи до 1053 г. (1643—1644). В своем труде автор целиком заимствовал историю XVII в. у Наима, Кятиб Челеби и Селаники. По этой причине материалы из «Тарихи Солак-заде» приводятся ограниченно и часто с большими сокращениями. Выбраны только те описания, которые не имеются у вышеупомянутых авторов или же о них только кратко упоминается. Например,

военные действия между Турцией и Ираном, восстание Аба-за-паши в Эрзеруме, поход султана Мурада IV в 1634—1635 гг., захват Еревана и события, связанные с ним. Об этих событиях Солак-заде пишет довольно подробно и обстоятельно. В описаниях Солак-заде уделяется особое внимание событиям, связанным с убийством султана Османа II (Гяндж-Осман), которые в истории Турции имеют важное значение.

Вышеупомянутые события связаны с историей армянского народа и соседних народов. Исходя из этого, значительная часть указанных материалов переведена целиком.

**Шани-заде** — историк, придворный летописец, написал историю Османской империи за время с 1808 до 1821 гг., т. е. историю двух первых десятилетий XIX в. Как выясняется из биографии Шани-заде, он являлся видным литературным и научным деятелем того времени, занимал высокие посты. Интересны его труды о древнем Востоке (Китай, Индия, Египет и т. д.), а также по истории Турции. «Тарихи Шани-заде» состоит из четырех томов, издана в Стамбуле во второй половине XIX в. Шани-заде, будучи современником историка Джевдет-паши, в своей «Истории» повторяет ряд событий, описанных в «Тарихи Джевдет-паши».

В первой части «Тарихи Шани-заде» особо важное место занимает описание следующих событий: тяжелое критическое состояние внешней и внутренней политики Османской империи, неудачные попытки султана Селима III, предпринятые им с целью ликвидации янычарских войск и установления «низами-джедид», деятельность Байрактар (Алемдар) паши и организованного им Общества друзей Русчука, которое имело целью претворение в жизнь реформ Селима III, созыв «Большого совещания» с участием видных государственных деятелей с целью нахождения путей ликвидации критического состояния в стране, что вызвало яростное сопротивление со стороны Двора, янычарских войск, духовенства и высокопоставленных государственных деятелей и привело к победе реакции и фанатизма и гибели султана Селима III и Байрактар-паши.

Особенно интересно описание следующих событий, непосредственно касающихся Армении и народов Закавказья: занятие Фаша (Рион) турками; военные действия между Турцией и Россией, закончившиеся в 1811 г. Бухарестским ми-

ром; принятие турецкого подданства грузинским князем Соломоном — правителем Ачик-баша и пожалование ему падишахского фермана. Шани-заде, как и историк Джевдет-паша, уделяет большое внимание долголетней борьбе между армянами-григорянами и армянами-католиками, которая в то время приобрела большое политическое значение и вызвала дипломатическое вмешательство ряда европейских стран.

Эти материалы переведены полностью.

**Мюнеджжим-Баши**—историк XVII в., первый турецкий историк, создавший общую историю под названием «Сахаиф-ул-Ахбар» (Страницы известий), которая написана на арабском языке и переведена на турецкий поэтом Недимом. Мюнеджжим-Баши являлся главой астрологов падишахского Двора, откуда и происходит его псевдоним.

«Тарихи Мюнеджжим-Баши» начинается с описания Библии, подробно излагается история возникновения ислама и его развитие, взятое из арабской легенды, приводятся сведения о древних азиатских народах. Особое место занимает описание истории арабских стран. Далее излагается история Османского государства с начала его возникновения до 1063 (1652) г.

Согласно утверждениям Мюнеджжим-Баши, при написании этого труда им использовано много арабских и персидских источников и труды некоторых турецких историков.

В «Тарихи Мюнеджжим-Баши» приводится довольно много сведений об Армении и армянах*. Однако история армянского народа описывается автором очень кратко и по королевским династиям. Он упоминает также о происхождении народов «армен» и «гюрджи» (грузин), основываясь на преданиях. Хотя эта схематично приводимая история армянского народа едва ли может иметь научное значение, однако она характерна в том отношении, что арабские и турецкие историки средних веков пытались предложить своим читателям некоторые сведения об армянах и по истории Армении.

Материалы, касающиеся истории Армении, переведены полностью. Во втором томе своей «Тарихи» Мюнеджжим-Баши, после описания арабских халифов и перечисления иранских, месопотамских и египетских княжеств, схематично упоминает о существовании княжеств в Иране и Азербайджане.

* Мюнеджжим-Баши также употребляет название Армения (Armenya).

**Феридун-бей.** Им составлен сборник политических документов за период от возникновения Османской империи до конца XVI в., т. е. почти за три столетия. Этот сборник известен как «Султанские послания». В нем Феридун-бей собрал около 1860 ферманов и официальных посланий султанов, садразамов, везиров, шейх-ул-исламов, посланий, адресованных суверенным правителям других стран, договоров и соглашений, заключенных между Турцией и другими странами, а также официальных ответов на упомянутые послания. Феридун-бей, будучи высокопоставленным государственным чиновником и человеком, близко стоявшим к падишахскому Двору, имел возможность собрать такое множество документов, в том числе и самых важных, даже секретных бумаг.

Сборник Феридун-бея был опубликован в Стамбуле в 1848 г.—через двести семьдесят лет после его смерти. Приведенные в нем документы освещают многочисленные вопросы внешней и внутренней политики султанской Турции, которые связаны с историей Армении, армян и соседних народов. Из сборника переведено около десяти официальных документов, непосредственно связанных с историей Армении и Закавказья, в том числе письмо, адресованное иранскому шаху Тахмаспу по вопросу крепости Карс, падишахские ферманы грузинским эмирам и ханам, официальные документы об административном делении Османской империи, падишахский указ об обследовании положения в стамбульских районах и кварталах, где проживало много армян, и т. д.

**Кочи-бей**—видный придворный деятель при султане Мураде IV (1623—1640). Как видно из трудов Кочи-бея, он был хорошо осведомлен о политическом, военном и экономическом положении страны. Период его деятельности совпадает с процессом ослабления и упадка когда-то могущественной военно-феодальной Османской империи.

Ряд турецких государственных деятелей, историков и писателей изучал происходящие события и искал средства для вывода страны из тяжелого состояния (Айни-Али-Эфенди—главный управляющий султанскими владениями, ученый-историк Кятиб Челеби, неизвестный автор «Книги назиданий» и др.). Среди них Кочи-бей занимает особое место благодаря своему знаменитому Трактату (Risale), который он представил султану Мураду IV в 1041 (1631—1632) г.

В семнадцати главах этого Трактата Кочи-бей изучает причины, приведшие к упадку Османской империи. Однако по своей классовой ограниченности и в условиях турецкой действительности XVII в. он не мог правильно понять и проанализировать исторический процесс развития и упадка военно-феодального режима в Турции.

Кочи-бей в своем Трактате в основном рассматривает следующие вопросы: характеристика личности и деятельности султанов, везиров и членов государственного совета; государственная служба владетелей поместий и нарушение ими закона; неуклонное увеличение числа лиц, получающих жалование от государства и военных; полный развал янычарских войск; безмерное повышение налогов, взимаемых от «бедных райя», взяточничество, злоупотребления и т. д.

У русского востоковеда XIX в. В. Ф. Смирнова имеется специальное исследование Трактата Кочи-бея. Но В. Ф. Смирнов, к сожалению, не учел упомянутых выше причин неправильного анализа Кочи-беем процесса упадка империи. Смирнов пишет: «в Трактате, как в фокусе, собраны причины упадка Османской империи, которые разбросаны в трудах современников»*.

В одиннадцатой главе Трактата говорится о тяжелых налогах, легших бременем на «бедных райя», злоупотреблениях, которые больше всего направлены были против немусульманских народов, в том числе и армян. В этой же главе Кочи-бей приводит факты неописуемого произвола и злоупотреблений, совершенных в Грузии, Гяндже и Ереване.

Очевидно, что все эти государственные и общественные неполадки внутри страны, о которых так живо пишет Кочибей, не могли не отразиться на судьбе Армении и соседних стран, причем Армения страдала больше всех.

У Кочи-бея имеется и другой трактат, написанный им по указу султана Ибрагима (1640—1648) и представленный последнему. В этом трактате повторяются в основном и частично дополняются мысли и соображения о причинах упадка Османской империи. Приводя в нем факты быстрого распада империи, ухудшения экономики страны и особенно сельского

---

* **В. Д. Смирнов**, «Кочи-бей Гюмюрджинский и другие османские писатели XVII в. о причинах упадка Турции». С.-Петербург, 1873.

хозяйства, а также описывая положение «бедных райя», Кочи-бей не предлагает ничего нового. По его мнению, достаточно только восстановить права «людей меча», после чего все будет налажено: и по воле бога в государстве будет восстановлен порядок и падишахская власть обретет свой прежний блеск. Единственная надежда и упование Кочи-бея — это «Его Величество султан, священный халиф ислама, чьим высоким велением может упрочиться Османское государство».

* *
*

Настоящий том снабжен приложением, состоящим из двух частей: в первой части приводится ряд документов из «Султанских посланий» Феридун-бея, которые характеризуют режим султанской Турции (о доходах и расходах казны, о налогах «ашар» и «хараджз», о состоянии тимаров, о пожаловании владетельных грамот на поместья сардарам Несух-паше и везиру Ферхад-паше и т. д.), во второй — несколько документов из труда Шани-заде о денежном обращении в Турции, о финансовых и бытовых вопросах, которые отражают тяжелое финансовое положение в стране, а также документы, свидетельствующие о дискриминации немусульманских народов.

Все главы и приложение снабжены необходимыми комментариями, в которых исторические события освещаются более обстоятельно. Кроме того, в комментариях приводятся дополнительные исторические сведения: об административных, шариатских и военных учреждениях Османской империи; к вопросу о письме султана Сулеймана-Кануни королю Франции Фердинанду (эти сведения связаны с историей Армении и Грузии); о султанских посланиях грузинским эмирам и ханам; о жизни и деятельности упоминаемых в тексте историков, ученых и других лиц; о шариатских, обычных и других налогах; о денежной системе, а также системе мер и весов, существовавших в средневековой Турции; объясняются вопросы шариата, вероисповедания и сектантства; освещаются некоторые вопросы, связанные с административным делением Османской империи («юртлук и оджаклык», «хюкюмет», «оджаклык» и т. д.).

В комментариях критически рассматривается ряд событий в средневековой Турции, которые современными турецкими историками, в целях идеализации военно-феодального режима, освещаются с позиции шовинизма и пантюркизма. К этим событиям относятся: захватнические походы турецких султанов на Запад и Восток, завоевание и подчинение огнем и мечом обширных стран, разбой, грабеж и пленение народов этих стран ценой крови турецких крестьян; поход на Астрахань с целью сооружения канала Дон-Волга; порядок «девширме», как способ укомплектования янычарских войск и т. д.

Наконец, в комментариях объясняются терминологические слова и выражения, встречающиеся в тексте.

A. KH. SAFRASTIAN

## TURKISH SOURCES ON ARMENIA, ARMENIANS AND OTHER TRANSCAUCASIAN PEOPLES

In spite of the fact that the Turkish authors, who appear in the present second volume, were not royal chroniclers, they, however, have compiled the history of the Ottoman Empire. Here we present a series of historical data, which have been taken and, at the same time, translated into Armenian from the «tarih»'s of those historians, as well as from two other Turkish authors. These historical materials refer to Armenia, to the history and geography of the Armenian and other Transcaucasian peoples.

The above-said historical materials have been taken from the works of the following authors, and present themself in the seven chapters of the second volume.

Names of Authors;

1.— Kiatib Tchelebi (a geographer and historian of the eleventh century) (from Dgihan Numa and Fezleke)

2.— Mustafa of Saloniki (a historian of the seventeenth century) (from the «tarihi Selaniki)»

3.— Solak Zade (a historian of the seventeenth century) (from Solak Zade tarihi «history»)

4.— Shani Zade (a royal chronicler of the nineteenth century) (from tarihi Shani Zade)

5.— Munedgim Bashi (a historian of the seventeenth century) (from Munedgim Bashi tarihi)

6.— Feridun Bey (a high rank functionary of the Ottoman government and, at the same time, an author of the sixteenth century) (from the Sultans' papers)

7.— Kotchi Bey (a Turkish author and a critic of the seventeenth century) (from Kotchi Bey Risalesi)

It is true, the histories of the above-cited Turkish historians haven't been compiled in a Chronological order, but each of them has recorded the history corresponding to that of a certain period

of time of Turkey — beginning with the second half of the seventeenth century until the first quarter of the nineteenth century.

As to the sixth and seventh writers of the above-mentioned list of the Turkish authors, they can't be counted as historians. They have simply treated and discussed important issues pertaining to the state-administrative, economical, political and diplomatic life of medieval Turkey.

A peculiar chapter has been devoted to every author in this work. Brief informations have been given about the biography of each author and his works.

All these historical materials, which have been taken from the works of the above-said Turkish sources and translated, is closely connected with the history of the Armenian and neighbouring peoples, and, to a certain extent, throw light upon the living conditions of various peoples inhabiting in Turkey.

These very materials are, no doubt, necessary and important, as primary historical sources for the complete and many-sided study of the history of the above-said peoples.

Besides the fundamental chapters of this volume, there is also a supplement attached to them, in which the reader may find translations of such materials, which are direct by connected with the subject of the present work, and which are taken from Feridun Bey's «Sultans' papers» and from Shani Zade's stories.

These historical materials are accompaneed with detailed and many sided commentaries, which are able to give the reader the possibility of clearly picturing to himself the medieval Turkey with its state-administrative, economical, military, financial-pecuniary, taxational, religious and cultural life as well as the unbearable situation of non-Turkish and non-musulman peoples, who have suffered under the intolerable yoke of the Turkish military-feudal absolute monarchy.

Texts in Turkish of same valuable documents are printed on the last pages of the book.

## ԱՆՁՆԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ


Աբագա փաշա, էրզրումի բեյլերբեյի—74, 102—106, 149—155
Աբբաս Միրզա—107, 168, 173, 176
Աբգար—189
Աբդալ խան, Բիթլիսի քուրդ խան—112, 265, 266, 268
Աբդուլբակի, կադի—102
Աբդուլլահ փաշա, Կարսի միրիմիրան—169
Աբդուլլահ, Քյաթիբ Չելեբիի հայրը—7
Աբդուլհալիմ Կարա Յազըջի—78, 85 (տե՛ս Կարա Յազըջի).
Աբրահամ—187, 188, 261
Աբուբեքիր բին-Բահրամ, պատմագիր—11
Աբուլ Ֆեդա, արաբ աշխարհագրագետ—11
Ագիլ Կիրայ, Ղրիմի խան—122, 123
Աթաբեկ, Մուղանի իշխող—15
Ալաեդդին Քեյքուբադ, սելջուկյան իշխող—68
Ալեքսանդրե, Վրաստանի խան—148, 270
Ալեքսանդր-Լեվենտ, Վրաստանի խան—121
Ալեքսանդր Մեծ (Իսքենդեր)—91, 93
Ալի աղա, կափուջի—157
Ալի բեյ, քուրդ ցեղապետ—266
Ալի բին-Մեզրաբ, Խորեզմի երևելինե-րից—76
Ալի փաշա, Կարամանի բեյլերբեյի—155
Ալփ-Ասլան—49
Ալ-Օսման—257
Ահմեդ Ռասիմ, թուրք պատմագիր—289, 294, 295
Ահմեդ Ռեֆիք, թուրք պատմագիր—224
Ահմեդ փաշա, Հալեբի բեյլերբեյի—108, 112
Ահմեդ փաշա, սերդար—89
Ահմեդ փաշա, վեզիր—142, 143
Ադզըաշըրք Մուհամմեդ բեյ—174, 175
Ամասիա, Հայկազյան թագավոր—186
Ամբակ, Հայկազյան թագավոր—187
Ամիջա Մասիբ—32
Այնի Ալի էֆենդի—30, 258
Անակ, Հայկազյան թագավոր—190
Անուշավան, Հայկազյան թագավոր—18
Առվան—188
Ասըմ էֆենդի, պատմագիր—163
Արա (Գեղեցիկ)—187
Արամայիս—186
Արայան—185
Արբուն—188
Արմենակ—186
Արմեն բին-Լեդի Յունան—29
Արշակ Մեծ—188, 189
Արշակ, Պապի որդի—191
Արշակ, Տիգրանի որդի—191
Արշամ—194
Արտակ (Առնակ)—187
Արտաշես—189, 190, 192
Արտաշիր—194
Արտավազդ—189, 190

Բաբինգեր, գերմանացի արևելագետ—9
Բաթալ Ղազի—61, 67

Բախշը խալիֆա—շահի նամակաբեր—87
Բախտ-Նասար, տե՛ս Նաբուգոդոնոսոր—188
Բաղը Քասում, Դանիշմենդներից—73
Բայրամ փաշա—113, 155
Բայրաքդար (Ալեմդար) Մուստաֆա փաշա—165
Բաջուհ (Պաճուճ)—188
Բարթոլդ Վ., ռուս արևելագետ—8
Բելին Մ., ֆրանսիացի պատմագիր—294
Բեշիր Աղա, ավետաբեր Երևանից—110
Բրդլիս, Ալեքսանդր Մեծի ծառաներից—34
Բունկիանոս կայսր—190
Բուրավիր (Պարույր)—188

Գելիբոլուլու Ալի, պատմագիր—271
Գեղամ—186
Գևորգի Սաակաձե—267, տե՛ս Մաղրավ խան
Գլակ—187
Գյուզելչե Մահմուդ փաշա—տե՛ս Մահմուդ փաշա
Գյուրջի Մուհամմեդ փաշա, Անատոլիայի բեյլերբեյի—94, 103, 149, 150, 156
Գյուրջի Օսման, զորքա—156
Գրիգոր (Արշակունիներից)—192
Գրիգոր կաթողիկոս—191
Գրրակ (Գր-արակ)—187
Գուտրյալ, վրացի ցեղապետ—167

Դանիշմենդ Ի. Հ., թուրք պատմաբան—9, 72, 75, 116, 271, 272
Դավիթ խան (Սիմոնի եղբայր), Թիֆլիսի խան—120, 126
Դավիթ Մարգարե—188
Դավուդ փաշա, Ռումելիի բեյլէրբեյի—98
Դարեհ—55
Դեդե խան, Շիրվանի խան—122
Դեդե Սուլթան, թուրք իշխող—122
Դելի Հասան, ջելալիների պարագլուխներից—81—85
Դենբելլի Հաջի—143
Դերվիշ Մահմուդ փաշա, սադրազամ—227
Դիաս—188
Դիլավեր փաշա, Դիարբեքիրի բեյլերբեյի—99
Դիշլենգ Հյուսեին փաշա, սադրազամ—151, 152

Եաս (Բաղ)—186
Եաֆես (Հաբեթ)—185—186
Եմիշլի Հասան փաշա—227
Երեմիա Չելեբի Քեոմյուրճյան—12
Երվանդ—181, 190

Զալ Փաշազադե—90
Զավան (Զավեն)—187
Զարեհ—188
Զարմայր—187
Զյուլֆիկար խան—89
Զյունուն, Դանիշմենդներից—73
Զուլալյան Մ.—260

Էրխակ (Ընձայ)—187
Էբուբեքիր բին-Բահրամ էլ-Դեմեշկի, արաբ պատմագիր-աշխարհագրագետ 25, 41, 157
Էբուզիա, թուրք հեղինակ—224
Էբու Իսհակ, նվիրական անձ—49
Էբու Սայիդ Բերդանի, բարեպաշտ—14, 49, 73
Էբուսուադ էֆենդի, շեյխ-ուլ-իսլամ—240, 296
Էլկաս Միրզա—141, 142
Էլչա Թիյուխան, Չինգիզյաններից—73
Էմին Ահմեդ, պատմագիր—15, 16
Էմին Ահմեդ—257
Էմին փաշա, սերասքեր—169
Էմիր Գեոնե-օղլու (նոր անունով՝ Յուսուֆ փաշա), Երևանի խան—109, 110, 112, 158
Էմիր Չոբան-օղլու—77
Էմիր-ուլ-Մյումինե Ռաշիդ—71
Էոզդեմիր-օղլու Օսման փաշա, սերասքեր—77, 122, 270
Էոբյուզ Մուհամմեդ փաշա, սերդար—78
Էվլիյա Չելեբի—12, 13, 259, 265, 266

Էրբակ (Արբակ)—187
Էրես խան (կըզըլբաշ)—122
Էրզրումի Նեֆի էֆենդի, բանաստեղծ—113, 268
Էրթաղտի խան—122
Էրթնան, Թիմուր Դաշի ազգական—73

Թաբանը Յասը Մուհամմեդ փաշա, սերդար—106
Թահմասբ Շահ, տե՛ս Շահ Թահմասբ կուլի խան—158, 160
Թահմուրաս (Թեյմուրազ), Ջեքեմի իշխան—209
Թայար Մուստաֆա փաշա, Սվազի բեյլերբեյի—104
Թավիլ, ջելալիների պարագլուխներից—81, 85
Թավրիզի էմիր խան—121
Թարխունջի Ահմեդ փաշա, սադրազամ—292
Թեմուր Դաշ փաշա—42, 49
Թեշներ, արևելագետ—8
Թեոթորոս—192
Թեոհվե, արաբ պատմագիր—13
Թերաս—185
Թերյաքի Հասան փաշա, սերդար—84
Թեքելի Մուհամմեդ փաշա, Վանի բեյլերբեյի—100
Թեքելի փաշա, Երևանի բեյլերբեյի—99
Թիմուր, Թիմուրլենգ, Թիմուր-Կերգան—15, 26, 64, 262
Թոքմաք խան, Երևանի և Նախիջևանի խան—118, 124, 271
Թուզջի-օղլու—160, 167

Իբնի Սայիդ—14
Իբնի Սայիդ, կամ Իբնի Սայիդ ալ-Մագրիբի, արաբ պատմագիր-աշխարհագրագետ և ուղեգիր—257
Իբրահիմ բեյ, քուրդ ցեղապետ—144
Իբրահիմ, Դանիշմենդներից—73
Իբրահիմ խան, կըզըլբաշ դեսպան—125
Իբրահիմ Մութաֆարրիկա, թուրքական տպագրության հիմնադիր—9, 10
Իդրիս Բիթլիզի, պատմագիր—259
Իլկաս Միրզա—տե՛ս Էլկաս Միրզա
Ինջիլի Մուստաֆա չավուշ—97
Իսա խան, Լեվէնդ խանի որդին—122
Իսլամ Կիրայ, Ղրիմի խան—125, 126
Իսմայիլ Հակկը Ուզունչարշըլը, թուրք պատմաբան—76
Իսմայիլ Համի Դանիշմենդ—տե՛ս Դանիշմենդ
Իսմայիլ Միրզա, շահի որդին—145
Իսքենդեր (Ալեքսանդր Մեծ)—33—35
Իսքենդեր բին-Կարա Յուսուֆ—50
Իսքենդեր փաշա, Էրզրումի վալի—143

Լալա Մուստաֆա փաշա, սերդար—120—270
Լութֆի, պատմագիր-տարեգիր—114
Լուկիոս Վիրոս կայսր—տե՛ս Բունկիան
Լևոն—61

Խազինեդար-Ջադե Սյուլեյման աղա, կափուջի-բաշը—169
Խալիլ փաշա, ծովակալ—149, 150
Խալիլ փաշա, սերդար—100
Խալիլ փաշա, վեզիր—100, 101—103
Խալիֆա Մակսուտ, Իրանի դեսպան—տե՛ս Մակսուտ
Խալիֆե-Ջադե Ղազան, սիփահի—89
Խալիֆե Յակուբ, Շահ Աբբասի զինվորականներից—89
Խայրեդդին Բարբարոս, ծովակալ—9
Խըդըր Աղա, Երևանի աղաներից—158—160
Խոջա Ահմեդ—49
Խոջա Թաջեդդին Ալիշահ—82
Խոջա Մուհամմեդ Թեբրիզի, լրտես—155
Խոռ—186
Խուդաբենդե, շահ—125, 272
Խուսրեվ փաշա, Բիթլիսի բարեշինող—35
Խուսրեվ փաշա, Դիարբեքիրի բեյլերբեյի—82
Խուսրեվ փաշա, սադրազամ—154—155
Խուսրեվ փաշա, Վանի փաշա—31
Խոսրով (Խուսրեվ)—191
Խոսրով, Վռամշապուհի եղբայրը—192

Կադի, Իրանի դեսպան—97
Կալղայ, Ղրիմի խաների տիտղոսը—239, 296
Կալենդեր-օղլու, ջելալի—85
Կասըմ, շահի դեսպան—100
Կատեր—187
Կար (Վարասկար)—187
Կարա խան, Շորագյալի բռնակալ—90
Կարա Մուստաֆա փաշա—26
Կարա Յազըջի, (Աբդուլհալիմ շահ), ջելալիների պարագլուխ—75, 78—81, 85, 264
Կարա Չելեբի-Զադե—74
Կարդոս—187
Կարչաղայ խան, (Կոչաղայ), Իրանի խաներից—101, 106
Կըզըլ Ահմեդ բեյ, Տրապիզոնի իշխող—51
Կըլըչ Արսլան—73, 263
Կիբակ (Կայպակ)—188
Կլավուզ Յուսուֆ փաշա, Մարաշի բեյլերբեյի—104
Կոյուն Դեդե, նվիրական անձ—68
Կոչի բեյ (Գյումյուլջինալի)—6, 223, 225, 229, 233, 290, 291
Կոջա Մուրադ փաշա (Կույուջի), սադրազամ—87, 149
Կոջա Նիշանջի, պատմագիր—30
Կոջա Նիշանջի Մուստաֆա Չելեբի—258
Կոջի բեյ, Քուրդ Ղազիի եղբայր—87
Կրաչկովսկի, ակադեմիկոս—7, 8, 11, 184
Կուբադ բին-Ֆեյսալ—14
Կուրեյշ, Մեքքայի արաբական ցեղ—71

Հաբեթ—տե՛ս Յաֆես
Հազեր բեյ, Երևանի ավագանի—109
Հակոբ—187
Համազասպ—192
Համդուլլահ, պատմագիր—14, 16, 19, 29, 36
Համզա Միրզա—128, 272
Համմեր, ավստրիացի արևելագետ—8
Հայդար Միրզա—148
Հայդար փաշա, Եվազի բեյլերբեյի—125
Հայկ—186, 187
Հայկակ—187, 188
Հաջի Իբրահիմ փաշա, սերդար—81, 82, 85, 90
Հաջի խալիֆա, Հաջի Կալֆա—տե՛ս Քյաթիբ Չելեբի
Հաջի Հասան-օղլու, զորբա—156
Հասան Բեյզադե, պատմագիր—74
Հասան փաշա, Անատոլիայի իշխող—148
Հասան փաշա, սադրազամ—227
Հասան փաշա, սերդար—81, 82, 85, 90
Հավանակ (Խեվանակ)—187
Հարման—186
Հարուն Ռաշիդ—50
Հաֆըզ Մահմուդ փաշա, Բաղդադի բեյլերբեյի—97
Հյուսեին փաշա, Անատոլիայի վերաքննիչ—79—85
Հյուսեին փաշա, Էգիրնեի բեյլերբեյի—156
Հյուսեին փաշա, Էրզրումի վալի—102, 104, 108
Հյուսեին փաշա, ծովակալ—156
Հոջա (Խոջա) Նասիր Թուսի, պարսիկ աշխարհագրագետ—257
Հոր (Խոր)—188
Հռովմի պապ—84
Հրաչե (Հրաչյա)—188
Հուսակ (Օսակ)—188

Ղազենֆեր աղա, Բաբ-ուս Սաադեի աղա—227
Ղազի Կիրայ, Ղրիմի խան—24, 95
Ղիսայ բին—Ղիմ, խալիֆա—49

Մակսուդ խան, Իրանի դեսպան—119
Մակսուդ սուլթան, շահի դեսպան—126
Մահմուդ փաշա (Գյուզելչե), սերդար—81—83
Մաղրավ բեյ, Քարթլիի էմիր (Գեորգի Սաակաձե)—126, 152, 209, 267
Մարգարե (Մուհամմեդ փեյղամբեր)—41, 266
Մելեք Ահմեդ փաշա, սադրազամ—61



21 1678

Մելիք Ահմեդ Ղազի—72
Մելիք Դավիթ—49
Մելիք Էշրեֆ—49, 50
Մենգազ Ղազի—49
Մէնուշեհր—27
Մեսլի Աղա, ենիչերիների աղա—99
Մըխլաչի Սարը Մուհամմեդ աղա, ենիչերիների քեթխուդա—105
Միրզա—տե՛ս Հայդար Միրզա
Միրզա Ալի սուլթան—122
Միրզա խան—157
Միրզա-օղլի Այնի խան—122
Միրզա Ֆեթահ-օղլի—100—158
Միր Շերեֆ, Բիթլիսի խան, քուրդ պատմագիր—33, 35, 36, 288
Միրփաշա-օղլի շեյխ Հեյդար, քուրդ բեյ—87
Մյունեջջիմ Բաշը (Դերվիշ Ահմեդ էֆ.), պատմագիր—5, 183, 185
Մյուջերրեդ, արաբ պատմագիր—13
Մյուֆթի էրուսուսադ—67
Մողոլ էրզում խան—46
Մորդթման, գերմանացի արևելագետ—8
Մուհամմեդ Ալի Միրզա, Իրանի իշխող—173
Մուհամմեդ բին-էմիր Սալիկ—49
Մուհամմեդ, Դանիշմենդների հիմնադիր—72
Մուհամմեդ էֆենդի Իխլասի—11
Մուհամմեդ էֆենդի, շեյխ-ուլ-իսլամ—96
Մուհամմեդ էֆենդի, ռուզնամեչի—83
Մուհամմեդ խան—84
Մուհամմեդ Խուդաբենդե, շահ—124 (տե՛ս Խուդաբենդե)
Մուհամմեդ Կիրայ խան, Ղրիմի խան—123—125, 196
Մուհամմեդ Ղազի (Դանիշմենդ)—73
Մուհամմեդ փաշա, բանակի պետ—8
Մուհամմեդ փաշա, Դիարբեքիրի էմիր—152
Մուհամմեդ փաշա, էմիր-ուլ-ումերա—97
Մուհամմեդ փաշա, Թավրիզի կռվում զոհված—128
Մուհամմեդ փաշա, Կարամանի բեյլերբեյի—110
Մուհամմեդ փաշա, սադրազամ—155
Մուհամմեդ փաշա, սադրազամ, սերդար—97, 100, 118
Մուհամմեդ փաշա, սերդար—83, 84
Մուհիբ Ալի խան, Իրանի դեսպան—175
Մուստաֆա բեյ, Մակուի իշխող—87
Մուստաֆա բին-Աբդուլլահ—7
Մուստաֆա փաշա, ենիչերիների աղա—149
Մուստաֆա փաշա, Մուրադ IV-ի սիլահդար—60
Մուստաֆա փաշա, Նեսուհ փաշայի քեթխուդա—150
Մուստաֆա փաշա, Շամի բեյլերբեյի—156
Մուստաֆա փաշա, Շիրվանը գրավողը—27
Մուստաֆա փաշա, սերդար—120, 126
Մուստաֆա փաշա, Վրաստանը գրավողը—185
Մուստաֆա փաշա, քեթխուդա—102
Մուսա փաշա, էրզրումի բեյլերբեյի—143
Մուրադ աղա, էմիր Գեոնեի քեթխուդա—158—160
Մուրադ փաշա, սերդար—84, 94, 96
Մուրադ քեթխուդա (Երևանում)—109
Մուրթեզա բեյ, Զըլդըրի բեյ—100
Մուրթեզա փաշա—104
Մուրթեզա փաշա, Երևանի պահապան—104, 110, 111, 161

Յաղըչի—տե՛ս Կարա Յաղըչի
Յաշա բին-Նուն—187
Յըլդըրըմ Բայազիդ, սուլթան—92
Յուսուֆ աղա, ենիչերիների աղա—229
Յուսուֆ փաշա, ջելալի—85

Նաբուգոդոնոսոր—188
Նաղիշե, ավազակ—155
Նայիմա, Հալեբի Մուստաֆա էֆենդի, տարեգիր—78, 96, 106, 115, 264, 267

Նեզհե, պատմագիր—59
Նիմրուդ—186
Նեսուհ փաշա, Դիարբեքիրի բեյլերբե-յի—102
Նեսուհ փաշա, սադրազամ—77, 96, 97, 100, 103
Նուշիրվան—257, 272
Նուֆի էֆենդի, բանաստեղծ—113
Նինոս—187
Նինվեյան փադիշահներ—183
Նողայ փաշա—104
Նոյ (Նոհ)—186
Նորայր—187

Շարան, զորքա—155
Շաթըր Մուհամմեդ չավուշ, նամակաբեր—87
Շահ Արմեն—49
Շահ Աբբաս—13, 77, 78, 85, 86, 89, 90, 94, 96, 97, 99, 100, 153, 266
Շահ Բանուն խաթուն—49
Շահ Թահմասբ—33, 77, 79, 96, 117, 119, 142, 144, 146, 268, 270
Շահ Իսմայիլ—50, 95, 259
Շահ Կուլի, Երևանի իշխող—117, 118, 146
Շահ Սեֆի—14
Շահվերդի, ջելալի—81—83
Շահ-օղլի—122
Շամիրամ—187
Շանի Զադե (Մուհամմեդ Աբդուլլահ), տարեգիր—5, 6, 163, 165, 168, 174, 176, 178, 261
Շավարշ—187
Շեյխ Աբդուլրահման—41
Շեյխ էբու էլ-Հասան Իլխակազի—26
Շեյխ Կաղըզադե, գիտնական—7
Շեյխ Հասան—49
Շեյխուն փաշա, Կարսի փաշա—155
Շեմյաթ (Շամրոթ)—188
Շէմսեդդին Սամի, բառարանագետ—292
Շեմս Փաշազադե—188
Շերեֆ խան, Միր Շերեֆի հայրը—34, 38, 39, 258, 259
Շերեֆ փաշա, Երևանի բեյլերբեյի—88—93
Շերեֆ փաշա, Չալըղըրի վալի—172
Շերիֆ Մուհամմեդ փաշա, Տրապիզոնի վալի—166, 167
Շերնիշին Ալ-Շարիշի, արաբ աշխարհագրագետ—29, 258, 259

Չեթեջի Ալի աղա, քեթխուդա—103
Չերքես Օսման փաշա, սերդար—142
Չոբան-օղլու Թիմուր Դաշ—73

Պապ (Արշակի որդի)—191
Պտղոմեոս—11

Ջաղալե Զադե Սինան փաշա, սերդար—77, 94, 108
Ջանբեյ Կիրայ, Ղրիմի խան—78, 100, 101
Ջանփոլադ-օղլու, ջելալիների պետ—85, 149
Ջաֆեր Բաթալ Ղազի (Բաթալ Ղազի)—71
Ջաֆեր փաշա, Անատոլիայի բեյլերբեյի—124, 125, 147
Ջաֆեր փաշա, Ներքինի—197
Ջաֆեր փաշա, սերդար—271
Ջեղիմ Շերեֆ—35
Ջելալեդդին խորեզմշահ—88
Ջելալիներ—74, 76, 79
Ջեվդեթ փաշա, տարեգիր—164, 179, 298
Ջուրրահ Զադե, Նախիջևանի կադի—92, 93
Ջինգիզ խան—273
Ջոմեր—271

Ռադիյե (Ռոփի)—190
Ռաշիդ խալիֆա—63
Ռենբիլի, քրդական ցեղ—111
Ռումի Իսքենդեր—14
Ռուստեմ խան, Իրանի խան—111, 114, 161
Ռուստեմ փաշա, սադրազամ—226
Ռուքնեդդին Սյուլեյման Սելջուքի—49

Սաաթչի Հասան փաշա, Էրզրումի վեզիր—90, 94
Սաակաձե Գ., վրաց ազգային հերոս (տես նաև Մաղրավ · խան)—133
Սանատրուկ—190
Սարուխան, Իրանի արտակարգ դեսպան—114
Սաֆեվի Շահ Իսմայիլ—38
Սելանիկի Մուստաֆա էֆենդի, տարեգիր—5, 74, 116—118, 124, 125, 127, 129, 264, 270, 271
Սելեֆկոս—188
Սելիմ Կիրայ, Ղրիմի խան—296
Սելիմ փաշա Ջադե Ահմեդ բեյ, Չըլդըրի վալի—174
Սեյիդ Բաթալի թոռ Թորսուն—32
Սեյիդ Էմին խան, Գիլանի խան—122
Սեյիդ խան, Մուսուլի քրդերից—99
Սեյֆեդդին, քուրդ Ղազիի եղբայրը—87
Սիչար-օղլի Մյուբարեք, Բաղդադի իշխող—96
Սեֆեր փաշա, Չըլդըրի վալի—108, 161
Սիլահդար փաշա, Շամի էմիր—157
Սիմոնի որդի Գուրգեն—91, 93
Սիմոն խան, Վրաստանի խան—148
Սինան Ջադե Մուստաֆա փաշա, Ադիլջեվազի վալի—144
Սինան փաշա-Ջադե Մուհամմեդ փաշա, վեզիր—79
Սինան փաշա, սադրազամ—77
Սմբատ—192
Սմիրնով Վ. Դ., ռուս արևելագետ—224—226
Սյուլեյման բին-Կաթլըմըշ (Սյուլեյման շահ)—72
Սոլաք Ջադե, պատմագիր—5, 106, 141, 142, 145
Սոլաք Ֆերհատ փաշա, սերդար—123
Սոլոմոն խան, Աշըքբաշի խան—168—170
Սուլեյման, ավազակ—155
Սուլեյման բին-Իբրահիմ բին-Սյուլեյման—49
Սուլթան Արդուլ Համիդ—290
Սուլթան Աբդուլ Մեջիտ—259
Սուլթան Ալաեդդին Շեհզադե—116
Սուլթան Ալաեդդին Քեյքուբադ—43
Սուլթան Ահմեդ I—89, 90
Սուլթան Բայազիդ II—259
Սուլթան Իբրահիմ—233
Սուլթան Մահմուդ բին-Զենգի—60
Սուլթան Մահմուդ II—166
Սուլթան Մուհամմեդ II, Ֆաթիհ—51, 261
Սուլթան Մուհամմեդ III—88, 90, 227, 228
Սուլթան Մուհամմեդ IV—9, 183, 292
Սուլթան Մուստաֆա—293
Սուլթան Մուստաֆա IV—165, 166
Սուլթան Մուրադ III—227
Սուլթան Մուրադ IV—7, 14, 18, 27, 37, 39, 60, 106, 113, 114, 118, 155, 185, 223, 257, 268, 293
Սուլթան Սելիմ I—265
Սուլթան Սելիմ III—34, 38, 50, 118, 165
Սուլթան Սյուլեյման Կանունի—23, 31—35, 56, 62, 95, 96, 101, 147
Սուլթան Օսման (Գենչ)—106

Վալիդե Սուլթան—102
Վալիդի Ա. Զ. Թոգան, թուրքագետ—184
Վահար—188
Վահագն—188
Վահան—192
Վահե—148
Վաղարշ—190
Վաղարշակ (Պապի որդին)—189, 191
Վան, հայ թագավոր—188
Վարազդատ—191
Վարդ II—192
Վարդան—192
Վարվար Ալի փաշա, Մարաշի բեյլերբեյի—160
Վռամշապուհ—189

Տիգրան—188, 190, 191
Տիգրան II—189
Տիգրոս—189
Տիրան—188

Տորմոսով—168
Տվերիտինովա Ա. Ս.—9, 292
Տրդատ—190

Ուզունչարշըլը Ի. Հ., ժամանակակից թուրք պատմագիր—75, 116, 289
Ուսթաջլու Թոքմաք խան, Երևանի խան—271

Փագամ—188
Փահլևան Իբրահիմ փաշա, սերասքեր—173, 175
Փառնաս—187
Փարդես (Փառնավազ)—188
Փարս (Փավոս)—188
Փեչևվի, պատմագիր—74, 106, 264
Փիրի փաշա, Կարամանի բեյլերբեյի—141
Փոլադ Կադի, ջելալի—81

Քեդարա, Աբրահամի սպասուհին—188
Քեմենքեշ Կարա փաշա, սադրազամ—114
Քեյխուսրև, վրաց իշխող—170
Քենան փաշա—27, 166
Քեֆան, Հիսնի Քեֆ բերդի հիմնադիր—55
Քյաթիր Չելեբի (Հաջի խալիֆա, Կալֆա)—5, 7, 12, 22, 28, 40, 53, 63, 74, 75, 78, 80, 84—87, 93, 96, 100, 106, 107, 112, 224, 258, 262, 270, 289, 293, 294

Քյուչուք Ահմեդ փաշա, Էրզրումի վալի—110, 111
Քյուչուք բեյ, Դելի Հասանի եղբորորդին—84
Քուրդ Ղազի—86—87
Քուրչենի Սուլթան Մուհամմեդ—68

Օմեր Լութֆի Բարդան, թուրք գիտնական—260
Օմեր փաշա, Բաթումի բեյլերբեյի—100
Օչար Ալի փաշա, սերդար—161
Օսման աղա, հաշտության պատգամավոր Իրանում—111
Օսման Ղազի (Օսման բեյ)—90, 118, 269
Օսման փաշա, Դիարբեքիրի բեյլերբեյի—121, 123
Օսման փաշա, վեզիր, սերդար—124, 127, 147
Օրուս խան, Շիրվանի խան—122

Ֆաթիհ — տե՛ս Սուլթան Մուհամմեդ II
Ֆախրեդդին Բահրամ Շահ բին-Դավիդ բին-Մենգաչի—49
Ֆերեհ Ջոր, Բարգուշատի բեյ—87
Ֆերիդուն Ահմեդ Բեյ—5, 6, 117, 223, 237, 269, 289, 290, 292
Ֆերհադ աղա, ենիչերիների աղա—228
Ֆերհադ փաշա, Երևանի բերդը գրավողը—13
Ֆերհադ փաշա, սադրազամ—77, 127, 147, 148, 227, 271
Ֆիրդովսի (Ֆիրդուսի)—262
Ֆիրուզ Ջենչեթ—26

## ՏԵՂԱՆՈՒՆՆԵՐԻ ՑԱՆԿ*


Աբագ—63
Աբագա—23
Ադանա—12, 29, 30, 58, 61, 62, 258
Ագիլչեվագ—30—32, 57—94, 141, 142, 144
Ադրբեջան—11, 13, 16, 17, 19, 29, 30, 33, 34, 142, 272
Ազդուր (բ)—18
Ազով, Ազովի ծով—263
Աթաք—54, 57
Աթըր, լիվա (Ա)—221
Աթինա (Աթենք)—52
Ալագյազ—20
Ալադաղ—44, 46
Ալայիե, լիվա (Ա)—217
Ալաշկերտ—14, 19, 41, 46, 219
Ալաջա Հիսար, լիվա (Ա)—213
Ալբրեզ (Էլբրուս)—17, 20, 24, 50
Ալբրեզիստան (Վրաստան)—210
Ալթուն-Կալա, լիվա—220
Ալթուն-Քիփրի, լիվա (Ռ)—221
Ախալցխա (Ախասկա, Ախսխա)—11, 18, 27, 78, 103, 149, 151, 154, 161, 168, 171, 174, 175
Ախալքալաք—18, 27, 28, 258
Ախթամար—27, 40
Ախլաթ—29, 30, 33, 36, 38, 45, 49, 142, 185
Ակ-Դաղ—44
Ակերկաք, լեռնանցք—47
Ակկերման, լիվա, (Ռ)—215
Ակ Հիսար (բ)—144
Ակն — տե՛ս Էկին
Ակշար—44
Ակշեհեր, լիվա (Ա)—155, 216
Ակշեհիր—155
Ակչա-Կալա (բ)—24, 46, 48, 50, 53, 94, 272
Ակսարայ լիվա—216
Ակքեոյ—44
Ահաքես, լիվա (Ռ)—219
Ահմեդ խան—220
Աղաքիս—30
Աղղիաշըք, լեռնանցք—27
Աղբի գետ—48
Աղբի, լեռ (Արարատ)—11, 14, 19, 27, 46, 186
Ամասիա, գետ—69
Ամասիա, լիվա (Ա), քաղաք—65, 72, 79, 117, 146, 268, 269
Ամատիյե, լիվա—40, 221
Ամեդ—54—56
Ամելի Կադեմ—21
Ամերիկա—10
Այաս—61, 62
Այաս, յայլա—70
Այարան—48
Այդըն, լիվա (Ռ)—75, 215
Ային, փոքր քաղաք—38
Այնի Ջերբի—62, 63


---

* Տեղանուններում փակագծով նշված տառերը կարդալ. (Ա)—Անատոլիա, (Ռ)—Ռումելի, (լ)—լիվա, (բ)—բերդ։

Այնի Նավղեր, լեռ—62
Այնթափ, լիվա (Ա)—59, 102, 216
Անարոլի, լիվա (Ռ)—212
Անադա, քաղաք, էյալեթ (Ռ)—217
Անադոլու-Հիսար—292
Անատոլիա—75, 77, 79, 82, 84, 98, 99, 102, 104, 112, 124, 142, 148, 156, 166, 190, 215, 231, 263
Անդրկովկաս—6, 7, 12, 13, 28, 63, 74, 77, 105, 115, 116, 184, 268, 270
Անթալիա—20
Անկարա—82, 104, 105, 215
Անտալուզիա (էնդելուս)—183
Աչըքբաշ—23, 172
Աջարա—27, 174
Աջարեհի-Սուֆլա (ստորին)—220
Աշարեհի-Ուլյա (վերին), լիվա—220
Ասիա—10, 41
Ասիթանե, Երջանիկ Ասիթանե, Ստամբուլ—79—81, 84, 90, 103, 119, 120, 126, 210, 211, 227, 290
Ասորեստան— 187, 189
Ավլոնիա, լիվա (Ռ)—213
Արաբական թերակղզի—98
Արաբաղ—19
Արաբկիր—65, 66, 216
Արաքս, Արազ, Արաս—13—15, 19, 21, 26, 39, 44, 110
Արդահան—26
Արդահանի Բյուղուրք (Արդահան Մեծ) 27—220
Արդահանի Քյուչուք (Արդահան Փոքր) 27—220
Արդանուչ—27, 28
Արզնի—218
Արթըռք Արաղ—64, 64
Արճեշ—30, 32, 49, 57, 144
Արմենիա—11, 12, 15, 19, 29, 30, 34, 38, 41, 42, 59, 185, 187, 190, 192
Արրան (Ալբանիա, Աղվանք)—11—13, 19, 20, 29
Արփաչայ—19, 48, 269
Արևելյան Անատոլիա—269, 289
Արևելյան Հայաստան—12, 77
Արևմտյան Հայաստան—12, 77, 260
Բաբելոն—33
Բաբ էլ-Էրվաբ (դռների դուռ), Դերբենդ—16, 17, 50, 124, 257, 272
Բաբ էլ-Հադիդ (երկաթե դուռ), Դերբենդ—17, 257
Բաըր-էլլան, բերդ—20
Բաղ, Նահիյե—55
Բաթում—50, 52, 100, 220
Բալա, լիվա—218
Բալու—48, 63
Բաղդադ—7, 28, 78, 80, 97, 99, 102, 113, 114, 143, 151, 159, 162, 173, 221, 230, 232, 289
Բայազիդ, բերդ—30, 46, 146, 219, 269
Բայբուրդ (Բաբերդ)—41, 43, 44, 53, 106, 107, 219, 261
Բասեն—19, 26, 41, 44, 111, 219
Բասրա—47, 97, 114, 222
Բարկիրի—տե՛ս Բերկրի
Բաքու—18, 21
Բաֆրա—65, 69
Բեթլամ, գավառ Ղարաբաղում—16
Բելգրադ—83
Բելխ—188, 189
Բէկբազար—104
Բեկշեհիր, լիվա (Ա)—216
Բեհրեմա—73
Բենդի Մահի, գետ—73
Բենդար, լիվա (Ռ)—215
Բենեկշե, լիվա—212
Բենի Դահիյե, լիվա—218
Բեսթան, լիվա (Ա)—219
Բերամլու—44
Բերաքան, բերդ—23
Բերգուշատ—87
Բերգա (Բարդա)—14, 29, 30, 148
Բերղենդ, գյուղաքաղաք Մուղանում—15
Բերթերեք, լիվա, (Ռ)—219
Բերկրի (Բարկիրի)—30, 32, 221
Բերմեք, լիվա—218
Բերշեն, բերդ—24
Բերշիկի, գետ—46
Բեքսուլա, բերդ—24
Բիղա, լիվա—212

Բիթլիս—4, 30, 36, 40, 57, 168, 220, 265
Բիթլիսի գետ—33, 56
Բիլկան (Բիլեկան), բերդաքաղաք—15, 29, 30
Բիհիսնի—58
Բինգյոլ—19, 36, 43, 45, 47, 48
Բիսյություն, բերդ—40
Բիրե, լիվա—213
Բոդին, լիվա (Ռ)—214, 289
Բոզոք, լիվա (Ռ)—63, 67, 68, 114, 216
Բոլի—215
Բողդան (Մոլդավիա), վոյեվոդություն—222, 237, 293
Բոսնիա—83, 84, 214, 238
Բոսֆոր—231, 291
Բուլանե—45
Բուլաք—68, 70
Բուլունըք—36
Բուխարեստ (Բուքրեշ)—169
Բուղեվարիր,՝ բերդ—24

Գենջ—54
Գենջե (Գանձակ)—11, 14, 19, 89, 94, 148, 168, 230
Գենջե (Դիարբեքիրի վիլայեթում), լիվա—ք.—218
Գիլան—13, 20, 21
Գյոքբողե—155
Գյոքչա—19
Գյոք Մեյդան, դաշտ Երևանի շրջանում—98
Գյոքչեք, լիճ—56
Գյոք Քումբեթ (գմբեթ), վայր Երևանի շրջանում—107—156
Գյուլե, բերդ—268
Գյումուշ—68
Գյումուշխանե—41, 42
Գյուրջի-Թեփե, բլուր Երևանի մոտ—108
Գյուրջիստան—16, 25, 100
Գուրի—28
Գորիցա, կամ Կորչա, քաղաք Ալբանիայում, թուրքերեն Գյումյուլջինա—224
Դադվան, Նավահանգիստ Վանա լճի ափին—33, 35, 57
Դաղստան—13, 19, 20, 23, 30, 168, 272
Դամասկոս (Շամ)—20, 190, 231
Դար-ուլ-իսլամ (Բաղդադ)—221
Դար-ուլ-սուլթան—93
Դեբիլ—29, 30, 38
Դելի Կրմաք, գետ—65
Դիլվինե, լիվա (Ռ)—213
Դեմիր (Թեմուր)-Կափը, Դերբենդ—16—21, 23
Դենքենի, լիվա (Ռ)—220
Դեվե Բոյնու—47
Դերբենդ—11, 17, 18, 123, 184, 257, 272
Դերենդե—66, 67
Դերթենկ—102, 104
Դեր-Սեադեթ, Ստամբուլ—166
Դիադին—46
Դիարբեքիր—12, 18, 28—30, 34, 41, 48, 57, 58, 63, 66, 70, 81, 82, 99, 112, 120, 143, 146, 170, 221, 262, 265, 289, 298
Դիլեմ—13, 20
Դիվրիկի—63, 66, 67, 217
Դիրլեքլու, բերդ—24
Դոկեկին, լիվա (Ռ)—213
Դոմա Դամը — տե՛ս Սողան յայլաղը
Դվին—30
Դուլկըրան, լիվա—222

Եգիպտոս—9, 73, 163, 213
Եմեն—52, 232
Ենիշեհիր—155
Ենիջե—58
Երզնկա—11, 39, 42, 47, 48, 50, 56, 60, 66, 67
Եվրոպա—5, 10, 11, 181
Երուսաղեմ—188, 189
Երևան—7, 11, 13, 14, 19, 26, 27, 37, 39, 41, 46, 48, 78, 86—89, 92, 94, 98, 100, 108, 112—114, 124—127, 145, 148, 166, 230, 257, 258, 268, 270, 271
Եփրատ, գետ—36, 42, 43, 47, 48, 50, 56, 60, 66, 67

Ձախա, լիվա (Ա)—221
Ձանգի—13, 19, 107, 257, 266
Ձանգի խան, լեռնանցք—156
Ձարշատ, լիվա (Ա)—220, 268
Ձարուշատ—26
Ձելե—64, 66, 67
Ձևլուչա, բերդ—24
Ձեհար — տե՛ս Կասրի Շիրին
Ձեմարթին—58
Ձեյթուն, Ամասիայի լիվաներից—68, 69
Ձենգ Արատ, լիվա (Ա)—221
Ձենգ-Կումբեթ, բերդ—24
Ձևվի—44
Ձևրքե, գետ—62
Ձերիլ, բերդ Ջուլամերկի մոտ—40
Ձևրկի—56
Ձեքեմ (Ձեյիմ)—23

Էբակ, լիվա (Ռ)—218
Էբուելխայր—44
Էգին (Ակն)—47, 48, 66
Էդիրնե—117, 234, 298
Էզոքյոք—44
Էլբաթ, լիվա (Ռ)—224
Էլբիստան—30, 58, 59, 81, 265, լիվա (Ռ)—213
Էլբրուս—17
Էլգեզ (Ալագյազ)—25
Էլզեն էլ-Ռում (Էրզրում)—29—30
Էլիչիք, բերդ Նախիջևանում—14
Էլկակ—80
Էլմալու—57
Էլվարդար, բերդ—24
Էլրիբալ, լիվա (Ռ)—212
Էմիրհոյ, լիվա—220
Էմրախոր, բերդ—23
Էմրուք, բերդ—38
Էյլեքան, նահիյե Մուշի դաշտում—38
Էյոմրե, լիվա—212
Էյրի, էյալեթ (Ռ), բերգ—215
Էնգեռուս (Հունգարիա)—78, 84
Էշքանչե, բերդ—24
Էշքսադ, բերդ—24
Էոզի, էյալեթ (Ռ), բերդ—215
Էշմիածին—26, 27
Էսթերուն—84
Էսթիջե, լիվա (Ռ)—220
Էսքիշեհիր—155
Էսքի Սարայ, պալատ Ստամբուլում—267
Էրդեբիլ—152
Էրզինջան — տե՛ս Երզնկա
Էրզրում—12, 13, 20, 23, 26, 28—30, 36, 41, 43—50, 53, 63, 70, 71, 73, 83, 94, 96, 98, 100, 102, 107, 112, 113, 119, 120, 127, 145, 149, 152, 153, 174, 176, 219, 231, 260, 261, 267, 289
Էրլահ, լիվա (Ռ)—220
Էրխե—52
Էրկու—39
Էրջիշ — տե՛ս Արճեշ
Էրս (Արս, Արեշ)—17
Էքիլ—54
Էքրադ բին-Կոթուր—30
Էքուր, լիվա—218
Էֆլաք (Վալախիա), վոյեվոդություն—84

Թալին—272
Թահան—21
Թաշան, լեռ—68
Թավեսքեր, սանջաք—27
Թավրիզ—19, 30, 37, 39, 75—77, 86, 89, 93—95, 100, 110—112, 127, 128, 141, 147, 159, 161
Թաբարիա—180
Թարաբլուս—112, 114
Թարաբլուս-Շամ, էյալեթ (Ա)—217
Թարիֆ—264
Թարսուս, լիվա, քաղաք—29, 30, 61, 63, 217
Թելեր—54
Թել-Հեմդան—62
Թերբիստան—17, 21
Թերենքուշ, բերդ—24
Թերհալը, լիվա (Ռ)—63, 64, 213
Թերջան (Դերջան)—39, 43, 47, 48, 111
Թերջիլ—54, 56, 57
Թերքեր—39

Թերֆեք, լեռ—20
Թեքե, լիվա (Ա)—215
Թեքմանքերդ, լիվա (Ա)—43, 219
Թիմուր Կափու (Դեմիր Կափու), Դեր-բենդ—124, 125, 148, 272
Թիֆլիս—11, 16, 19, 23, 27, 30, 37, 100, 120, 121, 123, 148, 168—170, 185
Թոկաթ—216
Թորթում—23, 24, 41, 46, 144, 219
Թոփրաք Կալե—156, 161
Թրիալեթ—27
Թունիս—215
Թուշլե, լիվա—212
Թուր, Նահիյե—55
Թուրլը—50
Թուրղան—69
Թուրքիա—5, 6, 9, 11, 77, 117, 118, 168, 259, 260, 262, 268—270, 290, 298
Թուրքիստան—10, 34, 74, 96, 114, 224, 265, 267, 289

Իգդիր—Կարակալա—272
Իզմիր—75
Իզնիկ—155
Իլիջա—48, 107, 267
Ինդոնեզիա—10
Իշիլ—63, 218
Իորա (տե՛ս Կընըք), գետ—19, 270
Իսլամբեքլու—58
Իսքենդերուն—73, 212, 213
Իսքյուր, լիվա (Ռ)—213
Իսփիր (Իսպիր)—41, 42, 44, 219
Իվանտերեսի, բերդ—24
Իրան—34, 38, 40, 76—78, 94, 96, 107, 113, 114, 117—119, 146, 166, 168, 173, 189, 227, 268—270, 272
Իրաք, Իրաք-Աջեմ, Իրաքի-Արաբ—10, 20, 33, 75, 268, 269
Իրնեք—44
Իփոքրի, Նահիյե—44

Լայպցիգ—9
Լեզգե—50
Լեհիստան (Լեհաստան)—290
Լիմե, լիվա Ղրիմում—20
Լենքերան (Լենքորան)—18, 21
Լեջան, լիվա Շամում—217
Լիվիա, լիվա—212
Լեքում—20
Լիմոսոն, լիվա—212
Լիվե, լիվա (Ռ)—214
Լիք, լիվա (Ա)—220
Լոկաթին, բերդ—25

Խաբուսե—48
Խաբուր գետ—47
Խազերի ծով—13, 15, 17, 19—21
Խալ, գետ Նեվշեհիրում—15
Խալիջ — տե՛ս Ոսկեղջյուր
Խանի Ջեդիդ—63
Խարբութ (Խարբերդ)—48, 56, 218
Խարուն, լիվա—210
Խեթվան, լիվա (Ռ)—215
Խեմրին, բերդ—46
Խենդեկի—55
Խենդերես—44
Խերթվիս—18, 27, 220
Խիզան, գավառ Վանի վիլայեթում—30
Խնուս—36—38, 41, 42, 45, 219
Խոյ—38, 39, 143, 161, 259
Խոշաբ—39
Խոշ-Օղլան, գետ—53
Խոջեվան—26
Խորասան—34, 117, 188, 190
Խորասան, Նահիյե Մեջենկերտում—44
Խուդավենդիգյար, լիվա (Ա)—215

Կարայիլի-Ուրբանի-Բերիյե, լիվա—221
Կաթիֆ, լիվա—222
Կալա, լեռնանցք—27
Կալայի Էլնեջմ—60
Կալայի Ջեգիդ—47
Կալայի Ռում—60
Կալեբ, լիվա—218
Կալզեմ—21
Կալիկա, լեռ—29, 42, 261
Կահկահա, բերդ Իրանում—142
Կաղզվան—11, 26, 112, 220
Կանիբե, էյալեթ (Ռ)—217
Կասթեմունի—10, 51, 65, 72, 215

Կասնի—44
Կասպից ծով—21, 257
Կարա Դաղ, լիվա (ա)—222
Կարախան, գյուղ—27
Կարա-Կաշկան—209
Կարա-Կոչլար—47
Կարա-Հասանլը—58
Կարահիսարի-Շարքի—41, 43, 44, 69, 89, 219
Կարահիսարի-Սահիբ, լիվա (Ա)—215
Կարաման—61, 63, 99, 141, 143, 156, 231
Կարա-Ցայլաք—65
Կարաչա-Դաղ—56
Կարասի—263
Կարասի, լիվա (Ա)—215
Կարասու—19, 36, 47—48
Կարա-Քյոփրյու—57
Կարկար (Քերքեր)—201
Կարճկան—38
Կարնր-Յարըք, բերդ—86
Կարս—11, 12, 18, 23, 26—28, 30, 41, 47, 48, 60, 91, 94, 96, 99, 100, 103, 107, 123, 145, 149, 155, 156, 168, 220, 270, 271
Կարս Ձյուլկադերիյե—58
Կարս Մարաշի, լիվա (Ա)—216
Կարս-Ջայր—271
Կաքլու, լեռնանցք—27
Կաֆ, լեռ—20, 257
Կենչ—47, 48
Կեսարիա (Կայսերի)—51, 69, 81, 105, 141, 180
Կերչ—17
Կերք վե Ջերեք, լիվա Շամում—217
Կըզըլ-Աղաչ—18
Կըզըլ-Դարաթ, լիվա (Ա)—221
Կըզըլ-Ըրմաք—64, 65, 67—68
Կըզըլ-Թեփե—57
Կըզչա-Կալա, լիվա (Ռ)—222
Կրզուչան—41, 45
Կըլբուրուն, լիվա—215
Կըլըք, լեռ—21
Կրյթաք—17, 20, 50
Կընըք (Իորա), գետ—19, 270
Կըրշեհիր—69
Կըփչաք, դաշտ—125, 272
Կիլիկիա—258
Կիչեվան, բերդ (Ա)—271
Կիպրոս—61—63, 217
Կիրասոն—51, 56
Կորան, լիվա—214
Կոթուր—37—39, 46
Կոլուբ—43
Կումնաթ, այլ անունով՝ Սիս—72
Կոյուն-Հիսար—44, 69
Կոնիա—69, 70, 79, 135, 141
Կոնստանդին, բերդ—17, 24
Կոնստանդինյան ծոց, Ստամբուլում—185
Կոչհիսար—69—71
Կոջա Իլի, լիվա (Ռ)—212
Կուդսի Շերիֆ, Երուսաղեմ—216
Կուլբ—54
Կուշքերման, բերդ—24
Կուր գետ (Քուռ)—11, 13, 15—19, 21
Կուրչան (Կոզիչան), լիվա, (Ա)—219

Հաբեշի էյալեթ, Արաբական թերակղզում—263, 264
Հաթուր, լիվա—218
Հալեբ—7, 28, 57, 59, 60, 82, 115, 116, 207, 231
Համա, լիվա (Ա), քաղաք—217
Համասին, լիվա—218
Համասլի, վայր—47
Համիդ, լիվա (Ա)—215
Հայաստան—11—13, 75, 77, 106, 115, 116
Հայկական լեռնաշխարհ—77
Հաշե, լիվա—222
Հաջրեք—27
Հասան-Կալա—44, 46, 47, 113, 146
Հարան, հյուքյումեթ—220
Հարիր—Դումեք, լիվա—221
Հարսոյ, լիվա Կիպրոսում—218
Հարունիյե—58
Հաֆար, լիվա (Ռ)—222
Հեդիսե—47

Հեդր, լիվա—218
Հեյդար Բաղը, գյուղ Վանում—32
Հեյեթ—47
Հիզան—54
Հիթեմ, քրդական նահիյե (Դիարբեքի-րում)—57
Հիջազ—20, 31, 263
Հիսնի-Զիյադ — տե՛ս Խարբերդ
Հիսնի-Մակսուրե—60, 61
Հիսնի-Մենեջ—60
Հիրմանե—44
Հյունքար-Թեփեսի (Երևանում)—108
Հյուսեին Աբադ—63, 65
Հյուսիսային Կովկաս—77
Հնդկաստան—103
Հոժաթսրա, բերդ—24
Հորավերգի, բերդ—24
Հումս, լիվա (Ա), քաղաք—217
Հունաստան—179
Ղազա, լիվա Շամում—216
Ղարաբաղ—15, 16, 21, 89, 161, 209
Ղրիմ—141, 212, 262, 272, 296

Ճապաքջուր — տե՛ս Չաբաքջուր
Ճապոնիա—10

Մազանդարան—21, 99
Մազկերտ, Մալազկերտ, Մանազկերտ—30, 44, 49, 54, 56, 271
Մալաթիա—30, 47, 48, 60, 61, 66, 70, 216
Մախչիլ—27
Մակու—87, 94, 259
Մահմուդաբադ, քաղաք Մուղանում—15
Մահմուդիե (Հեքքարիում)—219, 220
Մաղոսե, լիվա Կիպրոսում—212, 213
Մամա-Խաթուն—48
Մամեջիլ (Մահջիլ)—220
Մամրվան—27, 41, 45, 174, 219
Մաչվա, լիվա—221
Մասիսե (Մսիս, Մսիսե)—20, 29, 52, 62, 258, 262
Մասուլե—21
Մարանդ—111
Մարաշ—12, 28—30, 58—61, 82, 92, 98, 112, 120, 123, 216, 231
Մարդին—54
Մարե-Ղասպի (Կասպից ծով)—20
Մարկերտ, լիվա—218
Մաքիր—54
Մեգրելիա—28
Մեդինա—183, 264
Մեզեսթրե, լիվա—212
Մերզիֆուն (Մարզվան)—55
Մեծ Արմենիա—29, 30
Մեծ Հայաստան—40
Մեհաչ, լիվա—214
Մեհլեբի—55
Մեհրանի—54
Մենազիր, բերդ—24
Մենթեշե, լիվա (Ա)—215
Մենկերտ (Մինեկերտ)—41, 44
Մեշհեդ—93
Մեջիդ-Աբադ—65
Մեսոպոտամիա (Միջագետք)—53
Մերձավոր արևելք—77, 260
Մերքեջ—63
Մեքքա—163, 183, 211, 261, 263, 268
Մեֆարկի—55, 219
Միդիլլի, կղզի—212
Միլաշ—44
Միհրանի, լիվա (ա)—218
Միջագետք—53, 189, 190
Միջերկրական ծով—61
Միջին Ասիա—260
Մոես—30, 40, 221
Մորե, լիվա—212
Մուզան (Մուկան)—11, 15, 21
Մուշ—11, 30, 35, 57
Մուշի դաշտ—35, 47, 48, 266
Մուսուլ—53, 56, 57, 99, 113, 174, 222, 231, 289
Մուրադ գետ—44, 45—48, 56, 57, 64

Յաղմուր-Դերեսի—41
Յայլա Մեսջիդի—53
Յանկե, լիվա (Ռ)—214
Յանյա, լիվա (Ռ)—213
Յաֆ, լիվա Կիպրոսում—218
Յըլդըզ-Դաղ—69

Յիլան-Կալասի—62
Յովորոլի—50

Նաբլուս, լիվա Շամում նաև Հալեպում—217
Նազալի, բերդ—24
Նազեք, լիճ Խնուսում—36
Նակշե, լիվա Ղրիմում—212
Նաքու, բերդ—24
Նեբքեր, բերդ—24
Նեմրաթ, լեռ—37
Նեջահ, բերդ—23
Նեվի-Բելգրադ, լիվա (Ռ)—214
Նեվշեհիր, քաղաք Մուղանում—15, 18, 49
Ներդեբենլեր—48
Նիկոպոլի, լիվա (Ռ)—212
Նիկտե—70, 156
Նիյազաբադ—18, 20, 21
Նիսիբին, լիվա (Ա)—54, 55, 189, 213
Նույահ, բերդ—24

Շաթ—47, 56, 58
Շահիկե, լեռ—18, 69
Շահրիման Կալասի, բերդ—62
Շահուտե, բերդ—24
Շամ (տե՛ս Դամասկոս)—56, 82, 123, 190, 216, 217, 289
Շամախի—121—123
Շամի ծով—63
Շատախ, գավառ Վասպուրականում—40
Շարբինի—44
Շարուր—39
Շեհռանի, լիվա—222
Շէհրի-Զոր—28, 40, 77, 78, 114, 142, 189, 222
Շեմանեք, լիվա (Ա)—222
Շեմուրթաթե, լիվա—214
Շենասկ, լիվա—231
Շերմ, լիվա (Ռ)—214
Շիրվան—27, 48, 121, 122, 125, 141, 148, 161, 270
Շորագյալ—48, 70, 80, 278
Շուշատ—27

Ոսկեղջյուր (Խալիջ), ծովածոց Ստամբուլում—181

Չալդրան, դաշտ իրանական Ադրբեջանում—14, 38, 39, 46, 146, 259
Չախեսթե, լիվա (Ռ)—214
Չարմար, լեռնանցք—46
Չափաքչուր (Ճապաղջուր)—47, 48, 56
Չեմաս—44
Չեմեշկազեք (Չմշկածագ)—48, 53, 54
Չեմեքյար, բերդ—24
Չենար, լիվա (Ռ)—214
Չերմեն, լիվա (Ռ)—215
Չերմիք (Ջերմուկ)—54, 56
Չինաստան—163
Չորոք (Ճորոխ), գետ—43
Չորում—63, 67, 72, 80, 104, 215
Չուքուր-Սաադ, Երևանյան դաշտ—13

Պաղեստին—58
Պարսկաստան — տե՛ս Իրան

Ջաղբասար, բերդ—24
Ջանիկ—63, 65, 69, 70, 72, 89, 216
Ջանիկի լեռներ—63
Ջանքեշ—54
Ջապաքչուր (Ճապաղջուր)—54
Ջեբլիյե, լիվա (Ռ)—217
Ջեբլի-Ջուտի, լեռ—55
Ջեբել-Լիբան—20
Ջեբել-Նուր, գետ—62
Ջեզեի-Մամուրե, լիվա—213
Ջեզաիրի-Արաբ—222
Ջեզիրե—54, 56
Ջեզիրե-Իներուզ, լիվա (Կիպրոսում)—218
Ջելաբ, գետ—57
Ջեվազիր, լիվա—221
Ջետր, լիվա—218
Ջերմուկ—68
Ջերնեկ, լիվա—218
Ջեսան, լիվա (Ռ)—221
Ջիդդե—264
Ջիհուն, գետ—58, 70, 258
Ջուլամերկ—40
Ջուլֆա—19
Ջույի-Ռուհ, գետ—43
Ջհատ—19

Ռաբաթ—34
Ռակա կամ Ուրֆա, Ռահա—47, 48, 58, 218
Ռահագին, բերդ—24
Ռահվան, նահիյե Բիթլիսում—35
Ռեանե, բերդ—84
Ռեբիա—34
Ռեհվիյե—50
Ռեշվան—47, 48, 60
Ռեշտ—148
Ռես-էզլուզ — տե՛ս Հիսնի-Քեֆ
Ռեսնե, բերդ—84
Ռիանթե, բերդ—24
Ռիզե—50—52, 167
Ռիոն—23, 53
Ռիքադե, լեռ—20
Ռում (Սվազ)—20, 29, 41, 43, 141
Ռումելի—74, 97, 98, 120, 157, 158, 189, 213, 260, 263, 295
Ռումելի Հիսար—231, 291
Ռումի Բաղդադ (Ամասիա)—88
Ռումի ծով (Միջերկրական)—61, 62
Ռումիյե, էյալեթ (տե՛ս Սվազ)
Ռում-Կալա—47, 48
Ռուսաստան—168, 268, 290

Սալմաս (Սալմաստ)—29, 30, 86
Սակըզ, կղզի—212
Սաղման—54, 56
Սամսոն—52, 65
Սամուր գետ—19
Սանթակ, բերդ—24
Սավեր—54
Սարի Սու, գետ—48
Սարուխան—215
Սեդմանիշ, բերդ Վրաստանում—176
Սելանիկ—213
Սելեֆկե—61, 218
Սեհրան, լիվա (Ա)—222
Սեղան—44
Սեմեղատ, բերդ—23
Սեյիդ-Հասան, դետ—57
Սենջատ—54, 55, 219
Սենջար—54, 55
Սեչան, լիվա—214
Սեվերեք—54, 56
Սերիք—17
Սերիտ—17
Սևրմիտանքես—21
Սևրվի, լիվա (Ա)—221
Սերֆենդքյար—63
Սեքերմեթ, լիվա (Ա)—221
Սեքթեվար, լիվա—214
Սեքմեն-Արադ—38, 39, 49
Սէքսար, լիվա—214
Սիլան, լեռ Մուղանում—15
Սիլիսթրե, լիվա (Ռ)—213
Սիհուն գետ—61, 62
Սիմսաթ—58, 60
Սինաա—51—65
Սինթանըլո, բերդ—23
Սիս—29, 30, 60—62, 72, 185, 217
Սիսաթթա—44
Սիրավի դաշտ—101
Սիրիա—7, 58, 75
Սիրվի—30
Սիփան (Սիֆան), լեռ—11, 33
Սկյուդար—72, 75, 79, 94, 104, 155
Սղերդ—54—56, 218
Սյուրմենե—33, 50
Սոլթիք, լիվա (Ա)—215
Սողանլու, լեռ, յայլա—27
Սոյուքսու, դետ—53
Սոքե, Սլթիին ենթակա սանջաք—27
Սոֆիան—86, 111, 161
Սպարկերտ (Իսբայերդ)—30
Սվազ—12, 28, 42, 44, 48, 49, 53, 60, 63, 65, 66, 69, 70, 73, 80, 82, 97, 99, 112, 141, 143, 156, 177, 216, 231, 260, 289
Ստամբուլ—7—10, 58, 60, 72, 77, 78, 93, 96, 99—102, 106, 110, 112, 113, 116—119, 125, 141, 144, 146—148, 151, 153, 155, 162, 165, 173, 176, 177, 183, 188, 223, 231, 257, 259—261, 264, 267, 290, 294, 298
Ստորին Բասեն—44
Սուլակ, գետ—20
Սուլթանիյե—30

Սուլթան Չոնի, լիվա (Ա)—215
Սուլթան Սուլեյմանի Քերբելա—97
Սուխում—51
Սուղլե, լիվա (ա)—212
Սունսար—64, 65
Սուշեհրի—36, 42
Սուրմալու—272
Սևան—19
Սև լեռներ—21
Սև ծով—21, 23, 25, 44, 45, 50, 52, 63, 65, 69, 163, 172

Վալկասիյե, գավառ Ղարաբաղում—15
Վան—11—13, 27—32, 38, 40, 41, 53, 57, 86, 94, 100, 106, 112, 127, 140, 141, 143, 146, 156, 167, 173, 220, 231, 265, 289
Վատի Դանեք, Նահիյե—42
Վարաթ, բերդ (Ռ)—238
Վելչեթրին, լիվա (Ռ)—213
Վենդասե, բերդ—24
Վենետիկ—84
Վերին Աչարա—174
Վերին Բասեն—44
Վերին Թերջան—41
Վերֆայի, լիվա (Ա)—221
Վիհե, կազա—52
Վրաստան—14, 16, 17, 19, 20, 23—25, 50—52, 100, 120, 121, 126, 143, 144, 153, 168—170, 185, 209—211, 230, 269

Տարսուս (Տարսոս)—185
Տիգրիս—33, 53—55
Տիգրիս-Շաթ—55
Տրապիզոն—11, 12, 28, 41, 43, 50—53, 65, 69, 100, 112, 166—168, 170, 220

Ուշ փինար—57
Ուչ Քիլիսե, էջմիածին—11, 26, 27, 107
Ուսթանի Բելգրատ (վերին)—214
Ուսթերջա, լիվա (Ռ)—214
Ուրֆա—23, 218 (տե՛ս նաև Ռակա)
Փաղարչըք—58
Փալու—47, 48, 54
Փայաս—63
Փասեն — տե՛ս Բասեն
Փեարուքլի, գետ—57
Փել-Խաթուն—35
Փենաք, բերդ—23, 27
Փենչշենբե—41
Փեշլին—58
Փեչեվի, լիվա (Ռ)—214
Փեսենդիրե—55
Փեսյան—39
Փերթեք—48, 56
Փերթքեք, բերդ—24, 27, 54, 56
Փլատանա—60
Փոթի—53
Փոսխով դետ—27, 220
Փոքր Ասիա—25
Փոքր Արմենիա—29, 30, 58

Քանանի երկիր—187
Քանղրի—67, 72, 104, 215
Քաշան—148
Քավրար, դաշտ Ղարաբաղում—15
Քելինան, բերդ—24
Քելիս, լիվա—214
Քելքիթ—41, 42, 48
Քեմախ—41, 42, 47—49, 71
Քեմխիս, բերդ—24
Քեմհալ—167
Քենար-Բեհ, բերդ—24
Քեշար—50
Քեշան, լիվա (Ա)—22
Քեշթասեթի—19
Քեշլան—26
Քեոթահիա—82
Քեսանի—30
Քեսլե, լիվա—221
Քեվանիս—41—43
Քերեքմեշ, լեռնանցք—27
Քերինե, լիվա Կիպրոսում—217
Քեֆե—65, 126, 141, 215, 262
Քեֆրի-Բինա, Մսիսե քաղաք—62
Քյուրքեր—58
Քըլե, լիվա—220
Քոյթուն—50

Քոսթենդիլ, լիվա—213
Քորեյլե—50
Քորքան, լիվա (Ռ)—211
Քորքիլ, լիվա (Ռ)—219
Քրիստոսի վանք (Դիրի Մեսիհ)—60
Քումեք, բերդ—23
Քունիա—23, 50, 52
Քունիա, լիվա (Ա)—220
Քուս, լիվա—44
Քուրդիստան—11, 13, 29, 30, 38—40, 56, 146, 175
Քուփին, բերդ—24
Քուֆե, արաբական հնագույն քաղաք—259

Օզկրը, նահիյե Գարահիսարում—44
Օլթի—45, 174, 219
Օհրի, լիվա (Ռ)—213
Օսան—21
Օսթեդ, լիվա Ալթուն-Կալայի մոտ—220
Օսմանյան բեյություն (Օսմանլի բեյլի-յի)—292
Օսմանյան կայսրություն—5, 6, 28, 75, 76, 105, 115, 165, 168, 174, 257, 260, 264, 268, 290, 294, 295
Օսմանյան պետություն—8, 9, 74, 75, 147, 180—182, 260, 262, 265, 269, 289
Օսմանչըք—68, 70, 72
Օսֆեհեր, լիվա (Ռ)—220
Օվաչըք—30, 39
Օրլը, նահիյե—42
Օֆ—50, 53

Ցաթսա—65
Ցաշ (Ռիոն), գետ, նավահանգիստ—23, 53, 166—169
Ցերսենք—49

## ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ


Երկու խոսք . . . . . . . . . . . . . 5
Քյաթիբ Չելեբի, Հաջի խալիֆա . . . . . . . . . 7
«Ջիհան Նյումա» . . . . . . . . . . . . 9
«Ֆեզլեքե» . . . . . . . . . . . . . 74
«Ֆեզլեքե», հատոր I . . . . . . . . . . . 79
«Ֆեզլեքե», հատոր II . . . . . . . . . . . 102
Սելանիկի Մուստաֆա Էֆենդի . . . . . . . . . 116
«Թարիխի Սելանիկի» . . . . . . . . . . . 117
Սոլաք Զադե . . . . . . . . . . . . . 139
«Թարիխի Սոլաօ Զադե» . . . . . . . . . . 140
Շանի Զադե . . . . . . . . . . . . . 163
«Թարիխի Շանի զադե» . . . . . . . . . . 165
Մյունեջջիմ Բաշի . . . . . . . . . . . . 183
«Սահաիֆ-ուլ-ախբար» . . . . . . . . . . . 185
Ֆերիդուն Բեյ, «Սուլթանների գրությունները» . . . . . . 202
Կոչի Բեյ . . . . . . . . . . . . . . 224
«Ռիսալե»-ի բովանդակությունը . . . . . . . . 225
Հատվածներ Կոչի Բեյի «Ռիսալե»-ից . . . . . . . 226
Կոչի Բեյի երկրորդ «Ռիսալե»-ն . . . . . . . . 233
Հավելված
Ֆերիդուն Բեյի «Սուլթանների գրություններ»-ից փաստաթղթեր . . 237
Շանի Զադեն ֆինանսական-դրամական և կենցաղային հարցերի մասին . 241


### ԾԱՆՈԹԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ


Քյաթիբ Չելեբի . . . . . . . . . . . . 255
«Ջիհան Նյումա» . . . . . . . . . . . . 255
«Ֆեզլեքե», հատոր I . . . . . . . . . . . 264
«Ֆեզլեքե», հատոր II . . . . . . . . . . . 267
«Թարիխի Սելանիկի» . . . . . . . . . . . 263
«Թարիխի Սոլաք Զադե» . . . . . . . . . . 276
Շանի Զադե . . . . . . . . . . . . . 273
«Թարիխի Շանի Զադե» . . . . . . . . . . 279
Մյունեջջիմ Բաշի . . . . . . . . . . . . 282
«Սահաիֆ-ուլ-ախբար» . . . . . . . . . . . 283
Ֆերիդուն Բեյ, «Սուլթանների գրությունները» . . . . . . 285
Կոչի Բեյ . . . . . . . . . . . . . . 290
Հավելված
Ֆերիդուն Բեյի «Սուլթանների գրություններ»-ից . . . . . 292
Շանի Զադեի փաստաթղթերի մասին . . . . . . . 293
Թուրքերեն տեքստեր . . . . . . . . . . . 303
Резюме (на русском языке) . . . . . . . . . 305
Резюме (на английском языке) . . . . . . . . 316
Անձնանունների ցանկ . . . . . . . . . . . 318
Տեղանունների ցանկ . . . . . . . . . . . 326

Տպագրվում է Հայկական ՍՍՌ ԳԱ արևելագիտության սեկտորի
գիտական խորհրդի հանձնարարությամբ

*Պատ. խմբագիրներ՝* Հ. Հ. Մարտիրոսյան,
Տ. Ա. Կարապետյան
*Նկարչական ձևավորումը՝* Լ. Ա. Սադոյանի
*Տեխ. խմբագիր՝* Հ. Լ. Գորոյան
*Սրբագրիչ՝* Լ. Ս. Սարաֆյան

***ՎՖ 06658, հրատ. № 2282, ԽՀԽ № 828, պատվեր 1676, տպաքանակ 3000***

---

*Հանձնված է արտադրության 21/IX 1963 թ.։*
*Ստորագրված է տպագրության 4/VII 1964 թ.։*
*Տպագր. 20,88 մամ., հրատ. 18,9 մամ., թուղթ՝ 60×9′ 1/ ,*
*Գինը կազմով՝ 1 ռ. 33 կոպ.։*

---

*Հայկ. ՍՍՌ Մինիստրների սովետի մամուլի պետական կոմիտեի*
*պոլիգրաֆարդյունաբերության գլխավոր վարչության*
*Պոլիգրաֆկոմբինատ, Երևան, Տերյան 91։*